

ISSN 0135-0536

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ  
ՆԱԿԻԵՍ  
ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ

2

2021

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

Պ Ա Տ Մ Ա Բ Մ Ն Ա Ս Ի Ր Ա Կ Մ Ն  
Տ Ա Ն Դ Ե Ս  
ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ

2021, 2 (217)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА

ԵՐԵՎԱՆ

2021

ЕРЕВАН

Հանդեսը լույս է տեսնում 1958 թվականից  
Հիմնադիր խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսյան

Журнал выходит с 1958 года  
Редактор-основоположник М. Г. Нерсисян

Խ մ ք ա գ ր ա կ ա ն ի ն ր հ ն ի ր ղ

Ն ա խ ա գ ա հ՝ ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Գ լ խ ա վ ո թ ի խ մ ք ա գ ի ղ՝ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Գ լ խ ա վ ո թ ի խ մ ք ա գ ի ղ տ Ե ղ ա կ ա լ՝ ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Ա ն ղ ա մ ն Ե ղ՝ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼԵՎՈՆ, ԱՎԵՏԻՍՅԱՆ ՊԱՎԵԼ,

ԲԱՐԴԱԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ԱՄՆ), ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ, ԶԵԿԻԱՆ ԼԵՎՈՆ (Իտալիա),

ԿԱՏՎԱԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ, ՀԱՍՐԱԹՅԱՆ ՄՈՒՐԱԴ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ,

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ, ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ, ՏԵՐ-ԴԵՎՈՆԴՅԱՆ ՎԱՀԱՆ,

ՏԵՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ (ԱՄՆ), ՏՈՆԱՊԵՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ (Ֆրանսիա)

Редакционная коллегия

Председатель – АШОТ МЕЛКОНЯН

Главный редактор – АНУШАВАН ЗАКАРЯН

Заместитель главного редактора – АЭЛИТА ДОЛУХАНИЯН

Члены – АБРАМЯН ЛЕВОН, АВETИՏՅԱՆ ՊԱՎԵԼ, ԱՏՐԱՅԱՆ ՄԱՐԱԴ,

ԲԱՐԴԱԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ՄԱՆ), ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ, ԶԵԿԻԱՆ ԼԵՎՈՆ (Իտալիա),

ԿԱՏՎԱԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ, ՀԱՍՐԱԹՅԱՆ ՄՈՒՐԱԴ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ,

ՏԵՐ-ԴԵՎՈՆԴՅԱՆ ՎԱՀԱՆ, ՏԵՐՅԱՆ ԱԲՐԱՄ (ՄԱՆ),

ՏՈՆԱՊԵՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ (Ֆրանսիա)

Պատմաբանասիրական հանդես, 2021

Հապավումը՝ ՊԲՀ

© Историко-филологический журнал, 2021

Аббревиатура – ИФЖ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ  
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՐԸ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ

Աշոտ Սերոբի Սաղյանը ծնվել է 1957 թ. ապրիլի 7-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Չափար գյուղում: 1978 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: 1980–1984 թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Ա. Նեսմեյանովի անվան էլեմենտորգանական միացությունների ինստիտուտի նպատակային ասպիրանտուրայում:



Ա. Սաղյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 1985 թ., դոկտորականը՝ 1997 թ.: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2010 թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: Նրա գիտական գործունեության բնագավառներն են ստերեոսեկե-տիվ կատալիզը, ամինաթթուների կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզը, բնական և կենսասինթետիկ խառնուրդներից կենսաակտիվ միացությունների անջատումը և մաքրումը: Շուրջ 350 գիտական հոդ-վածի, 2 դասագրքի, 2 մենագրության հեղինակ է: Ա. Սաղյանը 18 թեկնածուական և 3 դոկտորական ատենախոսությունների գիտական ղեկավար է:

Ա. Սաղյանն աշխատել է ԽՍՀՄ Բժշկական և մանրէաբանական արդյու-նաբերության նախարարության Գենետիկայի և սելեկցիայի համամիու-թենական ինստիտուտի Չարենցավանի մասնաճյուղում, այնուհետև՝ Ամի-նաթթուների գիտահետազոտական տեխնոլոգիական ինստիտուտում, որը ԽՍՀՄ փլուզումից հետո վերանվանվել է «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կազմում: 2000 թ. նշանակվել է ինստի-տուտի տնօրեն: 2010 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գի-տաարտադրական կենտրոնի ՊՈԱԿ-ի տնօրեն: Ա. Սաղյանը 1998 թ. աշխա-տում է նաև Երևանի պետական համալսարանում՝ սկզբում որպես դեղագոր-ծական քիմիայի ամբիոնի ղոցենտ, այնուհետև՝ պրոֆեսոր, իսկ 2003 թ. ամ-բիոնի վարիչ: 2016 թ. դեղագործական քիմիայի ամբիոնի հենքի վրա ստեղծ-վել է ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտ, որի տնօրենն է նշանակվել Ա. Սաղյանը:

Ա. Սաղյանը 2008 թ. ՀՀ ԳԱԱ «Հայաստանի քիմիական հանդես»-ի գլխավոր խմբագիրն է: ՀՀ ԳԱԱ ներկայացուցիչը ՄԳՏԿ-ի համակարգող խորհրդում, 2016 թ. ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ:

2001 թ. Ա. Սաղյանն արժանացել է Եվրամիության «Դեկարտի» անվան մրցանակի: 2002 թ. պարգևատրվել է Չինաստանի Ժողովրդական Հանրա-պետության կառավարական «Բարեկամություն» շքանշանով: 2004 և 2011

*ԹԹ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակների, 2009 թ.՝ ՀՀ վարչապետի հուշամեդալի: 2014 թ. ստացել է գիտությունների վաստակավոր գործչի կոչում: 2015 թ. արժանացել է ՀՀ պետական մրցանակի:*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հունիսի 28-ին և 29-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը: Անցկացվեցին ՀՀ ԳԱԱ նախագահի, փոխնախագահի, ակադեմիկոս-քարտուղարի, բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարների և նախագահությունների անդամների ընտրությունները:

Հունիսի 28-ին ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնում առաջադրվեց 3 թեկնածու՝ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանը: Առաջին փուլում ոչ մի թեկնածու բավարար ձայն չհավաքեց: Երկրորդ փուլում 55 կողմ, 34 դեմ, 5 անվավեր ձայների հարաբերակցությամբ ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնում ընտրվեց ակադեմիկոս Աշոտ Սաղյանը:



Իր ելույթում ՀՀ ԳԱԱ նորընտիր նախագահը խոսեց առաջիկա անելիքների մասին՝ մասնավորապես նշելով ՀՀ ԳԱԱ-ի համակարգի գիտահետազոտական ուղղությունների և մարդկային ներուժի օպտիմալացման, ռազմաարդյունաբերության ոլորտում գիտահետազոտական գործունեության արդիականացման, կիրառական բնույթի հետազոտությունների, համակարգի աշխատակիցների սոցիալական հարցերի հնարավոր լուծումների, միջազգային համագործակցության ընդլայնման, հայագիտության զարգացման խթանման, բուհական համակարգի հետ համագործակցության ընդլայնման, ԳԱԱ համակարգի ներուժի երիտասարդացման մասին:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ա. Սաղյանը ՀՀ ԳԱԱ փոխնախագահի պաշտոնում առաջադրեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հրանտ Հենրիկի Մաթևոսյանի թեկնածությունը: Փակ, գաղտնի քվեարկության արդյունքում 80 կողմ, 12 դեմ ձայների հարաբերակցությամբ ՀՀ ԳԱԱ փոխնախագահի պաշտոնում ընտրվեց Հրանտ Մաթևոսյանը:

Հ. Մաթևոսյանը ծնվել է 1947 թ. հուլիսի 10-ին Երևանում: 1970 թ. ավարտել է ԵՊՀ-ի ֆիզիկայի ֆակուլտետը, մասնագիտացումը՝ պլազմայի ֆիզիկա: 1977 թ. ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճան, 1997 թ. դոկտորի: 2010 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Հ. Մաթևոսյանը 2011–2021 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, 2011 թ.՝ ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ, ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամի» տնօրեն, ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տեսական ֆիզիկայի բաժնի վարիչ: 2018 թ. ստացել է գիտության վաստակավոր գործչի կոչում:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ա. Սաղյանը ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում առաջադրեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արթուր Միքայելի Իշխանյանի թեկնածությունը: Փակ, գաղտնի քվեարկության արդյունքում 80 կողմ, 12 դեմ ձայների հարաբերակցությամբ Ա. Իշխանյանն ընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում:



Ա. Իշխանյանը ծնվել է 1960 թ. մայիսի 18-ին Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանի Շոշ գյուղում: 1983 թ. ավարտել է Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը: 1983–1986 թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Մեխանիկայի պրոբլեմների ինստիտուտի ասպիրանտուրայում: 1997 թ. ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճան, 2004 թ.՝ դոկտորի: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Ա. Իշխանյանի գիտական գործունեության բնագավառներն են՝ ատոմական, մոլեկուլային և օպտիկական ֆիզիկա, մակերևութային ֆիզիկա, քվանտային սակավալիճակ համակարգեր, գերասուր ֆոտոն և մագնիսա-ասոցիացիա, ոչռեյատիվիստական և ռեյատիվիստական ալիքային հավասարումներ, ոչզծային ֆիզիկա, մաթեմատիկական ֆիզիկա, Հոյնի ֆունկցիաների տեսություն:

1994–2005 թթ. Ա. Իշխանյանը եղել է ՀՀ ԳԱԱ «Մաշտոց» ճարտարագիտական կենտրոնի գիտքարտուղար, 2005–2006 թթ.՝ ՀՀ ԳԱԱ «Մաշտոց» ճարտարագիտական կենտրոնի տնօրենի պաշտոնակատար: 2007 թ. ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի «Նյութական ալիքների ֆիզիկայի» լաբորատորիայի վարիչն է:

2015 թ. Ա. Իշխանյանն արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի:

\* \* \*

Հունիսի 29-ին ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցան ՀՀ ԳԱԱ բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարների և ԳԱԱ նախագահության անդամների ընտրությունները:

ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լենաեր Աղապովյանը: ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Կոստանյանը: ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանը: ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի

մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լևոն Թավադյանը: ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներ ընտրվեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Ռադիկ Մարտիրոսյանը, Աշոտ Մելքոնյանը, Գեղամ Գևորգյանը, Գագիկ Ղազինյանը, Գևորգ Պողոսյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Արսեն Հախումյանը, Վազգեն Մելիքյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ա. Սադյանի առաջարկությամբ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը դարձավ ՀՀ ԳԱԱ նախագահի գլխավոր խորհրդական, ակադեմիկոս Յուրի Շուքուրյանը՝ ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական:

I

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՂՈՆՑԻ  
ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՍՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՈՉԱԿԻ ՏԵՐ ԲՅՈՒԶԱՆԴԱԳԵՏՆ ՈՒ ՀԱՅԱԳԵՏԸ\*

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Ն. Աղոնց, Սանկտ Պետերբուրգ, Հայագետ, բյուզանդագետ, կոթողային աշխատություններ, Բրյուսել, Փարիզ, Հայկական Հարց, Հայոց եկեղեցի, բազմալեզու:

Նախաբան

Նիկողայոս Աղոնցն այն նշանավոր հայ գիտնականներից էր, որոնք ստացել են փայլուն կրթություն Ռուսաստանում ու Եվրոպայում:

Ծնվել է Սյունիքի Բունակոթ գյուղում 1871 թ. հունվարի 10-ին՝ քահանայի ընտանիքում: Նրա հայրը և մայրը ծագումով աղնավականներ էին: Սկզբնական կրթությունը ստացել է Բունակոթի ծխական դպրոցում, այնուհետև սովորել է Տաթևի վանական դպրոցում, հետո ուսումը շարունակել է Էջմիածնի Գևորգյան ձեմարանում: Թիֆլիսում գերազանցությամբ ավարտել է ռուսական գիմնազիան, որի ավարտական վկայականում Տեր-Ավետիքով ազգանունը Աղոնցի համառ կամքի շնորհիվ դարձել է Աղոնց:

Պետերբուրգի համալսարանում սովորելիս և հետագայում շուրջ երկու տարի Եվրոպայի նշանավոր կրթական կենտրոններում՝ Լոնդոնում, Փարիզում, Վիեննայում, Ստրասբուրգում, Մյունխենում, ուսման մեջ կատարելագործվելիս Աղոնցն ունեցել է ազգային մեծ բարերար Արեքսանդր Մանթաշյանցի հովանավորությունը: Եվրոպայում ուսանելու տարիներին սերտ կապեր է հաստատել Վենետիկի Սուրբ Ղազար կղզու և Վիեննայի Մխիթարյանների միաբանների հետ և օգտվել նրանց մատենադարաններում պահվող ձեռագրերից ու տպագիր եզակի գրքերից:

Աղոնցն ազատորեն տիրապետում էր ֆրանսերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն լեզուներին, հրաշալիորեն վարժ էր բյուզանդական հունարենի մեջ, գիտեր լատիներեն, հին հունարեն, վրացերեն, արաբերեն, սանսկրիտ, պահլավերեն, կարգում էր տարբեր ազգերի սեպագրերը:

Աղոնցի կենսագրության վերաբերյալ կարևոր փաստեր է հաղորդում Բրյուսելի համալսարանում նրան աշակերտած Մուշեղ Իշխանը, որը տպագրել է եզակի հուշեր իր մեծ ուսուցչի մասին: Այդ հուշերում երևում է և՛ հայրենասեր հայ գիտնականը, և՛ մանկավարժը, և՛ մեծ հեղինակություն

\* Ներկայացվել է 25. V. 2021 թ., գրախոսվել է 11. VI. 2021 թ., ընդունվել է տպագրության 15. VI. 2021 թ.:



ունեցող միջազգային հռչակի տեր գիտնականը: «Չկարծեք, – ասում էր Ադոնցը, – թե գյուտերը միայն քիմիական կամ մեքենագիտական աշխարհի մեջ են տեղի ունենում: Մեծագույն գյուտն է, և հանճարեղ մտքի գյուտը, երբ մի բանասեր հաջողեցնում է մի բառի վրա հիմնված ժողովրդի քաղաքակրթության անցյալ մեկ շրջան վերականգնել կամ ցեղաբանական կազմությունը ճշտել և կամ մի դեպք իր ժամանակաշրջանի մեջ տեղավորել»<sup>1</sup>:

Պետերբուրգի համալսարանում սովորելու տարիներին Ադոնցի գիտական աճին սրտացավորեն և ուշադիր հետևել են երկու կարևոր անձիք: Առաջինը նշանավոր արևելագետ, հայագետ, կովկասագետ Նիկողայոս Մառն էր, երկրորդը՝ Ռուսաստանի պետական պաշտոնյա, հայագետ Կարապետ Եզյանը: Այդ երկու անձերի հետ ունեցած կապի խոսույն վկաններն են այն ուշագրավ նամակները, որոնք Ադոնցը տարբեր տարիների ուղղել է նրանց:

Բոլոր դեպքերում Ադոնցը որպես գիտնական ձևավորվել է Սանկտ Պետերբուրգի համալսարանում: Այդ համալսարանը հիմնադրվել է 1819-ին և ունեցել է ռուսական ու համաշխարհային գիտությունների փառքը դարձած նշանավոր գիտնականներ, ինչպիսին էր քիմիական էլեմենտների աղյուսակի հեղինակ Դմիտրի Մենդելեևը:

Ադոնցը միաժամանակ սովորել ու ավարտել է Ս. Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների և պատմաբանասիրական ֆակուլտետները՝ ստանալով գերագանցության ոսկե վկայականը: Այդ նույն համալսարանում պաշտպանել է մագիստրոսական թեզ «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» (1908 թ.), իսկ 1915 թվականին ստացել է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները» հետազոտության համար: Երկու աշխատություններն էլ եզակի են իրենց նշանակությունը ու հարստացնում են միջազգային բյուզանդագիտությունն ու հայագիտությունը: 1909-ից Ադոնցը դասավանդել է Ս. Պետերբուրգի համալսարանում սկզբում որպես դոցենտ, իսկ 1916-ից որպես պրոֆեսոր:

1920-ին Ադոնցը դիմել է Ռուսաստանի կառավարությանն արտասահման մեկնելու թույլտվություն ստանալու համար, սակայն չսպասելով պատասխանի՝ հեռացել է Ռուսաստանից, այլևս չվերադառնալու հաստատ որոշմամբ: Մինչև 1931 թ. ապրել է Փարիզում, իսկ 1931-ից, երբ հատուկ նրա համար բացվել է Բրյուսելի համալսարանի հայագիտական ամբիոնը, տեղափոխվել է Բրյուսել, դարձել այդ համալսարանի փառապանծ անուններից մեկը և այնտեղ էլ 1942 թ. հունվարի 27-ին կնքել մահկանացուն: Նա ամուսնացած էր գեղեցիկ ու տաղանդավոր, շատ երիտասարդ օպերային երգչուհի ու նկարչուհի Հուրի Հովնաթանյանի հետ, որին անսահման սիրում էր: Ցավոք, այդ գեղեցիկ կինը վախճանվել է 1935-ին՝ երկու տարվա ծանր հիվանդությունից հետո: Թաղված է Փարիզում: Ամեն տարի Չատկի տոնին Ադոնցը գնացել է ու ծաղիկներ դրել պաշտելի կնոջ գերեզմանին:

Ադոնցի համար 1920-ին Ռուսաստանից և դրա կազմի մեջ մտնող հայրենի Հայաստանից հեռանալը եղել է ողբերգականորեն ծանր, որովհետև նրա գիտական ողջ ստեղծագործությունը նվիրված էր իր երկրի կյանքի պատմությունը աշխարհին ծանոթացնելու նվիրական գործին:

<sup>1</sup> Մ. Ի շ խ ա ն. Երեք մեծ հայեր, Բեյրութ, 1952, էջ 12:

### Ադոնցի հոդվածները

Ադոնցը հիանալի գիտեր Հայաստանը, նրա պատմությունը, մշակույթը, միջազգային այն նպաստը, որ հայերը բերել էին մարդկության պատմության մեջ: Նա ոտքով ու ձիով շրջել էր թե Արևելահայաստանում, թե Արևմտահայաստանում, մասնակցել էր Ն. Մառի գլխավորությամբ ընթացող Հայ Բազրատունիների «տիեզերահոչակ» Անի մայրաքաղաքի պեղումներին, 1916–1917 թթ. ակտիվորեն մասնակցել Վանի, Մուշի, Էրզրումի հնագիտական արշավանքներին: Նրա գիտական ու հնագիտական ուսումնասիրություններն իրենց հանրագումարային արդյունքն արտահայտեցին վերջին կոթողային աշխատության մեջ, որը լույս տեսավ հետմահու 1946-ին Փարիզում և հայագետի երազած հայոց պատմությունը ներկայացնող 4 հատորից բաղկացած լինելու հեռանկարով ստեղծված աշխատության առաջին հատորն էր միայն: Այն կոչվում է «Քննական պատմություն Հայոց», ու այդ հատորի համար փայլուն առաջաբան է գրել Ֆրանսիայի ակադեմիայի անդամ Ռընե Գրուսեն:

Թեև Ադոնցն այլևս չկարողացավ գալ Հայաստան, նա իրենով ներկայացրեց Հայաստանը իր անձով ու իր գործով: Մուշեղ Իշխանը գրում է. «Հայաստանը կարծես Ն. Ադոնցն էր, նրա լավագույն հատկանիշների մարմնացումը, նրա մարդկային պատկերը: Նա հայ տղամարդ էր, բառի ավանդական, արդիական և ազնվական իմաստով»<sup>2</sup>:

Ն. Ադոնցի երկերի 8 հատորները հրատարակել է Երևանի պետական համալսարանը՝ Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության Հայկական բաժանմունքի հովանավորությամբ: Այդ հատորները նվիրվածով հրատարակության է պատրաստել պատմաբան, Ադոնցի երկերի լավագույն գիտակ Պետրոս Հովհաննիսյանը: Հիանալի է, որ հատորներում ուռևերենից, Փրանսերենից, անգլերենից թարգմանված ներկայացված են Ադոնցի տպագրված գործերը, ինչպես նաև նամակները:

Ադոնցը չի թողել ինքնակենսագրական հուշեր. դրանք կլինեին բացառիկ հետաքրքիր, որովհետև նրա կյանքը եղել է զարմանահրաշ: Սակայն 1937 թ. Բյուզանդում գրել է «Դավիթ Բեկ և Տեր Ավետիքի սերունդը» ինքնակենսագրական տվյալներ պարունակող հոդվածը, որը տպագրվել է նույն 1937-ին Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» ամսագրում<sup>3</sup>: Այս հոդվածում ուշագրավ փաստեր կան նրա մեծ պապի՝ Տեր Ավետիքի մասին, որը եղել է Դավիթ Բեկի զինակիցներից մեկը: Ահա թե ինչ է գրում նրա մասին Ղուկաս Սեբաստացին. «Այլև տեր-Ավետիսը նույն Հալիձորում էր 468 հոգով. այս տեր-Ավետիսը բազում մեծ սխրանքներ գործեց, ինչպես Պատմության մեջ է երևում. շատ քաջ էր ու արիասիրտ և՛ խուքով հույժ զորավոր, և՛ գործով, և սրա համար, երբ նա հեռանալով հայրենի երկրից պանդխտեց Երուսաղեմում, շատերը նրա հայրենի գավառից հորդորում էին վերադառնալ իրենց մոտ և պաշտպան կանգնել երկրին: Բայց նա հրաժարվում էր՝ քահանայական կարգի պատվին»<sup>4</sup>: Այս հոդվածում կա մի հետաքրքիր փաստ. այն կապվում

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 17:

<sup>3</sup> Տե՛ս Ն. Ադոնցի երկեր, հ. Ա, Երևան, 2006, էջ 547–555:

<sup>4</sup> Ղ. Սեբաստացի. Դավիթ Բեկի պատմությունը, Երևան, 1988, էջ 42:

է հայ միջնադարի նշանավոր դեմքերից մեկի՝ Գրիգոր Տաթևացու գերեզմանի վրա կառուցված շատ շքեղ դամբարանի հետ: Պարզվում է, որ 1787 թ. կառուցված այդ դամբարանի նյութական ծախսերը հոգացել են մի քանի բռնակոթցիներ, որոնցից մեկը եղել է Ադոնցի տոհմի նախահայրը՝ Ադդէն, որի անունով էլ նրանց տոհմը կոչվել է Ադոնց<sup>5</sup>:

Ադոնցի գիտական ժառանգությունը բազմաբնույթ է ու բազմալեզու: Դրանք պատմագիտական, բանասիրական, արվեստագիտական, լեզվաբանական աշխատություններ են, որոնց հիմնական առանցքը բյուզանդագիտությունն ու հայագիտությունն են:

1904 թ. գիտնականը զեկուցում է կարդում Ս. Պետերբուրգի համալսարանի գիտական նստաշրջանում: Թեման էր՝ «Մարգարան Վասակը պատմաբանների դատաստանի առաջ»: Սա բոլորովին նոր հայացք ու փորձ էր՝ ուղղված Ավարայրի հերոսամարտի դեպքերին: 451 թ. տեղի ունեցած Ավարայրի ճակատամարտը հայուլթյան համար դարձավ հավերժական հիշեցում. որքան էլ թշնամին հզոր և ուժեղ լինի, հող հայրենին օտարին տալը դավաճանություն է: Ավարայրի դեպքերը մանրամասն պատկերել են երկու պատմիչներ՝ Եղիշեն և Ղազար Փարպեցին, որոնք իրենց երկերը գրել են Մամիկոնյանների պատվերով: Երկու պատմիչներն էլ Վասակին համարում են դավաճան: Եղիշեն առավել ատելություն է ներկայացնում Վասակին՝ փորձելով նրա կերպարով կանխել եկող դարերում լինելիք դավաճանությունները. «Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա, առ ի կշտամբումն յանդիմանութեան մեղաց նորա. զի ամենայն, որ զայս լուեալ գիտասցէ, նզովս ի հետ արկցէ, և մի՛ լիցի ցանկացող գործոց նորա»<sup>6</sup>: Եղիշեի այս որակումը կրկնվել է դարերի ընթացքում: 1784 թ. Վենետիկի Մխիթարյան միաբանությունից անդամ Միքայել Չամչյանցը իր «Պատմութիւն Հայոց» երկի երկրորդ հատորում ունի ժԲ գլուխ հետևյալ խորագրով «Յաղագս բազմապատիկ նենգութեան և չարութեան Վասակայ և ունելոյ նորա զսուրբ Յովսէփ և զՂևոնդ և քաջութեանց հայոց ընդդէմ պարսից»<sup>7</sup>:

Այդ ավանդույթը կրկնվում է նաև XX դարի հայ գրողների երկերում: Այսպես էր մեկնաբանված Վասակի կերպարը մինչև Ադոնցի հոդվածը: Ըստ Ադոնցի՝ Վասակն ունեցել է բոլորովին ուրիշ քաղաքական ծրագիր, որը և հանգեցրել է դավաճանության: Գիտնականը հիշեցնում է Վասակ Սյունեցուն տրված Կորյուն վարդապետի գնահատականը. «Յորում ժամանակի պարզեւեալ յԱստծոյ, հասանէր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց քաջն Սիւսականն Վասակ, այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ: Բազում ինչ նպաստութիւն ցուցանէր աւետարանագործ վարդապետութեանն, իբրև որդոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ և ծառայեալ ըստ աւետարանին վայելչութեան, մինչ ի վախճան զհրամայեալսն ի գործ բերէր»<sup>8</sup>:

Ադոնցը շեշտում է, որ Վասակը սկզբում Վարդանի հետ էր, և հենց նրա մատանիով կնքված խնդրագրեր են ուղարկվում Բյուզանդիայի Թեոդոս

<sup>5</sup> Ն. Ա. դ. ո. ն. ց. Երկեր, հ. Ա, էջ 551:

<sup>6</sup> Եղիշե. Վասակ Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1989, էջ 282:

<sup>7</sup> Մ. Չամչյանց. Պատմութիւն Հայոց, հ. II, Երևան, 1984, էջ 77:

<sup>8</sup> Կորյուն. Վարք Մաշտոցի, Երևան, 2005, էջ 64:

կայսերը, Անտիոքի ստրատեգոս Անատոլիոսին, Հայաստանի Հարավային նահանգները՝ Աղճնիք, Անգեղտուն և Ծոփք, Իբերիա ու Աղվանք: Անգամ բանակցությունների մեջ են մտնում հոների թագավոր Հեռանի և ուրիշ լեռնականների հետ<sup>9</sup>: Սակայն ոչ մի տեղից օգնություն չի գալիս. «Այդպիսի պայմաններում խզել կապերը պարսիկների հետ և նրանց բացահայտ պատերազմ հայտարարել, նշանակում էր երկիրը տանել դեպի անխուսափելի կործանում»<sup>10</sup>: Արտաշատի ժողովին մասնակցում էին 18 նախարարներ: Նրանցից Վարդանի կողմն անցան 8-ը, իսկ 10-ը հրաժարվեցին ապստամբությունը մասնակցելուց և անցան Վասակի կողմը. «Ակնհայտ է, զրանում չի կարելի տեսնել ուխտադրություն, այլ սոսկ հարցի վերալծում»<sup>11</sup>: Ըստ Ղազար Փարպեցու՝ Հագկերտ Երկրորդն իր մոտ, որպես պատանդներ, պահել էր Վասակի երկու որդիներին, իսկ Եղիշեն այդ մասին լուր էր<sup>12</sup>:

Ադոնցը նշում է նաև Վասակի փեսայի՝ Վարազվաղանի բացահայտ դավաճանությունը, նրա դավանափոխ լինելը, Վասակի ցմահ բանտարկությունից հետո Սյունյաց տանուտեր նշանակվելը: Այս փաստերը ևս չկան Եղիշեի մոտ: Պատմաբանի կարծիքով Ավարայրի ապստամբության հետ կապված դեպքերն առավել անկողմնակալ պատկերել է Փարպեցին: Ըստ վերջինիս՝ Վասակը մինչև կյանքի վերջը մնում է քրիստոնյա և զղջում է իր վարքագծի համար:

Փորձելով արդարացնել Վասակ Սյունեցու վարքագիծը՝ Ադոնցը երբեք չի նսեմացնում Վարդան Մամիկոնյանին և նրա գլխավորած ազգային-ազատագրական պայքարը:

«Հին Հայոց աշխարհայացքը» հոդվածը Ադոնցը գրել է Փարիզում: Ակնհայտ նախնադարյան հայերի տոտեմների ու ֆետիշների ընկալումներից նա անցում է կատարում հեթանոս հայերի աստվածներին՝ չընդունելով Գրիգոր Խալաթյանցի՝ Խորենացուն ուղղված խիստ քննադատական մոտեցումները. «Կարծում ենք, որ Խալաթյանցի կասկածները տապալվում են: Արա Գեղեցիկի և Շամիրամի պատմությունը գրական հերյուրանք է, այլ զուտ ժողովրդական գրույց: Որ Շամիրամի շուրջը շատ ավանդություններ և առասպելներ են եղել, այդ երևում է Պատմահոր հակիրճ ակնարկներից»<sup>13</sup>: Յուրովի քննելով հեթանոս Հայ աստվածների հետ կապված ծեսերն ու Հավատալիքները՝ պատմաբանը եզրահանգում է, թե քրիստոնեական ծեսերն ու տոներն էլ գալիս են հեթանոսական ժամանակներից<sup>14</sup>:

Հայագետն առանձին հոդված է նվիրել Հայ հին վեպի հետաքրքիր դեմքերից մեկին՝ Տորքին, որի անվան և կատարած դերի շուրջ ներկայացնում է տարբեր գիտնականների կարծիքներ՝ կրկնելով, իհարկե, Պատմահոր «Հայոց պատմություն» մեջ եղած առասպելը: Սակայն Տորքի աստվածություն վերաբերյալ չի հայտնում սեփական եզրահանգումը<sup>15</sup>:

<sup>9</sup> Ն. Ա դ ո ն ց. Երկեր, հ. Ա, էջ 182:

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 185:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 186:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 24:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 77:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 79–85:

1907-ին է գրված «Հայ հին շինականությունը» հոդվածը՝ տպագրված Բոստոնի «Հայրենիք» ամսագրում: Սա բանավիճային հոդված է և ուղղված Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր Հակոբ Մանանդյանի «Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրուկյան մասին» հոդվածին: Մանանդյանն իր հոդվածում այն միտքն էր զարգացնում, թե Արշակունյաց Հայաստանում և նրանից հետո Հայաստանում եղել է համայնական հողատիրություն: 43 էջից բաղկացած այս ծավալուն հոդվածի հենց սկզբից Ադոնցը բացահայտում է խնդրի մեկնաբանման նման մոտեցման նկատմամբ ունեցած իր կտրուկ անհամաձայնությունը. «Սակայն իրավամբ կարելի է խորտնջել այս նորությունից: Հայաստանի երկու խոշոր հարևան պետությունները՝ իրանական արևելքը և բյուզանդական արևմուտքը, որոնց ազդեցություն տակ կերտված է Հայ կյանքը, ծանոթ չեն բնավ համայնական հողատիրության»<sup>16</sup>: Ընդդիմախոսը հոդվածում տարբեր ենթավերնագրերով, քաջատեղյակ ձևով ներկայացնում է ֆեոդալիզմի դարաշրջանի Հայ տնտեսական կյանքի կառուցվածքը, ֆեոդալների և իշխանների սեփականատիրական իրավունքները և շինականության կացությունը: Դրանք բնավ համահունչ չեն Մանանդյանի հոդվածում առաջադրված դրույթներին:

Տիգրան Մեծը Ադոնցի ամենասիրելի դեմքն է Հայ ժողովրդի պատմության ողջ ընթացքում: Նրա դերին է նվիրված «Միհրդատ Եվպատոր և Տիգրան Մեծ» հոդվածը: Միհրդատ Եվպատորը (111–63 մ. թ. ա.) Պոնտոսի թագավորն էր, որն իր ողջ գահակալության ընթացքում պատերազմել է Հռոմի դեմ: Նա շատ ընդունակ անձնավորություն էր, գիտեր բազմաթիվ լեզուներ, խոսում էր բոլոր այն երկրների լեզուներով, որոնք մտած էին իր կայսրության մեջ: Նրա պետության մեջ էին մտնում Բոսֆորի ու Դարդանելի նեղուցները: Միհրդատն իր աղջկան ամուսնացրել էր Տիգրան Մեծի հետ: Միհրդատը հեյլենական մշակույթի նվիրյալ հետևորդ էր: Հայտնի է, որ վերջնականապես պարտվելով Հռոմին, նա թույն է խմել ինքնասպան լինելու նպատակով, սակայն երբ թույնը չի ներգործել, խնդրել է իր զինվորներից մեկին՝ սպանել իրեն<sup>17</sup>:

Միհրդատ Պոնտացու կյանքի այս համառոտ նկարագիրը կա աշխարհի բազում հանրագիտարաններում: Տիգրան Մեծի մասին նույնպես կա մի շարք հանրագիտարաններում<sup>18</sup>:

Ադոնցը նախ խոսում է Միհրդատ Եվպատորի կամ Պոնտացու նվաճողական արշավանքների մասին: Միհրդատը բանակցություններ է վարում Հայաստանի թագավոր Տիգրան Մեծի (95–55 մ. թ. ա.) հետ՝ Հռոմի դեմ միացյալ ուժերով պայքարելու համար: Հայագետը գրում է. «Կարևորն այն է, որ Միհրդատի և Տիգրանի քաղաքական մերձեցումը պատճառ հանդիսացավ, որպեսզի երկու խոշորագույն տերությունները՝ Հռոմն ու Պարթևատանը, անհրաժեշտ համարեին պայմանավորվել Հայաստանի և Պոնտոսի տարածքային հետագա ծավալումը կասեցնելու համար: Այսպիսով, դա հիմք դրեց մի քաղաքականության, որը պետք է դարերի խորքից գոյատևեր

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 97:

<sup>17</sup> Տե՛ս «Petit Robert – 2». Paris, 1988, p. 1221.

<sup>18</sup> Տե՛ս «Nouveau petit Larousse illustré». Paris, 1932, p. 1711.

մինչև նոր օրերը, դառնար պարտավորեցնող մի դեղատոմս բոլոր ժամանակների քաղաքագետների համար»<sup>19</sup>:

Ազոնցը փաստացի հաստատում է, որ Տիգրանն իրեն զրսևորել է որպես աշխարհակալ ու լուսավորիչ, և նրա գործունեությունը նոր մեկնաբանման կարիք ունի: Պատմական ճշմարտությունը կեղծվել է հօգուտ Հռոմի փառքի: Տիգրանի կերպարը նսեմացրել են՝ ելնելով հռոմեական հայրենասիրությունից: Հին պատմիչները զարմանալիորեն աղճատել են Տիգրան Մեծի կերպարը. «Տիգրան Մեծն իր արժանավայել տեղը պետք է զբաղեցնի Արևելքում երբևէ իշխած տիրակալների շարքում: Նա արժանացել է «Մեծ» տիտղոսին՝ պատվավոր մի կոչման, որը պատմությունը հազվադեպ է շնորհում իր ընտրյալ դերակատարներին»<sup>20</sup>:

Ծավալուն հետազոտություն է «Մամիկոնյան իշխանուհին, բյուզանդական գահի վրա» խորագիրը կրողը: Հոդվածը տպագրվել է 1930-ին և պատասխան է իր ուսուցչի՝ Կարլ Կրումբախերի 1897 թ. տպագրած մի վիճահարույց հոդվածի:

Թեոփիլոս բյուզանդական կայսեր (829–842) գահակալության տարիներին արաբական խալիֆայի վտանգավոր թշնամի էր բյուզանդական կայսրության համար: Սակայն արաբական խալիֆայի մեջ կային ներքին հակամարտություններ: Իսպանիայի արաբ ամիրան ռիսերիմ թշնամի էր Բաղդադում նստող Աբբասյան տոհմին: Թեոփիլոս կայսերը հայտնի էր այդ հակամարտությունը, և նա դեսպանական այցելությունների միջոցով, դիվանագիտորեն փորձում էր օգուտ քաղել այդ հակամարտությունից: 839-ի վերջերին, ի պատասխան Թեոփիլոսի Իսպանիա ուղարկած պատվիրակության, ամիրան պատասխան բարեկամական պատվիրակություն է ուղարկում Կոստանդնուպոլիս: Արաբների պատվիրակությունը ղեկավարում էր յոթանասունամյա, սակայն երիտասարդական տեսք ունեցող մի կորովի պալատական՝ Յահյա-ալ-Ղազզալ անունով: Կայսրը համակրանքով է լցվում արաբ պատվիրակի նկատմամբ և հյուրին հրավիրում է մասնակցել արքայական ճաշկերույթին: Արաբ պատվիրակը նստած էր կայսեր մոտ, երբ հանկարծ սենյակ է մտնում թագուհին, որի չնաշխարհիկ գեղեցկությունը ապշեցնում է հյուրին: Վերջինս կայսերը հավատացնում է, թե երբևէ նման գեղեցկություն չի տեսել: Ազոնցն այս փաստը քաղել է արաբ պատմիչից: Կայսրուհին հայուհի էր՝ Մամիկոնյան նախարարական տնից, ու նրա անունն էր Թեոդորա: Այնուհետև, ըստ բյուզանդական պատմիչի, ներկայացնում է, որ Թեոփիլոսը կայսրության գեղեցկուհիների մեջ ընտրել է Թեոդորային՝ նրան տալով ոսկե խնձորը:

Ազոնցը պատկերում է Մամիկոնյան նախարարական տան զավակների մեծագործություններն ու ռազմական հաջողությունները Բյուզանդական կայսրության մեջ: Ըստ Ազոնցի՝ VIII դարի երկրորդ կեսին բյուզանդական կայսերական բանակն արդեն հայերի ձեռքում էր: Արտավազդը՝ սպարապետ Անատոլիկյան գնդի, Տաճատը՝ սպարապետ Բուկելլերյան գնդի, Վարազտիրոսը՝ սպարապետ Արմենիակյան գնդի, Գրիգորը՝ Մուշեղակի որդին, սպարա-

<sup>19</sup> Ն. Ա դ ո ն ց. Երկեր, հ. Ա, էջ 159:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 164:

պետն էր Օփսիկյան գնդի: Բյուզանդիայի հինգ գլխավոր զորավարներից չորսը հայեր էին<sup>21</sup>:

Թեոփիլոսն ու Թեոդորան որդի են ունենում, որը հագիվ երեք տարեկան էր, երբ կայսրը վախճանվում է, և իշխանությունն անցնում է Թեոդորային ու նրա անհափազաս որդուն: Ադոնցը խոսել է Թեոդորայի պատմական կշռի մասին. «Կանացի արտակարգ հմայքը, կնոջ այդ տիրական զենքը, մնաց ընտանեկան սրբության շրջանում և հրապարակ չհանվեց փառասիրական և քաղաքական նպատակների սպասարկության համար: Թեոդորան առաքինի էր և այն ժողովրդական մեծ համարումը, որ վայելում էր, պարտական էր իր մաքրություն: Թեոփիլոսը, որ ի բնե հակում ուներ գեխություն և շվայտություն, սեղմվեց վայելչության սահմանների մեջ շնորհիվ իր ամուսնու սրբակեցության»<sup>22</sup>:

Գիտնականը փաստերով է խոսում Թեոդորա թագուհու խնայող լինելու հատկանիշի մասին, որի հետևանքով բյուզանդական պետության ֆինանսական վիճակը դառնում է նախանձելի: Ադոնցն առանձին հոդվածով պատմում է Թեոդորա թագուհու եղբոր՝ Վարդ Մամիկոնյանի (856–866) մասին: Վարդը Թեոդորայի որդու խնամակալն էր և առաջին դեմքն էր պալատում Միքայելի կայսրության ժամանակ:

Բարձր գնահատելով Աստվածաշնչի Հին Կտակարանի պատմական և ճանաչողական արժեքը՝ Ադոնցը նկատում է, որ IX դարում բյուզանդական գիտական միտքը սկսում է որոնումներ կատարել և դեմքով շրջվում է դեպի անտիկ ժամանակները: Վարդը, լինելով ուսյալ և առաջադեմ հայացքների տեր մարդ, իր խնամքի տակ է վերցնում Լևոն քաջ փիլիսոփային, որն ազդություն էր հայ էր: Գիտությունն ու կրթությունը զարկ տալու նպատակով Վարդ Մամիկոնյանը Մագնավրա պալատում բացել տվեց Բյուզանդիայի առաջին համալսարանը՝ նրա ղեկավարումը հանձնելով Լևոն Փիլիսոփային: Ադոնցը մանրամասն պատմում է այն պալատական խարդավանքները, որոնք հյուսվում էին Վարդի դեմ և հանգեցրին նրա սպանությանը: Այդ ամենը կազմակերպում էր Վասիլը, որը հայ էր: Վասիլը սպանում է ոչ միայն Վարդին, այլև նրա քրոջ որդուն՝ Միքայելին ու գրավում գահը: Գիտնականը շատ բարձր է գնահատում Վարդի գործունեությունը, որի շնորհիվ Բյուզանդիայում հաստատվեց ժողովրդական լուսավորություն, ու բյուզանդական եկեղեցին կատարյալ ձևով ազատվեց Հռոմի եկեղեցու ազդեցությունից<sup>23</sup>:

Բյուզանդագետն առանձին ծավալուն հոդված է նվիրել Վասիլ Հայկագնին (867–886), որին անվանում է մեծագործ կայսր: Փոտ պատրիարքի ջանքերով Վասիլի համար հնարեցին մի ծննդաբանություն, ըստ որի Վասիլը սերում է Հայոց Տրդատ Երրորդ արքայի տոհմից՝ այն արքայի, որի ջանքերով քրիստոնեությունը Հայաստանում հաստատվեց որպես պետական կրոն: Ադոնցը փաստերով հիմնավորում է, որ Վասիլի հայրը և մայրը հայեր էին<sup>24</sup>, և նա սերում էր Մամիկոնյան տոհմից ու վերջինիս գահ բարձրանալով

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 354:

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 397:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 430–431:

Բյուզանդիայի գահն անցավ հայկական ծագումով Մակեդոնական դինաստիայի ձեռքը (867–1056): Վասիլ Առաջինի օրերին և ընդհանրապես Մակեդոնական դինաստիայի իշխանության ժամանակ Բյուզանդիան դարձավ աշխարհի ամենաուժեղ և զարգացած պետությունը<sup>25</sup>: Այդ դինաստիայի հզորության մասին գրված է վերջին տարիներին լույս տեսած «Լև Գումիլյով: Հանրագիտարան» ստվար հատորում. «Մակեդոնյան դինաստիայի դերը Բյուզանդիայի էթնոգենեզում եղել է նշանակալի: Նա վերականգնել է Բյուզանդիայի սահմանները մինչև Եփրատ ու Դանուբ, բարձրացրել տնտեսությունը և Կոստանդնուպոլսի մշակույթն ու նրա փառքը տարածել ողջ աշխարհի վրա»<sup>26</sup>:

Խիստ ուշագրավ հետազոտություն է Ադոնցի «Բագրատունյաց փառքը» խորագիրը կրողը, որը ներկայացնում է Բագրատունիների հայկական թագավորական տան շառավիղները Վրաստանում, Աղվանքում, Արցախում:

Անգլիացի հայագետ Չառլզ Դաուսեթը իր «Սայաթ-Նովա, XVIII դարի տրուբադուր (աշուղ)» գրքում գրված 1997-ին, նկատում է, թե Վրաստանի արքա Հերակլ Երկրորդը հատուկ ջերմ վերաբերմունք ուներ հայ Սայաթ-Նովայի նկատմամբ, որովհետև գիտեր, որ իր թագավորական ընտանիքը սերում է հայ Բագրատունիներից: Միաժամանակ նշում է, թե Բագրատունի թագավորական գերդաստանն աշխարհում եզակի է իր երկարակեցությամբ<sup>27</sup>: Մինչև Դաուսեթը՝ Բագրատունիների երկարակեցության և այդ առումով եզակիության փաստարկը տեսնում ենք Ադոնցի մոտ. «Հազվագյուտ են պատմության մեջ այնպիսի իշխանական տները, որպիսիք են Բագրատունիք. հազվագյուտ Արևելքում, թե Արևմուտքում: Տոհմ է բազմադարյան, աշխարհաչեն և աշխարհակալ և փայլեց իր հանճարով հատկապես արաբական շրջանում»<sup>28</sup>: Ադոնցի ծավալուն հետազոտությունը փաստացի ապացուցում է, թե ինչպես IX դարում Բագրատունիները հավասարապես թագավորում էին Հայաստանում, Վրաստանում և Աղվանքում:

«Հայացած Աստվածաշունչը և նրա պատմական տարողությունը» հոդվածը Փրանսերենով Ադոնցը կարդացել է 1936-ի մարտի 29-ին Սորբոնի համալսարանի հանդիսությունների մեծ դահլիճում, որին ներկա են եղել տարբեր ազգերի բյուզանդագետներ և հայագետներ: Զեկուցման մեջ ներկայացվում են այն մտավոր, մշակութային, քաղաքական նվաճումները, որոնց հայերը հասել են շնորհիվ Աստվածաշնչի հայերեն թարգմանության: Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի ջանքերով իրականացված Աստվածաշնչի թարգմանությունը հայերին տեղափոխեց լուսավորյալ ազգերի առաջին շարքերը: Իր ողջ ստեղծագործության մեջ բացառիկ տեղ հատկացնելով Հայաստանի կյանքում եկեղեցու ունեցած դերին՝ Ադոնցը գրում է. «Ազգային եկեղեցի ունենալ նշանակում է ունենալ սեփական մշակույթ, ինքնահատուկ

<sup>25</sup> “Petit Robert – 2”, p. 181.

<sup>26</sup> Л. Г у м и л е в. Энциклопедия. М., 2017, с. 173.

<sup>27</sup> Ch. D o w s e t t. Sayat-Nova, An 18<sup>th</sup> – century troubadour. Lovanii, 1997, p. 450.

<sup>28</sup> Ն. Ա դ ո ն ց. Երկեր, հ. Ա, էջ 439:



լեզու, գրականություն, արվեստ, մեկ խոսքով՝ ամեն ինչ, որ բնորոշում է ազգի հոգևոր կյանքը»<sup>29</sup>:

Այս հոգևածում Ադոնցը վերստին խոսում է հայ նախարարների՝ Բյուզանդիայում ունեցած վճռորոշ դերի մասին և բերում է օտարազգի բյուզանդագետների կարծիքներ, որոնք հաստատում են վերոհիշյալ ճշմարտությունը: Յրանսիացի պատմաբան և բյուզանդագետ Ալֆրեդ Ռամբոն վկայում է, թե X դարում հայերը դարձել էին Բյուզանդական կայսրության տերերը. պետական կարևոր պաշտոններում ամենուր հայեր էին: Բյուզանդական եկեղեցու փառքը հանդիսացող Փոստ պատրիարքը մոր կողմից հայ էր: Բյուզանդագիտության մեջ անվերապահ հեղինակություն ունեցող նույն գիտնականն ասում է. «Առանց հայ գորավարների Բյուզանդիան պիտի կործանվեր բարբարոսների հարվածների տակ: Ծանր ըուպեններին հանկարծ երևան էր գալիս մի Հերակլ, մի Վասիլ, մի Չմշկիկ, մի Փոկաս, որ այդ հոգնած քաղաքակրթությանը նոր թարմություն էր տալիս, և այնժամ կայսրությունը՝ այդ ծեր կինը, դառնում էր ինչպես մանկամարդ աղջիկ՝ ոսկով ու թանկագին քարերով զարդարված»<sup>30</sup>:

Ադոնցի «Հայ մշակույթի սկզբնավորությունը» հոդվածը նվիրված է Մաշտոցի ստեղծած գրերից հետո հայ մշակույթի զարգացման առաջին շրջանին: «Մշակույթն իր բարձր իմաստով սկսվում է իրապես գրի և գրականության շրջանից», – հավաստում է հայագետը<sup>31</sup>: Ըստ նրա՝ հայ գրերի ստեղծման հանգամանքները ավելի հայտնի են, քան այլ ժողովուրդներինը: Այդ խնդրում անփոխարինելի դեր է կատարել Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատությունը: Սակայն այդ աշխատության մեջ կան փաստեր, որոնք հարկավոր է ստուգել: Հատկապես անհրաժեշտ է ստուգել և ճշտել թվականները: Ահա հենց այդ խնդիրներին էլ նվիրված է Ադոնցի հոդվածը:

Հայագետը քաջ տիրապետում էր հայ միջնադարի մեծերի երկերի բնագրերին ու փորձում էր մեկնաբանել դրանցում եղած անհասկանալի մտքերն ու գիտական առումով նոր լույս սփռել դրանց վրա: Նրա սիրելի պատմիչներից էր Փավստոս Բուզանդը, որի պատմության ուսումնասիրությամբ զբաղվել է երկար տարիներ՝ սկսած դեռևս Եվրոպայում ուսանելու ժամանակներից: Ադոնցի կարծիքով Բուզանդը չի օգտվել վավերագրերից, նա հետևել է կենդանի հիշողություններին և ավանդություններին. «Փավստոսի գլխավոր առավելությունը մյուս պատմիչների համեմատությամբ՝ երկրի իրական կյանքը մոտիկից ճանաչելու մեջ է»<sup>32</sup>: Հայաստանի պատմության մեջ 298–363 թվականների արանքում եղած իրադարձությունների ճշգրիտ պատկերը վերականգնելու համար Փավստոսի երկն ունի եզակի արժեք: Հույն պատմագիրներից բերված ընդարձակ մեջբերումներով հայագետն առավել հաստատում է Փավստոսի երկի պատմական ու ճանաչողական արժեքը: Հատկապես համապատասխան զուգահեռներ են տարվում IV դարի լատին պատմիչ Ամմիանոս Մարկեպլինոսի՝ հայ թագավորների՝ Տիրանի, Արշակ Երկրորդի, Պապ թագավորի մասին պատմությունների հետ:

<sup>29</sup> Ն. Ա դ ո ն ց. Երկեր, հ. Բ, Երևան, 2006, էջ 45:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 50:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 35:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 87:

1925–1926 թվականներին է գրված Ֆրանսիացի Հայագետ Լուի Մարիեսի Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» գրքի Ֆրանսերեն նոր թարգմանություն առթիվ հոդվածը: Ադոնցը մանրակրկիտ գրախոսում է այդ թարգմանությունը: Մարիեսը դրանից հետո մինչև 1959 թ. գրադվել է Եզնիկի մատյանով ու 1959-ին Փարիզում տպագրել Եզնիկի երկի նոր թարգմանությունը<sup>33</sup>:

Ադոնցը մեկ առ մեկ քննում է Մարիեսի կարծիքները Եզնիկի գրքի տարբեր հատվածներին վերաբերող և առաջադրում է նույն խնդիրների վերաբերյալ իր կարծիքները՝ երևան բերելով զրադաշտական կրոնին վերաբերող իր գիտելիքները: Ադոնցի կարծիքով, Եփեսոսի ժողովի օրերին գտնվելով այդ քաղաքում, Եզնիկը ծանոթ էր մեղքի վերացման շուրջը բորբոքված հոգևոր վեճերին և հենց այդ ժամանակ էլ հղացել է իր գրքի ստեղծման գաղափարը: Նա իրավացիորեն փաստում է, թե իր գաղափարախոսությունը Եզնիկի «Եղծ աղանդոց» կապված է Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքի» հայերեն թարգմանություն և Գրիգոր Լուսավորչին վերագրվող «Յաճախապատում» ճառերի հետ:

Ադոնցն ունի մի մեծ շարք ոչ ծավալուն հոդվածներ, որոնք բացառիկ արժեք ունեն հայ միջնադարյան մշակույթի և մատենագրության անհայտ էջերը լուսաբանելու առումով: Այդօրինակ հոդվածներից մեկը կոչվում է «Մլքեի Ավետարանի գրություն տարին»: Այս Ավետարանը գրվել է IX դարում և հայտնի է որպես մեր օրերը հասած ամենավաղ պատկերազարդ ձեռագիր: Այն համարվում է Վենետիկի Սուրբ Ղազար կղզում գտնվող Մխիթարյան միաբանության մատենադարանի ամենամեծ զարդը: Ավետարանը պատվիրվել է Գազիկ Արծրունի թագավորի երկրորդ կինը՝ Մլքեն և հետագայում նվիրել է Վարազավանքի Սուրբ Աստվածածին եկեղեցուն: 1208-ից սկսած Ավետարանը բազմիցս գերեվարվել է և փրկագնով գերեզարձ արվել: Ադոնցը ճշգրտում է Ավետարանի գրության ժամանակն ու եզրահանգում. «Մլքե թագուհու Ավետարանը գրված է ... 862 թվին, հոկտեմբերի 19-ից մինչև նոյեմբեր 26-ը՝ երկուշաբթի և վերջացրած հինգշաբթի օր»<sup>34</sup>:

Նույն ձևով Ադոնցը որոշ ճշգրտումներ է կատարել՝ կապված էջմիածնի փղոսկրյա կազմով Ավետարանի հետ: Նա հիշեցնում է, որ Ֆրանսիացի Հայագետ Ֆրեդերիկ Մակլերը 1909-ին եղել է էջմիածնում և հետո երկար տարիներ գրադվել հայ մանրանկարչությանը, հրատարակել ծավալուն արժամատեղություններ և հայտնել, թե փղոսկրյա կազմով Ավետարանի մանրանկարները հայկական են:

1935-ին համայն աշխարհի առաջադեմ մարդկությունը տոնեց պարսիկ հանճարեղ բանաստեղծ Ֆիրդուսու ծննդյան 1000-ամյակը: Ֆիրդուսու (940-1020) մասին հիացական տողեր են գրել Հովհաննես Թումանյանը, Հրաչյա Աճառյանը<sup>35</sup>: Ֆիրդուսին «Շահնամեն» գրել է, երբ Պարսկաստանը արաբական նվաճումներից հետո չունեի վաղեմի փառքը: Ադոնցի կարծիքով Ֆիրդուսին խիզախ գործ է կատարել իր կոթողային երկով պանծացնելով անցյալ ժամանակների փառքը: Իր երկիրը պետք է ազատվեր աջեմական տիրապե-

<sup>33</sup> S t e ' u E z n i k d e K o l b. De Deo. Paris, 1959.

<sup>34</sup> Ն. Ա դ ո ն ց. Երկեր, հ. Բ, էջ 489:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 484:

տուժյունից ու իր անցյալին վայել տեղ բռներ լուսավոր երկրների շարքում. «Շահնամեն, լայն ըմբռնումով, ոչ այնքան անհատական ներշնչման և կամ անհատական նախաձեռնություն արդյունք էր, որքան ծնունդ մոտալուտ ազատության երազներով խանդավառված հանրային գիտակցություն: Եվ միանգամայն գաղափարական աստղձ էր նոր կանգնելի պետական շենքի»<sup>36</sup>: Ըստ Ադոնցի՝ Ֆիրդուսու տոնը մոտ է հայերի սրտին, որովհետև նրանում կա քաղաքակրթության ու ազգի լուսավորության փառաբանումը, իրողություն, որի համար հայերն այնքան արյուն են թափել և դրա համար էլ դարեր շարունակ հալածվել են խավարամիտ բռնությունից: Հայերն իրենց դեմքը դարձրել են դեպի լուսավոր Արևմուտքը, որպեսզի փարատեն Արևելքի ոճրագործ խավարը<sup>37</sup>:

Ադոնցը «Դավիթ Բեկի պատմական հիմը և գաղափարական արժեքը» ծավալուն հոդվածում քննական մոտեցում է ցուցաբերում Բաֆֆու «Դավիթ Բեկ» վեպի պատմական դեպքերի նկարագրության նկատմամբ: Հոդվածում նա տեղադրել է Դավիթ Բեկի ազատագրական կռիվների քարտեզը, որը սկսվում է Շուշիից ու ավարտվում Նախիջևանով: Պատմաբանը ճշգրտում է վեպում պատկերված որոշ իրադարձությունների պատմական փաստերը, նշում պատմական որոշ անձերի կատարած դերի փոփոխությունները: Ըստ երևույթի Ադոնցը ծանոթ է Վ. Բելինսկու պատմավեպի տեսությունը, երբ գրում է. «Գործող անձիք կարող են լինել շինծու, անծանոթ պատմությանը, բայց եթե նրանց նկարագրիր, նրանց ոգին, աշխարհայացքը համապատասխան են ընտրած պատմական միջավայրին, կլինեն պատմական»<sup>38</sup>:

Իրավացի է Ադոնցը, երբ ասում է, թե Բաֆֆին Դավիթ Բեկին անդրադարձել է իր ժամանակի խնդիրներից ելնելով: Վեպը նրա համար եղել է քաղաքական կրթության մի դասարան<sup>39</sup>: «Դավիթ Բեկ» վեպով Բաֆֆին կամեցել է ժամանակակիցներին սովորեցնել, թե ինչպես կարելի է թոթափել օտարի լուծը:

Հայագետը հոդվածը գրել է Բրյուսելում 1937-ին: Հոդվածի ավարտի հատվածն ուղղված է հանուր հայությանը՝ բոլոր եկող ժամանակներում: Այն իմաստուն պատվիրան է, որը ոչ միայն պետք է հիշի սովորական հայը, այլ հատկապես այն հայերը, որոնք ստանում են մի ամբողջ ազգ առաջնորդելու ու ղեկավարելու առաքելությունը: Տեղին է Ադոնցի պատգամը մեջբերել նույնությամբ. «Մենք կովազան չենք և զենք էլ չունենք կովելու: Բայց սովորենք գոնե զինավարժություն, ծանոթանանք ժամանակակից ահալոր զենքերին, զինվորագրվենք և ոչ թե խուսափենք օտար շարքերում: Օգտվենք պատեհությունից, խոհուն ճակատով և համր բերանով: Ոչ ոք չգիտե, անցքերի թավազլոր անիվը ո՞ւր է տանում: Պատրաստ և զգաստ լինենք, որպեսզի չկորչենք անփառունակ, կովողների ոտքերի տակ կոխան» (ընդգծումը մերն է – Ա. Դ.)<sup>40</sup>:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 490:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 494:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 522:

<sup>39</sup> Նույն տեղում:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 529:

Ազոնցն անդրադարձներ ունի նաև նոր շրջանի հայ և օտար գրականություններին: Աբովյանի անհայտանալու բացատրության մի նոր փորձ է կատարել Ակսել Բակունցը «Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայումը» հոդվածով, որը և քննարկում է հայագետը: Աբովյանի անհայտ բացակայումը Բակունցը կապել է 1848-ին Ֆրանսիայում տեղի ունեցած փետրվարյան հեղափոխության հետ: Իբր այդ ընդվզման ձայնը հրապուրել է Աբովյանին, ու նա թողել է տուն, տեղ ու Տաճկաստանով գնացել Եվրոպա: Նա չի ընդունում գրականագիտության մեջ եղած Աբովյանի անհայտ բացակայման բոլոր վարկածները, ինչպես նաև Բակունցին: Այդ հոդվածում Ազոնցն ունի Աբովյանի անձի անմոռաց բնութագրական. «Աբովյանն այն անձերից էր, որ աշխարհ են գալիս խորհուրդը ճակատին և երազները հոգում» (ընդգծումը մերն է – Ա. Դ.)<sup>41</sup>:

Գրականագիտական կարևոր դրույթներ կան «Պեշիկթաշյան և կցորդ խնդիրներ» հոդվածում, որը գրվել է 1931-ին Փարիզում: 1928 թ. դեկտեմբերին Փարիզում մի խումբ հայ մտավորականներ, որոնց թվում Ազոնցը և Լևոն Շանթը, հիմնում են «Հայ գրական ակումբ» խումբը, որի նախագահն է ընտրվում Ազոնցը: Սա նշանակում է, որ ժամանակակից հայ գրականությունը և գրականագիտությունը ևս եղել են հայագետի ուշադրության կենտրոնում:

Ազոնցը զարմանալի ընդհանուր գծեր է տեսնում հայ միջնադարի և եվրոպականի միջև. հայկականն ունի հին շրջան, միջին տաղասացիկ շրջան, կեղծ-դասականություն և ուսմանտիզմ: Հայագետը չի ընդունում այն մտավորականներին, որոնք կրոն և ազգ համարում են տարբեր բաներ: Նա զգուշացնում է, որ ամեն կողմից հայերը շրջապատված են հայերի միասնությունը քայքայել կամեցողներով. «Երբ գայլերը մտնում են հոտի մեջ, եղբայրության աղերսներն անիմաստ են գայլի բերանում և եղկելի ոչխարի բերանում, որ ուրիշ կերպ չէ հասկացվում, քան «եկ և կեր ինձ» (ընդգծումը մերն է – Ա. Դ.)<sup>42</sup>:

Մեծարժեք է 1903-ին գրված «Գրական նշմարներ, դեկադանս և սիմբոլիզմ» հոդվածը: Մի քանի տարիներ ապրելով արտասահմանում և մոտիկից շփվելով Եվրոպայի քաղաքակիրթ երկրների գրական կյանքի նորամուտ հոսանքներին՝ Ազոնցն այդ հոդվածում ներկայացնում է գրականագիտական իր նոր ընկալումները, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց արժեքը:

Հատկապես հարուստ է գիտնականի բյուզանդագիտական ժառանգությունը. այն երկճյուղ գիտական ու ճանաչողական արժեք ունի: Նախ ներկայացնում է Բյուզանդիայի պատմության կարևորագույն իրադարձությունները և հետո այդ պատմության նշանավոր դեմքերին, որոնք ազգությունամբ հայեր են եղել:

«Հայ գիտական դեմքեր Բյուզանդիայում» ծավալուն հոդվածը նա գրել է 1930-ին: Գիտնականի կարծիքով հայերի գերիշխանությունը Բյուզանդիայի արքունիքում սկսվում է ոչ թե Վասիլ Մակեդոնացուց, այլ Լևոն V Հայկազն կայսրից, այսինքն IX դարի սկզբից:

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 536:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 556:

Ներկայացնելով Լևոն Փրիստոփայի անտիկ գիտությունից IX դարում կատարած նորամուծությունները՝ Ադոնցը շեշտում է, որ թեև Լևոնը հայ էր, սակայն նրա նվաճումներն արդյունք են բյուզանդական կրթության: Նրա կարծիքով Լևոն Փրիստոփայի նվաճումները Հայաստանում արդեն VII դարում իրականացրել էր հանճարեղ Անանիա Շիրակացին, վերջինս ապրել է VII դարում և հայ դպրության մեջ նույն տեղն է գրավում, ինչ որ Լևոնը՝ բյուզանդականում<sup>43</sup>: Ադոնցն ապացուցում է, որ XIV դ. նշանավոր բյուզանդացի մաթեմատիկոս Արտավազդը, որը փայլում էր ստույգ գիտությունների մեջ, նույնպես հայ էր<sup>44</sup>:

1928-ին Ադոնցը բյուզանդագիտական նոր հայտնագործություն կատարեց «Դիգենիա Ակրիտաս» բյուզանդական դիցազնավեպի պատմական հիմքը» հետազոտությունում: Նա ապացուցում է, որ դյուցազներգությունը հունական չէ, որովհետև հերոսների ծննդավայրն ու գործունեության վայրը Եփրատի հովիտն է, ու դյուցազներգության գլխավոր հերոսը հայկական ծագում ունի, և նրա քաջագործությունները տեղի են ունենում Արևմտյան Հայաստանում<sup>45</sup>:

Բյուզանդագիտական շարքի հոգևածներում հատկապես ուշագրավ են «Աշոտ Երկաթ թագավոր Հայոց» և «Բուլղարների արքա Սամուել Հայկազնը» ուսումնասիրությունները:

#### Գիտնականի նամակները

Ադոնցի Երկերի է հաստորը նրա նամականին է՝ 135 նամակներով ուղղված իր ապրած ժամանակաշրջանի նշանավոր մարդկանց, հայտնի պարբերականների խմբագիրներին՝ հայկական ու եվրոպական:

Ադոնցի նամակներում գրեթե ոչինչ չենք տեսնում նրա կենցաղին վերաբերող. ամեն ինչ կապված է սկզբում ուսման, իսկ հետո՝ գիտական, հասարակական գործունեության հետ: Առաջին շրջանի նամակներում մեծ թիվ են կազմում Ն. Մառին ուղղված նամակները, որոնք գրված են Եվրոպայի ամենատարբեր քաղաքներից ու կապված են ուսման խնդիրների հետ: Այդ նամակներում, որոնք գերակշիռ մասով ուսուցիչ են, Ադոնցը պատմում է ուսման հետ կապված իր ձեռքբերումների, ապագա նպատակների, Եվրոպայի քաղաքներից ու գիտնականներից ստացած տպավորությունների մասին: Նամակներում ապագա նշանավոր բյուզանդագետը հաճախ է խոսում բյուզանդական աղբյուրներում իր կատարած հետազոտությունների մասին՝ դրանք շարունակ համեմատելով հայ մատենագիրների հաղորդածների հետ:

1920 թ. նոյեմբերի 7-ին պրոֆեսորը զայրալից նամակ է ուղարկել Լոնդոնի «Թայմս» թերթի խմբագրին: Կարծես այսօր է գրվել այդ նամակը: Նա զայրույթով հիշեցնում է, թե ինչպես Փրանսիացի գեներալները սեթևեթում են թուրքական ավազակների հետ Կիլիկիայում ապաստանած մի բուռ հայերի դիակների վրա: Նա քննադատում է Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի կառավարողներին, որոնց խղճի վրա ընկած է Հայկական հարցը ծանր

<sup>43</sup> Ն. Ա դ ո ն ց. Երկեր, հ. Ե, Երևան, 2012, էջ 76:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 80:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 101:

քարի նման: Նամակի վերջում եզրահանգում է, թե գուցե այնժամ հայերը մեկընդմիջտ կշրջվեն Եվրոպայից տառապալի համոզմամբ, որ մարդկային արժեքներից լավագույնը՝ խիղճը, այնտեղ անհույս խլացել է<sup>46</sup>:

Ադոնցը հայ դատի նվիրյալն էր: 1929 թ. ապրիլի 24-ին Փարիզում իր նախաձեռնությամբ տեղի ունեցած Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի սգահանդեսի ժամանակ նա հայրենակիցներին է դիմում հակիրճ, բայց ազդու խոսքերով. «Չկա հաղթանակ առանց պարտության: Երբ ծառի ճյուղերը կտրում են, նա թարմ ոստեր է արձակում: Ձեզնից յուրաքանչյուրը պետք է կատարի իր պարտականությունը՝ հանուն ազատության» (ընդգծումը մերն է – Ա. Դ.)<sup>47</sup>:

Ադոնցի «Նամականու» մեջ բազում են նամակները՝ ուղղված Ն. Մառին, Կ. Եղյանին, Ն. Ակինյանին, Արշ. Չոպանյանին, Գ. Հովսեփյանին, Թ. Գուշակյանին, Կ. Զարյանին և ուրիշներին, որոնցում շարադրված դրույթները ելակետային են ու այսօր էլ կարևոր են լեզվաբանների, գրականագետների, քաղաքական գործիչների, պատմաբանների և ընդհանրապես գիտությանը զբաղվող մարդկանց համար:

Ադոնցի գիտական ժառանգության ամենատարբեր գործերում տեսնում ենք խորքային անդրադարձ հայ քրիստոնեական եկեղեցու գործունեությանը՝ սկսած Գրիգոր Լուսավորչից մինչև XX դ. 30-ական թվականները: Նրա կարծիքով Ազաթանգեղոսի երկի տվյալները բոլորովին պիտանի չեն Լուսավորչի օրոք եկեղեցական նվիրապետության վիճակը պարզելու համար: Հայ եկեղեցու սկզբնական շրջանի պատմության առավել վստահելի աղբյուրը Փավստոսի աշխատությունն է:

Ադոնցը դրական է համարում հայրապետական աթոռի փոխադրումը Էջմիածին, որը տեղի ունեցավ 1441 թվականին<sup>48</sup>: Նա Գլաձորի համալսարանի սան է համարում ամեն մի կրթված հայ հոգևորականի, որը նոր օրերում XX դարում, ունի գիտական պատրաստվածություն և կրոնավորի անաղարտ վարք<sup>49</sup>:

Գիտնականի կոթողային աշխատությունները

Ադոնցը գիտությանն է ժառանգել երեք կոթողային մենագրություն: Դրանցից առաջինը «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» երկն է, որը նրա մագիստրոսական թեզն է: Աշխատությունն աչքի է ընկնում օգտագործված տարալեզու աղբյուրների առատությամբ և անտարակույս ունի միջազգային արժեք: Հուստինիանոսի դարաշրջանը անցումային կարևոր սահմանաբաժան է հռոմեական ու բյուզանդական պետությունների միջև, այն նշանավորում է անտիկ ժամանակահատվածից դեպի քրիստոնեական միջնադար տեղափոխվելը:

Հուստինիանոսի (կայսր 627–565) ժամանակաշրջանն աչքի է ընկնում կայսրության տարածքների ընդարձակմամբ: Հուստինիանոս Առաջինը

<sup>46</sup> Ն. Ա դ ո ն ց. Երկեր, Հ. Է, Երևան, 2014, էջ 93–94:

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 132:

<sup>48</sup> Ն. Ա դ ո ն ց. Երկեր, Հ. Բ, էջ 499:

<sup>49</sup> Նույն տեղում, էջ 503:

Հաղթական պատերազմներով գրավել է Հյուսիսային Աֆրիկան, Սիցիլիան, Իտալիան, Իսպանիայի մի մասը: Իր կայսրության տարածքում կատարել է լայնածավալ շինարարական աշխատանքներ: Ջարգացրել է գիտությունը: Նրա օրոք Կոստանդնուպոլսում կառուցվել է Սուրբ Սոֆիայի հոյաշեն տաճարը: 989 թվականին Սուրբ Սոֆիայի տաճարի գմբեթը երկրաշարժի հետևանքով քանդվել է, և այն առավել գեղեցիկ ձևով վերաշինել է հայ ճարտարապետության փառքերից մեկը՝ Տրդատ ճարտարապետը, որը ստեղծագործել է X դարի երկրորդ կեսից մինչև XI դ. սկիզբը:

Ապշեցուցիչ են իմացական այն ծավալները, որին ծանոթանում է ընթերցողը գիրքը կարդալիս: Չնայած հեղինակը ներկայացնում է կատարյալ մի գործ, սակայն այն չի համարում անթերի, որովհետև բողոքում է անհրաժեշտ աղբյուրների պակասությունից:

Գալով իշխանության՝ Հուստինիանոսը ձգտեց ստեղծել կենտրոնացված ուժեղ իշխանություն: Նրա երկարատև թագավորությունն ուղեկցված էր Արևմուտքում ու Արևելքում մղված շարունակական պատերազմներով: Պրոկոպիոս պատմիչը գոթական ու հայկական դեսպանների չուրթերով մեզ հաղորդում է. «Հուստինիանոսն ի վիճակի չէր մնալ պայմանագրով հաստատված սահմաններում, վառվում է ամբողջ տիեզերքը գրավելու կրքով՝ ձգտելով նվաճել բոլոր թագավորությունները»<sup>50</sup>:

Գրքի VII գլուխը պատմաբանն անվանել է «Հայաստանի քաղաքային վերակազմությունը»: Հուստինիանոսը Բյուզանդիայի հին օրենքների վրա ավելացրեց նոր հավելվածներ, որոնք կոչեց նովելլաներ: Ըստ այդ նովելլաների՝ կատարվեցին քաղաքական նոր բաժանումներ: Հայաստանի արևմտյան հատվածը բաժանվեց I, II, III, IV Հայքերի՝ պահպանելով Հայք անվանումը այդ տարածքներում հայ բնակչության գերակշիռ լինելու պատճառով:

Հայաստանում մտցվեցին ժառանգական կարգի նոր նովելլաներ, որոնց մեջ մտան կանանց իրավունքները օժիտի և ժառանգության հարցերին վերաբերողները:

Ադոնցի համոզմամբ Հուստինիանոսի նովելլաների բուն նպատակը Հայաստանում նախարարական ազգային վարչակարգի կործանումն էր, և Հայաստանի հռոմեականացումը, որի շնորհիվ Հայաստանը կդառնար հուսալի պատենչ Արևելքից սպասվելիք սպառնալիքների դեմ: 535-ին լույս տեսավ մի նովելլա, որում կայսրն անկեղծորեն մերկացնում էր երկրի ներքին կյանքում տեղ գտած խոցելի երևույթները: Նա ի լուր ամենքի հայտարարում էր. «Դրամասիրությունը մայրն է բոլոր չարիքների»<sup>51</sup>:

Ադոնցի գիրքը մեծարժեք է նաև նրանով, որ այն մանրամասնորեն ներկայացնում է Արևելյան Հայաստանի VI դ. կյանքը, երբ Հայաստանը պարսկական տիրապետությանը ենթակա մարզպանական երկիր էր: Ադոնցը, ըստ հայ պատմիչների, հատկապես Ղազար Փարպեցու ու Եղիշեի հաղորդած տվյալների, նաև արաբ պատմիչ Յակուբու հաղորդած փաստերի, ճշգրտում է հայ նախարարական տների քանակը:

Աշխատության մեջ պատմաբանն առանձին գլուխներ է նվիրում նախարարությունների տարածքային վերլուծությանը, նախարարների ու հոգևոր իշխանության փոխհարաբերություններին: Նախարարական տներից բացի

<sup>50</sup> Ն. Ա դ ո ն ց. Երկեր, հ. Ը, Երևան, 2016, էջ 119:

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 145:

Հայագետը հստակ ներկայացնում է Հուստինիանոսի դարաշրջանի Արևելյան Հայաստանի հոգևոր իշխանապետերին՝ իրենց եպիսկոպոսական թեմերով: Մասնագետներն ըստ այդ փաստերի ամբողջական պատկերացում կարող են ունենալ Լուսավորչի հիմնած հայկական եկեղեցու VI դարում ունեցած թեմական խմբավորումների մասին:

Գրքում կան փաստեր, որոնք վկայում են Հայ նախարարների հավատարիմ լինելն ազգային եկեղեցուն՝ այն քաջ գիտակցությամբ, թե եկեղեցին ազգային ինքնուրույնության մեծագույն հիմնաքարերից մեկն է: Անգամ Արևելյան Հայաստանից պարսիկներից հալածական Արևմտյան Հայաստան տեղափոխված նախարարները հրաժարվում էին իրենց արված առաջարկից՝ անցնել հունական հավատին ու հավատարիմ էին մնում հարազատ ազգային եկեղեցուն<sup>52</sup>:

Աշխատության XIV գլուխը նվիրված է Հայ նախարարությունների տոհմական հիմքերին: Այս հատվածում պատկերված է Տիգրան Մեծի ժամանակ նրա կայսրության մեջ մտած տարալեզու և տարազգի ազնվական դասի նկատմամբ Հայոց արքայի դիվանագիտական ճշգրիտ վերաբերմունքը: Հայագետը գտնում է այն ընդհանրությունները, որոնք շփման կետեր ունեն Հայաստանի ու եվրոպական երկրների ֆեոդալական կարգերի միջև: Նա նաև իր կատարածի համար որպես եզրահանգում դնում է հետևյալ կարևոր միտքը. «Նախարարության հարցի մեր մեկնաբանությամբ լույսի մի ճառագայթ է շողում այն մշուշի մեջ, որ կախված է Հայ հեռավոր անցյալի վրա՝ մինչև Արշակունիների շրջանը, և դրվում է Հայոց պատմական կյանքի հետագա ընդարձակ շրջանի գիտական ըմբռման հիմքը՝ մինչև մոնղոլական արշավանքների դարաշրջանում նախարարության ոչնչացումը»<sup>53</sup>: Նմանատիպ մտքի հանդիպում ենք Մառի «Անի» կոթողային աշխատության մեջ. «Անին համենայնդեպս ավելի հարազատ ու մոտիկ է հին հայկական կենսակերպին՝ նրա ազնվական բնույթով ու դասային հիմքերով, քան թե Հայ ժողովրդի հետագա դիմագծին, երբ քաղաքական լրիվ անկումը և մահամեղականների կողմից շարունակական հալածանքները համահարթեցրին հայերին մեկ դասի մեջ»<sup>54</sup>:

Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» աշխատությունը լրացնում է միջազգային բյուզանդագիտության մեջ եղած կարևորագույն բացը և մշտապես հետաքրքրելու է Բյուզանդիայի պատմության Հուստինիանոսի դարաշրջանը ուսումնասիրողներին:

Ադոնցը նաև հմուտ լեզվաբան էր: Դա բնականոն իրողություն է նրա նախասիրած գիտական հետաքրքրությունների լայն շրջանակի համար: «Դիոնիսիոս Թրակացին և Հայ մեկնիչները» աշխատության ներածական խոսքում նա բացատրում է, թե Հայ միջնադարի մեկնիչներն ինչպես էին հասկանում ձևաբանության ու շարահյուսության կանոնները: Ըստ դրա էլ ներկայացվում է, թե որն է շեշտը, ինչ է հազներգությունը, ինչ է կետը, ինչ է

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 325:

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 467:

<sup>54</sup> Н. Я. Марр. Ани, столица древней Армении (историко-археологический набросок). М., 1898, с.199.



տառը, որն է վանկը, որն է բառը: Առանձնացված քննվում են խոսքի մասերը գոյականը, բայը, դերբայը, դերանունը, մակբայը, շաղկապը:

VII դարից սկսած հայ քերականներն իրենց մեկնություններով ամփոփում են քերականական ու փիլիսոփայական մտքի ճոխ զարգացումը, որը տեղի էր ունեցել նախորդ VI դարում, երբ Հայաստանում ձևավորվեց հունաբան դպրոցի հարուստ ավանդույթը՝ հունարենից կատարված բազում թարգմանություններով:

Իր ուսումնասիրության մեջ Ադոնցը նախ գետեղել է Դիոնիսիոս Թրակացու քերականության բնագրի թարգմանությունը՝ նույն էջի վրա դնելով նաև հունարեն բնագիրը, ապա անցել հայ մեկնիչների տարբեր ձեռագրերից հանված բնագրերին: Քանի որ նա հունարենից թարգմանել է գրաբար, ապա հարկ է համարել որոշ քերականական եզրույթների բացատրություն տալ նաև առավել մատչելի գրաբարով:

Առաջին բնագիրը, որն առկա է գրքում, Դավիթ Քերականի մեկնությունն է, որն ըստ Ադոնցի երկար ժամանակ վերագրվել է V դարավերջի և VI դարասկզբի մեծագույն հայ փիլիսոփա Դավիթ Անհաղթին: Սակայն իրականում Դավիթ Անհաղթն ու Դավիթ Քերականը լիովին տարբեր անձիք են, և այդ հարցը ճշգրտել է Ադոնցը:

Ադոնցի ճշգրտումն առավելապես հաստատվեց, երբ 1956 թ. ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանը «Բանբեր Մատենադարանի» պարբերականում տպագրեց Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրական հավաքածուի մեջ իր գտած Դավիթ Քերականի՝ Դիոնիսիոս Թրակացու երկի մեկնության ամբողջական բնագիրը<sup>55</sup>:

Դավիթ Քերականն իր մեկնությունն սկսում է «Նախերգան» հատվածով, որի սկիզբը գոյի՝ այսինքն մարդու, ով լինելու բացատրությունն է: Մարդը, ըստ Դավթի, բաղկացած է երկու գոյությունից՝ բանական հոգուց և գործնական մարմնից: Այդ երկու գոյությունները միմյանց շաղկապված են, և նրանցից յուրաքանչյուրն իր դերն է կատարում: Մարդու վերջնական բնութագիրն է՝ մարդը բանական կենդանի է և մահկանացու<sup>56</sup>: Դավիթ Քերականն իր մեկնության մեջ ներկայացնում է գրականագիտական գիտելիքների անտիկ ժամանակների պաշարն ու ընկալումները: Սահմանում է հին աշխարհի դրամատիկական սեռի երկու ժանրերը՝ ողբերգությունն ու կատակերգությունը:

Գրիգոր Մագիստրոսն էլ իր մեկնության մեջ պահանջում է, որ յուրաքանչյուր ոք ճշգրիտ քերականական կանոններով խոսի: Քերականության դերը հենց դրանում է: Անտիկ աշխարհում Հոմերոսի երկու գործերը՝ «Իլիականը» և «Ոդիսականը», եղել են ուղեցույցներ գեղեցիկ ու դիպուկ խոսքի: Մագիստրոսի կարծիքով լեզվի քերականությանը տիրապետելը պարտադիր է բոլոր գիտաճյուղերով զբաղվողներին: Եվ քանի որ կատարյալ լեզուն համարվել է Հոմերոսին, ապա Մագիստրոսը համառոտ խոսում է Հոմերոսի (մ. թ. ա. VIII

<sup>55</sup> Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1956, № 9, էջ 241–264:

<sup>56</sup> Ն. Ա դ ո ն ց. Երկեր, հ. Գ, Երևան, 2008, էջ 79–80:

դար) կենսագրության որոշ փաստերի մասին: Հոմերոսի ծնողները եղել են բանաստեղծներ ու երգիչներ: Հոմերոս բառը թարգմանվում է կուրուժյուն<sup>57</sup>:

Ադոնցի կարապի երգը դարձավ 1946-ին Փարիզում հետմահու Ֆրանսերենով հրատարակված «Քննական պատմություն Հայոց» աշխատության առաջին հատորը: Մուշեղ Իշխանը վկայում է, թե Ադոնցը «Քննական պատմություն Հայոց» աշխատությունը համարում էր իր լավագույն գործը, որի 4 հատորների շնորհիվ կկարողանար աշխարհին ներկայացնել Հայ ժողովրդի ամբողջական ու ճշգրիտ պատմությունը<sup>58</sup>: Սակայն սաստկացած հիվանդությունը, երկրորդ համաշխարհային պատերազմը վերջ դրին նրա կյանքին: Ականատեսները, որոնցից մեկն էր Հ. Էսեկուլյանը, վկայում են, թե Ադոնցը կյանքից հեռացել է գրիչը ձեռքին, նման այն քաջ ու վեհ զորահրամանատարին, որը ծանրորեն վիրավոր, մինչև վերջին շունչը կռվում է թշնամու դեմ<sup>59</sup>:

«Քննական պատմություն Հայոց» երկի առաջին հատորի համար, ինչպես ասվեց, առաջաբան է գրել Ֆրանսիական ակադեմիայի անդամ Ռընե Գրուսեն: Ֆրանսիացի նշանավոր պատմաբանը հիացած է Ադոնց գիտնականի անձով ու գիտելիքների անսպառ պաշարով: Նա շեշտում է, թե որքան բազում լեզուների էր Ադոնցը տիրապետում սանսկրիտ, հին պահլավերեն, բյուզանդական հին հունարեն, սեպագրեր և այլն: Նա միաժամանակ հնագետ էր, պատմաբան, բանասեր, «ուստի նրա ամենափոքր ծանոթագրությունն իսկ գիտական նշանակություն ունի»<sup>60</sup>:

Գրուսեի կարծիքով Ադոնցի Հայաստանի պատմության հատորը ներկայացնում է Հայաստանը մինչև մեր դարաշրջանից առաջ VI դարը, և այդպիսի մի գործ կարող էր գլուխ գալ, եթե մեկը տեղյակ էր ուրարտագիտության, ասուրագիտության, իրանագիտության վերջին հայտնաբերումներին. «Ադոնցը միանգամայն վաստակավոր ուրարտագետ, ասուրագետ, իրանագետ էր»<sup>61</sup>:

Ադոնցն ապացուցում է, որ Բիայնա և Նաիրի երկրում Վանա լճի շուրջը, կազմավորվեց Ուրարտու պետությունը, որի արքաներից Արամեի անունով հարևան ազգերն այն կոչեցին Արմենիա (Հայաստան): Նա հավաստում է, որ ուրարտական քաղաքակրթությունը հայկական և դասական քաղաքակրթություն է, և դա հիմնավորում է սեպագրերը վերլուծելով: Հայերը հնդեվրոպացիներ լինելով ստեղծել են մի մշակույթ, որն իր արմատներով ձգվում է Ք. ծ. ա. XVII դարից էլ ավելի վաղնջական ժամանակներ:

Տեղին է Գրուսեի հետևյալ միտքը մեջբերել ամբողջովին. «Հայկական ամրոցը, ինչպես ուրարտական բաստիոնն էր, կպաշարվի: Անկասկած, նա կհարմարվի աքեմենյան գերիշխանությունը, որը, այնուհանդերձ, ինչպես Անաբազիան է վկայում, կհարգի նրա ինքնավարությունը: Նա նույնիսկ կխուսափի մակեդոնական հաղթանակի զոհ դառնալուց, և դրանից հետո հեղինակատական անիշխանություն շնորհիվ է, որ հին Հայաստանը կհասնի իր

<sup>57</sup> Նույն տեղում, էջ 226:

<sup>58</sup> Մ. Ի շ ի ա ն. նշվ. աշխ., էջ 38–39:

<sup>59</sup> Ն. Ա դ ո ն ց. Երկեր, Հ. Դ, Երևան, 2009, էջ 13:

<sup>60</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>61</sup> Նույն տեղում, էջ 26:

ընդարձակման գաղաթնակետին, և դա կլինի Տիգրան թագավորի օրոք: Սա մի չճանաչված մեծ իշխող էր, որ, անկասկած, շատ ավելի մեծ արժանիքներ ունի, քան նրա ժամանակակից Միհրդատը, որով հիացել է պատմությունը, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Միհրդատը փայլուն կերպով «ինքնասպանության մղեց իր պետությունը», մինչդեռ Տիգրանը իր ժողովրդի ապրելու իրավունք ապահովեց հավիտենականության համար» (ընդգծումը մերն է – Ա. Դ.)<sup>62</sup>:

Գրուսեն իրավացիորեն մեղադրում է Բագրատունիների հայ թագավորությունը և Անիի կործանումը կազմակերպած բյուզանդական պետությանը, որն անհեռատեսորեն հետո թուրքերին հանձնեց այդ երկիրը<sup>63</sup>:

Բնականաբար, Ադոնցը Հայաստանի պատմությունն սկսում է նախապատմական ժամանակներից, որը հնարավոր է դառնում հնագիտական պեղումների շնորհիվ: Ցավոք, Ադոնցի ժամանակ հնագիտական այդ պեղումներն եղել են ոչ մեծաքանակ:

Հայաստանը հնագույն դարաշրջանում ներկայացնելու համար Ադոնցը պատկերում է Արևելքի պատմությունն ընդհանուր գծերով: Նրա կարծիքով Հայաստանի պատմությունը մթնոլորտի մեջ է շումերաաքքադական դարաշրջանում: Հայաստանի պատմության առաջին հատորում պատմաբանը վերծանված ներկայացնում է բազմաթիվ սեպագիր արձանագրություններ<sup>64</sup>, որոնցից պարզ է դառնում, որ Ուրարտու պետության մեջ շատ զարգացած էին խաղողագործությունն ու գինեգործությունը, զինագործությունը, մետաղների մշակումը, արհեստները, ճարտարապետությունը, անասնապահությունն ու երկրագործությունը: Ադոնցը Ուրարտուի պատմությունն ավարտում է հետևյալ եզրահանգմամբ. «Պայքարել Ասորեստանի կատաղության ու մոլեգին կրքերի դեմ, փակել նրա ճանապարհը դեպի Նաիրյան երկրները, դա մի ազնիվ առաքելություն էր, որ Ուրարտուն պատվով կատարեց, այսպիսով նշանակալի ծառայություն մատուցելով քաղաքակրթությանն ու մարդկությունը»<sup>65</sup>:

Ուրարտուին փոխարինելու է գալիս Հայաստանը՝ ընդգրկելով նույն աշխարհագրական տարածքը: Ադոնցն իր «Քննական պատմություն Հայոց» աշխատության առաջին հատորը թողել է անավարտ՝ հասցնելով մինչև Աքեմենյանների Դարեհ Առաջինի ժամանակները:

«Քննական պատմություն Հայոց» գրքի առաջին հատորին կցված են նյութեր, որոնք պատմաբանը պետք է գետեղեր Հայաստանի պատմության երկրորդ և երրորդ հատորներում: Այդ հատվածները մեր երկրի պատմությունը հասցնում են Ք. ծ. հ. VI դարի կեսը: Կցված հատվածներից ամենաուշագրավը «Հայաստանը Տիգրան II Մեծի գահակալության ժամանակներում» բաժինն է: Այն մանրամասն է և նրանում պատկերված է, թե ինչպես հոմեացի պատմիչները չէին կամենում տեսնել Տիգրանի գովեստի արժանի գործերը: Տիգրանը, օրինակ, քոչվոր արաբներին հարկադրեց փոխել իրենց կենսակերպը, դառնալ նստակյաց ու զբաղվել առևտրով:

<sup>62</sup> Նույն տեղում, էջ 29:

<sup>63</sup> Նույն տեղում, էջ 30:

<sup>64</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 172–213:

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 319:

իր պատմության՝ Տիգրան Մեծին նվիրված հատվածն Ադոնցն ավարտել է հետևյալ նախադասությամբ. «Տիգրանի հասցեին ցանկացած բնույթի շատախոսությունից և զրպարտությունից հետո, պատմիչը (խոսքը Պլուտարքոսի մասին է – Ա. Դ.) նույնքան անսպասելի, որքան և իրական խոստովանությունն է անում, թե Լուկուլյոսը բազմաթիվ մարտերից հետո ի դեմս Տիգրանի հանդիպել է անպարտելի և «վսեմ քաջությամբ օժտված թշնամու»<sup>66</sup>:

#### Եզրակացություն

Ադոնցի գիտական ժառանգությունը բյուզանդագիտության ու հայագիտության բնագավառներում լի է բազմաթիվ գիտական հայտնաբերություններով, որոնց արժեքը դարերի համար է:

Ադոնցի տարբեր լեզուներով գրված գիտական, հրապարակախոսական հոդվածները լույս են տեսել պատկառելի ցանկ կազմող եվրոպական, ռուսական, հայկական պարբերականներում:

Ադոնցն իր կյանքը նվիրել է գիտությունն ու հայրենիքը նոր լույսով օտարներին ներկայացնելու սրբազան գործին: Նա ինչպես Աբովյանի հոգեգավակն էր և նվիրումով, գիտական ճշգրտությամբ մարդկությանը ներկայացնում էր, թե որքան կարևոր դեմք է եղել Տիգրան Մեծը, ինչպիսի հզոր դեր են կատարել Հայ արքաները Բյուզանդիայի Մակեդոնյան հարստության ժամանակ՝ մոտ 200 տարվա ընթացքում Բյուզանդիան դարձնելով քաղաքակրթության ու գիտության ջահակիրը աշխարհում: Նա նաև Հայոց եկեղեցու պատմության խոր գիտակն էր ու Լուսավորչական եկեղեցու դերն անփոխարինելի է համարում Հայ ժողովրդի ինքնուրույնությունը պահպանելու սուրբ գործում: Հայ դատի երդվյալ պաշտպանն էր և ազդու ու հիմնավորված հոդվածներով եվրոպական մամուլում մերկացրել է թուրքերի հայաջինջ քաղաքականությունը:

Աելիտա Դոլուխանյան – բ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին և միջնադարյան Հայ գրականություն, բանահյուսություն, ժամանակակից Հայ գրականություն, գրականության դասավանդման մեթոդիկա, գրաքննադատություն, հայագիտություն, գրական կապեր: Հեղինակ է 33 գրքի և շուրջ 650 հոդվածի: aelita.dolukhanyan@gmail.com

#### REFERENCES

- Adonts N. Erker, h. I, Yerevan, 2006; h. II, Yerevan, 2006; h. III, Yerevan, 2008; h. IV, Yerevan, 2009; h. V, Yerevan, 2012; h. VI, Yerevan, 2012; h. VII, Yerevan, 2014; h. VIII, Yerevan, 2016 (In Armenian).  
 “Banber Matenadarani”, 1956, № 9, (In Armenian).  
 Chamchyants M. Patmutiun Hayots, h. II, Yerevan, 1984 (In Armenian).  
 Dowsett Ch. Sayat-Nova, An 18th – century troubadour. Lovanii, 1997.

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 509:

- Ezrik de Kolb. De Deo. Paris, 1959.  
 Eghishe. Vasn Vardanay ev Hayots paterazmin, Yerevan, 1989 (In Armenian).  
 Gumilyov L. Entsiklopedia. M., 2017 (In Russian).  
 Gh. Sebastatsi. Davit Beki patmutyune, Yerevan, 1988 (In Armenian).  
 Koryun. Vark Mashtotsi, Yerevan, 2005 (In Armenian).  
 Marr N. Ya. Ani, stolitsa Armenii (Istoriko-arkhelogicheskoy nabrosok. M., 1898 (In Russian).  
 Ishkhan M. Erekh medh hayer, Beyrut, 1952 (In Armenian).  
 “Nouveau petit Larousse illustré”. Paris, 1932.  
 “Petit Robert – 2”. Paris, 1988.

## ВИЗАНТИНИСТ И АРМЕНОВЕД, ОБЛАДАЮЩИЙ МЕЖДУНАРОДНОЙ СЛАВОЙ

АЭЛИТА ДОЛУХАНЫАН

Резюме

*Ключевые слова: Н. Адонц, Санкт-Петербург, арменовед, византинист, монументальные произведения, Брюссель, Париж, Армянский вопрос, Армянская церковь, многоязычный.*

Николай Адонц (1871–1942) один из известных армянских ученых, получивших блестящее образование в России и Европе. Во время учебы в университете Санкт-Петербурга и потом, когда он совершенствовал свои знания в известных учебных центрах Европы, в Лондоне, в Париже, в Вене, в Страсбурге и в Мюнхене, Адонц пользовался поддержкой великого национального благотворителя Александра Манташянца.

Восемь томов сочинений Адонца были изданы Ереванским государственным университетом при поддержке Армянского отделения Фонда Галуста Гюльбенкяна. Адонц не оставил автобиографических воспоминаний. Они были бы чрезвычайно интересны, потому что его жизнь была удивительной.

Тигран Великий (95–55 гг.) был для Адонца самой любимой исторической личностью. Он фактически подтверждает, что Тигран проявил себя как мировой самодержавец и просветитель, а его деятельность требует нового освещения. Адонц представляет великие дела и военные успехи представителей княжеского дома Мамиконянов в Византийской империи. Весьма интересно исследование «Слава Багратидов» Адонца, представляющее ветви армянского царского дома Багратуни в Грузии, Кавказской Албании и Арцахе. В обширной статье «Историческая основа и идеологическая ценность романа «Давид Бек» историк применяет исследовательский подход к описанию исторических событий романа Раффи «Давид Бек».



Foundation. Adonts left no autobiographical memories. They would have been extremely interesting, since his life was really amazing.

Tigran the Great (95–55 BC) was the most beloved historical figure of Adonts. He actually confirms that Tigran manifested himself as a world sovereign and enlightener, and his activities require new elucidation. Adonts presents the great deeds and military successes of the representatives of the princely house of Mamikonians in the Byzantine Empire. The study “The Fame of Bagratids” by Adonts is very interesting; it represents the branches of the Armenian royal house of Bagratids in Georgia, Caucasian Albania and Artsakh. In his extensive article “The Historical Basis and Ideological Value of the Novel David Bek”, the historian takes an exploratory approach while describing the historical events of the novel David Bek by Raffi.

Especially rich is the heritage of the scientist in Byzantine studies, which has two branches of scientific and cognitive significance. Firstly, it presents important events of the history of Byzantium, and then the famous figures of this history, who were Armenians by nationality. In 1928 Adonts made a new discovery in Byzantine studies, exploring the “Historical basis of the Byzantine epic Digenis Acritas”. He proved that the epic poem was not Greek, since the homeland and place of activity of the main hero are the Euphrates valley, and his exploits take place in Western Armenia.

Adonts was a devoted defender of the Armenian Cause and dedicated many articles to this issue.

Adonts left three monumental monographs as a legacy to science. These are: Armenia in the Era of Justinian (1908), Dionysius of Thrace and Armenian Commentators (1915) and the posthumously published Critical History of Armenia (1946).

The scientific heritage of Adonts in the field of Byzantine studies and Armenology is rich with many scientific discoveries, whose value will be preserved forever.

*Aelita Dolukhanyan – Doctor of Sciences in Philology, Professor, Correspondent Member of the NAS RA, Chair of the Department of Ancient and Medieval Armenian Literature and its Teaching Methodology at the ASPU after Kh. Abovyan. Scientific interests: Ancient and Medieval Armenian Literature, folklore, contemporary Armenian Literature, methodology of teaching literature, literary criticism, Armenology, literary connections. Author of 33 books and over 650 articles. aelita.dolukhanyan@gmail.com*


ԵՂԻԱ ՏԵՄԻՐԾԻՊԱՇՅԱՆ. ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ  
ԳՐՈՂՆ ՈՒ ՄՏԱԿՈՐԱԿԱՆԸ\*

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Բանալի բառեր՝ Ե. Տեմիրճիպաշյան, հրապարակագիր, իմաստասեր, մանկավարժ, խմբագիր, «Երկրագունտ», «Գրական և իմաստասիրական շարժում», նորարար:

Նախաբան

Գրող, հրապարակագիր, իմաստասեր, մանկավարժ, խմբագիր Եղիա Տեմիրճիպաշյանն առանձնահատուկ տեղ է գրավում հայ գրականության պատմության և, մասնավորապես, XIX դարի վերջին քառորդի ազգային-հասարակական, կրթական-մշակութային զարգացման մեջ:



Ե. Տեմիրճիպաշյանը ծնվել է 1851 թ. մայիսի 8-ին Կ. Պոլսի Հասգյուղ թաղամասում, Երևանից թիֆլիս, ապա նաև Կ. Պոլիս տեղափոխված ազնվատոհմիկ Տեմիրճիպաշյանների ընտանիքում: «Մասնական պատմություն հայ մեծատուններու (1400-էն 1900)» աշխատության մեջ գրող, պատմաբան Հարություն Մրմրյանը գրում է, թե այդ «գերդաստանին աչքի գարնող նկարագիրն եղած է՝ խնդակից անձնաւորութիւն և խոր ու վեհանձն անկեղծութիւն, որուն քանիցս փորձերը տուաւ Եղիա Տեմիրճիպաշեան գրագէտն ալ ...»<sup>1</sup>: Սովորել է ծննդավայրի համբավավոր Ներսիսյան, ապա նաև Նուպար-Շահնազարյան վարժարաններում, աշակերտել ժամանակի նշանավոր գրող ու մանկավարժ Թովմաս Թերզյանին: 1874–1876 թթ. ուսանել է Մարսելի Առևտրական բարձրագույն վարժարանում, ծանոթացել ժամանակի եվրոպական գրական-գիտական մտքի նորություններին, շփումներ ունեցել Ֆրանսիայի մի շարք նշանավոր դեմքերի, մասնավորապես՝ Վիկտոր Հյուգոյի հետ: 70-ական թվականներին և 80-ականի սկզբին պետական պաշտոններ է վարել, զբաղվել

\* Ներկայացվել է 13. V. 2021 թ., գրախոսվել է 26. V. 2021 թ., ընդունվել է տպագրության 15. VI. 2021 թ.:

<sup>1</sup> Յ. Գ. Մ. Մասնական պատմություն հայ մեծատուններու (1400-էն 1900), Կ. Պոլիս, 1910, էջ 147:



ազգային-քաղաքական գործունեությունը. Նուպար-Շահնազարյան վարժարանն ավարտելուց շատ չանցած՝ 1870 թ., նշանակվել է Բ. Դրան տպագրության դիվանի անդամ, ապա նաև Հանրօգուտ շինությունաց նախարարության վարչական ժողովի քարտուղար, իսկ Մարտիկի վերադառնալուց հետո՝ 1874 թ., Կրթական նախարարության թարգմանությանց դիվանի անդամ: 70-ական թթ. վերջերին Ե. Տեմիրճիպաչյանը նաև թաղական է ընտրվել Պեչիկթաշ թաղամասից, 1880-ին՝ Ազգային ժողովի երեսփոխան՝ Սթենիա-Ենիքոյ միացյալ թաղերից: Այնուամենայնիվ, շատ կարճ ժամանակում ըմբռնելով իր բուն կրոնը՝ հրաժարվել է հարակից բոլոր զբաղումներից՝ համոզված, որ «իրեն համար չէր բնաւ» պաշտոնյայի «միօրինակ ու չափուած կեանքը»<sup>2</sup>: Բնորոշ է հասկապես երեսփոխանությունից հրաժարման պատմությունը. Կ. Պոլսի Ներսես Վարժապետյան պատրիարքի հրաժարեցման խնդրի շուրջ քննարկման ժամանակ, հակադրվելով մեծամասնության կարծիքին, Ե. Տեմիրճիպաչյանը ցանկացել է ելույթ ունենալ ի նպաստ Ն. Վարժապետյանի, որի անձն ու ազգաշահ գործունեությունը բարձր էր գնահատում, բայց նրան ձայն չեն տվել: Եվ նա, ի նշան բողոքի այդ անարդարության դեմ, տվել է իր հրաժարականը: «Մասիս»-ում հրատարակած բողոքագրում հիմնավորելով իր վարմունքը՝ Եղիան գրում է. «Ձր կրնալով հանդարտ խղճով մասնակցիլ աշխատանաց Երեսփոխ. ժողովի մը ուր արտաքոյ կարգի կարեւորութիւն ունեցող խնդրոյ մը մէջ ամէն երեսփոխան իրաւունք չունի գէթ անգամ մը իր կարծիքն յայտնելու բանաւոր կերպով (խօսքով), կը ծանուցանեմ թէ առաջին ներկայութիւնս Ազգ. Երեսփ. ժողովոյ մէջ պիտ' ըլլայ վերջինս»<sup>3</sup>:

Այնուհետև Ե. Տեմիրճիպաչյանն ամբողջովին նվիրվում է մանկավարժական, խմբագրական ու ստեղծագործական աշխատանքին՝ այդ բոլոր ոլորտներում էլ հասնելով մեծ համբավի: Նրա գրչի տակից ելած ամեն մի տող փնտրված էր: XIX դարի 80-ական թվականներին Տեմիրճիպաչյանի խմբագրած «Գրական-իմաստասիրական շարժում», «Երկրագունտ» հանդեսները ժամանակի գրական-իմաստասիրական-մշակութային ուշագրավ երևույթներից էին, որոնց էջերում, մեկ տասնյակից ավելի մականուններով ու ծածկանուններով (Ե., Ե. Տ., Գրասեր Ատոմ, Մելանիա, Նուրանիա, Դիվանիո, Ճին Հակոբ, Մշակ և այլն), հրատարակել է իր՝ արձակ, չափածո ու տարբեր հիմնախնդիրներին նվիրված գիտաիմաստասիրական, հրատարակագրական գործերը:

Ինչ վերաբերում է մանկավարժական գործունեությանը, ապա 90-ական թվականներին Ազգային կեդրոնական և այլ վարժարաններում դասավանդել է գրականություն ու գրականության պատմություն, իր նախաձեռնությամբ սկզբնավորված գեղեցկագիտություն, իմաստասիրություն, մանկավարժություն, իսկ իրեն անգործության մեջ մեղադրող «անձկամիտներուն ի պատասխան» հիշեցնում էր, թե «Կեդրոնական վարժարանի մէջ առաջին անգամ ծափահարուող դասախոսն ես եղա»<sup>4</sup>:

<sup>2</sup> Գ. Ֆէնէրճեան, Հր. Պետրոսեան. Եղիա Տեմիրճիպաչեան. – Իր կեանքը եւ իր գործը, Կ. Պոլիս, 1921, էջ 17:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 23–24:

<sup>4</sup> Ե. Տեմիրճիպաչեան. Վերլուծում. – «Մասիս» (Կ. Պոլիս), 1893, թիւ 3981, էջ 139:

### Ժամանակը և ազգային զարգացման հիմնախնդիրները

Ե. Տեմիրճիպաշյանին վիճակվել էր ապրել և ստեղծագործել մեր ժողովրդի համար, հիրավի, շրջադարձային պատմական ժամանակում, երբ ոչ միայն ազգային ու հասարակական կյանքը, այլև գիտական-իմաստասիրական-ստեղծագործական միտքը սրընթաց բարեփոխումների էր ենթարկվում: Սուլթանական Թուրքիայի ճնշիչ մթնոլորտում անգամ հայուլթյան արարող ոգին ջանում էր ելքեր գտնել դեպի աշխարհում ընթացող զարգացումները, առաջադիմություն ակունքներն ու նորագույն ուղիները: Ահա թե ինչու, Ե. Տեմիրճիպաշյանը 1860-ին ընդունված Ազգային սահմանադրությունից առաջ եղած ժամանակը «խավարյալ», իսկ ներկան «մութ» ժամանակ է անվանում, որը պետք է լուսավորել ու բարեփոխել արդի եվրոպական մտքի նվաճումներին հասու լինելու ճանապարհով: Միաժամանակ, իր խառնվածքով ու մտածողությամբ նա աշխարհի և կյանքի էվոլյուցիոն բարեշրջային զարգացման կողմնակիցն էր, ու դա անթաքույց դրսևորվել է ինչպես արվեստին, Գեղեցիկին, այնպես էլ պատմության, գիտության, կրթության, լեզվի և այլ ոլորտների մասին գրած «Բարեշրջութիւն գեղեցիկին» («Մասիս», 1901, թիւ 11)», «Տարերք պատմութեան իմաստասիրութեան» (Կ. Պոլիս, 1891), «Խօսուրուք աղջկանց դաստիարակութեան վրայ կամ Աւելին ճառը» (Կ. Պոլիս, 1890) և իր բազմաթիվ փոքր ու մեծ գործերում: Ընդ որում, ժամանակների կապի, ներքին փոխանցումների համակարգում առաջնությունը նա տալիս էր ներկա ժամանակին: Պաշտելի համարելով մաշտոցյան գրաբարը՝ հանդես էր գալիս արդիական աշխարհաբարի կիրառման օգտին: Դա հատկորեն դրսևորվում է նաև ճշմարտության մասին իր տեսակետի շարադրման մեջ, ըստ որի, ինչպես ամեն բան, ճշմարտությունը նույնպես հարաբերական է: Այնուամենայնիվ, ըստ նրա, այն, ինչն այսօրվան ու ներկային է վերաբերում, առավել մոտ կլինի «բացարձակին՝ եթէ կայ»: Որովհետև այսօրն ու նորը նա գնահատում էր հենց այն բանի համար, որ «ունի այն ինչ որ անցեալն ունի, ինչ որ հինն ունի, եւ բան մ'աւելի ունի – ինչ որ զայն անցելոյն և ապագային կը գողէ»<sup>5</sup>:

Շատ վաղ հասակից «վարակվելով» «դարի հիվանդությունը», սթափորեն գնահատելով կյանքի արդիական պահանջները՝ Ե. Տեմիրճիպաշյանը զգում և գիտակցում էր, որ փոխվել է ժամանակը, փոխվել է մարդը: Պայքարի թատերաբեմը դրսի աշխարհից տեղափոխվել է մարդու հոգու մեջ. «Չափահաս մարդն յոռետես եղած է. խորհուրդը կը գրավէ իր հոգին», – գրում է նա: Անցել են միջնադարյան վարդի ու բլբուլի հովվերգական ժամանակները, հիմա «... անդունդին եզրը գլխահակ՝ վայուն կ'արձակէ ... պիւլպիւլն: Եվ այդ իսկ է Լամառդինի Լճակը»<sup>6</sup>: Հայ իրականության մեջ ևս, թվում էր, անցել էին Ալիշանի, Պեչիկթաշյանի ազգային-հայրենասիրական ուժանտիզմի ժամանակները: Արդեն հրապարակի վրա էր թերզյանի և Դուրյանի բանաստեղծական հոգու խորունկ ներաշխարհային բացահայտումներով հատկանշավոր քնարերգությունը: Եվրոպական ու, հատկապես, ֆրանսիական ուժան-

<sup>5</sup> Ե. Տ է մ ի Ր Ճ ի պ ա շ ե ա ն. Նոքա եւ ես. – Արձակ էջեր, նամակներ, քերթուածներ, Փարիզ, 1955, էջ 212:

<sup>6</sup> Ե. Տ է մ ի Ր Ճ ի պ ա շ ե ա ն. Բարեշրջութիւն գեղեցիկին. – «Մասիս», 1901, թիւ 11, էջ 167:

տիզմի, սենտիմենտալիզմի, ապա նաև սիմվոլիզմի գրականությունը բռնված էր հոգեկան պայքարի, ներքին դրամայի տենդով: Դրամայի ժանրը բացահայտում է ևս մի օրինաչափ երևույթ՝ գեղարվեստական մտածողության մեջ. «Մտածումին նափշտը կ'ըլլայ երեւակայութիւնն, որ յաւէտ հրապուրելու դերը կը կատարէ՝ այլ եւ մտածումին կը ծառայէ յաւէտ»: Ավելին՝ «մութը ճիշդ լոյսին պէս տեսանելի՝ այլ եւ ոչ նուազ իմանալի (ideal) հրապոյրներ ունի, որոնք հոգին այլապէս կը գրաւեն քան լուսոյն հրապոյրք (ընդգծումը մերն է – Պ. Դ.)»: Դարձյալ շատ դիպուկ պատկերավոր արտահայտությունամբ Տեմիրճիպաչյանը ձևակերպում է, թե «Անծայրածիր ովկիանոր կը փոքրկանայ գլխոյն քով նաւաբեկեալ մարդո՛ւն, որ հոն կը սուգուի»: Բերվող օրինակները ևս բնորոշվում են ներքին խոր հակասականությամբ. «Քանկին մէջէն հրեշտակային մեղեղի կ'ընդլսուի, վհին յատակէն՝ անասուածի աղօթք»<sup>7</sup>: Բնորոշ են 1878 թ. մայիսի 24-ին իր բարեկամ Մինաս Չերազին գրած նամակի տողերը՝ «Նախնի ժամանակաց արժանի մեր անբակտելի բարեկամութիւնն հանելուկ մը պէտք է թուի աշխարհի առջեւ: Տարբեր ժամանակներ կը ներկայացնենք դու եւ ես. դու՝ մեծութեան դարերու գաւակ, ես՝ անկման, այլ ճգնաժամի դարերու գաւակ. դու՝ «Պլուտարքի մարդ», ես՝ un enfant du siecle», այսինքն՝ դարի զավակ, որն հստակ ակնարկ էր Ալֆրեդ Մյուսէի հայտնի վիպակի հերոսին<sup>8</sup>: Եվրոպական, մասնավորապէս ֆրանսիական ռոմանտիզմից ու սիմվոլիզմից եկող ազդեցությամբ, սեւեռվածությունն անհատի ներաշխարհի, Տիեզերքի, Բնության հետ մարդու «Թաքուն» կապերի, հավերժի ու անցողիկի, մարդկային ճակատագրի առեղծվածայնության ճանաչողությանը, լայն ասպարեզ էր բացում նաև կրոնի և գիտության, հավատի ու անհավատության խնդիրների արծարծման համար: Տեմիրճիպաչյանի պարագայում այդ ամենին գումարվում էին նաև նրա անձնական կյանքի յուրահատկությունները. «... հոգւոյս խորերէն յանգզայս դուրս եկած վաղահաս ս'յն հայրենաբաղձութիւնն անդրազոյնին՝ ինծի բոլորովին աշխարհի վրայ պանդուխտի կերպարանք մը տուին»<sup>9</sup>, – խոստովանում է նա «Հօրեղբօրը կաղանդչէքը» պատմվածքում:

Նորարարը: Գրողի, ստեղծագործողի նոր տեսակը

Ձուտ գրական առումով, կարող ենք ասել՝ Տեմիրճիպաչյանը իսկական նորարար էր, քանի որ մեր իրականություն բերեց գրողի, ստեղծագործողի նոր տեսակը, որը ոչ թե գրականություն էր ստեղծում, այլ գրականությունը դիտում էր իբրև իր կյանքի բնական արտահայտությունը, իր բազմակողմանի, հակասական, հարուստ ու առեղծվածային ներաշխարհի անխուսափելի դրսևորումը: Գրականությունը նրա համար մասնագիտություն չէր, ավելին՝ «... գրականութիւնն այնպիսի բան մ'է, – գրում է նա, – որուն դէմ հայհոյանք կը համարուի «մասնագիտութիւն» բառն»: Քանզի խոստովանում էր, թե գրում է «առանց զգալու, ինչպէս որ արեւը կը ծագի կամ /... / առուակը կը

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Ե. Տէմիրճիպաչյան. Արձակ էջեր, նամակներ, քերթուածներ, էջ 314:

<sup>9</sup> Ե. Տէմիրճիպաչյան. Հօրեղբօրը կաղանդչէքը. – «Բիւզանդիոն» (Կ. Պոլիս), 1899, թիւ 673:

Հոսէ ...»<sup>10</sup>: Նա համոզված էր, թե բանաստեղծները նրանք են, «որոնց թեւին վրայ քնար մը դրաւ երկին»<sup>11</sup>: Բայց միշտ չէ, որ բանաստեղծի կյանքն անամպ է ու երջանիկ, կան ստեղծագործող անհատներ, այսպես կոչված, նվիրյալներ կամ «կոչեցեալք», որոնց կյանքի ուղին «Գողգոթայի ճամփա» է հիշեցնում, որոնց «աշխարհ գալը տարաբախտութիւն» է, իսկ բանաստեղծ լինելը՝ «տարաբախտութիւն կրկին»<sup>12</sup>: Այս երկրորդների շարքին էր նա դասում իրեն, ում համար մոր սիրտը գուշակել էր, թե «Տղաս, գրող եղար, անոթի պիտի մեռնիր»<sup>13</sup>, և ում համար անհունորեն տառապել են թե՛ մայրը, թե՛ կյանքի վերջին տարիների հավատարիմ ընկերն ու մտերմուհին, իր «կենդանի բանաստեղծութիւն և Գիծոյ քոյր», «պահապան հրեշտակ»<sup>14</sup> հունգարուհի էլեն Նիսընը:

«Մարդկութենէն վեր կայ անհատ մարդը», – համոզված գրում էր Ե. Տեմիրճիպաշյանը «Նոքա եւ ես» հոդվածում, այդ թվում՝ «Իմաստնոյն վրայ զմայլող եւ խելագարի վիճակին ցանկացող մարդը»<sup>15</sup>: Նման անհատը, ըստ նրա, «հանելուկ մը է», «առեղծուած մը է», որ «աչքն ի յերկին եւ մահն ի հոգին» ստիպված է օրնիրուն տքնել կենաց կնճիռները լուծելու համար<sup>16</sup>: Միաժամանակ, Ե. Տեմիրճիպաշյանը չէր ընդունում աշխարհի և մարդու դրսևորման ու բացահայտման միակողմանիությունը, քանզի դա առաջին հերթին հակասում էր հենց ներքին ու արտաքին աշխարհի մասին բուն ճշմարտությունը բացահայտելու դարի հրամայականին: Իսկ ժամանակն առաջ էր ընթանում: XIX դարակեան արդեն առավել հակված էր աշխարհի և մարդու զարգացման օբյեկտիվ, քան սուբյեկտիվ օրինաչափությունների ընդունմանը: Ֆրանսիայում եղած ժամանակ մոտիկից ծանոթությունը պոզիտիվիստական փիլիսոփայության, հատկապես՝ Լիտրեի գաղափարներին, շատ բանով պայմանավորեց գրողի հետագա մտածողությունն ու ազգային-մշակութային գործունեության ուղղությունը: Տեմիրճիպաշյանը խոստովանում էր՝ ինքը հարում է «այն գրական դպրոցին որ մատենագրական բարեչրջութեան մէջ ի յայտ կու գայ իւր կարգին՝ երբ արդէն իրենց վերջին բառն ըսած են միւս դպրոցներն, ա՛յն իմաստասիրական դպրոցին որ գիտութեան արդի վիճակին կը համաձայնեցնէ իւր վճիռներն՝ առանց նկատողութեան տեղոյ կամ պատեհութեան, ա՛յն բարոյական դպրոցին որ կ'ըմբռնէ բնականին ու բարոյականին անձուկ վերաբերութիւնն եւ ըստ այնմ կը բանաձեւէ իր պատուերներն (ընդգծումները մերն են – Պ. Դ.)»<sup>17</sup>:

Սակայն կարևոր է նկատել, որ Ե. Տեմիրճիպաշյանը երևույթների բարեչրջութեան ընթացքն ուղղագիծ, ինչպես ինքն է արտահայտվում՝ «վերե-

<sup>10</sup> Ե. Տ է մ ի ը ճ ի պ ա շ ե ա ն. Վերլուծում, էջ 139:

<sup>11</sup> Ե. Տ է մ ի ը ճ ի պ ա շ ե ա ն. Յիշատակ մը. – Արձակ էջեր, նամակներ, քերթուածներ, էջ 140:

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Ե. Տ է մ ի ը ճ ի պ ա շ ե ա ն. Մահակենդանութիւն. – Անգեղն երգ (Երեւան), 2015, էջ 180:

<sup>14</sup> Ե. Տ է մ ի ը ճ ի պ ա շ ե ա ն. Հիւանդ էի, եկիք տեսիք զիս. – Արձակ էջեր, նամակներ, քերթուածներ, էջ 285–286:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 208:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 209:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 211–212:

լական»<sup>18</sup> չի պատկերացնում: Եվ դրա ցայտուն ապացույցը Գեղեցիկի զարգացման իրեն ժամանակակից փուլն է, ուր (մասնավորապես Բողբերի ստեղծագործություն մեջ) գերիշխում է ... Տգեղը, իբրև Գեղեցիկի բարեշրջության արդյունք: Թվում է, հակասություն կա նման դատողության հիմքում: Սակայն իրականում այդպիսի մոտեցումը բխում է գրողի իմաստասիրական մտածողության յուրահատկությունից, որը գերծ չէ իրերի ու երևույթների զարգացման դիալեկտիկայի՝ ներքին հակադրամիասնության, ըմբռնումից: Մանավանդ որ պատմության իմաստասիրության աշխարհի փորձը նրան ևս բերել էր այն համոզման, թե «Ինչ ալ ըլլա, պետք է համակերպվլ /.../ բնության օրենքին, որու համեմատ շարժումն, հառաջադիմությունը ճոճամբք (oscillation) կկատարվի. գործ ու հակագործություն: Լավատեսությունն հոռետեսություն կերթանք. Հոռետեսությունն լավատեսության պիտի վերադառնանք»<sup>19</sup>: Նույն օրինաչափությունը նա տեսնում էր նաև գեղեցկագիտության ոլորտում՝ Տգեղի ու Գեղեցիկի բարեշրջային զարգացման գործընթացում: Խոսելով արվեստի, գրականության զարգացման հետագա ընթացքի մասին՝ ընդգծում էր, թե «... ոչ ոք կրնայ զայն այժմէն ճշտագրել», միաժամանակ նշելով թերևս, միտությունն ավելի թանձրանա, և կամ գրականությունը վերադառնա իր նախնական պայծատությունը՝ «լուստես իմաստասիրութեան ավիւնայից մէկ հակագործութեամբն»<sup>20</sup>: Ահա թե ինչու, Տեմիրճիպաչյանի համոզմամբ, գրական բոլոր սեռերը հավասարապես պիտի մշակվեն՝ բնական ընտրությունը թողնելով ժամանակի վճռորոշ գործոնի ազդեցությանը:

Այդուհանդերձ, շատ ավելի կարևոր է Ե. Տեմիրճիպաչյանի այն հստակ դիրքորոշումը, որ դրսևորում է իր ապրած բարդ անցումային ժամանակի երևույթներն ազգի և, ընդհանրապես, հասարակության կյանքի ու առաջադիմության տեսանկյունից գնահատելիս: Եվրոպական գրական-գիտական-իմաստասիրական մտքի ներհուսքը հայ իրականության մեջ խրախուսելով հանդերձ Ե. Տեմիրճիպաչյանը, սակայն, դեմ էր Արևմուտքից եկող բոլոր հովերն ու հոսանքները գրկաբաց ընդունելու մտայնությանը: Գեղագիտական-իմաստասիրական տեսակետից շատ բարձր գնահատելով եվրոպական դասական ուսմանտիգմի մի շարք մեծերի (Լամարտին, Մյուսե, Գյոթե, դը Ստալ, Բայրոն և այլն) ստեղծագործությունը՝ նա գտնում էր, որ այդ գրականությունը՝ իր ջլախտավոր, հոռետես, անձնասպանության մղող հերոսներով, պարզապես փնասակար է մարմնական ու հոգեկան առողջության կարոտ հայ ժողովրդի ապագայի համար: Տեմիրճիպաչյանը գրում է, թե Լամարտինը, որքան էլ «Եվրոպական գրականութեան հրեշտակն», որքան էլ «մեծագոյն բանաստեղծը», բայց «հաց չէ, գինի չէ», այլ, թերևս, կաթ, մեղր, նեկտար: Համենայն դեպս, հայոց ներկա իրականության մեջ: Ահա թե ինչու, ըստ նրա, թեև «մտքին կատարեալ զարգացումն անտարակոյս գեղագիտութեան (Esthétique) ալ մշակումը կ'իմանայ, ուստի եւ պէտք է կարդալ Գոռինն (իմա՛ դը Ստալի վեպը—Պ. Դ.) եւ ամեն գրականութեանց հրաշա-

<sup>18</sup> Ե. Տ է մ ի ը ճ ի պ ա շ ե ա ն. Բարեշրջութիւն գեղեցկին, էջ 167:

<sup>19</sup> Ե. Տ է մ ի ը ճ ի պ ա շ յ ա ն. Տարերք պատմության իմաստասիրության.— Երկեր, Երևան, 1986, էջ 500:

<sup>20</sup> Ե. Տ է մ ի ը ճ ի պ ա շ ե ա ն. Բարեշրջութիւն գեղեցկին, էջ 168:

կերտներն՝ եթէ հնար է», բայց դրանց հետ մեկտեղ պետք է կարգալ նաև «աւելի սնուցիչ, գորացուցիչ, զարթուցիչ մատեաններ»<sup>21</sup>:

Կրթական, գեղեցկագիտական, իմաստասիրական հայացքները Եվրոպայում ու, մասնավորապես՝ Ֆրանսիայում նույնպես սկսվել էր իրապաշտական, բնապաշտական գրականության ժամանակը: «Դրական գիտություն եւ իրական գրականություն իրար ահա կը ճանչեն ու կ'ընդգրկեն ի Ֆուանսա, – գրում է Ե. Տեմիրճիպաշյանն «Աւելին ճառը» բանախոսության մեջ, – գրականության մէջ իրապաշտության՝ դաստիարակության մէջ ահա կը համապատասխանէ մարմնապաշտությունը: Զուտ իմացական դաստիարակության հետեւանքն եղող այն տարապայման զգայնությունն՝ որ կ'անճիտէ Ֆուանսական ընկերությունը՝ խիստ քննության ու դարմանատարության առարկայ կը դառնայ. անաթեմա՛ կը կարդացուի Տառապանաց, զոր բանաստեղծք սկսած էին երգել և իմաստասէրք ջատագովել»<sup>22</sup>: Ահա թե ինչու, հետևողականորեն պաշտպանել է մարմնի իրավունքները՝ սերունդները բարոյական հիվանդությունից զերծ պահելու համար, դաստիարակության մեջ ջատագովել՝ Գեղեցկի հետ նաև Օգտակարին ու Ճշմարտին տեղ տալու գաղափարը: Նրա համոզմամբ, Տառապանքի գեղագիտությունը, որը հետեւանք էր «զուտ իմացական» դաստիարակության, պոեզիայում և փիլիսոփայության մեջ տեղի է տալիս իրականի գեղագիտությանը: Ըստ այդմ, դաստիարակության գլխավոր ճանապարհը պետք է լինի հայ մայրերի դաստիարակությունը՝ գումարած առաջավոր, ազգին ու մարդուն պետքական առողջ և կամային անհատ պատրաստող փորձը, գիտելիքն ու աշխատանքը: «Կրթական բարենորոգում և բարոյական վերանորոգում» ծրագրային հոդվածում Տեմիրճիպաշյանը կարևորում է ընդհանուր կրթությունը գործնական հանգամանք տալու Եվրոպայի և ԱՄՆ փորձը, քանզի հայերը շարունակում էին «հին կրթական դրությունը», որի հիմքում ընկած էին սոսկ ճարտասանությունն ու դիցաբանությունը: Արձանագրելով հայության համար ևս հասել է արդեն «մտածության և չափահասության շրջանն»՝ նա եզրակացնում է, թե «Անցավ վերացական, դասական, անգիտական և անգործնական կրթության ժամանակն»՝ պահանջելով, որ վարժարանի մեջ պատանին վարժվի ու պատրաստվի ընկերության, գործունեության, կենաց մարտի համար<sup>23</sup>:

Բայց մի՞թե այդ ամենը հակասության մեջ չէր մտնում հենց իր՝ Ե. Տեմիրճիպաշյանի, ապրած կյանքի ու դավանած սկզբունքների՝ մասնավորապես՝ հոռետեսության, անձնասպանության փորձերի (երկու անգամ՝ 1874 և 1893 թթ. չհաջողված փորձերից հետո, ցավոք, իրագործել է 1908 թվականին) դեպի անդունդը տանող ճանապարհի կանխազգացման, ունայնության ու մեծ Ոչնչի հավերժական Հանգստի խորհրդանիշ Նիրվանայի մասին դատողությունների և հոգեվիճակների հետ: Որքան էլ տարօրինակ հնչի, գրողի

<sup>21</sup> Ե. Տեմիրճիպաշյան. Աղջկան մը օրագիրն. – «Երկրագունտ» (Կ. Պոլիս), 1886, թիւ 3, էջ 123–124:

<sup>22</sup> Ե. Տեմիրճիպաշյան. Խօսուըռտուք աղջկանց դաստիարակության վրայ կամ Աւելին ճառը, Կ. Պոլիս, 1890, էջ 15:

<sup>23</sup> Ե. Տեմիրճիպաշյան. Կրթական բարենորոգում և բարոյական վերանորոգում. – Երկեր, էջ 424:

պատասխանն այս հարցին դրական էր: Միակ արդարացումն իր գրող՝ ստեղծագործող լինելն էր, իսկ էությամբ կոչումով գրողները, որոնց մեջ իմաստասիրությունն ու գիտությունը ձուլվում են ստեղծագործությունը, ըստ նրա, պետք է անցնեն երկրային և երկնային բոլոր տառապանքների, հակասական թվացող բոլոր զգացողությունների ու հոգեվիճակների՝ աստվածապաշտության և աստվածամերժության, նյութապաշտության ու հոգեպաշտության, մութի և լույսի, չարի ու բարու, արդարի և անարդարի, զեղեցիկի ու սգեղի միջով ի վերջո, կյանքի մեծ իմաստին՝ ճշմարտության ճանաչողությանը հասնելու համար: Լինելով դրապաշտական կամ պոզիտիվիստական իմաստասիրության հետևորդ՝ նա համոզված էր, թե «Ամեն երևույթք, համայն տիեզերքն, որ բյուր ու բյուր մասեր ունի այլաձև, այլազան, միակ մարմնո մ'արտահայտությունք են: Կոտորակյալ միություն մ'է տիեզերքն»<sup>24</sup>: Ահա թե ինչու էր Տեմիրճիպաշյանը հորդորում իր հնարավոր ընդդիմախոսներին, թե՛ «ես բարոյական հեղինակի հավակնություն չունիմ, ես կորուսանելու կոչում ունիմ: Արդ, ինձ ու ինձ նմաններու միայն ներելի է միգրոպներով լի գրվածներ տարածել հայ ընկերության մեջ»<sup>25</sup>, քանզի դա՛ համաշխարհային մտքի զարգացումներին համընթաց ներաշխարհային այդ որոնումներն ու դեգերումները ևս խորքային հոսանքներով նպաստում են ազգի հոգևոր ու մտավոր հարստացմանը, ուրեմն և առաջընթացին: Այլ հարց է, որ ժողովուրդը, հասարակությունը, այդ թվում նաև «աշխարհական» գրողներն ու արվեստագետները (ինչպես Ս. Տյուսաբն այդ շարքում), նրա կարծիքով, պետք է առաջնորդվեն միայն առողջ և կենարար գաղափարներով ու սկզբունքներով մշտապես նպատակ ունենալով ազգի բարվոք ապագան:

Բայց այդ ամենը նման գրողներին ու արվեստագետներին (և իրեն այդ թվում) ևս չի ազատում ազգի ու հասարակության առջև ունեցած պարտականություններից: Ընդհակառակը, «կոչեցեալ» արվեստագետների պարտքն է առավել մեծ նվիրումով լծվել այդ նպատակի իրագործմանը: Համոզված լինելով, որ մարմնական ու հոգեկան այլևայլ հիվանդությունների, այդ թվում՝ հոռետեսության գլխավոր պատճառը «ընկերության խնդրույն մեջ պետք է փնտրվի»՝ Ե. Տեմիրճիպաշյանը սահմանում էր. «Գրագետն, ընդհանուր անվամբ այդպես կկոչվի բարքերն և օրենքներն ուղղելու կոչումն ունեցող մարդն... (ընդգծումը մերն է— Պ. Դ.)»<sup>26</sup>: Նա երազում էր, որ հայ վարժարանի ընթացավարտը եվրոպացու նման ընդհանուր ծանոթություն ունենա «բոլոր գիտությունց վրա» («Հրահանգիչ խոսակցությունք»), ցավ էր գգում կրթության և դաստիարակության անկատարության համար, որով պատանիները «թուլթուլիքն կը սորվին»՝ չիմանալով, թե այդ գիտություններն ինչպես են ծնվել, զարգացել և ինչ գործնական արդյունքներ են առաջ բերել քաղաքակրթության մեջ: Զայրույթով նկատում էր, թե վարժարաններում ինչպես են զանազան գիտելիքներն ու ծանոթությունները լցնում «գանկերուն մէջ, ինչպէս որ լուբիան տոպրակին մէջ, գրեթէ ոչինչ տեսնելով իրական աշխարհէն որուն օրէնքներն ու գաղտնիքները կ'ուսուցուին իրենց»<sup>27</sup>:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 462:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 392:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 385:

<sup>27</sup> Ե. Տ է մ ի ը ճ ի պ ա շ ե ա ն. Յաւր.— Արձակ էջեր, նամակներ, քերթուածներ, էջ 105:

## Ազգային-հայրենասիրական էությունը

Նախ ասենք, որ երկար ժամանակ է. Տեմիրճիպաշյանի անձի ու գործի նկատմամբ տիրապետել է որոշակի վերապահ վերաբերմունք: Նրա հասցեին զարտուղություն, անհավասարակշռություն, մելամաղձոտություն ու, մասնավորապես, նիրվանայապաշտություն մեջ «մեղադրանքներ» են հնչեցրել ոչ միայն հակառակորդները, այլև մտերիմ-բարեկամները (Գր. Օտյան, Արփ. Արփիարյան, Գր. Զոհրապ և այլն): Փորձելով ամփոփել այդ ամենն ու ներկայացնել Ե. Տեմիրճիպաշյանի «ուրուապատկերը», գրող, բանասեր Սիմեոն Երեմյանը (Հ. Սիմեոն) գրում է. «Շոինդը տարածական, արժանիքը ճղճիմ, պաշարը առատ, արդիւնքը ոչինչ, հանրագիտակ բայց շաղփաղփ, /... / տարտամ գրիչ մը խոհական և միանգամայն զառանցական, գեղեցիկ և միանգամայն սոգեղ, հրապուրիչ և միանգամայն ձանձրացուցիչ»<sup>28</sup>: Տասնամյակներ անց՝ XX դարի կեսերին անգամ, Լևոն Շանթը Ե. Տեմիրճիպաշյանին գնահատում էր որպես «անհավասարակշիռ հոգի մը և անհանգիստ հոգի մը ու անհավասար գրիչ մը», միաժամանակ ավելացնելով, թե այդ ամենով հանդերձ, «արտասովոր ղէմք մըն է արտասովոր «ելոյթ»ներով և արտասովոր գրութիւններով, որով և անշուշտ ուշադրութիւն կը գրաւէ և հետաքրքրութիւն»<sup>29</sup>:

Կարևոր է նկատել՝ Ե. Տեմիրճիպաշյանի անձի ու գործի նկատմամբ երկար ժամանակ տիրապետած վերապահ վերաբերմունքի պատճառներից մեկն էլ այն է, որ ուշադրությունը սևեռելով գրողի գեղագիտական, նիրվանայապաշտական հայացքներին, անձնական կյանքի «տարօրինակություններին»՝ գրականագիտությունն ամենից քիչ է լուսաբանել նրա ազգային ու հայրենասիրական էությունն ու հայացքները: Մինչդեռ դա մեծ գրողի ու մտավորականի դասական ժառանգության ամենակարևոր ու մշտապես արդիական նշանակություն ունեցող կողմերից է: Այս տեսակետից հատկանշական է այն հանգամանքը, որ դավանելով ու քարոզելով հայ կյանքի եվրոպականացման անհրաժեշտությունը՝ Տեմիրճիպաշյանը, սակայն, երբեք էլ կույր հետևողություն կողմնակիցը չէր: «Պատերազմ ընդդէմ Յոանսայի» հրապարակման մեջ հնարավոր սխալ ընկալողների համար մեկնաբանելով հավակնոտ թվացող այդ խորագիրը՝ նա գրում է, թե ինքն ամենևին էլ Ֆրանսատյաց չէ ու չի կարող լինել, քանզի «... միթե կրնա՞նք փակել մեր սիրտն այն ազգին համար, որ կը բանայ իր թեւերն ազգաց համօրէն»<sup>30</sup>: Տեմիրճիպաշյանը հաստատում է, որ իր պայքարի կոչը օրեցօր ահագնացող օտարամոլության դեմ է: Նա ահագանդ է հնչեցնում այն բանի համար, որ հիանալով Յոանսայի անցյալի փառքով ու ներկայի նվաճումներով՝ «Կը մոռնանք թէ մենք ալ ազգ մ'ենք, ոյր քաղաքակրթութիւնն հնագոյն է քան Ֆրանսական ազգինն. /... / կը մոռնանք թէ միննեսինկերներէն յառաջ ու Պէռանժէէն յառաջ մենք ալ ունեցած ենք մեր երգիչներն, ունեցած ենք այն Գողթան երգիչներն, ոյց հազուադէպ հատակոտորք համարձակութիւն կու տան մեզ հռչակելու թէ

<sup>28</sup> Հ. Սիմեոն. Եղիա Տեմիրճիպաշեան, Վենետիկ, 1913, էջ 58–59:

<sup>29</sup> Լևոն Շանթի երկերը, հ. 9, Պէյրուսթ, 1946, էջ 360:

<sup>30</sup> Ե. Տեմիրճիպաշեան. Պատերազմ ընդդէմ Յոանսայի.— Արձակ էջեր, նամակներ, քերթուածներ, էջ 164:



բոլոր ազգաց երգիչներէն գերազանց՝ երգչաց երգիչքն էին մեր հին երգիչք, Գողթն գինեւէտ գավառին երգիչք: /... / Կը մոռնանք թէ Փռանասայի Ազգային Մատենադարանէն ճոխագոյն մատենադարան մ'ունինք հոն, հայրենի հողին վրայ, ուր գրեանք քարերու վրայ կը գրուէին, ուր քաղաքակրթութիւնք իրարու վրայ կը բարդուէին, ուր կ'իջնէին Հնդիկք Հիմալայայէն, ուր կ'ելնէին հնագոյն ազինք Հասարակածէն, ուր՝ իբրեւ տիեզերական ժամատեղի մը՝ կը միանային սուրի ժողովուրդք ու կրօնի ժողովուրդք, հովիւք ու հողագործք ու նաւարկուք ու հիմնարկուք քաղաքաց ու քաղաքակրթութեանց...»<sup>31</sup>: Տեմիրճիպաշյանը ցավում էր «Հայ ազգին մէկ կարեւոր ու կշռաւոր» մասը ծանոթ չէ իր երկրի փառքին, որը «ճշմարտութիւն, իրողութիւն է» և որի սիրտը և միտքը, մարմինն ու հոգին «Փռանասային համար են միայն»<sup>32</sup>: Ուրեմն և, բացականցում է նա՝ «Մաքառիլ Փռանասական ազդեցութեան դէմ, կամ մանաւանդ Փռանասական լոյսերուն ու փողփողումներուն մէջէն ի վեր հանել, ծանօթացնել ու պանծացնել ինչ որ ազգային է, ինչ որ հայ հողի վրայ ծնունդ առած է, ինչ որ հայ մտաց արտադրութիւն է, ինչ որ հայ սրտէ բղխած է, ինչ որ՝ ի մի բան մե՛րն է. ահա՛ պաշտօնս, ահա՛ գործս այս պիտ' ըլլայ: Պատերազմ ընդդէմ Փռանասայի վերնագիրս ա՛յս կը նշանակէ»<sup>33</sup>: Եվ իբրև գործնական օրինակներից մեկը, «Աւելին ճառը» բանախոսութեան մեջ, մանավանդ աղջիկների դաստիարակութեան հարցում, նա մերժում է եվրոպական վարժարաններում կիրառվող «ժամնաստիքը», «արուեստական», «գործիական» մարմնամարզությունը, ինչպես նաև «ակնակուրիչ» ասեղնագործությունը՝ խրախուսելով ավելը, այսինքն՝ մաքրությունը, աշխատանքը, ուրիշ բառով ջերմությունը, եռանդը, կենաց պայքարի նախապատրաստությունը:

Նոր սերնդի մեջ ազգասիրության կրակը վառելու համար Ե. Տեմիրճիպաշյանը դիմում էր նաև հայոց մեծերի՝ մասնավորապես՝ Մկրտիչ Էմինի, Մինաս Չերազի, Պետրոս Աղամյանի օրինակներին: «Կրթական բարենորոգում և բարոյական վերանորոգում» բանախոսության մեջ նա շեշտում է, թե «... իմ նյութս, ուր ալ ճառեմ և ուր ալ գրեմ՝ հայ ազգն է միշտ. միշտ իմ ցավս հայ ազգին հետադիմությունն է. միշտ իմ իղձս հայ ազգին հառաջադիմությունն է»<sup>34</sup>: Նամակներում Տեմիրճիպաշյանը խոստովանում էր, որ ունի «տենդալիը հայրենասիրութեան ժամեր»<sup>35</sup> և «վայրկեան մը դադրած չէ» սիրել իր ժողովրդին<sup>36</sup>: Ու թեև երբեմն նույնիսկ հուսահատությունն էր պատում նրան, երբ տեսնում էր «Հայրենիքն արեան եւ արտասուաց գետերէ ողողուած» որպէս երբեք չէ էղած, ընդհանուր աշխարհի ապագան՝ մոլոր»<sup>37</sup>, և կամ խորհում էր, թե «Ո՞ր ազգն ազատ եղավ, որ հայն ազատություն կերպե

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 162:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 162–163:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 163–164:

<sup>34</sup> Ե. Տեմիրճիպաշյան. Կրթական բարենորոգում և բարոյական վերանորոգում. – Երկեր, էջ 422:

<sup>35</sup> Ե. Տեմիրճիպաշյան. Նամակ Մ. Չերազին. – Արձակ էջեր, նամակներ, քերթուածներ, էջ 312:

<sup>36</sup> Ե. Տեմիրճիպաշյան. Նամակ Մ. Չերազին. – Երկեր, էջ 512:

<sup>37</sup> Ե. Տեմիրճիպաշյան. Նամակ Մ. Չերազին. – Արձակ էջեր, նամակներ, քերթուածներ, էջ 341:

դեռ»<sup>38</sup>, բայց նաև չէր դադարում հավատալ ազգի ու հայրենիքի լավատեսական հեռանկարին՝ «... մեր ազգը կ'արտասուէ, եւ պիտի արտասուէ, մինչեւ բուն արծիւի փոխուի վերատին ...»<sup>39</sup> (1878 թ. մայիսի 4-ին Մ. Չերազին գրած նամակից):

### Եզրակացութիւն

XIX դարի կեսին՝ 1851 թ., գարնանաբույր մայիսին էր ծնվել Ե. Տեմիրճիպաշյան, որը միշտ էլ գույնզգույն երազների ու տենչերի հուշերով էր լցնում նրա հոգին՝ «Եկաւ հասաւ Մայիս.— Իմ ծննդեան ամիս՝ եկաւ հասաւ սիրամիս Մայիս,— գրում է նա «Մայիս» մանրապատումում:— Երկին եւ երկիր պիտի զգենուն կարմիր.— Կարմիր ամպեր մեր գլխու վերեւ, կարմիր այտեր մեր շրթներու ներքեւ...»<sup>40</sup>: Բայց ... անցնող տարիներն այլ ճակատագիր էին նախասահմանել գրողի համար. հարազատների՝ հոր, եղբոր ու, հատկապես, պաշտելի մոր վաղաժամ մահերը, սիրային «ճախորդութիւնները», որոնք նույնիսկ անձնասպանութեան դուռն էին հասցնում նրան, թվում էր, կատարյալ ու անելի մենակութեան էին մատնել արվեստագետի նուրբ հոգու տեր գրողին: 1892-ին գրած «Մինակ» քերթվածում, արդեն քառասնամյակը բոլորած Տեմիրճիպաշյանը անկեղծորեն խոստովանում էր.

Տարիներն, որոնք ետիս են՝  
Իրենց զվարթութեան դառն հիշատակով

Ձիս կչարհարեն:

Տարիներն, որոնք առջիս են՝  
Խելագարութեան ահույի հեռապատկերով  
Ձիս կքարացնեն<sup>41</sup>:

Գրողը չէր սխալվում. ի վերջո, հասարակութեան արատներից, կյանքի ու մարդկային գոյութեան իմաստի, նյութականի և հոգեկանի հակասութիւններից խոցոտվող նրա զգայուն սիրտն ու հոգին չդիմացան այդ ամենի ահավոր ճնշմանը. «Խելագարութեան ահույի հեռապատկերը» դարձավ դաժան ու շրջապատի համար անսպասելի իրականութիւն՝ երրորդ փորձից՝ 1908 թ. հուլիսի 19-ին նա վերջ տվեց տասնամյակների իր նյարդային—հոգեկան տառապանքներին՝ կախվելով տան առաստաղից:

Բայց, իհարկե, Ե. Տեմիրճիպաշյանը խելագար չէր այդ հասկացութեան սովորական իմաստով: Նա քաջատեղյակ էր իր մասին պտտվող լուրերին, գիտեր, որ նույնիսկ «բարեսիրտ, բարեխիղճ մարդիկ ոմանք ալ հաւատացին, թէ զառամութեան մէջ ինկած է ու կը զառանցէ Տեմիրճիպաշեան՝ ողնածուծի հիւանդութեամբ վարակուած»: Ահա թե ինչու «Վերլուծում» գրութեան մեջ երախտիքի անկեղծ խոսքեր էր հղում «Մասիս»-ի խմբագրապետ Գրիգոր Չոհրապին, ով համոզված հայտարարել էր՝ «Եղիան չճանչցողները միայն

<sup>38</sup> Ե. Տեմիրճիպաշյան. Նամակ Մ. Չերազին. — Երկեր, էջ 514:

<sup>39</sup> Տե՛ս Ե. Տեմիրճիպաշեան. Արձակ էջեր, նամակներ, քերթուածներ, էջ 508:

<sup>40</sup> Գրասեր Ատոմ. Մայիս (Միննէմօնաթ). — Անգեղն երգ, էջ 207:

<sup>41</sup> Ե. Տեմիրճիպաշյան. Մինակ. — Երկեր, էջ 23:

մառախուղի մէջ ծրարուած կը կարծեն»<sup>42</sup>: Իրողութիւնն այն է, որ ժամանակի ու անձնական կյանքի յուրահատկութիւնները պայմանավորել էին նաև նրա՝ իբրև արվեստագետի յուրօրինակ էութիւնն ու նկարագիրը:

Ե. Տեմիրճիպաշյանի կյանքը, իր իսկ բնորոշմամբ, իսկական վազք եղավ «արվւոյն ետեւէն»<sup>43</sup>: Մարմնական ու հոգեկան բազում տառապանքներից հետո էլ նա հավատում էր, որ վարդերի մեջ ծնված լինելով՝ իր գերեզմանը ևս «պիտի ծածկուի վարդերով՝ արտասուածքով ուռիին տակ ...»<sup>44</sup>:

Ե. Տեմիրճիպաշյանն իրենով մարմնավորեց հայ կյանքի արդիականացման ժամանակի հրամայականը, շարունակելով և խորացնելով ժամանակակիցների ու նախորդների հատվածական ջանքերը՝ առավել նվիրումով ու անձնագոհութեամբ լծվեց համաշխարհային և, հատկապես, եվրոպական գրական-մշակութային, գիտական-իմաստասիրական մտքի արժեքները հայ իրակա-նութիւնն ներմուծելու, յուրացնելու և այդ ամենի հետ հայ մտքի համաժամանակյա (սինխրոն) ընթացքն ապահովելու գերխնդրին: Այստեղից էլ նրա հետաքրքրութիւնների, ձեռնարկումների, ստեղծագործական արարումների բազմազանութիւնն ու բազմաբևեռայնութիւնը: Վիթխարի նյութ ու աշխատութիւն, որի ծանրութեան տակ Ատլասի նման կքելով՝ նա չկարողացավ ի մի բերել այդ ամենը, ստեղծել աշխարհաճանաչողութեան ճիշտ կամ սխալ, բայց իր սեփական համակարգը: Կարելի է ասել, որ աշխարհի զարգացումների հետ համընթացութեան ապահովման խնդիրը՝ նաև նրա տիտանական ջանքերի շնորհիվ, տվեց իր դրական պտուղները, բայց ավելի շատ նյութի կուտակման, բազմազանութեան յուրացման մակարդակով: Այդ ամենի խորքային քննութեան, համակարգման ու դրա հիման վրա ազգային գրականութեան զարգացումը նոր որակով առաջ տանելու խնդիրը թողնելով իր տաղանդավոր հաջորդներին՝ Ե. Տեմիրճիպաշյանը յուրատեսակ կամուրջ դարձավ գրական սերունդների միջև:

Պետրոս Դեմիրճյան – բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրակա-նութեան ինստիտուտի հայ նոր գրականութեան բաժնի ավագ գիտաշխատող, Հայաստանի գրողների միութեան վարչութեան քարտուղար: Գիտական հե-տաքրքրութիւնները դասական և ժամանակակից գրականութիւն: Հեղինակ է 3 մենագրութեան, գրականագիտական և գրաքննադատական բազմաթիվ հոդվածների: pdemirchyan@mail.ru

#### REFERENCE

“Byuzandion” (K. Polis), 1899, tiv 673 (In Armenian).

“Erkragunt” (K. Polis), 1886, tiv 3 (In Armenian).

“Masis” (K. Polis), 1893, tiv 3981; 1901, tiv 11 (In Armenian).

<sup>42</sup> Ե. Տ է մ ի ր ճ ի պ ա շ ե ա ն. Վերլուծում, էջ 140:

<sup>43</sup> Ե. Տ է մ ի ր ճ ի պ ա շ ե ա ն. Յիմար արշաւ. – Հրայրք մութին, Իսթանպուլ, 2008, էջ 174:

<sup>44</sup> Ե. Տ է մ ի ր ճ ի պ ա շ ե ա ն. Բարեշրջութիւն գեղեցկին. – Արձակ էջեր, նա-մակներ, քերթուածներ, էջ 391:

- Temirchipashyan Ye. Ardzak eger, namakner, kertuadsner, Pariz, 1955 (In Armenian).
- Temirchipashyan Ye. Erker, Yerevan, 1986 (In Armenian).
- Temirchipashyan Ye. Angeghn erg, Yerevan, 2015 (In Armenian).
- Y. G. M. Masnakan patmutivn hay medsatunneru (1400en 1900), K. Polis, 1910 (In Armenian).

## ЕГИЯ ТЕМИРЧИПАШЯН: ЗАСЛУЖЕННЫЙ ПИСАТЕЛЬ И ИНТЕЛЛИГЕНТ

ПЕТРОС ДЕМИРЧЯН

Резюме

*Ключевые слова:* Е. Темирчипашян, публицист, философ, педагог, редактор, «Еркрагунт», «Гракан ев имастасиракан шаржум», новатор.

Писатель, публицист, философ, педагог, редактор Егия Темирчипашян (1851–1908) занимает особое место в истории армянской литературы, в частности, в развитии национально-общественной, культурно-образовательной жизни последней четверти XIX века. Ему суждено было жить и творить в поистине переломный исторический момент для нашего народа, когда не только национальная и общественная жизнь, но и научная, философская, творческая мысль претерпевала стремительные реформы. Даже в гнетущей атмосфере турецкого султаната творческий дух армян пытался найти какие-то выходы к процессам развития в мире, к корням и новейшим путям прогресса.

В системе связи времен, внутренних передвижений Е. Темирчипашян отдавал предпочтение настоящему времени. Трезво оценивая текущие потребности жизни, он почувствовал и осознал, что время изменилось, изменился человек. Вот почему, считая восхитительным созданный М. Маштоцем древнеармянский язык – грабар, он выступал за использование современного языка – ашхарабара. Важно отметить также ту ясную позицию, которую он выражал в процессе оценки сложных переходных явлений своего времени, с точки зрения жизни и прогресса нации и общества в целом.

В своих известных статьях «Эволюция прекрасного», «Стихия философии истории», «Перебранка по воспитанию девушек или речь веника» и др., поощряя приток европейской литературно-научно-философской мысли в армянскую действительность, Темирчипашян был против идеи охватить все ветры и течения, идущие с Запада. Наряду с осваиванием новых эстетико-философских направлений, он призывал читать также «питательные, бодрящие, пробуждающие книги», не переставал верить в оптимистические перспективы нации и Родины.

Е. Темирчипашян был настоящим новатором, потому что привнес в армянскую реальность писателя, творца нового типа, который рассматривал литературу как естественное выражение своей жизни, неизбежное проявление многогранной, противоречивой, богатой и загадочной внутренней сущности.

Можно сказать, что Е. Темирчипашян воплотил собой императив времени – модернизации армянской жизни, задачу идти в ногу с мировым развитием. Благодаря также и его титаническим усилиям это принесло свои плоды, но в основном на уровне накопления большего количества материала и освоения его разнообразия. Оставляя задачу углубленного изучения, координации всего этого и, на этой основе, продвижения развития национальной литературы с новым качеством, своим талантливый преемникам, служа уникальным мостом между литературными поколениями.

*Петрос Демирчян – д. филол. н., старший научный сотрудник отдела новой армянской литературы Института литературы им. М. Абегяна НАН РА, секретарь правления Союза писателей Армении. Научные интересы: классическая и современная литература. Автор 3 монографий, многочисленных литературоведческих и литературно-критических статей.  
pdemirchyan@mail.ru*

## YEGHIA TEMIRCHIPASHYAN: HONORED WRITER AND INTELLECTUAL

PETROS DEMIRCHYAN

### Summary

*Key words: Yeghia Temirchipashyan, publicist, philosopher, pedagogue, editor, “Yerkragund”, “Grakan yev imastasirakan sharzhum”, innovateur.*

Writer, publicist, philosopher, pedagogue, editor Yeghia Temirchipashyan (1851–1908) occupies a special place in the history of Armenian literature and, in particular, in the national-social, educational and cultural development of the last quarter of the 19th century. He was destined to live and create for our people, truly, in a crucial historical time, when not only national and public life, but also scientific and meaningful creative thought was undergoing rapid reforms. In the oppressive atmosphere of the Sultan’s Turkey, even the creative spirit of Armenians tried to find a way out of the developments taking place in the world, the sources of progress and the latest ways.

In the system of communication and internal transfers, Y. Temirchipashyan gave priority to the present time. Soberly assessing the current requirements of life, he felt and realized that time has changed, the human being has changed. That is why, considering the Mashtots Grabar adored, he advocated the use of a

modern ashkharabar. Also important is the clear position of Yeghia, which he manifests when assessing the complex phenomena of the transition time experienced by him from the point of view of the life and progress of the nation and society as a whole. In his famous articles entitled “The Evolution of the Beauty” “The Element of the Philosophy of History”, “A Hassle over Bringing up Girls or a Speech of Broom”, encouraging the influx of European literary, scientific and philosophical thought into the Armenian reality, he was against the intention to accept with open arms all the shepherds and currents coming from the West. At the same time, having mastered new aesthetic and philosophical trends, he also encouraged reading “nutritious, strengthening, awaking books”, and did not stop believing in the optimistic prospects of the nation and the Motherland.

Y. Temirchipashyan was a real innovator, as he brought into our reality a new type of writer, a creator who did not create literature, but considered literature as a natural expression of his life, an inevitable manifestation of his versatile, contradictory, rich and mystical inner world:

It can be said that Y. Temirchipashyan personified the imperative of the time of modernization of Armenian life, the problem of ensuring balance with the developments in the world, also thanks to his titanic efforts, gave its positive results, but at the level of accumulating more material, mastering diversity. Leaving the task of advancing the development of the national literature with a new quality, based on an in-depth examination, coordination of all these, to its talented successors, being a unique bridge between the literary generations.

*Petros Demirchyan – Doctor of Sciences in Philology. Senior Researcher at the Department of Modern Armenian Literature of the NAS RA Institute of Literature after M. Abeghian, Executive Secretary at Writers’ Union of Armenia. Scientific interests: classical and modern literature. Author of 3 monographs, numerous literary, literary-critical articles. pdemirchyan@mail.ru*

ՕՍԻՊ ՄԱՆԴԵԼՇԱՄ. ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ:  
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՐԱ ԿՅԱՆՔՈՒՄ\*

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Օ. Մանդելշտամ, Ն. Մանդելշտամ, Ն. Բուխարին, Ի. Էրենբուրգ, Ս. Տեր-Գաբրիելյան, Մ. Շահինյան, Երևան, Շուշի, Թիֆլիս, Ե. Զարենց, հայկական թեմա, «Ճանապարհորդութունն Հայաստան»:

*Այս դարի ծնունդից հաշված՝ երեսունմեկ թվին  
Վերադարձա, չէ՛ – կարգա. բռնություն  
Ետ բերվեցի բուդդիստական Մոսկվա:  
Իսկ մինչ այդ տեսա, այնուամենայնիվ,  
Բիբլիական սփռոցներով հարուստ Արարատը,  
Երկու հարյուր օր անցկացրի շաբաթապահ երկրում,  
Որ կոչի Հայաստան<sup>1</sup>:*

Նախաբան

Ուռու (ծագումով՝ հրեա) երևելի բանաստեղծ, արվեստի տեսաբան, թարգմանիչ Օսիպ Էմիլի Մանդելշտամն առանձնահատուկ տեղ ունի խորհրդային գրականության պատմության անդաստանում: 1920–1930-ական թվականներին լինելով անկուսակցական ու հիմնականում գրական որևէ միավորման կազմում չլինելով ճաշակել է այն բոլոր դառնությունները, որ վիճակվեց իր սերնդակից մտավորականներին և խորհրդային երկրի շարքային բազում քաղաքացիներին. հալածվեց, երկու անգամ ձերբակալվեց, աքսորվեց, որտեղ էլ մահացավ: «Նա արտասովոր ..., ծանր ..., սրտառուչ և հանձարեղ մարդ էր»<sup>2</sup>, – այսպես է Օ. Մանդելշտամին բնութագրել ուռու անվանի գրող և գրականագետ Վ. Շկլովսկին: Իսկ մեծանուն բանաստեղծ Ա. Ախմատովան իր

\* Ներկայացվել է 23. II. 2021 թ., գրախոսվել է 02. VII. 2021 թ., ընդունվել է տպագրության 07. VII. 2021 թ.:

<sup>1</sup> Օ. Մանդելշտամ. Բանաստեղծություններ, արձակ: Թարգմ. ուռուերենից՝ Հրաչյա Բեյբերյանի, Երևան, 2012, էջ 151: Այս գրքից և հանրագիտարանային բնույթի մի քանի նյութից բացի, որքան մեզ հայտնի է, Օ. Մանդելշտամի կյանքի, գործունեության մասին հայերեն հրատարակումներ չկան. այդ բացը մասամբ լրացնելու է գալիս սույն հոդվածը:

<sup>2</sup> Օ. Манделштам. Шум времени: стихотворения, проза. Иркутск, 1991, с. 274–275.

հուշերում հետևյալ գրառումն է կատարել. «Դա (Օ. Մանդելշտամը – Ա. Զ.) մի մարդ էր հոգով թափառաշրջիկ այդ բառի ամենաբարձր իմաստով և poete maudit par excellence (ամենից առաջ անիծված բանաստեղծ), ինչը և ապացուցեց իր կենսագրությունը: Նրան մշտապես ձգում էին հարավը, ծովը, նոր վայրերը: Իսկ Հայաստանի նկատմամբ նրա խենթացնող սիրահարվածությունն վկայությունն անմահ բանաստեղծությունների շարքն է»<sup>3</sup>:

Օ. Մանդելշտամի անունը մեծապես կապված է Հայաստան երկրի ու Հայ ժողովրդի հետ: Հայաստանում ճանապարհորդելը ճակատագրական դարձավ նրա համար, քանզի հետագա կարճատև կյանքը շաղկապված մնաց Հայաստանի, Հայ մշակույթի հետ: Կապ, որ ուռու բանաստեղծը շատ թանկ էր գնահատում:

Օ. Մանդելշտամի կյանքի, գործունեության ու ստեղծագործությունների ուսումնասիրության, Հայաստանի հետ առնչություններին վերաբերող հարուստ գրականություն կա<sup>4</sup>: Վերջինը, սակայն, հիմնականում վերաբերում է Հայաստանին նվիրված բանաստեղծությունների շարքին և «Ճանապարհորդություն Հայաստան» արձակ գործին: Չեն մանրամասնվել գրապատմական որոշ իրողություններ, Հայաստան կատարած այցելության, Հայ ժողովրդի կյանքին վերաբերող իրադարձությունների նկատմամբ նրա մոտեցումների խորքային գրապատմաբաններն ու նախադրյալները և այլն:

Օ. Մանդելշտամի կյանքի, գործունեության ու ստեղծագործական ուղին

Բանաստեղծը ծնվել է 1891 թ. հունվարի 3-ին (15-ին) Վարչավայրում՝ վաճառականի ընտանիքում: 1907 թ. ավարտել է Պետերբուրգի Տենիշևյան ուսումնարանը: Ծնողներն անհանգստանալով իրենց որդու «արմատական մտայնություններով» հարում էր էսեններին, սեպտեմբերին նրան ուղարկում են Փարիզ. հոկտեմբերից 1908-ի կեսերն ուսանել է Սորբոնի համալսարանի

<sup>3</sup> Օ. М а н д е л ь ш т а м. Стихотворения, проза, записные книжки. Вступ. статья, сост., коммент. Н. А. Гончар-Ханджян. Ереван, 1989, с. 6.

<sup>4</sup> Այդ մասին տե՛ս Խրոպկոստի և անհոգիականության հարցը. «Մանդելշտամի մասին հրատարակված առավել կարևոր աշխատությունները»); Жизнь и творчество О. Э. Мандельштама. Воспоминания, материалы к биографии, «новые стихи», комментарии, исследования. Воронеж, 1990; Слово и судьба. Осип Мандельштам: исследования и материалы. М., 1991; Смерть и бессмертие поэта. Материалы международной научной конференции, посвященной 60-летию со дня гибели О. Э. Мандельштама (Москва, 28–29 декабря 1998 года). М., 2001; Օ. М а н д е л ь ш т а м. Стихотворения, проза, записные книжки; О. Л е к м а н о в. Жизнь Осипа Мандельштама. Документальное повествование. СПб., 2003; А. Г. М е ц. Осип Мандельштам и его время. Анализ текстов. СПб., 2005; Օ. Մ ա ն դ Ե լ շ տ ա մ. ն շ վ. գ ի Ր ք ր ր, В. Головин. «Над Курою в ущелье балконном». Осип Мандельштам. Тбилиси, 2016. Մ ն ա ց յ ա լ ն Ե ր ր տ Ե ս հ ո գ վ ա ծ ի ծ ա ն ո թ ա գ ր ու թ յ ու ն ն Ե ր ր ու մ :



բանասիրության ֆակուլտետում: Ամուսնն ընտանիքի հետ ճանապարհորդել է Եվրոպայում՝ եղել է Ֆրանսիայում, Շվեյցարիայում՝ մեկօրյա այցով միայնակ՝ Ջենովայում: 1909-ի աշնանից 1910-ի գարուն՝ երկու կիսամյակ, ուսմանական բանասիրություն, մասնավորապես հին Փրանսերեն է ուսումնասիրել Հայրելյեբրգի համալսարանի փրիլսոփայության ֆակուլտետի ուսման-գերմանական բաժնում: 1910-ի գարնան սկզբին կարճ ժամանակով ճանապարհորդել է Իտալիայում և հարավային Շվեյցարիայում, հուլիսի 21-ից հոկտեմբերի կեսերին էլ ապրել է Բեռլինի Յելենդորֆ արվարձանում: Նկատենք, որ այդ ճանապարհորդությունների արձագանքը՝ ճարտարապետական տպավորություններ, մասնավորապես եվրոպական գոթական, հնչում է նրա ամբողջ պոեզիայում: 1911 թ. մայիսի 14-ին տեղի է ունեցել Մանդելշտամի մկրտությունը Վիբորգի մեթոդիստական մատուռում: «Ծագումով Հրեա մարդու համար դա նախ և առաջ նշանակում էր, թե հուդայական չէ»<sup>5</sup>: Նույն թվականի սեպտեմբերի 10-ին ընդունվել է Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետի ուսմանական լեզուների բաժինը, բայց լրիվ դասընթացը չի ավարտել:

1909 թ. Օ. Մանդելշտամը ծանոթացել է բանաստեղծներ Վյաչ. Իվանովի և Ի. Աննենակու հետ ու ընդգրկվել «Ապոլլոն» հանդեսի շուրջ համախմբված բանաստեղծների շրջանակի մեջ: Այս ամսագրում էլ տպագրվել է (1910, № 9) Մանդելշտամի առաջին հինգ բանաստեղծությունը, որոնցում նկատելի է սիմվոլիզմի ազդեցությունը: 1912-ին ժամանակի անվանի գրողները՝ Ն. Գումիլյովը, Ս. Գորոդեցկին, Ա. Ախմատովան, Օ. Մանդելշտամը, Մ. Զենկեիչը, Մ. Կուզմինը, Վ. Նարբուտը և այլք միավորվել են «Цех поэтов» («Բանաստեղծների համաքարություն») գրական միավորման մեջ, հրատարակել իրենց հավատո հանգանակը, որով 1913 թ. ուսական պոեզիայում, ի հակադրություն խորհրդապաշտությանը, ձևավորվել է գրական մոդեռնիստական նոր հոսանքը՝ ակմեիզմը: Այդ շրջանի Մանդելշտամի բանաստեղծություններն ամփոփված են նրա հոր միջոցներով, 600 օրինակ տպաքանակով հրատարակված «Քար» ժողովածուում (1913): Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին՝ 1914 թ. դեկտեմբերին, նա անհաջող փորձ է անում տեղավորվելու գինվորական գնացքում որպես հիվանդապահ, ապա երկու տարի համազործակցում է Քաղաքների միության հետ: Հոկտեմբերյան հեղափոխությունն ընդունել է խանդավառությամբ, բայց մնացել է «ապաքաղաքական» բանաստեղծ: 1918–1919 թթ. աշխատել է Ա. Լուսնաչարսկու գլխավորած լուսավորության կոմիսարիատում, կուլտուր-լուսավորական այլ հիմնարկներում: 1919 թ. մայիսի 1-ին ծանոթացել է իր կյանքի ապագա ըն-

<sup>5</sup> Չժավալվելով նկատենք, որ «Մանդելշտամի մոտ քրիստոնեությունը ընկած էր հիմնականում իր աշխարհընկալման մեջ, բայց կրում էր ավելի շատ փրիլսոփայական, քան կենցաղային բնույթ» (Н. М а н д е л ь ш т а м. Вторая книга: воспоминания. Подготовка текста, предислов., примеч. М. К. Поливанова. М., 1990, с. 43): Քրիստոնեությանը և հուդայականությանը վերաբերող Օ. Մանդելշտամի մոտեցումների և ուսման բանասեր ու մշակութաբան Ս. Ավերինցևի՝ դրանց մեկնաբանությունների մասին տե՛ս Ս. Ավերինցև և. Օսիպ Մանդելշտամի ճակատագիրն ու արվեստը. – Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 22–25, նաև՝ Օ. Лекманов. Նշվ. աշխ., էջ 40–41:

կերոջ՝ Նադեժդա Մանդելշտամի (ծագումով հրեա, օրիորդական ազգանունը *Խազինա, 1899–1980*)<sup>6</sup> հետ: Նրանց բաժանումը տեղի է մեկուկես տարի. այդ ընթացքում Օ. Մանդելշտամը մեկնել է Ղրիմ՝ 1920 թ. մարտից հուլիս ամիսը Կոկտեբելում ապրել է բանաստեղծ Մ. Վորոշինի տանը, հայտնի վիճաբանությունից հետո<sup>7</sup> մեկնել է Վրաստան՝ Բաթում, Թիֆլիս, այնուհետև՝ Մոսկվա, Պետրոգրադ, որտեղ ապրել է Արվեստների տանը: Մանդելշտամները 1921 թ. եղել են Անդրկովկասում Բաքվում և Թիֆլիսում: 1922 թ. մարտին հաստատվել են Մոսկվայում. 1922–1923-ին ապրել են Գերցենի տանը<sup>8</sup> (այժմ Ա. Մ. Գորկու անվան համալսարհային գրականության ինստիտուտի շենք)՝ գրողների հանրակացարանում «ցուփական առանձնատանը», որտեղ, ի դեպ, տեղակայված էին նաև գրական մի շարք կազմակերպություններ, գրողական խորտկարանը: Մանդելշտամին հատկացրել են երկրորդ կարգի «ակադեմիական փայաբաժին»:<sup>9</sup> Դեպքերի բերումով, սակայն, բանաստեղծը թողել է գրողական «ետնախորշը», 1923–1924 թթ. ձմեռն անցկացրել է վարձակալած սենյակում Յակիմանկա փողոցում: Այնուհետև՝ 1924–1927 թթ., ապրել է Լենինգրադում և Ցարսկոյե Սելոյում: Գրական խմբավորումների միջև ընթացող անգիջում պայքարի ժամանակաշրջանում Մանդելշտամը պահել է անկախ կարգավիճակ, որը հանգեցրել է գրականության մեջ նրա մեկուսացմանը, «ուղեկից-գրողի» նկատմամբ խուլ անհանդուրժողականության: 1924 թ. գրած «Ոչ, ես չեմ եղել երբեք ոչ մեկին ժամանակակից» տողով սկսվող բանաստեղծության այս առաջին տողը բազմիցս «ի ցույց է դրվել» Մանդելշտամին մեղադրելու համար որպես կյանքից կտրված ապաքաղաքական տարրի<sup>9</sup>: 1921–1925 թթ. բանաստեղծությունները ներկայանում են «մերժվածության» սուր զգացումով: Այդ շրջանին են վերաբերում բանաստեղծի «Tristia» (1922, «Երկրորդ գիրք» վերնագրով՝ 1923) և «Ժամանակի աղմուկը» (ինքնակենսագրական պատմվածքներ, 1925) ժողովածուները: Դրանց հաջորդում են «Բանաստեղծություններ» (1928) ժողովածուն (գիրքը լույս է տեսել Կոմիտեերնի նախագահ և «Պրավդա» թերթի գլխավոր խմբագիր Ն. Բուխարինի<sup>10</sup> աջակցությամբ

<sup>6</sup> Առաջ անցնելով նշենք, որ Ն. Մանդելշտամը հետագայում իր «Հուշեր»-ում (1970) պատկերել է ամուսնու ողբերգական ճակատագիրը՝ երկու ձերբակալությունը և քրտրի տարիները, «Երկրորդ գրքում» (1972) իր կյանքը բանաստեղծի հետ, վերջինիս հոգեբանական ու ստեղծագործական դիմանկարը, 1920–1930-ական թվականների սկզբի գրական միջավայրը և այլն: Հրատարակել է նաև «Հուշեր» (1989) վերնագրով գիրքը: Հոգևածում մեծապես օգտագործել ենք նրա մտքերը, գաղափարներն ու ձևակերպումները, որոնք, անկասկած, եղել են Օ. Մանդելշտամի համոզմունքները:

<sup>7</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Օ. Лекманов. Նշվ. աշխ., էջ 89–90:

<sup>8</sup> St' u Л. Видгоф. «Но люблю мою курву–Москву»: Осип Мандельштам: поэт и город. Книга–экскурсия. М., 2012, с. 117–186. Գրքում հանգամանորեն ներկայացված են Մոսկվայում ապրելու այդ տարիների Օ. Մանդելշտամի կյանքն ու գործունեությունը:

<sup>9</sup> Օ. Մ ա ն դ Ե լ շ տ ա մ. Նշվ. գիրքը, էջ 357:

<sup>10</sup> Ռուս քաղաքական ու պետական գործիչ, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, անհատի պաշտամունքի գոհ Ն. Բուխարինը (1888–1938) մեծապես օգնել և օժանդակել է ժամանակի մտավորականությանը: Ահա թե ինչ է այդ մասին գրել նրա ամերիկացի

Պատմաբանափրկական հանդես 2021 № 2 Историко-филологический журнал

յամբ. գրողի կենդանությունն օրոք հրատարակված վերջին ժողովածուն է) ու «Եգիպտական դրոշմանիչ» (1928) վիպակը, որոնք առանձնանում են մտավորականի հոգևոր ճգնաժամի մասին մտորումներով, մտավորական, ով հեղափոխությունից առաջ ապրում էր «կուլտուրական ունետայով»: Նկատենք, սակայն, որ 1925–1929 թթ. Մանդելշտամը «լուել է»: Հինգ տարի ոչ մի բանաստեղծություն չի գրել, հիմնականում խմբագրել է գրքեր, հանդես է եկել շուրջ 25 գրախոսականներով (գերմանացի ու ֆրանսիացի հեղինակների գրքերի), գրադպել է Վ. Սկոտի, Շարլ դը Կոստերի, Ժ. Ռոմենի, Ժ. Դյուամելի, Ռ. Ստրվենտոնի և այլ հեղինակների գործերից կատարած թարգմանություններով (տիրապետել է մի քանի լեզուների), գրել է Պ. Չաադակին, Ֆ. Վիյոնին, Ա. Շենիերին նվիրված ուսումնասիրություններ: Տեսական արժեք են ներկայացնում «Բառ և մշակույթ» ու «Բառի բնության մասին» (տպագրվել են «Պոեզիայի մասին» ժողովածուի մեջ, 1928) հոդվածները:

Բանաստեղծի դեմ, սակայն, չարակամներն ու քաղքենի միջավայրը դավեր են լարում՝ անգամ քաղաքական երանգավորումներով: Մանդելշտամի «Հանգիստ» կյանքը խաթարվում է հատկապես գրական գործիչ և

կենսագիր Ստրվենտոն Կոչնը. «Նա (Բուխարինը – Ա. Զ.) նպաստել է գեղարվեստական ու գիտական նվաճումների զարգացմանը և կուսակցական առաջնորդների մեջ հազվադեպ բացառություն էր, որ լավ հարաբերությունների մեջ էր այնպիսի տարբեր մարդկանց հետ, ինչպիսիք էին Օսիպ Մանդելշտամը, Միխայիլ Պոկրովսկին, Մաքսիմ Գորկին և Իվան Պավլովը: ... Անկուսակցական մտավորականները, ինչպես տեխնիկական, այնպես էլ ստեղծագործական ... պատճառ չունեին նրանից վախենալու: Նա ոչ միայն պաշտպանում էր ոմանց, օրինակ, բանաստեղծ Օսիպ Մանդելշտամին, այլև հանդուրժողաբար էր վերաբերում նրանց գործունեությանը և, եթե ոչ որպես գաղափարախոս, ապա որպես մարդ գնահատում էր նրանց ստեղծագործությունը» (С. К о э н. Бухарин. Политическая биография. 1888–1938. Пер. с англ. Е. Четвергова, Ю. Четвергова, В. Козловского. Общая редакция и послесловие д. и. н. И. Е. Горелова. М., 1992, с. 280): Ի դեպ, 1927 թ. օգոստոսի 10-ին Ն. Բուխարինը, հավանաբար, Օ. Մանդելշտամի խնդրանքով դիմել է Պետհրատի խորհրդի նախագահ Արտաշես Խալաթովին հետևյալ հարցով. «Դուք, հավանաբար, գիտեք մեր խոշորագույն գրչի վարպետներից մեկին՝ բանաստեղծ Օ. է. Մանդելշտամին: Նրան չեն թողնում հրատարակվի Պետհրատում: Այնինչ, իմ խորին համոզմամբ, դա սխալ է: Ճիշտ է, նա ամենևին «մասսայական» բանաստեղծ չէ: Բայց նա ունի և պետք է ունենա իր նշանակալից տեղը մեր գրականության մեջ: Այս նամակը Ձեզ գրում եմ *privati*, քանի որ, կարծում եմ, որ Դուք կհասկանաք իմ մտադրությունները *ets*. Շատ կխնդրեի Ձեզ «մի քանի ըոպե» գրուցել Օ. է. Մանդելշտամի հետ կամ ինչ-որ այլ կերպ նրան ցուցաբերեք Ձեր լուսավորչալ աջակցությունը: Ձեր Ն. Բուխարին» (О. Л е к м а н о в. Նշվ. աշխ., էջ 123): Այս նամակից հետո գործին ընթացք է տրվում և «Բանաստեղծություններ»-ի ժողովածուն տպագրվում է: Հավելենք նաև՝ 1928 թ., երբ Մանդելշտամը տեղեկացել է, որ ձերբակալվել են բանկային ոլորտից մի քանի աշխատակիցներ և որ նրանց գնդակահարություն է սպառնում, դիմել է Բուխարինին ու հենց նոր լույս տեսած իր վերոգրյալ ժողովածուն հետևյալ ընծայագրով ուղարկել է նրան. «... այս գրքի ամեն մի տողը խոսում է այն բանի դեմ, ինչը որ դուք մտադիր եք անել ... » (Л. В и д г о ф. Նշվ. աշխ., էջ 175: Հմմտ. Ս. Ա վ եր ի ն ց և. Նշվ. հոդվ., էջ 34): Դատավճիռը չեղյալ է հայտարարվել:

Թարգմանիչ Ա. Գորնֆելդի հետ տեղի ունեցած հայտնի ընդհարման<sup>11</sup> ու նրա դեմ 1929 թ. մայիսի 7-ին «Литературная газета»-ում տպագրված Դ. Զապլավսկու՝ «Համեստ գրագողություն կամ սանձարձակ խալտուրա» վերտառությունը ֆելիետոնի պատճառով: Այդ ամենից դրդված՝ Օ. Մանդելշտամը դուրս է եկել Սովետական միացյալ գրողների ֆեդերացիայից, թեև նրան պաշտպանել են մի խումբ խոշոր արձակագիրներ ու բանաստեղծներ՝ բողոքի նամակ ուղարկելով թերթին, միաժամանակ դատարանն էլ մերժել է բանաստեղծին ներկայացված մեղադրանքը<sup>12</sup>: Այնուամենայնիվ, նրան «սկսում են կանչել հարցաքննությունների իբր նույն այդ գորնֆելդյան պատմության կապակցությամբ, սակայն հարցեր տալով նաև «սպիտակների մոտ» (Ղրիմում՝ 1919 թ. – Ա. Զ.) լինելու ժամանակաշրջանից»<sup>13</sup>: Գործը հասարակական մեծ հնչողություն է ստանում. 1930 թ. սկզբին այն քաղաքական երանգավորումներով դառնում է ՀամԿ(Ե)Կ-ի Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի քննության առարկան<sup>14</sup>:

... 1929 թ. աշնանից 1930 թ. փետրվար ամիսը Օ. Մանդելշտամն աշխատել է «Московский комсомолец» թերթում, վարել է «գրական էջ» և զբաղվել է երիտասարդ բանաստեղծներով: Փետրվարին թերթի խմբագրության գործերը ստուգող հանձնաժողովն աշխատակից Օ. Մանդելշտամին տվել է հետևյալ բնութագիրը. «Կարելի է օգտագործել որպես մասնագետ, բայց ղեկավարության տակ»<sup>15</sup>: Իբրև բողոքի նշան՝ նա հեռացել է խմբագրությունից և որոշ ժամանակ աշխատակցել «Вечерная Москва» թերթին:

Բանաստեղծը ծանր ապրումների մեջ էր, և հանկարծ «հրաչք» է կատարվում. շրկացող մթնոլորտն ու շնչահեղձ անող մոսկովյան միջավայրը փոփոխվում է Ն. Բուխարինի հովանավորությամբ. նրա շնորհիվ 1930 թ. մա-

<sup>11</sup> 1928 թ. «Земля и фабрика» հրատարակչությունը տպագրել է Շարլ դը Կոստերի «Թիլ Ուլենշպիգել» վեպը, որի տիտղոսաթերթին, հրատարակչության անփութությունից պատճառով, Մանդելշտամը ներկայացվել է որպես թարգմանիչ, այն դեպքում, երբ Ա. Գորնֆելդի ու Վ. Կարյակինի թարգմանություններն ընդամենը մշակել ու խմբագրել էր: Այդ մասին Գորնֆելդին առաջինը հայտնում է Մանդելշտամը և պահանջում հրատարակչության հերքումը, որը հաստատում է՝ դա ընդամենը վրիպակ է: Սակայն Գորնֆելդը մամուլում հանդես է գալիս մեղադրանքով, Մանդելշտամը պատասխանում է և այդպես շարունակ (տե՛ս Օ. Մանդելշտամ. Նշվ. գիրքը, էջ 370): Ս. Ավերինցևի խոսքերով «Այդ կոնֆլիկտի առարկան ինքնին ճիճու կերած խնձոր էլ չարժե» (Ս. Ավերինցև. Նշվ. հոդվ., էջ 35)

<sup>12</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Օ. Лекманов. Նշվ., աշխ., էջ 129–136: Նաև՝ Н. Я. Мандельштам. Воспоминания. М., 1989, с. 414; Л. Видгоф. Նշվ. աշխ., էջ 195–197:

<sup>13</sup> Ս. Ավերինցև. Նշվ. հոդվ., էջ 35:

<sup>14</sup> Н. Я. Мандельштам. Воспоминания, с. 414.

<sup>15</sup> Օ. Лекманов. Նշվ. աշխ., էջ 138–139: Ինչպես վկայում է Ն. Մանդելշտամը, այդ «բարյացակամ» բնութագրում ասվում էր, որ նա պատկանում է այն մտավորականների շարքին, որոնց կարելի է թույլ տալ աշխատելու, բայց կուսակցական ղեկավարության հսկողության տակ: Բնութագիրն ամենևին դուր չի եկել Մանդելշտամին (Н. Мандельштам. Вторая книга: ..., с. 432):

յիսից մինչև հոկտեմբերի սկիզբը բանաստեղծն ապրել է Հայաստանում: Գալով Թիֆլիս՝ տեական ընդմիջումից հետո, սկսում է բանաստեղծութ-  
յուններ գրել: Կենդանություն օրոք տպագրված նրա վերջին գործերն են  
«Հայաստան» բանաստեղծությունների շարքը և «Ճանապարհորդություն  
Հայաստան» էսսեն: «Մենք վերադարձանք Հայաստանից և ամենից առաջ  
վերանվանեցինք մեր ընկերուհուն (նկատի ունի Աննա Ախմատովային –  
Ա. Զ.), – գրում է Ն. Մանդելշտամը: – Նախորդ բոլոր անունները մեզ թվա-  
ցին անհամ. Աննուշկա, Անյուտա, Աննա Անդրեևնա: Վերջինը, իհարկե, միշտ  
մնաց: ... Բայց նոր անունը կապվ նրան, մինչև վերջին օրերը ես նրան անվա-  
նում էի այդ նոր անունով, ինչպես նա ստորագրում էր նամակներում՝ Անուշ:  
Անուշ անունը մեզ հիշեցնում էր Հայաստանը, որի մասին Մանդելշտամը,  
ինչպես նա գրում է ամեն տեղ, չէր դադարում երազել»<sup>16</sup>:

Անդրկովկասից վերադառնալով Մոսկվա, այնուհետև Մանդելշտամները  
փորձել են հանգրվանել Լենինգրադում. կրկին Ն. Բուխարինի օգնությամբ  
ուղեգիր են ստացել և մինչև 1931 թ. հունվարի 7-ը ապրել են հին Պետեր-  
գոֆում՝ Գիտնականների կեցությունը բարելավող կենտրոնական հանձնա-  
ժողովի (ЦЕКУБУ-ի) «Заячий ремиз» հանգստյան տանը: Լենինգրադում,  
սակայն, չեն բնավորվել, քանի որ դրան ինչ-ինչ պատճառներով դեմ է եղել  
Գրողների միության քարտուղար Նիկոլայ Տիխոնովը: Այդ իսկ պատճառով  
դիմել են ԽՍՀՄ Ժողկոմիտորհի նախագահ Վ. Մոլոտովին՝ աշխատանքի և  
բնակարանի հարցով, բայց անարդյունք. 1931-ի հունվարից 1932-ի հունվարը  
ապրել են տեղից տեղ փոխադրվելով:

1931 թ. Օ. Մանդելշտամի գրած առավել նշանակալից բանաստեղծութ-  
յուններից մեկի ստորև բերվող տողերը, կարծես թե, պատասխան են այն  
բոլոր քննադատներին, ովքեր տարիներ շարունակ բանաստեղծին պախարա-  
կել են «Թանգարանային» կյանքով ապրելու և արդիականություն հետ  
շփոթման բացակայություն համար:

Пора вам знать: я тоже современник,  
Я человек эпохи Москвошвея,  
Смотрите, как на мне топорщится пиджак,  
Как я ступать и говорить умею!  
Попробуйте меня от века оторвать,  
Ручаюсь вам – себе свернете шею!<sup>17</sup>

1932–1933 թթ. Մանդելշտամները կրկին ապրել են Գերցենի տանը<sup>18</sup>:  
«Այնտեղ լիքն էին գրողական ամեն տեսակի տականքներն ու սաղրիչնե-

<sup>16</sup> О. Мандельштам. Стихотворения, проза, записные книжки, с. 77.

<sup>17</sup> О. Лекманов. Նշվ. աշխ., էջ 5:

<sup>18</sup> Л. Видгоф. Նշվ. աշխ., էջ 283–338: Այս էջերում հանգամանորեն ներ-  
կայացված է Մոսկվայում ապրելու այդ տարիների Օ. Մանդելշտամի կյանքն ու  
գործունեությունը:

րը»<sup>19</sup>: Օ. Մանդելշտամը դեռևս «Չորրորդ արձակ»-ում, որը թելադրել է կնոջը 1929–1930 թվականների ճամուռը, գրում է. «Համաշխարհային գրականության բոլոր ստեղծագործությունները ես բաժանում եմ թույլտվութ-յամբ և առանց թույլտվության գրվածների: Առաջինը՝ նողկանք է, երկրորդը՝ առևանգված օդ: Ես ուզում եմ թքել նախապես թույլատրված գործեր գրող-ների դեմքին, ուզում եմ մահակով խփել դրանց գլխին և բոլորին Գերցենի Տանը սեղանի շուրջ նստեցնել՝ ամեն մեկի դեմը դնելով մի բաժակ ոստիկա-նական թեյ և յուրաքանչյուրի ձեռքը խոթելով Գորնֆելդի մեզի անալիզը:

Այս գրողներին ես կարգելի ամուսնանալ ու երեխաներ ունենալ: Նրանք ո՞նց կարող են աշխարհ բերել երեխաներ (ի դեպ, Մանդելշտամներն էլ երե-խա չեն ունեցել – Ա. Ջ.): Չէ՞ որ գավակները պետք է մեզ շարունակեն, մեր կիսատ մնացած ամենագլխավոր խոսքն ասեն, այն դեպքում, երբ նրանց հայրերը առնվազն երեք պորտ ծախվել են չեչոտ չարիքին (նկատի ունի Ստալինին – Ա. Ջ.)»<sup>20</sup>:

... Այդ շրջանում բանաստեղծի նյութական վիճակը որոշ չափով բարե-լավվել է, կրկին Ն. Բուխարինի միջամտությամբ երկսենյականոց կոոպերա-տիվ բնակարան է գնել Մոսկվայի Նաշոկինյան նրբանցքում (այժմ Ֆուր-մանովի փողոց):

1932 թ. նոյեմբերը Մանդելշտամն անցկացրել է ЦЕКУБУ-ի «Узкое» հանգստյան տանը: Նոյեմբերի 10-ին նա մեկ օրով մեկնել է Մոսկվա, որտեղ «Литературная газета»-ի խմբագրությունում տեղի է ունեցել Մանդելշտամի ստեղծագործությունների փակ երեկոն<sup>21</sup>: Այնուհետև երեկոները շարունակ-վել են. 1933 թ. փետրվարի 22-ին Լենինգրադի «Կապելլա»-ում, մարտի 2-ին «Մամուլի տանը», մարտի 14-ին Մոսկվայում՝ «Պոլիտեխնիկական թանգա-րանում»<sup>22</sup>, ապրիլի 3-ին էլ Մոսկվայի նկարիչների ակումբում<sup>23</sup>: Ման-դելշտամն 1933 թ. գրել է «Զրույցներ Դանթեի մասին» գրաքննադատական էսսեն (լույս է տեսել 1967-ին), որտեղ շարադրված են նրա առավել ամբող-ջական հայացքները պոեզիայի մասին: Սեպտեմբերին Ա. Ախմատովայի տանը նա էսսեն ներկայացրել է Լենինգրադի բանասերների ամբողջ վերնա-խավին<sup>24</sup>:

<sup>19</sup> Б. С. Кузин. Об О. Э. Мандельштаме. – «Вопросы истории естествозна-ния и техники» (М.), 1987, № 3, с. 141.

<sup>20</sup> Օ. Մանդելշտամ. Նշվ. գիրքը, էջ 237:

<sup>21</sup> Н. Я. Мандельштам. Воспоминания, с. 409; Л. Видгоф. Նշվ. աշխ., էջ 325–326:

<sup>22</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Л. Видгоф. Նշվ. աշխ., էջ 415–418:

<sup>23</sup> О. Лекманов. Նշվ. աշխ., էջ 158–159:

<sup>24</sup> Ճանաչողական արժեք ունի Լ. Գինզբուրգի «О старом и новом. Статьи и очерки» (Լենինգրադ, 1982) վերնագրով գրքի «Հին գրառումներից» բաժնի «Ման-դելշտամ» հատվածը (էջ 413–414), որտեղ հեղինակն այդ երեկոյից ստացած տպավորության տակ ահա այսպիսի բնութագիր է տվել բանաստեղծին. «Ման-դելշտամն Աննա Անդրեևնայի (Ախմատովայի – Ա. Ջ.) մոտ կարդում էր «Զրույց-ներ Դանթեի մասին»-ը: Մանդելշտամը կարճահասակ է, նիհար, նեղ ճակատով, փոքրիկ կոր քթով, դեմքի ներքևի սուր մասն անխնամ, համարյա ճերմակահեր մո-րուքով, լարված հայացքով և կարծես ոչ մի մանրուք չնկատող: Նա խոսում է,

ատամնագուրկ բերանը սեղմած, երգային ուղևորների անսպասելի նրբաձև ինտոնացիայով: Նա լեցուն է ուխտերով, ինչպես նաև մտքերով ու հիանալի խոսքերով: Կարդալիս նա օրորվում է շարժելով ձեռքերը. նա կորիֆեի բնախոսությունը հաճույքով շնչում է բառերի ուխտով, որոնցից հետո հանդես է գալիս պարող երգչախումբը: Նա ծիծաղելիորեն է քայլում, չափից ավելի ուղիղ մեջքով, ասես բարձրանալով ոտքի մատների վրա:

Մանդելշտամը ցնորվածի անուն է հանել և, իրականում, ցնորված է թվում մարդկանց միջավայրում, ովքեր սովորություն ունեն թաքցնել կամ նենգափոխել իրենց իմպուլսները: Նրա համար, հավանաբար, իմպուլսի և արարքի միջև գոյություն չունի տարածություն, տարածություն, որը կազմում է եվրոպական կենսաձևի էությունը: Ա՜ննա՜ «Անդրեևնան ասում է. «Օսիպը սյուրպրիզների արկղ է»: Հավանաբար, նա շատ տարբեր է: Եվ սկանդավների մեջ, հավանաբար, նա ավելի բնական է: Բայց բարեզարդ Մանդելշտամը, ինչպիսին նա հատկապես ձգտում է լինել Ա՜ննա՜ Ա՜խմատովայի՝ մոտ՝ անհեթեթ է: Նա չի տիրապետում մեր քաղաքակրթության պարզագույն դրսևորումներին: Նրա օձիքը և փողկապը՝ իրենք իրենց համար են: Ինչ վերաբերում է նրա շատ կարճ, բարակ, շագանակագույն գծավոր կտորից տաբատին, ապա այդպիսիք չեն լինում: Այդ գործվածքի գլանը կնոջը տվել են զգեստի համար:

Կենցաղային նրա վարվելակերպը զարմանալիորեն գործնական չէ: Նրա բարևների տարօրինակ քաղաքավարությունը, ձեռքսեղմումների անկարողությունը, որ ճանկում է ձեր մի բուռ մատները, ձայներանգի երգեցիկ քնքշությունը, երբ նա խնդրում է իրեն տալ լուցկին, այդ ամենն ինչ-որ ուխտիկ և զվարճալի խեղկատակություն է: Նա կիրառում է առօրյա խոսելաձև, փոքր-ինչ բռնեմական, փոքր-ինչ գոեհիկ: Օրինակ, ինչպես ասում ենքելու ժամանակ, շուրջը նայելով նա հարցնում է. «Չափից ավելի արագ չե՞մ բլբլացնում»: Բայց հենց որ դիմում է կարևորություն ունեցող նյութի, ուժգին բացվում են վերամբարձ խոսքի մուտքերը: Նա թափահարում է ձեռքերը, նրա աչքերն արտահայտում են լիակատար կտրվածություն աթոռից և գրուցակցից, և թեյի պնակի մեջ եղած պանրահացի մնացորդներից: Նա խոսում է իր բանաստեղծությունների բառերով. կցկտուր, թվատ, ... լպիրշ: Ամեն դեպքում չմոռանալով խորամանկել ու կատակել:

Մանդելշտամը լավատեսություն հաստատող երևույթ է: Մենք տեսնում ենք մարդու, որը ցանկանում է ունենալ փող ու փառք և վշտանում է, եթե իր բանաստեղծությունները չեն տպագրվում: Բայց մենք տեսնում ենք, թե այդ տխրությունն ինչքան աննշան է իր ստեղծագործական իրացման ապրումների համեմատ, երբ այն զուգակցվում է ստեղծագործական անսպառ զգացումին: Տեսնում ենք լավագույնը. իրականացվող արժեք և մարդ, ով փոխադրվել է իր գործի մեջ: Նա փոխադրվել է այնտեղ ամբողջովին, ինչով կարող էր, և մնացյալը՝ պարզվեց սատանան գիտի թե ինչ է. սկանդավներ, հասարակական դատեր: Մարդիկ գործին զոհաբերում էին իրենց կյանքը, առողջությունը, ազատությունը, կարիերան, ունեցվածքը: Մանդելշտամական խեղությունը կենցաղային կերպարով մարդու զոհաբերություն է: Դա նշանակում է, որ կամային լարվածության ոչ մի մասնիկ բանաստեղծական աշխատանքից դուրս չի վատնվել: Բանաստեղծական աշխատանքը կարիք ունի բանաստեղծի ինքնահարկադրման. առանց չընդհատվող ինքնահարկադրման այն արագորեն կուտանում ու արժեզրկվում է: Ամենը գնաց այնտեղ, և կենցաղում մնաց տարօրինակ մարդը չկանոնավորված ցանկություններով, «խենթ»:

Նա լեցուն է ուխտերով, մտքերով և առաջ մղող խոսքերով: Իր գործը նա անում է հընթացս, ... և անտարբեր շրջապատի հանդեպ ...»: Ի դեպ, վերոգրյալի առումով այլոց շարքում համանման ուշադրավ տեղեկություններ է հաղորդում նաև Ռ.

Սակայն արդեն իսկ ձևավորվում էր անհատի պաշտամունքը, և երկրի Հասարակական-քաղաքական, գրական-մշակութային կյանքը դառնում էր հեղձուցիչ: Դեռևս 1930 թ. դեկտեմբերին Մանդելշտամը գրել էր «Լենին-գրադ» վերնագրով բանաստեղծությունը, որի տողերը՝ «Պետերբուրգ իմ, ես դեռևս մեռնել չեմ կամենում» ու «Եվ ողջ գիշեր սպասում եմ թանկ հյուրերին միայն», դրա խոստուն վկայությունն են: Իսկ 1931 թ. նա Ստալինի մասին է. Գերշտեյնի բժիշկ հորն ասել է. «... պարագիտի տիպ է ... տասնապետ, որը ստիպում է հրեաներին աշխատել Եգիպտոսում»<sup>25</sup>: Այդ ամենին գումարվում է «Правда» թերթում նրա «Ճանապարհորդություն Հայաստան» երկի դեմ գրված «Չախճախիչ» հոդվածը (այդ մասին մանրամասն խոսք կլինի ստորև): 1933 թ. նոյեմբերին Օ. Մանդելշտամը գրել է «Կրեմլյան «սարեցուն» Ստալինին վերաբերող «ճակատագրական» բանաստեղծություններ, որոնցում մերկացնում է ստալինիզմը: Բանաստեղծությունները լայնորեն տարածում է՝ դրանք կարդալով գրական ու մերձգրական միջավայրում ունկնդիրների վրա թողնելով սարսափազդու տպավորություն: Այսպես, օրինակ, լսելով դրանք՝ ճանաչված գրաքննադատ Գ. Շենգելին ասել է. «Մենք այստեղ ոչինչ չենք կարդացել, ես ոչինչ չեմ լսել»<sup>26</sup>:

1934 թ. փետրվարի 17-ին Վ. Բոնչ-Բրուսևիչը Օ. Մանդելշտամին առաջարկում է վաճառել իր արխիվը Գեղարվեստական գրականության, քննադատության և հրապարակախոսության կենտրոնական թանգարանին: Մարտի 16-ին թանգարանի ֆոնդերը Համայնքի Համար կազմված փորձագիտական Հանձնախումբը բանաստեղծին արխիվի համար առաջարկում է «ծիծաղելիորեն» ցածր գին՝ 500 ռուբլի: Օ. Մանդելշտամը ցատկահարյալ նամակ է գրում Վ. Բոնչ-Բրուսևիչին և հրաժարվում արխիվի վաճառքից<sup>27</sup>:

1934 թ. ապրիլի կեսերին Օ. Մանդելշտամը Լենինգրադում էր: Մայիսի սկզբին «Գրողների հրատարակչություն»-ում հանդիպում է Ալեքսեյ Տոլստոյին, ով նախագահել էր «Սարգիջան-Մանդելշտամ» հայտնի դատը, և մարդկանց ներկայությամբ ապտակում է նրան<sup>28</sup>:

Նաև դրա հետևանքներից էր, որ 1934 թ. մայիսի 13-ի լույս 14-ի գիշերը բանաստեղծը ձերբակալվել է Նաչոկինյան նրբանցքի իր բնակարանում: «Ձերբակալման հրամանագիրը ստորագրել էր անձամբ Յագոդան, – հիշում է Ախմատովան: – Խուզարկությունը շարունակվեց ամբողջ գիշեր: Բանաստեղծություններ էին փնտրում, քայլում էին սնդուկներից դուրս նետած ձեռագրերի վրայով: Մենք բոլորս նստած էինք մի սենյակում: Շատ լուռ էր: ... Քննիչն իմ ներկայությամբ գտավ «Գայլը» և ցույց տվեց Օսիպ էմիլևիչին: Նա լուռ գլխով արեց: Հրաժեշտ տալիս համբուրեց ինձ: Նրան

Իվնևը Օ. Մանդելշտամի մասին գրած իր հուշերում. տե՛ս Р. Ивнев. Образ, временем сожженный. Стихотворения: 1904–1981. М., 1991, с. 143–155.

<sup>25</sup> Э. Г. Герштейн. Новое о Мандельштаме. – «Наше наследие», вып. V. М., 1989, с. 108; տե՛ս նաև Ս. Ավերինցև. Նշվ. հոդվ., էջ 29:

<sup>26</sup> С. И. Липкин. Угль, пылающий огнем. М., 1997, с. 398; Л. Видгоф. Նշվ. աշխ., էջ 331:

<sup>27</sup> О. Лекманов. Նշվ. աշխ., էջ 173:

<sup>28</sup> Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 173–174, 218, Л. Видгоф. Նշվ. աշխ., էջ 323–325:



տարան առավոտվա 7-ին»<sup>29</sup>: «Վարժվել ենք ապրել և՛ մեր տակ երկիր չգգալ ...» բանաստեղծությունը նրա «գործի» մեջ եղել է հիմնական մեղադրական նյութը: Չափազանց սուր, դիպուկ բնորոշումներով այդ բանաստեղծությունը բերենք ամբողջությունը:

Վարժվել ենք ապրել և՛ մեր տակ երկիր չգգալ,  
 Խոսքը մեր չի լսվում՝ չկտրած տասը քայլ,  
 Իսկ եթե խոսք բացես կես-պռատ գրույցում,  
 Քո աչքը կխոթեն կրեմլյան սարեցուն:  
 Հաստիկ են մատները՝ որդի պես լարծուն,  
 Ծշմարտա-փթանոց բառեր է արտածում,  
 Ուտիճի աչքերն են սուր ծիծղուն  
 Եվ նրա ճիտքերն են պսպղում:

Շուրջը բարակավիզ դեկավարք են վխտում –  
 Խաղալիք-մարդուկներ առաջնորդ իր ձեռքում  
 Ծվծվում, մլավում, թնկթնկում են, –  
 Նա է սոսկ, որ բամփում ու բոթում է,  
 Պայտի պես շպպացնում հրամանք օրենքի  
 Ամորձուղ ու աչքիդ, ճակատիդ ու հոնքիդ:  
 Մորու հափ ախորժ են մահերն հատիկ-հատիկ,  
 Եվ լայնարձակ կուրծք ունի օսեթի<sup>30</sup>:

Օ. Մանդելշտամը դատապարտվել է երեք տարով ազատ բնակությունից և քսուր ուղարկվել նախ Սվերդլովսկի մարզի Չերդին քաղաքը, ապա Վորոնեժ: Դատավճիռը մեղմ էր, անգամ թույլատրեցին, որ կինը նրան ուղեկցի: Հոգեբանական ծանր վիճակում գտնվող Մանդելշտամը Չերդինում իրեն լուսամուտից դուրս է նետել: Ի դեպ, Ն. Բուխարինը ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ Վ. Մոլոտովի միջոցով կազմակերպել է, որ 41-ամյա Մանդելշտամը թողնի ստանա. 1932 թ. մարտի 23-ին նշանակվել է անհատական ցմահ կենսաթոշակ՝ 200 ռ.<sup>31</sup>, որից զրկվել է քսուրի առաջին իսկ ձմռանը: «Մինչ այժմ հանելուկ է մնում, այդ ժամանակ ինչը փրկեց Մանդելշտամի կյանքը: Արդյոք օգնեց Ն. Ի. Բուխարինի<sup>32</sup> և Բ. Լ. Պաստեռնակի հովանավորութ-

<sup>29</sup> Ս. Ավերինցև. նշվ. հոդվ., էջ 38–39:

<sup>30</sup> Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 163: Բանաստեղծության մասին տե՛ս նույն տեղում, էջ 361–362:

<sup>31</sup> «Այն (կենսաթոշակը – Ա. Զ.) տրվել էր «ոռու գրականության մեջ ունեցած վաստակի համար»՝ սովետական գրականության մեջ տվյալ գրողին «օգտագործելու անհնարիության պատճառով»: Այդ ձևակերպումը, – ըստ Ն. Մանդելշտամի, – ինչ-որ առումով համապատասխանել է իրականությանը, և մենք կռահեցինք, որ այն պատկանում է Ն. Բուխարինին» (Н. Я. Мандельштам. Воспоминания, с. 110, 405):

<sup>32</sup> Տե՛ս Ն. Բուխարինի նամակը Ստալինին և վերջինիս մակագրությունը. «Ո՞վ է նրանց իրավունք տվել ձերբակալել Մանդելշտամին: Այլանդակություն է ... ». – П. М. Нерлер. Слово и «дело» Осипа Мандельштама. Книга доносов, допросов и обвинительных заключений. При участии Д. И. Зубарева и И. Л. Побояля. М., 2010, с. 39.

յունը<sup>33</sup>, թե՞ դեր է խաղացել առաջնորդի գաղտնի հույսն այն բանի համար, որ վարպետը կգովերգի իր անունը: Դժվար է ասել: Այնուամենայնիվ եղավ հրաման. «Մեկուսացնել, բայց պահպանել»: Պահպանել: ... Գիշերային հալումաշ անող հարցաքննություններից հետո աքսորել Չերդին՝ սպասելով մահվան դատավճռի: Փրկարար հույսը ծնվեց Վորոնեժ աքսորելու մասին հանկարծակի հրամանի գալով, – նկատել է գրաքննադատ Ն. Ի. Վելիկայան: – Շնորհագրկված բանաստեղծը դիմացավ: Եվ գլխավորն այն է, որ նա հոգեպես չկոտրվեց: Վորոնեժյան չրջանը (1934–1937) նշանավորվեց ստեղծագործական վերելքով, Օսիպ էմիլիչը այստեղ ստեղծում է բանաստեղծությունների երեք «վորոնեժյան տետրերը»: Կյանքի, հողի, մարդու, ստեղծագործության նկատմամբ բանաստեղծի սերը պարզվեց, որ անհագ է: «Դու դեռ չես մեռել, դու դեռ մենակ չես ... Դու վայելում ես դաշտավայրերի վեհությունը // Եվ մշուշով, և սառնամանիքով, և բուք ու բորանով»: «Մեծ կարիքի, ծայրահեղ աղքատության մեջ» բանաստեղծը հանգիստ է և մխիթարվում է նրանով, որ իր քաղցրախոս աշխատանքը» անմեղ է, անբասիր:

Աննա Ախմատովան զարմանքով գրել է. «Ապշեցուցիչ է, որ Մանդելշտամի բանաստեղծություններում ազատությունը, լայնարձակությունը, խոր շնչառությունը երևան եկան հենց Վորոնեժում, երբ նա ամենևին ազատ չէր»<sup>34</sup>:

Վորոնեժում ապրած տարիներին Մանդելշտամին թույլ են տալիս կնոջ հետ պատրաստել Գյոթեի պատանեկության մասին գրական ուղիղհարգող դրամներ (որով հիմք է դրվել Գյոթեի ինքնակենսագրական վեպի ստեղծմանը), երեխաների համար Գուլիվերի մասին հաղորդումներ տալ, Սովետական գրողների միության տեղական բաժանմունքի հանձնարարականով աշխատել է տեղի թատրոնում որպես գրական մասի վարիչ, թղթակցել մամուլին, մեկնել գործուղումների մոտակա չրջաններ: Ռուս բանաստեղծն ընդունել է հյուրեր՝ Ա. Ախմատովային, Է. Գերշտեյնին, Ն. Շտեմպելին և ուրիշների:

Այստեղ Օ. Մանդելշտամը սկզբնական շրջանում լիաթոք ստեղծագործել է, կրկին վերհիշել է Հայաստանը, գրել է կոչկակարություն անող աքսորյալ

<sup>33</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Н. Я. Мандельштам. Воспоминания, с. 135–139.

<sup>34</sup> О. Мандельштам. Личность. Творчество. Эпоха. Автор предисл. д. ф. н., проф. Н. И. Великая. Владивосток, 1989, с. 8. Ս. Ավերինցևը գրում է. «Հաճախ հարցնում են. էդ ո՞նց եղավ (խոսքը՝ «Մեկուսացնել, բայց պահպանել» հրահանգի մասին է – Ա. Չ.), բացատրություն են փնտրում: Այո, հոգածողներ կային. Ախմատովան գնաց Ենուկիձեի մոտ, Պաստեռնակը՝ Դեմյան Բեդնու, Նադեժդա Յակովլենան՝ Բուխարինի: Այո, Ստալինի տիրահազակ զանգը (հունիսի 13-ին – Ա. Չ.) Պաստեռնակին՝ նույնպես եղել է: Սակայն այդ ամենը մի՞թե որևէ նշանակություն ունեն: Ե՛վ Ն. Ա. Ստրուվեն, և՛ Բ. Մ. Սատնովը կարծում են, թե Ստալինն ուզում էր Մանդելշտամին «ձեռնասուն դարձնել», որպեսզի իրեն ծառայի» (Ս. Ավերինցև. նշվ. հոդվ., էջ 39): Վորոնեժյան վերջին շրջանի բանաստեղծությունների մասին հակիրճ տե՛ս Ս. Ավերինցև. նշվ. հոդվ., էջ 41–43, նաև՝ М. Л. Гаспаров. О. Мандельштам: гражданская лирика 1937 года. М., 1996.

Հայերի մասին բանաստեղծություններ, որոնք, ցավոք, կորել են: Վորոնեժի գրողների միությունը կուսխմբի քարտուղար Ստ. Ստոիչևի վկայությունից հայտնի է, որ 1935 թ. փետրվարին Վորոնեժի «Коммуна» թերթի խմբագրությունում կայացել է գրողների ժողովը: Ձեկուցում է լավել ակմեիզմի մասին՝ նպատակ ունենալով պարզել Մանդելշտամի վերաբերմունքն իր անցյալի նկատմամբ: Պարզվել է՝ իր ելույթով բանաստեղծը ցույց է տվել, որ «ոչինչ չի սովորել, որ ինչպիսին եղել է, այդպիսին էլ մնացել է»<sup>35</sup>:

1936-ին Օ. Մանդելշտամի դեմ նոր հալածանքներ սկսվեցին: «Աշխատավարձերը կտրեցին, – կարդում ենք Ն. Մանդելշտամի հուշերում: – Ծանոթները փողոցում գլուխները շուռ էին տալիս կամ նայում էին առանց ճանաչելու»: 1937 թվին «Литературный Воронеж» ավանախր բանաստեղծին տրոցկիստների «բանդայի» շարքը դասեց, որ շուրջբոլորը տարածում է «մարգամի և ապաքաղաքականացման ոգի»: 1937 թ. ապրիլի 17-ին Մանդելշտամը դանդաղում է Կ. Ի. Չուկովսկուն. «Ես հայտնվել եմ շան, անտեր շան վիճակում ... Ես չկամ: Ես սովեր եմ: Ես միայն իրավունք ունեմ մեռնելու»<sup>36</sup>: Իսկ «Չորրորդ արձակ»-ում էլ խոստովանում է. «Փրանսիացուն կասեն՝ շեր մետր – թանկագին ուսուցիչ, իսկ ինձ՝ Մանդելշտամ, շներին քոր տուր: Ում ինչ վիճակված է: Ես՝ ձերացող մարդս, սեփական սրտիս կրծոնքով քոր եմ տալիս տերունական շներին, բայց դրանց քիչ է գալիս, քիչ է գալիս: Շան քնքշանքով ինձ են նայում ուս գրողների աչքերն ու աղաչում՝ աստկիր-պրծնենք էլի: Որտեղից այդ լաքեյական հարամտությունը, այդ ստրկամիտ քամահրանքը իմ անվան հանդեպ: Գնչուն գոնե ձի ունի, իսկ ես թե՛ ձի եմ, թե՛ գնչու ... »<sup>37</sup>:

... 1937 թ. մայիսի 16-ին լրանում է աքսորի ժամկետը, և Մանդելշտամները վերադառնում են Մոսկվա: Սակայն գրանցում չունենալու պատճառով, ստիպված ժամանակավորապես ապրում են Սավելովում, Կիմրի մերձակայքում: «Մոսկվայում նրա համար բաց է մնում Շկլովսկիների տունը. նա Պերեդելկինո է այցելում Պաստեռնակին: Ամենակենսական կարիքները հոգալու նպատակով գումար հայթայթելու համար երկու անգամ Լենինգրադ է գնում՝ 1937 թ. աշնանը, երբ չփվեց Ստենիչի և իր հին ընկերոջ՝ Լոզինսկու հետ, և 1938-ի փետրվարին, երբ Ստենիչը ձերբակալված էր, ... մահացու վախեցած Լոզինսկին հրաժարվեց նրան ընդունել (ի դեպ, Օ. Մանդելշտամը դեռևս 1921 թ. Մ. Լ. Լոզինսկուն նվիրել էր «Հետիոտն» վերնագրով խորախորհուրդ բանաստեղծությունը – Ա. Չ.): «Ժամանակն ապրկալիստիկ էր, – հիշում է Ախմատովան: – Աղետն ամենքիս կրնկակոխ հետևում

<sup>35</sup> Н. Я. Мандельштам. Воспоминания, с. 412, 416; О. Лекманов. *Նշվ. աշխ.*, էջ 185:

<sup>36</sup> Ս. Ա. վ. Ե. ր. Ի. ն. ց. և. *Նշվ. հոդվ.*, էջ 40:

<sup>37</sup> Օ. Մանդելշտամ. *Նշվ. գիրքը*, էջ 243: Վորոնեժում ապրած ժամանակաշրջանում բանաստեղծի կյանքի, կենցաղի, ընդհանրապես գործունեության մասին մանրամասն տե՛ս В. Л. Гордин. Мандельштамовский Воронеж. – Жизнь и творчество О. Э. Мандельштама ..., с. 53– 60; Н. Е. Штемпель. Мандельштам в Воронеже. Воспоминания. М., 1992; О. Лекманов. *Նշվ. աշխ.*, էջ 180–204:

էր: Մանդելշտամը փող չուներ: Բացարձակ ոչ մի տեղ չուներին ապրելու: Օսիպը վատ էր շնչում, օդը որսում էր շուրթերով» ... Անտնությունից ու անփողությունից հոգնատանջ Մանդելշտամն անապասելիորեն արժանանում է գրական Փոնդի ողորմածությունը՝ Սամատրիայի հանգստյան տան ուղեգիր է ստանում»<sup>38</sup>: Թվում է գործերը կարգավորվել են, կարելի է հանգիստ ստեղծագործել, և մարտ ամսին Մանդելշտամը ոգևորիչ նամակներ է գրում մտերիմ ընկերոջը՝ Բ. Կուզինին ու հորը: Դա, սակայն, միայն թվում էր. ԽՍՀՄ գրողների միությունն առաջին քարտուղար Վ. Ստավսկու հայտնի նամակ-մատնագիրն ու դրան կցված Պ. Պավլենկոյի բացասական կարծիքն Օ. Մանդելշտամի մասին ուղղված ԽՍՀՄ ներքին գործերի ժողկոմ Ն. Եծովին<sup>39</sup>, կատարում են իրենց սև գործը:

1938 թ. մայիսի 1-ի լույս 2-ին, երբ Մանդելշտամները մարտի 8-ից հանգստանում էին առողջարանում, բանաստեղծը հակահեղափոխական գործունեությունից համար ձերբակալվել է երկրորդ անգամ: «... Իսկ «ինչո՞ւ», ..., բանաստեղծին երկրորդ անգամ ձերբակալեցին՝ նախորդից չորս տարի անց: Նա նոր հանդգնություններ չէր գործել, – ծանր պահերին փորձում էր Ստալինին փառերգել (Մանդելշտամին չփրկեց անգամ 1937 թ. հունվարի 20-ին Վորոնեժում գրած Ստալինին նվիրված ներբողը – Ա. Զ.): Ուրեմն «ինչո՞ւ», – հարց է տալիս Ս. Ավերինցևը ու դա ահա այսպես մեկնաբանում.– Թվում է՝ ... հարցի պատասխանն էլ բարդ չէ: Եթե Ստալինը որևէ բանի տիրապետում էր կատարելապես՝ դա վրիժառությունն էր և վրեժն առնելու հարմար պահին սպասելու կարողությունը: Բանաստեղծի ճակատագիրը, որն իրեն թույլ էր տվել անասելի գործությունների բացահայտ հարված հասցնել ժողովուրդների Առաջնորդի անձին, սկզբունքորեն վճռված էր, ամենայն հավանականությամբ՝ մեկն ու անվերադարձ. նա հողի վրա չպիտի քայլեր: Նրանից փառերգություններ չէին պահանջվում. պահանջվում էր միայն մահ: Բայց գլխի ընկնելը դժվար չէ, որ անհապաղ գնդակահարությունը կամ նույնիսկ նշանակալի ճամբարային ժամկետը հետաքրքրություն կհարուցեր «հանցավոր» բանաստեղծության հանդեպ, որն, անշուշտ, արձագանք կունենար: Ոչ, առաջին պատիժը պետք է եփած հավի ծիծաղը բերելու չափ դատարկ մի բան լիներ. մեծահասակ երեխային չարություն անելու համար անկյուն են կանգնեցրել: Բայց խայծը նետված է, և նրա մասին չեն մոռանա: Իսկ երբ վրա հասնի վաղուց ծրագրված տեղորի ալիքը, և ամեն մեկն իր հոգսերով տապակվի, բանաստեղծն աննկատելիորեն կչքանա աշխարհի երեսից»<sup>40</sup>:

Մանդելշտամը դատապարտվել է հինգ տարվա ազատազրկման, աքսորվել Վլադիվոստոկ՝ տարանցիկ ճամբար: Այստեղից ստացվել է Մանդելշտամի հաղորդած վերջին լուրը. «Առողջությունս շատ թույլ է: Ծայրահեղ հյուսված եմ, նիհարել եմ, համարյա անճանաչելի եմ, բայց իրեր, սնունդ ու փող ուղարկելը – չգիտեմ, իմաստ ունի՞: Փորձեք, այնուամենայնիվ: Առանց իրերի շատ եմ մրսում»:

<sup>38</sup> Ս. Ավերինցև և. նշվ. հոդվ., էջ 43:

<sup>39</sup> Մանրամասն տե՛ս Օ. Лекманов. նշվ. աշխ., էջ 209–211, Л. Вид-гоф. նշվ. աշխ., էջ 577–578:

<sup>40</sup> Ս. Ավերինցև և. նշվ. հոդվ., էջ 39–40:

Նաղենկա, Հարազատս, չգիտեմ՝ ո՞րչ էս արդյոք, աղավնյակս»<sup>41</sup>: Այս ճամբարում էլ Մանդելշտամը 1938 թ. դեկտեմբերի 27-ին կնքել է մահկանացուն:

... Գերցենի տանն ապրելիս Օ. Մանդելշտամի հարևաններից էր գրող, «չատ լավ ու տաղանդավոր մարդ»՝ Ս. Կլիչկովը: Օրերից մի օր՝ բանավեճի ժամանակ, նա Մանդելշտամին ասել է. «Այնուամենայնիվ, Օսիպ էմիլիչ, ձեր խելքը հրեական է»: Դրան անմիջապես Մանդելշտամը հակադարձել է. – «Դե ինչ, հնարավոր է: Բայց պոեզիա ուսական է»: «Դա ճշմարիտ է: Այ, դա ճշմարիտ է», – ամենայն անկեղծությամբ խոստովանել է Կլիչկովը»<sup>42</sup>: Եվ, իրապես, Մանդելշտամի ողջ ստեղծագործությունը գրված է ուսական պոեզիայի ոգով: 1937 թ. հունվարի 21-ին վորոնեժյան աքսորավայրից գրող և գրականագետ Յու. Տինյանովին գրած նամակում բանաստեղծը խորապես համոզված այդ մասին գրում է. «Արդեն քառորդ դար է, ինչ էս, կարևոր ու դատարկ բաները միախառնելով, լող եմ տալիս դեպի ուս պոեզիան, բայց շուտով իմ բանաստեղծությունները կմիահյուսվեն նրան՝ ինչ-որ բան փոփոխելով նրա կառուցվածքի ու բաղադրության մեջ»<sup>43</sup>:

Հավելենք, որ մինչև 1960-ական թվականների սկիզբը Օ. Մանդելշտամի անունն ու ստեղծագործական ժառանգությունն ընթերցող լայն հանրությանն անձանոթ է եղել: Չի եղել մի անկյուն (էլ չենք խոսում տուն-թանգարանի մասին), որտեղ հավաքված լինեին բանաստեղծի՝ հրաշքով փրկված ձեռագրերն ու կենցաղային իրերը: Միայն 2021 թ. սկզբին է Մոսկվայում բացվել մշտական էքսպոզիցիա՝ «Մանդելշտամի փողոց. Օսիպ և Նաղենկա»<sup>44</sup>:

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 44:

<sup>42</sup> Б. С. Кузин. Նշվ. հրատ., էջ 142–143: Վերը նշված երկխոսության անհշուխտաբար ուշագրավ է անվանի գրաքննադատ, հրապարակախոս, թարգմանիչ ու բանաստեղծ Գ. Կուբատյանի հավելում-գուգահեռը՝ Ս. Դովլատովի և Վ. Սարոյանի գործունեության հետ կապված (տե՛ս Г. Кубатьян. Ворованый воздух. Статьи и заметки. Ереван, 2005, с. 286–287): Ի դեպ, Օ. Մանդելշտամը շատ է հավանել Ս. Կլիչկովի հետևյալ խոսույն տողերը. «Впереди одна тревога, // И тревога позади. // Посиди со мной немного, // Ради Бога, посиди ...» (Н. Мандельштам. Воспоминания, с. 191).

<sup>43</sup> Ս. Ավերիչև և Նշվ. հոդվ., էջ 5:

<sup>44</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Комната для поэта. В Москве открылась постоянная экспозиция «Улица Мандельштама: Осип и Надежда». – «Литературная газета», № 11, 17–23 марта 2021. Ի դեպ, Օ. Մանդելշտամի կյանքի ու գործունեության վերաբերյալ կան հակասական և մտորումների տեղիք տվող բազում տեղեկություններ: Դրանցից վերջինը տպագրվել է «Литературная газета»-ում (№ 19, 12–18 մայիս 2021, էջ 17): «Բանաստեղծը և իշխանությունը: Մի քանի քիչ հայտնի գրվագներ Օսիպ Մանդելշտամի կյանքից» վերնագրով նյութի նախաբանում կարդում ենք. «Մեր օրերում բանաստեղծների կենսագրությունները հաճախ մեկնաբանվում են հակապետական կտրվածքով: Օրինակ, միանշանակ ընդունված է Մանդելշտամին ներկայացնել բացառապես իշխող ուժի հակառակորդ և զոհ: Գրողների միության Սանկ Պետերբուրգի բաժանմունքի քննադատություն և գրականագիտություն մասնաճյուղերի անդամները հավաքվել էին գրողների տանը մտքեր փոխանակելու քսաներորդ դարի դժնդակ

**Մանդելշտամը Թիֆլիսում և Բաքվում**

1920 թ. սկզբին՝ «Նախագգալով գալիքի պատժամահերը, խոռվահույզ իրադարձությունների աղմուկից // Ես ներեիդների մոտ՝ Սև ծով փախա ... »: Ուղեփուկեր՝ Խարկով և Կիև, որտեղ նա (Օ. Մանդելշտամը – Ա. Զ.) հանդիպեց իր կյանքի ապագա ուղեկցին՝ Ն. Յա. Խաղինային, Կոկտեբել, որտեղ նա չկարողացավ հաշտ ապրել Վոլոչինի հետ, և Թեոդոսիա, որտեղ ձերբակալվեց վրանգեյյան հակահետախուզության կողմից և ազատվեց գնդապետ Յիբուկսիու, ինչպես նաև Վոլոչինի ու Վերեսաակի ջանքերով, – Բաթումի, որտեղ մեկ անգամ ևս ձերբակալվեց մենչևեիկյան կառավարության ծովափնյա պահստիների կողմից և ազատ արձակվեց բանաստեղծներ Ն. Միցիշվիլիի ու Տ. Տաբիձեի միջնորդությամբ, և վերջապես՝ Թբիլիսի»<sup>45</sup>, – արձանագրել է Ս. Ավերինցևը:

Ռուս նշանավոր գրող և հրապարակախոս Իլյա Էրենբուրգը 1920 թ. սեպտեմբերի վերջերին, Թեոդոսիայից Մոսկվա հասնելու փոխարեն, փորձով լուծման բերումով կնոջ հետ հայտնվում է Թիֆլիսում: Անձանոթ քաղաքում առաջին օրն իսկ հանդիպում է Օսիպ Մանդելշտամին: Վերջինիս, վրաց բանաստեղծներ Տիցիան Տաբիձեի և Պաոլո Յաշվիլու հետ անցկացրած օրերի մասին Էրենբուրգը հիշարժան էջեր է թողել իր ինքնակենսագրական-հուշագրական «Մարդիկ, տարիներ, կյանք» գրքում: Պատմելով, որ Գոլովինսկի պողոտայում անսպասելի հանդիպումը մեծ ուրախություն է պատճառել և՛ իրեն, և՛ Մանդելշտամին, ով, ինչպես նկատում է Ի. Էրենբուրգը, ընդամենը մի երկու օր լինելով Թիֆլիսում՝ «... ոտքերի տակ հող ունեւր ... գործարար ասաց. «Հիմա մենք կգնանք Տիցիան Տաբիձեի մոտ, և նա մեզ կտանի հիանալի պանդոկ ...»<sup>46</sup>: Այնուհետև Մանդելշտամը պատմում է Բաթում քաղաքում իր գլխով անցածը, բանտում հայտնվելը, վրաց բանաստեղծների նրան ազատելը: Տ. Տաբիձեն խանդավառ դիմավորում է նրանց, ապա գտնելով Պ. Յաշվիլուն՝ հյուրասիրում են բանաստեղծ հյուրերին, տեղավորում հյուրանոցում: Հաջորդ օրը Մանդելշտամի հետ գնում են սովետական դեսպանատուն և խնդրում իրենց ուղարկել Ռուսաստան, խոստանում են ուղարկել մեկերկու շաբաթից: «Մենք Թբիլիսիում ապրեցինք երկու շաբաթ. այդ օրերն ինձ թվացին քնարական նահանջի օրեր ..., – վերհիշում է Էրենբուրգը: – Մինչ այդ ես երբեք չէի եղել Արևելքում, և հին Թբիլիսին ինձ թվաց «Հագար ու մեկ գիշերների» քաղաքներից: Մենք շրջում էինք անծայր Մեյդանով ... եղանք ծծմբային բաղնիքներում ... Վերայի այգիներում գինի էինք խմում ... Հին

Պատմաբանափրկական հանդես 2021 № 2 Историко-филологический журнал

տարիներին բանաստեղծի և իշխանության իրական փոխհարաբերությունների մասին: Իր տեսակետը ներկայացրեց նիստի մասնակից պետերբուրգյան հայտնի նկարիչ և գրող Եվգենի Անտիպովը»: «Ունկնդիրների ցուցակ», «Անհատական թոշակ», «Բանկետ Բլյումկինի հետ» և «Լոգանք «Անգլետերե»-ում խորագրերի ներքո հետաքրքիր, բայց մասամբ հայտնի մանրամասներ են ներկայացված Օ. Մանդելշտամի կյանքից:

<sup>45</sup> Ս. Ավերինցև և. Նշվ. հոդվ., էջ 26:

<sup>46</sup> И. Эренбург. Люди, годы, жизнь, кн. 1 и 2. М., 1961, с. 508. Ի դեպ, այս տարի նաև լրանում է Ի. Էրենբուրգի ծննդյան 130-ամյակը, և հողվածի այս հատվածը հարգանքի տուրք է հայ ժողովրդի ազնիվ բարեկամի հիշատակին:

տաճարներում դիտում էինք քարե թագուհիներին, որոնց շոյում էին հովազները: ...»: «Ինձ նվիրեցին «Թիֆլիսի բանաստեղծների համաքարուխյան ժողովածուն» («Ակմե» խորագրով.— Ա. Չ.),— գրում է Էրենբուրգը:— Այդ գրքուկը պատահաբար ինձ մոտ պահպանվել է: Հեղինակների թվում շատ են պոետական ազգանուններով բանաստեղծուհիները. Նինա Գրացիանսկայա, Բել-Կոն-Լյուբոմիրսկայա, Մազդալինա դե-Կապրելևիչ: «Թիֆլիսի համաքարուխյան» բանաստեղծները գրում են սոնետներ Սվարոգի, Էրոսի, Սուլամիթի, Սանավալ-լատի, Մոնֆորի և նրանց նույնքան մոտ մյուս գործող անձանց մասին»<sup>47</sup>: Չի բացառվում, որ Օ. Մանդելշտամին նույնպես նվիրել են այդ գրքուկից<sup>48</sup>:

«... 1920 թ. աշնանը ... վրացի ընկերները մեզ ապաստան տվեցին, ջերմացրին: ... Յաշվիլին ու Տաբիձեն Ռազմավիրական ճանապարհով մեզ ճանապարհեցին մինչև առաջին կայանը ...»<sup>49</sup>, — Թիֆլիսյան օրերի վերաբերյալ ասելիքն ամփոփում է Էրենբուրգը՝ առանց մտաբերելու իր և Մանդելշտամի պատվին կազմակերպված գրական երեկոն, սեփական ուշադրավ հորվածները մամուլում:

Երեկոն պետք է տեղի ունենար սեպտեմբերի 26-ին կոնսերվատորիայի դահլիճում: «Արդի ուռևական պոեզիան» խոսքով միջոցառումը բացելու էր բազմակողմանի իմացություններով և հոետորական փայլուն ձիրքով հոչակված վրաց անվանի գրական գործիչ Գ. Ռոբակիձեն: «Արվեստը և նոր դարաշրջանը» բանախոսությամբ և «Կրակ», «Նոր արշալույսներ» գրքերից բանաստեղծությունների ընթերցանությամբ հանդես էր գալու Ի. Էրենբուրգը, «Քար» գրքից բանաստեղծություններ էր կարդալու Օ. Մանդելշտամը: Վերջիններիս բանաստեղծությունների ընթերցանությամբ հանդես էր գալու ուսուցիչ Երասան Ն. Ն. Խողոտովը<sup>50</sup>, որը զգալի ժամանակով ապաստան էր գտել

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 511–513: Նկատենք, որ Պետերբուրգի «Цех поэтов» գրական միավորման օրինակով Ս. Գորոդեցկին [1916–1921 թթ. ապրել ու գործել է Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում. տե՛ս Ա. Չաքարյան. Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում, Երևան, 2010, Ն ու յ ն ի՝ Сергей Городецкий в Западной Армении и в Закавказье (1916–1921 гг.). Ереван. 2015] 1918 թ. Թիֆլիսում հիմնել էր նույն անունով համաքարուխյուն (այդ մասին մանրամասն տե՛ս А. Закарян. Деятельность тифлисского «Цеха поэтов». — ИФЖ, 2011, № 2, с. 113–130; Ն ու յ ն ի՝ Тифлисский «Цех поэтов» Сергея Городецкого и сборник «Акме». Ереван, 2011):

<sup>48</sup> Վ. Գոլովինը գրում է, որ Օ. Մանդելշտամը մասնակցել է «Цех поэтов»-ի երեկոներին (տե՛ս В. Головин. Նշվ. աշխ., էջ 19): Դա բացառվում է, քանզի Թիֆլիսյան «Цех»-ը դեռևս 1919 թ. սկզբներին դադարեցրել էր իր գործունեությունը. նույն թվականի օգոստոսից համանուն գրական միավորում էր գործում Բաքվում (տե՛ս Ա. Չաքարյան. Նշվ. աշխ., էջ 179):

<sup>49</sup> И. Эренбург. Նշվ. աշխ., էջ 516–517:

<sup>50</sup> «Բանաստեղծներ Օ. Մանդելշտամի և Ի. Էրենբուրգի ժամանումը: Ղրիմից Թիֆլիս են եկել բանաստեղծներ Օ. Մանդելշտամը և Ի. Էրենբուրգը: Կիրակի օրը կոնսերվատորիայում կայանալու է նրանց միակ երեկոն: Ծրագիրը. 1) Գր. Ռոբակիձե — Խոսք ժամանակակից ուռևական պոեզիայի մասին, 2) Ի. Էրենբուրգ — զեկուցում՝ «Արվեստը և նոր դարաշրջանը» և բանաստեղծություններ «Կրակ» և «Նոր ար-

Թիֆլիսում և, ըստ էրենբուրգի, այդ օրերին «հավաքվում էր դեպի տուն՝ Պետրոգրադ»<sup>51</sup>:

Գրական այդ երեկոյի վերաբերյալ, սակայն, արձագանքներ չհաջողվեց գտնել<sup>52</sup>, դրա փոխարեն որոնումների շնորհիվ հայտնաբերվեցին Ի. էրենբուրգի ելույթները մամուլում, որոնք, անկասկած, ներկայացնում են գրապատմական հետաքրքրություն<sup>53</sup>:

Հոկտեմբերի վերջին Ի. էրենբուրգի հետ Օ. Մանդելշտամը Թիֆլիսից<sup>54</sup> մեկնել է Մոսկվա, ապա՝ Պետրոգրադ:

Յավոք, մեզ չհաջողվեց տեղեկատվություն գտնել Թիֆլիսահայերի հետ Մանդելշտամի առնչությունների մասին: Իսկ որ դրանք եղել են, կասկածից վեր է. այդ ժամանակ Վրաստանի մայրաքաղաքում ապրում էր հոծ հայուկություն, գործում էին հայ մտավորականությունը միավորող մի շարք միություններ, ակումբներ: Սակայն չմոռանանք, որ հենց այդ օրերին ընթանում էր հայ-թուրքական պատերազմը, ժողովրդի ողջ ուշադրությունը բեռնված էր դրա վրա, հոգսերով ծանրաբեռնված հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանն էլ գտնվում էր Լոռիում:

... Թիֆլիսում անցկացրած օրերն այնքան տպավորիչ են եղել, որ Մանդելշտամը կնոջ հետ կրկին «հայտնվել» է Թիֆլիսում: «Քսանմեկ թվականին Մանդելշտամի հետ Յենտրոֆվալի գնացքով գնում էինք Թիֆլիս ... Դեպի Թիֆլիս էր գնում տաքացվող ապրանքագնացքը՝ լեիլեցուն աշխատավորներով, ուղքեր պետք է առաջիկայում Թուրքիայից եկած հայ գաղթականներին բնակեցնեին և աշխատանքի տեղավորեին: Տաքացվող ապրանքագնացքով գնում էին սովորական աշխատաջան մարդիկ: Նրանց, հուսով եմ, հաջողվեց ինչ-որ բան անել ողբերգական հայերի բազմության համար, – վերհիշում է Ն. Մանդելշտամը: – Մի շաբաթ մենք, չգիտես ինչու, կանգնած մնացինք Կիսլովոդսկում... Խնդաղ կյանքը հանկարծակի ընդհատվեց Բաքվում. գնացքում մի քանի մարդ հիվանդացան խոլերայով: Մեզ տարան պահեստային ուղու վրա, և մենք ապրում էինք անշարժ կանգնած գնացքում,

չալույսներ» գրքերից, 3) Օ. Մանդելշտամ–բանաստեղծություններ «Քար» գրքից և նոր բանաստեղծություններ, 4) Ն. Ն. Խոզոտով – Օ. Մանդելշտամի և Ի. էրենբուրգի բանաստեղծությունները: Երեկոն գրական մեծ հետաքրքրություն է ներկայացնում» [«Слово» (Тифлис), 24. IX. 1920]: Ի դեպ, «Слово» թերթի սեպտեմբերի 26-ի հայտարարության մեջ Ի. էրենբուրգի «Նոր արշալույսներ» գրքի վերնագիրը տպագրվել է «Երկու Արշալույսներ»:

<sup>51</sup> Տե՛ս Մ. Эренбург. Նշվ. աշխ., էջ 512:

<sup>52</sup> Սովորաբար տեղի ունեցած միջոցառումների վերաբերյալ «Слово» թերթի հաջորդ համարում զետեղված է լինում տեղեկատվություն: Այս թերթի հաջորդ համարը լույս է տեսել սեպտեմբերի 28-ին: Հայաստանի ազգային գրադարանում պահվող «Слово»-ի միակ հավաքածուի այդ համարի 2-րդ և 3-րդ էջերը, ցավոք, տպագրական խոտան են՝ սպիտակ էջեր, որտեղ էլ, ըստ ամենայնի, այդ երեկոյի մասին պետք է լիներ համապատասխան տեղեկատվություն:

<sup>53</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Ա. Զաքարյան. Իլյա էրենբուրգի Թիֆլիսյան օրերը, Երևան, 2012 (հայերեն և ռուսերեն):

<sup>54</sup> Թիֆլիսում Օ. Մանդելշտամի անցկացրած օրերի մասին տե՛ս В. Голловин. Նշվ. աշխ., էջ 14–20:

Историко-филологический журнал  
2021 № 2  
Պատմաբանափրական հանդես



ինչպես երկաթուղային բրիգադա, մինչ հիվանդները պառկած էին քաղաքում»<sup>55</sup>: Մանդելշտամներն այցելել են Վյաչ. Իվանովին ու Ս. Գորոդեցկուն, ովքեր այդ տարիներին ապաստանել էին Բաքվում: Ի դեպ, Վյաչ. Իվանովը դժգոհել է, որ իրեն չի հաջողվել Մոսկվա վերադառնալու համար պայմանավորվել «հաղթողների» բոլշևիկների հետ: Նա փորձել է դա անել Մոսխոր-հրդի նախագահ Լև Կամենևի միջոցով, բայց ոչինչ չի ստացվել<sup>56</sup>:

Մանդելշտամները Բաքվից մեկնել են Թիֆլիս, որտեղ էլ ապրել են շուրջ կես տարի: Քաղաք, որի համար չափազանց բնութագրական են «Մթացմինդայի ստորոտում» վիպակում ուսուցող Ռ. Իվնևի արձանագրած հետևյալ տողերը. «Ոչ մի տեղ այնպես չես գտնում կյանքը, ինչպես այստեղ: Քաղաքը ամբողջովին արևային վառ գույների մեջ է: Այդ պատճառով ցավն այստեղ ավելի ցավոտ է, ուրախությունն՝ ուժեղ, իսկ սերը՝ առավել գեղեցիկ ու կրակոտ: Անգամ գորգերն այստեղ թափ են տալիս առանձնակի ուրախությունը: Բանջարեղեն ու միրգ վաճառողները ավելի շատ նման են ... գործ չունեցող կատակախոսների: Նրանք չեն կարող հանգիստ խոսել, նրանք պետք է քլքլան, ծիծաղեն, սրամտեն՝ չինայելով նույնիսկ իրենց սեփական միջոցը ... »<sup>57</sup>:

Թիֆլիսում Օ. Մանդելշտամը մի կարճ ժամանակ մտերմանում է Վրաստանում Խորհրդային Ռուսաստանի դեսպան Բորիս Լեգրանի հետ, ով, ի դեպ, եղել էր Ն. Գոմիլյովի գիմնագիտական ընկերը: Այդ հողի վրա էլ, հավանաբար, Լեգրանը Մանդելշտամին նշանակել է դեսպանատան հաստիքացուցակում իբրև ռեֆերենտ՝ թերթերից քաղվածքներ անելու համար, նաև հատկացրել է սնունդ: Սակայն Ն. Գոմիլյովի գնդակահարությունից հետո<sup>58</sup>, որի

<sup>55</sup> Н. М а н д е л ь ш т а м. Вторая книга: ..., с. 33–34.

<sup>56</sup> Նույն տեղում, էջ 332:

<sup>57</sup> Р. И в н е в. У подножия Мтацминды. Мемуары. Новеллы разных лет. Повесть. М., 1973, с. 158. Ի դեպ, Ռ. Իվնևը Մանդելշտամի մասին գրում է. «Մյուս աջակցությունը (բացի Ս. Եսենինից – Ա. Զ.) ինձ համար եղել է մեզնից առավել ևս «ապաքաղաքականացված» Օսիպ Մանդելշտամի կողմից: Դա ինձ հատկապես ուրախացնում էր այն ժամանակ: Վաղիմիր Գորդինի, Գեորգի Իվանովի և շատ ուրիշների նման նա ինձնից երես չզարձրեց, այլ հանդիպելիս միշտ համակրանքով ժպտում էր՝ լինելով մի քանի գլուխ բարձր քաղքենիական կարծիքներից ու նախապաշարմունքներից» (նույն տեղում, էջ 56): Ռ. Իվնևը Օ. Մանդելշտամի մասին ուշագրավ հուշեր ունի, որտեղ բանաստեղծին համարում է՝ «... հենց ինքը դարաշրջան էր ... » (Р. И в н е в. Образ, временем сожженный. Стихотворения: 1904–1981, с. 154): Նկատենք նաև, որ Իվնևը Մանդելշտամին նվիրել է «Белая ночь» վերնագրով սոնետ:

<sup>58</sup> Օ. Մանդելշտամը շատ ծանր է տարել 1921 թ. օգոստոսի 25-ին տեղի ունեցած Ն. Գոմիլյովի մահապատիժը: Այդ օրերին նրա մահվան առթիվ գրել է «Լվացվեցի, երբ միտան մեջ թառել ... » բանաստեղծությունը, որը տպագրվել է Թիֆլիսում լույս տեսնող «Фигаро» ռուսական թերթում (բանաստեղծության մասին տես Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 355): «... ընկերոջ հիշատակի հանդեպ հավատարմության երդման պես մի բան է անցնում Մանդելշտամի ողջ կյանքի միջով, – նկատել է Ս. Ավերինցևը: – 1928 թվի օգոստոսի 25-ին Ախմատովային (Աննա Ախմատովային՝ Ն. Գոմիլյովի կնոջը – Ա. Զ.) հղած նամակում ասված է. «Տեղյակ եղեք, որ ես ընդունակ եմ երևակայական գրույց վարել միայն

մասին նրանց հայտնել է դեսպանը, Մանդելշտամներն այլևս դեսպանատուն չեն գնացել<sup>59</sup>: Հիշենք, որ խորհրդային պետական, ռազմական գործիչ, դիվանագետ Բ. Լեզրանը 1920 թ. եղել էր Հայաստանի Հանրապետության հետ բանակցություններ վարող ՌՍԽՖՀ-ի առաքելության ղեկավարը, ՌՍԽՖՀ լիազոր ներկայացուցիչը Հայաստանում, ապա նոյեմբերից ՀՍԽՀ-ում, 1921 թ. մարտից՝ միաժամանակ դեսպան Վրաստանում ու Ադրբեջանում: Բացառվում է, որ Հայաստանի, հայ ժողովրդի կյանքում վերջին տարիներին տեղի ունեցած իրադարձությունների մասին Մանդելշտամն ու Լեզրանը զրուցած չլինեն ...

Ինչևէ. Թիֆլիսում Օ. Մանդելշտամն ապրում է Արվեստների տանը: Բանաստեղծի համար Թիֆլիսյան օրերը եղել են ստեղծագործական բեղմնավոր շրջաններից մեկը. ակտիվորեն տպագրվում է տեղական թերթերում, ելույթներ է ունենում ամենաբազմազան բանավեճերում ու երեկոներում, դասավանդում է Ն. Խոզոտովի Թատերական ստուդիայում և նույնիսկ անդամագրվում է Վրաստանի ռուս գրողների միությունն ու ստանում դրամական նպաստ: Զբաղվում է թարգմանչական գործունեությամբ. լուսավորության կոմիտեի Կանդելակին «Թարգմանությունների համար (Մանդելշտամին – Ա. Զ.) դուրս էր գրում չնչին նպաստ»: Թարգմանում է Վաժա Փչավելայի «Гоголь и Апшина» գործը, որը նույն օրերին թարգմանել է նաև Թիֆլիսում բնակվող բանաստեղծ-գեներալ Ալեքսանդր Կուլեբյակինը<sup>60</sup>: Ի դեպ, կազմակերպվել է այս երկու թարգմանությունների ընթերցում, ապա քննարկում: Օ. Մանդելշտամի այդ գործի թարգմանությունից հատվածներ են տպագրվել «Фигаро» թերթում և «Пламя» ամսագրում: Ռուս բանաստեղծը թարգմանել է նաև «Երկնագույն եղջյուրներ» գրական միավորման անդամներ Տ. Տաբիձեի, Ն. Միցիշվիլիի, Գ. Լեոնիձեի, Վ. Գափրինդաշվիլու գործերից, որոնք լույս են տեսել 1921 թ. վերջին Թիֆլիսում հրատարակված «Վրաստանի բանաստեղծները» վերնագրով ռուսերեն առաջին անթողոգիայում: Սակայն դա չի խանգարել, որ Մանդելշտամը «ցասումնալից բանավիճի» ու քննադատի խմբակցությանը (նույնիսկ մամուլով)՝ սիմվոլիզմ դավանելու համար<sup>61</sup>:

Հավելենք, որ Օ. Մանդելշտամը Թիֆլիսում շփվել է նաև հայ գրական շրջանակների հետ, որի վկայությունը հետևյալ խոսույն իրողությունն է. Վրաստանից մեկնելուց հետո՝ 1922 թ., Թիֆլիսում տպագրվում է հայտնի հայ ֆուտուրիստ Կարա-Դարվիշի (Հակոբ Գենջյան)՝ Գր. Ռոբակիձեին նվիրված «Պար լեռների վրա» վերնագրով բանաստեղծության Մանդելշտամի թարգմանությունը՝ «Пляска на горах (Ночной хоровод)»<sup>62</sup>: Անվանի գրակա-

երկու մարդու՝ Նիկոլայ Ստեպանովիչի և Ջեզ հետ: Կոլյայի հետ զրույցս չի ընդհատվել և երբեք չի ընդհատվի» (Ս. Ա. վ ե ռ ի ն ց և. ն շ վ. հոդվ., էջ 30):

<sup>59</sup> Н. М а н д е л ь ш т а м. Вторая книга: ..., с. 62–63.

<sup>60</sup> Ա. Կուլեբյակինի մասին մանրամասն տե՛ս А. Закарян. Александр Кулебякин и Армения. Ереван, 2003.

<sup>61</sup> Բաբվում և Թիֆլիսում Մանդելշտամի անցկացրած օրերի մասին տե՛ս В. Головин. Նշվ. աշխ., էջ 23–34:

<sup>62</sup> Բանաստեղծության թարգմանությունը տպագրված փոստաքարտի վրա՝ «Тифлис, 1922 г.» նշումով և Կարա-Դարվիշի լուսանկարով, տե՛ս Հայաստանի

նագետ Ալեքսանդր Պարնիսը պնդում է. «Այդ գործի թարգմանություն վրա աշխատանքը մինչև ազգային մշակույթի հետ ահտիվ շփումը՝ հենց դարձավ հայկական թեմայի սկզբնավորումը, որը բանաստեղծի հասուն շրջանում հանդիսացավ նրա ստեղծագործության կարևոր փուլը»<sup>63</sup>:

Մանդելշտամները 1922 թ. նոր տարին դիմավորում են Սուխում ուղևոր-վող «Դմիտրի» անունով շոգենավի վրա, իսկ մարտին արդեն Մոսկվայում էին:

### Օ. Մանդելշտամը Հայաստանում

«Ինչպես մեր կյանքում ամեն լավ բանը, այնպես էլ Հայաստանի ուղևորությունը կազմակերպել է Բուխարինը, – վերհիշում է Ն. Մանդելշտամը: – Առաջին անգամ նա փորձեց մեզ Հայաստան ուղարկել դեռևս քսանական թվականների վերջին: Այն ժամանակ լուսավորության ժողկոմը (նաև՝ ժողկոմխորհի նախագահի տեղակալը – Ա. Զ.) Մոսկվային էր: Նա Օ. Մանդելշտամին հրավիրեց Երևանի համալսարանում դասախոսություն կարդալու: Առաջին ուղևորությունը խափանվեց Մոսկվայի հանկարծամահ լինելով»<sup>64</sup>: Իսկ ահա թե ինչ է գրել այդ մասին Օ. Մանդելշտամը «Չորրորդ արձակ»-ի 7-րդ գլխում. «Մի հովանավոր ունեի՝ ժողկոմ Մոսկվայան – Մուսավյանը (բառախաղ муравей բառից. ծան.՝ թարգմ.), հուդայական երկրի կրտսեր քրոջ՝ հայոց երկրի մրջնային մի ժողկոմ: // Նա ինձ հեռագիր ուղարկեց: // Մեռավ իմ հովանավոր ժողկոմ Մոսկվայան-Մուսավյանը: ... // Նա այլևս Մոսկվա չի գա միջազգային վագոնով միամիտ ու հետաքրքրասեր ... Մոտս նամակ կար՝ ժողկոմ Մոսկվային հղված: Ես այն տարա Մոսկվայի ամենամաքուր դեպքանական փողոցի վրա գտնվող հայկական առանձնատան (խոսքը Հայկ. ՍՍՀ ներկայացուցչության մասին է – Ա. Զ.) քարտուղարներին: // Քիչ էր մնում էրիվան գնալի ... Լուսժողկոմի գործուղմամբ՝ կորգուլիս ու ամաչկոտ ջահելներին խեղճուկրակ Վանք-համալսարանում սարսափելի դասընթացներ կարդալու: // Եթե գնալի էրիվան, երեք օր ու գիշեր կհաճախեի կայարանների մեծ բուֆետները և կարմիր խավիարով կարագահաց կուտեի: ... // Ճանապարհին կկարդայի Զոչչենկոյի լավագույն գիրքը (ենթադրվում է՝ «Մ՛ւս վրա եք ծիծաղում» պատմվածքների ժողովածուն, 1928 թ. – Ա. Զ.) և կհրճվեի հարյուր ուլբլի շվիպցրած թավթարի պես: ... // Հետո արիություն կվերցնեի մոխրաջուր բուրոց սպիտակեղենի հետ՝ ծղոտե դեղին զամբյուղում, իսկ մուշտակ կախված կլինեի ոսկեջրած մեխին: Եվ էրիվանի կայարանում գնացքից դուրս կգայի՝

Հանրապետության գրականության և արվեստի թանգարան, Հուլային բաժին, Կարա-Դարվիչի Փոնդ, արխիվ 597:

<sup>63</sup> В. Головин. Նշվ. աշխ., էջ 34:

<sup>64</sup> Н. Я. Мандельштам. Воспоминания, с. 241. Արդարություն դեմ չմեղանչելու համար՝ նշենք. Ն. Բուխարինը գտավ «հաղորդափոկ»՝ նրա խնդրանքով Վ. Մոլոտովը հանձնարարում է Համկ(բ)Կ Կենտկոմի նախագահության անդամ Ս. Գուսևին, որպեսզի նա կազմակերպի Մանդելշտամի ու նրա կնոջ ուղևորությունը Սուխում, ապա Հայաստան, նաև հետևի նրանց տեղավորմանը, որտեղ էլ նրանք լինեն: Ս. Գուսևը նախապես զանգահարել է տեղական Կենտկոմի քարտուղարներին՝ վերջիններիս խնդրելով ամեն ինչում աջակցել Մանդելշտամներին (նույն տեղում, էջ 168, նաև՝ Н. Мандельштам. Вторая книга: ..., с. 430):

մի ձեռքիս ձմեռային մուշտակ, մյուսին՝ ծերունական ձեռնափայտս՝ ցուպն իմ հրեական»<sup>65</sup>:

1929 թ. հունիսի 14-ին «Պրավդա» թերթի գլխավոր խմբագիր Ն. Բուխարինը հետևյալ նամակն է գրել ՀՍՍՀ ժողովուրդների նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանին: «Թանկագին ընկ. Տեր-Գաբրիելյան, մեր խոշոր բանաստեղծներից մեկը՝ Օ. Մանդելշտամը, ցանկություն ունի Հայաստանում մշակութային բնույթի աշխատանք ստանալու (օր: հայկական արվեստի, մասնավորապես գրականության պատմության հետ կապված կամ նման մի բան), – հայտնել է նամակագիրն ու ավելացրել. – Նա շատ կրթված մարդ է և կարող էր ձեզ մեծ օգուտ բերել: Նրան պետք է միայն հանգիստ թողնել մի որոշ ժամանակ և աշխատելու հնարավորություն տալ: Կարող է գործ գրել Հայաստանի մասին: Պատրաստ է սովորել հայոց լեզուն և այլն: Խնդրում եմ, պատասխանեք հեռագրով ձեր ներկայացուցչություն: Ձեր Բուխարին»<sup>66</sup>:

Հայաստան գալու Օ. Մանդելշտամի ցանկությունն ամենևին պատահական չէր. իրավացիորեն նկատվել է՝ դրան մեծապես նպաստել են նրա ծանոթությունը՝ 1829 թ. Հայաստան կատարած Պուշկինի ճանապարհորդությանը, 1916 թ. հունվարին Վ. Բրյուսովի ուղևորությանը, 1928 թ. ամռանն ու 1929 թ. գարնանն Ա. Բեկիի այցելությանն ու այդ ամենի հանրագումարում Հայաստանի, հայ ժողովրդի, նրա պատմության և մշակույթի մասին նրանց գրած հայտնի գործերին: Դրան ավելացնենք և այն, որ, ինչպես վերը նշվեց, 1920-ական թվականների սկզբին Մանդելշտամն եղել էր Անդրկովկասի հայաշատ քաղաքներում՝ Թիֆլիսում, Բաքվում, ծանոթ էր հայ իրականությանը, թարգմանել էր Կարա-Դարվիշի վերը նշված գործը, Մոսկվայում չփվել էր Պետհրատի խորհրդի նախագահ Ա. Խալաթովի, նաև Ռուսաստանի հասարակական-քաղաքական և մտավորական միջավայրերում մեծ հեղինակություն վայելող գրող Մ. Շահինյանի հետ, ում մասին 1922 թ. գրած «Մուշտակ» («Шубка») ակնարկում կա «զվարճալի» պարբերություն, և ով 1920-ական թվականների կեսերին եղել էր Հայաստանում, Նախիջևանում ու Լեռնային Ղարաբաղում և, ըստ այդմ, քաջ գիտեր մեր ժողովրդի անցյալն ու ներկան:

Ինչևէ. հայերեն սովորելու ցանկությունը շատ մեծ էր, և Օ. Մանդելշտամը գնում է Մոսկվայի Արևելքի ժողովուրդների ինստիտուտ (նախկին Լազարյան ճեմարան): Այդ մասին բանաստեղծը գրում է. «Ինձ ընդառաջ եկավ տխրամած երիտասարդ մի հայ: Խոցոտող տառատեսակներով հաբեթական գրքերի միջավայրում գոյատևում էր նաև, ինչպես ռուսական կաղամբաթիթեռը կակտուսների գրադարանում, շեկլիկ մի աղջնակ:

Իմ սիրողական գալուստը ոչ մեկին չուրախացրեց: Հին հայերենն ուսումնասիրելու հարցում օգնության խնդրանքս չչարժեց այս մարդկանց սիրտը, որոնցից կինարմատը նաև չէր տիրապետում գիտելիքի բանալուն:

Ի հետևանս անճիշտ – սուբյեկտիվ կողմնորոշման՝ ես վարժվել էի ամեն հայի մեջ բանասեր տեսնել ... Թեև ինչ-որ չափով դա ճիշտ է: Ահա մարդիկ,

<sup>65</sup> Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 238: Հմմտ. «Радуга» (Таллин), 1988, № 3, с. 23.

<sup>66</sup> Г. И. Кубатьян. Место армянской темы в творчестве О. Мандельштама (Уроки Армении). – «Вестник Ереванского университета», 1989, № 2, с. 11. Հմմտ.: Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 372: Ի դեպ, նկատենք, որ Ն. Բուխարինն այդ թվականին չի եղել «Известия» թերթի գլխավոր խմբագիրը:

ովքեր լեզվի բանալիները գնդգնդացնում են անգամ այնժամ, երբ ոչ մի գանձատուփ չեն բացում: ... Տրվեցին պատվարժան հայ գրողների անուններ, հիշատակվեց ակադեմիկոս Մառը ...»<sup>67</sup>:

Հենց գրադարանում էլ Մանդելշտամը հանդիպում է սովետական պետական ու կուսակցական գործիչ, պատմաբան Աշոտ Հովհաննիսյանին, ով 1928 թ. բնակվում էր Մոսկվայում: Մեծբերենք վերջինիս վերաբերող բանաստեղծի կոլորիտային ու բնութագրիչ տողերը. «... գրադարան մտավ տարեց մի մարդ՝ բռնակալի շարժուձևով ու վեհապանձ կեցվածքով: // Նրա պրոմեթևայան գլուխը մոխրակապույտ-ծխագույն լույս էր ճառագում, որպես կվարցի գորեղ մի լամպ ... Կարծր մազերի կապտասև, հարած-խիզախորեն սարդած խոպոպները կախարդված թռչնափետուրների սնկոտիկային գորությանը մերձ ինչ-որ բան էին հիշեցնում: // Գրբացի լայն բերանը չէր ժպտում՝ վճռաբար հիշեցնելով, թե բառը – աշխատանք է: Ընկեր Հովհաննիսյանի գլուխը տիրապետում էր գրուցակցից հեռանալու ընդունակությունը, ինչպես լեռնագագաթ, որը պատահաբար գլխի կերպաձևն ունի: Բայց նրա աչքերի կապտա-կվարցային խոժոռությունն արժանի էր ժպտի: // Այդպիսին են իլյուսթրյունն ու երախտամոռությունը, որ տիտաններն են մեզ կտակել ...»<sup>68</sup>:

... Երևանից հրավերքի փաստաթղթերին սպասելիս՝ 1930 թ. ապրիլի սկզբին Մանդելշտամները լինում են Սուխումում «Կենտկոմի թղթով», հանգստանալու կառավարական ամառանոցում՝ «Օրջոնիկիձեի անվան հանգստյան տանը»: Այդ օրերին Սուխումում բազմաթիվ անվանի մարդիկ են եղել, ում հետ Օ. Մանդելշտամը հանդիպել է<sup>69</sup>: Այսպես, լինելով աբխազ բանաստեղծ ու գիտնական, աբխազական լեզվի ու գրականության ակադեմիայի նախագահ Դմիտրի Գուլիայի հյուրը՝ Մանդելշտամը գրում է. «Նա բողբոս էր աբխազական այբուբեն հորինելու հետ կապված բարդությունից, հարգանքով էր խոսում պետերբուրգյան խեղկատակ Եվրեինովի մասին (նկատի ունի ռեժիսոր և թատրոնի տեսաբան Ն. Ն. Եվրեինովին – Ա. Զ.), որն Աբխազիայում հափշտակված էր այծի պաշտամունքով, և գանգատվում էր լուրջ գիտական հետազոտությունների անմատչելիությունից՝ Թիֆլիսից հեռու գտնվելու բերմամբ»<sup>70</sup>: Սուխումից Մանդելշտամներն ուղևորվում են Նոր Աֆոն, Գուդաուտա, Տկվարչեյի, ապա մեկնում են Թիֆլիս:

Գալով Հայաստան՝ Օ. Մանդելշտամը նախ Լենինականում մասնակցում է մայիսյան տոնակատարություններին, ապա ժամանում է Երևան<sup>71</sup>: «Մեր

<sup>67</sup> Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 249–250:

<sup>68</sup> Նույն տեղում, էջ 250:

<sup>69</sup> Н. Я. Манделъштам. Воспоминания, с. 310, 423. Այդ օրերին Սուխումում հանգստացել են ԽՍՀՄ ապագա ներքին գործերի ժողկոմ Ն. Եժովը, ում հետ բանաստեղծը թեմիս է խաղացել, Աբխազիայի ժողկոմխորհի ղեկավար Ն. Լակոբան, «պրոլետարական բանաստեղծ» Ա. Բեգիմենսկին, ազգագրագետ, աբխազական ժողովրդական երգեր հավաքող Մ. Կովաչը, Թիֆլիսի ազգային թանգարանի տնօրեն Անատոլի Կ.-ն և հայտնի այլ դեմքեր:

<sup>70</sup> Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 261:

<sup>71</sup> «Օսիպ Մանդելշտամի (ստեղծագործության – Ա. Զ.) ամերիկյան հրատարակության խմբագիրը՝ <Բ.> Ֆիլիպովը, բոլոր խմբագիրներին հատուկ խորաթափանցությունը, որոշել է, որ Օսիպ Մանդելշտամն Հայաստան է փախել հնգամյակների կառուցումից ... Դա քաղաքական էժանագին սպեկուլյացիա է, – նկատել է Ն.

Հյուրանոցի («Երևան» – Ա. Զ.) փոքրիկ սենյակում միանգամից հայտնվեցին Հայաստանի մշակույթի մասին գրքեր. Ստրժիգովսկի (խոսքը, ըստ էության, վերջինիս «Հայերի ճարտարապետությունը և եվրոպան» գործի մասին է – Ա. Զ.), հայ տարեգիրներ, Մովսես Խորենացի և շատ ուրիշներ, ինչ վերաբերում էր այդ երկրի տնտեսությանն ու բնությանը, – գրում է Ն. Մանդելշտամը: – Հայաստանի տնտեսության մասին գրքերից Օ. Մանդելշտամն առանձնացրեց այլաբանողական ժամանակի չինովնիկ Շոպենի «Հայաստանի աշխատանքային նկարագրությունը» գիրքը<sup>72</sup>: Նա համեմատում էր երկրի հանդեպ Շոպենի կենդանի հետաքրքրությունը զայրացած և փնթփնթացող անթիվ «գործուղվածներին» անտարբերության հետ, որոնց հանդիպում էինք Հյուրանոցում»<sup>73</sup>: Առաջին իսկ օրը նրանց մոտ՝ «Երևան» Հյուրանոցի նախասրահ է գալիս «հրաշք նկարիչ» Մարտիրոս Սարյանը: Երևանում եղած ժամանակ Մանդելշտամներն այցելում են նրա արհեստանոցը՝ հիանում գեղանկարչի «երկնագույն չրջանի» նկարներով: Հանդիպել են Ա. Թամանյանին ու երիտասարդ ճարտարապետներին, լսել նրանց քննարկումները: Մանդելշտամը հաճախել է Հայաստանի պետական գրադարան, օգտվել նրա ֆոնդերից, ծանոթացել ու շփվել է տնօրենի՝ բանասեր, թարգմանիչ ու թատերական գործիչ Մամիկոն Գևորգյանի հետ, ով «պերճախոս է, խելամիտ ու սիրալիր, բայց նրա էրուզիցիան չափազանց համառ է ու աղմկալից, իսկ խոսքը՝ յուզոտ ու փաստաբանական»<sup>74</sup>: Հետաքրքիր է, որ Մ. Գևորգյանը Մանդելշտամի համար պարսկերեն երգել է մի քանի հատված Ֆիրդուսուց: Բանաստեղծը Երևանում նաև լսել է միաձայն երգչախմբի կոմիտասյան կատարումները:

Երևանում Մանդելշտամը ծանոթանում ու մտերմանում է կենսաբան Բ. Կուզինի հետ, ում Մոսկվայի համալսարանը Հայաստան էր գործուղել կարմրորդ միջատի հետազոտության համար, միջատ, որից ստանում են «հրաշալի բուսորագույն ներկ»՝ որդան կարմիր: Վերջինս ապրում էր Սպանդարյան 92-

Մանդելշտամը: – Ծայրամասերում չինարարությունն արտահայտվում էր անհամեմատ ուժեղ, քան կենտրոնում, և Օսիպ Մանդելշտամն ամեն դեպքում զրա դեմ ոչինչ չէր կարող ունենալ: Ինչի՞ց զրոգված նա պետք է զայրանար տնտեսության պլանային կազմակերպումից: Մի՞թե բանը զրանում է:

Օսիպ Մանդելշտամի ըմբռնումով Ղրիմը, Վրաստանը և Հայաստանը միայն Սևծովյան էին, զրա միջոցով էր հաղորդակցվելու Միջերկրածովյան համաշխարհային մշակույթին» (Н. Я. Мандельштам. Воспоминания, с. 241–242):

<sup>72</sup> Յրանսիացի ազգագրագետ, պատմաբան Ի. Ի. Շոպենը 1825 թ. ապրում էր Ռուսաստանում, եղել է Հայկական մարզի եկամուտների ու պետական տուրքի վարչության պետը: Կատարել է վիճակագրական հետազոտություններ: Նրա «Պատմական հուշարձան Հայկական մարզի կացության մասին՝ այն Ռուսական կայսրությանը միացնելու ժամանակաշրջանում» (1852, ռուս.) աշխատությունը 1840-ին (ձեռագիր) արժանացել է ՌԳԱ Դեմիդովյան մրցանակի: Ի դեպ, Օ. Մանդելշտամը գրել է. «Ինձ Հայաստան ոչ ոք չի ուղարկել, ինչպես, ասենք, իշխան Պասկևիչը գրիբոեդովյան գերմանացի և ամենալուսավորված չինովնիկներից Շոպենին ... » [О. Мандельштам. Записные книжки. Заметки. – «Вопросы литературы» (М.,) 1968, № 4, с. 182]:

<sup>73</sup> Н. Я. Мандельштам. Воспоминания, с. 220.

<sup>74</sup> Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 269:

ու՛մ՝ «անչափ սիրալիր մարդկանց»՝ Տեր-Օհանյանների տանը: «Ես ձեզ մոտ էի վագում «Սպանդարյանով»՝ կլլելով շինարարական կակձացնող փոշին, որով հոչակված է երիտասարդ էրիվանը, – գրել է Օ. Մանդելշտամը: – Բացի այդ՝ ինձ համար սիրելի էին մինչև կնճիռները վերանորոգվող Արարատյան դաշտավայրի անողորկությունները, խորդուբորդներն ու հանդիսավորությունները, քաղաքը, որը կարծես ամբողջովին ներառված էր Աստծուց ներշնչված ջրմուղագործների ջանացման մեջ, և հիմնավոր բերաններով ու հենց գանգի մեջ շաղափված աչքերով մարդիկ՝ հայերը»<sup>75</sup>:

Ինչպես նկատվել է, «Հայոց հինավուրց մշակույթի հետ հանդիպումը նրա համար դառնում է ձևավորող կենսական տպավորություններից մեկը: Հայաստանում սկզբնավորվում է նրա մտերմությունը մի խորունկ, շիտակ, կոմֆորմիզմին բացարձակապես անընդունակ մարդու՝ Բ. Կուզինի հետ: Այդ մասին ասվելու է. «Երբ նինջ էի մտել անկերտվածք ու անկերպարանք, // Բարեկամությունը, քանց կրակոց, ինձ արթնացրեց»: Եվ հրաշք է տեղի ունենում: «Անկերտվածք ու անկերպարանք նինջն» ավարտվում է: Բանաստեղծություններ են հորդում վերատին»<sup>76</sup>:

Այդ օրերին Երևանում էր գտնվում ուսու խորհրդային գրականության ամենաաչքի ընկնող դեմքերից Մ. Շահինյանը: Մանդելշտամները հանդիպում են նրան, որի վկայությունը բանաստեղծի 1933 թ. ապրիլի 5-ին գրած նամակն է Շահինյանին՝ Բ. Կուզինին բանտարկությունից ազատելու խնդրանքով (ձերբակալել էին ապրիլի 4-ին): Ահա այդ նամակից հարցին վերաբերող հատվածը. «Սիրելի Մարիետա Սերգեևնա! ... Հիշում եք, Երևանում ... Ձեզ հետ մեր թուուցիկ հանդիպումների թեման ... Նրա (Բ. Կուզինի – Ա. Չ.) անձնականությամբ է համակված և իմ բոլորովին նոր արձակը ու իմ աշխատանքի վերջին ամբողջ շրջանը: Նրան և միայն նրան եմ պարտական, որ գրականություն է մտցրել, այսպես կոչված, «հասուն Մանդելշտամի» չրջանը: ... Ինձնից խլել են իմ գրուցակցին, իմ երկրորդ ես-ին, մարդու, ում ես կարողացա և ժամանակ ունեի համոզել, որ հեղափոխության մեջ կա և ինտելեկտ, և վիտալիստական խելահեղություն, և կենդանի բնության պերճանք: ... Մարիետա Սերգեևնա! Ես ուզում եմ, որ դուք հավատաք, որ ես թշնամի չեմ այն ձեռքերին, որոնք բռնել են Բորիս Սերգեևիչին (Բ. Կուզինին – Ա. Չ.), քանի որ այդ ձեռքերն անում են և խիստ, և կենդանի գործ:

Բայց Բորիս Սերգեևիչը գիտակ չէ և այդ պատճառով էլ ինքնին արտաքին ազատությունը, եթե մեր իշխանությունը հնարավոր կհամարի դա նրան վերադարձնել՝ կլինի միայն փոքրիկ հավելյալ այն մեծ ներքին ազատության, որն արդեն նրան տվել է մեր դարաշրջանը և մեր պետությունը:

Ձեր Օ. Մանդելշտամ:

<sup>75</sup> Նույն տեղում, էջ 256:

<sup>76</sup> Նույն տեղում, էջ 36: Բ. Կուզինի հետ Օ. Մանդելշտամի ծանոթության, ապա մտերմության մասին մանրամասն տե՛ս Օ. Յ. Мандельштам и Б. С. Кузин. Материалы из архива. – «Вопросы истории естествознания и техники» (М.), 1987, № 3, с. 127–144. Օ. Մանդելշտամը Բ. Կուզինին նվիրել է «К немецкой речи» վերնագրով բանաստեղծությունը, որը գրել է 1932 թ. օգոստոսին:

Կներեք, որ իմ ձեռքով չեմ գրել. չեմ կարողանում, թելադրել եմ կնոջս»<sup>77</sup>: Հավելենք՝ Օ. Մանդելշտամը չէր սխալվել Մ. Շահինյանին դիմելով. մի քանի օրից Բ. Կուզինին ազատ են արձակում:

Ի դեպ, անչափ խորհրդանշական է, որ կյանքի դժվարին օրերին՝ 1933 թ. դեկտեմբերի 1-ին, Նդիշե Չարենցը, որի նկատմամբ ևս սկսվել էին քաղաքական մեղադրանքներն ու հալածանքները, նենգ հողվածներ էին տպագրվում, նամակ-խնդրագրով դիմել է Մ. Շահինյանին<sup>78</sup>:

... Մանդելշտամները մեկ ամիս հանգստանում են Սևանում՝ Հայաստանում արհմիությունների առաջին հանգստյան տանը: «Քանի որ նա (Օ. Մանդելշտամը – Ա. Չ.) շատ ծանր էր տանում երևանյան շոգը և տոթը, նրան առաջարկել են հանգստանալ Սևանի կղզում, և այդպես Մանդելշտամները հայտնվեցին այդ հանգստյան տանը, – վերհիշում է Անահիտ Խուրավերդյանը: – Մանդելշտամ ամուսինները երեխաներ չունեին, բայց շատ էին սիրում և փափագում էին երեխաներ ունենալ: Բանաստեղծի կինը երագում էր տղայի մասին <...> Երբ Օսիպ Մանդելշտամը նստում էր սեղանի մոտ աշխատելու, նա ոտքերի ծայրերի վրա զգուշորեն դուրս էր գալիս, իր հետևից փակելով դուռը, դեպի իրեն էր գրավում լուսամուտի տակ խաղացող երեխաներին, նրանց հեռու էր տանում, որպեսզի չխանգարեին քեռիին բանաստեղծություններ գրել»<sup>79</sup>:

Սևանում Մանդելշտամները չփվում և մտերմանում են ազգագրագետ, պատմաբան ու հնէաբան Ասատուր Խնաչատրյանի, Հայաստանի Կենտրոն-կոմի նախագահ, պետական և կուսակցական գործիչ, պատմաբան ու գրականագետ Արտաշես Կարինյանի, գավառագետ Հովհաննես Սաղաթեյանի, քիմիկոս Ստեփան Համբարյանի, դոկտոր Հերցբերգի, ձկնաբան ու միջատաբան Լ. Առնոլդի հետ՝ «Ճանապարհորդություն Հայաստան»-ում յուրաքանչյուրի մասին տալով կենսագրական տեղեկություններ և ինքնատիպ բնութագրություններ<sup>80</sup>: Ահա թե ինչ է գրում Ն. Մանդելշտամը հայ գիտնականների մասին. «Նգիպտագետների ու դրամագետների հայ գիտնականների հետ հանդիպեցինք Սևանում: Նրանք երկրագնդի բոլոր կողմերից եկել էին իրենց հայրենիքը: Նրանք դուրս եկան իսկական եվրոպացիներ և շատ ավելի էին նման գիտնականների, քան նրանք, որոնց հանդիպել ենք Մոսկվայում, մեծ մասամբ

<sup>77</sup> Օ. Э. Манделштам и Б. С. Кузин. Материалы из архива, с. 131–132. Այս առնչությամբ Ա. Արամատովայի հետ Մանդելշտամի մասին խոսելիս Լ. Գինգբուրգը հարցնում է. «– Այդ ինչ է, նրա ձեռքը ամենեկին չի գործում: // – Ոչ: Բայց նա թելադրում է, և, ընդհանրապես, դա կարևոր է. նա ողջ կյանքում եղել է այդպես անօգնական, որ միևնույն է ձեռքերով ոչինչ չի կարողացել անել» (Л. Я. Гинзбург. О старом и новом. Статьи и очерки. Л., 1982, с. 416): «Ես ձեռագրեր չունեմ, չունեմ նոթատետրեր, չունեմ արխիվ: Ձեռագիր ունեպես չունեմ, որովհետև երբեք չեմ գրում, – խոստովանել է Մանդելշտամը: – Ես միակն եմ Ռուսաստանում, որ գրում է շուրթերով ... » (Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 237):

<sup>78</sup> Մանրամասն տե՛ս Ա. Չարենց. Ե. Չարենցի անտիպ նամակը Մ. Շահինյանին. – ՊԲՀ, 1987, № 2, էջ 226–230:

<sup>79</sup> Օ. Лекманов. Նշվ. աշխ., էջ 141:

<sup>80</sup> Տե՛ս Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 246–249:



Ցեկուբուի հանրակացարաններում ու առողջարաններում: ... Հայ ալևոր գիտնականները տիրապետում էին ոչ միայն տարածական, այլև ժամանակային, այսինքն՝ պատմական տեսողությանը. նրանք կարողանում էին հայացքով թափանցել ժամանակի խորքը: Աշխարհում արդեն մոռացվել են բոլոր գույները, բայց դրանք դեռևս չեն մեռել հայոց պատմական հողի վրա՝ հպարտ իրենց ծեր գիտնականներով»<sup>81</sup>:

Հայաստանում գտնվելու օրերին Մանդելշտամներն ականջալուր են լինում Արարատ լեռան շրջանում քրդերի ապստամբության և թուրքերի դաժան գործողությունների մասին<sup>82</sup>: Ն. Մանդելշտամը գրում է. «Քրդերը դարի առաջին քառորդին կոտորել են հայերին, իսկ երկրորդ քառորդին իրենք կոտորվեցին այն տիրոջ կողմից, ով նրանց սպանության էր ուղարկել»<sup>83</sup>: Սա խոստեն վկայություն է, որ Օ. Մանդելշտամը քաջատեղյակ էր թուրքերի իրագործած Հայոց ցեղասպանությանը: Իսկ «Հաֆըզի վարդն ես օրորում...» բանաստեղծության մեջ «Հեռու ես ողջդ՝ ետևում սարի»-ն տողը խոսում է այն մասին, որ բանաստեղծը գիտի, թե ովքեր են Արարատ սարի ետևում գտնվող տարածքների իսկական տերերը ...

1930 թ. մայիսից մինչև հոկտեմբերի սկիզբը Մանդելշտամներն ապրում և շրջում են Հայաստանում ցուցաբերելով մեծ հետաքրքրություն Հայաստանի ու հայ մշակույթի հանդեպ. այցելում են պատմաճարտարապետական հուշարձաններ, լինում են Զվարթնոցի ավերակներում («Մի փլատակներ. ոչ ... » տողով սկսվող բանաստեղծության մեջ նկարագրվում է Զվարթնոցը), Աշտարակում, Բյուրական գյուղում, բարձրանում Արագածի դարատափերը՝ հայկական ու քրդական քոչաստեղերը ... Փորձում է սովորել գրաբար<sup>84</sup>, որոշում գրել «Արչակ և Շապուհ» թեմայով գործ: Դրա առհավատչյան է «Ճանապարհորդություն Հայաստան» արձակ գործի «Ալագյազ» բաժնի վերջում պատմիչ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» ազատ վերաշարադրումը՝ Արչակի, Շապուհի, Անհուշ բերդի, Դրաստամատի անունների վկայակոչումներով:

<sup>81</sup> Н. Мандельштам. Вторая книга: ..., с. 441–442.

<sup>82</sup> Այդ իրադարձությունների մասին մանրամասն տե՛ս Ա. Ս ա յ ի յ ա ն. Արարատի 1926–1930 թթ. ապստամբությունը թուրք-քրդական և հայ-քրդական հարաբերությունների ու տարածաշրջանային զարգացումների համաձիգում, Երևան, 2017:

<sup>83</sup> Н. Мандельштам. Вторая книга: ..., с. 447.

<sup>84</sup> «Հայերենի առաջին դասն ինձ տվել է Մարգո Վ. անունով մի աղջիկ: Նրա հայրը նշանավոր սփյուռքահայ էր < ... > և, կարծես, խորհրդային շինարարությանը համակրող հյուպատոս էր՝ ազգային տեսակետ դավանող բուրժուական շրջանակներից < ... > Ինչևէ, ես ոչինչ չսովորեցի < ... > Բավական չէ, որ նա գուրկ էր մանկավարժական նվազագույն ընդունակություններից, Մարգոն կտրականապես պատկերացում չուներ մայրենի լեզվի խորհրդավորության և սրբազան գեղեցկության մասին» (Օ. Мандельштам. Записные книжки. Заметки, с. 183): Նկատենք նաև, որ Սևանում ուսուցչուհի Ա. Խ-ն հանձն է առնում Օ. Մանդելշտամին հայերեն սովորեցնել: Ըստ Օ. Մանդելշտամի, Ա-ին ոգեշնչում էին «Ատելությունը սպիտակգլարդիականների, արհամարհանքը դաշնակների հանդեպ և մաքուր սովետական ցատումը» (նույն տեղում, էջ 182):

Երևանում Օ. Մանդելշտամի գտնվելու օրերի մասին կա ուշագրավ մի դրվագ՝ կապված Ավանի Հովհան Բագարացի (Կաթողիկե տաճար) ավերակ եկեղեցի կատարած այցելության հետ: Քաղաքի «Царская улица»-ի (ներկայիս Արամի փողոց) բնակիչ հին երևանցիները հիշում են. օրերից մի օր հանկարծ նկատում են, որ երեք օր է, ինչ Մանդելշտամը չի երևում ոչ հյուրանոցում, ոչ էլ Սպանդարյան փողոցում (որտեղ հաճախ էր լինում Բ. Գուգինի հետ հանդիպելու համար): Պարզվում է, որ նա եղել է Ավանում, զննել է մատուռը, քարակոթողները, խաչքարերն ու ապրել եկեղեցում: «Ինչպես ինքն է ասել, “գրուցել է հեթանոսական վիշապի հետ, որը մայր տաճարի ելքի վերևում է, և առյուծի հետ, որը փոքրիկ բակում է: Հեթանոսություն և քրիստոնեություն ամենահավակապ պինթեզ”»: Մանդելշտամն Ավանի տաճարն անվանակոչեց “կողոպտված հեթանոսական փոքրիկ կրպակ” և չէր դադարում զարմանալ շինարարի ճարտարապետական մտահղացումով»<sup>85</sup>: Նկատենք, որ պահպանվել է այդ իրադարձությունն արձանագրած խմբակային մի լուսանկար, որտեղ Մանդելշտամներից բացի Մ.



Չախից աղ. Յա. Ս. Խաչատրյանց, Ն. Յա. Մանդելշտամ, Օ. է. Մանդելշտամ և մի խումբ երեխաներ: Երևան, Ավան, 1930 թ.:

Շահինյանի ամուսինն է՝ բանասեր, թարգմանիչ Յա. Խաչատրյանցը և մի խումբ երեխաներ: Ի դեպ, այդ լուսանկարը միակ վավերագիրն է Հայաստանում Մանդելշտամների գտնվելու մասին:

Ն. Մանդելշտամը Հայաստան գալու կապակցությամբ գրում է. «Մանդելշտամի համար Հայաստան զնայր վերադարձ էր դեպի հարազատ եզերք՝ դեպի վայրն այն, ուր սկզբնավորվել էր ամենայն ինչ, հայրերի մոտ՝ դեպի ակունքը: Տևական լուսնային հետո բանաստեղծությունները նրան վերադարձան Հայաստանում և այլևս երբեք չլքեցին ...»<sup>86</sup>: Ռուս բանաստեղծի համար Հայաստանը «Երկրի գիրքն է ... որով սովորել են առաջին մարդիկ»:

<sup>85</sup> Տե՛ս А. Казинян. Товар из языческой разграбленной лавки. – «Голос Армении», 26. II. 2002; նաև՝ Г. Кубатьян. Ворванный воздух. Статьи и заметки, с. 18.

<sup>86</sup> Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 372:

«Ձկա ոչինչ ավելի ուսանելի ու բերկրալի, քան երբ մխրճվում ես բոլորովին այլ մի ուսասյի հասարակության մեջ, որին հարգում ես, որին ցավակցում ես, որով օտարի տեսանկյունից հպարտանում ես: Հայերի լեցունությունը կենսանքով, նրանց կոպիտ քնքշությունը, նրանց ազնվաբարո աշխատանքային ջանքով լեցուն ոսկրածուծը, նրանց անբացատրելի նողկանքն ամեն կարգի մետաղաֆիզիկայի հանդեպ և սքանչելի մտերմավարությունը ռեալ իրերի աշխարհի հետ— այդ ամենն ինձ ասում էր. դու արթնություն մեջ ես, մի՛ վախեցիր քո ժամանակից, մի՛ խորամանկիր, — գրում է Օ. Մանդելշտամը: — Եվ արդյոք սա այն պատճառով չէ՞ր, որ ես գտնվում էի իր առուծախից գործունեությունամբ հոչակված մի ժողովրդի մեջ, որն, ընդամին, ապրում է ոչ թե ըստ կայարանային և կամ հիմնարկային, այլ ըստ արևային ժամացույցի, որպիսին տեսել եմ Զվարթնոցի ավերակներում աստղաբաշխական անվի՞, թե՞ քարի մեջ ներմուծված վարդի կերպարանքով»<sup>87</sup>:

Ինչևէ. «Մենք շատ ենք չըջել Հայաստանով և շատ բան ենք տեսել, թեպետ, անշուշտ, ոչ ամենը, ինչ կցանկանայինք: Մարդկանց քիչ ենք ճանաչել»<sup>88</sup>, — վկայում է Ն. Մանդելշտամը: Ահավասիկ, այս վերջին նախադասության խոսուհի իրողությունը հետևյալ փաստերն են: Այսպես, նշանավոր գրականագետ Լ. Մկրտչյանը գրում է. «1959 թ. սեպտեմբերին Օսիպ Մանդելշտամի մասին ինձ հարցրեց Իլյա Էրենբուրգը: Նա Հայաստան էր եկել և հետաքրքրվում էր, մասնավորապես, այն բանով, թե մեզանում գիտեն Մանդելշտամին Հայաստանի մասին հանճարեղ բանաստեղծությունների հեղինակին:

Ես ոչինչ չգիտեի ռեպրեսիայի ենթարկված բանաստեղծի՝ Մանդելշտամի մասին (մահացել է 1938 թ. դեկտեմբերին ճամբարային հիվանդանոցում):

Այստեղ նրան համարյա ոչ ոք չգիտի, — ասաց Էրենբուրգը: — Միայն Մարտիրոս Սարյանն ու Սարյանի որդին՝ Սարիկն են հիշում նրա բանաստեղծությունները»<sup>89</sup>:

Համանման մի պատմություն էլ առնչվում է «չնորհազրկված» ռուս գրող Վ. Գրոսմանի հետ. 1961 թ. նոյեմբերի 3-ին գալով Հայաստան, երկու ամիս ապրելով այստեղ, ստեղծելով հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին նվիրված «Բարին ընդ ձեզ: Ծամփորդական նոթեր»-ը՝ Հրաչյա Քոչարի (գրքում գրող Մարտիրոսյան է հիշատակված) միջոցով հետաքրքրվել է Հայաստան կատարած Մանդելշտամի այցով, հայկական թեմայով վերջինիս գրած գործերով ու պարզվել է՝ ավագ սերնդի գրողներից և ոչ մեկն այդ ամենից տեղյակ չէ<sup>90</sup>:

<sup>87</sup> Նույն տեղում, էջ 249:

<sup>88</sup> Օ. Мандельштам. Стихотворения, проза, записные книжки, с.78.

<sup>89</sup> Л. М. Мкртчян. "... И каждое слово— скоба".— Л. М. Мкртчян. Слепой, но не настолько. Художественная публицистика. Литературная критика. Ереван, 1998, с. 220; տե՛ս նաև՝ Г. Кубатьян. Ворованный воздух. Статьи и заметки, с. 73.

<sup>90</sup> В. Гроссман. Добро вам! Рассказы. М., 1967, с. 210. Տե՛ս նաև՝ Н. Гончар-Ханджян. Мандельштам и Армения.— О. Мандельштам. Стихотворения, проза, записные книжки, с.7; Г. Кубатьян. Ворованный воздух. Статьи и заметки, с. 73.

Ի դեպ, ինչպես տեղեկանում ենք Օ. Մանդելշտամի մասին Բ. Կուզինի գրած հուշերից, Մանդելշտամները տրամադրված են եղել հիմնավորվել Հայաստանում. «Երևանյան վերջին օրերն անցան ապագայի մասին անվերջ խոսակցություններով: – Գնա՛լ Մոսկվա և ձգտել հասնելու ինչ-որ նոր բանի, ինչ-որ կերպ տեղավորվել այնտեղ կամ մնալ Հայաստանում: Դժվար է հաշվել, քանի անգամ այդ հարցի որոշումը փոփոխվեց: Բայց իմ մեկնելու օրը վերջնականապես որոշվեց: – Հնարավոր է միայն մի բան. մնալ այստեղ: Միայն հայկական հնագույն մշակույթի պայմաններում, Հայաստանի կյանքի, պատմության և արվեստի մեջ խորանալով (նկատի էր առնվում, իհարկե, և հայերենին ամբողջովին տիրապետելը) կարող էր վրա հասնել ստեղծագործական լեթարգիայի ավարտը: Վերադարձը Մոսկվա միանգամայն բացառվում էր: Իմ մեկնելու նախօրյակին ես հրաժեշտ տվեցի Մանդելշտամներին, ինչպես մենք վստահ էինք, ընդմիջ»<sup>91</sup>: Կյանքը, սակայն, այլ կերպ դասավորվեց ...

### Օ. Մանդելշտամը Շուշիում

Շուշի քաղաքը հայ ժողովրդի հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային խոշոր կենտրոններից է: Այնքան հայտնի, որ դեռևս 1837 թ. այդտեղ է եղել ռուս մեծ բանաստեղծ Մ. Լերմոնտովը: Իր բարեկամ Ս. Ռաևսկուն գրած նամակներից մեկում նա հայտնում է. «Այն օրվանից, ինչ դուրս եկա Ռուսաստանից, Կիզլյարից մինչև Թաման անցել եմ լեռներով, եղա Շուշի քաղաքում Կուբա, Շամախի, Կախեթ քաղաքներում» (ընդգծումը մերն է – Ա. Զ.)<sup>92</sup>:

1920 թ. մարտի 23–26-ին թուրք-ադրբեջանական զորքերն ու մահմեդականներն ավերեցին Հնօրյա բերդաքաղաքը և կոտորեցին հայ ազգաբնակչությանը: Այդ մասին կան բազում վկայություններ, գրվել են հոդվածներ, եղել են հրապարակումներ հայ և օտարազգի բազմաթիվ մտավորականների, հասարակական-քաղաքական գործիչների կողմից: Այսպես, Մ. Շահինյանը 1920-ական թվականներին ճամփորդել է Անդրկովկասում՝ Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Լեռնային Ղարաբաղում ու Նախիջևանում, և այդ մասին թողել է ուշագրավ նոթեր: Ղարաբաղի մասին ակնարկի «Շուշիի ուրվականը» VI գլխում արձանագրել է. «Առաջինը, որն ինձ ապշեցրեց՝ լուռությունն էր: Այդպիսի սարսափելի լուռություն ես ոչ մի տեղ, երբեք չեմ գտնուել, և դա միանգամից թվում է անբնական: Հանկարծ քեզ թվում է, որ լուռությունը շնչում է. քարերը քչփչում են, տարուբերվում են, խշխշում են և գլխիդ մազերը բիզ-բիզ են կանգնում: 1920 թվականի մարտին այստեղ երեք օրում ավերել ու կրակի են մատնել 7.000 տուն ու մորթել են, թվերը տարբեր են ասում. ոմանք ասում են 3–4 հազար հայ, ոմանք՝ 12 հազարից ավելի: Փաստ է, որ 35 հազար հայերից Շուշիից ոչ ոք չէր մնացել: Ինչ-որ տեղ առուններում դեռ կարելի էր տեսնել կանացի մազափնջեր՝ լերդացած սև արյունով: Երևակայություն ունեցող մարդն այստեղ դժվար է շնչում. քայ-

<sup>91</sup> Б. С. Кузин. Об О. Э. Мандельштаме, с. 140.

<sup>92</sup> Վ. Սեյան. Շուշի, Երևան, 1991, էջ 118: Ի դեպ, Միքայել Հարությունյանն այդ փաստի առթիվ գրել է «Լերմոնտովը Շուշիում» վերնագրով բանաստեղծությունը (նույն տեղում, էջ 118–119):

լում ես, քայլում, քայլում համատարած ածխացած շենքերի մնացորդների, ավելի ճիշտ՝ պատերի կողքով, շտապում ես գնալ և վախենում ես, թե երբեք դուրս չես գա ...»<sup>93</sup>:

Իտալացի պատմաբան, աստվածաբան, գրող ու թարգմանիչ Զովաննի Գուալտայի «Ճիշ Արարատից. Արմին Վեգները և հայերի ցեղասպանութ- յունը» գրքում էլ կարդում ենք. «1920 թ. մարտին թուրքերը և ադրբեջան- ցիները կատարում են նոր սարսափելի ջարդ Շուշի քաղաքում: Շուշին Ղա- րաբաղում հայկական կյանքի շատ կարևոր մշակութային կենտրոն էր: XIX դարից այն ուներ իր վանքը, իր եկեղեցին, թատրոնը, հիվանդանոցը, թեմա- կան դպրոցը, լույս էին տեսնում հայերեն գրքեր և ամսագրեր: XIX դարի վեր- ջին հայերը կազմում էին քաղաքի բնակչության ավելի քան 60 տոկոսը: Ըն- դամենը մեկ օրում 1920 թ. մարտի 22-ին (23-ին – Ա. Զ.), թյուրքական կատա- ղությունն ավերեց հազարավոր հայկական տներ, քանդեց շատ եկեղեցիներ, գրադարաններ, տպարաններ. դրա գոհը դարձավ ավելի քան 30.000 մարդ: Այդպես քեմալականները Շուշիում կրկնեցին այն, ինչ երիտթուրքերը կա- տարել էին Բաքվում (նկատի ունի Բաքվի 1918 թ. սեպտեմբերյան դեպքերը. – Ա. Զ.)»<sup>94</sup>:

Խոստեն են նաև Օ. Մանդելշտամի ու նրա կնոջ անդրադարձներն այդ ողբերգական իրադարձություններին:

Հայաստանից Թիֆլիս վերադառնալիս՝ Շուշիի 1920 թ. մարտյան կոտո- րածներից 10 տարի անց, Մանդելշտամները լինում են հայկական հինավուրց այդ քաղաքում: Հարց է ծագում՝ ինչո՞վ էր պայմանավորված նրանց այցը Շուշի: Կարծում ենք, դրան մեծապես նպաստել են Մ. Շահինյանի վերը նշ- ված ուղևորությունը և քաղաքի նկարագրությունը, որին, անշուշտ, ծանոթ է եղել ուսուցիչ Բանաստեղծը, Հայաստանյան շփումները մտավորականության հետ, նաև՝ ծնունդով շուշեցի Ս. Տեր-Գաբրիելյանը, ում հոգածություն տակ են եղել Մանդելշտամները Հայաստանում:

Շուշիից ստացած սահմուկեցուցիչ տպավորությունների մասին Ն. Ման- դելշտամն իր հուշերում ունի ուշագրավ տեղեկություններ: Փոքր-ինչ ծավա- լուն այդ հատվածը բերենք ամբողջությամբ. «... վերջին մեկնումը Էրիվա- նից, Հայաստանում մեր ճամփորդության ավարտը: Լուսաբացին մենք ավտո- բուսով Գյանջայից (Գանձակից. – Ա. Զ.) մեկնեցինք Շուշի: Քաղաքն սկսվում էր անվերջանալի գերեզմանոցով, ապա՝ փոքրիկ շուկայի հրապարակն էր, ուր իջնում են հոշոտված քաղաքի փողոցները: Մեզ արդեն վիճակված էր տեսնել բնակիչների կողմից լքված գյուղեր, որ մի քանի կիսաքանդ տներից էին բաղ- կացած, բայց երբեմնի, ինչպես երևում էր, հարուստ և բարեկարգ այս քաղա- քում աղետի ու մորթի պատկերները սոսկալիորեն դեռ աչքի առաջ էին: Մենք անցանք փողոցներով, և ամենուրեք նույնը՝ անտանիք, անլուսամուտ, անդուռ տների երկշարը: Լուսամուտների բացվածքներից երևում էին դատարկ սեն- յակները, երբեմն՝ պաստառների ծվեններ, կիսաքանդ վառարաններ, երբեմն՝

<sup>93</sup> М. Шагинян. Советское Закавказье. Очерки 1922–1930. Л.–М., 1931, с. 362. Ի դեպ, գիրքը նվիրվել է՝ «Я. С. Хачатрянцу, мужу и товарищу».

<sup>94</sup> Дж. Г у а й т а. Крик с Арарата: Армин Вегнер и геноцид армян. М., 2005, с. 46.

Չարդուհշուր կահույքի մնացորդներ: Տները նշանավոր վարդագույն տուֆից էին, երկհարկանի: Բոլոր միջնորմները քանդված էին, և այդ կմախքների արանքից ամենուր թափանցում էր կապույտ երկինքը: Ասում են, թե կոտորածից հետո բոլոր ջրհորները լեփլեցուն են եղել դիակներով: Եթե որևէ մեկը ողջ է մնացել, ապա փախել է մահվան այդ քաղաքից: Բոլոր լեռնակիպ ճանապարհներին մենք ոչ մի մարդու չհանդիպեցինք: Միայն ներքևում, շուկայի հրապարակում, գեռում էր մի խումբ ժողովուրդ, բայց նրանց մեջ՝ ոչ մի հայ, միայն մուսուլմաններ: Օ. Մ.-ի տպավորությունն այն էր, թե շուկայի մուսուլմանները՝ այն մարդասպանների մնացուկներն են, ովքեր մի տասը տարի առաջ ավերել են քաղաքը, միայն թե դա նրանց օգուտ չտվեց. արևելյան թշվառություն, հրեշավոր ցնցոտիներ, դեմքերին՝ թարախածոր պալարներ: Եգիպտացորենի ալյուրի, կողրի, բլիթների առևտուր ... մենք չհամարձակվեցինք բլիթներ գնել այդ ձեռքերից, թեև ուտել էինք ուզում ... Եվ ջուր էլ չես խմի այս ջրհորներից ... Քաղաքում ոչ միայն հյուրանոց չկար, այլ նույնիսկ եկվորների համար «օբչո» կոչվող սենյակներ, ուր կանայք ու տղամարդիկ միասին էին քնում: Գյանջայի ավտոբուսը մեկնում էր առավոտյան ... Մեզ առաջարկեցին գիշերել իրենց մոտ, բայց ես վախենում էի արևելյան թարախապալարներից, իսկ Մանդելշտամը չէր կարողանում վանել այն միտքը, թե մեր դիմաց Չարդարներ ու մարդասպաններ են: Մենք որոշեցինք մեկնել Ստեփանակերտ՝ մարզային քաղաք: Այնտեղ հասնել կարելի էր միայն կառքով: Ահա և մեզ հանդիպեց անքիթ մի կառապան, միակը իջևանատնում, կաշվե դիմակաչուկով, որը ծածկում էր նրա քիթը և դեմքի կեսը: Իսկ հետո ամեն ինչ ճիշտ այնպես էր, ինչպես բանաստեղծության («Փայտոնչին» – Ա. Զ.) մեջ է. և մենք չէինք հավատում, թե նա մեզ իրոք կհասցնի Ստեփանակերտ. մենք անցանք տուն դարձող հոտից: Այնտեղ մենք գիշերեցինք «օբչոյում», իսկ առավոտյան առանց դժվարություն ավտոբուսի տոմս ստացանք (մարզկոմի միջոցով) և վերադարձանք Գյանջայի թե Նուխու երկաթուղի»<sup>95</sup>:

Ահա այսպիսի ցնցող տպավորություն է թողել Շուշին Մամդելշտամների վրա՝ քաղաքի ավերումից տասը տարի անց:

<sup>95</sup> Օ. Մ. ա ն դ ե լ շ տ ա մ. նշվ. գիրքը, էջ 359–360: Պատմական իրադարձություններին անդրադարձը նպատակ ունի ոչ միայն վերհիշել անցյալը, այլև դրանից դասեր քաղել: Նման դրվագներից է Շուշի քաղաքին վերաբերող վերը ներկայացված պատմական իրողությունը: Այդ ամենը խորհրդային տարիներին դրսևորվեց հայերի ինքնության դեմ ագրեսիվ անհատական պետական մակարդակով սանձազերծած ոտնձգություններով: Սակայն 1992 թ. մայիսի 8–9-ին հայկական զինված ուժերն ազատագրեցին քաղաքը: Չհամակերպվելով ստեղծված իրավիճակի հետ՝ Ադրբեյջանը Թուրքիայի անմիջական մասնակցությամբ և միջազգային ահաբեկիչների ներգրավմամբ, իսրայելցի ռազմական մասնագետների ու ռազմատեխնիկայի օժանդակությամբ 2020 թ. սեպտեմբերի 27-ին ագրեսիա սանձազերծեց Արցախի դեմ՝ դավադրաբար տիրանալով նաև Շուշին: 1920 թ. Շուշիի հայ բնակչության Չարդերն ու 2020 թ. քաղաքի զավթումն Արցախի և հայ ժողովրդի հանդեպ ցեղասպան քաղաքականության դրսևորում են, որն անարձագանք մնաց միջազգային հանրության կողմից ...

«Հայաստան» բանաստեղծությունների շարքը: Թիֆլիսյան օրերը Ե. Չարենցի հետ

Մանդելշտամները Հայաստանից մեկնում են Թիֆլիս, որտեղ մնում են մինչև 1930 թ. նոյեմբերի 5-ը: Այստեղ Օ. Մանդելշտամը գրում է «Հայաստան» բանաստեղծությունների շարքը, որը 1931 թ. տպագրվում է «Новый мир» ամսագրում՝ «Հայաստան: Տասներկու բանաստեղծություն: Օ. Մանդելշտամ» վերնագրի ներքո<sup>96</sup>: Հետագայում գրել է Հայաստանին առնչվող ևս հինգ բանաստեղծություն, որոնք, սակայն, շարքի մեջ չեն մտել: Իրապես, շարքում զգացվում է աստվածաշնչյան ոգի, Հայաստանը ներկայացված է հոգևոր կերպարով՝ ժողովրդի պատմական ճակատագիրը, նրա լեզուն և մշակույթը, պատկանելությունը եվրոպական աշխարհին, մյուս բանաստեղծություններում կերտել է Հայաստանի առավել «երկրային» կերպարը, արտացոլել ժողովրդի աշխատանքը, նրա կենցաղը<sup>97</sup>: «30-ական թվականների Մանդելշտամի բանաստեղծություններում կա և վախ, և շփոթվածություն, և հուսահատություն, իսկ դրանք հետ ապրում է կենցաղային երևույթների ինչ-որ աճող հիացմունք: Նա սիրահարվածությամբ լեցուն ստեղծում է գործեր պատմության, արվեստի, կյանքի մասին: Այդպիսին է «Հայաստան» շարքը, որով 1930 թվականին սկսվեց Մանդելշտամի ստեղծագործական վերջին շրջանը»<sup>98</sup>, — գրել է ուսուցիչականագետ, գրող Լ. Գինգբուրգը «Օսիպ Մանդելշտամի պոետիկան» հոդվածում:

Ըստ էության, Հայաստանին նվիրված բանաստեղծությունները հանգամանորեն քննարկվել են, վեր են հանվել ու պարզաբանվել Մանդելշտամի պոետիկայի խորքային, մասնավորապես սիմվոլներին վերաբերող հարցերը<sup>99</sup>, ուստի բավարարվենք ասվածով:

<sup>96</sup> «Новый мир» (М.), 1931, кн. третья, март, с. 62–63. Ի դեպ, այս նույն համարում է տպագրվել Մ. Շահինյանի «Հիդրոցենտրալ» վեպի երկրորդ մասը (էջ 5–17), իսկ նախորդ մասերը հրատարակվել են ամսագրի 1930 թ. գիրք 1–7, 10-ում:

<sup>97</sup> Օ. Մանդելշտամի ծննդյան 125-ամյակի առթիվ Հայաստանի պատմության թանգարանը հրատարակել է շքեղ այբում-կատալոգ, որտեղ զետեղված լուսանկարները մեկնաբանվել են բանաստեղծի «Հայաստան» շարքից բերված խոսույն քաղվածքներով ու մեկնաբանություններով. տե՛ս Армения по Манделъштаму. Армянская фотография 1878–1920 гг. Альбом-каталог. Ереван, 2016.

<sup>98</sup> Л. Я. Гинзбург. Նշվ. աշխ., էջ 288:

<sup>99</sup> Հատկապես խոր, նուրբ, մանրակրկիտ դիտարկումներով և զուգահեռներով առանձնանում են Գ. Կուբատյանի աշխատանքները. տե՛ս Г. Кубатъян. Солнечные часы поэзии. Армянская тема в творчестве О. Э. Манделъштама. — «Литературная Армения», 1974, № 10, с. 103–116; Ն ու լ յ ն ի՝ Место армянской темы в творчестве О. Манделъштама (Уроки Армении). — «Вестник Ереванского университета», 1989, № 2, с. 11–20; Ն ու լ յ ն ի՝ Стихотворение и цикл (две ипостаси Армении в поэзии О. Манделъштама). — «Вестник Ереванского университета», 1991, № 1, с. 79–88; Ն ու լ յ ն ի՝ От слова до слова. Комментарий к циклу О. Манделъштама «Армения». — В кн.: Г. Кубатъян. Ворованный воздух. Статьи и заметки, с. 7–66. Տե՛ս նաև՝ И. М. Семенко. Ранние редакции и варианты цикла «Армения». — В кн.: О. Манделъштам. Стихотворения, проза, записные книжки, с. 89–111; Н. А. Гончар-Ханджян.

... Այդ օրերին Թիֆլիսում է եղել նաև Եղիշե Չարենցը: Հենց այստեղ էլ նրանք ծանոթանում և մտերմանում են: Այդ մասին Ն. Մանդելշտամը գրում է. «Հիմնական բարեկամությունը մեզ սպասում էր Թիֆլիսում: Հյուրանոցում մեզ մոտ եկավ Եղիշե Չարենցը, և մենք նրա հետ անցկացրեցինք երկու կամ երեք շաբաթ, հանդիպելով համարյա ամեն օր: Ես հասկանում եմ, թե ինչու ընկերական ազատ հարաբերությունները սկսվեցին Չարենցի համար օտար Թիֆլիսում, այլ ոչ թե Երևանում, բայց բանը դրանում չէ...<sup>100</sup>: Ես հիշում եմ, թե ինչպես սկսվեց ծանոթությունը: Մանդելշտամը Չարենցի համար կարդաց Հայաստանի մասին առաջին բանաստեղծությունները՝ նա դրանք այն ժամանակ նոր էր սկսել գրել, Չարենցը լսեց և ասաց. «Ձեզանից, թվում է, գիրք է հորդում»: Ես հիշում եմ այդ խոսքերը, քանի որ Մանդելշտամն ինձ հետո ասաց. «Դու լսեցիր, ինչպես նա ասաց՝ նա իսկական բանաստեղծ է»: Ես այն ժամանակ դեռևս չգիտեի, որ բանաստեղծի համար «գիրքը» դա ամբողջական ձևակառույց է, մեծ միասնություն: Հետո ինչ-որ առիթով Պաստեռնակն ինձ ասաց. «գրքի կազմավորման հրաշքի» մասին և նույնն ասաց Աննա Անդրեևենա-Անուշը (Աննա Ախմատովա– Ա. Զ.): Այդ ամենը գումարվեց Եղիշե Չարենցի խոսքերին, և մենք միշտ հիշում էինք, որ Երևանում ապրում է իսկական բանաստեղծ: Ես ուրիշ ավելի բան չեմ հիշում նրա խոսքերից, քանզի չի կարելի գրառել ամուսնու կամ բարեկամի խոսքը, որոնց հետ թեչ ես խմում, զբոսնում ես և փնտրում, թե որտեղ կարելի է գնել ծխախոտ: Այն ժամանակ հանկարծ ծխախոտի ճգնաժամ եղավ, և տղամարդիկ ծանոթություն հաստատեցին մի խումբ տղաների հետ, քանի որ առանց ծխախոտի անհնար է գրուցել, իսկ նրանք խոսում էին շատ և երկար: Հնարավոր է, Չարենցի խոսքն այն մասին, որ գիրք է հորդում, այն բարեկամական ողջույնն էր, առանց որի չի կարող աշխատել ոչ մի բանաստեղծ, իսկ մեր կյանքում դա հեշտ չէր ստանալ: Հայաստանը, Չարենցը, համալսարանական ձերուհիները, երեխաները, գրքերը, հրաշալի երկիրը և դրանցից ընձյուղված ճարտարապետությունը, մենաձայն երգեցողությունը (կոմիտասյան – Ա. Զ.)

Мандельштам и Армения. – О. Мандельштам. Стихотворения, проза, записные книжки, с. 5–10; М. Р. Андреева. Армянские фрески Осипа Мандельштама.– «Вестник Ереванского университета», 1995, № 1, с. 67–77; Ն ու յ ն ի՝ Пушкинские мотивы в стихотворной «Армении» О. Мандельштама.– «Вестник Ереванского университета», 1999, № 2, с. 63–70; Ն ու յ ն ի՝ Армянские фрески Осипа Мандельштама. Ереван, 2001; Н. А. Гончар, М. Р. Андреева. О некоторых ключевых образах цикла «Армения» О. Мандельштама. – «Вестник Ереванского университета», 1996, № 2, с. 82–93 և այլն:

<sup>100</sup> Նկատենք, որ այս առումով առնվազն տարօրինակ է Գուրգեն Մահարու այն պնդումը, թե Մանդելշտամին հանդիպել է 1930 թ. ամռանը «Երևան» հյուրանոցի նախասրահում, և որ իրեն նրա հետ ծանոթացնողը եղել է Ե. Չարենցը (տե՛ս «Литературная Армения», 1966, № 1, с. 47–48): Ի դեպ, Չարենցը հունիսի 1-ից պետհրատի գեղարվեստական բաժնի վարիչն էր, ու հաճախ էր լինում Թիֆլիսում, այցելում էր «Հայարտուն», գրուցում գրողների հետ, նրանց ստեղծագործությունները տպագրելու համար պայմանագրեր կապում:



և այս երկրում կյանքի ամբողջ դրվածքն այն է, ինչը Մանդելշտամին տվեց «երկրորդ շնչառություն», որով նա ապրեց իր ողջ կյանքը»<sup>101</sup>:

Ի դեպ, ամենայն հավանականությամբ, Չարենցի և Մանդելշտամների մտերմությունն է նպաստել, որ նա թարգմանի Ն. Գումիլյովի «Վեցերորդ զգացմունք» բանաստեղծությունը:

Նկատենք, որ Թիֆլիսում Օ. Մանդելշտամին հովանավորել է Անդրկովկասյան երկրամասի կուսակցության առաջին քարտուղար Բեսո Լոմինաձեն, որը խոստացել է նրան աշխատանքի տեղավորել արխիվում, և ապահովել բնակարանով: Սակայն Բ. Լոմինաձեն մեղադրվում է կուսակցության դեմ կատարած հայտնի ոտնձգությունների համար, և նրան շտապ կանչում են Մոսկվա: «Հենց որ թնդաց Լոմինաձեի ողբերգությունը, ում մոտ մարդկոմում, Օ<սիպ> Մ<անդելշտամ> երեք-չորս անգամ եղել էր ընդունելության, նկատեցինք, որ մեր հետևից, ուր էլ որ գնում էինք, լրտեսը պոկ չի գալիս: Հավանաբար, տեղական մարմինները որոշել էին ամեն դեպքում հետևել շնորհագրկված երևելի անձի առեղծվածային այցելություններին: Հենց այդ ժամանակ էլ հասկացանք, որ Թիֆլիսում անելիք չունենք և շտապ ծլկեցինք Մոսկվա»<sup>102</sup>:

«Փայտոնչին» բանաստեղծությունը գրելու շարժառիթը

«Հայաստան» բանաստեղծությունների շարքից հետո՝ 1931 թ. հունիսի 12-ին, Շուշից ստացած ծանր տպավորությունը արտացոլված է Օ. Մանդելշտամի «Փայտոնչին» բանաստեղծության մեջ: Դա վկայում է, որ Հայաստանը ուսումնասիրողի համար ոչ թե պատահական հրապույր է եղել, այլ կենսագրական փաստ, նաև, որ հայկական թեման նրա համար ոչ թե տեղային, այլ համընդհանրական, կարելի է ասել՝ մետաֆիզիկական—գոյաբանական բանալի է եղել լինելիության ողջ ողբերգականությունը բացելու համար<sup>103</sup>: «Նրա թեման կառապանն է, որն անհայտ է, թե ուր է տանում, — ժանտախտի նախագահը (սա հղում է Պուշկինի «Խրախճանք ժանտախտի պահին» փոքրիկ ողբերգությանը— Ա. Զ.), դիմակավոր մի ոմն, ումից կախված ենք մենք ... Մանդելշտամը վաղուց նկատել էր, որ մենք ոչինչ չգիտենք նրանց մասին, ումից կախված է մեր ճակատագիրը ... Մենք ավելի քիչ գիտենք այդ ժանտախտային խնջույքի նախագահների մասին: Բանաստեղծությունը ծնվեց

<sup>101</sup> Օ. Мандельштам. Стихотворения, проза, записные книжки, с. 79. Ծխախոտի փնտրտուքի հետ կապված տե՛ս նաև Н. Мандельштам. Вторая книга: ..., с. 438. Երևանում Ե. Չարենցի ու գրական այդ գործիչների հետ չհանդիպելու, ինչպես նաև հայ բանաստեղծի հետ Մանդելշտամի հավանական գրույցների թեմաների, երկու բանաստեղծների ստեղծագործությունների, կյանքի ողբերգական ընթացքների գուգահեռների մասին (մասնավորապես Մանդելշտամի հետ կապված Ստալինի գանգը Պաստեռնակին, 1935 թ. դեկտեմբերի 30-ին կրեմլում Չարենցով Ստ. Զորյանից Ստալինի հետաքրքրվելը, բանաստեղծների նամակ-խնդրագրերը Մ. Շահինյանին) հետաքրքիր դիտարկումներ ունի Գ. Կուբատյանը. տե՛ս Г. Кубатьян. После интермедии, или мало о них было линейного. Егише Чаренц и Осип Мандельштам. — В кн. Г. Кубатьян. Ворванный воздух. Статьи и заметки, с. 71–87.

<sup>102</sup> В. Головин. Նշվ. աշխ., էջ 44:

<sup>103</sup> Օ. Մանդելշտամ. Նշվ. գիրքը, էջ 359:

մասնավոր դեպքից և ավելի լայն զուգորդությունից՝ այդտեղ է նրա իմաստը: ...»<sup>104</sup>, – գրել է Ն. Մանդելշտամը:

«Փայտոնչին» բանաստեղծությունը նույնպես արժանացել է մանրազնին վերլուծության ու քննության, նկատվել է Ա. Պուշկինի քնարերգության, մասնավորապես «Ճանապարհորդություն դեպի Արգրում», «Նրախճանք ժանտախտի պահին», «Դևեր» գործերի մոտիվների հետ բացահայտ ասոցիացիա<sup>105</sup>: Ուստի, ստորև միայն մի խոսուեն հատված բերենք «Փայտոնչին» բանաստեղծությունից.

... Ես Ղարաբաղը տեսա լեռնային,  
Տեսա գիշատիչ Շուշի քաղաք,  
Ուր ճաշակեցի սարսափներ մահի –  
Հոգուս խռովքին համանվագ:

Քառասուն հազար մեռյալ լուսամուտ,  
Ակնախոռոչներ մութ, սնամեջ.  
Դառը տքնանքի բոժոժը հմուտ  
Թաղված էր այնտեղ՝ լեռների մեջ:

Անամոթաբար շառագունում են  
Մերկ տներն ու վեր նայում անթարթ,  
Երկինքը վերից մեզն իր մանում է,  
Որպես մուգ-կապույտ ոմն ժանտախտ<sup>106</sup>:

«Ճանապարհորդություն Հայաստան» արձակ երկն ու դրա արձագանքները

1931–1932 թթ. Օ. Մանդելշտամը գրում է «Ճանապարհորդություն Հայաստան» էսսեն, որը հիմնականում պատմություն է Հայաստանի մասին, բայց և խորհրդածություն է մարդկության պատմության ու աշխարհի լեզուների, Փրանսիական իմպրեսիոնիզմի, Ֆիզիոլոգիայի և լուսավորության շուրջ: Իր այս գործը գրելու հանգամանքների, ընթացքի, դրա հետ կապված ապրումների մասին Մանդելշտամը 1931 թ. ապրիլին հորը գրել է. «Կան արդյոք ծրագրե՞ր, հեռանկարնե՞ր: Իհարկե, կան: Ես քեզ կձանոթացնեմ իմ գրական չարչարանքներին: Հայաստանից հետո վերջերս ավարտած քնարերգության մեծ շարքը ոչ մի կոպեկ չբերեց ինձ: Ոչ մի բան չի կարելի տպագրել: (Ամսագրերի խմբագիրները տրնտնջում են և որոշում չեն ընդունում): Գովում են շատ և ջերմ: Գրում եմ նաև արձակ, երկարատև ու տքնաջան զբաղմունք է, բայց այդ նույն պատճառներով ինձ հետ պայմանագրեր չեն

<sup>104</sup> Նույն տեղում, էջ 360: Ի դեպ, 1929–1930 թթ. Ղարաբաղում՝ Հաղ-րութում, այտուցային ժանտախտ է բռնկված եղել:

<sup>105</sup> Տես մասնավորապես՝ Թ. Յ. Х з м а л я н. «Фаэтонщик» – стихотворение О. Мандельштама о Нагорном Карабахе. – «Вестник Ереванского университета», 1991, № 1, с. 89–92.

<sup>106</sup> Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 153:

կնքում ու կանխավճար չեն տալիս: Այդ ամենը պարզվեց կես խոսքից: Ես ամբողջովին հաշտվել եմ նման դրուժյան հետ, ոչ մի տեղ ոչինչ չեմ առաջարկում, ոչ մի բանի մասին ոչ մի տեղ չեմ խնդրում ... Կարևորը, հայրիկ, գրական գործեր ստեղծելն է, իսկ որտեղ դրանք տեղավորել, միևնույն է ... Կենցաղային դատարկ բաների պատճառով գրիչս վայր չեմ դնում, աշխատելը ուրախ է և լավ»<sup>107</sup>:

Մինչ «Ճանապարհորդությունն Հայաստան»-ի տպագրությունը՝ 1933 թ. ապրիլի 5-ին, Օ. Մանդելշտամը Մ. Շահինյանին հասցեագրած վերը նշված նամակում էլ գրում է. «Սիրելի Մարիետա Սերգեևնա! Այս գործը, որը ուղարկում եմ ձեզ և ուզում եմ, որ դուք կարդաք, դեռևս չի տպագրվել (կլինի «ЗВЕЗДА»-ում և Լենինգրադյան հրատարակչությունում)<sup>108</sup>, բայց այնպես պատահեց, որ այս գործը՝ այս ձեռագիրն արդեն աշխատում և շնչում է, ինչպես կենդանի մարդը, պատասխանում է, ինչպես ապրողներից ապրողը և դրա հետ մեկտեղ պայքարում է: Հիշում եք, Երևանում ես ձեզնից վերցրեցի Գյոթեի հատորակը և հողվածիկ էինք կարդում Յ. Կ. Ս.-ից (խոսքը Մանդելշտամի «Դարվինի գիտական ոճի պրոբլեմի մասին» վերնագրով հողվածի մասին է, որ տպագրվել էր «За коммунистическое просвещение» թերթի 1932 թ. ապրիլի 21-ի համարում – Ա. Զ.), որտեղ ես և ձեր և իմ կողմից խոնարհվում էի «կենդանի» բնությունը: Ձեզ հետ մեր թուուցիկ հանդիպումների թեման և նույնիսկ Յակով Սամսոնիչի (նկատի ունի Մ. Շահինյանի ամուսնուն՝ Յա. Խաչատրյանցին – Ա. Զ.), միջոցով, ով կարողանում է և սիրում է լսել ձեզ համար (ինչպես հայտնի է, Մ. Շահինյանի լսողությունը շատ վատ էր – Ա. Զ.), միշտ եղել է իրականության պաշտպանությունը նրա մեղեդիին սահմանումներից: Դուք միշտ ինձ հանդիմանում էիք այն բանի համար, որ ես չեմ լսում մատերիալիզմի կամ դիալեկտիկայի երաժշտությունը կամ միևնույն է ինչպես է անվանվում: Այդ իսկ խոսակցությունները շարունակվում են իմ «Ճանապարհորդությունում»: Նյութական աշխարհը՝ իրականությունը, ինչ-որ տրված բան չէ, բայց ծնվում է մեզ հետ: Այն բանի համար, որպեսզի տվյալը դառնա իրականություն, պետք է բառի իսկական իմաստով այն վերակենդանացնել: Դա էլ հենց գիտությունն է, դա էլ հենց արվեստն է: ... »<sup>109</sup>:

Իր նամակներից մեկում Օ. Մանդելշտամը գրել է. «Գրքույկս («Ճանապարհորդությունն Հայաստան» – Ա. Զ.) խոսում է այն մասին, որ աչքը մտածողության միջոց-գործիք է, որ լույսը ուժ է և որ զարդաքանդակը միտք-գաղափար է: Դրանում խոսվում է բարեկամության, գիտության, ինտելեկտուալ կրքի մասին, այլ ոչ թե «իրերի»<sup>110</sup>:

<sup>107</sup> Осип Мандельштам. Последние творческие годы. Стихи. Письма. Воспоминания о поэте. – «Новый мир», 1987, № 10, с. 204.

<sup>108</sup> Մ. Շահինյանը Լենինգրադում գործող «Գրողների հրատարակչության» վարչության անդամներից էր: Նախապես որոշվել էր, որ «Ճանապարհորդությունն Հայաստան»-ը պետք է հրատարակվի նաև գրքային տարբերակով, գտնվել է սրբագրական պրոցեսներում, սակայն, ստորև ներկայացվող բացասական կարծիքներից հետո հրատարակությունը սառեցվել է:

<sup>109</sup> О. Э. Мандельштам и Б. С. Кузин. Материалы из архива, с. 131.

<sup>110</sup> «Вопросы литературы» (М.), 1968, № 4, с. 191.

«Ճանապարհորդություն Հայաստան»-ը ևս բազմակողմանիորեն դիտարկվել ու մեկնաբանվել է, եղել են բազմաթիվ հրապարակումներ<sup>111</sup>, այդ իսկ պատճառով բավարարվենք այդքանով:

«Ճանապարհորդություն Հայաստան» էսսեն տպագրվել է Լենինգրադում լույս տեսնող «Звезда» ամսագրի 1933 թ. № 5-ում (էջ 103–125): Խմբագիրը՝ Ցեզար Վոլպեն, ոչ միայն հրատարակել է այդ գործը, այլև տպագրել է գրաքննության կողմից Արչակ թագավորի մասին հանված հատվածը, ուսմ ասորեստանցին Շապուհը, պահել էր խավար զնդանում, որտեղից ելք չկա և լուսաչերտ չի ընկնում. «... ասորեստանցին պահում է իմ սիրտը...»<sup>112</sup>: Դրա համար Վոլպենին աշխատանքից ազատել են, բայց չեն ձերբակալել: «Правда» թերթում 1933 թ. օգոստոսի 30-ին «Մատենագիտություն» խորագրի ներքո այս երկի մասին տպագրվել էր «Հին Պետերբուրգի սովերները («Звезда», 1933 թվականի № 1–7)» վերնագրով Ս. Ռոզենտալի խիստ բացասական կարծիքը: Դրա տպագրությունից հետո Օ. Մանդելշտամին խորհուրդ են տվել «հրաժարվել» «Ճանապարհորդություն Հայաստան» գործից. «Դեռևս չէր ավարտվել գղջումներով նամակների դարաշրջանը»<sup>113</sup>: Կարգալով «Правда»-ի նյութը՝ Օ. Մանդելշտամը դիմում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմ իր ծանոթներից մեկին: Վերջինս անմիջապես ընդունում է նրան՝ ակնկալելով, որ բանաստեղծը եկել է գղջումով, սակայն նա պարզապես հայտարարում է, որ չի կարելի կենտրոնական թերթերում տպագրել «դեղին մամուլին վայել հոգվածիկներ»:  
«Մանդելշտամ, դուք խոսում եք «Правда»-ի մասին», – լինում է պատասխանը: «Ես մեղավոր չեմ, որ հոգվածը տպագրվել է «Правда»-ում», – արձագանքում է Մանդելշտամը<sup>114</sup>:

Ինչևէ. «Правда»-ի գրախոսն անխնա քննադատում է հին «պետերբուրգյան շրջանի գրականության հետքերը, հին խավերի և գրական դպրոցների բեկորները մարմնավորող» գրողներին՝ Վ. Շկլովսկուն, Կ. Վագինովին, Ն. Զաբոլոցկուն, բայց հիմնական թիրախը Օ. Մանդելշտամն է: «Օսիպ Մանդելշտամը կատարել է «ճանապարհորդություն Հայաստանում» և 1933 թվականին այդ մասին պատմել է «Звезда» ամսագրում: ... Մանդելշտամի կերպարներից հին, նեխած, մեծապետական շովինիզմի հոտ է գալիս, որը, գովասանքներ չուայելով Հայաստանի մասին, գովաբանում է նրա էկզոտիկան, նրա ստրկական անցյալը, քանզի ներկայի մասին Մանդելշտամը ոչ մի տող չի գրել, – նկատում է Ս. Ռոզենտալը: – Այդպես «ճանապարհորդել» կարելի է տանը նստելով և քեզ շրջապատելով փորագրանկարներով, հին գրքերով ու հազվագյուտ հայկական հնություններով ... Կարելի է նողկանքով անցնել Բեգիմենակու մասին Մանդելշտամի սրախոսությունների կողքից: Դրանցում

<sup>111</sup> С. Т. Золян. Подражание как тип текста (об интерпретации двух армянских источников О. Мандельштамом и А. Ахматовой). – «Вестник Ереванского университета», 1986, № 1, с. 226–236; П. Нерлер. Заметки о «Путешествии в Армению» Осипа Мандельштама. – «Литературная Армения», 1987, № 10, с. 69–79; *տե՛ս նաև ծանոթ. 99-ում նշված աշխատանքները:*

<sup>112</sup> Н. Мандельштам. Вторая книга: ..., с. 335. *Հմմտ.* Н. Я. Мандельштам. Воспоминания, с. 301.

<sup>113</sup> Н. Мандельштам. Вторая книга: ..., с. 341.

<sup>114</sup> Նույն տեղում, էջ 342–343:

անզուսպ մարդու քեն կա, ով չի հասկանում պրոլետարական գրականությունը: ... Այդպես խոսել ու գրել են և «ճանապարհորդել են» մինչ հեղափոխությունը «Վենի» բանաստեղծները, Ծովային փողոցի պանդոկների բանաստեղծները, մզկահոտ սալոնների բանաստեղծները, գրական «ուրբաթները» և «չորեքշաբթիների» հերոսները»: «Պետերբուրգյան հին բանաստեղծ-ակմեիստ Օ. Մանդելշտամը, – շարունակում է հոգվածագիրը, – անցել է բուռն ծաղկող և ուրախ սոցիալիզմ կառուցող Հայաստանի կողքից: ... Օ. Մանդելշտամի մասին կշտամբանքով է հնչում Մ. Սլոնիմսկու (սովետական արձակի ներկայացուցիչ. – Ա. Զ.) կարծիքը: ... Բանաստեղծ, ինչպես ասում են, առանց կենսափորձի, հանգստություն և բարեկեցություն ձգտող, անտարբեր ամեն ինչի նկատմամբ, բացի իր անձից, դատապարտված է ամբողջության»: Եվ վերջում իբրև եզրակացություն. ««Звезда»-ն իր էջերում տպագրում է սովետական գրականության լավագույն գործերը: Բայց ««Звезда»-ում դեռ շատ են մռայլ, անպտուղ գրողները: // Ամսագրին պետք է ամուր ձեռք, բոլշևիկյան աչք: Պետք է կարողանալ վերադաստիարակել գրողներին, պետք է անողոք պայքարել դասակարգային չարակամ ստեղծագործությունների դեմ: // Համարձակորեն առաջ քաշել բանվոր դասակարգի միջավայրից նոր գրողների»<sup>115</sup>:

Ընդհանուր առմամբ, գրախոսականն Օ. Մանդելշտամի վրա այնքան էլ ճնշող տպավորություն չի թողել. նա պարզապես աշխատել է մոռանալ դրա մասին, մինչդեռ այն սպառնալիք-նախազգուշացում էր:

Ինչպես գրում է Ն. Մանդելշտամը, «Հայաստանում արձագանքեցին այդ հոգվածին և բանաստեղծին մամուլում անվանեցին դաշնակ<sup>116</sup>: Դա նշա-

<sup>115</sup> «Правда» (М.), 30. VIII. 1933. Նշենք, որ մինչ այդ՝ հունիսի 17-ին, «Ճանապարհորդություն Հայաստան»-ի մասին «Литературная газета»-ում տպագրվել էր Ն. Օրուժեյնիկովի նմանատիպ հոգվածը:

<sup>116</sup> Մեր պրպտումները, սակայն, Հայաստանյան մամուլում նման արձագանք գտնելու համար, ապարդյուն անցան: Նկատենք նաև, որ վերոգրյալով կարելի է բացատրել այն իրողությունը, որ, ինչպես վերը նշվեց, 1960-ական թվականների սկզբին ավագ սերնդի հայ և ոչ մի գրող չի հիշել Մանդելշտամի այցի ու հայկական թեմայով նրա գրած ստեղծագործությունների մասին, բացի Մարտիրոս Սարյանից ու նրա որդի Սարիկից:

Այս առնչությամբ նաև հավելենք. տարիներ անց՝ 1960-ականների վերջին–1970-ականների սկզբին, Հայաստանի գրական կյանքում «հետաքրքիր, միաժամանակ տխուր դեպքեր են» արձանագրվել: Ինչպես գրում է Գ. Կուբատյանը, «Литературная Армения» ամսագրի գլխավոր խմբագիրը, շատ հայտնի բանաստեղծը (անուն-ազգանունը չի նշում. խոսքը Գևորգ Էմինի մասին է, ով 1968-ից 1972 թվականն եղել է ամսագրի խմբագիրը) փարիզյան «Русская мысль»-ին տված հարցազրույցում ասել է, որ իրեն աշխատանքից ազատել են Օ. Մանդելշտամի գործերը տպագրելու համար (խոսքը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է այս նյութին. Г. Э м и н. [Предисловие]. – «Литературная Армения», 1967, № 3, с. 82–83), և որ Կենտրոնում իրեն համարել են «չկառավարվող»: Բերվում են ասվածը ժխտող համոզիչ փաստարկներ: Իրականությունը, սակայն, այն է, որ 1974 թ. աշխատանքից ազատել են «Литературная Армения»-ի աշխատակից Գ. Կուբատյանին, քանզի համարձակվել էր ամսագրում հրատարակել Օ. Մանդելշտամի մասին հոգված, որում մեջբերումներ էր կատարել բանաստեղծի անտիպ գործերից: Դա միաժամանակ

նակում էր, որ Հայաստանի մուտքն ընդմիջտ փակ է Մանդելշտամի առաջ, բայց մեկնելիս նա գիտեր, որ իրեն վիճակված չէ վերադառնալ»<sup>117</sup>: Դրա առհավատչյան «Հայաստան» շարքից ստորև բերվող բանաստեղծությունն է.

Էլ երբեք քեզ չեմ նայի,  
Հայոց կարճատես երկինք,  
Էլ չեմ սևեռվի կկոցած աչքերով  
Ճամփորդի վրանին Արարատի,  
Չեմ բացի այլևս երբեք  
Կավագործ քերթողներիդ դարանում  
Հրաշագեղ հողիդ մատյանը սնամեջ,  
Որով ուսում են առել առաջին մարդիկ<sup>118</sup>:

### Եզրակացություն

Օսիպ Մանդելշտամը XX դարի ուսուցողականության ինքնատիպ ու հետաքրքիր երախտավորներից է՝ հակասական ու բարդ ճակատագրով: Նրա կյանքն ու գրական ճանապարհը եղել է տատասկոտ՝ վերելքներով և վայրէջքներով:

«Մանդելշտամը միշտ՝ իր ողջ կյանքում, ձգտում էր դեպի հարավ, դեպի Սև ծովի ափերը, միջերկրածովյան ավազան: Սկզբում նա ճանաչեց Ղրիմը, և սիրեց արևելյան ափը, հետո, քսան թվին, եղավ Կովկասում ... Քսանմեկ թվականին նա արդեն ինձ հետ կես տարի անցկացրեց Վրաստանում, իսկ երեսունին մենք մայիսից մինչև նոյեմբեր (հոկտեմբերի սկիզբ – Ա. Զ.) ապրեցինք Հայաստանում և Թիֆլիսում, որտեղ երկարատև լուծվելուց հետո նրան վերադարձավ պոեզիան: Ես խոսում եմ իրական ճանապարհորդությունների, այլ ոչ թե առողջարանային ուղևորությունների մասին, որոնք եղել են շատ ավելի:

Միջերկրածովյան ավազանը, Ղրիմը, Կովկասը Մանդելշտամի համար եղել են պատմական երկիր, գիրք, «որով սովորել են առաջին մարդիկ»: Մանդելշտամի համար պատմական աշխարհը սահմանափակվում էր քրիստոնեություն դավանող ժողովուրդներով, և Հայաստանը նա ընկալում էր որպես ֆորպոստ՝ «աշխարհի եզրին» («Բոլոր ցայգերին օրերիդ դու աշխարհի եզրին – // Արցունքդ կլլելով կանգուն ես մնացել: // Երեսդ թեքել ես ամոթով ու վշտով // Մորուքավոր քաղաքներից Արևելքի») ... Այդ տարիներին մենք ամեն մի քայլին տեսել ենք մուսավաթական ջարդերի հետքերը (հենց միայն Շուշին ...), և դա խորացնում էր օտար մարդկանցով ու երկրներով շրջապատված ծայրամասի զգացողությունը: Հայաստանի մասին բանաստեղծություններում

որակվել էր որպես «հայկական նացիոնալիզմ և սիոնիզմ» (Г. Кубатьян. Ворованный воздух. Статьи и заметки, с. 164): Հավելենք, որ Օ. Մանդելշտամի մահվան 60-ամյակի առթիվ 1998 թ., Գ. Կուբատյանը գրել է «Похититель воздуха, или где эта улица?» վերնագրով Մանդելշտամ-բանաստեղծի կերպարն ամբողջացնող ուշագրավ խոսք (տե՛ս նույն տեղում, էջ 418–421):

<sup>117</sup> Н. М а н д е л ь ш т а м. Вторая книга:..., с. 344.

<sup>118</sup> Օ. Մ ա ն դ Ե լ շ տ ա մ. նշվ. գիրքը, էջ 138:

անապատներին սողոսկեց վերջի, կործանման, ավարտի թեման. «Եվ քեզնից հանում են ծեփապատկերդ հետմահու» (ընդգծումը մերն է– Ա. Զ.)<sup>119</sup>:

Միով բանիվ՝ Հայաստանից ստացած անջնջելի տպավորությունը խորապես արտացոլվել է Մանդելշտամի քնարերգության մեջ և արձակում: Հայկական թեման դարձավ շողկապված բազմաթիվ մտորումների՝ մարդկության պատմության և պատմական գիտակցության, աշխարհի պատկերացումների, հնագույն մշակույթների մասին հանգուցակետ:

Հայաստան կատարած այցելությունն Օ. Մանդելշտամի կյանքի ամենալուսավոր էջերից է եղել: Բիրլիական երկրի հետ ծանոթությունից ծնված բանաստեղծություններն ու արձակը ուսու գրականության մեջ Հայաստանի մասին գրված լավագույն գործերից են:

Անուշավան Զաքարյան – Բ. Գ. Դ., ՊԲՀ-ի գլխավոր խմբագիր: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարասկզբի առաջին քառորդի հայ իրականության հարցեր, Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն, հայ-ուսու պատմաբանական կապեր: Հեղինակ է 21 մենագրության ու ժողովածուի, շուրջ 230 հոդվածների ու հրապարակումների: patmhandes@rambler.ru

## ОСИП МАНДЕЛЬШТАМ: ПОЭТ И ВРЕМЯ. АРМЕНИЯ В ЕГО ЖИЗНИ

АНУШАВАН ЗАКАРЯН

### Резюме

*Ключевые слова:* О. Манделъштам, Н. Манделъштам, Н. Бухарин, И. Эренбург, С. Тер-Габриелян, М. Шагинян, Ереван, Шуши, Тифлис, Е. Чаренц, армянская тема, «Путешествие в Армению».

Видный русский (по происхождению – еврей) поэт, теоретик искусства, переводчик Осип Эмильевич Манделъштам (1891–1938) занимает особое место в истории советской литературы.

В 1920–1930-х годах Манделъштам, будучи беспартийным и не состоящий постоянно ни в одном литературном объединении, вкусил все горести, которые выпали на долю интеллигенции его поколения и многих рядовых советских граждан: подвергся репрессиям, дважды был арестован, отправлен в ссылку, где и скончался.

Имя О. Манделъштама тесно связано с Арменией и армянской культурой. Посещение Армении (с мая до начала октября 1930 г.) стало для него судьбоносным: под неизгладимыми впечатлениями от библейской страны он написал цикл стихотворений «Армения» (1931 г.) и эссе «Путешествие в Армению» (1933 г.). Эти произведения являются одними из лучших страниц русской литературы, посвященной Армении.

<sup>119</sup> Н. М а н д е л ь ш т а м. Вторая книга:..., с. 381.

О жизни и творчестве О. Мандельштама имеется богатая литература: воспоминания современников, множество монографий, статей, публикаций. Однако на армянском языке почти отсутствуют исследования о Мандельштаме: настоящая статья частично восполняет этот пробел.

*Анушаван Закарян – д. филол. н., главный редактор ИФЖ. Научные интересы: вопросы первой четверти армянской действительности XX века, Армянский вопрос и Геноцид армян, армяно-русские историко-литературные связи. Автор 21 монографии и сборников, около 230 статей и публикаций. patmhandes@rambler.ru*

OSIP MANDELSTAM: POET AND TIME.  
ARMENIA IN HIS LIFE

ANUSHAVAN ZAKARYAN

Summary

*Key words: O. Mandelstam, N. Mandelstam, N. Bukharin, I. Erenburg, S. Ter-Gabrielyan, M. Shahinyan, Yerevan, Shushi, Tiflis, Ye. Charents, Armenian theme, "Journey to Armenia".*

Osip Mandelstam (1891–1938) – a prominent Russian poet (Jewish by origin), art theorist, translator – takes a special place in the history of the Soviet literature.

In the 1920–1930s, Mandelstam, being non-party man and not constantly being member of any literary association, tasted all the misfortunes that befell the intellectual class of his generation and great many ordinary Soviet citizens; he faced repressions, he was arrested twice, was sent into exile where he died.

Mandelstam's name is closely related to Armenia and Armenian culture. His visit to Armenia (from May to early October, 1930) was life-changing for him. Under the indelible impressions of the biblical country, he wrote a collection of poems "Armenia" (1931) and an essay "Journey to Armenia" (1933). These pieces of art are among the best works in the Russian literature dedicated to Armenia.

There is rich literature on Mandelstam's life and art: memoirs of contemporaries, a great number of monographs, articles and publications. Nevertheless, there are almost no studies about Mandelstam in the Armenian language: the present article partially fills this gap.

*Anushavan Zakaryan – Doctor of Sciences in Philology, Editor-in-Chief of the Historical and Philological Journal. Scientific interests: issues of the first quarter of the Armenian reality of the 20th century, the Armenian issue and the Armenian Genocide, Armenian-Russian historical and literary links. Author of 21 monographs and collections, about 230 articles and publications. patmhandes@rambler.ru*



---

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՀԱԿԱՅԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՐՑՈՒՄ (1918–1920 ԹԹ.) ԵՎ ԱՐԴԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ\*

ԱՐՄԵՆ ԱՍՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Անդրկովկաս, Մեծ Բրիտանիա, Ղարաբաղ, Ադրբեջան, ազգային խորհուրդ, զավթողական, Հայաստանի Հանրապետություն, ինքնորոշում, իրավական, հայ ժողովուրդ, շահ, պայքար, տարածաշրջան, քաղաքականություն:

**Նախաբան**

Հայ ժողովուրդը լիահույս էր, որ Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի կապիտուլյացիայից և Անդրկովկասում Դաշնակից երկրների հաստատվելուց հետո արդարացի լուծում կստանան իրեն հուզող խնդիրները, այդ թվում Անդրկովկասի հայկական երկրամասերը կընդգրկվեն Հայաստանի առաջին Հանրապետության կազմում: Սակայն հայ ժողովուրդն ապրեց հերթական հուսախաբությունը պատերազմի ընթացքում փոքր ազգերի պաշտպանության խոստումներով հանդես եկած քաղաքակիրթ հորջորջվող Արևմուտքից: Պատերազմից հետո Դաշնակից երկրները, ամենից առաջ Անդրկովկասում թելադրող դիրքեր զբաղած Մեծ Բրիտանիան (Անգլիա) ձեռնամուխ եղավ ոչ թե տարածաշրջանում առկա խնդիրների արդար լուծմանը, այլ աշխարհաքաղաքական սեփական խնդիրների լուծմանը, որոնք Հայաստանի և հայ ժողովրդի շահերի հետ նույնիսկ հեռավոր աղերսներ չունենին:

**Մեծ Բրիտանիայի նպատակները տարածաշրջանում**

Մեծ Բրիտանիան Անդրկովկասում առկա տարածքային և մյուս խնդիրները վճռելիս հայամետ դիրքորոշում չընդունեց՝ անտեսելով պատերազմի ընթացքում հայությունը տված խոստումներն ու հայության ներդրումը Դաշնակիցների հաղթանակի գործում: Այդ իրողությունն ակնհայտ երևում է 1918 թ. հոկտեմբերի 30-ին Դաշնակից երկրների առաջ Թուրքիայի կապիտուլյացիան արձանագրած Մուղրոսի գինադադարի պայմաններում, որում Դաշնակից երկրները ոչ միայն խնդիր չզբեցին ջախջախված Թուրքիային հեռացնել Արևմտյան Հայաստանից, այլև մեծ վերապահումով մոտեցան նրա հեռացմանն Անդրկովկասից, որտեղ նրա բռնազավթման տակ էին գտնվում հիմնականում հայկական երկրամասերը: Մուղրոսի գինադադարի 11-րդ հոդվածում նշվում էր, որ Թուրքական զորքերն արդեն ստացել են Անդրկովկասի մի մասից հեռանալու հրաման, իսկ «մնացած զորքերը կհեռացվեն, եթե

---

\* Ներկայացվել է 23. III. 2021 թ., գրախոսվել է 20. IV. 2021 թ., ընդունվել է տպագրության 17. VI. 2021 թ.:



Ավելի ուշ՝ 1930 թ., Հայաստանի վարչապետներից Ա. Խատիսյանը Մեծ Բրիտանիայի ադրբեջանամետ քաղաքականությունը բացատրել է Ադրբեջանը հզորացնելու և նրա նավթն օգտագործելու ձգտմամբ<sup>6</sup>: Բացի այդ, անգլիական քաղաքականության վրա ազդող գործոններից էր նաև այն, որ Հայաստանը ոչ միայն թույլ, քայքայված երկիր էր, այլև ավանդաբար դիտվում էր որպես Ռուսաստանի պոտենցիալ դաշնակից, իսկ նորաստեղծ Ադրբեջանը՝ հուսալի պատվար Ռուսաստանի դեմ<sup>7</sup>:

Անգլիական կառավարության դիրքորոշման վրա էական ազդեցություն չունեցավ գեներալ Ջ. Միլնի գեկուցումն այն մասին, որ այդ ժամանակաշրջանում Հայաստանի իշխանությունները պատրաստ էին կատարել անգլիական հրամանատարության բոլոր ցանկությունները<sup>8</sup>: Չրնկալվեց այն փաստը, որ Հայաստանը քաղաքականապես կողմնորոշվել էր դեպի Արևմուտք՝ անտեսելով Ռուսաստանի հետ տնտեսական ու ռազմավարական շահերը, որոնք, ի դեպ, խիստ նվազել էին 1917 թ. ռուսական հեղափոխությունների հետևանքով: Կարծում ենք՝ այս փաստը կարող է կողմնորոշիչ դեր ունենալ մեր երկրի արտաքին քաղաքականությունը մշակելու համար. Հայաստանը պետք է ամեն ինչ անի Ռուսաստանի հետ հարաբերությունները հաստատուն հիմքերի վրա դնելու համար (սա չի նշանակում Արևմուտքի հետ հարաբերությունների խզում), այն պարզ պատճառով, որ Արևմուտքը երբեք մեր երկիրը չի գերադասել ու չի գերադասի Թուրքիայից և նրա կրտսեր «եղբայր» Ադրբեջանից: Վերջիններս Արևմուտքի համար ունեն մեծ նշանակություն աշխարհում իրենց թիվ մեկ հակառակորդ Ռուսաստանի դեմ մղվող պայքարում: Թուրքիան Ռուսաստանի բնական թշնամին է, հետևաբար նաև՝ Արևմուտքի բնական դաշնակիցը:

Թևակորված Անգլիայի և Դաշնակից մյուս երկրների կողմից տարածաշրջանում Ադրբեջանին վերապահվող դերից ու տարածքային վեճերը լուծելու հարցում նրանց ադրբեջանամետ կեցվածքից՝ Ադրբեջանը, որը Թուրքիայի պարտությունից հետո միառժամանակ պահիվ վիճակում էր, ակտիվացրեց իր զավթողական գործողություններն Անդրկովկասի հայկական երկրամասերին, առաջին հերթին՝ Ղարաբաղին տիրելու համար:

Մեծ Բրիտանիայի հակահայ քաղաքականությունը Ղարաբաղի հարցում 1918–1920 թթ.

Անդրկովկասում անգլիական ռազմական հրամանատարությունը բացառիկ ակտիվություն դրսևորեց Ղարաբաղն Ադրբեջանին հանձնելու հարցում: Կարծում ենք՝ դա ամենևին պատահական չէր: Ղարաբաղը հայկական ամենամարտունակ, ազատատենչ ու բնականից անմատչելի երկրամասերից էր, Ձանգեզուրի դարպասը և վերջինիս նվաճման գլխավոր նախապայմանը: Այս

չիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2007, էջ 161:

<sup>6</sup> Ա. Խատիսյան. Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 178:

<sup>7</sup> Հ. Հարությունյան. Լեռնային Ղարաբաղը 1918–1921 թթ., Երևան, 1996, էջ 233–234:

<sup>8</sup> Գ. Գալոյան. նշվ. աշխ., էջ 57:

գույգ հայկական երկրամասերը հանձնելով Ադրբեջանին՝ Անգլիան կարող էր ամբողջությամբ կառավարել հայ-ադրբեջանական հարաբերությունները՝ բռունցքի մեջ պահելով թե՛ Ադրբեջանին և թե՛ Հայաստանին ու այդ կերպ առաջ տանել իր հեռահար պլանները<sup>9</sup>։

Արդեն 1918 թ. նոյեմբերի 17-ին, երբ անգլիական զորքերը մտան Բաքու, այնտեղ տեղակայված դաշնակից (փաստացի՝ անգլիական) զորքերի հրամանատար Վ. Թոմսոնը հայտարարեց Ադրբեջանի, այսպես կոչված, տարածքային ամբողջականությունը ճանաչելու մասին՝ դրա տակ նկատի ունենալով նաև հայկական գույգ երկրամասեր Ղարաբաղն ու Ջանգեզուրը<sup>10</sup>։ Դրանով կոպտորեն անտեսվեցին 1918 թ. հուլիսին ու սեպտեմբերին գումարված Ղարաբաղի հայությունից առաջին ու երկրորդ համագումարի որոշումները՝ Ղարաբաղն անկախ վարչաքաղաքական միավոր հռչակելու, Ադրբեջանի իշխանությունը մերժելու և Ղարաբաղի անկախ կառավարություն ստեղծելու մասին<sup>11</sup>։ Ղարաբաղի հայության և Հայաստանի զգոնությունն ու հակազդեցությունը թուլացնելու նպատակով անգլիացիները նշում էին, թե տարածքային հարցերը վերջնականապես լուծվելու են Փարիզի խաղաղության վեհաժողովում, պարզապես մինչև այդ երկրամասը պետք է ենթարկվի Ադրբեջանի իշխանությանը։

Անգլիայի հակահայկական դիրքորոշումը գործնականորեն առաջին անգամ դրսևորվեց 1918 թ. նոյեմբերի 26-ին՝ դեպի Ղարաբաղ զորավար Անդրանիկի սկսած ռազմարշավի հարցում։ Այն բանից հետո, երբ Ղարաբաղի հայության խնդրանքով օգնության շտապող զորավար Անդրանիկը, երկօրյա կռիվներում ջախջախելով Ջանգեզուրի և Ղարաբաղի միջև կուտակված թուրք-թաթարական ու քրդական զինված խմբերին, հասել էր Ավդալար գյուղ, որից հետո գրեթե անարգել կարող էր շարժվել Շուշի, բանազնացներ, սպաներ անգլիացի Զ. Սքուայրը և Ֆրանսիացի Ն. Գասֆիլդը նրան հանձնեցին Բաքվից Վ. Թոմսոնի ուղարկած նամակը։ Վերջինս զորավարից պահանջում էր «ձեռնպահ մնալ որևէ թշնամական գործողություններից ուղղված թուրքական և ադրբեջանական զորքերի դեմ» ու նախազգուշացնում Շուշի մտնելու դեպքում զորավարն անձամբ պատասխանատու կլինի արյունահեղության համար, և որ իր հրահանգները չկատարելը «լրջորեն կազդեն հայերի հարցի վրա, երբ այն քննարկվի խաղաղության վեհաժողովում»<sup>12</sup>։ Անձնական պատասխանատվությունից երբեք չխուսափած Անդրանիկը՝ թուրքերի կամ անգլիացիների հետ չընդհարվելու և դրանով իսկ հայոց շահերը չվնասելու մտահոգությամբ, դադարեցրեց արշավանքն ու վերադարձավ Ջանգեզուր։ Անգլիացիները լավ էին հասկանում, որ Ղարաբաղում հայկական զինուժի հզորացումը մեկընդմիջտ կձախողի երկրամասն Ադրբեջանին հանձնելու իրենց ծրագիրը։ Այդ իսկ պատճառով նրանք չբավարարվեցին՝

<sup>9</sup> Г. Г. Махмуриян. Губернаторство Карабах-Зангезур..., с. 155–156, 160; Ն ու յ ն ի՝ Book Review – Eprikyuan Armine, Nakhijevan in 1917–1921. – “Review of Armenian Studies” (Yerevan), 2020, № 3, p. 252.

<sup>10</sup> Հ. Ս ի մ ո ն յ ա ն. Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, 1996, էջ 460։

<sup>11</sup> Ե. Ի շ խ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 202։

<sup>12</sup> Г. Г. Махмуриян. Губернаторство Карабах-Зангезур..., с. 155–152.

Անդրանիկի մուտքը Ղարաբաղ կանխելով: Մի շարք քայլերի շնորհիվ հասան նրան, որ 1919 թ. մարտի 25-ին գորավարը հեռացավ նաև Չանգեզուրից<sup>13</sup>:

Խախտելով հայերին պաշտպանելու մասին իրենց խոստումը՝ անգլիացիները ոչինչ չարեցին ադրբեջանական հարձակումները Ղարաբաղի հայկական բնակավայրերի վրա կանխելու ուղղությամբ: Ընդհակառակը, 1919 թ. հունվարի 15-ին երկրամասի հայությանն ուղղված պաշտոնական հայտարարությամբ Անդրկովկասում անգլիական ռազմական առաքելությունն իր լիակատար աջակցությունը հայտնեց նույն օրն Ադրբեջանի կառավարության կողմից Ղարաբաղ–Չանգեզուրի նահանգապետ նշանակված հանցագործ, հայտայաց Նոսրով բեկ Սուլթանովին<sup>14</sup> Ղարաբաղի հայությունից պահանջելով ճշտորեն կատարել նրա բոլոր «օրինական հրամանները»<sup>15</sup>: Սա այն դեպքում, երբ անգլիացիները տեղյակ էին նրա թուրքական գործակալ լինելու իրողությանը<sup>16</sup>:

Հայաստանի կառավարությունը, որի դրությունը բավական ծանր էր, փորձում էր պաշտոնական հայտարարությունների միջոցով հակազդել անգլո-ադրբեջանական ճնշումներին ու սատարել գոյամարտ մղող Ղարաբաղի հայությանը: Հայաստանի արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանն անմիջապես պաշտոնական բողոք ուղղեց անգլիական գործերի հրամանատարությունը<sup>17</sup>, իսկ կառավարությունը 1919 թ. հունվարի 21-ին ընդունեց հետևյալ որոշումը. «1) Չանգեզուրի և Ղարաբաղի հայաբնակ շրջանները, կազմելով Հայաստանի հանրապետության անբաժան մասը, կառավարվում են հանրապետության կառավարության կողմից հաստատված օրգանների միջոցով և Հայաստանում գործող օրենքների հիման վրա: 2) Հաղորդակցության դժվարությունների պատճառով ժամանակավորապես՝ երկրի ընդհանուր վարչությունը հանձնվում է գոյություն ունեցող «Չանգեզուրի հայկական Ազգային Խորհուրդին, որը կոչվելու է «Չանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհուրդ» ... 3) Խորհուրդը կառավարում է ժամանակավորապես երկիրը Հայաստանի Հանրապետության անունից և նրանից ստացված լիազորություններով ... 4) Հանրապետության կառավարությունը ուղարկում է Գորիս մի պետական կոմիսար իբրև իր ներկայացուցիչը Չանգեզուր–Ղարաբաղի հայկական շրջանի համար»<sup>18</sup>:

ՀՀ կառավարության այս որոշումը Ղարաբաղի հայության ռազմական ոգին բարձրացնելու առումով անչափ կարևոր էր, սակայն անգլիական դիրքորոշման վրա ազդեցություն չգործեց:

<sup>13</sup> A. Nassibian. Britain and the Armenian Question 1915–1923. London, 1984, p. 156; Ա. Սիմոնյան. Չանգեզուրի գոյամարտը 1917–1921 թթ., Երևան, 2017, էջ 249:

<sup>14</sup> Ռ. Հովհաննիսյան. Հայաստանի Հանրապետություն, հ. 1, Երևան, 2005, էջ 175–176:

<sup>15</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 62.

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 142:

<sup>17</sup> Ա. Սիմոնյան. նշվ. աշխ., էջ 225:

<sup>18</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 5–6:

Զգուշանալով Անգլիայի թշնամական արձագանքից՝ Հայաստանից ուղարկված ու տնտեսական օգնություն, ինչպես նաև փորձառու գործիչներ չգործողվեցին Ղարաբաղ, այնինչ դա կարող էր որոշիչ ազդեցություն ունենալ իրադարձությունների զարգացման վրա: Դեպքերի հայանպաստ զարգացումը Զանգեզուրում, որի մասին կիսովի ստորև, ասվածի վառ ապացույցն է:

Ժամանակակիցները քննադատել են Հայաստանի կառավարության կեցվածքը Ղարաբաղի հարցում: Երկրամասի ժողովրդական կառավարության նախագահ Եղիշե Իշխանյանն այս առիթով 1966 թ. իր հուշերում, որոնց հիմքում ընկած են 1917–1920 թթ. կատարած օրագրությունները, գրել է՝ Հայաստանի կառավարությունը ցուցաբերում էր «դանդաղկոտություն ու զգուշավորություն» և ավելացնում, որ նա պետք է ժամանակին փորձառու մի գինավորականի Ղարաբաղում նշանակեր նահանգապետ և այդ մասին միայն որպես ի գիտություն հայտնեի դաշնակից զորքերի հրամանատարությանը<sup>19</sup>: 1919 թ. ամռանը Հայաստանի կառավարության քաղաքականությունը Ղարաբաղի հարցում քննադատել է նաև Ղարաբաղի ժողովրդական լուսավորության վարիչ Հակոբ Տերունին: Վերջինս Եղիշե Իշխանյանին ասել է, որ Հայաստանի «կառավարությունը ... լուրջ, մտածված ու ծրագրված վերաբերմունք չունի Զանգեզուր–Ղարաբաղի, մանավանդ Ղարաբաղի վերաբերյալ: Եթե Արամը (խոսքը Հայաստանի Հանրապետության հիմնադիր և ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանի մասին է – Ա. Ա.) վաղաժամ մեռած չլիներ, վստահ եղիր, այլ վերաբերմունք կլիներ»<sup>20</sup>:

Ժամանակային հեռավորությունից կարելի է ասել՝ իրոք, Հայաստանի կառավարությունը երբեմն ավելորդ զգուշավորություն էր ցուցաբերում Ղարաբաղի հարցում, որը վնասում էր գործերի հաջողությանը: Սակայն ճիշտ չի լինի լիովին ընդունել կառավարության հասցեին արված վերոհիշյալ քննադատական խոսքերը: Խնդիրն այն է, որ Անգլիան Ղարաբաղի հարցի լուծման հետ էր կապում հօգուտ Հայաստանի տարածքային մյուս խնդիրների լուծումը: Խոսքը հատկապես Նախիջևանի ու Կարսի մասին էր, որոնք ևս Հայաստանի համար ունեին ռազմավարական նշանակություն: Առանց անգլիական օժանդակության, առնվազն բարյացակամ վերաբերմունքի՝ Հայաստանի համար այդ հարցերի լուծումն անհնար կլիներ: Որպեսզի ասվածը պարզ լինի՝ մի փոքր մանրամասնենք: Անգլիայի իմացությունը ու հովանավորությունը 1919 թ. ընթացքում ադրբեջանական բանակը թուրքական զորամասերի հետ բազմիցս հարձակվեց Զանգեզուրի վրա, սակայն ստացավ վճռական հակահարված<sup>21</sup>: Այստեղ հատկանշականն այն է, որ անգլիացիներն ադրբեջանական զորքերի հարձակումներին, ինչպես նաև Ադրբեջանի կողմից երկրամասի շրջափակման փաստին չէին արձագանքում, իսկ հայերին ինքնապաշտպանական քայլերի համար դատապարտում և, նույնիսկ, սպառնում էին: Այսպես, 1919 թ. ապրիլի 30-ի ադրբեջանական տապալված հարձակումից հետո իր պլանների ձախողումից անհանգստացած անգլիական կողմը մայիսի 3-ին Գորիս ուղարկեց 83-րդ բրիգադի հրամանատար, գեներալ Դ. Շատլվորթին, ով ամսի 9-ին Զանգեզուրի շրջանային խորհրդի անդամներից պահանջեց ճանաչել Ադրբեջանի իշխանությունը, բայց ստացավ վճռական մերժում:

<sup>19</sup> Ե. Իշխանյան. նշվ. աշխ., էջ 356:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 505:

<sup>21</sup> Ա. Սիմոնյան. նշվ. աշխ., էջ 186–388:

Շրջանային խորհրդի անդամները, մասնավորապես, նշեցին. «Հայաստանի Հանրապետության երկրամաս Չանգեզուրի» դեմ կատարած ամեն մի ագրեսիվ գործողություն կհանդիպի ամենաուժեղ և կատաղի դիմադրության Զանգեզուրի հայ ժողովրդի կողմից: Սպառնալիքներ տեղալով Հայաստանի կառավարության կողմից պաշտոնապես Չանգեզուրի կոմիսար նշանակված Արսեն Շահմազյանի հասցեին՝ անգլիացին վերադարձավ Շուշի: Չանգեզուրի հայության վճռական կեցվածքը և Հայաստանի կառավարության աջակցությունը երկրամասի հայությանը, ի վերջո, անգլիացիներին ստիպեցին համակերպվել այն փաստի հետ, որ անհնար է հայկական այդ երկրամասը ենթարկել Ադրբեջանին: Շատվորթին այլ բան էլ չէր մնում, քան Գորիսում անգլիական առաքելությունը հանձնարարել, որ տեղի հայ գործիչների հետ որոշեն Չանգեզուրի և Ադրբեջանի սահմանը: Որոշվեց այն անցկացնել Չաբուղ գետով<sup>22</sup>:

Դրությունը բոլորովին այլ էր Նախիջևանում ու Կարսում: Այստեղ հայկական տարրը թույլ և անկազմակերպ էր, որից էլ օգտվելով Անգլիան ավելի ուժեղ ու ցավոտ ճնշում էր գործադրում Հայաստանի վրա: Այսպես, Նախիջևանի երկրամասը Հայաստանի կառավարմանը հանձնելու դիմաց Անգլիան կառավարությունից պահանջում էր Ղարաբաղի նկատմամբ ճանաչել Ադրբեջանի իշխանությունը և ձեռնպահ մնալ գաղթականների տունդարձին աջակցելուց: 1919 թ. մայիսի 3-ին Թիֆլիսում Ա. Խատիսյանի, Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանի, Վ. Թոմսոնի, Կովկասում բրիտանական հետախուզության պետ Վ. Բիչի, 27-րդ դիվիզիայի փոխադրման միջոցների պետ, դերգորավար Ա. Բրաֆի, բրիտանական զորքի Երևանյան խմբի հրամանատար, գեներալ Ք. Դեյվի միջև կայացած բանակցություններում ՀՀ կառավարությունից, իրոք, պահանջել էին հայտարարել, որ Ղարաբաղը չպետք է ընդդիմանա Բաքվի որոշումներին<sup>23</sup>: Մայիսի 6-ին Թոմսոնը կրկնեց նույն պահանջը Լ. Եվանգուլյանին<sup>24</sup>:

Անգլիայի բացահայտ աջակցությունից թևավորված՝ Ադրբեջանի կառավարությունը լիտիաբար հայտարարեց, թե Ղարաբաղն ու Չանգեզուրն Ադրբեջանի անբաժանելի տարածքներն են: Ավելին, Ադրբեջանը մեծաքանակ զորքեր կենտրոնացրեց Ղարաբաղի սահմաններին և ստորաբաժանումներ մտցրեց Խանքենդ<sup>25</sup> ու Շուշի՝ երկրամասը նվաճելու համար: Ղարաբաղ էր ժամանել նաև Ադրբեջանի պաշտպանության նախարարը:

Որքան էլ դրությունը ծանր էր, Ղարաբաղի հայությունը տեղի չտվեց Ադրբեջանի ու Անգլիայի ճնշումներին: 1919 թ. փետրվարին գումարված Ղարաբաղի հայության չորրորդ համագումարը վճռականորեն բողոքեց Ղարաբաղն իր տարածք համարելու Ադրբեջանի մտադրության դեմ հայտա-

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 274–275:

<sup>23</sup> ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 964Ա, թ. 39, Նախիջևան–Շարուրը 1918–1921 թթ., փաստաթղթեր և նյութեր. – «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, № 1–2, էջ 98, Ա. Ե փ ր ի կ յ ա ն. Նախիջևանը 1917–1921 թթ., Երևան, 2016, էջ 91:

<sup>24</sup> Г. Г. Махмурия. Политика Великобритании в Армении и Закавказье в 1918–1920 гг. Бремя белого человека. Ереван, 2002, с. 69–70, 72; Ն ու լ յ ն ի՝ Անգլիական ռազմական վարչակարգը Անդրկովկասում և Հայաստանի կառավարությունը (1918 թ. դեկտեմբեր – 1919 թ. օգոստոս). – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2001, № 2, էջ 74–76:

<sup>25</sup> XIX դարում հայկական պատմական Վարարակներ թուրք-թաթարների կողմից անվանակոչվել էր Խանքենդի: 1923 թ. այն վերանվանվեց Ստեփանակերտ:

րարելով, որ երկրամասի հայ ազգաբնակչությունը երբեք չի ճանաչի Ադրբեյջանի իշխանությունը<sup>26</sup>:

Անգլիական զորքերի հրամանատարությունը Սուլթանովին աջակցելու համար 1919 թ. փետրվարի 24-ին Շուշի գործուղեց իր երկրորդ առաքելությունը՝ մայր Գ. Մոնք-Մեյսոնի գլխավորությամբ, 400 զինվորներով: Վերջինս հենց իրենց նախաձեռնությամբ Շուշի եկած Բաքվի Հայոց Ազգային խորհրդի ու, միաժամանակ, ՀՅԴ կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչներ Գ. Բալայանին, Լ. Ջարաֆյանին, ինչպես և Ի. Միրզաբեկյանին, Ն. Նասիբյանին ու Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի անդամներին առաջարկեց ստորագրել մի հայտարարություն, որ Արցախը, մինչև Ջաբուղ գետը, ժամանակավորապես հանձնվում էր Ադրբեյջանին: Բայց հայ գործիչները կտրականապես մերժեցին այդ առաջարկը<sup>27</sup>:

Ջայրացած Մոնք-Մեյսոնը Շուշիից հեռացրեց չորրորդ համագումարի աշխատանքներին օժանդակելու համար Բաքվից երկրամաս եկած վերոհիշյալ գործիչներին և այդ կապակցությամբ հայերի չըջանում առաջացած հուզումները հանդարտեցնելու համար քաղաքի հայկական թաղամաս մտցրեց անգլիական ստորաբաժանում:

Ղարաբաղի հայության, հատկապես՝ գորահրամանատարների գերակշիռ մասի համար ակնհայտ էր՝ անգլիացիները երբեք չեն համաձայնվի, որ Ղարաբաղն ընդգրկվի Հայաստանի կազմում: Այդ իսկ պատճառով, որպես փոխզիջումային տարբերակ, առաջարկեցին ստեղծել անկախ Ղարաբաղի նահանգ՝ սեփական կառավարությամբ<sup>28</sup>: Սակայն այս առաջարկությունը չընդունվեց Անգլիայի կողմից: Շուշիի նրա առաքելությունը 1919 թ. փետրվարի 28-ին Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդից պահանջեց ընդունել Սուլթանովի իշխանությունը: Ազգային խորհուրդը մերժեց այդ պահանջը և առաջարկեց Ղարաբաղում ստեղծել անգլիական զենեղալ-նահանգապետություն՝ հիմք ընդունելով անգլիական կողմի այն հայտարարությունը, թե մինչև խաղաղության կոնֆերանսի վճիռը Ղարաբաղը չպետք է ենթարկվի որևէ պետության<sup>29</sup>: Սակայն Անգլիան, ցուցաբերելով կողմնակալություն, մերժեց նաև այս առաջարկությունը և շարունակեց աջակցել Ադրբեյջանին:

Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի դիրքորոշումից անհանգստացած՝ Վ. Թոմսոնը 1919 թ. մարտի սկզբին երկրամասի ղեկավարությանն ու անդամների մի մասին հրավիրեց Բաքու: Անշուշտ, Թոմսոնի ակնկալիքը մի կողմից այն էր, որ Բաքվում անհամեմատ դյուրին կլինեին ճնշել հայ ներկայացուցիչներին, մյուս կողմից՝ Ղարաբաղի գլխատված հայությանը կարելի կլինեին արագ ծնկի բերել: Հենց այդ նպատակով էլ այդ օրերին նա Ադրբեյջանին թույլատրեց նոր զորքեր տեղափոխել Ղարաբաղ (1919 թ. մարտին Ադրբեյջանն այստեղ արդեն իսկ ուներ 3000 զինվորական), իսկ Ղարաբաղի կառավարությանն արգելեց հայկական ուժեր բերել Շուշի՝ այն անհեթեթ պատճառաբա-

<sup>26</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 79–80.

<sup>27</sup> ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 18–19, Հ. Աբրահամյան. Մարտնչող Արցախը 1917–2000, գիրք Ա (1917–1923), Երևան, 2003, էջ 112, Ա. Սիմոնյան. նշվ. աշխ., էջ 240:

<sup>28</sup> ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 3:

<sup>29</sup> Ա. Ղարաբաղյան. նշվ. աշխ., էջ 94–95:



նույնությամբ, թե, իբր, դրանից լարվածությունը կուժեղանար: Նկատենք՝ Անգլիան նույն խտրական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ վարում էր նաև Նախիջևանում:

1919 թ. մարտի 28-ին Ա. Խատիսյանի, ռազմական նախարար Հ. Հախվերդյանի, արտգործնախարար Ս. Տիգրանյանի հետ երևանում կայացած խորհրդակցության ժամանակ Վ. Թոմսոնը փորձեց Հայաստանի կառավարության վրա ճնշում գործադրելու միջոցով հասնել նրա կողմից Ղարաբաղում Սուլթանովի իշխանության հաստատմանը, սակայն ապարդյուն<sup>30</sup>: Հայաստանի վճռականությունը չխանգարեց, որ գեներալ Վ. Թոմսոնին փոխարինած Շատլվորթը 1919 թ. մարտի վերջին Բաքվում հայտարարեր, որ մինչև հարցի վերջնական լուծումը Ղարաբաղը պետք է ճանաչի Ադրբեջանի իշխանությունը, իսկ վերջինիս դեմ ուղղված ցանկացած գործողություն կգնահատվի որպես Անգլիայի դեմ ուղղված քայլ, որից հետո հայերին պարզապես կստիպվեն թարկվել<sup>31</sup>: Սակայն նույնիսկ Բաքվում, կարելի է ասել, պատանդի կարգավիճակում գտնվող Ղարաբաղի պատվիրակները մնացին անզրգվելի՝ նշելով, որ իրենք ռազմական դիմադրություն ցույց կտան բոլորին, ովքեր կփորձեն ներխուժել Ղարաբաղ: Եվ, իրոք, երկրամասի հայությունը, ցուցաբերելով արիություն ու վճռականություն, գեներալ ձեռքին պաշտպանում էր իր ազատությունն ու արժանապատվությունը: Վրդովված Շատլվորթը շուտով պահանջեց հրավիրել Ղարաբաղի հայության նոր համագումար՝ հուսալով նրա մասնակիցների նկատմամբ անմիջական ճնշումների միջոցով հասնել Ղարաբաղի կողմից Ադրբեջանի իշխանության ճանաչմանը: Մեծ ջրախմբով նա ժամանեց Շուշի և մասնակցեց 1919 թ. ապրիլի 23–29-ը գումարված Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարին՝ պահանջելով ճանաչել Ադրբեջանի իշխանությունը<sup>32</sup>: Սակայն, ի հեճուկս անգլիացիների, Ղարաբաղի հայության համագումարը հայտարարեց, որ երբեք չի ընդունի Սուլթանովի իշխանությունը<sup>33</sup>: Զուր էր անգլիացիներին ուղղված համագումարի տեղեկանքն Ադրբեջանի հակահայկական քաղաքականության և Թուրքիայի դաշնակիցը լինելու մասին. իրենց հակահայ նպատակադրումներում անզրգվելի անգլիացիները ձերբակալեցին կամ Շուշիից հեռացրեցին Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի մի շարք անդամների և նշանավոր այլ գործիչների: Նրանց ու Ադրբեջանի իշխանություններին մի պահ նույնիսկ հաջողվեց դադարեցնել ազգային խորհրդի գործունեությունը Շուշիում<sup>34</sup>: Սակայն դա չկուտրեց Ղարաբաղի հայության դիմադրական ուժը. կազմակերպվեց ինքնապաշտպանական նոր մարմին, որը ժամանակավորապես փոխարինեց ազգային խորհրդին:

<sup>30</sup> Ե. Ի շ խ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 202, ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 12, թ. 123–124, Գ. Մ ա խ մ ու ը ղ ա ն. Անգլիական ռազմական վարչակարգը..., էջ 70–71:

<sup>31</sup> Ա. Ղ ա Ր Ի Բ Յ ա ն. նշվ. աշխ., էջ 102:

<sup>32</sup> Հ. Ա Բ Բ ա հ ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 129–132, Ա. Ս Ի մ ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 256–257:

<sup>33</sup> ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 27, Գ. Գ ա լ ո յ ա ն. նշվ. աշխ., էջ 6:

<sup>34</sup> Ս. Մ Ե լ ի ք-Յ ո լ չ Ե ա ն. Բազմի հերոսամարտը. – «Հայրենիք» (Բոստոն), 1925, թիւ 12, էջ 124:

Բացի այդ, Անգլիան ու Ադրբեջանը քայլեր ձեռնարկեցին Ղարաբաղում հայերի միասնությունը խարխլելու համար: Նրանք դրան ուղղված կադրային քաղաքականություն էին վարում. բարեբախտաբար, այդ գործում լուրջ հաջողությունների չհասան:

Հարկ է նկատել, որ Ղարաբաղում իրենց պլաններն իրագործելու համար անգլիացիները դիմում էին նաև կեղծիքի՝ լուրեր տարածելով, թե, իբր, Հայաստանի Հանրապետությունը ճանաչել է Ադրբեջանի իշխանությունը Ղարաբաղի նկատմամբ: Սակայն իրականությունն այլ էր. 1919 թ. մարտի 28-ին երևանում տեղի ունեցած վերոհիշյալ խորհրդակցության ժամանակ Հայաստանի վարչապետ Ա. Խատիսյանը Վ. Թոմսոնին հայտնել էր, որ Ղարաբաղի հարցում Հայաստանը մնում է իր տեսակետին<sup>35</sup>: Նույն խորհրդակցության ժամանակ փորձելով մեղմել անգլիական կողմի դիրքորոշումը՝ Ա. Խատիսյանը Վ. Թոմսոնին առաջարկեց մինչև Փարիզի խաղաղության խորհրդաժողովում հարցի լուծումը Ղարաբաղը վերցնել անգլիական գեներալ-նահանգապետի կառավարման ներքո: Վ. Թոմսոնը, սակայն, մերժեց ինչպես այդ առաջարկը, այնպես էլ թախարներին գինաթափելու պահանջը: Ավելին, խորհրդակցությանը մասնակցող Դաշնակից երկրների ներկայացուցիչները Հայաստանի կառավարությունից պահանջեցին իր ներկայացուցիչներին հետ կանչել Ղարաբաղից: Հայաստանի այդպիսի քաղաքականությունից վրդովված՝ մայիսի 3-ին Վ. Թոմսոնն Ա. Խատիսյանին թիֆլիսում հայտարարեց, թե Ղարաբաղի գործերին իր միջամտությամբ Հայաստանը, կարծես թե, պատերազմ է հայտարարում Անգլիային<sup>36</sup>: Իսկ Դ. Շատլվորթը, 1919 թ. մայիսին Շուշիում քննադատելով Հայաստանի կառավարության քաղաքականությունը Ղարաբաղի հարցում, հայտարարեց. «... Ղարաբաղի շուրջը կատարվող գործերը, որոնք տարվում են անգլիական հրամանատարության ծրագրին հակառակ, կարող են արժանանալ հազարավոր հայերի կյանք»<sup>37</sup>: Փաստորեն՝ Անգլիան բացահայտորեն սպառնում էր հայկական կողմին, որպեսզի վերջինս մեղմեր իր դիրքորոշումը Ղարաբաղի հարցում: Սակայն Հայաստանի կառավարությունը տեղի չտվեց:

Իրենց հեռագնա պլաններից ելնելով՝ անգլիացիները չէին ցանկանում ամբողջությամբ դիմազրկվել ՀՀ-ի և Ղարաբաղի հայության շրջանում, ուստի պարբերաբար նշում էին, թե վիճելի հարցերը վերջնականապես լուծվելու են Փարիզի խաղաղության վեհաժողովում: Բայց իրականում շարունակում էին աջակցել Ադրբեջանին:

Անգլիացիների գիտությունը 1919 թ. մայիսի 20-ից Ադրբեջանը հայտարարեց Ղարաբաղի տնտեսական բոյկոտ, անգամ հացահատիկ չէր վաճառում Ղարաբաղի հայությանը, որպեսզի սովի սպառնալիքով վերջինիս ստիպեր ընդունել իր իշխանությունը: Անգլիացիները ոչինչ չձեռնարկեցին ադրբեջանական բանակի կողմից 1919 թ. մայիսի վերջին և հունիսի սկզբին Ղարաբաղի հայության դեմ հարձակման նախապատրաստությունները կանխելու համար, այլև հունիսի 5-ին Սուլթանովին օգնեցին ադրբեջանական բանակի զորամա-

<sup>35</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 140–142.

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 86, Գ. Махмурян. Политика Великобритании ..., с. 69–70.

<sup>37</sup> ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 84, ֆ. 200, ց. 1, գ. 146, թ. 37–38:

սեր մտցնել քաղաքի հայկական թաղամաս և տեղավորել զորանոցներում: Անգլիացիները ոչ միայն չկանխեցին հունիսի 4–7-ը թուրք-ադրբեջանցիների կողմից Շուշիի հարևանությամբ գտնվող Ղայբալիչեն գյուղի գրեթե ամբողջ բնակչության՝ 600–620 հայերի կոտորածը կանխելու համար, այլև արգելեցին Ղարաբաղի շրջաններից իրենց հայրենակիցներին օգնության շտապող հայկական 4.000-անոց զորագնդի մուտքը Շուշի՝ սպառնալով հակառակ պարագայում Սուլթանովին քաղաքը զրավելու իրավունք տալ: Անգլիացիները Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի ղեկավարութանը հեռացրին Շուշիից կեղծ խոստումներ տալով իրավիճակը կարգավորելու մասին: 1919 թ. հունիսի 18-ին Դավիթ Անանունին ուղարկած նամակում ծագումով արցախցի, պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյան) Ղայբալիչենի հայության կոտորածի կապակցությամբ գրում էր. «Մենք պետք է որոտաձայն հայտնենք ամբողջ աշխարհին, որ 620 կանանց և երեխաների արյունն ընկնում է գետնի թմամտի և Շատելվորտի գլխին»<sup>38</sup>:

Անգլիայի և Ադրբեջանի ուժեղացող ռազմաքաղաքական ճնշման պայմաններում 1919 թ. հունիսի 28-ին Վարանդայի Շոշ գյուղում հրավիրված Ղարաբաղի հայության վեցերորդ համագումարը՝ հայ ազգաբնակչությանը փորձություններից հեռու պահելու նպատակով, քննարկեց ժամանակավորապես Ադրբեջանի իշխանությունը ճանաչելու հարցը: Իսկ ահա հաջորդ 1919 թ. օգոստոսի 12–15-ին նույն վայրում գումարված Ղարաբաղի հայության յոթերորդ համագումարը՝ երկրամասում խաղաղություն հաստատելու ակնկալիքով, օգոստոսի 22-ին Ադրբեջանի ներկայացուցիչ Սուլթանովի հետ կնքեց 26 կետանոց համաձայնագիր: Համաձայնագրի 2-րդ կետով Ադրբեջանի կողմից երկրամասի հայության անվտանգության ապահովման, ղեկավար մարմինների պահպանման, բնակչության զինաթափում չիրականացնելու և մի շարք այլ պարտավորությունների ստանձնման պայմանով, համագումարը ճանաչում էր Ղարաբաղի լեռնային մասի՝ Շուշիի, Ջեբրայիլի և Ջևանշիրի գավառների ժամանակավոր գտնվելը Ադրբեջանի Հանրապետության սահմաններում<sup>39</sup>: Բայց, ինչպես և սպասելի էր, Ադրբեջանը չկատարեց իր ստանձնած պարտավորություններն ու չբավարարվեց կնքված համաձայնագրով, ամենից առաջ նրա ժամանակավոր բնույթով ու հետագայում Ղարաբաղից պահանջեց ամբողջությամբ ընդունել իր իշխանությունը:

<sup>1</sup> 1995 թ. ընդունված Վրաստանի Սահմանադրությունը փոփոխվում է ոչ թե հանրաքվեի, այլ խորհրդարանի (Վրաստանի սահմանադրական օրենքի) միջոցով (վերջին փոփոխությունների համաձայն Սահմանադրությունը կարող է փոփոխվել պատգամավորների ձայների 2/3-ով): 1995–2020 թթ. ընթացքում Վրաստանի Սահմանադրությունը փոփոխվել է 36 անգամ: Թվով ամենաշատ փոփոխությունները տեղի են ունեցել երրորդ նախագահ Մ. Սահակաշվիլու իշխանության 9 տարիներին (2003–2012 թթ). այդ շրջանում երկրի Մայր օրենքը փոփոխության է ենթարկվել 25 անգամ (საქართველოს კონსტიტუცია, 24. 08. 1995, საქართველოს საკანონმდებლო მაცნე.– <https://matsne.gov.ge/ka/document/view/30346?publication=36>):





- ՎՈՒԵ-ի կապիտալը *ԽՍՀՄ* փլուզումից ի վեր անշեղորեն աճում է:
- Պատրիարքարանը 62.7 քառակուսի կիլոմետր ընդհանուր մակերեսով հողատարածք ունի, ինչը գրեթե հավասար է Բաթում քաղաքի մակերեսին:
  - Հողերի 96 %-ը Պատրիարքարանի սեփականությունը և ժամանակավոր օգտագործմանն են անցել պետությունից կամ մասնավոր անձանցից անհատույց կերպով:
    - 2002 (սահմանադրական համաձայնագրի կնքումից) – 2017 թթ. Պատրիարքարանը կենտրոնական և տեղական բյուջեից ավելի քան 285 մլն լարի է ստացել:
    - ՎՈՒԵ-ն ղեկավարում է Սինոդի 47 անդամ, նրանցից շատերն ունեն մեծ հողակտորներ, այլ անշարժ գույք, որոնցից 41-ը մասնակցում են Պատրիարքարանի բիզնես գործունեությունը: Սինոդի անդամների մեծ մասը հսկայական կարողություն ունի:
    - 20 տարիների ընթացքում 1997–2017 թթ., Պատրիարքարանը հիմնել է 40 բիզնես ընկերություն, 105 ոչ կառավարական կազմակերպություն, բաժնեմասեր ձեռք բերել 4 այլ ընկերություններում:
    - Պատրիարքարանի ու նրա ոչ կառավարական կազմակերպությունների բիզնեսի գլխավոր ուղղությունը կրթության ոլորտն է: Կան ընկերություններ, որոնք կապված են նավթամթերքի ներկրման և ալկոհոլի արտադրության հետ:

Վրաստանի կառավարության և Պատրիարքարանի ներկայացուցիչները պաշտոնական հայտարարություններում մշտապես հանդես են եկել պարզաբանումներով, ըստ որոնց՝ ՎՈՒԵ-ին փոխանցված դրամական միջոցներն ու հողերն այն վնասի փոխհատուցումն է, որը եկեղեցին կրել է XIX դարում և XX դարասկզբում Ռուսական կայսրությունից, այնուհետև՝ Խորհրդային Միությունից: Վրացական փորձագիտական շրջանակները կասկածանքով են վերաբերում ՎՈՒԵ-ի հատկապես Ցարական Ռուսաստանի ժամանակաշրջանում ունեցած կորուստների մասին հայտարարություններին: Կասկածի հիմք է տալիս այն իրողությունը, որ Կովկասյան հնագրական հանձնաժողովի վավերագրերի [Акты археографической комиссии Кавказа (АКАК)] համաձայն՝ մինչև 1860 թ. ՎՈՒԵ-ն ամենախոշոր ֆեոդալական կազմակերպությունն էր, ուներ զգալի ունեցվածք և տարածքներ՝ վանքեր, թանկարժեք իրեր, 700 հեկտար հող:

Փաստենք՝ ըստ 2002 թ. ընդունված սահմանադրական համաձայնագրի պետք է հատուկ հանձնաժողով ստեղծվեր, որը և կորոշեր ՎՈՒԵ-ի կրած վնասի ծավալները: Այդ հանձնաժողովը մի քանի նիստ է անցկացրել, սակայն վնասի ծավալն այդպես էլ չի հստակեցվել: Հետևաբար, մինչ օրս պարզ չէ, թե ինչի հիման վրա է կառավարությունն ամեն տարի դրամական միջոցներ փոխանցում եկեղեցուն, և որքան պետք է դեռ շարունակվի այդ գործընթացը:

<sup>3</sup> Ա. Մ ա յ ս ու ը ր ա ձ ե. Վրաստանի ամենաազդեցիկ ինստիտուտի կարողությունը.– <http://armenian-community.ge/News/2604>.

<sup>4</sup> Նույն տեղում:

2002 (սահմանադրական համաձայնագրի կնքումից) – 2017 թթ. Պատրիարքարանի վրա է ձևակերպվել 6270 հեկտար հող: Հողատարածքների փոխանցումը տեղի է ունենում հետևյալ կերպ. նախագահը հրաման է ստորագրում, այնուհետև էկոնոմիկայի և զարգացման նախարարությունը գնման մասին պայմանագիր է ձևակերպում, Պատրիարքարանը գույքը գնում է խորհրդանշական 1 լարիով կամ մեկ դոլարով: Հողերի մեծ մասն անհատույց Պատրիարքարանին է փոխանցվել կամ անորոշ ժամանակով «ժամանակավոր օգտագործման» հանձնվել: Ուսումնասիրողները պարզել են, որ պետությունը հողատարածքներից և դրամական միջոցներից բացի ՎՈՒԵ-ին է նվիրում նաև շարժական ու անշարժ գույք, այդ թվում՝ տնային իրեր, հագուստ, շինանյութ, ավտոմեքենաներ, ավտոբուսներ, հիվանդանոցներ<sup>5</sup>: Բնականաբար, գոյություն չունի որևէ իրավական մեխանիզմ, որը հնարավորություն կտար պետությանը վերահսկելու ՎՈՒԵ-ի կողմից ծախսվող գումարները: Այդ իմաստով, ՎՈՒԵ-ն, որևէ մեկին հաշվետու չէ: Վրաստանի ատուղիտի պետական ծառայությունը, սեփական կանոնադրության համաձայն, իրավունք չունի ստուգելու Պատրիարքարանի ֆինանսական գործունեությունը: Ուսումնասիրությունների համաձայն՝ Վրաստանի իշխանությունները, հատկապես երկրի քաղաքական կամ սոցիական ճգնաժամի փուլերում, ավելացնում են ՎՈՒԵ-ին հատկացվող ֆինանսները՝ ձգտելով ձեռք բերել այդ հսկայածավալ կառույցի աջակցությունը:

Ուսումնասիրողների հավաստմամբ՝ ՎՈՒԵ-ն մեծ հետաքրքրություն է ցուցաբերում կրթական ոլորտի հանդեպ. Պատրիարքարանի ավելի քան երկու տասնյակ ընկերություն գործում է հենց կրթության ոլորտում, իսկ 105 ոչ առևտրային կազմակերպությունների մեծ մասը համալսարաններ կամ եկեղեցական-ծխական դպրոցներ են: Պատրիարքարանի հետաքրքրություններից անկում էրկրորդ տեղը գյուղատնտեսությունն է զբաղեցնում, այնուհետև՝ շինարարությունը, առողջապահությունն ու լրատվամիջոցները, գործում է նաև ՎՈՒԵ-ին պատկանող ռեզերվի ակումբը:

Եվ կրկին հայտնի չէ՝ Պատրիարքարանին պատկանող ընկերությունները հարկային դաշտում են, թե՞ ազատված են հարկերից: Ըստ սահմանադրական համաձայնագրի՝ պետական մարմիններն իրավասու չեն ստուգելու այդ ընկերությունների գործունեությունը, և ոչինչ հայտնի չէ դրանց ֆինանսական շարժերի մասին:

Վրաստանի կրոնական այլ համայնքների իրավական կարգավիճակի և սեփականության իրավունքի հարցը

Ինչպես վերևում նշեցինք՝ Վրաստանն անկախանալուց ի վեր օրենսդրորեն լուծում չտվեց երկրի այլ (ոչ քարթվելական) ժողովուրդների դավանանքին առնչվող խնդիրներին. կրոնական այլ կազմակերպությունները չուրջ երկու տասնամյակ հանրային իրավունքի դաշտում չունեին որևէ կարգավիճակ, գործում էին օրենսդրական ծայրահեղ անորոշության պայմաններում, կանոնակարգված չէին վերջիններիս և պետության իրավահարաբերությունը:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում: Է. Շևարժնաձեի կառավարությունից, օրինակ, Պատրիարքարանը նվեր է ստացել Թբիլիսիի ծննդատունն ու սրտաբանական կլինիկան:

ները, ամենակարևորը՝ այդպիսի պայմաններում խոսք անգամ չէր կարող լինել այլ եկեղեցիների սեփականություն իրավունքի մասին: Զրնդունելով «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը, ընդհակառակը, նման անորոշ պայմաններում ՎՈՒԵ-ի հետ կնքելով սահմանադրական համաձայնագիր և բացառիկ, նախադեպը չունեցող արտոնություններ ու իրավունքներ տալով նրան՝ Վրաստանի իշխանությունները ոչ միայն տասնամյակներով խտրական վերաբերմունքի են արժանացրել երկրում գործող այլ եկեղեցիներին, այլև զրկել են վերջիններիս անգամ սեփականության կամ որևէ տեսակի այլ իրավունքներ ունենալու տարրական հնարավորություններից: Տպավորություն կարող է ստեղծվել, որ Վրաստանում գործել ու գործում է միայն մեկ եկեղեցի՝ ՎՈՒԵ-ն, և Վրաստանի իշխանությունները «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը փոխարինելով վերոհիշյալ սահմանադրական համաձայնագրով իրենց ազատել են բոլոր պարտավորություններից:

Բնականաբար, Վրաստանում գործող բոլոր եկեղեցիները՝ ներառյալ Հայ Առաքելական եկեղեցու (ՀԱԵ) Վիրահայոց թեմը, հետխորհրդային ողջ ընթացքում հանդես են եկել կրոնական կազմակերպությունների մասին օրենքի ընդունման պահանջով, որով կկանոնակարգվեր նաև խորհրդային կարգերի օրոք եկեղեցիներից խլված գույքի, պատմաճարտարապետական հուշարձանների, հողատարածքների և այլնի վերադարձման գործընթացը այնպես, ինչպես դա տեղի էր ունենում ՎՈՒԵ-ի պարագայում: Վրաստանի իշխանությունները, սակայն, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի բացակայության պայմաններում, ի պատասխան բարձրաձայնվող պահանջների, կրոնական այլ համայնքներին մշտապես առաջարկել են գրանցվել որպես հասարակական կամ ոչ կառավարական կազմակերպություններ:

Հայաստանի Հանրապետության լուսահոգի վարչապետ Անդրանիկ Մարգարյանի՝ 2005 թ. հուլիսի 24-25-ը Վրաստան կատարած աշխատանքային այցի ժամանակ, ի թիվս ջավախահայությունն ու, ընդհանուր առմամբ, վիրահայությունը հուզող հարցերի, Վրաստանի վարչապետի, Խորհրդարանի խոսնակի և երկրի նախագահի հետ ակտիվ քննարկման է արժանացրել նաև ՀԱԵ Վիրահայոց թեմին իրավական կարգավիճակ շնորհելու և խորհրդային տարիներին խլված ժառանգությունը իրավասիրտը վերադարձնելու մասին հարցերը: Այդ առիթով նա հայտնել է հետևյալը. «Վրաստանում չկա խղճի և կրոնական կազմակերպությունների մասին օրենսդրություն: Զրույցներից ես եկա այն եզրակացության, որ հետագա տարիներին էլ վրացական իշխանություններն ու կառավարությունը չեն ընդունի այդ օրենքը»<sup>6</sup>: Հանդիպելով վրացական իշխանությունների խնդրի արդարացի լուծման ուղղությամբ ոչ կառուցողական մոտեցումներին և դիրքորոշումներին, հայկական կողմն այդ փուլում քննարկել է նաև Վրաստանի ողջ տարածքում գտնվող ու տվյալ փուլում վեճի առարկա չհանդիսացող եկեղեցական սեփականությունները:

<sup>6</sup> Ջավախքի խնդիրները Հայաստանի և Վրաստանի իշխանությունների ուշադրության կենտրոնում. – <https://armenpress.am/arm/news/415559.html>.

յունները Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի անունով գրանցելու տարբերակը՝:

Ինչ վերաբերում է Վրաստանի իշխանությունների՝ որպես հասարակական կազմակերպություն կամ ոչ կառավարական կազմակերպություն գրանցվելու վերաբերյալ առաջարկին, ապա ՀԱԵ Վիրահայոց թեմը, ի թիվս այլ եկեղեցիների, մշտապես մերժել է այն՝ և՛ բարոյական, և՛ իրավական տեսանկյունից համարելով անընդունելի: Բնականաբար, որպես հասարակական կազմակերպություն կամ ոչ կառավարական կազմակերպություն գրանցվելիս հարկային, սեփականության գրանցման, նվիրատվության ձևակերպման, եկեղեցու մուտքերի ու ելքերի վերահսկման և հանրային իրավունքի բազմաթիվ այլ ոլորտներում Վիրահայոց թեմի առջև ծառանալու էին նոր դժվարություններ: Տվյալ դեպքում, օրինակ, պարզ մոմավաճառությունն անգամ դառնալու էր հարկման ենթակա գործարք: Արդյունքում՝ ՀԱԵ Վիրահայոց թեմը պետության հետ իրավահարաբերություններում հոգևոր – կրոնական հնամենի ու ազդեցիկ կառույցից վերածվելու էր երկրում գործող և շահույթ հետապնդող հազարավոր կազմակերպություններից մեկը: Մյուս կողմից՝ հասարակական կամ ոչ կառավարական կազմակերպությունների օրենքի դաշտում գործելը խիստ բացասական ազդեցություն կարող էր թողնել Վիրահայոց թեմի որպես հոգևոր-կրոնական կառույցի գործունեության այս կամ այն ուղղության վրա, օրենսդրությամբ պայմանավորված կարող էին առաջանալ բազմաթիվ սահմանափակումներ, խոչընդոտներ և այլն:

Օրենքի ընդունման փոխարեն՝ փոփոխություններ «Վրաստանի քաղաքացիական օրենսգրքի» մեջ

Տեղական (Վրաստանում գործող թեմերի, տեղաբնիկ ժողովուրդների և փոքրամասնությունների ներկայացուցիչների, հասարակական-քաղաքական այլևայլ կազմակերպությունների) և միջազգային կազմակերպությունների ճնշումների ու պահանջների արդյունքում՝ Վրաստանի իշխանությունները Մ. Սահակաչվիլու իշխանության վերջին շրջանում (2011 թ.) գնացին որոշակի «գիջումների»: Այդուհանդերձ, ինչպես իրավացիորեն կանխազգացել էր ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանը, Վրաստանում գնացին ոչ թե խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենքի ընդունման ճանապարհով, այլ կիրարկվեցին գործող այլ օրենքներից ոմանց մեջ ինչ-ինչ փոփոխություններ կատարելու վիճահարույց մեթոդներ:

2011 թ. հուլիսի 1–5-ը Վրաստանի խորհրդարանն առաջինից երրորդ ընթերցումներով, արագացված կարգով փոփոխություններ կատարեց երկրի Քաղաքացիական օրենսգրքում, որոնցով նախատեսվում էր հնարավորություն տալ երկրում գործող կրոնական միություններին, այդ թվում՝ Հայ Առաքելական եկեղեցուն՝ գրանցվել որպես հանրային իրավունքի սուբյեկտ: Նախքան նշված փոփոխության քննություն կատարելը՝ փաստենք, որ նշված գործընթացին նախորդել էին Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին

<sup>7</sup> Նույն տեղում:

երկրորդի<sup>8</sup> և ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի այցելության, որոնք երկուսն էլ տեղի էին ունեցել հունիս ամսին: Թե՛ Վեհափառի, թե՛ Էդ. Նալբանդյանի<sup>9</sup> կողմից Վրաստանի աշխարհիկ ու կրոնական բարձրաստիճան ալյերի առջև բարձրացվել են ինչպես ՀԱԵ Վիրահայոց թեմին իրավական կարգավիճակի շնորհման, այնպես էլ փրկման եզրին կանգնած հայոց եկեղեցիների վերադարձմանն ու վերականգնմանն առնչվող հարցերը: Ու, թեև վերջնական պայմանավորվածություններ կամ գրավոր համաձայնություններ ձեռք չեն բերվել<sup>10</sup>, այդուհանդերձ, վրացական

<sup>8</sup> Վեհափառ Հայրապետը Վրաստանում էր վեցօրյա այցով՝ 2011 թ. հունիսի 10–15-ը: Նա հովվապետական եռօրյա այց կատարեց նաև Ջավախք:

<sup>9</sup> Վրացական պետական և եկեղեցական չրջանակների բարձրաստիճան ներկայացուցիչներն իրենց մեկնաբանություններում նշել են, որ Քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունները, որոնցով Վրաստանում գործող կրոնական կազմակերպությունները կստանային իրավական ինչ-որ կարգավիճակ, արդյունք են նաև ՀՀ արտգործնախարարի՝ Վրաստան կատարած այցի ժամանակ այդ ուղղությամբ տարված աշխատանքների: Վրաստանի փոխարտգործնախարար Նինո Քալանթաձեն, մասնավորապես, հայտարարել է, որ կրոնական կազմակերպություններին իրավական գրանցում տալու հարցը պաշտոնական թբիլիսի առջև դրել են բարեկամական մի շարք երկրներ, այդ թվում՝ Հայաստանը, արտգործնախարար Էդ. Նալբանդյանի՝ Վրաստան կատարած այցի ժամանակ: ՎՈՒԵ Դմանիսիի և Ագարակ-Տաշիրի թեմի առաջնորդ, Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի արքեպիսկոպոս Ջենոնը կարծիք էր հայտնել, թե ընդունված օրենսդրական փոփոխություններն ուղղակիորեն բխում են Հայ Առաքելական եկեղեցու ցանկություններից: Դրան, ըստ արքեպիսկոպոսի, մեծապես նպաստել են թբիլիսիում Հայաստանի արտգործնախարարի վարած բանակցությունները Վրաստանի իշխանությունների հետ և Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդի Վրաստան կատարած այցը: Հոգևորականին հակադարձել էր խորհրդարանի իշխանական պատգամավոր, քննարկվող օրենսդրական նախաձեռնության համահեղինակ Նուբգար Յիկաուրին՝ հայտարարելով, որ խորհրդարանի որոշումը չի կարող կապված լինել Հայաստանի ցանկությունների հետ: Պատգամավորը նաև հավելել է՝ դրանք ոչ գիտակից մարդու անպատասխանատու հայտարարություններ են, որ այդ քննարկումները տեղի են ունենում արդեն 6 տարի, և իր համար ամոթ է, որ խորհրդարանն այսքան ժամանակ չի կարողացել լուծել կրոնական միավորումների կարգավիճակի հարցը (տե՛ս <https://regnum.ru/news/society/1422632.html>):

<sup>10</sup> Վրացական կողմը (կաթողիկոս Իլիա երկրորդը), ինչպես միշտ, հանդես է գալիս հայկական կողմի պահանջներին հակընդդեմ արհեստածին պահանջներով՝ բարձրացնելով Հայաստանում գտնվող քաղկեդոնական (ըստ վրացական կողմի տեսակետի՝ վրացական) եկեղեցիները ՎՈՒԵ-ին վերադարձնելու, ինչպես նաև ՀՀ-ում ՎՈՒԵ-ի թեմ գրանցելու մասին հարցեր: Հավելենք նաև, որ Ամենայն Հայոց կաթողիկոսը հավաստիացրել էր վրացական կողմին, որ վրացական փոքրաթիվ համայնքը Հայաստանում երբևէ չի դիմել գրանցվելու համար, այլապես դրա համար որևէ ղեկավարություն չէր առաջանա, քանի որ, ի տարբերություն Վրաստանի, Հայաստանում կա կրոնական կազմակերպությունների գործունեությունը կանոնակարգող օրենսդրություն: Ամենայն Հայոց կաթողիկոսն անհամաձայնություն էր արտահայտել նաև վրաց կաթողիկոսի՝ ՀՀ տարածքում վրացական մի շարք եկեղեցիների վերադարձի պահանջի առիթով ասելով, որ վրացական կողմը պետք է ներկայացնի հիմնավորումներ, որոնք կհավաստեն, թե դրանք վրացական են:

կողմը օրեր անց՝ 2011 թ. հուլիսի սկզբին, հանդես եկավ հիշյալ օրենսդրական նախաձեռնությունները: Փոփոխությունների նախագիծը Վրաստանի խորհրդարանն առաջին ընթերցմամբ ընդունել էր հուլիսի 1-ին, համաձայն որի՝ Վրաստանում իրավաբանական անձի կարգավիճակ էր տրվում 5 կրոնական կազմակերպության. Հայ Առաքելական եկեղեցուն, Հոմի կաթողիկ եկեղեցուն, մահմեդական ու հրեական համայնքներին, Բապտիստական եկեղեցուն<sup>11</sup>: «Վրաց եկեղեցին նույնատիպ կարգավիճակ չունի ... Մենք պետք է հասկանանք՝ արդյո՞ք Հայաստանն ու Ադրբեջանը պատրաստվում են նման կարգավիճակ շնորհել Վրաց եկեղեցուն, որպեսզի սա չլինի միակողմանի պարզված ձևով», – օրինագծի առաջին ընթերցման ժամանակ հայտարարել էր ընդդիմադիր «Քրիստոնեա-դեմոկրատական» խմբակցության անդամ Նիկոլոզ Լալիաշվիլին<sup>12</sup>: Վրաստանի իշխանությունները, սակայն, պնդում էին, որ դրանով ՎՈՒԵ-ի դերը չի թուլանում: «Իրավական կարգավիճակի շնորհումը հատուկ իրավունքների ստացում չի նախատեսում, և ՎՈՒԵ-ն պահպանում է բարձրագույն կարգավիճակը», ի պատասխան ընդդիմադիր պատգամավորի հարցի՝ ասել էր խորհրդարանի փոխխոսնակ Գիգի Ծերեթելին<sup>13</sup>: Մեկնաբանելով օրենսդրական նախաձեռնությունը՝ նույն միտքն էր արտահայտել նաև խորհրդարանի նախագահ Դավիթ Բաքրաձեն՝ նշելով. «Վրաց եկեղեցու դերը չի թուլանում, և ես հաստատում եմ, որ ՎՈՒԵ-ն կպահպանի բարձր կարգավիճակը»<sup>14</sup>: Առաջին ընթերցումից հետո Վրաստանի կաթողիկոս-պատրիարք Իլիա երկրորդը հատուկ հայտարարությամբ դիմել էր խորհրդարանին ու կոչ արել կասեցնել Քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունները՝ հայտարարելով, որ «իրենց եկեղեցին երբեք դեմ չի եղել կարգավիճակի տրամադրմանը, բայց կառավարությունը պարտավոր էր այս հարցի շուրջ բազմակողմ պետական հանձնաժողով ստեղծել: Որևէ այլ երկրում մինչ օրս վրացական ուղղափառ եկեղեցիների տնօրինման ու պահպանության հարց չի դրվել, ոչ էլ քննարկվել է դրանց կարգավիճակ տրամադրելու հարցը, ևս այս համապատկերում մեզ համար միանգամայն անհասկանալի է նման կարևորագույն փաստաթղթի ընդունումը արագացված ընթացակարգով և առանց հասարակական քննարկումների»<sup>15</sup>:

Իլիա երկրորդի, ինչպես նաև ընդդիմադիր քաղաքական ուժերի ու հասարակական կազմակերպությունների դժգոհությունների արդյունքում նախագիծը ենթարկվել է որոշակի խմբագրման և հուլիսի 5-ին ընդունվել է որոշ փոփոխություններով: Մասնավորապես, թեև ի սկզբանե նախատեսվում էր հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ տալ 5 կրոնա-

<sup>11</sup> Пяти религиозным объединениям в Грузии присвоен юридический статус.– <https://regnum.ru/news/polit/1421249.html>.

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Նույն տեղում:

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> Парламент Грузии принял закон о статусе религиозных объединений вопреки протестам патриархии и оппозиции. – <https://regnum.ru/news/polit/1422515.html>.

կան կազմակերպությունների, որոնք «պատմական կապեր ունեն Վրաստանի հետ»<sup>16</sup>, բայց երկրորդ ընթերցման ժամանակ Վրաստանի խորհրդարանը, պահպանելով նշված ձևակերպումը, նաև նոր դրույթ է ներմուծել, ըստ որի՝ հանրային իրավունքի իրավաբանական անձ կարող են գրանցվել նաև երկրում գործող կրոնական բոլոր հոսանքները, որոնք Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում օրենքով ճանաչված են որպես կրոնական հոսանքներ<sup>17</sup>։

Ինչպես վերևում փաստեցինք՝ «Վրաստանի քաղաքացիական օրենսգրքում փոփոխությունների մասին» օրենքում որպես Վրաստանի սահմանադրական համաձայնագրով ճանաչված հանրային իրավունքի իրավաբանական անձ նշված է Վրաց Առաքելական Ավտոկեֆալ Ուղղափառ եկեղեցին։ Օրենքի հեղինակների հայտարարությունների համաձայն՝ ՎՈՒԵ-ն ունի իր հատուկ կարգավիճակը, որն արտացոլված է Սահմանադրության մեջ և սահմանադրական համաձայնագրում, իսկ այդ բարեփոխումները կարգավորում են ոչ թե կրոնական, այլ վարչակազմակերպական-իրավական հարցերը<sup>18</sup>։ Իրավաբանական անձի կարգավիճակը, որը շնորհվում էր կրոնական մյուս կազմակերպություններին, այդ թվում՝ Հայ Առաքելական եկեղեցուն, ենթադրում էր պետության վերահսկողությունից անկախ քաղաքական, պետական, սոցիալական, լուսավորչական, մշակութային կամ հանրային այլ գործունեություն ծավալելու իրավունք։

Այդուհանդերձ, Վրաստանի խորհրդարանի կողմից օրենսդրական փոփոխությունների ընդունումից հետո՝ հուլիսի 5-ի ուշ երեկոյան, ՎՈՒԵ պատրիարքարանը տարածել է նոր հայտարարություն՝ հայտնելով, որ կաթողիկոս-պատրիարքի՝ հուլիսի 4-ին արված առաջին հայտարարությունից հետո նրան այցելել են Վրաստանի խորհրդարանի ներկայացուցիչները<sup>19</sup>, որպեսզի

<sup>16</sup> Ряд религиозных объединений будут считаться юридическими лицами публичного права. – <https://www.apsny.ge/2011/pol/1309575810.php>.

<sup>17</sup> Նախարարության կողմից Նախարարության և Կրոնական գործերի նախարարության միջև, 2011 թվականի 5 օգոստոս, №5034-ՐՆ.

<sup>18</sup> Парламентское большинство не согласно с оппозицией в вопросе религиозных объединений. – <https://www.apsny.ge/2011/pol/1309579049.php>. Վրաստանի խորհրդարանական մեծամասնության ղեկավար Գեորգի Գաբաշվիլին ընդգրկում էր կողմից «գաղափարները թեմայի շահարկումը» և մասնակցել «Քաղաքացիական օրենսգրքի բարեփոխմանը»՝ հայտարարելով, որ «այդ բարեփոխումները կարգավորում են ոչ թե կրոնական, այլ վարչակազմակերպական-իրավական հարցերը։ ՎՈՒԵ-ն ունի հատուկ կարգավիճակ, որը որոշված է կոնկորդատում և ամրագրված Սահմանադրությամբ։ Ինչ վերաբերում է կրոնական այլ միավորումների գործունեության իրավական ձևին, ապա դա առնչություն չունի Պատրիարքարանի հետ։ Օրենքի նախագծում խոսքը կրոնական միավորումների իրավական ձևի մասին է, և այդ կազմակերպությունները պետք է ունենան իրավաբանական-իրավական ձև» (Գաբաշվիլի призывает оппозицию «прекратить табуирование тем». – <https://www.apsny.ge/2011/pol/1309914643.php>):

<sup>19</sup> Վրաց կաթողիկոսին այցելել է Վրաստանի խորհրդարանի իրավական հարցերով հանձնաժողովի նախագահ Պավլե Կուբլաշվիլին, ով օրենքի վերջնական ընդունումից առաջ տեղի ունեցած քննարկման ժամանակ խորհրդարանում հայտարարել է, որ իշխանության առաջարկները, այդ թվում՝ այլ պետություններում ՎՈՒԵ-ի



առաջարկեն առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի փոփոխված տարբերակը: «Պատրիարքը վերստին առաջ է քաշել օրենքի ընդունման գործընթացը կանգնեցնելու, դրա հանրային քննարկման և հանրային կարծիքներում կոնսենսուսի հասնելու վերաբերյալ իր առաջարկը, այնուհետև ներկայացրել փոխգիշումային տարբերակ՝ հաշվի առնելով միջազգային փորձը: Համաձայնություն չի կայացել, ինչը ծայրաստիճան ցավալի է, քանի որ այժմ ընդունված օրենքը հակասում է ինչպես եկեղեցու, այնպես էլ երկրի շահերին: Կարծում ենք, որ այս օրենքը մոտ ապագայում կրեի իր բացասական արդյունքները, որի պատասխանատվությունը դրված է իշխանությունների վրա»<sup>20</sup>, – նշված էր Վրաստանի Պատրիարքարանի տարածած հայտարարության մեջ:

Վրաստանում կրոնական խնդիրն արդյո՞ք լուծվեց

Ինչպես նշեցինք, Վրաստանում կրոնական տարբեր կազմակերպություններին հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ տալու հարցը փորձ արվեց լուծել ոչ թե խղճի ազատություն և կրոնական կազմակերպությունների մասին օրենքի մշակմամբ ու ընդունմամբ, այլ ընդամենը փոփոխություն մտցվեց Քաղաքացիական օրենսգրքի մեջ: Սրանք լրիվ տարբեր բաներ են: Ավելին՝ «Վրաստանի քաղաքացիական օրենսգրքում փոփոխությունների մասին» Վրաստանի օրենքում կան մի շարք իրարամերժ և խնդրահարույց դրույթներ. այսպես, 1-ին հոդվածի 2-րդ մասի 5-րդ ենթակետում հատակ նշվում է, որ, ««Հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասին» Վրաստանի օրենքը չի տարածվում կրոնական միություն վրա, որը գրանցված է որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ»<sup>21</sup>: Հաջորդ 6-րդ ենթակետով, նշվում է, որ «սույն հոդվածի առաջին մասով նախատեսված կրոնական միավորումների գրանցման համար սահմանված կանոնը սահմանվում է ոչ ձեռնարկատիրական (ոչ առևտրային) իրավաբանական անձանց գրանցման համար սահմանված կանոնով ...»<sup>22</sup>: Հավելենք, որ առաջին ենթակետում նշված է «Կրոնական միավորումները կարող են գրանցվել որպես հանրային իրավունքի իրավաբանական անձինք»<sup>23</sup>, իսկ ահա 2-րդ ենթակետը սահմանում է, որ առաջին ենթակետում սահմանվածը «... չի

կարգավիճակի հետ կապված, Պատրիարքի համար կարևոր չէին: Կուբլաչվիլին հանրայնացրել է նաև կաթողիկոսի որոշ առաջարկներ, որոնցից մեկով պահանջել է, որ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ գրանցման ենթակա կրոնների ցանկը հնարավորինս փոքր լինի: Իշխանությունները դա համարել են խտրական և մերժել պահանջը (Власти Грузии не смогли договориться с патриархией. – [https://www.apsny.ge/2011/pol/130\\_9931887.php](https://www.apsny.ge/2011/pol/130_9931887.php)):

<sup>20</sup> ГПЦ: Принятый парламентом закон противоречит интересам как Церкви, так и страны. – <https://www.apsny.ge/2011/soc/1309931470.php>.

<sup>21</sup> საქართველოს კანონი საქართველოს სამოქალაქო კოდექსში ცვლილების შეტანის შესახებ, 2011 წლის 5 ივლისი, № 5034-რს.

<sup>22</sup> საქართველოს კანონი საქართველოს სამოქალაქო კოდექსში ცვლილების შეტანის შესახებ, 2011 წლის 5 ივლისი, № 5034-რს.

<sup>23</sup> საქართველოს კანონი საქართველოს სამოქალაქო კოდექსში ცვლილების შეტანის შესახებ, 2011 წლის 5 ივლისი, № 5034-რს.

սահմանափակում կրոնական միավորումներին՝ սույն օրենսգրքով սահմանված որպես ոչ ձեռնարկատիրական (ոչ առևտրային) իրավաբանական անձանց գրանցվելու, ինչպես նաև սույն օրենսգրքի համաձայն չգրանցված միություն գործելու իրավունքը»<sup>24</sup>:

Այսինքն՝ կրոնական միավորումներին առաջարկվում էր գրանցվել ոչ թե որպես կրոնական կազմակերպություն, այլ որպես ոչ ձեռնարկատիրական (ոչ առևտրային) իրավաբանական անձ (մոտավորապես այնպես, ինչպես առաջարկվում էր գրանցվել մինչ «Վրաստանի քաղաքացիական օրենսգրքում փոփոխությունների մասին» Վրաստանի օրենքի ընդունումը, ինչը, փաստենք, որ մերժում էր Վիրահայոց թեմը), իսկ գրանցվելու դեպքում՝ «Հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասին» Վրաստանի օրենքը չի տարածվում սույն կրոնական համայնքի վրա, որը գրանցված է որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ: Ամենակարևորը՝ սույն օրենսգրքական խմբագրումը չի կարգավորում գրանցված կրոնական միավորումների սեփականության իրավունքը: Այս կետը հույժ կարևոր էր ՀԱԵ Վիրահայոց թեմի համար, քանի որ վերջինս պահանջներ ունի բազմաթիվ վանական կալվածքների և եկեղեցիների մասով: Այդ պատճառով Վրաստանում գտնվող կանգուն կամ փլուզված հարյուրավոր հայկական եկեղեցիների ու պատմաճարտարապետական հուշարձանների՝ ՀԱԵ Վիրահայոց թեմին վերադարձնելու հարցը վերստին մնաց չլուծված: Մշուշոտ է նաև, թե, օրինակ, ՀԱԵ Վիրահայոց թեմն ի վերջո ո՞ր օրենքի դաշտում է գործելու:

Վերոնշյալ իրողությունը նման է այն մարդուն, որին պետությունը ճանաչում է որպես քաղաքացի, իսկ ահա թե այդ քաղաքացին ինչպիսի՞ իրավունքներ և պարտավորություններ ունի, ինչպիսի՞ սեփականություն ունենալու իրավունք ունի կամ ունի՞ այդպիսի իրավունք, ընդհանրապես, թե՞ ոչ, մնում է բաց: Այդ իմաստով՝ «Վրաստանի քաղաքացիական օրենսգրքում փոփոխությունների մասին» Վրաստանի օրենքը Վիրահայոց թեմի կյանքում, բացի թեմի հանրային իրավունքի սուբյեկտի վերածելուց, որևէ այլ փոփոխություններ չի մտցրել: Օրենքի ընդունումից երեք տարի անց՝ 2014 թ., ՀԱԵ-ի Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը վերստին բարձրացնում է այն նույն խնդիրները, որոնք ծառայած էին թեմի առջև՝ մինչ օրենքի ընդունումը. «2011 թ. Վրաստանի քաղաքացիական օրենսգրքում մեջ կատարվեց փոփոխություն. Վիրահայոց թեմը, ի թիվս ավանդական կրոնական այլ համայնքների, գրանցվեց և դարձավ հանրային իրավունքի սուբյեկտ: Սակայն օրենսգրքում չկարգավորվեց մեխանիզմը, թե ինչ ձևով վրացահայոց թեմին և կրոնական մյուս համայնքներին կվերադարձվի խորհրդային տարիներին բռնագրավված գույքը: Այս տեսակետից թեմն այսօր բավական դժվար կացություն մեջ է. գործում են եկեղեցիներ, կից՝ կրթամշակութային, երիտասարդական կենտրոններ, բայց այս ամբողջի սեփականատերը կամ նույնիսկ վարձակալը իրավաբանորեն թեմը չի հանդիսանում, ինչը մեծ դժվարություններ է հարուցում նույնիսկ կենցաղա-

<sup>24</sup> Տե՛ս Վրացական Կաթոլիկոսության կողմից Վրաստանի Հանրապետության Կոնստիտուցիայի 11-րդ հոդվածի 1-ին կետի և 12-րդ հոդվածի 1-ին կետի փոփոխության մասին 2011 թ. 5-րդ հունիսի Վրաստանի Սահմանադրության հարցում Կոնստիտուցիոնալ դատարանի որոշումը, 2011 թ. 5-րդ հունիսի, № 5034-ՐՍ:

յին մակարդակում: Մենք չենք կարող լույսի, գազի, ջրի բաժանորդ լինել, քանի որ այդ կառույցները իրավաբանորեն մեզ չեն պատկանում: Այս պատճառով շատ տեղերում կոմունալ վճարումները կատարվում են ֆիզիկական անձերի անունով»<sup>25</sup>:

Հետաքրքրական մի հանգամանք ևս. 2011 թ. սեպտեմբերին՝ վերոհիշյալ օրենքի ընդունումից երկու ամիս անց, Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) կողմից իրականացված սոցհարցման 2.425 մասնակիցների 47%-ը ոչինչ չէր լսել Քաղաքացիության մասին Վրաստանի օրենսգրքում կատարված փոփոխությունների մասին, որոնք վերաբերում էին կրոնական կազմակերպությունների՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի գրանցմանը: Իսկ նոր օրենքի մասին տեղյակ մարդկանց (կազմել են 48%) 81%-ը կարծել է, որ իշխանություններն այդ հարցում պետք է խորհրդակցեն բնակչության հետ<sup>26</sup>:

### Եզրակացություն

Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, Վրաստանում անկախացումից ի վեր չընդունվեց կրոնական կազմակերպությունների ոլորտը կանոնակարգող և վերջիններիս իրավունքներն ու պարտավորությունները սահմանող օրենք («Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենք): Հակառակ դրան՝ երկրում բացառիկ արտոնյալ կարգավիճակ է շնորհված Վրաց Ուղղափառ եկեղեցուն: Վերջինիս և պետության հարաբերությունները կարգավորվում են սահմանադրական համաձայնագրով, որը հաստատվել է խորհրդարանի կողմից 2002 թ. հոկտեմբերի 22-ին:

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի ընդունման փոխարեն՝ 2011 թ. Վրաստանի Քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունները հնարավորություն տվեցին երկրում գործող կրոնական միություններին, այդ թվում՝ Հայ Առաքելական եկեղեցուն՝ գրանցվել որպես հանրային իրավունքի սուբյեկտ: Նշված փոփոխությունները, սակայն, չլուծեցին ոչ մի հիմնախնդիր. օրենքը հնարավորություն չտվեց, որպեսզի ՀԱԵ Վիրահայոց թեմին վերադարձվի խորհրդային և հետխորհրդային տարիներին խլված ժառանգությունը: Օրենքով չկանոնակարգվեցին նաև ՀԱԵ Վիրահայոց թեմի՝ հանրային իրավունքի դաշտում որպես կրոնական կազմակերպություն գործելու մեխանիզմները. թեմը շարունակում է հոգևոր-մշակութային, կրթական, սոցիալական, բարեգործական, գրասենյակային և այլ բնույթի ու բովանդակության գործունեություն ծավալելիս բավել վարչաիրավական բազմաթիվ խնդիրների:

<sup>25</sup> Վիրահայոց թեմի առաջնորդը՝ եկեղեցիների կարգավիճակի, Վրաստանի կառավարության խոստումների և հայ կալանավորներին օգնելու մասին. <https://artsakhpess.am/arm/news/1658/virahayoc-temi-arajnordy-ekexecineri-kargavitcha-ki-vrastani-karavarutyanyan-khostumneri-ev-hay-kalanavornerin-ognelu-masin.html>.

<sup>26</sup> 47% грузин ничего не знают о присвоении статуса религиозным объединениям. – <https://regnum.ru/news/society/1454804.html>.

Վահե Սարգսյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմություն ինստիտուտի սփյուռքի և Հայ դադթօջախների պատմություն բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Վրաստանի հայություն, մասնավորապես՝ ջալախահայության խնդիրներ, Հայաստան-Վրաստան հարաբերություններում առկա բազմաբնույթ հիմնահարցեր, Վրաստանի տեղաբնիկ ժողովուրդների ու ազգային փոքրամասնությունների խնդիրներ: Հեղինակ է 1 մենագրության և ավելի քան 20 հոդվածի: Vsargsyan83@gmail.com

REFERENCES

Djavakhki khndimere Hayastani yev Vrastani ishkhanutyunneri ushadrutyan kentronum. – <https://armenpress.am/arm/news/415559.html> (In Armenian).  
 Gabashvili prizivaet oppozitsiyu “prekratit taburiovanie tem” <https://www.apsny.ge/2011/pol/1309914643.php> (In Russian).  
 GPTS: Prinyaty parlamentom zakon protivorechit interesam kak Tserkvi, tak i strany. – <https://www.apsny.ge/2011/soc/1309931470.php> (In Russian).  
 Maysuradze A. Vrastani amenaazdetsik instituti karoghutyune. – <http://armenian-community.ge/News/2604> (In Armenian).  
 Pyati religioznim ob’edineniyam v Gruzii prisvoen yuridicheskiy status. – <https://regnum.ru/news/polit/1421249.html> (In Russian).  
 Parlament Gruzii prinyal zakon o statuse religioznikh ob’edineniy voprerki protestam patriarkhii i oppozitsii. – <https://regnum.ru/news/polit/1422515.html> (In Russian).  
 Parlamentskoe bol’shinstvo ne soglasno s oppozitsiyey v voprose religioznikh ob’edineniy. – <https://www.apsny.ge/2011/pol/1309579049.php> (In Russian).  
 Ryad religioznikh obedineniy budut schitat’sya yuridicheskimi litsami publichnogo prava. – <https://www.apsny.ge/2011/pol/1309575810.php> (In Russian).  
 Saqartvelos kanoni Saqartvelos samoqalaqo kodeqsshii cvlilebis shetanis shesakheb, 2011 dslis 5 ivlisi, №5034-rs.  
 Sakartvelos konstitucia, 24.08.1995, Sakartvelos sakanondeblo matsne. – <https://matsne.gov.ge/ka/document/view/30346?publication=36>.  
 Vlasti Gruzii ne smogli dogovorit’sya s patriarkhией. – <https://www.apsny.ge/2011/pol/1309931887.php> (In Russian).  
 Virahayots temi arajnorde ekeghetsineri kargavidjaki, Vrastani karavarutyanyan khostumneri yev hay kalanavornerin ognelu masin. – <https://artsakhpres.am/arm/news/1658/virahayoc-temi-arajnorde-ekexecineri-kargavitchaki-vrastani-karavarutyanyan-khostumneri-ev-hay-kalanavornerin-ognelu-masin.html> (In Armenian).  
 47% gruzin nichego ne znayut o prisvoenii statusa religioznym obedineniam. – <https://regnum.ru/news/society/1454804.html> (In Russian).  
<https://regnum.ru/news/soceety/1422632.html>.

ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ЮРИДИЧЕСКОГО СТАТУСА  
ГРУЗИНСКОЙ ПРАВОСЛАВНОЙ ЦЕРКВИ И ЕПАРХИИ АРМЯНСКОЙ  
АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ПОСТСОВЕТСКОЙ ГРУЗИИ

ВАЭ САРКИСЯН

Резюме

*Ключевые слова:* Грузия, религиозные организации, Грузинская Православная церковь, юридический статус, конституционное соглашение, Гражданский кодекс, юридическое лицо публичного права, Армянская Апостольская церковь, Епархия Армянской Апостольской церкви в Грузии, право собственности, церкви.

После провозглашения независимости Грузии так и не был принят закон, регулирующий сферу религиозных организаций, их права и обязанности («Закон о свободе совести и религиозных организациях»). Взаимоотношения между Грузинской Православной церковью и государством регулируются конституционным соглашением, утвержденным парламентом 22 октября 2002 г.

В отличие от других церквей, действующих в Грузии, Грузинская Православная церковь пользуется исключительными привилегиями, имеет крупные финансовые и экономические возможности, одновременно является самым закрытым институтом, деятельность которого не подотчетна и не подлежит контролю, проверке со стороны какого-либо государственного учреждения.

Вместо принятия «Закона о свободе совести и религиозных организациях» изменения в Гражданском кодексе Грузии от 2011 г. позволили религиозным организациям, в том числе и Епархии Армянской Апостольской церкви, зарегистрироваться как юридическое лицо публичного права. Однако закон не допускает возвращение Епархии Армянской Апостольской церкви в Грузии того наследия, которое было отнято в советские и постсоветские годы. Он не регулирует также механизмы деятельности Епархии как юридического лица публичного права: Епархия продолжает сталкиваться с административно-правовыми проблемами в своей духовно-культурной, просветительской, социальной, благотворительной, канцелярской и другой деятельности.

*Ваэ Саркисян – к. и. н., научный сотрудник отдела истории диаспоры и армянских колоний Института истории НАН РА. Научные интересы: проблемы армянства Грузии, в частности Джавахка, разные вопросы отношений Армения–Грузия, проблемы коренных народов и национальных меньшинств Грузии. Автор 1 монографии и более 20 статей. Vsargsyan83@gmail.com*

THE LEGISLATIVE REGULATION OF THE LEGAL STATUS OF THE  
GEORGIAN ORTHODOX CHURCH AND THE GEORGIAN DIOCESE OF  
THE ARMENIAN APOSTOLIC CHURCH IN POST-SOVIET GEORGIA

VAHE SARGSYAN

Summary

*Key words: Georgia, religious organizations, Georgian Orthodox Church, legal status, constitutional agreement, Civil Code, legal entity under public law, Armenian Apostolic Church, Diocese of the Armenian Apostolic Church in Georgia, property rights, churches.*

Since independence, Georgia has not adopted a law regulating the field of religious organizations and defining their rights and obligations (“Law on Freedom of Conscience and Religious Organizations”). The relations between the latter and the state are regulated by a constitutional agreement approved by the Parliament as of October 22, 2002.

Unlike other churches operating in Georgia, GOC is the most closed institution in the country with exceptional privileges, great economic and financial potential, the activity of which no state body can control, inspect or demand reports.

Instead of passing the law on “Freedom of Conscience and Religious Organizations”, amendments to the Georgian Civil Code in 2011 allowed religious unions in the country, including the Armenian Apostolic Church, to register as a subject of public law.

The mentioned changes, however, did not solve any general problem; the law did not enable the AAC Georgian Diocese to return the heritage taken away during the Soviet and post-Soviet years. The law did not regulate the mechanisms of the AAC Georgian Diocese acting as a religious organization in the field of public law; the Diocese continues to face multifarious administrative and legal problems while carrying out cultural, educational, social, charitable, office as well as activities of other nature and content.

*Vahe Sargsyan – Candidate of Sciences in History, Researcher at the Department of the History of Diaspora and Armenian Colonies of the NAS RA Institute of History. Scientific interests: the problems of Armenians of Georgia, particularly Javakhk, various issues on relations between Armenia-Georgia, issues of indigenous peoples and national minorities of Georgia. Author of 1 monograph and over 20 articles. Vsargsyan83@gmail.com*

---

---

## II

### ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ (Ըստ Համաստեղի «Սպիտակ ձիավորը» վեպի)\*

#### ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Համաստեղ, «Սպիտակ ձիավորը», Մարտիկ, Ջերջի Կիրոս, Բերդակ, Վարդաձոր, Ֆիդայի, ազատամարտ, հայ, քուրդ, թուրք, հայրենիք, պայքար, հերոսներ, հաղթանակ:

#### Նախաբան

Հայրենիքի կերպարը կերտելու տարբեր սկզբունքներ կան՝ նյութ ունենալով ներկան, մոտիկ անցյալն ու պատմությունը: Մոտիկ անցյալին են ուղղված գրական գործեր, որոնք պատմական երկեր՝ պատմավեպեր չեն, բայց պատմական իրադարձություններով հագեցված պատմական որոշակի մի շրջանի գեղարվեստական մարմնավորումներ են: Այդպիսին են Համաստեղի «Սպիտակ ձիավորը»<sup>1</sup>, Կ. Զարյանի «Նավը լեռան վրա» (Բոստոն, 1943), Գ. Մահարու «Այրվող այգեստաններ» (Երևան, 1966), Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչը» (Երևան, 1979) վեպերը, Մ. Գալչոյանի «Մարութա սարի ամպերը» պատմվածաշարը (Երևան, 1980):

Համաստեղի համար հայրենիքը նախ բնաշխարհ և գյուղաշխարհ էր՝ իր մարդկանցով ու կենդանիներով, կյանքի ամենօրյա իր պատմությամբ, և նա ավելի հայտնի է որպես տեղագրական մանրանկար իրական պատմվածքների վարպետ: «Գյուղը» (1924), «Անձրև» (1929) ժողովածուներն աչքի առաջ ունենալով Ա. Չոպանյանը գրում էր. «Իր տեսողութեան նորութիւնը կը կանայ բացարձակ առարկայականութեան մը մէջ: Լիակատար իրապաշտ է

---

\* Ներկայացվել է 22. IV. 2021 թ., գրախոսվել է 27. IV. 2021 թ., ընդունվել է տպագրության 10. V. 2021 թ.:

<sup>1</sup> «Սպիտակ ձիավորը» վեպն առանց 3-րդ և 4-րդ գլուխների տպագրվել է Բոստոնի «Հայրենիք» ամսագրում (1931, թիվ 7 – 1933, թիվ 12), այնուհետև առանձին գրքով՝ Լոս Անջելեսում (հ. 1–2, 1952): 1953-ի մարտին Ս. Վրացյանին հասցեագրած նամակում Համաստեղը տեղեկացնում է, որ արդեն ստացել է վեպի 1-ին հատորը և շուտով կազմատուն կուղարկի 2-րդը: Այսինքն՝ վեպը, ըստ էության, պատրաստ է եղել 1953-ին: Նշված նամակում նաև ավելացնում է. «... ես ավելին չէի կրնար կրճատել» [Համաստեղ. Նամակների, Երևան, 2003, էջ 330: Այս գրքի կազմող Մ. Խաչատրյանը հեղինակել է նաև «Համաստեղի ստեղծագործությունը» (Երևան, 2004) մենագրությունը]:

Մեր ձեռքին վեպի երրորդ հրատարակությունն է մեկ հատորով (Երևան, 2016): Այս հրատարակությունից հղումները կնշվեն շարադրանքի մեջ:

ինք: Համաստեղ հարազատ եւ վճիտ ձայն մըն է, որուն մէջէն գիւղն ինքզինքը կ'երգե»<sup>2</sup>:

Այդ աշխարհի իրական ժամանակը, «որուն մէջէն գիւղն ինքզինքը կ'երգե», նրա համար փակվեց ցեղասպանության սև վարագույրներով, թեև ինքը, ԱՄՆ տեղափոխված հոր հորդորով, 1913-ին էր դուրս եկել երկրից: Առարկայականը նրա մեջ աստիճանաբար շաղախվեց երևակայությանն ու դարձավ տեսիլք: Ահա գաղափարական այս հայացքով գրվեց նրա «Սպիտակ ճիւղերը» վեպը, որ շարունակում է մնալ գրական քննադատության, ընդհանրապես հայագիտության տեսադաշտում, քանի որ ծրագրային գործ է ոչ միայն գեղարվեստի գեղագիտության ու տեսության առումով, այլև պատմաքաղաքական գաղափարների որոշակի դրույթների առաջադրությամբ:

Վեպը բացող «Մի քանի խոսք»-ում հեղինակը գրում է. ««Սպիտակ ճիւղերը» սկսյալ գրել 1931-ին, երբ երկար ճամփորդութենէ մը նոր էի դարձեր Ամերիկա: Ծանր էր տեսնել անապատէն դուրս եկած, շուար ժողովուրդ մը, ցամքած մարմնով ու խոհուն աչքերով: Աւելի ծանր էր տեսնել, Տէրգորի մոտ, Ճիգիրէի անապատին այն վայրը, ուր 40 000 հայեր ինքնիրենց վրայ քայքայուած աւազներուն վրայ ձգած են կմախքներ միայն: Ծանր էր մանաւանդ այդ աւազներէն վերցնել գանկ մը ու ճամբորդել անոր հետ: Վէպը փնտրուած մըն է մեր հոգեկան աշխարհին ու աշխարհագրական ցամաքին: Փորձած եմ տալ ժողովուրդի մը հերոսական մարտնչումները» (էջ 5):

Պատկերման ժամանակն ըստ 1952 թվականի հրատարակության՝ «Վեպի շրջանն է – վաթսուհամեակ մը մեզմէ առաջ» (էջ 6), այսինքն՝ 1890-ական թվականները:

Սա պատմաքաղաքական ծրագիր ունեցող վեպ է, բայց պատմական վեպ չէ: Այդ կապակցությամբ հեղինակը գրել է. «Ոմանք վէպի մէջ ուզած են պատմական ճշտութիւններ տեսնել, առանց անդրադառնալու, որ «Սպիտակ ճիւղերը» պատմական վէպ չէ, այլ շրջանի մը ոգորումները, ինչքան որ ես ինքս ծանոթ եղած եմ կամ այդ աշխատանքը ինկած է իմ կարողութեան սահմաններուն մէջ»<sup>3</sup>:

Համաստեղի պատմագեղարվեստական այս դիրքորոշումը ճանապարհ բացեց: «Նավը լեռան վրա» ստեղծագործության «Այս վեպը» առաջաբանում Կ. Զարյանն իր երկը «բուն իմաստով պատմական վէպ» չի համարում, այլ մի քանի հայ հոգիների պատմություն, ովքեր ապրել են «մեր ազգային կեանքի ամենաբախտորոշ շրջաններից մեկում»: Նրա հավաստմամբ՝ պատկերված հերոսները երևակայական են, բայց նրա իսկ դիպուկ վերապահությամբ՝ «Երևակայականը աւելի իրական է, քան ինքը իրականութիւնը», որը նշանակում է. «... սա պատմութեան գիրք չէ, այլ ոգու պատմութիւն»<sup>4</sup>:

Պատմության ազատ գեղարվեստական վերարտադրությունը, բայցև պատմական փաստերի ու հերոսների ուղեկից և կազմակերպիչ դերը տարբեր համամասնությամբ բնորոշ է նաև վերը նշված հեղինակների հիշյալ գործերին:

<sup>2</sup> Ա. Զոպանեան. Համաստեղ եւ գիւղը հայ գրականութեան մէջ. – Դէմքեր, հ. 2, Փարիզ, 1929, էջ 183:

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության Գրականության և արվեստի թանգարան, Համաստեղի Ֆոնդ, թ. 52:

<sup>4</sup> Կ. Զարեան. Նաւը լեռան վրայ, Բոստոն, 1943, էջ 3:



Պատմութեան մասին, բայց ոչ պատմական վեպ գրելու միտումը ուժեղ էր 1920–1930-ականներին: Ահա ևս մեկ կարևոր վկայութիւն: 1925 թ. հուլիսի 21-ին Վենետիկից Իսահակյանը գրում է Վահան Նավասարդյանին. ««Ուստա Կարոյի» մեջ էլ կյանքի վերջին 20–25 տարին է ամփոփված, սկսած 1904 թվից մինչև այսօր <...>: Պատմական վեպ չէ, այլ հոգեբանական, փրփստփայական և շատ տարրեր կան մեջը. էպոս, ըրման, լիրիկա, հյումոր ... դա օվկիանոս է, վեպ չէ»<sup>5</sup>:

Վիպական այս մտայնութեան բարձրագույն արտահայտութիւնը եղավ ու մնաց Չարենցի «Երկիր Նայիրի»-ն (գրվել է 1921–1924 թթ., «Նորք» հանդեսում լույս է տեսել 1922–1925 թթ., առանձին գրքով 1926-ին):

### «Սպիտակ ձիավորը» վեպի գաղափարական ուղղվածութիւնը

Համաստեղի վեպում ժամանակը հայոց ազատագրական պայքարի տարիներն են, ինչպես ասվեց, 1890-ական թվականները, հերոսների շարքում կան պատմական քողարկված դեմքեր, բայց վեպը, կրկնում ենք, պատմական չէ: Հայոց պատմութիւնն է հայոց հայրենիքով, իրական բնաշխարհով ու աշխարհագրութեամբ և հայրենիքի ազատագրման երևակայական ծրագրերով: Վեպն ունի գաղափարական որոշակի ուղղվածութիւն, այլ կերպ՝ գաղափարապաշտ (նոմանտիկական) վեպ է, որ ցեղասպանութիւնից և հայրենի երկրի կորուստից կարճ ժամանակ անց ժողովրդի մեջ փորձում է ներարկել ոգու կորով, հաղթանակի թեկուզև երազային բերկրանք: Դա պայմանավորված է նախ կիսաառասպելական, ասես էպոսածին, գլխավոր հերոսի՝ Մարտիկի կերպարով ու հայրենասիրական գործունեութեամբ և մյուս գլխավոր հերոսի՝ Չերչի Կիրոսի կազմակերպական ջանքերով, որով միաբանվում են հայկական ուժերը և, վերջում քրդական ուժերի հետ դաշնակցած, հաղթում թուրքական բանակին: Սա տարիների պայքարի ցանկալի ավարտն է, որը ներկայացվում է որպես իրականութիւն. ահա այստեղից էլ վեպի ծրագրային գաղափարապաշտական ուղղվածութիւնը կամ այլ կերպ՝ նեոնոմանտիզմը:

Այդ մասին կան նաև հեղինակային հիմնավորումներն ու վկայութիւնները: Հիշյալ «Մի քանի խոսք»-ում գրում է. «Հայ ժողովուրդը բոմանթիք է իր ապրումներով, իր հաւատքով ու հերոսներով: Առաւելապէս այդ շողախին կը պարտի իր գոյութիւնը, այլապէս՝ եթէ յանկարծ գիտակցէր տառապանքի իրականութեան, ան վաղուց կը չքանար որպէս ազգ» (էջ 5): Վեպի նոմանտիկական բնույթը Համաստեղը բացատրում է հայ ժողովրդի համանման բնավորութեամբ, այլ կերպ՝ պատմական հոգեբանութեամբ՝ պարտութիւնների դեմ հոգևոր հաղթանակ, մահվան դեմ կյանք և համապատասխան գեղարվեստով տողորում նրա կենսագոյութեանը:

1960 թ. դեկտեմբերի 30-ին սփյուռքահայ գրականագետ Գրիգոր Շահինյանին Համաստեղը գրում է. ««Սպիտակ ձիավոր»ի շրջանը կարավաններու շրջանն էր՝ բոմանթիզմի շրջանը: Արեւելեան բոմանթիզմը խառնված էր հեքիաթային որոշ գոյներու հետ: Այդ գոյները պահուած են հարազատ ըլլալու համար շրջանին, ինչպէս Մարտիկն է, Հաճի Մուսան է: Նոյնիսկ մեր

<sup>5</sup> Ավետիք Իսահակյանի նամակները, Գահիրե, 1959, էջ 17: Ծիշտ այն է, ինչ Համաստեղի վեպը, իրոք՝ «օվկիանոս»:

Ֆիտայիններու հաւատքին ու հզոր պայքարներուն հետ հեքիաթային հերոսներ ու գիծեր կան, թեեւ այնքան իրական»<sup>6</sup>։ Այս դիտարկմանը Գ. Շահինյանն ավելացնում է. «Տեսլական այս աշխարհը արեւելեան է իր միջնուրտով. գիւղն է հիմը անոր։ Համաստեղի խարբերդի գիւղերէն ստացած տպաւորութիւններուն վրայ աւելցած է նաեւ ժողովրդային հեքիաթներու ոգեշնչած գերբնական աշխարհի մը միջնուրտը։ <...>։ Հեքիաթի այս միջնուրտը կը փոխադրուի ՄՊԻՏԱԿ ՁԻԱԿՈՐԻ մէջ, որ Արեւելքի վէպն է, ընդհանրապէս, որքան բո՛ւն Հայաստանի»<sup>7</sup>։

Հեքիաթի շաղախի մեջ որքան իրական, նույնքան անիրական աշխարհն է, որ իր մեջ առնում է առասպել, հովվերգութիւն, ժողովրդական չափազանցութիւն, դիւցազներգութիւն տարրեր։ Այո՛, այդպէս է, ուստի ավելորդ է Գ. Շահինյանի հերթապահ հաջորդ դիտարկումը, ըստ որի՝ «... իրապաշտ վէպ ըլլալէ, առասպելի եւ հում իրականութեան տարօրինակ մէկ խառնուրդը կը ներկայացնէ...»<sup>8</sup>։

Վեպի իրական հիմքերի մասին վկայում է Համաստեղը. «Հայաստանը աշխարհագրական սահման ըլլալէ աւելի հոգեկան քարտէս եղած է, ըսել կ'ուզեմ, քարտէսի գիծերու հետ գործ ունեցած չեմ։ Գործածած եմ գիւղի, քաղաքի, ճամբաներու, լեռներու և քրտական ցեղերու անուններ միայն, ինչպէս անուններ են Կիրոս, Խալֆա, Վարդան, Մակար եւ շատ շատեր, որոնց ներքեւ կան իրական նկարագիրներն ու անձնաւորութիւնները» (էջ 6)։ Այս մտայնութիւնը եղել է ի սկզբանէ և անմիջականորեն ուղղորդել նրան։ 1934 թ. մայիսի 25-ին Նիկոլ Աղբալյանին նա գրում էր. «Մեզ համար հայրենիքի գաղափարը արժեք ըլլալէ ավելի հեռավոր կախարդանք է դարձեր»<sup>9</sup>։

Պատմական հերոսն իր գործունեութեան համար պատմական փաստեր պիտի պահանջեր. մի բան, որ իր պարտադրանքով կկաշկանդէր հեղինակին կամ կփոխեր շարադրանքի բնույթը՝ այն վերածելով պատմավեպի։ Իսկ Մարտիկի գործողութիւնների մեջ հեղինակն ազատ է։ Մարտիկը նման է իր ժամանակաշրջանի պատմական հերոսներին, բայց նրանցից և ոչ մեկը չէ։ Այս մտայնութեամբ իր պատասխանն է ստանում նաև Հայկական ռոմանտիզմի երկու խոշոր ներկայացուցիչները՝ Բաֆֆու և Մուրացանի գլխավոր վեպերի հերոսների ընտրութեան հարցը։ Ե՛վ Բաֆֆու Սամվելը, և՛ Մուրացանի Գևորգ Մարգարեանին պատմականորեն վկայված իրական հերոսներ լինելով հանդերձ՝ պատմութեան համար շատ երկրորդական հերոսներ են։ Առաջին դեպքում կային Արշակունիները, կային ազդեցիկ նախարարական տոհմեր, երկրորդ դեպքում՝ Բագրատունիները, բայց հեղինակները հատկապէս երկրորդական դեմքերին ընտրեցին գլխավոր հերոսներ, որպեսզի օգտագործեն նրանց մասին պատմագրութեան (Փայստոս Բուզանդ, Հովհաննես Դրասխանակերտցի) հաղորդած մեկ ոգեշունչ փաստը, մնացած հարցերում ազատ լինեն, ստիպված կառչած չմնան վկայութիւններին և ըստ իրենց պատկերացումների հյուսեն ռոմանտիկական հայեցակարգի գրական հենքը։

«Ապիտակ ձիավորը» վեպի յուրահատկութիւնն այն է, որ հերոսները և՛ իրական են, և՛ ստեղծական, որ ավելինով է պարուրում շարադրանքի հեքիաթային-առասպելական ազատ շունչը։ Պատմական ժամանակի ու պատմական հերոսների մասին է, բայց գեղարվեստի համակարգում, որտեղ, ըստ

<sup>6</sup> Հ ա մ ա ս տ ե ղ . Նամականի, էջ 276։

<sup>7</sup> Գ. Շահինյան. Համաստեղ, Պեյրուսթ, 1961, էջ 14, 59։

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 167։

<sup>9</sup> Հ ա մ ա ս տ ե ղ . Նամականի, էջ 47։

պատմագրական հուշարկունքների, լավագույն դեպքում կարելի է կուսել հետոսների նախատիպերը<sup>10</sup> : Ըստ էության, Համաստեղը կատարել է կուսակցական առաջադրանք, որը, ինչպես երևում է նամակագրությունից, ուղղորդել է Ս. Վրացյանը<sup>11</sup>, իսկ ոգևորողները շատ էին, այդ թվում՝ Նիկոլ Աղբալյանը, Կարո Սասունին:

Չերչի Կիրոսը կերպավորում է Հրայր Դժոխքին (Արմենակ Ղազարյան, 1864–1904), Մալխասը, ով երազում էր այդի մշակել ու վարունգ աճեցնել՝ Գևորգ Չառչին (Չավուչ, Գևորգ Ղազարյան, 1870–1907): Նայիրյանի նախատիպ ընդունված է համարել Նիկոլ Աղբալյանին: Այս կապակցությամբ ավելացնենք՝ Գ. Նայիրյան ստորագրությամբ ժամանակին հոգվածներով հանդես էր գալիս Ավետիս Ահարոնյանի որդին, Հայաստանի Առաջին Հանրապետության դատախազ Վարդգես Ահարոնյանը<sup>12</sup>: Խորքում Նայիրյանը պայմանականորեն հայոց անմահ պատմիչն է՝ Խորենացին, ով Մասոյանը ձեռքին ժողովրդի հետ է բոլոր ժամանակներում:

Ընդգրկումով և կառուցվածքով սա համապատկերային հարածուն վեպ է: Կենտրոնը հայոց Սասուն աշխարհն է: Գործողությունների տարածման ընթացքում երկրով մեկ հիշատակվում են Կարին, Բիթլիս, Ադանա, Կեսարիա (Փոքր Հայքի Մաթաթ), Դիարբեքիր, Երզնկա, Դերսիմ, Խարբերդ, Տրապիզոն, Վան, Սղերդ քաղաքները, որպես տարածաշրջանային գյուղաքաղաք՝ պայմանական անունով Գարափունարը ու տասնյակ հայ և քուրդ գյուղեր՝ Բերդակ, Վարդաձոր, Հացեկ, Կարմրեկ, Թիլ, Թորթան, Քղի, Կարկառ, Գոմ, Շինավան, Շեփիկ, Այգեստան, Հնձոր, Հնագրակ, Հողգար, Խոտրձուր, Դատվան, Տանձիկ, Դղեր, Ախուռ, Ղամիչյուլ, Իզոլի, Զեյվա, Հայտարան, Քնզոր ... Հիշվում են նաև ասորաբնակ գյուղեր, օրինակ՝ Զրափանը, որի բնակիչները հայախոս ասորիներ էին, կային նաև մի քանի հայ ընտանիքներ: Անպակաս են վանքերի, լեռների, գետերի, ճանապարհների անվանումները. Բարձրահայաց վանք<sup>13</sup>, Զրաթունուկ սար, Արծվասար, Կաքավի լեռ, Չարխափան անտառ ... Վրպական գործողությունները զարգանում են հաջորդական տեղաշարժերով՝ գյուղից գյուղ, որոնց թիվը տասնյակից ավելի է: Տեղաշարժերի հետ մեկտեղ ավելանում են նորանոր հերոսներ, և դա առաջին էջերից մինչև վերջինները<sup>14</sup>:

<sup>10</sup> Հերոսների իրական կերպարները տե՛ս Ռուբէն (Ռ. Տէր-Մինասեան). Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1–7, Երևան, 1990:

<sup>11</sup> Համաստեղ. Նամականի, էջ 330–358:

<sup>12</sup> Տե՛ս նրա «Հայ գրականությունը 1919 թվին» հոդվածաշարը. – «Յառաջ» (Երևան), 29. I. 1920, 07. II. 1920, 21. II. 1920, 24. II. 1920:

<sup>13</sup> Սուրբ Բարձրահայաց Աստվածածին եկեղեցին Արղունի բերդի անմատչելի լեռան գագաթին կառուցվել է 1431–1432 թթ. միջնադարի մեծագույն հոգևոր գործիչ և տաղերգու Մկրտիչ Նաղաչի (մոտ 1400–մոտ 1470) Ամիգում թեմի առաջնորդ եղած ժամանակ: Աստվածատուր վարդապետն իր «Յիշատակարան»-ում գրում է, որ Մկրտիչ Նաղաչը նորոգել է բազմաթիվ եկեղեցիներ և կառուցել «... բազում նորաչէս, որպէս բարձր Աստուածածինն՝ ի գլուխ բարձր բերդին Արղնոյ» (Մկրտիչ Նաղաչ. աշխատ. է. Խոնդկարյանի, Երևան, 1965, էջ 205):

<sup>14</sup> Հեղինակի հետագծով պետք է շարժվել և ի մի բերել բնակավայրերի, ճանապարհների կապն ու հարյուրների հասնող հերոսների շղթան: Վեպի գիտական հրատարակության դեպքում թե՛ բնակավայրերի անվանումները, թե՛ աշխարհագրական տեղանունները, թե՛ հերոսների անուններն անհրաժեշտ է հեղինակային բնութագրություններով դուրս գրել, ավելացնել իրական տեղանուններն ու անձն-

իրավացի է Կարո Սասունին. «Ամբողջ Հայաստան մը իր մարդերով, կեանքի բազմաթիւ երեւոյթներով եւ շրջապատով կը վերակենդանանար Համաստեղին գրականութեան մէջ»<sup>15</sup>: Ստեղծվում է կենդանի իրական միջավայր՝ գործող և հիշվող հերոսների շարքն անընդհատ ընդլայնվում է և ստեղծում դիպաշարի զարգացման նոր ու նորանոր ճյուղավորումներ: Վիպական պատումի մեջ ամեն ինչ միավորված է. Արևելքն է՝ իր հազար ու մի գիշերներով, հայոց աշխարհն է՝ առասպելաբանությամբ, բանահյուսությամբ ու ավանդազրույցներով: Հայոց բնաշխարհիկ կյանքն ու կենցաղն է, հայ գյուղացու տոհմիկ նրստուկացը: Այլ կերպ սա բնաշխարհի իրական փակ կյանքը նեկայացնող բաց վեպ է, բացված գիրք: Հեղինակը ոչ թե դրսից է նայում իր վիպական աշխարհին, այլ նրա ձայնը գալիս է ներսից՝ երկրի սարերից ու ձորերից, հողի ընդերքից և եղեգան փողից: Աչքի առաջ հայոց աշխարհն է, թուրքերի և քրդերի կողմից հայկական գյուղերի թալանը, ամենօրյա սպանությունները, բռնությունները, ազգային ճնշումները: Ավերված բերդեր են ու խախտված ճակատագրեր:

Սկզբը Բերդակ գյուղն է, ազատագրական խմորումների բերդ-ամրոցի նշանակությամբ. Ռ. Տեր-Մինասյանը գրում է. «Այդտեղ մեր բոյնն է եղած եւ ամէն քարը մէկ կռիւ տուած, այդտեղ 7 թե 8 կռիւ է տեսածս»<sup>16</sup>: Հայտնի է, որ 1904-ի ամռանը գյուղում տեղի է ունեցել ազատագրական ուժերի խորհրդակցություն, որին մասնակցել է նաև Անդրանիկը: Ըստ վիպական այցեքարտի, «Բերդակը ուրիշ գիւղերու շատ չէր նմաներ: Բնակիչները կ'ապրէին առեւտուրով ու արհեստով: Շատերը շերամաբոյծ էին: Վայրը անտառոտ էր, կը պահէին այծեր: Գորգագործութիւնով զբաղվողներ ալ կային: Գիւղն ունէր իր պազարը, ուր երբեմն հեռու տեղերէ ալ ու օճառ բերող ուղտեր կը չոքէին: Շրջակա գիւղերէն քիւրտ կիներ իրենց գլուխներուն վրայ դրած կը բերէին սեր, մածուն, կարագ, ոչխարի բուրդ» (էջ 10): Հարևան գյուղերում զբաղվում էին նաև ծխախոտի մշակությամբ: Այծից բացի պահում էին սագ, հավ ու հնդկահավ: Շրջակա լեռներում անտառներ էին, գյուղամիջյան ճանապարհներ, հնօրյա բերդերի և եկեղեցիների ավերակներ՝ անցած փառքի հիշատակներով:

#### Վիպական գործողությունների ընթացքը

Ահա Բերդակում՝ ծնվում ու կյանք է մտնում վեպի գլխավոր հերոսը՝ Մարտիկը՝ ապագա Սպիտակ ձիավորը: Նրա հայրն ու մայրը նորապսակներ են եղել, երբ տան մերձակա եկեղեցու պատը նորոգող վարպետ Մարգիսը վերևից տեսել է նորահարս Մարիամին, նրա «խելքը գողացել» և կենակցել: Գյուղի աչքից ոչինչ չի վրիպում, դրանից հետո նորահարսի անվանն ուղեկ-

անունները և ծանոթագրության կարգով կցել գրքին, որի պահանջը խիստ զգացվում է:

<sup>15</sup> Կ. Սասունի. Համաստեղ. – Պատմութիւն արեւմտահայ արզի գրականութեան, Պէյրուս, 1951, էջ 184:

<sup>16</sup> Ռ. Տեր-Մինասյան. նշվ. աշխ., հ. 5, Երևան, 1990, էջ 82:

ցում են վարկաբեկիչ գրույցներ: Ծնվում է Մարտիկը՝ ամեն ինչով նման եկեղեցու պատշար վարպետին: Ամուսնու՝ Ստեփանի «Ինչպե՞ս եղավ» հարցին, ներվերու հույսով, կինն անկեղծ պատասխան է տալիս: Երկու օր անց Ստեփանը լքում է կնոջն էլ, գյուղն էլ ու հեռանում այլևս չհիշվելով վեպում: Մարիամի կապակցությունը, ինչպես հեղինակն է գրում, «Գիւղացիներն իրենց լեզուով անոր գերեզմանը փորեցին ու պատանքով իջեցուցին հող» (էջ 10), նա հալումաչ է լինում և ավանդում հոգին: Նորածինը մնում է մինուճար հորաքրոջ՝ Մաքոյի խնամքին, ով մի այծ ուներ և երկու ծիրանի ծառ: Ահա հերոսի այսպիսի ծնունդ՝ նորոգվող եկեղեցի ու Մարիամ, որոնք խորհրդանշաններ են, և նորածին, ով, ինչպես էպոսի հերոսը, ոչ թե ամսով, այլ օրով է մեծանում: Մարտիկը յոթ տարեկանում հորաքրոջ այծն է արածեցնում, հետո՝ արդեն գյուղի հոտը:

Տղայի դաստիարակությունը զբաղվում և նրան ոգի է ներշնչում համագյուղացի ջուհակ Պետոն. գրեյ, կարդալ է սովորեցնում և ընթերցում «Նարեկ»: Մեծանում է Հավլունի թուրը գտնելու երազանքով, Պղնձե քաղաքի հեքիաթներով, երևակայությունը շարժում է ավազակապետ Հաճի Մուսան, ով շուտով մտնելու էր գործողությունների մեջ: Խոսք ու գրույցի մեջ առկայծում են ֆիդայիների կերպարները, որոնց գորավոր կանչին էլ պետք է միանար Մարտիկը: Ֆիդայիների և գյուղի մեջ կապ կար:

Հերոսի դաստիարակը նաև բնութային էր. «Մարտիկ կը մոռնար իր ու Նարեկի բառերը ու յաճախ լուռ կը դառնար բնութեան մեկ ուժեղ ամբողջությունը» (էջ 22): Այսպես հովվություն անելով, հայոց պատմության ու հայոց բնաշխարհի դասերը սերտելով՝ Մարտիկը դառնում է 17 տարեկան, ում իր հոտն է վստահում անգամ գյուղի հարուստ երեսփոխը: Տղայի համբավն ավելի է մեծանում, երբ ձեռքի գավազանով սպանում է հսկայական մի գայլ, խեղդամահ անում և մորթը ուսին գցած մտնում գյուղ: Սա արդեն իսկ դյուցազներգություն է միապաղաղ իրականության մեջ: Էպոսում առյուծ պատռող-ձեռող Առյուծ Մհերն էր, այստեղ՝ գայլ խեղդող Մարտիկը: Նա ծնվել էր ֆիդայի դառնալու համար, իր լավագույն որդիներից դա՛ էր երկրի պահանջը:

Այս հեքիաթի մեջ ծնվում է սերը: Անտառներով, հովիտներով, բացատներով, սարերով ու ձորերով իր հոտն արածեցնող Մարտիկը հանդիպում է քուրդ հովվուհի Ջեյնապին: Սա վեպի սիրային ճյուղի առանցքային կերպարն է: Ջեյնապը մոր կողմից հայ է: Հայրը բռնի է տիրացել մորը, ով էլ հարմար մի պահի վրեժ է լուծել նրանից և դաշույնը խրել սիրտն ու սպանել: Մայրը հեռացել, Բիթլիսի կողմերում նոր ընտանիք է կազմել, իսկ աղջիկ երեխան մնացել է հորեղբոր խնամքին: Քրդացած գեղեցկուհի Ջեյնապը գիտի, որ ինքը մոր կողմից հայ է, նա արդեն մերժել է Հազարան լեռան չոբանի ամուսնության առաջարկը: Մարտիկն ու Ջեյնապը միասին հովվություն են անում, տղան աղջկան ազատում է Հազարան լեռան չկայացած փեսացուի հետապնդումներից, հավաքում ու նրան է տալիս կտրված մանյակի շաղ եկած հուլունքները: Ծանոթությունը շատ արագ վերածվում է մտերմության, մտերմությունը՝ սիրո. «Մարտիկ ու Ջեյնապ գիրկ գրկի շաբաթներ անցուցին...» (էջ 36): Մարտիկն աղջկա համար սրինգ է նվագում և երջանկացնում նրան: Նրանց, ասես անտառների Պան, հսկում է մի քուրդ ծերունի, որ կանկառ

(մարեմխոտ) էր հավաքում: Իսկ անտառը լի էր բարիքներով, որը նաև նրանց պահպանն էր ...

Ձկայացած փեսացուի կատարած գողության դիմաց Մարտիկը փախցնում է նրա ձին և, սար ու ձոր չափելով, փորձում աղջկա համար եղնիկի ձագ որսալ: Դարուփոսերի մեջ ձին ծառա է լինում, Մարտիկն ընկնում է ու վնասվում: Հովվերգությունն ավարտվում է: Մինչ Մարտիկն ապաքինվում է և նետվում դեպի Ձեյնապը, քուրդ ցեղապետ Հաճի Մուսան տիրանում է նրան ու դարձնում իր կինը: Հաճի Մուսան կանանցով լեցուն ուղտի կաշվից նախշազարդված գույնզգույն վրաններ է ունեցել՝ հույներ, թրքուհիներ, պարսկուհիներ, արաբուհիներ, տարաշխարհիկ այլ գեղեցկուհիներ, որոնք իրենց անուշաբույր մարմիններով մերկանդամ երգել ու պարել են նրա համար, զվարճացրել պարտություն չտեսած դաժան ավազակապետին ... Բայց այս մեկն ուրիշ էր, վեր՝ սոսկ իգություն հրապույրից, և անունը՝ սեր:

Ձեյնապի հետքերով Մարտիկը հայտնվում է Հաճի Մուսայի գյուղում, դառնում նրա դարպասի պատը նորոգող որմնադիր վարպետի՝ խալֆա Մակարի օգնականը: Միրահարները բոլորից գաղտնի գտնում են իրար, բայց արդեն անհասանելի են ու անմատչելի: Մեծտեղում Հաճի Մուսան է՝ իր ուժով, հեղինակությամբ ու դիրքով: Երկունս էլ հիշում էին սիրո երգումները. «Մենք նորէն պիտի գտնենք իրար ...» (էջ 77): Մինչ վարպետ Մակարը փորձում էր Մարտիկին հեռու պահել այդ «օտար» սիրուց՝ «... գեղեցիկ մզկիթ մըն է Ձեյնապը, տղաս: Անոր մեջ խունկի հոտ չկայ, մեր շարականներուն ձայնը չկայ: Հայ աղջիկը տարբեր է, տղաս, հայ աղջկան սիրտը խունկով ու շարականով լեցուն եկեղեցի մըն է: <...>: Դուն պիտի սիրես այն տեսակ աղջիկ մը, որ քեզի թեև տա գմբէթին վրայ խաչը դնելու» (էջ 71, 103), – սերն է՛լ ավելի է խորանում. «Ձեյնապը լերան մը ծանրութիւնով նստած էր անոր մէջ» (էջ 113):

Աստիճանաբար պատումը մտնում է բուն վիպական հուն, գործողությունների մեջ է ներքաշվում Վարդաձոր գյուղը, որ Բերդակից հետո դառնում տարածքային հիմնական կենտրոնը՝ մարդիկ, կապեր, կենցաղ և հիմնականը՝ հայրենասեր ուժեր, որոնց հավաքատեղին ջրաղացն էր: Հայություն հիմնական պատկերը սա է՝ քրդերի և թուրքերի հաճախակի հարձակումներ հայ գյուղերի վրա, թալանված տներ, ավերված եկեղեցիներ ու մատուռներ, ճանապարհին ունեզրկված, ծառից կախված հայ վաճառական, ծեծված, նվաստացված ու սպանված հայ հոգևորական, մահվան սպառնալիքից լարախաղացների ծաղրածուի (յալանչու) վերածված հայ որմնադիր վարպետ: «Երեք օր Վարդաձորի վրայէն թուչուն չէր կրնար անցնիլ: Գիւղի բանիմացները ախոռներու մէջ բանտարկուած էին: Դաշտի աշխատանքները երեսի վրա ձգուած էին: Ժանտարմներուն համար կը մորթեին հաւեր, ոչխարներ: Եկեղեցիին մէջ ձիեր կապած էին: Փողոցներուն մէջ թափուած ցորեն, տուններուն մէջ կոտորուած փեթակ: Գիւղի մեծաւորները օրը մի քանի անգամ ծեծի տակ էին: <...>: Վարդաձորը բաց գերեզման էր դարձեր» (էջ 142):

Վարդաձորը դատարկելն ու գյուղովի սար բարձրանալը պատահական չէ, քանի որ ջարդերից խուսափելու նպատակով իրականում այդպես եղել է այլ գյուղերի հետ, և իրենց տեղերում նրանց առաջնորդել են Անդրանիկի ու Գևորգ Չաուչի նման հերոսները:

Վեպում չըջանառվող հարյուրավոր անունների միջից Վարդաձորում առանձնանում են հերոսներ և դառնում գործող հիմնական կերպարներ. նրանց մեջ՝ հսկայական ուժի տեր, միաչքանի, ինչպես կրկնույ, միամիտ Գոթան Կիրոն, ում հավատացրել էին, «որ գիշեր ժամանակ Վարդաձորի լեռը ոտքի կ'ելլե ու կը քայե» (էջ 105), Ֆիդայի Մարգարն ու մահացու հիվանդ Չեչո Գրիգորի կինը՝ «ժանդարմ ծեծող», հարկ եղած դեպքում տղամարդու պես հայհոյող, բայց երիտասարդ ու հմայիչ Սուման, որոնց գաղտնի սերը ողբերգական ավարտ է ունենում Ֆիդայու համար: Առանձնանում է Վարդանն իր խմբով, Մուշի ու Բիթլիսի կողմերում հայտնի ժողովրդական հերոս Արջ Սաքոն, ջրաղացպան Նավոն:

Ընդհանրապես, թեև սա 5–7 հիմնական հերոսի վեպ է, բայց գրեթե յուրաքանչյուր էջում գործողությունների մեջ ներքաշվող և կերպավորվող անունների շարքը շատ խիտ է ու բազմազան, և ամեն մեկն իր տեղն ունի, չզբաղված, անելիք չունեցող հերոս չկա, ինչպես կյանքում, թեև կա ավելորդ մարդ, բայց չկա պատահական մարդ:

Ամենից շատ հերոսներ ունեցող հայ վեպը Դեմիրճյանի «Վարդանանք»-ն է՝ 370, բայց «Սպիտակ ձիավոր»-ում այդ թիվը քառակի ավելի է: Հայ գյուղի պատկերը տրվում է գրեթե բոլոր հնարավոր կերպարների միջոցով՝ անպակաս են իրենց վաստակն ստեղծող հողի մշակները, գյուղի ներքին կենցաղն ի մի բերող կանայք ու տղամարդիկ, անասնապահներ, այգեպանը, արհեստավորը, հովիվը, հեքիմն ու ջրաղացպանը, դիրքապահն ու Ֆիդային, պատշարն ու ջուլհակը, ասկերն ու ջահելը, անգամ հարբեցողը, իսկն ու խելագարը (Սարխոջ Գևորգը, Մեվլոն՝ Վարդաձորի դաշտերի խելագարը):

Առանձնանում է քուրդ ավազակապետ Պեքիրը՝ հերթական մի գայլ այծերի հոտի մեջ, որ խափանում է Վարդաձորի տոնահանդեսը, հարամում ամեն ինչ. «Չգիտե՞ք, որ առանց իմ հրամանին զուռնի ու դհոլի ձայն չպետք է ելլէ Վարդաձորի մէջ: <...>: Երեք օրեն Վարդաձորեն կ'ուզեմ ետժը սայլ ցորէն, 40 ջվալ ալիւր, 20 էջի բեռ բամպակ, երկու լիր արծաթեղէն: Վաղը տասը սայլ ու երեսուն տղամարդ կը դրկեք, որ ձիերուս ախոռ չիւնէն» (էջ 118, 120): Նրա դեմ ընդվզում է Մարտիկը, փայտե թոխմախը (փայտամուրճ, կոպալ) վրիպանքով նետելով նրա վրա և իր վարպետի հետ բանտարկվում:

Պեքիրից ետ չի մնում կինը՝ Ջարեն, որ Մարտիկին հպատակեցնելու փորձերով ուզում է իր տիրական ուժի գիտակցությունը վերգգալ: Ինքն իրենով լիացած Ջարեն «ունեք ամազոնի հասակ եւ հարուստ մարմին ու երկու վայրի կաքաւներու նման հպարտ կուրծք: <...>: Ունէր արեւին տակէն անցնող վագրի մը շուքին չափ սեւ վարսեր» (էջ 122):

Ահա այս պայմաններում Վարդաձորում աստիճանաբար ուժեղանում է Ֆիդայական շարժումը: Գլխատվում է Պեքիրը: Մարտիկն ազատվում է գերությունից և, որպես վերջին անպատվություն, անարգում Ջարեին՝ կտրում մազերն ու անտառում կիսամերկ կապում ծառին: Ամուսնու կտրված գլխի վրա Ջարեն վրեժխնդրության ուխտ է անում և կարճ ժամանակ անց զինված գորքի վրաններ խփում Վարդաձորի լանջերին ու համագործակցում թուրքական բանակի հետ:

Այսքանից հետո է, որ Մարտիկը դառնում է Սպիտակ Ձիավոր, վերածվում հրեղեն տարերքի և կայծակի պես շանթահարում թշնամիներին: «Ամ-

պի պէս թեթեւ, հովի պէս արձակ» (էջ 141) սպիտակ ձին նա խլում է իր ձեռքով ջախջախված ժանտախտակերպ թուրք «քէօսէ հարիւրապետից» (նույն տեղում) և այնպես ձուլվում ձիուն, որ ասես նրա հետ էլ ծնվել էր որպես ձիամարդ կամ մարդաձի: Նրա ձեռքին ասես Սասնա Դավթի Հավլունի թուրն է: Հեղինակավոր ձայնով պատմում էին որ Սպիտակ Ձիավորի թուրը «հինաուրց եկեղեցիի մը փլատակներուն մէջէն հանուած է» (էջ 390): Նրա շուրջ հարյուրներով զինավառ խմբեր են հավաքվում, և նրանք իրենց «բոցե թեւերով» (էջ 358) միշտ այնտեղ են, ուր բռնադատված հայուկթյունն է:

Թուրքական ուժերն ավելացնում են ճնշումը՝ Վարդաձորում երեխա իսկ չպետք է ողջ մնար, էլ ո՞ւր մնաց Վարդանի խումբը: Գյուղը դատարկվում է, անասուններով, վրաններով բարձրանում սարը: Այստեղից էլ պետք է բռնկվեր ապստամբուկթյունը և շարդեր Սելիմ բինբաշի 600 հոգանոց զորքը:

Ահա այս պահից սկսվում է Սպիտակ Ձիավոր Մարտիկի հեքիաթը: Արդեն նա աներևույթ է, նրա մասին միայն պատմում են, լուրեր փոխանցում, որովհետև նրան չեն տեսնում, միայն լուրն է հասնում, թե ինչպես այստեղ կամ այնտեղ նա պատուհասեց թուրք կամ քուրդ մարդասպաններին: Կերպարի այսպիսի պատկերումը հիշեցնում է հին հունական թատրոնը, երբ որոշ հերոսների գործողությունները չէին պատկերվում, այդ մասին միայն խոսվում էր տեղեկություն հաղորդելու կարգով: Մարտիկի կերպարը դառնում է հայ ժողովրդի երազանքի մարմնացում, այն ուժը, որով պետք է դիմագրավեր թշնամուն: Բռնության ենթարկվող բոլոր հայ գյուղերի բնակիչների խոսքը նույնն է. «Մարտիկը, որ էս կողմերը ըլլար, մենք էս հային չէինք իյնար» (էջ 191): Թուրք ժանդարմներին նա հայտնի էր Մարութ Ստեփան օղլի Մարտիկ անունով, որի գլուխը՝ որպես «Ֆիրար», գնահատվում է հազար ոսկի:

Ժողովրդական հերոս Մարտիկի կերպարը նմանեցումների է մղել: Ըստ Գ. Շահինյանի՝ Մարտիկը մարմնավորում է «Աղբիւր Սերոբէն մինչև Գէորգ Չաոււշ եւ Անդրանիկ»<sup>17</sup>: Գրեթե նույնն է կրկնում Գ. Սևանը. Մարտիկը «... էպոսի Սասնա Դավթի տարբերակն է, որ հեղինակի մտքի ու երևակայության մեջ ունի և ունեցել է նաև իր բազմաթիվ բնօրինակները, որոնք եղել են և կոչվել Անդրանիկ, Աղբյուր Սերոբ, Գևորգ Չավուշ»<sup>18</sup>: Ս. Դանիելյանը նախ սևեռվում է Անդրանիկի կերպարին, այնուհետև ընդարձակում ծանոթ անունների շրջանակը. «... այդպիսին էր Զորավար Անդրանիկը, որի նախատիպ մեկ տարբերակը Մարտիկն էր»<sup>19</sup>: Այնուհետև, ըստ նրա, կերպարը հարստացել է «Գևորգ Չավուշի, Անդրանիկի, մյուս ֆիդայի հերոսների իրական ներկայանակով»<sup>20</sup>, «Հեղինակն ինքն էլ բացառիկ կարևորություն է հաղորդում կերպարին՝ շեշտելով, որ նրա մեջ խտանում են ազատագրական պայքարի մի շարք առաջնորդներ, որոնց թվում և Անդրանիկը, որը հայտնի էր «Սպիտակ ձիավորը» պատվանունով»<sup>21</sup>: Հաջորդում են կերպարների ընդհանրության համար զուգահեռներ, որից հետո ավելացնում է. «Այն ինչ

<sup>17</sup> Գ. Շահինյան. նշվ. աշխ., էջ 161:

<sup>18</sup> Գ. Սևան. Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր. 1946–1985, Երևան, 1997, էջ 184:

<sup>19</sup> Ս. Դանիելյան. Ամերիկահայ վիպագիրներ, Երևան, 1990, էջ 19:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 20:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 25:



վերագրվում է Մարտիկին, ամբողջությամբ, առանց հավելումների կարելի է դիտել հասցեագրված և՛ Անդրանիկին, և՛ Աղբյուր Սերոբին, և՛ Գևորգ Չավուչին ...»<sup>22</sup>:

Այսպես Մարտիկի կերպարի մեջ կարելի է տեսնել հայրենասեր բոլոր հերոսներին՝ Հայկ Նահապետից մինչև Անդրանիկ: Բայց Մարտիկն ավելի հեքիաթի հերոս է, հեքիաթային կերպար, որի արարչությունն ազգային դյուցազներգությունն է, ինչն իր մեջ խտացնում է ժողովրդի ազատագրական պայքարի բոլոր ձգտումները, մի բան, որ բխում է վեպի ու հատկապես Մարտիկի կերպարի բուն հայեցակարգից: Դրանից հետո նրան որ պատմական հերոսի հետ ուզում ես նմանեցրու, և այդ հերոսները կնամանկեն, իսկ հաշվի առնելով պատկերված որոշակի ժամանակը՝ հատկապես Ֆիդայիներին:

Սպիտակ ձիավորն անընդհատ պտտվում է Ձեյնապի շուրջբոլորը: Աշուղ Նազարը նրանց սիրո երգն է հյուսում, իսկ Հաճի Մուսայի լուռությունը երկաթի ծանրություն է ստանում: Այս ընթացքում Ֆիդայիները կոպում են թուրքական կանոնավոր բանակի դեմ: Կովի թեժ օրերին Ձեյնապը փախչում է Հաճի Մուսայից և, Մարտիկին հանդիպելու հույսով, գնում լեռները: Ձեյնապին ընդունում են ինչպես լեռների հարսնացու: Բայց նրան ու Մարտիկին փիճակված չէր հանդիպելու բարեբախտությունը. նախատեսված հանդիպումից առաջ Հաճի Մուսայի հետ թեժ կովի ժամանակ Մարտիկը սպանվում է, իսկ Ձեյնապը շատ ավելի ուշ ետ է վերադառնում, որպեսզի վերստին փորձի գտնել Մարտիկի հետքերը:

Ընդհարումը նախ Վարդաձորի շուրջ է, այնուհետև ընդգրկում է ամբողջ հայոց աշխարհը: Հայ գյուղացու գայրույթն այնտեղ է հասնում, որ դիմում է պատասխան քայլերի և հրդեհում քրդաբնակ Ձեյվա գյուղը: Սա նաև հոգեբանական արժանապատվության պահ է, որովհետև ժողովուրդը հաղթահարում է հալածվածի խեղճությունը և հավատում իր ուժերին: Երկու ասորի գինետանը խոսում են. «... էս հայերը ի՞նչ կ'ուզեն էս աշխարհէն: <...>: Ատորին, չէրքէզը, սուրիացին, ես ինչ գիտեմ, հազար ու մի ազգեր եօլա Կերթան, Փախաթ էս հայը եօլա չկրցավ երթալ ու աշխարհը կրակի է զարկեր՝ իրաւունք ու արդարութիւն կը պահահաննէ» (էջ 462):

### Ֆիդայիների աշխարհը

Համաստեղն աննկատ մուտք է գործում Ֆիդայիների առասպելական աշխարհը, ովքեր նրան հիշեցնում են Օլիմպոսի վրա հավաքված Հոմերոսի հզոր հերոսներին: Ահա լեռների որդիները նստած են ժողովի: Նրանց գաղափարական առաջնորդը հայկական շարժման ղեկավար, ուսսական պետական համալսարանի նախկին դասախոս, ուսուցիչն ու գերմաներեն մի քանի գրքի հեղինակ դոկտոր Նայիրյանն է, ով թողել է ամեն ինչ և նվիրվել գլխավորին՝ ազգային գործին, իրականացրել է սուլթանի մահափորձն ու կազմակերպել

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 27:

գյուղական դպրոցների գործունեությունը, ինքն էլ, թողնելով ժնեյան միջավայրը, աշխատել է ուսուցիչ, անգամ, մտահոգվել քրդերի համար այբուբենն ստեղծելու հարցով: Ահա, նրա ղեկավարությունում առանձնանում են կերպարներ՝ Վարդան, որ ժնեյում ուսանող էր և, լսելով Նայիրյանի դասախոսությունը, նվիրվում է ազգային գործին, Չերչի Կիրոս, Արջ Սաքո, Սերոբ, Կարմիր Սերոբ, Խեչո, Մարգար: Ազնվություն, անձնագոհություն, նաև մարդկային թուլություններ. «Իր ծանր զանգուածով ու արջի կերպարանքով Սաքո երկնքի մօտ ապրող իմաստուն երախայ մըն էր: <...>: Այն օրէն ի վեր, երբ Ֆէտայիներուն մէջ կնոջ ինդիր մը մէջտեղ կուգար Սաքոյի մարմինը սեւ ցաւ առնող ձիու մը պէս կը դողար ...» (էջ 315, 317):

Բացվում են շատ փակագծեր: Ֆիդայիների շարքը մտած մաքսանենգ Կարպիսը մի աննշան վեճի պատճառով մատնում է զենքի պահեստների տեղը, թուրք կառավարությունից ստանում ամսաթոշակ, ի վերջո, ահաբեկության ենթարկվում ճակատին ստացած գնդակով: Ահաբեկիչը 20-ամյա ուսանող Կարոն էր, որ հետո լեռները պիտի ելներ, բայցև դառնար Զարեհ հանդեպ տաճած սիրո զոհը, քանի որ անօրեն տարփանքի պատճառով պիտի զրկվեր Ֆիդայու կոչումից, զենքը հանձնեք և իջներ սարերից:

Ամեհի է Մարգարը կույի պահին, նույն մոլեգնությամբ նրա կողքին է Սուման: Դադարին, երբ իր շուրջը հավաքված կանանց Սուման կույի մասին էր պատմում, իսկ նրա կողքով անցնում է Մարգարը, «Սուման զգաց, որ լեռներու վրայէն ծանրութիւն մը կ'անցնէր» (էջ 233): Այս ծանրության դողն անցնում է ոչ միայն նրա հոգու, այլև մարմնի միջով. Պզկան քարերը գիշերով ջրի գնացած Սումայի ու Մարգարի հանդիպումը գաղտնի չի մնում, գյուղը ամեն տեղ աչք ունի, և Ֆիդայությունն ստիպված հրաժեշտ պիտի տա նաև Մարգարը, ինչը նա անում է ճակատագրական մահացու կույի մեջ նետվելով: Ազատ սերը այսպես պատուհասում է ումանց, որովհետև լեռնային վրիժառուների օրենքով չէր<sup>23</sup>:

Այս հարցերն առանձին դեպքերի նկարագրությամբ արծարծված են «Կինը լերան վրա» գլխում: Սարկավազ Սարգիսը նույնիսկ համոզված էր, որ «... մարդուն շուրջ միշտ աներեւոյթ կիներ կան» (էջ 310): Առաջինը Կարոն է, ում «լուրթեան մէջ կնոջ մը կերպարանքը կը դառնար» (նույն տեղում). այդ կարտոտով էլ նա իջնում է լեռներից: Սիրո այս փակ առեղծվածը համարվում է ոչ միայն մարդկային թուլություն, այլև ազգային չարիք. «Որ էսպես երթայ՝ հայոց աշխարհի վրայ ժածքն ալ կուգայ, թուրքն ալ» (էջ 331): Մարգարի կապակցությամբ. «Այո՛, այո՛, եթէ Մարգարը ծոխ հայոց աշխարհի արեւը թերս կը ծագի, ցորենները կը ժանգոտին ...» (էջ 311): Հրացանները, որ սարից իջնողները պարտավոր էին հանձնել, նրանց համար տառերի ձև ունեին. «Առքօն գիտեր նաեւ, որ հայկական տառերը թիւֆէնքի ձև ունեին» (նույն տեղում), այսինքն՝ սրբություն էին:

Կանանց «զարհուրելի» փորձանքի կապակցությամբ՝ որպես դաս, հիշվում են Ֆիդայիների հետ կապված ու անցած-գնացած ճակատագրական

<sup>23</sup> Դատապարտված սիրո այսպիսի մի իրական պատմություն է ընկած Կ. Զարյանի «Տատարագոմի հարսը» պոեմի հիմքում (Բոստոն, 1930), որի տպագրությունը նախորդել է Համաստեղի վեպին և վատահաբար ինչ-ինչ ազդակներ հաղորդել:

պատմություններ: Այդ փորձությունը վեպում ենթարկվում են ֆիդայիներ Կարոն, Մարգարը, Առքոն և զբանով ստորագրում իրենց դատավճիռը: Այս հարցում ֆիդայիները վերահսկում էին իրար և որևէ չեղում նկատելիս հայտնում, ժողով գումարում ու դատավճիռ կայացնում. «Լեռը կարծես ձեռքը իր ճակատին տարած էր ու ինկած ծանր խոկումներու մէջ» (էջ 314):

Հերոսացումից առաջ հուզիչ է հրաժեշտի տեսարանը՝ բանջարքաղի դուրս եկած լեռնային գեղեցկուհի Սուման և լեռների հավատարիմ որդին՝ Մարգարը, վերջին անգամ պիտի հանդիպեն: Վերջինիս գիտակցված մահը ներկայացված է մի առանձին վերնագրի ներքո՝ սիրո հրդեհին մատնվածի և իր արարքի հետևանքը տեսնողի ողբերգական, հերոսական ու ազդեցիկ մահ. կա՛մ, որպես ամուսնացած կին, դավաճանության համար Մարգարը Սումային պետք է սպաներ ու վերադառնար ընկերների մոտ, կա՛մ հերոսական սխրանքով ավարտեր իր կյանքը: Միջին ճանապարհ չկար, որովհետև ինքը միջին մարդ չէր. հերոսների ճակատագիրը սխրանքն է, քանի որ «... Ֆէտայու օրէնքը հրացանէն դուրս թռած գնդակին պէս անողոք է» (էջ 329): Սիրո և գին-վորության պատիվը կա այնքանով, որքանով սերը գողացված չէ, անօրեն չէ: Այստեղ սերն անօրեն է: Բայց ո՞րն է սիրո օրենքը, երբ դրանից է սերը փախչում ... Նաև դրա համար է, որ Սումայի արարքը հոգեբանորեն պատճառաբանելու նպատակով վիպական գործողությունների ամբողջ ընթացքում հեղինակը նրա ամուսնուն պատկերում է անկողնային հիվանդ, մերձիմահ վիճակում:

Այլ է Կարոյի տարբերակը, ով գերության ճանապարհով հասնում է վրիժառու ամազոնուհու կերպարանք առած և քուրդ գործի գլուխ անցած իր համար ցանկալի Չարեին, իսկ վերջում՝ որպես դավաճան, գնդակահարվում Արջ Սաքոյի ձեռամբ: Դավաճանը վերստին սերն էր:

Մարտիկի և Հաճի Մուսայի հակամարտությունն ավարտվում է կատաղի կռիվով: Հաճի Մուսան ծանր վիրավորվում է, իսկ Մարտիկի սպանությունը վեպի երրորդ մասում («Կապույտ յուղունքով գլուխը») խարխլում է վիպական կառուցվածքը: Դրանից հետո վեպը շարունակվում է 250 էջից ավելի արդեն կորցրած առանցքային ուղղվածությունը: Գործողությունների մեջ գլխավոր հերոսի դերը ստանձնում է Չերչի Կիրոսը, բայց վեպի գեղարվեստական ամբողջականությունը խաթարվում է:

### Ազատագրական պայքարի ուղին

Սեյիմ բինբաշին իր աչքով է տեսնում սպանված Մարտիկին և ականջի կապույտ հուլունքով նրա գլուխը նվեր տանում Չարեին: Հայերը մեծից փոքր ողբում են Սպիտակ Ձիավորի մահը, իսկ իրենց ազգային կերպարը վերականգնած մի քանի արհեստավորներ գողանում են թշնամու ավար դարձած նրա գլուխը ու գաղտնի թաղում:

Թշնամին մնում է թշնամի, բայց Հաճի Մուսան իր հերթին է գնահատում Մարտիկի սխրանքը. «Ինձի համար թշնամին ավելի մեծ արժէք եղած է քան բարեկամը, որովհետև թշնամին աւելի շիտակ է ու անկեղծ, երբ կռիվ կ'ընէ, ճակատ ճակատի: Բարեկամը, չգիտես թէ ե՞րբ եւ որտեղէ՞ն պիտի իջեցնէ իր հարուածը» (էջ 527): «Պարտուած Հաճի Մուսան կարծես աւելի պարտուեցավ Մարտիկին սպանութիւնով» (էջ 528), – կերպարն ամբողջացնում է հե-

ղինակը: Հաճի Մուսայի հանդեպ այս դրական անդրադարձը, մանավանդ որ թշնամանքը սոսկ կնոջ՝ Ջեյնապի համար էր, աստիճանաբար նախապատրաստում է հայ-քրդական դիվանագիտական ու ռազմական դաշինքն ընդդեմ թուրքական բռնապետության: Իսկ Հաճի Մուսայի կերպարը լրացվում է նաև տոհմի անցյալ փառքով, նրա դաստիարակությամբ, որով զբաղվել է քուրդ բանաստեղծ ու բանահավաք Ահմեդ Հանին և դյուցազներգություններով ու հեքիաթներով բորբոքել նրա երևակայությունը: Հիշողներ կան, որ այդ քուրդ տոհմը նախկինում խաչապաշտ է եղել, նրանց տանը մետաքսների մեջ փաթաթված սուրբ Ավետարանը տեսնողներ են եղել:

Հաճի Մուսան ճշտում է քրդերի պայքարի նպատակը. մինչև հիմա այն եղել է հայ գյուղերի թալանը, ինչը նաև թուրքերի սրտով էր, մինչդեռ այն պետք է ունենար քաղաքական կողմնորոշում:

Ջերջի Կիրոսի (կուսակցական գյուղական մի վարժապետ նրան դիմում է «պր. Կիրակոս», էջ 560) կերպարը հասունանում է ամբողջ վեպի ընթացքում: Հեղինակը նրան ներկայացնում է բնիկ մշեցի, ճեմարանի թերավարտ ուսանող, ցածրահասակ, նիհար, որի գործողություններն անչեղ են ու հետևողական: Մարտիկի հայտնությունը նաև Կիրոսի շնորհքն է: Նկատելի գործողություններով կամ աննկատ երևույթով նա ամենուր է: Ասեղ, հուլունք վաճառող թուրք, քուրդ չարչիի երևույթով նա ելումուտ ունի ամեն մի գյուղ ու քաղաք: Տեսնում, լսում է թշնամուն և ուղղորդում ու կազմակերպում յուրայինների գործողությունները: Իսկ յուրայինների կապակցությամբ «Կիրոս գիտէր, որ ամէն մէկ հայ չգրված գիրք է, առանձին պատմութիւն է» (էջ 684):

1900–1904 թվականները Հրայր Դժոխքի անունով Ռ. Տեր-Մինասյանը համարում է «Հրայրեան շրջան», ավելացնում է ուղում էր նմանվել Աղբյուր Սերոբին<sup>24</sup>, նա նաև Սասունի սիրելին էր<sup>25</sup>: Կ. Սասունին իր հերթին է բացառիկացնում նրան. «Հ. Յ. Դաշնակցության երեք անմահ հիմնադիրներու կողքին, իմ համոզումով, Հրայր կը ներկայանայ չորրորդ հիմնադիրը եւ այն առաւելութեամբ, որ Հրայր կը հանդիսանայ երկրի յեղափոխական շարժման հիմնադիրներէն մեկը: <...>: Ան երկրի յեղափոխական շարժման գլխավոր սիւնն է»<sup>26</sup>:

Մարտիկի մահից հետո վիպական դիպաշարի շարժիչ ուժն այսպիսով դառնում է Ջերջի Կիրոսը: Նրա գործողությունների շրջագծում Համաստեղը ուժեղացնում է ՀՅԴ կուսակցական կոմիտեների, կուսակցական գործիչների անընդհատ ներկայությունը մե՛կ այս գյուղում, մե՛կ այն: Անպակաս են կուսակցական հանձնարարականներն ու նամակները: Պարզ են դառնում ժողովրդական պայքարի կազմակերպիչների անուններն ու հասցեները, և հստակվում է գործունեության առաջիկա ծրագիրը՝ որպես հայ-քրդական ռազմաքաղաքական դաշինք: Վիպական գործողություններն այդուհետև զարգանում են այդ ուղղությամբ: Իսկ դա նշանակում էր, որ Կիրոսը պետք է

<sup>24</sup> Տե՛ս Ռ. Տ է ր-Մ ի ն ա ս ե ա ն. նշվ. աշխ., հ. 3, Երևան, 1990, էջ 198, 207:

<sup>25</sup> Ռ. Տ է ր-Մ ի ն ա ս ե ա ն. նշվ. աշխ., հ. 1, Երևան, 1990, էջ 116:

<sup>26</sup> Կ. Ս ա ս ու ն ի. Հրայրի դերը. ակնարկ մը անոր յեղափոխական նկարագրին վրայ. – «Հայրենիք», 1931, թիւ 4, էջ 72–88:

լեզու գտներ ամեն տեսակի քուրդ ավազակապետների հետ, որովհետև դրուժյան տերերը նրանք էին: Իսկ նրանց ու նրանց աշխրաթների համար առկա թալանը գերադասելի էր հեռանկարային դաշինքից: Այս կարգի դժվարություններով հանդերձ նպատակը դառնում է իրական. «Երբ Ձերջի Կիրոս կը խոսեր Քիւրտիստանի մը մասին, Հաճի Մուսային այնպէս կը թուէր, որ Քիւրտիստանի մը տիրանալ ավելի հեշտ կռիւ է քան ազատել ու տիրանալ Ձեյնապին» (էջ 610): Ձեյնապը Հաճի Մուսայի գայթակղութեան քարն էր և նրա վրա ազդելու միակ իրական միջոցը: Եվ ահա Հաճի Մուսայի շնորհիվ «... քրտական շարժումը առած էր դիմագիծ ու նկարագիր» (էջ 681):

Դարձի այս ճանապարհին էին նաև քուրդ այլ շեյխեր ու ցեղապետներ՝ Խալիլն ու Սատոն, որոնց կերպարները ևս բավականին հիմնավորված են ու լուսաբանված: Ելակետն այս է. գաղափարապես դաստիարակել բոլոր այն ցեղապետներին, որոնք «գործիք դարձած են թուրք կառավարութեան ու պատուհասը հայ ժողովուրդին ու գիւղերուն» (էջ 631):

Ի վերջո, Թուրքիայի արևելքը պատմական Հայաստանի ամբողջ տարածքով բռնկվում է հայ և քուրդ ուժերի ապստամբութեամբ, և նրանք իրենց ձեռքն են վերցնում բոլոր մեծ քաղաքները. «Բոլորը կռուի ելած են մեր պապերու աշխարհէն թուրքը քշելու» (էջ 731): Համաստեղի վիպական պատկերացումների մեջ ստեղծվում է Հայաստանի Հանրապետություն և երկրի մայրաքաղաք է հռչակվում Կարինը («Նոր տարի» բանաստեղծության մեջ Կարինը հայոց մայրաքաղաք էր երազում նաև Ռ. Պատկանյանը): Թուրքիայի մնացորդը դառնում է հաշմանդամ մարմին: Վարդաձորում նոր եկեղեցի է կառուցվում և Մարտիկի անունով օծվում սուրբ Մարտիրոս:

Վեպը սկսվում է Բերդակի վանքի նորոգման տեսարանով և ավարտվում վանքի վարպետից սերված Մարտիկի հիշատակին կառուցվող եկեղեցիով: Շինարար վարպետը պետք է լիներ Մարտիկի ուսուցիչ Մակարը, ով պատեհրագմի ժամանակ Փոքր Մհերի պես փակվել էր Բարձրահայաց վանքում:

Բոլոր ուժերը հավաքվում են Վարդաձորում՝ նշելու հաղթանակը, որ դառնում է համաժողովրդական տոնախմբություն և էլ ավելի թեժանում, երբ, ինչպես հին հունական թատրոնում էր, լուր են բերում, թե վերջապես հանձնվել է թուրքերի հրամանատար Սելիմ բինբաշին: Իսկ Ձեյնապն ապրողների մեջ Մարտիկին էր որոնում: Առասպելի պես բերանից բերան է անցնում, թե Մարտիկը ողջ է, թեև ոչ ոք նրան չի տեսել:

Այս երջանիկ ավարտն ըստ Համաստեղի ուսմանտիկական աշխարհայեցողության ներկայացվում է որպես պատմության վիպական տարբերակ, բայց պատմական իրականությունն այլ էր՝ այն, որ 1894-ից ծայր առան հայկական ջարդերը և թուրքի համար ոճիրը դարձավ պետական ծրագիր:

Հայկական հարցի լուծման նոր ուղիների տեսլականը դառնում է վեպի առանցքային գաղափարական գիծը: Այս ճանապարհին վիպական գործողություններն առաջ են գնում դիպաչարային նորանոր ճյուղավորումներով նոր հերոսներ, նոր պատմություններ: Իսկ ղեկավար միտքը՝ դոկտոր Նայիրյանը, մեկ Փարիզում է, մեկ Պարսկաստանում ու մեկ էլ լեռներում՝ Փիղալիների կողքին:

Վեպում ակնարկներ կան Բաղկանյան պատերազմի մասին, որ իր հերթին պետք է թուլացներ թուրքիային և նպաստեր հայ-քրդական ռազմական գործողությունների հաջողությունը:

Ձերչի Կիրոսի կերպարի մեկնությունը հանդիպել է խոչ ու խոսքերի: Ահա Գ. Շահինյանը գրում է. «Կիրոս, որ վէպի ուրիշ գլխավոր մէկ հերոսն է, խորություն է եւ իրականություն է գուրկ խամաճիկ մըն է»<sup>27</sup>: Համաստեղը դժգոհել է. «Կիրոսի համար «խամաճիկ» բառը գործածած եք: <...> երբեք չէի կրնայ երևակայել, որ կրնայիք խիստ ծայրահեղություն մէջ մտնել յանկարծ: <...>: Եթե Կիրոս, որ գլխավոր գիծն է վէպին, ձեզ համար «խամաճիկ» է (չհասկացայ թէ ինչպէս գործածած եք ոյդ բառը), ուրեմն բաւական խամաճիկներ կան ...»<sup>28</sup> և առաջինը տալիս է Նայիրյանի անունը: Պատասխան նամակում Շահինյանը փորձում է բացատրել «խամաճիկ» բառի իմաստը, որին ի պատասխան Համաստեղը նուրբ հեղանքով ավելացնում է. «Իսկապէս զարմանալի եք: Ես ինքս ալ շատնոց մոռցած եմ, որ ես ալ երիտասարդ եղած եմ և գուցէ այդքան զարմանալի»<sup>29</sup>:

Շահինյանի տեսակետը պնդում է Գ. Սևանը. «Իսկ ինչ վերաբերում է այդ գործում Ձերչի Կիրոսի պես՝ Համաստեղի գրչի տակ պարզապես իբր հեղափոխության ոգին դարձած հերոսին, ապա դա այլ բան չէ, եթե ոչ թյուրիմացություն, թեթևամտություն ու մանկական կեցվածք: Կեցվածք, որ երբեք չի համոզում, որովհետև գործիչը <...> իր փերեզակային ծպտվածությամբ ու մերկ ու դուրս ընկած սրունքներով խրտվիլակային կերպար դառնալով, հեռու է քաղաքական առողջ մտքից ու մանավանդ գործչի արժանի կերպար դառնալուց, այնպիսին է, որի ղեկավարությամբ նույնիսկ հեքիաթում էրգրում մայրաքաղաքով Հայաստան չես կառուցի»<sup>30</sup>:

Կիրոսի հարցում սայթաքել է նաև Ս. Դանիելյանը՝ նախակերպար համարելով Աղբյուր Սերոբին. «Ձերչի Կիրոսի և Մարտիկի մտերմությունը հիշեցնում էր հայրական գուրգուրանք զավակի հանդեպ: Մենք այն կարծիքի ենք, որ <...> Համաստեղը մարմնավորել է Աղբյուր Սերոբի անհուն ջերմությունը, հոգացությունը Անդրանիկի, նրա սխրանքների նկատմամբ, որ որդիական սիրով ընդգծել է Ձորավարը «Հայրենիք» ամսագրում տպագրած հուշերում»<sup>31</sup>: Այս վրիպումները հեղինակն ավելի ուշ վերանայեց՝ Կիրոս-Հրայր Դժոխք. «... իսկ Նայիրյանի կերպարը չունի պատմական հավաստիություն»<sup>32</sup>:

Կռիվը՝ կռիվ, բայց վեպում կան մարդասիրության էջեր, որոնք բարոյական դասերի օրինակներ են. ջրադացպան Նավոյի քունը չի տանում իր սպանած քրդի համար. որպես մխիթարանք նրա գերեզմանն է փորում ու թաղում և հետո որդեգրում նրա երկու սղաներին, քանի որ մայրը լքել էր նրանց ու հեռացել: Մեկ այլ դեպք՝ վիրավոր թուրք ժանդարմին հայերը ոչ թե սպանում են, այլ բուժում, իսկ սա, ապաքինվելուց անմիջապես հետո, գործով գալիս է այն տան վրա, որտեղ իրեն պահել ու խնամել էին: Տանտերը, կար-

<sup>27</sup> Գ. Շահինյան. նշվ. աշխ., էջ 161:

<sup>28</sup> Համաստեղ. Նամականի, էջ 281:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 283:

<sup>30</sup> Գ. Սևան. նշվ. աշխ., էջ 191:

<sup>31</sup> Ս. Դանիելյան. Ամերիկահայ վրիպագիրներ, էջ 30:

<sup>32</sup> Ս. Դանիելյան. Սփյուռքահայ վեպը, Երևան, 1992, էջ 304:

ծելով թե թուրքը որպես բարեկամ է եկել, միամիտ հարց է տալիս. «Վերքդ ինտո՞ր եղաւ, Ահմէտ» (էջ 251): Նույնն է նաև Մարտիկը՝ թուրք ժանդարմների ու զինված քուրդ աշիրաթի դեմ դաժան, հասարակ գյուղացու հանդեպ՝ բարեգութ կոնակը դեմ է տալիս և օգնում, որ քուրդ գյուղացին հանի առվի մեջ խրված սայլի անիվը:

Վարդաձորը միայն ինքնապաշտպանական մարտերի թատերաբեմ չէ, այլև աշխատանք, մարդկային հարաբերություն, նիստուկաց, կենցաղ: Այս տեսակետից բնութագրական է Դայեկ Նուրիանի կերպարը, որն իրենով ամփոփում է գյուղում կատարվող անցուղարձը, խոսք ու զրույցը, աղջիկ տալու և առնելու հազվագյուտ շնորհքը: Նրա հետ մտերիմ է Սոման, և նրանց ուշ ժամի զրույցներով ուրվագծվում են գյուղի անջրանցիկ շերտերի ներքին կյանքի հոսքերը:

### Արվեստը

Ակնհայտ է մի բան՝ վեպը գրելիս հանդարտ, դանդաղ մի շարժում, մի կշռույթ ուղեկցել է Համաստեղին: Հեղինակը շտապողականություն չի դրսևորել: Վիպական արագություն, մոնտաժ հասկացությունները խորթ են նրան: Գործողությունների զարգացման արագությունը դանդաղ է ի հաշիվ նկարագրությունների և տարատեսակ մանրամասների: Ուռքով քայլելու արագություն է. կարծես քայլում է գյուղական ճանապարհներով և, կողքերը նայելով, գյուղեր մտնելով, մարդկանց հետ զրուցելով գրառումներ անում գիշերային դադարներին շարադրելու իր էջերը: Վեպի արագությունը ոտքով քայլելու կշռույթով է և ոչ թե ձիու անգամ թեթև վարգի, իսկ պացքի մասին խոսք լինել չի կարող:

Այս կշռույթով վեպի կառուցվածքը նման է ջրաշատ հարածուն գետի դանդաղ ծանր հոսքի, որ իր մեջ խայտացող ձկների պես հերոսների խիտ վտառներ է տանում: Ըստ այդմ՝ բաղկացած է չորս մասից, շարադրանքը ծավալվում է առանձին ենթավերնագրերով:

Գյուղերն ու մերձակա գյուղաքաղաքներն են, շուկան, գործավորները, սրճարանը, գինետունը: Սա կենդանի մարդկային միջավայր է և, գեղարվեստ լինելուց առաջ, ազգագրություն է ու պատմություն, իսկ գրականությունը բառից ու պատկերից բարձրանում և իր թափանցիկ թևերն է փռում այդ հաստատուն սյուների վրա:

Միայն ավերում, սուգ ու շիվան, դիմակայություն ու կոփվ չէ, այլև տոնախմբություն է, երգ ու պար, որ հաջորդում է հաղթանակներին, մանավանդ, երբ առնում են շեյխ Շելային ծառից կախելու լուրը: Պարում են գյուղացիները, պարում են ֆիդայիները, և դա էլ միջոց է հոգեպես ապաքինվելու ու նախապատրաստվելու հաջորդ մարտերին:

Հերոսների հաղորդակցությունն առնվազն երեք լեզվով է՝ հայերենից բացի նաև քրդերեն ու թուրքերեն: Լեզվից լեզու խոսակցական ակնարկներ չեն արվում, անցումները շատ սահուն են: Վեպի շարադրանքի լեզուն ժողովրդախոսակցական արևմտահայերենն է՝ իր կենդանի տարերքի մեջ: Շատ բնական պատում է, ստեղծվում է վիպական կենդանի միջավայր, ահա, օրինակ, առևտրական քարավանների մոտքը բնակավայր. «Կարավանները քաղաքներու մէջ կը տարածէին արուեստ, հիւանդութիւն, շաքար ու խաշխաշ: Ա-

նոնք պղինձ է թմբուկներով ու միջոցը լեցնող զանգակներու ձայնով ճամբայ կ'ելլէին ...» (էջ 82):

Այսպես ամբողջ վիպական պատումը հյուսված է ինչպես հեքիաթ, ուր անպակաս է բանահյուսությունը, առասպելաբանությունը, ազգագրությունը, չափազանցությունը: Ահա չափազանցության ցայտուն մի օրինակ. գինավառ հերոսներից մեկի ատամը ցավում է, և ի՞նչ անի, որ լավ է. «... մտածեցի ակուայիս խոռոչին մէջ վառող լեցնել ու պայթեցնել: Այդպես էլ ըրի. տեսայ ակուան արմատով, ամէն բանով բերնէս դուրս նետուեցաւ» (էջ 710):

Գլխավոր հերոսի և մյուս հերոսների հաջորդական գործողությունները կազմակերպելու համար հեղինակը ստեղծում է տարածությունը լրացնող լրացուցիչ մանրամասներ, նաև դիպաշարային փակ գծեր, որոնք տեղի ունեցող սկսվում-ավարտվում են և շարունակվող էջերում այլևս չեն արթնանում: Օրինակ՝ Մարտիկի Հաճի Մուսայի գյուղ մտնելու և առաջին գիշերը գյուղեգրի պատահած տանը պատսպարվելու տեսարանը:

Գրականության ժամանակ և տարածություն տեսական բաղադրիչներն այս վեպում դրսևորում են գործնական որոշակիություն: Ժամանակն իրական ժամանակն է պատմական իրադարձությունների երևակայական հագեցվածությամբ: Իսկ վիպական տարածությունն ընդգրկում է ոչ միայն ամբողջ հայոց աշխարհն իր ամեն ինչով, այլև այդ ամեն ինչ ընդգրկելու պահանջով շարադրանքը լցվում է նաև մանրամասների՝ երբեմն ավելորդ մանվածքով, մանավանդ, երբ ճեղքվում է խոսքի պատկերային պատաստը և տեղ տալիս ճյուղավորումների: Ավելորդ՝ այն ատումով, որ մանրամասնը տվյալ դեպքում դառնում է ինքնանպատակ, ինչպես, օրինակ, Հաճի Մուսայի և խալֆայի որմնադիր վարպետ Մակարի երեկոյան գրույցները (էջ 62):

Իրավացի է Կարո Սասունին. «Ամբողջ Հայաստան մը իր մարդերով, կեանքի բազմաթիւ երեւոյթներով եւ շրջապատով կը վերակենդանանար Համաստեղին գրականութեան մէջ»<sup>33</sup>:

Կառույցի տեսակետից, ըստ Գ. Շահինյանի, «վրիպած վէպ մըն է <...> որուն շատ պատահական եւ անյաջող կերպով պատուաստուած է նաեւ քրտական շարժում մը»<sup>34</sup>: Վրիպում է ինքը՝ Շահինյանը, որովհետև հայ-քրդական դաշինքի գաղափարը վեպի ծրագրային ուղենիշն է և ձևավորվում է Մարտիկի ու Ջեյնապի հարաբերություններից սկսած, այսինքն՝ վեպի սկզբից ևեթ, իսկ դա նշանակում է որ պատվաստ չէ:

Վեպում նախադասությունների ձևակերպման ոճական նրբերանգներ կան, որոնք հիշեցնում են մեկ Սիամանթոյին, մեկ Կոստան Զարյանի «Տատրագոմի հարսը» պոեմը, մեկ Չարենցին: Այսպես. Սիամանթո. «Մեռելներ կան, որ պե՛տք է անգամ մը եւս մեռցնել» («Դավաճաններ») <sup>35</sup> – Համաստեղ. «Թուրք մեռելը հեղ մըն ալ պետք է մեռցնել» (էջ 235): Կ. Զարյան. «Այն առավոտ բուր էր դրսում, և սարերի // աստվածները ծանրաքայլ անցնում էին բարկացած» <sup>36</sup> – Համաստեղ. «...եւ ֆետայիները ապառաժներուն վրայէն կը քալէին իրենց ծանր քայլերով» (էջ 214): Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում» տաղի «Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ

<sup>33</sup> Կ. Սասունի. Համաստեղ, էջ 184:

<sup>34</sup> Գ. Շահինյան. նշվ. աշխ., էջ 139, 157:

<sup>35</sup> Սիամանթո. Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 71:

<sup>36</sup> Կ. Զարյան. Տատրագոմի հարսը, Երևան, 1965, էջ 58:



ճակատ չկա»<sup>37</sup> տողի «լուսապսակ ճակատ», արտահայտությունը՝ «Թերեւս լուսապսակ ճակատով սուրբին, Մեծն Ներսեսի շինած եկեղեցիներեն մեկն է»<sup>38</sup>: Հանդիպում է Ջարենցի «Ասպետական»-ի «Ու ճկուն շարժումով մի պարե»<sup>38</sup> տողի «պարե շարժում», արտահայտությունը՝ «պարի շարժումներով մոտեցավ» (էջ 137, 185):

Համաստեղը բանաստեղծ էր նաև արձակում. ոչ միայն պատմում է, որ վեպի բուն տարերքն է, այլև պատկերներն ասես ասեղնագործում է. «Հայրենի գորջ տունը մագերը թափուած շան մը երեւոյթ առած էր» (էջ 10), «... ամառ-վա գիշերները, երբ պարզկայ երկինքը կար կապույտ մետաքսի նման» (էջ 20), «Զեյնապ այդ գիշեր կը մտածեր Մարտիկի <...> միւռոնոտ նայվածքին ու ծիծաղին, անոր արու ձայնին, որ կը զարնվեր իր ականջին՝ «քեզի համար պիտի բռնեմ ողջ եղնիկ մը»» (էջ 34), Մարտիկ «...տեսավ, որ Զեյնապ կեցած էր՝ վիզը ծուռ, փոթորիկէ կոտրված ծաղկի ցօղունի մը պէս» (էջ 43), «Մարտիկի կեցվածքին մէջ կար բուք առած սար մը, ճակատին վրայ ամպ մը ու աչքերուն մէջ արեւ» (էջ 58), «Դեմքը խիստ էր փոթորիկներ տեսնող ասպառածի մը պէս» (էջ 79), «... դէմքին գիծերը՝ ծեծված պղնձի նման լայն ճակատ» (էջ 80), լուսաբաց. «Աքաղաղի ձայնը կարմիր վարագոյրի մը պէս կը պատուէր յանկարծ» (էջ 88), «Ճահիճի գորտերը սկսած էին վերջալոյսի եղերերդ մը» (էջ 109):

Խոսքը լեցուն է նաև իմաստուն ասույթներով. «Բարեկամ, եթէ իմաստուն ես, լուսթիւնդ յիմարութիւն է, եթէ յիմար ես, լուսթիւնդ ոսկի է» (էջ 88), «Հարուն ալ Բաշիդ իմաստուն էր ու արդարադատ, ինչպէս Արաբատանի արեւը» (էջ 92), «Ինչքան կ'ուզէր որ Մարտիկը անոր աչքերուն մէջ նայէր ու բանտարկուէր հոն» (էջ 103), «Դուն պիտի սիրես այն տեսակ աղջիկ մը, որ քեզի թեւ տայ գմբեթին վրայ խաչը տնկելու» (էջ 103), «Խեղքդ կը նօսրանա, երբ էդ կինը կը տեսնես» (էջ 564):

Այսքանով հանդերձ «բանաստեղծները» Համաստեղի աչքի լույսը չէին, ինչի վկայությունը վեպում Կիրոսի և Վարդանի խոսակցության այս հատվածն է.

«— Գիտեմ հեռաւոր հովիտ մը, ուր կան Աստծոյ փսփսուքը, աստղերու կերպարանքները ու ջուրերու ձայնը: Էնտեղ Մայիսասի հովիտը պիտի երթամ բանջար մշակելու...»

— Բա, Կիրոս, էդ խօսքերուդ մէջ բանաստեղծութիւն կը բուրէ եւ վայ է եկեր էս ազգին, որ մեր Կիրոսը յանկարծ ելլէ բանաստեղծ դառնայ ... Է՛հ ի՞նչ ըսեմ, Կիրոս, դպրոց տեսած հայու տկարութիւնն այն է, որ նախ բանաստեղծութիւն ըսած մահացու միջբրոպով կը վարակուի: Էն առաջներուն մէջ անգամ, էդ միջբրոպը կը թաքնուի անկիւն մը ու տեսնես անակնկալ կերպով երեւան կու գայ» (էջ 761):

Այս հայացքն ուղղված է բանաստեղծական հովերով տարվելու և իրական հայրենիքը չտեսնելու դեմ, մի հարց, որ ժամանակին մտահոգել է Թումանյանին («Մեր նախորդներին», «Parodia»), Տերյանին («Երկիր Նաիրի» շար-

<sup>37</sup> Ե. Չ ա ր ե ն ց. Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 1, Երևան, 1962, էջ 247:

<sup>38</sup> Ե. Չ ա ր ե ն ց. Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1964, էջ 44:

քը), Չարենցին («Վահագն», «Ազգային երազ», «Պատմության քառուղիներով»):

### Եզրակացություն

Համաստեղի վեպը գեղարվեստի լեզվով վերակենդանացած մի ամբողջ իրական աշխարհ է, որի նպատակն ընթերցողի առջև հայոց պատմությունը որպես կենդանի գիրք բացելն է, նաև հայոց պատմության ցանկալի տարբերակը ներկայացնելը, որովհետև ժողովրդին վերարթնացնող թեկուզև ուսմանտիկական, բայց հոգեպես վերականգնող գաղափարներ էին պետք:

Մահվան ճանապարհը շարունակվող կյանքի ապրող տարերքով փակելու այս հայեցակարգը գալիս է Չարենցի «Երկիր Նայիրի» վեպից, ով Կարսի փլատակների վրա իր ողբն այնպես ողբաց, որ ոչ թե լացի ձայնը հասնի ժողովրդին, այլ ապրելու կանչը և լուսավորի վերածնության ճանապարհը: Ե՛վ Չարենցի, և՛ Համաստեղի համար սա ազգային դատապարտվածությունից բխող ընդհանուր փիլիսոփայական հայեցակարգ է, որի խորքում հայոց պատմության փիլիսոփայությունն է:

Այսպես հայ-քուրդ ընդհարումներով հանդերձ, որ հրահրում էր թուրք կառավարությունը, աստիճանաբար հասունանում է իրար հետ դաշնակցելու, բարեկամանալու, ընդհանուր թշնամու՝ թուրքի դեմ դիրքավորվելու գաղափարախոսությունը, դառնում վեպի առաջատար ծրագրային հայեցակարգը և իրականանում: Պատահական չէ, որ ըստ Ռ. Տեր-Մինասյանի, նրա կուսակիցները կողմ էին «խառն ամուսնությունների, որպեսզի ամարապնդուի հայ-քուրդ գործակցությունը»<sup>39</sup>: Իրար գլուխ կտրելու ժամանակներ էին, թուրք կառավարությունն այսպիսի ընծաների էր սպասում քրդերից: Գոնե տեսականորեն սթափվելու ժամանակն էր, ինչն էլ վեպի ուսմանտիկական հայեցակարգի հիմքն է: Ինչպես վրեժի, այնպես և հաշտության իրավունքը միշտ ժողովրդի կողմն է, որ հուշում է նրա տոհմիկ ազգաբանական հիշողությունը:

Դավիթ Գաապարյան – ք. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարի հայ գրականության ու մշակույթի պատմություն, Եղիշե Չարենց: Հեղինակ է բազմաթիվ գրքերի ու հոդվածների: grakanagetgasparyan@mail.ru

### REFERENCES

- Avetik Isahakyanı namaknere, Kahire, 1959 (In Armenian).  
 E. Charentsi anvan grakanutyanyan yev arvesti tangaran, Hamasteghi fond, t. 52 (In Armenian).  
 Danielyan S. Amerikahay vipagirner, Yerevan, 1990 (In Armenian).  
 Danielyan S. Spyrkahay vepe, Yerevan, 1992 (In Armenian).  
 “Yaraj” (Yerevan), 21. I. 1920; 07. II. 1920; 21. II. 1920; 24. II. 1920 (In Armenian).  
 Zarean K. Nave leran vray, Boston, 1943 (In Armenian).  
 Zarean K. Tatrakomi harse, Boston, 1930; Yerevan, 1965 (In Armenian).

<sup>39</sup> Ռ. Տեր-Մինասյան. *Եղիշե Չարենց*, հ. 5, էջ 67:

- Charents E. Erkeri joghovadsu 6 hatorov, h. 1, 1962; h. 3, 1964 (In Armenian).  
 Chopanyan A. Hamastegh yev givghe hay grakanutean medj.– Demker, h. 2, Paris, 1929 (In Armenian).  
 Hamastegh. Spitak dziavore, h. 1–2, Los Angeles, 1952 (In Armenian).  
 Hamastegh. Namakani, Yerevan, 2003 (In Armenian).  
 Hamastegh. Spitak dziavore, Yerevan, 2016 (In Armenian).  
 “Hayrenik” (Boston), 1931, tiv 7; 1933, tiv 12 (In Armenian).  
 Mkrtitch Naghash. ashxat.՝ E. Khondkaryan, Yerevan, 1965 (In Armenian).  
 Sasuni K. Hamastegh. – Patmutivn arevmtahay ardi grakanutean, Peyrut, 1951 (In Armenian).  
 Sasuni K. Hrayri dere. aknark me anor yeghapokhakan nkaragrın vray.– “Hayrenik”, 1931, tiv 4 (In Armenian).  
 Sevan G. Spurkahay grakanutyán patmutyan urvagtsér. 1946–1985, Yerevan, 1997 (In Armenian).  
 Siamanto. Yntir erker, Yerevan, 1957 (In Armenian).  
 Shahinean G. Hamastegh, Peyrut, 1961 (In Armenian).  
 Ruben (Ter-Minasean R). Hay yeghapokhakani me yishatakneré, h. 1–7, Yerevan, 1990 (In Armenian).

ГРАНИЦА ИСКУССТВА И ИСТОРИИ  
 (По роману Амастеха «Белый всадник»)

ДАВИД ГАСПАРЯН

Резюме

*Ключевые слова:* Амастех, «Белый всадник», Мартик, Черчи Кирос, Бердак, Вардадзор, фидаин, освободительная война, армянин, курд, турок, родина, борьба, герои, победа.

Роман Амастеха «Белый всадник» без глав 3 и 4 был опубликован в журнале «Айреник» (Бостон, 1931, № 7; 1933, № 12), а затем отдельной книгой в Лос-Анджелесе (т. 1–2, 1952) и в Ереване (2016).

Время, отраженное в романе, – 1890-е годы. Это роман с историко-политической программой, но это не исторический роман. Среди героев есть скрытые исторические фигуры: Черчи Кирос – Грайр Джохк (Арменак Казарян, 1864–1904); Малхас – Геворг Чауш (Геворг Казарян, 1870–1907); Наирян – условный образ идеологического лидера. Роман имеет определенную романтическую идеологическую направленность: вскоре после Геноцида, после потери Родины делается попытка привить людям дух победы, мечту о возрождении. Идея осуществления этой программы воплощена в главном герое романа – Мартике, олицетворяющем народные чаяния.

Это полумифический образ, словно рожденный из эпоса. Желанный конец многолетней борьбы преподносится как реальность. Отсюда и новая



ՀԱՅՐ ԴԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԵՎ ՎԱՍԴԻՄԻՐ ԱՏԱՍՈՎԻ  
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ\*

ՎԱԶԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ

Բանալի բառեր՝ Հայր Ղևոնդ Ալիշան, Ստասով, գիտնական, ռուս, հայ, մշակույթ, առնչություն, նամակագրություն, ուսումնասիրություն, դիտարկում, գնահատում, վարկած:

Նախաբան

Զբաղվելով պլավոնական ու արևելյան հին զարդաքանդակների ուսումնասիրությամբ՝ ռուս նշանավոր քննադատ, երաժշտության տեսաբան և հնագետ Վլադիմիր Ստասովը (1824–1906) 1880 թ. ճանապարհորդում է Եվրոպայի ու Արևելքի մի շարք երկրներով, լինում տարբեր քաղաքներում, այդ թվում՝ Վենետիկում: Այստեղ նա այցելում է Մխիթարյաններին և ծանոթանում հայ մշակույթի մեծ երախտավոր Հայր Ղևոնդ Ալիշանի (1820–1901) հետ<sup>1</sup>, «որի մասին նա հեռվից լսել էր ...»<sup>2</sup>: Իրավամբ, նա XIX դարավերջի ամենամեծ հայ գիտնականն էր<sup>3</sup>, ով ուներ համաեվրոպական հռչակ և անուն, ու ամենեկին պատահական չէ՝ Ստասովի համար միակ հարմար գիտնական թեկնածուն և առավել հարմար ուղեկից, զրուցակից դառնում է հենց նա<sup>4</sup>: Հայր Ղևոնդ Ալիշանի օգնությամբ Ստասովն ուսումնասիրում է Մխիթարյանների մոտ եղած հայ հին ձեռագրերի մանրանկարչությունը: Այդ օրերին էլ, թերևս, ստեղծվում է նրանց փոխադարձ համակրանքը, անկեղծ գնահատումը: Ալիշանը նախ ռուս գիտնականի վրա չափազանց մեծ տպավորություն է թողնում Ֆրանսերենի իմացությամբ: Իսկ հետագա հանդիպումների ժամանակ, երբ նա որևէ հետաքրքրող հարցի անդրադառնալիս անգիր վկայակոչումներ է անում ոչ միայն Ֆրանսերեն, այլև իտալերեն, անգլերեն ու արևելյան լեզուներից, մանրամասն բացատրություններ տալիս Հին Արևելքի արվեստի առանձնահատկությունների վերաբերյալ, որոնք, անշուշտ, մեծ օգուտ պիտի բերեին Ստասովին՝ գրվելիք աշխատությունն առավել կատարյալ դարձնելու համար, ռուս մտավորականը չափազանց տպավորվում է և հաճելիորեն զարմանում: Ստասովն անսահման շնորհապարտությամբ հեռանում է Սբ. Ղազարից<sup>5</sup>:

\* Ներկայացվել է 05. V. 2021 թ., գրախոսվել է 10. V. 2021 թ., ընդունվել է տպագրության 01. VI. 2021 թ.:

<sup>1</sup> Տե՛ս «Գրական թերթ» (Երևան), 03. I. 1969:

<sup>2</sup> Ս. Ս ա ռ գ ս յ ա ն. Ալիշան. պատկերներ կյանքից, Երևան, 1978, էջ 162:

<sup>3</sup> Ղ. Ա լ ի շ ա ն. Նամակներ (տեքստը, առաջ. և ծանոթ. Ս. Շտիկյանի), Երևան, 1969, էջ 8:

<sup>4</sup> Տե՛ս Ս. Ս ա ռ գ ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 162:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 162–163:

### Հայր Ղևոնդ Ալիշանի նամակները Վ. Ստասովին

1886 թ. լույս է տեսնում Վ. Ստասովի «Հայկական ձեռագրերը և նրանց զարդաքանդակները» արժեքավոր ուսումնասիրությունը, իսկ 1887 թ. «Ալավոնական և արևելյան զարդարվեստ» (նաև՝ «Ալավոնական և արևելյան զարդաքանդակ») մեծածավալ աշխատությունը, որտեղ էական տեղ էր հատկացված հայկական մանրանկարչությանը<sup>6</sup>: Հայր Ղևոնդ Ալիշանը ֆրանսերենով հինգ նամակ է ուղարկում վերոհիշյալ աշխատությունների կապակցությամբ, որոնք գտնվում են Սանկտ Պետերբուրգի արխիվներում, և հայերեն թարգմանել է Հայկ Գասպարյանը<sup>7</sup>:

Այդ նամակները թեև սովորաբար սկսում են ժանրաձևին բնորոշ «Թանկագին պարոն», «Հարգարժան և թանկագին պարոն» դիմելաձևերով և ավարտում «Ձեր խոնարհ ծառան», «Ձերդ Գերազանցության խոնարհ ծառա Հայր Ղևոնդ Ալիշան», «(Ձեր – Վ. Ա.) խոնարհ ծառան եմ ես՝ լի բարեկամական և երկյուղած պատկառանքով», «Թույլ տվեք ինձի արտահայտելու, պարոն, Ձեզի հանդեպ ունեցած իմ խորին ակնածանքս ու երախտագիտությունս» վերջնիթեր արտահայտություններով, այնուամենայնիվ, պատկառոտ այդ դարձվածները մեծարելիությանը զուգահեռ՝ ունեն նաև հարազատության նրբերանգ:

Առաջին նամակը, որը գրել է Հայր Ղևոնդ Ալիշանը Ստասովին, թվագրված է 1886 թ. հունիսի 1-ով: Այստեղ նա, ի պատասխան Ստասովի, ըստ երևույթին, շատ ջերմ նամակի, իր ուրախությունն է հայտնում վերջինիս այն «նշանակալից և վիթխարի աշխատության մոտակա հրատարակության» («Հայկական ձեռագրերը և նրանց զարդաքանդակները» – Վ. Ա.) առիթով, որին ինքը սպասում է անհամբեր, և խոստովանում է չի կարող պարծենալ իր համեստ «Սիսուան»-ով<sup>8</sup>, որն արդեն, ինչպես հասկանում ենք շարադրան-

<sup>6</sup> «Գրական թերթ», 03. I. 1969: Ս. Շտիկյանը Հայր Ղևոնդ Ալիշանի՝ իր կազմած նամականու ծանոթագրությունների բաժնում «Ալավոնական և արևելյան զարդարվեստ» աշխատության հրատարակման տարեթիվը, հավանաբար, շփոթությամբ նշում է 1884 թվականը (տե՛ս Ղ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 243, 246, 249), մինչդեռ նույն գրքում՝ Հայր Ղևոնդ Ալիշանի՝ Վ. Ստասովին ուղղված առաջին նամակին կցված ծանոթագրության մեջ, վկայում է 1887 թվականը (նույն տեղում, էջ 258):

«Գրական թերթ», 03. I. 1969: Հայր Ղևոնդ Ալիշանի՝ Վ. Ստասովին ուղղված այդ հինգ նամակներն ընդգրկված են նաև Ղ. Ալիշանի՝ Ս. Շտիկյանի կազմած նամականու հավելվածում, որտեղ կազմողը ծանոթագրում է, թե նամակներն արդեն շարագրված էր, երբ Իոմա Սաֆրազբեկյանը (ըստ Ս. Շտիկյանի) Սանկտ Պետերբուրգում Պուշկինյան տանն աշխատելիս գտել և թարգմանել տալով «Գրական թերթ»-ում տպագրել էր այդ նամակները (Ղ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 257): Նամակները տե՛ս նաև Հայր Ղևոնդ Ալիշան. Նամակներ, հ. 1 (1840–1870), Երևան, 2020, նույնի՝ Նամակներ, հ. 2 (1871–1889), Երևան, 2021, նույնի՝ Նամակներ, հ. 3 (1890–1901), Երևան, 2021: Այս հրատարակություններից հղումները կտրվեն շարադրանքում փակագծերում նշելով հատորը և էջը:

<sup>8</sup> 1850-ական թվականներից սկսած՝ Ալիշանը ձեռնամուխ է եղել պատմական Հայաստանի բոլոր տասնհինգ «աշխարհների» մասին պատմաաշխարհագրական ուսումնասիրություններ գրելու գործին, որը, ըստ հեղինակի նախնական մտահղացման, պետք է կազմեր 15–20 հատոր: Այս վիթխարի նախաձեռնութ-

քից, ծանոթ էր ռուս գիտնականին (Տ. 2, էջ 535)<sup>9</sup>: Թերևս, առերևույթ նամակագրական չեզոք թվացող այս տեղեկությունը, որն անում է Հայր Ղևոնդ Ալիշանը, ցույց է տալիս ոչ միայն հեղինակի համեստությունը, այլև այն հետաքրքրությունը, որ Ստասովն ունեցել է նրա գիտական գործունեության նկատմամբ: Նամակում, մինչև ռուս արվեստաբանի հարցերին անդրադառնալը, Ալիշանը, ընդմիջարկելով իր խոսքը, նորատիպ «Սիսուան»-ի կապակցությամբ մի դիտարկում է անում, որը ցույց է տալիս թուրքական իշխանությունների վերաբերմունքը հայ մշակույթի նկատմամբ. «... օրերս Օսմանյան կառավարությունը արգելեց երկի հրատարակությունը (ընդգծումը Վ. Ստասովինն է – Վ. Ա.)<sup>10</sup>: Ինչ տարբերություն թրքական կառավարության դիրքորոշման և Ձեր կայսրի քաջալերանքի միջև» (Տ. 2, էջ 535), – գրում է նամակագիրը: Ուշադրության է արժանի նամակի ձեռագրի վրա հասցեատիրոջ՝ Ստասովի կողմից արված տողի ընդգծումը, որը թեկուզ լուրջությամբ ակնարկում է նաև վերջինիս անհանգստությունը թուրքիայի դրսևորած հայամերժ քաղաքականության նկատմամբ<sup>11</sup>: Նամակում ակնհայտ է նաև Ալիշանի համակրանքը և դրվատանքը ռուսական իշխանությունների հանդեպ, որն արտահայտում է նրա «դիվանագիտական

յունը, սակայն, հեղինակը չկարողացավ իրականացնել: Իր կյանքի ընթացքում նա հրատարակեց չորս «աշխարհների» մասին իր հանրահայտ ուսումնասիրությունները, որոնցից մեկը հենց նվիրված էր Սիսուանին՝ Հայկական Կիլիկիային («Սիսուան: Համադրություն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ»): Այն տպագրվեց 1885 թ. Վենետիկում (տե՛ս Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1974, էջ 234):

<sup>9</sup> «Սիսուանի» ֆրանսերեն համառոտ թարգմանությունը (Թարգմ. Գևորգ Պալյանի) հրատարակվել է 1899 թ. Վենետիկում (տե՛ս Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 242): Ուրեմն՝ «Սիսուանը» Վ. Ստասովին, ամենայն հավանականությամբ, կարող էր ծանոթ լինել սոսկ որպես հրատարակություն:

<sup>10</sup> Այս նախադասությունը Հայր Ղևոնդ Ալիշանի նամակների նորատիպ ժողովածուում ընդգծված չէ, մինչդեռ Ի. Սաֆրազբեկյանի և Ս. Շտիկյանի կազմած նամակահիներում այն մասնակի տարբերությամբ («Այն հենց նոր արգելքի տակ է դրել թուրքական կառավարությունը») տպված է մզացված տառերով. համապատասխանաբար տե՛ս «Գրական թերթ», 03. I. 1969, Ղ. Ա ի շ ա ն. նշվ. աշխ., էջ 257: Մենք հավատարիմ ենք մնացել նախնական տարբերակին:

<sup>11</sup> 1883 թ. սկզբներին թուրքական կառավարությունն ընդունեց մի օրինագիծ, որով արգելում էր իրենց երկրից դուրս հրատարակված հայերեն գրքերի մուտքը Օսմանյան պետության սահմաններ՝ այն պատճառաբանությամբ, թե, իբր, գրանք պղտորում են թուրքահպատակ ժողովուրդների միտքը և այդպիսով պատճառ դառնում Օսմանյան կայսրության ամբողջականության քայքայմանը (տե՛ս Ղ. Ա ի շ ա ն. նշվ. աշխ., էջ 219): Այդ պատճառով նաև թուրքական կառավարությունը, իմանալով, որ «Սիսուանը» պարունակում է Օսմանյան պետության լծի տակ ընկած Կիլիկիայի երկրամասում ապրող հայ ժողովրդի անցյալի պատմությունը, արգելեց այդ գրքի մուտքը թուրքիա: Ալիշանը թուրքական իշխանությունների այդ արարքի մասին է դառնացած զանգատվում իր նամակում (տե՛ս Ա. Ա դ ա մ - յ ա ն. Ղևոնդ Ալիշանի անտիպ նամակներից. – «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, № 3, էջ 114): Մինչդեռ «Այրարատը» (1890) և «Սիսուանը» (1893), որը նվիրված էր Սյունյաց աշխարհին, ռուսական իշխանություններն թույլատրեցին իրենց երկրի տարածք [տե՛ս Հ ա յ ը Ղևոնդ Ա ի շ ա ն. Նամականի, հ. 1 (1840–1870), էջ XIV–XV]:





երկու-երեք անգամ դիտած եմ սքանչելի նկարազարդումները և նորեն պիտի դիտեմ: Բան մը գիտ ցնցած է առաջին իսկ հայացքեն. Սլավոնական կամ արևելյան բոլոր այդ ժողովուրդներու ոճի և մեր՝ հայկական ոճի միջև եղած նմանությունը, և մենք երջանիկ ենք, որ Դուք զայն կը ներկայացնեք մյուս մշակութային կողքին» (Հ. 3, էջ 88):

Ճիշտ է, որոշ մասնավորապես՝ առանձին տեխնիկական հարցերի առնչությամբ, Ալիշանն անում է «քանի մը ոչ այնքան արժեքավոր դիտարկում», սակայն գիտնականն իր նամակն ավարտում է գովեստի շնորհակալ խոսքով: Ուշագրավ է, որ երբ մեզանում դեռ վարդապետ Գարեգին Հովսեփյանն սկսում է զբաղվել հայ մանրանկարչության արվեստի ուսումնասիրությամբ և նյութեր հավաքելու նպատակով դիմում է Հայր Ղևոնդ Ալիշանին ու խորհուրդներ հարցնում նրանից, ծերունագարդ և բազմազբաղ գիտնականը, խրախուսելով երիտասարդին ու նրա թեմայի վերաբերյալ աղբյուրներ մատնացույց անելով, միաժամանակ Հովսեփյանին հանձնարարում է ձեռք բերել Վլադիմիր Ստասովի հիշյալ «Սլավոնական և արևելյան զարդարվեստ» ուսումնասիրությունը և օգտագործել այն<sup>12</sup>: Իսկ սա նշանակում է, որ Ստասովի այդ «ընտիր գործը» ուղենշային նշանակություն է ունեցել Ալիշանի համար<sup>13</sup>:

Վերջում վարկածային մի դիտարկում անենք: Հայտնի է, որ 1896 թ. Հայր Ղևոնդ Ալիշանը ընտրվում է Պետերբուրգի հնէաբանական ընկերության պատվավոր անդամ<sup>14</sup>: Այդ կապակցությամբ, «ինչպես պահանջում է էթիկան», նա գրավոր պատասխանով շնորհակալական խոսք է փոխանցում ընկերության նախագահ Աֆանասի Բիչկովին, որտեղ հայտնելով իր երախտագիտությունը՝ միաժամանակ գրում է, թե դժվարանում է գուշակել, թե ով կարող էր առաջինն առաջարկել իր թեկնածությունն այդ բարձր կոչման համար<sup>15</sup>: Չի բացառվում, որ դա կարող էր լինել հենց Վլադիմիր Ստասովը, ով մոտիկից ճանաչում էր և մեծ համակրանք ուներ Հայր Ղևոնդ Ալիշանի նկատմամբ:

### Եզրակացություն

Ահա այսպես տարիների ընթացքում հարազատորեն, փոխադարձ ակնածանքով ընկերակցեցին Հայր Ղևոնդ Ալիշանն ու Վլադիմիր Ստասովը: Նրանց հանդիպումն ու ծանոթությունը, որ սկիզբ առավ 1880 թ. Սբ. Ղազար կղզում Ստասովի գիտական-գործնական այցելության ժամանակ, կարճ տևեց: Սակայն նրանք իրենց սրտամոտ բարեկամությունը պահեցին ու խորացրին նամակագրությամբ: Դա պիտի բացատրել թե՛ երկու անձանց գիտական-մշակութային հետաքրքրություններով և թե՛, ինչու ոչ, մարդկային փոխադարձ համակրանքով:

<sup>12</sup> Տե՛ս Ղ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 184–185: Ի դեպ, Գ. Հովսեփյանին ուղղված այս նամակը վրիպել է Հայր Ղևոնդ Ալիշանի եռահատոր «Նամականին» կազմողների աչքից և տեղ չի գտել դրանցում:

<sup>13</sup> Ա. Աղամյան. նշվ. հրատ., էջ 114:

<sup>14</sup> Տե՛ս Ս. Շտիկյան. Ալիշանը և Պետերբուրգի հնէաբանական ընկերությունը. – «Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տեղեկագիր», 1964, № 2, էջ 79:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 82:

Վաչագան Ավագյան – ք. գ. թ., ԵՊՀ ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան Հայ նոր գրականության պատմության ամբիոնի ղեկավար: Գիտական հետաքրքրությունները՝ Հայ ժողովրդական բանահյուսություն, Հայ գրականություն: Հեղինակ է 1 մեթոդական ձեռնարկի և շուրջ 30 հոդվածի:  
avagyan.vachik@yandex.ru

## REFERENCES

- Adamyan A. Ghevond Alishani antip namaknerits. – “Banber Hayastani arkhivneri”, 1965, № 3 (In Armenian).  
Alishane jamanakitsneri husherum, Yerevan, 1974 (In Armenian).  
“Grakan tert” (Yerevan), 03. I. 1969 (In Armenian).  
Hayr Ghevond Alishan. Namakani, h. 1 (1840–1870), Yerevan, 2020; h. 2 (1871–1889), Yerevan, 2021; h. 3 (1890–1901), Yerevan, 2021 (In Armenian).  
Alishan Gh. Namakner (tekste, araj. yev tsanot. S. Shtikyani), Yerevan, 1969 (In Armenian).  
Shtikyan S. Alishane yev Peterburgi hneabanakan enkerutyune. – “Haykakan SSR Gitutyunneri akademiayi teghekagir”, 1964, № 2 (In Armenian).  
Sargsyan S. Alishan. patkerner kyankits, Yerevan, 1978 (In Armenian).

ИЗ ИСТОРИИ ОТНОШЕНИЙ ОТЦА ГЕВОНДА АЛИШАНА  
И ВЛАДИМИРА СТАСОВА

ВАЧАГАН АВАГЯН

Резюме

*Ключевые слова:* Отец Гевонд Алишан, Стасов, ученый, русский, армянин, культура, отношения, переписка, исследование, наблюдение, оценка, гипотеза.

Известный русский ученый, выдающийся теоретик искусства и археолог Владимир Стасов (1824–1906), занимавшийся изучением древнеславянских и восточных орнаментов, в 1880 г. побывал в ряде городов Европы и Востока. В том же году он побывал в Венеции, где посетил Конгрегацию мхитаристов и встретился с выдающимся деятелем армянской культуры Отцом Гевондом Алишаном (1820–1901). С помощью Алишана Стасов изучал миниатюры древнеармянских рукописей из коллекции мхитаристов.

В 1886 г. было опубликовано ценное исследование Стасова «Армянские рукописи и орнаментации», а в 1887 г. – колоссальный труд «Славянский и восточный орнамент», в котором он также уделил важное место армянской миниатюрной живописи. Отец Гевонд Алишан написал Стасову пять писем на французском языке в связи с вышеуказанными работами. Письма показывают, как Алишан, с его удивительным знанием различных произведений армянской литературы, их рукописных источников, помогал и направлял Стасова, добросовестно отвечал на его филологические вопросы.

Из этих писем также очевидно, что два выдающихся ученых в целом интересовались научной деятельностью друг друга, и особенно заметен энтузиазм Алишана по поводу любви Стасова к древнеармянскому искусству.

*Վաչագան Ավագյան – ք. փիլոլ. ռ., դոցենտ կաֆեդրայի նորայն արմանկոյ լիտերատուրայի իմ. ակադ. Գր. Թամրազյան ԵԴՄ. Ուսոյն ինտերեսայ: արմանկոյ ռարոճնոյ ֆոլկլոր, արմանկոյ լիտերատուրա. Ատոր 1 մեթոճիկոսոյ քոսոբոյա ի ուկոլո 30 ստաթեյ. avagyan.vachik@yandex.ru*

## ON RELATIONS BETWEEN FATHER GHEVOND ALISHAN AND VLADIMIR STASOV

VACHAGAN AVAGYAN

### Summary

*Key words: Father Alishan, Stasov, scientist, Russian, Armenian, culture, relations, correspondence, study, observation, assessment, hypothesis.*

Famous Russian academician, prominent art theorist and archaeologist Vladimir Stasov (1824–1906), while studying ancient Slavonic and Eastern ornamental sculptures, in 1880 visited a number of cities in Europe and the East. In Venice he visited the Mekhitarist congregation and met Father Ghevond Alishan (1820–1901) – a prominent figure of Armenian culture. With Alishan’s assistance, Stasov studied the miniature paintings of ancient Armenian manuscripts from Mekhitarian collection.

In 1886, Stasov published his valuable study “Armenian Manuscripts and Their Ornaments,” and in 1887, his large-scale work “Slavonic and Oriental Ornaments,” in which he also gave an important place to Armenian miniature painting. Father Ghevond Alishan sent five letters in French to Stasov in connection with the abovementioned works. The letters indicate how Alishan, with his amazing knowledge of various works and the manuscript sources of Armenian literature, helped and guided Stasov, answering his philological inquiries scrupulously.

It is also evident in these letters that the two great scholars were generally interested in each other’s scientific activities, especially Alishan’s enthusiasm for Stasov’s love towards ancient Armenian art.

*Vachagan Avagyan – Candidate of Sciences in Philology, Associate Professor of the YSU Chair of New Armenian Literature after Hr. Tamrazyan. Scientific interests: Armenian folklore, Armenian literature. Author of 1 methodical handbook and more than 30 articles. avagyan.vachik@yandex.ru*

---

---

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԴՈՒՍՏՐԸ. ՆՈՐԱՅԱՅՏ ԷԶԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ  
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԽԻՎԻՑ\*

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Նվարդ Թումանյան, Ե. Չարենց, Հ. Աճառյան, Ս. Գորոզեցիկի, Ավ. Իսահակյան, Վ. Տերյան, Մ. Վարդապարյան, Հովնանյան դպրոց, օրագրեր, հուշեր, բանաստեղծություններ նվիրված Նվարդին, «Մծիրի», թարգմանություն, ազդեցություն, գրական «Քառյակ», «Հինգչաբլիներ»:

Նախաբան

Անվանի անձանց կենսագրատու մշակութաբանության ամենահին ու փորձված մեթոդներից է, որը հնարավորություն է ընձեռում լուսաբանել ոչ միայն սովյալ անհատի կյանքը և գործը, այլև բացահայտել նրա ժամանակն ու հասարակական միջավայրը: Այս իմաստով մեր բազմադարյան մշակույթի պատմության մեջ առանձնահատուկ է Հովհաննես Թումանյանի կենսագրատու, որն անբաժանելի է իր բազմադարյան ընտանիքի կյանքից: Բանաստեղծը տասը զավակների հայր էր, և նրա ընտանիքի պատմությունը, չորս որդիների նահատակությունը՝ Եղեռնի ու ստալինյան բռնապետության տարիներին, նրա դուստրերի ազգանվեր գործունեությունը XX դարի առաջին տասնամյակների հայ ժողովրդի պատմության մանրանկարն է:

Նվարդ Թումանյան. մանկությունն ու երիտասարդությունը

Հովհ. Թումանյանի տասը զավակների մեջ հայ մշակութային-հասարակական կյանքում ունեցած դերով և հատկապես թումանյանագիտությանը մատուցած իր անգնահատելի վաստակով առանձնանում է նրա երրորդ զավակը, երկրորդ դուստրը, բանասիրական գիտությունների թեկնածու, թումանյանագետ Նվարդ Թումանյանը (03. 10. 1892 – 20. 09. 1957), որի կյանքն ու գործը չափազանց ուսանելի է և հետաքրքիր ոչ միայն իբրև բանաստեղծի դստեր, այլև իբրև մարդու, քաղաքացու, հայ մտավորական կնոջ ու գիտնականի, անձնագոհ և հայրենանվեր հայուհու, իբրև հայ մշակույթի երախտավորի:

Նվարդը ծնվել և մեծացել էր Թիֆլիսում, սակայն իր հայրիկի նման ուներ հայրենի բնության պաշտամունք: Իր օրագրերում համեմատելով Թիֆլիսում և Դսեղում անցկացրած մանկության օրերը՝ նա գերապատվությունը տալիս էր գյուղում անցկացրած օրերին, որոնք ավելի պայծառ ու անհոգ էին,

---

\* Ներկայացվել է 16. IV. 2021 թ., գրախոսվել է 12. V. 2021 թ., ընդունվել է տպագրության 18. VI. 2021 թ.:

թերևս, ամենից առաջ բնությանը մոտ լինելու պատճառով. «Գնում էինք գյուղը և անմիջապես ընկնում բնության գիրկը»<sup>1</sup>:

Միջնակարգ կրթությունը Նվարդը ստացել է Թիֆլիսի Հովնանյան օրիորդաց դպրոցում: Մանկությունից նա աչքի էր ընկնում ընթերցասիրությամբ: Դպրոցում ղեկավարում էր գրական խմբակը: Անշուշտ, թե՛ բնության, թե՛ գրքի նկատմամբ սերը Նվարդը ժառանգել էր հայրիկից: Շատ վաղ հասակից, բացի «հայրիկից ստացած» գրքերից, Նվարդն օգտվում էր Թիֆլիսի Վեյսամի-նովսկայա փողոցի վրա գտնվող հին ու հայտնի գրադարաններից. «Գիրք շատ էի կարդում և շատ արագ: Ամեն օր գրադարան էի գնում գիրքս փոխելու» (ՆԱ, 1, 1/27): Կրթության ու գրքի արժեքի գիտակցումը եղավ բանաստեղծի դատեր կյանքի մշտական ուղեկիցը:

Չափազանց արվեստասեր հոգի ուներ պատանի Նվարդը: Նա սիրում էր երգել. երգում էր իր հայրիկի կազմակերպած խնջույքներին, ընկերական երեկույթներում, երգում էր բնության գրկում, բայց ավելի շատ՝ տանը, երբ ազատ էր լինում և միայնակ: Հովնանյան դպրոցի 4-րդ դասարանին գուգահեռ՝ Նվարդը հաճախում էր Թիֆլիսի նկարչական դպրոցը: Սիրում էր քանդակագործություն, պարել՝ «ամենից շատ վալս, խենթ ու խելառ վալս» (ՆԱ, 1, 1/44): Երաժշտության ուսուցիչներն էին Գրիգոր Միրզոյանը<sup>2</sup> 3–5-րդ դասարաններում, Ռոմանոս Մելիքյանը՝ 7-րդ դասարանում: Նկարչական դպրոցում դասավանդում էր Եղիշե Թադևոսյանը:

Հարուստ և հետաքրքիր էին Նվարդի ուսանողական տարիները՝ 1910-ական թվականները, որոնք թեև ծանր ու դժվարին էին, այնուամենայնիվ, նրա կյանքի ամենաերջանիկ շրջանն էր, երբ ապրում էր լիաթոք կյանքով: «Որքան էլ տարօրինակ թվա, – գրում է Նվարդը, – կյանքիս ամենաուրախ, ամենազվարթ և հարուստ տարիները ուսանողական շրջանն է եղել՝ 1914–1921 թթ.: Թեև հինգ տարվա կուրս էր, բայց ես նյութականի պատճառով 1917 թ. համալսարանը համարյա թե թողի և հայրիկին օգնելու համար, համալսարանի ուսման վարձը 125 ռ. վճարելու համար. 1917–1920 թթ. Հովնանյան դպրոցում ընդհանուր պատմության դասեր վերցրեցի» (ՆԱ, 1, 1/57): Դպրոցն ավարտելուց հետո բարձրագույն կրթական հաստատություն ընդունվելու համար անհրաժեշտ էր գիմնազիայի վկայական: Մի ամբողջ տարի մասնավոր պարապելով՝ հաջողությամբ հանձնում է էքստեն թննություններ 3-րդ իգական գիմնազիայում, ընդունվում Կանանց բարձրագույն

<sup>1</sup> Թումանյանի ընտանեկան արխիվ, Ն. Թումանյանի ինքնակենսագրական նյութեր, բաժին 1, թիվ 1/23: Ն. Թումանյանի արխիվը Հովհ. Թումանյանի ընտանեկան արխիվի մի մասն է: Դրա մի փոքր մասն իր անձնական արխիվի հետ մեզ է տրամադրել բանաստեղծի կրտսեր դուստր Թամար Թումանյանը (10. 05. 1907, Թիֆլիս – 19. 09. 1989, Երևան) դեռևս 1989 թ.: Ընտանեկան արխիվի այն փոքր մասը, որը գտնվում է մեր տրամադրության տակ, որոշ չափով մշակել ենք և բաժինն ու թվահամարը կնշենք տեքստում՝ ՆԱ (Նվարդի արխիվ), բաժնի համարը, թղթապանակը և էջահամարը, իսկ անմշակ մասերը կհղենք ԹԸԱ (Թումանյանի ընտանեկան արխիվ) հասցավումով:

<sup>2</sup> Գրիգոր Հովհաննեսի Սյունի (Միրզոյան) – (1876, Գետաբեկ, Ելիզավետպոլի գավառ, Ելիզավետպոլի նահանգ, Ռուսական կայսրություն–1939, Ֆիլադելֆիա, Փենսիլվանիա, ԱՄՆ), կոմպոզիտոր, խմբավար, երաժշտագետ:

կուրսեր (հետագայում՝ Թբիլիսիի Անդրկովկասյան համալսարան) և ավարտում պատմագրական ֆակուլտետը: Նվարդը երազում էր կրթությունը շարունակել և հայագիտություն ուսանել Պետերբուրգում: Այդ նպատակով սովորում էր լեզուներ՝ լատիներեն, վրացերեն, ֆրանսերեն, գրաբար, արաբերեն: Սակայն, ինչպես նշում է իր օրագրում, «Հայրիկը դեմ էր իմ Պետերբուրգ գնալուն, և երբ խոսք էր լինում, ասում էր. «Մեր տունը քեզ համալսարան»։ Գլխավոր պատճառը, իհարկե, նյութականն էր. «կա ոչը», բայց չէր ասում, ցույց չէր տալիս» (ՆԱ, 1, 1/ 60): Նվարդն անվերջ իր հայրիկի հետ էր շրջապատված հայ և այլազգի մշակութային գործիչներով, երաժիշտներով, նկարիչներով, ինչը մեծագույն բերկրանք էր թումանյանի արվեստասեր դատեր համար: Նվարդն ինքն է խոստովանում, որ այդ շրջանում «Ինքս էլ առողջ էի, գվարթ, թուշուն և ամեն ինչով հետաքրքրվող ու ապրող» (ՆԱ, 1, 1/ 52): Նա մտերիմ էր «Վերնատան» բոլոր անդամների հետ և այդ բարեկամությունը շարունակեց մինչև կյանքի վերջ: Այս ամենի շնորհիվ բանաստեղծի դուստրը դարձավ իր ժամանակի զարգացած կանանցից մեկը: Ամենայն հայտի ընտանիքում այլ կերպ լինել չէր կարող: Որպես հայր՝ թումանյանը ոչ միայն ժպտում էր զավակներին ու կատակներ անում, այլև հարկ եղած դեպքում խստորեն պահանջում. «Բանը մի անգամ կասեն», կրկնել է նա. «Եթե ասաց՝ չէ, դա օրենք էր մեզ համար», – գրում է ավագ դուստրը՝ Աշխենը<sup>3</sup>:

Նվարդը երիտասարդ հասակից աչքի էր ընկնում ազգային կյանքին գործուն մասնակցությամբ, հասարակական ակտիվ վարքագծով: 1915 թ. Թիֆլիսում «Հայ օրիորդների կոմիտեի» ամենագործունյա աչքի ընկնող անդամներից էր: 1917 թ. նրա նախաձեռնությամբ Թիֆլիսում կազմակերպվեց «Հայ ուսանողական կուլտուրական միություն»: Եվ նույն թվին, որպես ընկերություն նախագահ, նա մեկնում է Բաքու՝ ուսանողական համագումարին մասնակցելու համար<sup>4</sup>: 1918-ին, իբրև այդ միություն անդամ, Նվարդն ակտիվորեն մասնակցում էր ուսանողական հավաքույթներին, դասախոսություններ կարդում «Կրոժոնում»<sup>5</sup> «Հայ կինը ժողովրդական երգերի մեջ» և այլ թեմաներով: Նա համագործակցում էր նաև Թիֆլիսի «Փախստականներին օգնող կենտրոնական կոմիտեի» հետ: Ցեղասպանության տարիներին ազգային կյանքի վայրկյաններում Նվարդն իր հայրիկի կողքին էր: 1915 թ. Էջմիածնում էր և համաճարակի պայմաններում կյանքն էր վտանգի ենթարկում հայ որբերին խնամելիս, փրկում էր մանկական կյանքեր<sup>6</sup>: Նրա օրագրի էջերից

<sup>3</sup> Աշխեն. Հուշեր և ընտանեկան պատմություններ, Երևան, 2011, էջ 60:

<sup>4</sup> Բաքվում Նվարդն ապրում էր պատմաբան Հակոբ Մանանդյանի տանը: Այստեղ էլ նա ծանոթանում է Հովհաննես Հովհաննիսյանի հետ, որի հանդեպ մեծ համակրանք ուներ: Ի դեպ, հետագայում Նվարդը փորձել է գրել Հովհ. Հովհաննիսյանի կենսագրությունը, նրա մահից հետո անգամ հետաքրքրվել է բանաստեղծի գերդաստանի պատմությամբ, գրի առել նրա կյանքին վերաբերող զանազան նյութեր:

<sup>5</sup> Տե՛ս «Մշակ» (Թիֆլիս), 24. XI. 1918, «Հորիզոն» (Թիֆլիս), 24. XI. 1918:

<sup>6</sup> Նվարդի հետ գնացել էին երեք ընկերուհիներ, որոնց անունները հրապարակված էին «Հորիզոն» օրաթերթի 1915 թ. օգոստոսի 9-ի հայտարարության մեջ. «Հայկական կենտրոնական կոմիտեն Էջմիածին ուղարկեց օր. օր. Ն. Թումանյանին, Ա. Դանիելյանին, Հ. Զորյանին և Կ. Լիանոզյանին, որոնք սիրահոժար և ինքնակամ հանձն են առել առանց վարձատրության գործել փախստականների կարիքները

մեկում կարողում ենք. «Ինձ վրա շատ էր ազդում որք երեխաների, դժբախտ, չքավոր մանուկների կյանքը»: Նվ երիտասարդ հայուհին որոշում է միշտ «օգնել այդ տեսակ երեխաներին» (ՆԱ, 1, 1/26):

1918 թ. մայիսին Նվարդը Ղարաքելիսայում էր, դարձյալ իր հայրիկի կողքին, երբ արդեն սկսվել էր գաղթը, քաղաքը երեք կողմից շրջապատված էր թշնամիներով: Այս անգամ Թումանյանը փորձում է համոզել դատերը հեռանալ ամենքի հետ, բայց չի կարողանում: Նվարդը վճռական էր՝ պատրաստ ուղղամական գործողությունների մինչև վերջին պահը մնալ իր հայրիկի հետ և օգնել քաղաքից հեռացող գաղթականությունը<sup>7</sup>:

### Գրական շրջանը

Առհասարակ Նվարդն իր բանաստեղծ հայրիկի բոլոր բարեկամների հետ ընկերական ջերմ հարաբերություններ ուներ կամ զավակի խոնարհ հարգանք ու ակնածանք: Նա միշտ հավատարիմ մնաց Թումանյանի գրական միջավայրի յուրաքանչյուր ներկայացուցչի և մինչև կյանքի վերջը պահպանում էր կապն ամենքի հետ: Բարեկամների թվում էր այդ տարիներին Թիֆլիսում ապրող ուսուցիչ, հրապարակախոս Սերգեյ Գորոդեցկին<sup>8</sup>: Նվարդի հետ Գորոդեցկին մտերմացավ Առաջին աշխարհամարտի տարիներին՝ 1916 թ. գարնանից: Այդ բարեկամությունը շարունակվեց նաև խորհրդային շրջանում: Հայ բանաստեղծի անձնուրաց հայրենասիրությունը աչքի ընկնող դատեր նկատմամբ ուսուցիչի բարեկամական վերաբերմունքի վկայությունն են Թումանյանին ուղղված Գորոդեցկու նամակները, որոնցում հաճախ հիշա-

հոգալու համար» (ընդգծումները մերն են.— Ս. Հ.): Որոշում կար նաև Նվարդի ղեկավարությունը խումբ գործուղել Իգդիր: Սակայն օգոստոսի 9-ից մի քանի օր անց որոշվել էր նրան ոչ թե Էջմիածին ուղարկել, այլ Իգդիր. այդ է վկայում վերոբերյալ հայտարարությունից 5 օր անց՝ օգոստոսի 14-ին, լրագրում հայտնված «Փախստականներին օգնող կենտրոնական կոմիտեի» մեկ այլ հայտարարություն, ըստ որի՝ Նվարդն իբրև գաղթականներին օգնող խմբի ղեկավար, պետք է մեկներ Իգդիր: Հայտարարության մեջ ասվում էր. «Ի նկատի ունենալով ինտելիգենտ ուժերի կարիքը փախստականներին օգնություն հասցելու գործում, Հայկական կենտրոնական կոմիտեն կազմակերպել է 3 խումբ: Առաջին խումբը, որ գործելու է Իգդիրում, բաղկացած 6 հոգուց, կազմված հայ օրիորդների կոմիտեի ներկայացուցիչներից, ղեկավարությունը օր. Ն. Թումանյան ... Երկրորդ խումբը Էջմիածնում օր. Քափանյանի ղեկավարությունը, երրորդ խումբը Դիլիջան՝ բժ. Եսգամյանի և բժ. Թումանյանի առաջնորդությունը»:

<sup>7</sup> Ն. Թումանյան. Հուշեր և գրույցներ, Երևան, 1987, էջ 164:

<sup>8</sup> Նրա և Հովհ. Թումանյանի առնչակցությունների հարցերին հայ գրականագիտությունն անդրադարձել է բազմիցս՝ հանձինս Իրմա Սաֆրազբեկյանի և Անուշավան Զաքարյանի [տե՛ս С. Городецкий. Последний крик. Состав. автор предисл. и коммент. Ирма Сафразбекян. Ереван, 2010; ինչպես նաև՝ Ս. Գորոդեցկի. Վերջին ճիչը, ներածությունը գրեց, կազմ. և ծանոթ. Ի. Սաֆրազբեկյանը, Երևան, 2010, էջ 5–18, Ա. Զաքարյան. Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914–1920), Երևան, 1984, էջ 144, 820–823, նույնի՝ Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում, Երևան, 2010, նույնի՝ Сергей Городецкий в Западной Армении и в Закавказье (1916–1921 гг.). Ереван, 2015]:

տակվում է նաև Նվարդի անունը: 1919 թ. մայիսի 6-ին բանաստեղծին ուղղված նամակում Գորոզեցկին գրում է.

«Հարգելի Հովհաննես Փարեակիչ:

... Չմոռանաք այսօրվա երեկոյի մասին: Խնդրում ենք Նվարդին էլ բերեք»<sup>9</sup>:

Իսկ Գորոզեցկին, չհամարձակվելով իր սիրո մեծությունը բանաստեղծի հանդեպ համեմատել Նվարդի՝ հոր հանդեպ ունեցած քնքշանքի ու պաշտամունքի հետ, Թումանյանի մասին բանաստեղծությունը նվիրում է հենց Նվարդին՝ իրենց ծանոթությունից 30 տարի անց՝ 1949 թ. հունիսի 20-ին, Մոսկվայից.

НВАРД ТУМАНЯН

Твою любовь сравнить не смею  
С моею нежностью к нему,  
Но песнь спою я, как умею,  
Его таланту и уму.  
Он был глашатаем свободы,  
Когда над миром мрак стоял,  
И все кавказские народы  
К содружеству с Россией звал.  
Как быстро годы пронеслись!  
Как много унеслось друзей!  
Так пусть откроется в Тбилиси  
Наш Ованесовский музей!<sup>10</sup>

1949 թ. սեպտեմբերի 20-ին Գորոզեցկին Նվարդին գրում է. «Համբուրում եմ ձեռքերը, որոնք ինձ և Հովհաննեսին սուրճ էին մատուցում փոքր սենյակում, որտեղ մեծ մտքեր էին սավառնում»<sup>11</sup>:

Հովհ. Թումանյանի կյանքի նորահայտ վավերագրեր

Նվարդը որպես հարազատ էր ընկալվում բանաստեղծի բոլոր մտերիմների համար: Նրանց թվում առաջիններից էր Թումանյանի սրտակից ընկերներից մեկի՝ Փրիլպոս Վարդազարյանի (Ֆիլիպ)<sup>12</sup> ընտանիքը: Այդ բարեկամության շարունակականությունը հավաստող վավերագիր է նրա քրոջ՝ Մարուսյա

<sup>9</sup> Հայաստանի Հանրապետության Գրականության և արվեստի թանգարան, Թումանյանի ֆոնդ, №1105 (297):

<sup>10</sup> Բանաստեղծությունը պահվում է ԹԸԱ-ում, ՆԱ-ում՝ Մոսկվայից Նվարդին հասցեագրված 1949 թ. հունիսի 20-ի նամակում (ՆԱ, 5, 80):

<sup>11</sup> Ի. Ս ա ֆ Ր ա գ բ ե կ յ ա ն. Թումանյանի ընտանիքի կյանքի էջերից, Երևան, 2009, էջ 200:

<sup>12</sup> Փրիլպոս Հակոբի Վարդազարյան (1858, պատմական Գողթն գավառի Ներքին Ագուլիս գ. – 1935, Թիֆլիս) – հրատարակիչ, գործարար, մշակութային գործիչ, Թումանյանի մտերիմ բարեկամն ու մեկենասը: Ընկերական շրջանում նրան ասում էին Ֆիլիպ: Չլինելով մասնագետ քննադատ՝ Փիլ. Վարդազարյանը դարձավ Թումանյանագիտական առաջին մենագրության հեղինակը [«Վշտի և թախծի երգիչ Հովհաննես Թումանյան (քննադատական փորձ)», Թիֆլիս, 1905]:

Պատմաբանափորձական հանդես 2021 № 2 Историко-филологический журнал



Վարդազարյանի՝ Նվարդին հասցեագրված նամակը<sup>13</sup>, որը վկայում է, թումանյանի՝ ինչպես Ֆիլիպի ընտանիքի հետ ունեցած բարեկամության, այնպես էլ բանաստեղծի կենսագրական մանրամասների, որոշ երկերի ստեղծագործական պատմության, գրողի՝ թարգմանության սկզբունքների ու մտտեցումների մասին: Բանաստեղծը հպարտ էր Ֆիլիպի հետ իր բարեկամությանը: Նամակներից մեկում գրում է. «Ես հաստատ գիտեմ, որ մեր գրականության մեջ ոչ մի գրող էդպես ընկեր չի ունեցել ... Ամեն փողոցում Ֆիլիպ չի ապրում»<sup>14</sup>: Փիլ. Վարդազարյանին է նվիրված թումանյանի «Ընկերիս» և «Երկու սև ամպ» բանաստեղծությունները<sup>15</sup>: Թումանյանագիտությանն անհայտ Մարուսյա Վարդազարյանի այս նամակը ներկայացնում ենք ամբողջությամբ.

«Սիրելի Նվարդ:

Ես վաղուց եմ ստացել քո նամակը, սակայն միայն այժմ եմ պատասխանում, քանի որ շարունակ կարծում էի, որ գալու ես, բայց դու չեկար: Թանկագինս, թումանյանի մասին իմ հիշողությունները շատ են, բավական շատ. նրա թարգմանական գործերից շատերը թարգմանվում էին մեր տանը, հայրիկդ այն ժամանակ դեռևս վատ էր տիրապետում ռուսերենին: Կուցովի տողի — «Сяду я за стол да подумаю» — մասին ասում էր՝ հայ գյուղացին երբեք սեղանի շուրջ չէր մտորում, այլ տեղավորվում էր որևէ պատի տակ մի անկյունում<sup>16</sup>: «Մծիրին» նույնպես մեզանում չէր թարգմանվել<sup>17</sup>: Պուշկի-

<sup>13</sup> Ինքնագիրը պահվում է ԹԸԱ-ում, ՆԱ-ում: Նամակը ռուսերեն է և թվագրված չէ. հավանաբար գրվել է 1950-ականների առաջին տարիներին, երբ Նվարդը դիմում էր ամենքին և ամենուր իր հայրիկի մասին հուշեր ու զանազան այլ նյութեր ձեռքբերելու համար ոչ միայն որպես դուստր, այլ որպես թումանյանի գիտական առաջին հրատարակության պատասխանատու քարտուղար:

<sup>14</sup> Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի լրակատար ժողովածու 10 հատորով (այսուհետ՝ ԵԼԺ), հ. 10, Երևան, 1999, էջ 36–37:

<sup>15</sup> Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 1, Երևան, 2018, էջ 216, 167:

<sup>16</sup> Մ. Վարդազարյանը նկատի ունի ռուս բանաստեղծ Ալեքսեյ Կուցովի «Գեղջուկի մտածմունքը» բանաստեղծության թարգմանության առիթով թումանյանի խոհերը, որոնք արտահայտվել են նաև Փիլ. Վարդազարյանին ուղղված բանաստեղծի 1900 թ. սեպտեմբերի 27-ի նամակում, որտեղ նա հիմնավորում է իր մոտեցումը. «Անցյալ օրը տեղում (առավոտը) «Сяду я за стол» — ուղարկեցի «Տարագին» ... СТОЛ-ը շինել եմ գիտե՞ս ինչ — պատի տակ, և այս ոչ թե հանգի համար, այլ ավելի լուրջ խորհրդով ... Խեղճ հայ մարդու տարակուսանքի ու մտածմունքի տեղը պատի տակն է» (Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 9, Երևան, 1997, էջ 235):

<sup>17</sup> Թումանյանը Լեոնտովի «Մծիրի» պոեմը թարգմանել է 1890-ական թվականներին և առաջին անգամ առանձին գրքով, ընդ որում՝ Փիլ. Վարդազարյանի հովանավորությամբ, լույս է տեսել 1896 թ.: Սակայն այն չէր գոհացնում թարգմանչին և իր կյանքի ընթացքում մերթնդմերթ անդրադարձել է իր թարգմանությանը: Այն վերամշակել է 1908 թ. Բաքվի «Բանաստեղծություններ» ժողովածուի հրատարակության նախապատրաստական շրջանում, երբ պոեմի թարգմանության խնդիրները քննարկում էր հրատարակիչներից Մխիթար Տեր-Անդրեասյանի և Երվանդ Թաղիանոսյանի հետ: Սակայն «Մծիրին» դուրս մնաց Բաքվի ժողովածուից, և թումանյանը մտադիր էր վերատին անդրադառնալ Լեոնտովի պոեմին: Իր վերջին ժողովածուում («Բանաստեղծություններ», 1922) թումանյանը դարձյալ չհերառեց «Մծիրին»՝ համարելով այն դեռևս մշակման արժանի:

ներև ու Լերմոնտովին նա պաշտում էր և ընդօրինակում էր նրանց<sup>18</sup>: Ես հիշում եմ, ինչպես էր նա շարունակ ուզում պարզել՝ արդյոք ինքը բանաստեղծ է, քանի որ նրան քաջքշում ու բզկտում էին՝ մի կողմից տերտերը<sup>19</sup> անպատճառ ուզում էր նրան իր իրավահաջորդը դարձնել, իսկ մյուս կողմից նա գգում էր, որ դա չէ իր կոչումը: Ես հիշում եմ երբ Ֆիլիպը, այն ժամանակ «Մուրճի» հրատարակիչը, առաջին անգամ բերեց նրան մեր տուն, նա մի ամոթխած պատանի էր, որն ամաչում էր, որ վատ էր տիրապետում ռուսերենին, սակայն շատ արագ էր յուրացնում այն ամենը, ինչ մենք նրան թարգմանում էինք, իսկ մենք հիանում էինք, որքան հեշտ էին նրան տրվում հանգերն ու որքան գեղեցիկ էին հնչում բանաստեղծությունները<sup>20</sup>: Քաջագնուներն<sup>21</sup> և Տիգրան Հովհաննիսյանը<sup>22</sup> նրա լավագույն գրաքննադատներն էին, հավաքվում էին այն ժամանակ հինգչաբլի օրերը<sup>23</sup>: Թե ինչ է նա ասել Բելինսկու մասին, ես չեմ հիշում:

Ո՞ր լեզվով է գրվելու քո ատենախոսությունը<sup>24</sup>: Ինձ համար շատ հետաքրքիր կլինի այն կարդալ: Հա, իմիջիայլոց, քո նամակում երկու սխալ կար,

<sup>18</sup> Կարծում ենք, որ Մարուսյան ճիշտ բնորոշում (подражал) չի գործածում: Թումանյանը ոչ թե փորձել է նմանվել նրանց, այլ խոստովանել է Պուշկինի և Լերմոնտովի ազդեցությունն իր ստեղծագործական կյանքի սկզբնական շրջանում: Յու. Վեսելովսկուն ուղղած նամակում բանաստեղծը գրում է. «Նրանք դրել են ինձ ու տվել պոեմայի այն ձևը, որով գրել եմ ես ... որովհետև մեր գրականության մեջ այդ տեսակ պոեմ չի եղել: Սակայն այն էլ ասեմ, որ նրանց ազդեցության տակ ես միայն սկսել եմ» (Հ. Ո. Վ. Թ. ու մ. ա. ն. յ. ա. ն., ԵԼԺ, հ. 9, էջ 383–384):

<sup>19</sup> Տերտերը Թումանյանի կնոջ՝ Օլգայի խորթ հայրն էր՝ ավագ քահանա Տեր-Հովհաննեսը, Թիֆլիսի հայոց կոնսիստորիայի անդամ, կրոնի ուսուցիչ Հովհաննես Մարտիրոսյանը (1850, Շուշա – 1921, Թիֆլիս): Տեր-Հովհաննեսն Օլգային ամուսնացնելիս պայման էր դրել՝ Թումանյանը քահանա դառնա, քանի որ արու ժառանգ չունենր և փափագում էր բանաստեղծին դարձել իր թեմերի ժառանգորդը:

<sup>20</sup> Փիլ. Վարդազարյանն ու Թումանյանը ծանոթացել են 1891 թ. «Մուրճի» խմբագրատանը, հետևաբար, Թումանյանի ռուսերենի թերի խմացությունը վերաբերում է 1890-ական թվականների առաջին տարիներին: Ավելի ուշ նա հիանալի էր տիրապետում ռուսերենին՝ թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքին:

<sup>21</sup> Խոսքը քաղաքական գործիչ, Անդրկովկասի սեյմի անդամ, Հայաստանի առաջին Հանրապետության առաջին վարչապետ, ճարտարապետ Հովհաննես Մաթևոսի Քաջագնուուն (Տեր-Հովհաննիսյան, 1867, Ախալցխա – 1938, Երևան) մասին է:

<sup>22</sup> Տիգրան Ներսեսի Հովհաննիսյան (1865, Թիֆլիս – 1921, Երևան) – թարգմանիչ, գրական գործիչ, իրավաբան:

<sup>23</sup> Այս վկայությունը հավաստում է, որ բացի Թումանյանի տանը կազմավորված «Հնգյակից» ու «Վերնատնից», իշխանուհի Մարիամ Թումանյանի տանը կազմակերպված «Հինգչաբլիներից» եղել է նաև գրական «Քառյակ» կամ մեկ այլ «Հինգչաբլիներ» (Փիլ. Վարդազարյան, Հովհ. Թումանյան, Հովհ. Քաջագնուների և Տ. Հովհաննիսյան) անունով գրական սպոն, որը նախորդել է իշխանուհու տանը ձևավորված «Հինգչաբլիներին» (Մ. Թումանյան, Հովհ. Թումանյան, Փիլ. Վարդազարյան, Ար. Զարգարյան, Լ. Շանթ):

<sup>24</sup> Խոսքը վերաբերում է Ն. Թումանյանի թեկնածուական թեզին՝ «Թումանյանը և ռուս գրականությունը» թեմայով, որը պաշտպանել է 1956 թ. հունվարի 7-ին (տե՛ս ԹԸԱ, ՆԱ, 1, 1/ 11):

Историко-филологический журнал 2021 № 2

Պատմաբանաիրական հանդես

դու մի բարկացիր, որ ես այդ մասին քեզ գրում եմ: Երբ ես ընթացքում որևէ բան հիշեմ, գրի կառնեմ և հետո քեզ կուղարկեմ: Համբուրում եմ, սիրելիս:

Մենք երկու բառարան ունենք՝ մեկը Նար-Պեյինը, 1872, Փարիզ, իսկ մյուսը՝ Սամուել Գանտարյանի Ֆրանսերեն-Հայերեն-Թուրքերեն, Վենետիկ, 1836 թ.: Ես քեզ շատ երախտապարտ կլինեմ, եթե լավ գնով վաճառես դրանք՝ փողը միշտ փող է:

Ողջույններ քո ամուսնուն և բոլոր ձերոնց:

Համբուրում եմ քեզ, մորաքույր Մարուսյա» (ԹԸԱ, ՆԱ, 5, 22/57–60):

### Մուսայաստեղծ Հայուհին

Նվարդն ուներ մարդկային ու կանացի մեծ հմայք: Պատահական չէ, որ մտավորական Հայուհու կերպարը, նրա արտաքին ու ներքին ներդաշնակ գեղեցկությունն անմահացավ Մարտիրոս Սարյանի վրձնի շնորհիվ: Բանաստեղծի դուստրը բարությամբ, հայրենիքին, ընտանիքին, արվեստին, պատմությունն ու գրականությանը, շրջապատի մարդկանց հանդեպ նվիրումով ու անսահման նվիրվածությամբ չափազանց սիրված ու փնտրված անձնավորություն էր: Վալերի Բրյուստովի կինը՝ Իոաննա Բրյուստովան (1875–1965), Նվարդին հասցեագրած 22 նամակներից<sup>25</sup> մեկում (1954 մարտի 1) ափսոսանք է հայտնում, որ եթե բանաստեղծ լիներ, սոնետ կձոներ Նվարդին: Նա Նվարդին անվանում է «ամենայն լավի ու բարության հանճար» և խոստովանում է, որ անցյալի նրա բոլոր նամակներից նուշի ու ծիրանի, հասած խաղողի ու դեղձի բույր էր առնում: Բրյուստովան գրում է. «Դուք և Թումանյանը միաձուլվել եք իմ հոգու մեջ՝ որպես երկու հանճար, Դուք որպես բարության և ամեն լավ բանի հանճար, իսկ բանաստեղծը հիշվում է իր հանճարեղության համար»<sup>26</sup>:

Խոսել Նվարդի հարուստ ու բովանդակալից երիտասարդական տարիների մասին և չհիշել նրա բազմաթիվ երկրպագուներին, անհնար է: Նա իր ժամանակի մտավորական զարգացած Հայուհիներից էր: Նրան բանաստեղծություններ են ձոնել Հովհ. Թումանյանը («Իմ Արուսյակ»), Լեյլին<sup>27</sup> («Աչնան շունչ»), Վաղարշակ Նորենցը («Հոկտեմբերի 3-ը. միշտ սիրելի Նվարդին»), Եղիշե Չարենցը («Նվեր Նվարդին»), Հրաչյա Աճառյանը [«Իմ երգը», «Գոհար աչքերդ սրտիս մեջ», «Վիշտ», «Զ տիվ և զ գիշեր»)], Հովհաննես Շիրազը («Ասում եմ գնանք, օ, գնանք Լոռի», «Հեյ կարկաչող

<sup>25</sup> Տե՛ս С. Г. Ованесян. Переписка Иоанны Брюсовой с Нвард Туманян. – Брюсовские чтения 1983 г. (сборник статей). Ереван, 1985, с. 418–454.

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 432:

<sup>27</sup> Լեյլի (Փառանձեմ Սահակի Տեր-Մկրտչյան–Սահակյան) (1892, Թիֆլիս–1951, Մոսկվա), բանաստեղծուհի, թարգմանչուհի: Նա Նվարդի տարեկիցն էր, ընկերուհին ու համադասարանցին Հովհանյան դպրոցում: Նվարդը գրում է. «Լեյլիի հետ չորրորդ դասարանից մի նստարանի վրա էինք, առաջին նստարանն էր ... Ընդունակություններով երկուսս էլ հետաքրքրվեցինք գրականությամբ ու պատմությամբ: Նա հայոց լեզվից էր ավելի ուժեղ, ես ուռուց լեզվից, ես ավելի պատմությամբ էի հետաքրքրվում, նա՝ գրականությամբ, նա ավելի հասուն էր, հասունացած, փորձված սիրային արկածներով, տղաներով, անվերջ ուռմաններ, հանդիպումներ և սիրային բանաստեղծություններ» (ՆԱ, 1/ 46):

առուներ»», Հովհաննես Կարապետյանը («Նվարդ Թումանյանին. էքսպրոմտ».  
«Ձեր խոր աչքերում, անդորր աչքերում»), Դերենիկ Դեմիրճյանը («Գարուն»),  
Իսուբե Գրիշաչվիլին («Եվ ինչպես աղջիկն տարիքն անցած»):

Նվարդին ձոնված բանաստեղծությունների զգալի մասը պարզապես  
ներբող են Թումանյանի դատեր մարդկային կերպարին: Առաջինը բանաստեղծ  
Հայրիկը դատեր այբումում 1916 թ. հոկտեմբերի 27-ին նրան նվիրեց չափածո  
տողեր՝ Հայրական քնքշությամբ («Լուսապակի իմ Արուսյակ» սկսվածքով)<sup>28</sup>,  
իսկ հետագայում շատ նշանավոր հայեր թողեցին այդ այբումում իրենց սրտի  
խոսքը: Նրանցից ոմանք գրում էին սիրահարված պատանու, ոմանք էլ  
հարազատ եղբոր պես: Ահա հատվածներ այդ բանաստեղծություններից<sup>29</sup>.

Եվ որպես քույրս, որ միշտ գվարթ  
Այդ աղբյուրից ինձ ջուր կբերեիր,  
Ձեն մոռանա երբեք քեզ, Նվարդ,  
Որ արցունքս սրբեցիր երեկ  
(Վ. Նորենց, 1924 հոկտեմբերի 10) (ՆԱ, 6/49):

Ասում եմ գնանք, օ գնանք Լոռի  
Սարերի գմբուխտ գահը բարձրանանք,  
Սուգվենք դյուլթական գիրկը անտառի,  
Աղբյուրների պես ձորերը սուրանք,  
Օ, գնանք Լոռի, գնանք, կաղաչեմ  
Որ Թումանյանի շունչը ես շնչեմ<sup>30</sup>  
(Հ. Շիրազ) (ՆԱ, 6/ 53):

Դաշտ արի դուրս գանք  
Ծաղիկներ շաղ տանք  
Մարգերի միջին,  
Խնկենք մի նոր կյանք  
(Դ. Դեմիրճյան) (ՆԱ, 6/ 41):

<sup>28</sup> Տե՛ս Հովհ. Թումանյան. ԵԼԺ, հ. 1, էջ 307: Նվարդի այբումում ոտա-  
նավորն ուներ «Իմ Արուսյակին» վերնագիրը: Բանաստեղծը նույնիսկ ծանոթագրել  
էր այն գրելով. «Ու աղջիկներից ամեն մեկը մի աստղ ընտրեց կամ համաստե-  
ղություն. Նվարդն էլ ընտրեց Վեներան, Լուսաստղը, Արուսյակը» (նույն տեղում,  
էջ 708): Այնուհետև բանաստեղծությունն առաջին անգամ տպագրվեց «Գեղար-  
վեստ» հանդեսում [տե՛ս «Գեղարվեստ» (Թիֆլիս), 1921, թիվ 7, էջ 66] «Նվարդի  
այբումից» վերնագրով: Նշենք՝ Հովհ. Թումանյանի ԵԼԺ I հատորում բանաստեղ-  
ծությունը լույս է տեսել նույն վերնագրով, իսկ Նվարդի այբումը պահվում է Թու-  
մանյանի թանգարանում (ԹԹ, գգ. 860՝2):

<sup>29</sup> Այս բանաստեղծությունների հատվածները հրատարակվում են առա-  
ջին անգամ:

<sup>30</sup> Ավ. Իսահակյանին ուղղված նամակում Շիրազը գրում է. «Նվարդ Թուման-  
յանը (Հովհ. Թումանյանի դուստրը) խոստացավ ինձ տանել Դեսը, բայց ահա եր-  
կար սպասում եմ նրան, բայց նա ոչ լուր է տալիս, ոչ էլ երևում, որ գնանք Լոռի,  
ուր գուցե մի քիչ ապաքինվեմ ...» (նամակի բնօրինակը տե՛ս Ավ. Իսահակյանի  
տուն թանգարանի պահոց, թիվ 643: Այն անթվակիր է):

Ես էլ սիրեցի մի աղջիկ,  
 Օ, Նվա՛րդ, Նվա՛րդ, այսօր չի ընդունում  
 Այս իմ սիրտը քեզանից բացի ոչ ոքի  
 (Ի. Գրիշաշվիլի. 1918 թ. նոյեմբերի 30) (ՆԱ, 6/ 32):

Նվարդի երկրպագուների թվում ամենանշանավորը Վահան Տերյանն էր, որի ջերմ սերն ու մեծ հարգանքը Նվարդի նկատմամբ գաղտնիք չեն եղել թե՛ Տերյանի կենդանություն օրերին, թե՛ նրա մահից հետո: Այդ են վկայում նրանց ժամանակակիցները, որոնցից շատերը պոետի մահից հետո էլ Նվարդի մեջ որոնում էին ոչ միայն նրա հայրիկին՝ Թումանյանին, այլև Տերյանին, առնում էին երկու բանաստեղծների կարոտը հավասարապես, տեսնում երկուսի մարմնացումը: Այսպես, Անդրանիկ Հովսեփյանը<sup>31</sup> Նվարդին գրում է. «Որքան ուրախ եմ, որ հնարավորություն ունեցա ծանոթանալ մոտիկից մեր ժողովրդի հանճարի դասեր հետ, որի քաղցր ու անուշ բույրն անգամ զգացել է Վ. Տերյանը»<sup>32</sup>: Եղիշե Չարենցը «Նվեր Նվարդին» (1935/1936 թ.) բանաստեղծության մեջ պարզապես արձանագրում է.

Երկու բանաստեղծ	Եվ նրանց կրտսեր
Քո մեջ են միայն	Եղբոր համար դու
Արևն իրենց վառել, –	Հրաշք ես լուսե
Լույս Մուսանների	Լապտեր լուսատու
Սոնետի շարքում	Աչքերում քո վառ, –
Անհասանելի	Որպես ճրագում –
Բանաստեղծ երկու, –	Տեսնում եմ նրանց
Պոետ երկու մեծ,	Հուրը ճառագուն...
Երկու աստղ, Նվարդ,	Եվ նայում եմ երբ
Որոնցով ենք մենք	Աչքերիդ, Նվա՛րդ,
Աշխարհում հպարտ....	Նրանց լույսն է ջեռ
	Ճառագում Նվարդ...
Ապրում ես ինչպես	Փառք և փառք քեզ, Նվարդ,
Քնար կենդանի	Որ սիրով անհուն
Տերյանի հրկեզ	Հուրը սրբազան
Եվ Թումանյանի...	Անմար ես պահում... (ՆԱ, 6/ 64-65) <sup>33</sup> :

Իսկ 1932 թ. օգոստոսի 8-ին Նվարդի ալբոմում էլ գրել էր մի քառատող.

<sup>31</sup> Անդրանիկ Հովսեփյան [գրական անունը՝ Անդրանիկ Սևադա – 1914, Խնձորուտ (Տավուշի մարզ), Աճարկուտ – 1968, Երևան] – արձակագիր, դրամատուրգ, լրագրող:

<sup>32</sup> ԹՂԱ, ՆԱ, 5, 18/85–86:

<sup>33</sup> Չարենցի վերը բերված բանաստեղծության այս հատվածը հրատարակվում է առաջին անգամ: Այն սևագիր է և ամբողջությամբ պահպանվում է ԹՂԱ-ում: Ամենայն հավանականությամբ, թվագրված է Նվարդի հիշողությամբ (1935/1936 թթ., 110 տող): Բանաստեղծությունը Նվարդն արտագրել է Չարենցի ձեռագիր տարբերակից: Չարենցի ինքնագրի պահպանման վայրը մեզ հայտնի չէ, իսկ Նվարդի ինքնագիրը տե՛ս ՆԱ, 8/57–62:

Շրջել է այստեղ Տերյանը,  
Մշուշը նրան գուրգուրել է,  
Անհուն է օրերի երգարանը  
Եվ երգ են անցած օրերը<sup>34</sup>:

Ուշագրավ է, որ հենց Չարենցն էր 1931 թ. համոզում Նվարդին հրապարակել Տերյանից ստացած նամակները «Նոր ուղի» ամսագրում, որը խմբագրում էին Չարենցն ու Բակունցը: Չարենցն էր հորդորում Նվարդին հուշեր գրել Տերյանի մասին. «Կգրես ու ինձ կնվիրես»<sup>35</sup>, – ասում էր նա:

Անշուշտ, գեղարվեստական տեսակետից անմրցելի են Նվարդին ձևավորված Տերյանի բանաստեղծություններն ու տրիտետների շարքը: 1915 թ. հուլիսին բանաստեղծը Պետերբուրգից Նվարդին գրում է. «Ես մի քանի տրիտետ էի գրել Ձեզ համար, իմ սիրելի և լավ Նվարդ ... Ուզում էի, որ «տրիտետների մանյակ» լինի դա»<sup>36</sup>: Եվ XX դ. ամենանուրբ հայ քնարերգուն, հավերժ մարդկային հույզերի ու մտքերի, անհասանելի սիրո, կորստյան մատնված հուրերի, հոգու կարոտների, տխրության, բայց և հույսի, թախծոտ լուսնի լույսի ու անաղմուկ խոսքերի երգիչը հրաշալի բանաստեղծություններ ձևակերպելով, որոնցից են «Երգն այս անգոր ու անգարդ», «Սրտիս հուշերը բարի են դեռ», «Պրտի մնա միշտ ժպտուն ու վառ», «Հիմա բացվում են այդտեղ վարդեր», «14 տող», «Մի տրտնջալ վշտիդ համար՝ սիրո առատ աղբյուր է նա» և այլն:

Նվարդին նվիրված բանաստեղծությունները տարբեր լեզուներով են հայերեն, ռուսերեն, վրացերեն և նույնիսկ՝ գրաբար: Վերջինիս հեղինակը անվանի լեզվաբան Հ. Աճառյանն է:

Նայիս ընդ իս աչոք բացօք  
Նայիմ ընդ քեզ աչոք թացօք,  
Դու լուռ ես միշտ և ոչ խօսիս,  
Այլ ձայն քո լուռ լինի յոգիս (Նա, 8/10):

Ամենևին պատահական չէ, որ Նվարդը կարողանում էր գրավել, ոգևորել ու խանդավառել տարբեր բանաստեղծների և նույնիսկ ոչ բանաստեղծների: Նա ինքը բանաստեղծության սիրահար էր և քնարական հոգու տեր: Նվարդը փորձել է ուժերը գեղարվեստական և սողացի թարգմանությունների ասպարեզում: Դեռևս 1910-ական թվականներին նա թարգմանել է Իվան Նաժդիլինի<sup>37</sup> «Ի՞նչ են ասում աստղերը» բանաստեղծությունը: Նվարդը նաև

<sup>34</sup> Ն . Թ ու մ ա ն յ ա ն . Մեր հանդիպումներից. – Հուշեր Եղիշե Չարենցի մասին, Երևան, 1986, էջ 362: Հիշյալ տողերը Տերյանի մասին Լենինգրադում 1932 թ. օգոստոսի 8-ին Չարենցի գրած ու կորցրած Տերյանի մասին վերջին բանաստեղծության վերջին քառատողն է: Այդ մասին Չարենցը վկայում է դարձյալ Նվարդի ալբոմում (նույն տեղում):

<sup>35</sup> Այս խոսքերը Նվարդի՝ Չարենցի մասին հուշերի այն հատվածից են, որոնք տեղ չեն գտել սպագիր հուշերում (տե՛ս ԹԸԱ, ՆԱ, «Չարենցի հետ»):

<sup>36</sup> Վ . Տ եր յ ա ն . Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 4, Երևան, 1979, էջ 214:

<sup>37</sup> Իվան Ֆյոդորովիչ Նաժդիլին (1874, Վլադիմիրի նահանգ, Ռուսական կայսրություն – 1940, Բրյուսել, Բելգիա) – ռուս հրապարակախոս, գրող, ով ստեղծագործել է հիմնականում պատմական, ֆանտաստիկ ժանրերում:

Թարգմանություն է կատարել պարսիկ նշանավոր բանաստեղծ Բաբա Թահիրից: Ստորև բերում ենք մի հատված Նվարդի թարգմանությունից.

Լարն իմ տխուր քնարի  
Գիսակն է քո բուրալից,  
Ինչ ես արդյոք պահանջում  
Իմ տառապյալ վիճակից:  
Դու որ ինձ հետ, սիրուհիս,  
Ընկեր լինել չես ուզում,  
Ամեն գիշեր էլ ինչ<sup>38</sup> է  
Գալիս ես ինձ երազում (ՆԱ, 2, 13/89):

#### Թուժանյանագիտության նվիրյալը

Մեծանուն բանաստեղծի դուստր լինելը պարտավորեցնում էր Նվարդին և մղում նրան իր ողջ ուժն ու եռանդը ներդնելու թուժանյանագիտության ասպարեզում, որի կենտրոնական ու կարևոր դեմքերից մեկն էր նա շուրջ 34 տարի:

Հակոբ Մանանդյանը 1952 թ. փետրվարի 3-ին Ավ. Իսահակյանի ներկայությամբ ասել է. «Երանի ես էլ Նվարդի պես աղջիկ ունենայի, ամեն ինչ անում է տեղը տեղին, սիրով: Երանի Հովհաննեսին, որ Նվարդի պես աղջիկ է թողել»<sup>38</sup>:

Իհարկե, հարթ ու խաղաղ չի եղել Ն. Թուժանյանի կյանքն ու աշխատանքային ուղին: Եղել են նաև բազմաթիվ հիասթափություններ, անարդար վերաբերմունք: 1937-ից հետո նա ոչ միայն բանաստեղծի դուստրն էր, այլև «ժողովրդի թշնամի» եղբայրների քույրը: 1942 թ. Պատմության և գրականության ինստիտուտի տնօրենը, չհանդուրժելով Նվարդի շիտակ ու համարձակ բնավորությունը, 1942 թ. հեռացնում է նրան աշխատանքից (ՆԱ, 4, 5/18): Սակայն շատ շուտով Հովսեփ Օրբելու միջնորդությամբ Նվարդը վերականգնվում է իր պաշտոնում:

Նվարդը մեծ աշխատանք է կատարել բանաստեղծի գրած և ստացած նամակները հայտնաբերելու գործում, գրախոսել է Թուժանյանի մասին հրատարակված գրքերը և այլն: Գրականագետ Արամ Ինճիկյանը, որը երկար տարիներ աշխատել է Նվարդի հետ, նրան հասցեագրած 1939 թ. նամակներից մեկում գրում է. «Դուք արդեն շատ բան եք արել Հ. Թուժանյանի ստեղծագործությունների ուսումնասիրության համար ու ոչ միայն թուժանյանագիտության հիմքը դուք եք դրել, այլև առաջիններից եք, եթե ոչ ամենաառաջինը, որ գգացել եք մեր գրականության առանձին հեղինակների ու նրանց ստեղծագործության գիտական մասնագիտական ուսումնասիրությունները» (ՆԱ, 5, 14/43–46):

Արժեքավոր են նաև Նվարդի հուշերը թե՛ Թուժանյանի («Հուշեր և գրույցներ»), թե՛ Աղայանի, Շիրվանզադեի, Սունդուկյանի և այլ գրողների ու արվեստագետների մասին: Այդ հուշերը միաժամանակ Թուժանյան-Իսահակյան, Թուժանյան-Տերյան, Թուժանյան-Չարենց կապերի, առնչություն-

<sup>38</sup> Տե՛ս ԹԸԱ, «Ավ. Իսահակյանի մասին հուշեր»:

ների ու հարաբերությունների մասին են: Դրանցում պահպանվել են Ամենայն հայոց բանաստեղծի մասին զանազան գնահատականներ: Շատ բնական է ու հասկանալի, որ բոլորի հետ զրուցելիս Նվարդը երբեք չի մոռացել գրի առնել այն, ինչ վերաբերում էր իր հայրիկին: Ուշագրավ է Շիրազի կարծիքը. «Թումանյանը ինչը լիճը, ձեռք գցես գր, որ ավագը հանես, ծով կղառնա, մեջը կխրվես. պարզ է ու խորը» (ՆԱ, 2, 17/59): Կամ. «Հովհաննես Թումանյանը մեր Շեքսպիրն է՝ առանց դրամաներ գրելու: Նրա պոեմները դրամաներ են: Մարդ էլ կա, որ դրամա կգրի, ոտանավոր դուրս կգա» (ՆԱ, 2, 17/59): Նման կարծիքների, ինչպես նաև Թումանյանի մասին հուշպատճենների, նրա ստեղծագործությունը, մարդկային նկարագրին տված բնութագրումների, այդ թվում նաև կենսագրական ու այլ բնույթի տեղեկությունների կարելի է հանդիպել Նվարդին հասցեագրված բազմաթիվ նամակներում:

### Եզրակացություն

Ն. Թումանյանը իր հայրիկի մշտական ուղեկիցն էր ամենուր՝ թե՛ գրական միջավայրում, թե՛ ազգային կյանքի արյունոտ խաչմերուկներում: Իր ողջ կյանքում նա սրբորեն պահպանեց Թումանյանական ավանդները և դարձավ XX դ. 30–50-ական թվականներին Թումանյանագիտության մեծագույն նվիրյալը՝ ստաճնելով վիթխարի ծավալի մի գործ, որն այն չընդունում անհնար էր նույնիսկ կոլեկտիվ ջանքերով: Նրա հիվանդանոցային վերջին օրերի մասին է պատմում ականտեսը՝ գրականագետ Զվարթ Ղուկասյանը՝ հավաստելով, որ նա խոր ցավ ու ամսոսանք էր հայտնում «Հայրիկի տարեգրությունը մնաց» և չէր սիրում տրտնջալ իր մարմնական ցավերից: Նրա կյանքի վերջին վայրկյաններն անգամ լցված էին միմիայն Թումանյանով (ՆԱ, 2, 61, 25/7, 29): Սակայն միայն մեր օրերում՝ Նվարդի մահից 70 տարի անց, Թումանյանագետների կոլեկտիվ ջանքերով կյանքի կոչվեց Թումանյանի կյանքի տարեգրությունը, «Երկերի գիտական լիակատար ժողովածուի» հատորները, որոնց վերջին հատորներին դեռ սպասում է ընթերցողը: Սակայն այն, ինչ թողեց բանաստեղծի դուստրը, մնալուն արժեք է Թումանյանագիտության համար:

Ն. Թումանյանի կյանքն ու գործը ցուցադրում են նրա ապրած չընդունված ժամանակի գրական, ազգային ու մշակութային կյանքի առօրեականությունը, լրացնում են 1910-ական թվականների երիտասարդական ազգային միությունների պատմությունը, ներկայացնում XX դ. առաջին կեսի հայ դասականների ու նշանավոր անձանց կյանքի շատ մանրամասները, օգնում բացահայտելու նրանց կյանքի ու ստեղծագործության առնչակցությունը:

Սուսաննա Հովհաննիսյան – բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ հին գրականության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ մշակույթի և հայ դասական գրականության պատմություն, Թումանյանագիտություն: Հեղինակ է 12 մենագրության և ավելի քան 200 գիտական հոդվածի: sushovh@mail.ru



## REFERENCES

- Ashkhen. Husher yev entanekan patmutyunner, Yerevan, 2011 (In Armenian).  
 Bryusovskie chtenia 1983 goda (sbornik statey). Yerevan, 1985 (In Russian).  
 E. Charentsi anvan grakanutyan yev arvesti tangaran, Tumanyani fond, № 1105 (297) (In Armenian).  
 “Gegharvest” (Tiflis), 1921, tiv 7 (In Armenian).  
 Zakaryan A. Rus groghnere Andrkovkasum yev hay grakan kyanke (1914–1920), Yerevan, 1984 (In Armenian).  
 Zakaryan A. Sergey Gorodetskin Arevmtyan Hayastanum yev Andrkovkasum, Yerevan, 2010 (In Armenian).  
 Zakaryan A. Sergey Gorodectki v Zapadnoy Armenii i v Zakavkaz’e (1916–1921 gg.). Yerevan, 2015 (In Russian).  
 Tumanyan N. Husher yev zrutsner, Yerevan, 1987 (In Armenian).  
 Tumanyan Hovh. Erkeri liakatar zhoghovadsu 10 hatorov, h. 1, Yerevan, 2018; h. 9, Yerevan, 1997, h. 10, Yerevan, 1999 (In Armenian).  
 Husher Eghishe Charentsi masin, Yerevan, 1986 (In Armenian).  
 “Hovhannes Tumanyan. Hanragitaran”, Yerevan, 2020 (In Armenian).  
 Safrazbekyan I. Tumanyani entaniki kyanki ejerits, Yerevan, 2009 (In Armenian).  
 Gorodetskiy S. Posledniy krik. Sostav., avtor predisl. i komment. Irma Safrazbekyan. Yerevan, 2014 (In Russian).  
 Gorodetski S. Verdjin jiche, neradsutyune grets, kazm. yev dsanot. I. Safrazbekyan, Yerevan, 2010 (In Armenian).  
 Teryan V. Erkeri zhoghovadsu chors hatorov, h. 4, Yerevan, 1979 (In Armenian).  
 “Mshak” (Tiflis), 24. XI. 1918 (In Armenian).  
 “Horizon” (Tiflis), 09. VIII. 1915; 14. VIII. 1915; 24. XI. 1918 (In Armenian).

ДОЧЬ ПОЭТА: НОВОВЫЯВЛЕННЫЕ СТРАНИЦЫ  
 ИЗ СЕМЕЙНОГО АРХИВА ОВАНЕСА ТУМАНЯНА

СУСАННА ОВАНЕСЯН

Р е з ю м е

*Ключевые слова:* Нвард Туманян, Е. Чарени, Р. Ачарян, С. Городецкий, Ав. Исаакян, В. Терьян, М. Вардазарян, гимназия Овнанян, дневники, воспоминания, посвященные Нвард стихотворения, «Мцыри», перевод, влияние, литературная «Четверка», «Четверги».

Среди десяти детей Ованеса Туманяна своей ролью в армянской культурно-общественной жизни и особенно своим вкладом в туманяноведение выделялась Нвард Туманян (1892–1957), жизнь и деятельность которой примечательны и интересны не только потому, что она была дочерью

великого поэта, но и потому, что была яркой личностью, ученым-литературоведом, подвижником армянской культуры.

Нвард всегда отличалась деятельным участием и активной позицией в общественной и национальной жизни. До конца своей жизни она поддерживала связи с армянскими и зарубежными поэтами, переводчиками и литературоведами, занимавшимися творчеством Туманяна. Большой интерес представляет переписка Нвард с Сергеем Городецким, Иоанной Брюсовой, Иосебом Гришашвили. Ей посвящали стихи Ов. Туманян, Е. Чаренц, Ов. Шираз, Д. Демирчян и другие.

Нвард изучала творческую лабораторию Туманяна, собирала воспоминания современников о поэте, составляла подробную биографию его жизни, занималась подготовкой научных изданий литературного наследия Туманяна, научно-исследовательской работой и т. д. Дочь поэта создала непреходящие ценности для туманяноведения.

*Сусанна Ованесян – д. филол. н., ведущий научный сотрудник отдела древней армянской литературы Института литературы им. М. Абегамяна НАН РА. Научные интересы: история армянской культуры и армянской классической литературы, туманяноведение. Автор 12 монографий и более 200 статей и публикаций. sushovh@mail.ru*

THE POET'S DAUGHTER: NEWLY REVEALED PAGES  
FROM HOVHANNES TUMANYAN'S FAMILY ARCHIVE

SUSANNA HOVHANISSYAN

S u m m a r y

*Key words: Nvard Tumanyan, Ye. Charents, H. Acharyan, S. Gorodetsky, Av. Isahakyan, V. Teryan, M. Vardazaryan, Hovnanyan gymnasium, diaries, memoirs, poetry dedicated to Nvard, "The Novice (Mtsyri)", translation, influence, literary "Quartette", "Thursdays".*

Among the ten children of Hovhannes Tumanyan Nvard Tumanyan (1892–1957) stood out for her role in the Armenian cultural and social life and especially for her contribution to the Tumanyan studies, whose life and work are remarkable and interesting not only because she was the daughter of the great poet, but also for her being a bright personality, literary scholar, devotee of Armenian culture.

By her intensive participation and an active position Nvard has always been distinguished in public and national life. Until the end of her life, she kept in touch with Armenian and foreign poets, translators and literary critics who were engaged in the study of Tumanyan's oeuvre. Nvard's correspondence with Sergei Gorodetsky, Ioanna Bryusova, Ioseb Grishashvili is of great interest. Hovh.

Tumanyan, Ye. Charents, Hovh. Shiraz, D. Demirchyan and others dedicated poems to her.

Nvard studied the creative laboratory of Tumanyan, collected the memories of contemporaries about the poet, compiled a detailed biography of his life, was engaged in the preparation of scientific publications of the literary heritage of Tumanyan, research work, etc. The poet's daughter created unprecedented values for the Tumanyan studies.

*Susanna Hovhannisyan – Doctor of Sciences in Philology, Leading Researcher at the Department of Ancient Armenian Literature of the NAS RA Institute of Literature after M. Abeghyan. Scientific interests: history of Armenian culture and classical Armenian literature, Tumanyan studies. Author of 12 monographs and over 200 scientific articles and publications.*  
*sushovh@mail.ru*

---

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ԸՍՏ ՕՍՄԱՆՅԱՆ  
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ  
(1910–1912 թթ.)\*

ՆԱՐԵԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ օսմանյան խորհրդարան, հայ պատգամավորներ, Արևմտյան Հայաստան, հողային հարց, Կ. Պոլսի Հայոց պատրիարքարան, հողային գրավումների հանձնաժողով, հողային օրենսգիրք, կայսերական հրովարտակ:

**Նախաբան**

*XIX դարավերջին և XX դարասկզբին Արևմտյան Հայաստանում առկա սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, ազգային և այլ բնույթի բազմաթիվ խնդիրների մեջ շարունակում էր առաջնային մնալ հողային հարցը: Այս խնդիրն ի հայտ էր եկել արևմտահայության ունեզրկման, ցեղապանության, ապօրինի հարկահանության, մահմեդականների վերաբնակեցման և այլ կամայականությունների արդյունքում: Համիդյան ջարդերի ու դրանց հաջորդած շրջանում արևմտահայերից շատերը զոհ էին գնացել ցեղապանությանը, շատերն էլ արտագաղթել: Նրանց պատկանող անշարժ գույքը կամ կառավարության կողմից տրամադրվել էր մահմեդական ներգաղթյալներին, կամ զավթվել էր տեղական թուրք և քուրդ էշրաֆների<sup>1</sup> կողմից:*

Հողային հարցի քննարկումն առաջին գումարման խորհրդարանում

*1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից և սահմանադրական կարգերի վերահաստատումից հետո վերադառնալով հայրենիք՝ հայերը տեսնում են, որ իրենց տները, հողերն ու նույնիսկ գյուղերը բնակեցված են մահմեդականներով: Ավելին՝ պարզվում է, որ վերջիններս նույնիսկ սեփականության կեղծ վկայականներ ունեն: Երիտթուրքերի հեղաշրջումից հետո Արևմտյան Հայաստանում հիմնականում պաշտոններին մնացել էին նախկին վարչակարգի ներկայացուցիչները, ուստի անիմաստ էր նրանցից օրինական որևէ որոշում ակնկալելը: Հենց այդ պաշտոնյաներն էին հարկային և կադաստրային կամայականությունների հեղինակները: Հայերին ոչինչ չէր մնում, քան հողային հարցի լուծումը որոնել օսմանյան խորհրդարանում:*

---

\* Ներկայացվել է 07. V. 2021 թ.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Խառատյանը (15. VI. 2021 թ.): Ընդունվել է տպագրության 23. VI. 2021 թ.:

<sup>1</sup> N. Martirosyan. The Ashrafs in the Ottoman Parliament. – “Review of Armenian studies” (Yerevan), 2021, № 1, p. 86.

Այդ նպատակով Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանում 1909 թ. նոյեմբերին կազմվում է հողային հարցի հանձնաժողով, որին անդամակցում են Ա. Հալաճյանը, Ռ. Պեղազյանը, Յ. Պառավյանը, ինչպես նաև օսմանյան խորհրդարանի պատգամավորներ Գ. Տեր-Կարապետյանը (Մշո Գեղամ) և Ն. Տաղավարյանը: Մոտ 6–7 ամիս հանձնաժողովն ուսումնասիրում է խնդիրը և հավաքում անհրաժեշտ նյութերը<sup>2</sup>:

1910 թ. մարտի 26-ին «Հողային գրավումների հանձնաժողովը» պատրիարք եղիչն արք. Դուրյանին է ներկայացնում հայերից խլված հողերի տեսակների ու ձևերի վերաբերյալ 14 կետից բաղկացած զեկույց (տեղեկագիր): 1-ին և 2-րդ կետերում խոսվում էր հողի տուրքը չվճարելու և վարկերը չմարելու պատճառով կառավարութայան ու երկրագործական բանկի կողմից հայերի հողերը չնչին գումարներով օտարելու մասին: 3-րդ կետով ներկայացված էին դատարանի կողմից պարտքի դիմաց պետականացված թանկարժեք հողերը: 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերը վերաբերում էին քերաղով (դատարանի որոշումով) կամ առանց քերաղի հայերից խլված հողերին, 7-րդ և 12-րդ կետերը՝ անժառանգ (mahlule) ճանաչված հողերի գավթմանը, 8-րդ և 9-րդ կետերը՝ քերաղով կամ առանց քերաղի բռնի գրավված հողերին, որոնց տուրքերը վճարում էին հայերը, իսկ 10-րդ և 11-րդ կետերը՝ բռնի գրավված այն հողերին, որոնց գավթիչները ձեռք էին բերել սեփականության վկայական (tapu) կամ դատական ակտ (ilam) և իրենք էլ վճարում էին տուրքերը: Վերջապես, 13-րդ և 14-րդ կետերում ներկայացված էին եկեղեցապատկան, վանքապատկան հողերի գրավումը և դրանք մահմեդական գաղթականներին հանձնելը կամ դրանց տեղում նոր շինությունների կառուցումը<sup>3</sup>:

Նույն թվականի մայիսի 29-ին հանձնաժողովը պատրիարքին է ներկայացնում 4 տեսորից բաղկացած ամփոփ տեղեկագիր, որտեղ մանրամասն ցուցակագրված էին հայկական վանքերը, եկեղեցիները, գերեզմանատներն ու եկեղեցական կալվածքները<sup>4</sup>:

Խորհրդարանի քննարկումների ժամանակ հայ պատգամավորների կողմից ներկայացվում է տեղեկագրի բովանդակությունը: Առաջին գումարման երկրորդ նատաշրջանում նրանք ցուցաբերում են ընդգծված գապվածություն, քանի որ սպասում էին հանձնաժողովի աշխատանքների ավարտին, որպեսզի վիճաբանությունների ժամանակ չըջանառություն մեջ դնեն հանձնաժողովի հավաքած հիմնավոր փաստերը:

Օսմանյան խորհրդարանում հայերի հողային հարցին առաջին անգրադարձը եղել է երկրորդ նատաշրջանի 1910 թ. հունվարի 24-ի (փետրվարի 6-ի) նիստում, երբ քննարկվում էր «Մաքսային վարչության վերականգնման» հարցը: Ներքին գործերի նախարարությունը խորհրդարանին խնդրել էր 5.024.000 ղուրուշի վարկ հատկացնել՝ բանտային վարչությանը և գաղթական-

<sup>2</sup> Գ. Տեր-Կարապետյան. Հողային հարցը հայաբնակ նահանգներում մէջ, Կ. Պոլիս, 1910, էջ 45:

<sup>3</sup> Տեղեկագիր Հողային գրավմանց Յանձնաժողովոյ, Պաշտօնական հրատարակություններ ազգային պատրիարքարանի, տետր Ա, Կ. Պոլիս, 1910, էջ 1–2:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 4–11:

նական հանձնաժողովին տրամադրելու համար: Այստեղ Մուշի պատգամավոր Գ. Տեր-Կարապետյանը շեշտում է, որ գաղթականների համար նախատեսված նախորդ տարվա վարկից հայերը ոչ միայն չեն օգտվել, այլև չեն վերադարձվել նրանցից խլված հողերը<sup>5</sup>: Այս թեմայով քննարկում չի լինում, իսկ ինչ վերաբերում էր հայերին վարկ տրամադրելուն, ապա ֆինանսների նախարար Զավիդ բեյը պատասխանում է՝ այդ վարկը ոչ միայն մահմեդական, այլև բոլոր ազգերի գաղթականների համար է և, հետևաբար, որևէ պատճառ չկա, որպեսզի անմասն մնան հայ գաղթականները<sup>6</sup>: Նկատենք, որ 1909 թ. խորհրդարանը 90.000 ոսկի վարկ էր տրամադրել գաղթականներին<sup>7</sup>: Հատկանշական է, որ օսմանյան կառավարությունն այդ վարկերը ծախսում էր միայն մահմեդական գաղթականների վրա՝ հոգալով նրանց ճանապարհածախսը՝ տրամադրելով բնակարան, վարելահող, լծկան անասուններ, գործիքներ, տնկիներ և այլն<sup>8</sup>:

Հայերից խլված հողերի վերադարձի հարցին խորհրդարանն անդրադարձավ 1910 թ. մայիսին: Նաև քննարկեց ու հաստատեց ներքին գործերի նախարարությունը հատկացվող գումարը: Մահմեդականների և քրիստոնյաների հիվանդանոցների նպաստների գումարին ավելացվեց գաղթականներին հատկացվելիք գումարը՝ 20 միլիոն դուրուշ: Անդրադառնալով գաղթականներին հատկացվելիք նպաստին՝ Գ. Տեր-Կարապետյանը նշեց, որ անարդար է գումարը միայն մահմեդական գաղթականներին հատկացնելը: Ավելին, պատգամավորը հիշեցրեց, որ նախկին վարչակարգի օրոք բազմաթիվ հայեր գաղթել են Ամերիկա և Ռուսաստան, սակայն Մահմանադրության հաստատումից հետո վերադարձել ու մնացել են անտուն<sup>9</sup>: Պատգամավորը շեշտում է, որ հայերը ողորմություն չեն խնդրում, այլ պահանջում են իրենց ունեցվածքը, քանի որ ամեն ինչ ունեցել են՝ տուն, հող, անասուն, և այդ բոլորը քրդերը զավթել են: Ելույթի վերջում նա խնդրում է, որպեսզի կառավարությունը գումար հատկացնի հողերը վերադարձնելու համար<sup>10</sup>: «Իթիհազ վե թերաբքը» («Միություն և առաջադիմություն») կուսակցությունը ներկայացնող պատգամավոր, բժիշկ Բըզա Թևֆիկը պաշտպանում է Գ. Տեր-Կարապետյանի պահանջը՝ նշելով, որ հայերը հեռացել են հարստահարություն ու բռնակալությանը չզիմանալով, ապա հարցադրում է անում, թե ինչո՞ւ պետք է օտար երկրներից բերված մահմեդականներին օգնություն տրվի, իսկ բնիկ ժողովրդին՝ հայերին՝ ոչ<sup>11</sup>: Վարչապետ Իբրահիմ Հագբը փաշան, որը սկզբից մինչև վերջ ներկա էր նիստին, ելույթ է ունենում և հայտարարում գաղթականների մասին խորհրդարանում ծագած հողային խնդիրը շատ կարևոր է, և կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում այդ հարցին, ապա շարունակելով նշում Գ. Տեր-Կարապետյանը իրավացի է, և գաղտնիք չէ, որ նախ

<sup>5</sup> «Ազատամարտ» (Կ. Պոլիս), 24. I. 1910:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>7</sup> «Ծիածան» (Կ. Պոլիս), 02. VI. 1909:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>9</sup> Meclisi Mebusan Zabıt Ceridesi (այսուհետ՝ MMZC), Inikad: 97, 12 Mayıs 1326 (1910), devre: 1, cilt: 5, içtima senesi: 2, s. 479.

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 480:

կին վարչակարգի օրոք մի շարք պատճառներով Անատոլիայի հայերը ստիպված են եղել լքել իրենց հայրենիքը՝ ծախելով, թողնելով տուն-տեղ, գործ-գործատեղի, արտ ու այգի և նույնիսկ պարտադրվել են ստորագրել մի փաստաթուղթ, ըստ որի այլևս երբեք թուրքիա չեն վերադառնալու<sup>12</sup>: Ապա վարչապետն ավելացնում է, որ Սահմանադրության հռչակումից հետո հայերը հայրենասիրությունից դրդված վերադարձել են հայրենիք, սակայն այստեղ հողային խնդիր է առաջացել, ինչը քննվում է ամենայն մանրամասնությամբ, քանի որ այդ հողերի մեծ մասը զավթված են, և հետ վերադարձնելիս մի կողմին գոհացնելով չպետք է անարդար գտնվել մյուս կողմի նկատմամբ: Նա տեղեկացնում է՝ ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը պետք է մեկնի Անատոլիա և տեղում կազմի օրենքի նախագիծը, որը կներկայացվի առաջիկա նստաշրջանում<sup>13</sup>: Այսուամենայնիվ, վարչապետը վերահաստատեց, որ գաղթականների համար խնդրված վարկը վերաբերում է միայն մահմեդական գաղթականներին<sup>14</sup>:

Ճավայի է նշել, որ հայ գաղթականների վերաբնակեցմանը և հողերի վերադարձին վերաբերող հարցը բարձրաձայնեց միայն մեկ հայ պատգամավոր, մինչդեռ այս թնջուկին դրական լուծում տալու համար ճիշտ կլինե՞ր հայագգի մյուս պատգամավորների միջամտությունը ևս, ինչը տեղի է ունենում հաջորդ քննարկումների ժամանակ:

Ինչևէ. մահմեդական գաղթականների վերաբնակեցման խնդրի շուրջ առարկում է Սալոնիկից բուլղար պատգամավոր Քրիստո Տալչևը՝ նշելով, որ էրզրումում անմշակ հող չի մնացել, իսկ կառավարությունը շարունակում է ազարակներ գնել և հանձնել Բուլղարիայից տեղափոխվող մուհաջիրների: Վարչապետը հիմնավորեց այդ քաղաքականությունը՝ ասելով, որ էրզրումի բնակչիմայական պայմանները համապատասխանում են գաղթականների նախկին բնակավայրերի պայմաններին, մինչդեռ նախկինում նրանց վերաբնակեցրել են Կիլիկիայում ու Սիրիայում: Նրա հավաստմամբ՝ էրզրումի շրջանն ուներ այնպիսի բարեբեր հողեր, որոնք կարող էին գյուղմթերքով ապահովել իր բնակչության քանակին երկու անգամ գերազանցող մարդկանց<sup>15</sup>:

Փաստորեն, դեռևս 1909–1910 թթ. դրությամբ օսմանյան կառավարության կողմից հետևողականորեն իրականացվել է Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի բնակչության ժողովրդագրական պատկերի փոփոխության քաղաքականություն, ինչին ընդդիմացել են ավելի շատ օտարագգի, քան հայ պատգամավորները: Այս հանգամանքը բացատրվում է հայ պատգամավորների որդեգրած գգուշավոր քաղաքականությամբ: Շուտով, սակայն, ձեռքի տակ ունենալով Պատրիարքարանի հանձնաժողովի տեղեկագրի տվյալները, ինչպես նաև տեսնելով երիտթուրքերի անպատասխանատու վերաբերմունքը նրանք սկսում են բացահայտ խոսել արևմտահայության հողային և մյուս խնդիրների մասին՝ ներկայացնելով անհերքելի փաստեր:

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> «Բյուզանդիոն» (Կ. Պոլիս), 13. V. 1910:

<sup>14</sup> «Ազատամարտ», 13. V. 1910:

<sup>15</sup> Տե՛ս «Բյուզանդիոն», 13. V. 1910:





անդորրութիւնն հաստատել կ'ուզէք, լուծեցէ՛ք հողային խնդիրը, որմէ կտառապի Հայ և Քիւրտ աղքատ ժողովուրդը»<sup>19</sup>:

Վարդգեսի խոսքերը հաստատում է նաև Գ. Տեր-Կարապետյանը՝ ավելացնելով, որ ապօրինի գրավված հողերը դեռ չեն վերադարձվել իրենց օրինական տերերին: Վերջինս նույնիսկ օրինակներ է բերում. «Մանազկերտի մեջ Լաթար անունով 50 տնավոր գյուղ մը կայ. այս գյուղին Հայ բնակիչները վտարված են իրենց հողերեն: Սասունին Դժպատրիկ գյուղին մէջ ալ «աղա»ները գրաված են Հայերու և Քյուրտերու հողերը: Խնուսի 16 գյուղերու մեջ ժողովուրդը թշվառացած է աղաներու բռնութիւններուն երեսեն: Մանազկերտի գայմագամը Հայերն իրենց հողերեն դուրս հանած է և հոն հաստատած է մուհաճիներ, հակառակ անոր որ այնչափ պարապ հողեր կային անոնց տալու համար: Այս խնդիրը երեք տարիե ի վեր կը ձգձգվի ...»<sup>20</sup>:

Գ. Տեր-Կարապետյանը պնդում է, որ հողային հարցը կարող է լուծվել նույնիսկ մեկ հրամանով. օրենք ընդունելու կարիք էլ չկա: Սվազից ընտրված պատգամավոր Նազարեթ Տաղավարյանն ավելացնում է արդեն քանի անգամ Հայ երեսփոխանները բողոքներ են ներկայացրել, սակայն դրանք անտեսվել են: Նրա ելույթից պարզ է դառնում, որ Պատրիարքարանը կառավարութեանն արդեն ներկայացրել է «Հողային գրավումների հանձնաժողովի» տեղեկագիրը, որտեղ գրավված հողերի բազմաթիվ ցուցակներ կան: Ապա Հայ պատգամավորը բարձրաձայնում է. «Մեկ ցանկն ալ հոս է ահա՛, Պատրիարքարանին մեջ կազմված հանձնաժողով մը պատրաստած է փաստերու վրա հիմնվելով: Մինչև հիմա 27 եկեղեցի, 13 վանք, 16 գերեզմանատուն, 81 ազգապատկան ազարակ և 7000 արտ գրավված է Հայերուն ձեռքեն»<sup>21</sup>: Խորհրդարանի որոշ անդամներ Տաղավարյանի բերած փաստերը փորձում են կասկածի տակ դնել, սակայն հայագրի պատգամավորը պատասխանում է. «Ասիկա Հայու, Քյուրտի խնդիր չէ, հողային հարց է: Քյուրտ գյուղացիներեն հանրագիրներ ստացած եմ, որոնք կ'բողոքեն գրավիչներուն դեմ: Այլ ևս կապառեք մեր համբերութիւնը»<sup>22</sup>:

Տաղավարյանի փաստարկված ելույթը երիտթուրքերին ստիպում է միջամտել: Ելույթ է ունենում Մեհմեդ Թալեաթ բեյը՝ հիշեցնելով հայագրի պատգամավորներն իր նախարարութեան օրոք դիմումներ են հղել, որից հետո հողային օրինագիծ է մշակվել և հանձնվել Պետական խորհրդի քննարկմանը: Ապա նա շեշտում է, որ հայերի ձեռքից հողերն ապօրինի գրավվել են, սակայն հողեր էլ կան, որոնց Ֆէրագի գործողութիւնը կատարված չի, ինչն էլ վեճի առարկա է դարձել: Նախարարը նաև հույս է հայտնում, որ իր նշած օրինագիծն առաջիկա նստաչրջանում կ'ներկայացվի խորհրդարանին<sup>23</sup>:

Թալեաթը հավասարութեան նշան էր դնում հայերին բռնի հողագրկելու և թուրքերի անապօրինի հավակնութիւնների միջև: «Միութիւն և առաջադիմութիւն» կուսակցութիւնը պարզապես խուսափում էր հողային հարցի

<sup>19</sup> «Բյուզանդիոն», 04. V. 1911:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>21</sup> «Բյուզանդիոն», 05. V. 1911:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>23</sup> MMZC, Inikad: 100, 4 Mayıs 1327 (1911), devre: 1, cilt: 6, içtima senesi: 3, s. 628.



առաջին գումարման Հայագգի 11<sup>27</sup> պատգամավորներից 10-ը՝ Համբարձում Պոյաճյանը, Գեղամ Տեր-Կարապետյանը, Վահան Փափազյանը, Գրիգոր Զոհրապը, Հակոբ Պոյաճյանը, Պետրոս Հալաճյանը, Նազարեթ Տաղավարյանը, Վարդգես (Հովհաննես Սերենգուկյան), Գարեգին Փաստրմաջյանը և Հարություն Պոչկեզենյանը<sup>28</sup>:

Օգտագործելով Հայ պատգամավորների հուշագիր ներկայացնելու փաստը՝ վարչապետը ցանկանում էր ստանալ Հայ և հույն պատգամավորների աջակցությունը խորհրդարանը ցրելու համար: Պատահական չէ, որ նրա ելույթից մի քանի օր անց՝ դեկտեմբերի 9-ին, Արևմտյան Հայաստանից ընտրված գրեթե բոլոր թուրք և քուրդ պատգամավորները վարչապետին ներկայացնում են խնդրագիր, որում խիստ անհանգստություն են արտահայտում Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ չիրագործելու առնչությամբ<sup>29</sup>: Ըստ ամենայնի՝ այս խնդրագիրը նպատակ ուներ ստվերել Հայ պատգամավորների ներկայացրած հուշագիրը: Նրանք առաջին անգամ էին հետաքրքրվում Արևմտյան Հայաստանի բարենորոգումներով, և, բացի այդ, վերջին 4 տարիներին ոչ միայն չէին խոսել այս հարցի շուրջ, այլև տարբեր մեթոդներով լուծել էին Հայ պատգամավորներին, երբ վերջիններս խնդիրը բարձրացրել էին խորհրդարանում:

Չնայած ընդդիմադիր պատգամավորների պայքարին՝ իթիհատականները, այնուամենայնիվ, հաջողեցին լուծարել խորհրդարանը. 1912 թ. հունվարի 5-ին ձերակույտը (խորհրդարանի վերին պալատ) սուլթանին հանձնեց պատգամավորական ժողովը ցրելու մասին համաձայնությունը:

Խորհրդարանի լուծարումից հետո իթիհատականները համոզված չէին, թե կկարողանան արդյոք մեծամասնություն կազմել նոր խորհրդարանում: Թե՛ «Իթիհատ վե թերաքը» և թե՛ ընդդիմադիր «Հյուրիեթ վե իթիհյաֆ» («Ազատություն և համաձայնություն») կուսակցությունների համար կարևոր էր, թե որ ուժին կաջակցեն Հայ քաղաքական կուսակցությունները: Իթիհատականների համար անհրաժեշտություն դարձավ Հայ հեղափոխական դաշնակցության հետ համագործակցությունը: Ուստի դիմեցին ՀՅԴ-ին՝ առաջարկելով հանդես գալ միասնաբար, քանի որ պատրաստ են Արևմտյան Հայաստանում իրականացնել անհրաժեշտ բարեփոխումներ: Իթիհատը և դաշնակցությունը 1912 թ. հունվարին կազմում են համատեղ հուշագիր, որտեղ ի թիվս առաջադրված պահանջների, կարևորվում էր նաև վարչական կարգով հայերից խլված հողերի վերադարձի հարցը: Իթիհատականները խոստանում էին ընտրվելու դեպքում հայերի հողերում ապօրինի հաստատված քրդերին հատկացնել նոր հողեր<sup>30</sup>: Հուշագրից զատ կազմվեց նաև համաձայնագիր, որի տակ ստորագրեցին իթիհատի կենտրոնական կոմիտեի ամենահեղինակավոր ներկայացուցիչները<sup>31</sup>:

<sup>27</sup> Իգմիթից ընտրված պատգամավոր Հակոբ Պապիկյանը հանկարծամահ է եղել 1909 թ., ուստի 1911 թ. դրությամբ պատգամավորները 11-ն էին:

<sup>28</sup> Գ. Զ ո հ ր ա պ. նշվ. աշխ., էջ 101:

<sup>29</sup> «Ազատամարտ», 10. XII. 1911:

<sup>30</sup> Տե՛ս Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919). Под. ред. В. Микаеляна. Ереван, 1995, с. 135.

<sup>31</sup> Նույն տեղում:

Նույնաբովանդակ մի համաձայնագիր 1912 թ. փետրվարին կնքվեց սոցիալ-դեմոկրատական «Հնչակյան» և «Հյուրիեթ վե իթիլյաֆ» կուսակցությունների միջև: Համաձայնագրի 6-րդ հոդվածով վերջինս խոստանում էր հայերից ապօրինաբար խլված բոլոր հողերը վերադարձնել իրենց իսկական տերերին՝ դատական կարգով<sup>32</sup>: Հենց այս կետն էլ դաշնակցությունը դարձրեց քննադատության թիրախ՝ պնդելով, որ հողերի վերադարձը պետք է իրականացվի ոչ թե դատական, այլ վարչական կարգով: Հաշվի առնելով այն իրողությունը, որ շատ վայրերում բռնատերերի սարսափից հայ գյուղացիները չէին համարձակվում դատական գործընթաց սկսել իրենց հողը զավթածների դեմ՝ դաշնակցությունն անիրական էր համարում դատական ճանապարհով հողային հարցի լուծումը<sup>33</sup>:

ՀՅԴ-ն հանդես էր բերում դյուրահավատություն՝ կույ տալով հրամցված խայծը և խաբվում երիտթուրքերի կողմից: 1912 թ. մինչև 1915 թ. հայերի ցեղասպանության սանձազերծումն Արևմտահայաստանում դժվար է գտնել որևէ նախադեպ՝ հայերի օգտին հողային վեճը դրական լուծելու ելքով: Այսպիսին էր իրավիճակը նաև 1910–1912 թթ., որը լրացնում է իբրև բաղադրիչ իթիլիհատի կառավարման այս ամբողջ ժամանակաշրջանը՝ բնութագրելով արևմտահայության զանգվածային հողազրկմամբ և ունեցվածքին տիրանալու թուրքական մոլուցքի ինքնաբավարարմամբ: Եվ այս իմաստով ոչ միայն ՀՅԴ-ն, այլև «Հնչակյան» կուսակցությունը բավարարվեցին հողային հարցի դատական կամ վարչական հանգուցալուծման երկու տարբերակով, որ նրանց ներկայացրել էին թուրքական քաղաքական կուսակցությունները:

Հողային հարցի քննարկումը երկրորդ գումարման խորհրդարանում

Երկրորդ գումարման խորհրդարանն իր աշխատանքները սկսում է 1912 թ. ապրիլի 21-ին: Մայիսի 5-ին տեղի է ունենում կարևոր իրադարձություն, որն ուղղակիորեն ազդում է խորհրդարանի հետագա գործունեության վրա. դաշնակցությունը խզում է հարաբերությունները իթիլիհատի հետ: Այս քայլը պայմանավորված էր նրանով, որ «սահմանադրական հինգ տարիներու տևողութեան միջոցին «Իթիլիհատ վե թերաքք» կուսակցությունը հակառակ բազմաթիվ հանդիսավոր խոստումներու, հիմնավոր գոհացում չտուալ հայ ժողովրդի և Դաշնակցության ամենեն տարրական պահանջներուն ...»<sup>34</sup>: Ավելորդ չէ նշել՝ «տարրական պահանջներ» ասելով՝ դաշնակցությունը նկատի ուներ արևմտահայության խնդիրներին (հողային հարցի լուծում, արդարադատության իրականացում, օրենքի գերակայության հաստատում և այլն) լուծում տալը: Իթիլիհատի հետ հարաբերությունները խզելու օրը պատահական չէր, քանի որ հենց այդ օրը հաստատվեց օսմանյան խորհրդարանի հիմնական կազմը: Պարզ դարձավ, որ ընտրությունների արդյունքում խորհրդարանում հայտնվել են համաձայնագրով խոստացված քսանի փոխարեն ընդամենը տասը հայ պատգամավոր: Հայազգի պատգամավորների քանակի նվա-

<sup>32</sup> Տե՛ս Н. С. Хнкоян. Выборы 1912 года в Турции и формирование антимладотурецкого блока.— «Вестник общественных наук» АН АрмССР, 1990, № 7, с. 47.

<sup>33</sup> Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1457, ց. 1, գ. 81ա, թ. 2:

<sup>34</sup> Նույն տեղում, թ. 6:

զուամը երիտթուրքերի՝ հակահայ քարոզչության և աննախադեպ ընտրակեղծարարության հետևանքն էր: Թեև Դաշնակցությունը խզեց հարաբերությունները իթթիհատի հետ, այնուամենայնիվ հայտարարեց, որ ոչ մի հակակառավարական քայլ չի ձեռնարկի, քանի դեռ երկիրը գտնվում է պատերազմական դրություն մեջ: Չնայած այս ամենին, հայ պատգամավորները շարունակեցին արևմտահայությանը հուզող խնդիրների լուծման համար իրենց մղած համառ պայքարը:

1912 թ. հունիսի 28-ին օսմանյան խորհրդարանը կրկին լսում և քննարկում է հողային հարցը: Օրակարգում կադաստրային մատենագրության հարցն էր: Իգմիրի իթթիհատական հայ պատգամավոր Վահան Պարտիզպանյանը քննադատում է կադաստրի անփույթ աշխատանքը, քանի որ շատ վայրերում հողի սեփականատերերի բացակայության պայմաններում այդ հողերի կալվածագրերն ապօրինի տրվել են այլ մարդկանց<sup>35</sup>: Գ. Տեր-Կարապետյանը, օգտվելով ընդհանրապես հնարավորությունից, կրկին խորհրդարանին է ներկայացնում հողային հափշտակությունների հարցը: Նա փաստերով ապացուցում է, որ «Թափուի» (կադաստր) պաշտոնյաները մեկ կալվածքի համար երկու-երեք հոգու կալվածագիր են տրամադրել: Արդյունքում՝ մեկ արտի համար երկու-երեք սեփականատերեր էին հայտնվել: Ապա հայ պատգամավորը մանրամասնում է, թե ինչպես են նախկին վարչակարգի ապօրինություններից տուժած հայերի հողերը կադաստրի տեսուչների կողմից պետականացվել՝ համարվելով լքված հողեր: Գ. Տեր-Կարապետյանը խորհրդարանին հիշեցնում է, որ 1911 թ. Կոստվոյում կատարվելիք գույքագրման համար կառավարությունը 85.000 ղուրուշ էր հատկացրել, և առաջարկում է գույքագրման առավել մեծ կարիք ունեցող Բիթլիսի համար 75.000 ղուրուշ տրամադրել<sup>36</sup>:

Գենչից ընտրված քուրդ պատգամավոր Մեհմեդ Էմինը փորձում է հերքել հողային հափշտակումների մասին Գ. Տեր-Կարապետյանի ներկայացրած փաստերը: Նա հայտարարում է՝ Սասունի հողերի մեծագույն մասը ժամանակին պատկանել են քուրդ աղաներին, որոնք երկար ժամանակ միմյանց հետ ընդհարումների հետևանքով չէին կարողանում զբաղվել հողերի մշակությամբ: Ուստի Սիլվանից ու այլ վայրերից բերեցին հողագործների և նրանց հանձնեցին այդ հողերի մշակումը խաֆիրության (ապօրինի հարկատեսակ) շահաբաժնի պայմանով: Սակայն Սահմանագրության հուշակումից հետո, երբ այլևս օրենքով արգելվում է խաֆիրությունը, այս հողագործները հրաժարվեցին շահաբաժնի վճարել և հայտարարեցին, թե այդ հողերը իրենց օրինական սեփականությունն են<sup>37</sup>: Միաժամանակ Մեհմեդ Էմինը խոստովանում է, որ երկու անձին միևնույն հողի համար սեփականության վկայական է տրվում, քանի որ տեղերում վարչական աշխատողները սեփականության վկայական են տալիս գավառապետներից վկայագիր բերող բոլոր գյուղացիներին:

Իր ազգակցին փորձում է պաշտպանել հայտնի քուրդ պատգամավոր Սուլեյման Սուդին, ով Գ. Տեր-Կարապետյանի ներկայացրած դեպքերն անհավանական է համարում: Սակայն մատենագրության վերատեսուչ Մահմուդ

<sup>35</sup> «Ազատամարտ», 29. VI. 1912:

<sup>36</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>37</sup> Նույն տեղում:

էսաղը Գ. Տեր-Կարապետյանի ներկայացված բոլոր փաստերը հայտարարում է հիմնավոր և նշում՝ նույնիսկ 100.000 դուրուշ գումարը բավական չէ այդ հարցը լուծելու համար, և որ ոչինչ չի փոխվի, եթե անհրաժեշտ գումարը չտրամադրվի:

Արևմտահայության հողային հարցի քննարկումը շարունակվում է հունիսի 30-ին: Այս անգամ մանրամասն ու հանգամանալից ելույթ է ունենում Գրիգոր Զոհրապը: Նա նախ տեղեկացնում է խորհրդարանին, որ Բիթլիսի կալվածագրության համար խնդրված 85.000 դուրուշի վարկը հավելյալ ծախս չէ, այլ վերցվում է Կոստովոյի կուսակալության համար տրամադրված վարկից, որն արդեն կառավարության որոշմամբ չեղյալ է համարվել: Զոհրապը բացատրում է, որ Արևմտյան Հայաստանում հայերի հողային խնդիրը «հին ու ծանր վերք» է, և որ 85.000 դուրուշի վարկն անհրաժեշտ է նախապատրաստական աշխատանքների համար: Պատգամավորը շեշտում է՝ իրենց խնդրած վարկի տրամադրումով կառավարությունը կապացուցի, որ վճույթ է լրջորեն գործել և հույս կներշնչի ժողովրդին: Զոհրապը ևս մեկ անգամ պնդում է. «Այսքան մեծ հարց մը 85.000 դրշով չի լուծուիր անշուշտ»<sup>38</sup>: Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած քաղաքական և տնտեսական իրադարձությունների պատմական կարճ ակնարկից հետո Զոհրապը ներկայացնում է խնդրի իրավական կողմը: Նա հիմնվում է հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի վրա, որի համաձայն, որևէ գյուղի կամ քաղաքի բնակչություն, եթե ամբողջովին կամ մասամբ լքել է իր հայրենիքը, ապա այդ հողերն անտեր չեն համարվում: Սակայն եթե այդ բնակչությունն առանց պատճառի հեռանա կամ ստիպողաբար գաղթելուց հետո երեք տարվա ընթացքում չվերադառնա, ապա այդ հողերն անտեր կհամարվեն<sup>39</sup>: Շարունակելով իր խոսքը՝ Զոհրապը հետևյալ հարցադրումն է անում. «Հայերը արդեօք կամովի՞ն ձգեցին իրենց հողերը և կամ յանցալո՞ր էին: Ո՞ր խիղճը, որ արդարութիւնը յանցաւոր կը նկատէ մարդիկ որոնք իրենց ինչքը, կեանքը և պատիւը պահպանելու համար կստիպուին մեկնիլ իրենց հայրենիքէն»<sup>40</sup>:

Տեսնելով, որ հողային բարեփոխման հարցում հայազգի պատգամավորներն անըզգվելի են մնում՝ վիճաբանությունը միջամտում է իթիհհատի խորհրդարանական խմբակցության ղեկավար Սեիդ բեյը, ով հայտնում է հարցի լուծման համար կառավարությունը կանոնադիր է պատրաստել: Դա չի գոհացնում Մուշից ընտրված պատգամավոր Գ. Տեր-Կարապետյանին, ով նշում է ժողովուրդը չորս տարուց ավելի սպասում է կառավարության որևէ գործողության, և որ օրինագծով հարցը լուծելու համար ստիպված կլինեն սպասել ևս այդքան:

Հողային հարցին կարճատև ակնարկ արվեց նաև երկու օր անց՝ հուլիսի 2-ին: Այդ օրը խորհրդարանը քննարկում էր վարչապետի վարած ներքին ու արտաքին քաղաքականությունը: Նիստն ավարտվելու էր կառավարությունը

<sup>38</sup> Տե՛ս «Ազատամարտ», 01. VII. 1912:

<sup>39</sup> MMZC, Inikad: 32, 30 Haziran 1328(1912), devre: 2, cilt: 2, içtima senesi: 1, s. 286.

<sup>40</sup> «Ազատամարտ», 01. VII. 1912:

վստահության քվեարկությունը: Վարչապետ Սայիդ փաշայի երկարուձիգ ելույթից հետո խոսք են վերցնում երեք երեսփոխաններ՝ Ֆերիդ փաշան, Շահին բեյը և Վարդգեսը: Առաջին երկուսը խոսում են պլանական ապստամբության մասին, մինչդեռ վերջինս անդրադառնում է Արևմտյան Հայաստանի կացությանը: Նա գանգատվում է, որ մեկը մյուսին հաջորդած կառավարությունները խոստումներից բացի, ոչինչ չեն տվել Արևմտյան Հայաստանին: Հիշեցնում է նաև, որ 7 ամիս առաջ վարչապետ Սայիդ փաշան նույնպես խոստումներ տվեց, բայց ոչինչ չփոխվեց: Դաշնակցական պատգամավորը նշում է, որ քանի դեռ կառավարությունը գործնականում բարենորոգումները չի ձեռնարկել, ինքը և կուսակցական ընկերները ձեռնպահ են մնալու վստահության կամ անվստահության քվե տալուց<sup>41</sup>:

Այսպիսով «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը և նրա կազմած կառավարությունն առաջին անգամ չի ստանում դաշնակցական պատգամավորների աջակցությունը: Սա նաև հողային հարցի նկատմամբ երիտթուրքերի հստակ դիրքորոշման բացակայության հետևանք էր:

### Եզրակացություն

Երիտթուրքական իշխանությունները Սահմանադրության հռչակումից հետո տարիներ շարունակ ոչինչ չարեցին արևմտահայ շինականի համար կենսական նշանակություն ունեցող հողային խնդրի լուծման ասպարեզում: Ստանալով թուրք, քուրդ և արաբ էջրաֆների աջակցությունը՝ երիտթուրքերը վարում էին հայաբնակ վիլայեթները հայազերծելու ծրագրավորված քաղաքականություն, որի առանցքը հայերի հողազրկումն էր:

Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորները քաջ գիտակցում էին հողային հարցի խորքային կարևորությունն ու դրա լուծման կենսական նշանակությունը: Նրանք օսմանյան խորհրդարանում ոչ միայն բարձրաձայնել և հուշագրեր էին ներկայացրել Արևմտյան Հայաստանում հողային հարցի մասին, այլև համակողմանի ուսումնասիրել էին խնդիրն ու առաջադրել լուծման հնարավոր տարբերակներ: Հայագրի պատգամավորները թեև անդիջում պայքար մղեցին իրենց հայրենակիցների շահերի պաշտպանության համար, սակայն շոշափելի արդյունքի չհասան:

Նարեկ Մարտիրոսյան – «Հայբուսակ» համալսարանի հասարակագիտական առարկաների ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց պատմության նորագույն շրջան, հայ-թուրքական հարաբերություններ: Համահեղինակ է 1 գրքի և հեղինակ 4 հոդվածի: martino-1988@mail.ru

### REFERENCES

- Armyanskiy vopros i genocid armyan v Turtsii (1913–1919). Materialy politicheskogo arkhiva ministerstva inostrannykh del kayzerovskoy Germanii. Pod. Red. V. Mikayelyana, Yerevan 1995 (In Russian).

<sup>41</sup> Տե՛ս MMZC, Inikad: 30, 2 Temmuz 1328 (1912), cilt:1, s. 328.





депутаты второго созыва (апрель 1912 г. – июль 1912 г.) тоже настаивали на решении этого вопроса. Они не только озвучили и представили меморандумы о существовании земельного вопроса в Западной Армении, но и внимательно его изучили, выдвинули все возможные варианты его решения в рамках закона. Власти младотурок не решали земельный вопрос в течение пяти лет после провозглашения конституции, тем более, начиная с 1910–1911 гг. они заняли очевидную антиармянскую позицию. В конце 1911 г. правительство манипулировало земельным вопросом, чтобы получить поддержку армянских депутатов и распустить парламент. Весной 1912 г., во время предвыборной кампании, младотурки, несмотря на соглашение, подписанное ими с армянской партией Дашнакцутюн, вместо 20 дали 10 мандатов. В результате Дашнакцутюн разрывала всякие отношения с партией «Единение и прогресс».

*Нарек Мартиросян – соискатель Института истории НАН РА, преподаватель кафедры общественных предметов университета «Айбусак». Научные интересы: новейший период истории Армении, армяно-турецкие отношения. Соавтор 1 книги и автор 4 статей. martino-1988@mail.ru*

THE WAYS OF SOLVING THE LAND ISSUE ACCORDING TO THE  
ARMENIAN DEPUTIES OF THE OTTOMAN PARLIAMENT  
(1910–1912)

NAREK MARTIROSYAN

Summary

*Key words: Ottoman parliament, Armenian deputies, Western Armenia, land issue, Armenian patriarchy in Constantinople, committee of land grabbing, land law, Imperial edict.*

At the end of the 19th century and at the beginning of the 20th century, the land issue remained a priority among many socio-economic, socio-political, national and other issues of Western Armenia. The land issue arose as a result of the deprivation of the Armenians of Western Armenia, the genocide, illegal taxation, the resettlement of Muslims, and other arbitrariness. Their real estate was either provided by the government to Muslim immigrants or confiscated by local Turkish-Kurdish nobles. After the Young Turks coup, the problems of the Armenians not only continue to exist but a year after the coup they began to deepen with new impetus.

The twelve Armenian deputies of the first convocation (1908–1912) of the Ottoman Parliament, realizing the depth of the land issue and the vital importance of its solution for the Armenians, made it the main reference point for negotiations with the Young Turks. The Armenian deputies of the second

convocation (April 1912 – July 1912) also insisted on solving the land issue. They not only voiced and presented memorandums on the existence of the land issue in Western Armenia, but also carefully studied the issue, put forward all possible options for resolving the issue within the framework of the law. The authorities of the Young Turks did not resolve the land issue for five years after the proclamation of the Constitution, especially since 1910–1911 they took an obvious anti-Armenian position. At the end of 1911 the government manipulated the land issue to gain the support of Armenian deputies and dissolve parliament. In the spring of 1912 during the pre-election campaigns of the Young Turks, despite the agreement they signed with the Armenian Dashnaktsutyun party, 10 mandates were given in place of twenty. As a result, Dashnaktsutyun severed all relations with the “Unity and Progress” party.

*Narek Martirosyan – Extern PhD student at the NAS RA Institute of History, lecturer at the Chair of Social Subjects of “Haybusak” University. Scientific interests: modern period of the history of Armenia, Armenian–Turkish relations. Co-author of 1 book and author of four articles. martino-1988@mail.ru*

---

---

ՆՇԽԱՐՆԵՐ ՊՅԱՏԻԳՈՐՍԿ ԳԱՂԹԱԾ  
ԱՐՑԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅԱՆ  
(Ըստ հեղինակի գրառած նյութերի)\*

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

Բանալի բառեր՝ Պյատիգորսկ, Ղարաբաղ, Արցախ, Ռուսաստան, բանասաց, բանավոր ավանդույթ, վիպական, քնարական, ասույթային բանահյուսություն, հայ բարբառ:

**Նախաբան**

1964 թ. ամռանը Հայաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտություն և ազգագրություն ինստիտուտի տնօրինությունն ինձ գործուղել էր Ռուսաստանի Ստավրոպոլի երկրամասի Պյատիգորսկ քաղաքը, որպեսզի ուսումնասիրեմ այնտեղ ապրող հայ էթնիկ խմբի ներկայացուցիչների կենցաղն ու բանահյուսությունը: Երբ տեղ հասա, տեղեկացա, որ այնտեղ առանձին թաղամասում ապրում են Ղարաբաղից (Արցախ) գաղթած հայեր: Այդ տարիներին Ղարաբաղը մեզ՝ հայագետ-մտավորականներին համար անմատչելի էր: Ազդերիները հայ հնագետներին և ազգագրագետներին թույլ չէին տալիս գնալ այնտեղ և պեղումներ կատարել, քանի որ նրանք սարսափում էին, որ 1921 թ. իրենց շնորհված այդ չքնաղ երկրամասի բնիկ հայկական լինելը վկայող բազում և անհերքելի փաստեր կհայտնաբերվեն:

Ինձ որպես բանագետ-ազգագրագետի, հետաքրքրում էր, թե նրանք ե՞րբ և որտեղի՞ց են գաղթել Պյատիգորսկ, տեղաբնիկների հետ համակեցության պայմաններում էթնոմշակութային ի՞նչ փոփոխություններ են կրել, և, որ ամենակարևորն է, արդյո՞ք հոգեհարազատ են մնացել իրենց բնօրրանի ավանդույթներին և այլն:

**Պյատիգորսկի արցախցի բանասացները**

Պյատիգորսկ քաղաքի առանձին թաղամասում բնակվող հայ համայնքի ներկայացուցիչներից առաջինն իմ ուշադրությունը գրավեցին տների առջև նստած արցախցի հայ տարեց կանայք՝ իլիկը ձեռքներին: Նրանք բուրդ էին մանում, որպեսզի, ըստ իրենց բնօրրանի ավանդույթի, գունազարդ, գեղեցիկ գորգեր գործեն: Կանայք Ղարաբաղի ինքնատիպ տարազով էին՝ հատկապես, սևի ու կանաչի, նաև սևի ու մանուշակագույնի ներդաշնակ համադրությամբ: Նրանց ճակատնոցները զարդարված էին արծաթյա դրամներով, իսկ «հալավի» շապիկի և «ղաբայի» վերնազգեստի թևերի եզրերին ազուցված էին արծաթյա զարդանախշերի ձևավոր բոժոժներ: Այդ մեծահասակ կանայք իրենց մեջքերին կրում էին արծաթյա «կյոտե» գոտի, որն էլ մշտապես ձիգ

---

\* Ներկայացվել է 09. III. 2021 թ., գրախոսվել է 10. III. 2021 թ., ընդունվել է տպագրության 30. III. 2021 թ.:

էր պահում նույնիսկ զառամյալ կանանց կեցվածքը: Առաջին իսկ տպավորություննս գրավիչ էր և հուսադրող: Մտածում էի, որ արտաքննապես բնորոշանի տեղային երանգը պահպանած այս կանայք, անշուշտ, իրենց հոգում և մտքում անթեղած պետք է լինեն նաև նախնիներից ավանդված հոգևոր արժեքները:

Մտերմիկ գրույցի ընթացքում պարզվեց, որ նրանցից շատերը Գանձակից ու Արցախից գաղթել էին տակավին 1905–1906 թթ. թաթար-ազերիների ոտնձգությունների, ազգամիջյան բախումների պատճառով, իսկ հետագայում՝ 1921 թ., երբ Խորհրդային Միության ղեկավարությունը Ղարաբաղը բռնակցեց էր Ադրբեջանին, օրեցօր սկսել էր վատթարանալ հայերի վիճակը տեղի տալով արտագաղթի նորանոր ալիքների: Թեպետ խորհրդային սահմանադրությունը բացառվում էին ազգային խտրականության դրսևորումները, սակայն փաստն այն էր, որ ազերիների վարած հայատյաց քաղաքականության հետևանքով հետևողականորեն հայաթափվում էր երկրամասը: Շատերն աշխատանք և ապահով կյանքի պայմաններ գտնելու հույսով գաղթում էին Բաքու, Սումգայիթ, ինչպես նաև՝ Ռուսաստան: Պյատիգորսկ քաղաքի մոտակայքում գտնվող, բարեկարգ և ակնհաս ճանկական այդ թաղամասը տեղաբնիկներն անվանում էին «Արմյանսկի Նյու Յորք» («Армянский Нью-Йорк») – «Հայկական Նյու Յորք»):

Պյատիգորսկում դեռևս XIX դ. երկրորդ կեսին գոյություն է ունեցել հայկական համայնք, կառուցվել է Ս. Թարգմանչաց հայկական եկեղեցին: Հայ բնակչությունը հիմնականում զբաղվել է առևտրով:

Պյատիգորսկում արցախահայ գաղթականներն ապրում էին համեստ, բայց արժանապատիվ ու հայաշունչ կյանքով, խուսափում էին խառնամուսնություններից, թեպետ արդեն նկատվում էին որոշ դեպքեր: Չնայած երեսխաները հաճախում էին ուսսական դպրոց, բայց տան խոսակցական լեզուն շարունակում էր մնալ Արցախի գորեղ բարբառը: Տղամարդիկ աշխատում էին տեղի գործարաններում կամ կոլտնտեսությունում, այդ պատճառով իմ բանասացները բացառապես ավագ սերնդի՝ 70–90 տարեկան տնային տնտեսուհիներն էին: Բացառություն էին կազմում երեքամյա Մարգարիտա և Անժեկա Ավագյանց գույգ քույրերը, որոնք թոթովում էին:

Գիտարչավի 20 օրերի ընթացքում ծանոթացել և զրառումներ եմ կատարել ավագ սերնդի 12 բանասացից, որոնց մասին բնութագրական հակիրճ տվյալներն ու նրանց հաղորդած նյութերի խոսքարվեստի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են՝ նշելով նրանց ծննդյան տարեթիվն ու տարիքը:

Ղարաբաղում ծնված և Պյատիգորսկում բնակվող իմ բանասացներն էին՝

- Աննա Բագդասարովնա Ակոպովան (ծնվ. 1876 թ.), 88 տարեկան,
- Մայկո Մայրիկը (ծնվ. 1897 թ.), 67 տարեկան,
- Թանկե (Թանկագին) Սարգսյանը (ծնվ. 1903 թ.), 61 տարեկան,
- Վարսենիկ Պողոսյանը (ծնվ. 1904 թ.), 69 տարեկան,
- Աստղիկ Հարությունյանը (ծնվ. 1904 թ.), 65 տարեկան,
- Լուսիկ Սարգսյանը (ծնվ. 1904 թ.), 60 տարեկան,
- Վարդանուշ Գրիգորյանը (ծնվ. 1904 թ.), 60 տարեկան,

Սոնյա Դանիելյանը (ծնվ. 1904 թ.), 60 տարեկան,  
Աշխեն Մուսայելի Վանիլովան (ծնվ. 1904 թ.), 58 տարեկան,  
Արևհատ Վարդանյանը (ծնվ. 1905 թ.), 59 տարեկան,  
Մարգարիտա Ռուբենի Ավագյանցը (ծնվ. 1961 թ.), 3 տարեկան,  
Անժելա Ռուբենի Ավագյանցը (ծնվ. 1961 թ.), 3 տարեկան:

Պյատիգորսկ գաղթած Արցախի հայերի բանահյուսության ժանրային և թեմատիկ առանձնահատկությունները

Պյատիգորսկի երկու հազարի հասնող հայ համայնքից զրառել եմ (100 միավոր) բանահյուսական նյութ իրենց բարբառային նրբերանգներով, որոնք թարգմանված են ըստ անհրաժեշտության՝ նշելով բառի ծագումը<sup>1</sup>:  
Խնդրո առարկա նյութերը հետևյալ բնույթի են.

I. Վիպական բանահյուսություն – հրաշապատում հեքիաթներ (6), իրապատում հեքիաթներ (4), առակներ (2):

II. Քնարական բանահյուսություն – օրորոցայիններ (10), սիրային երգեր (20), կենցաղային և ծիսական երգեր (3), հարսանեկան ծես և երգ (1), աշխատանքային երգեր (4), կատակերգեր (3), հայրենասիրական և զինվորի երգեր (10):

III. Ասույթային բանահյուսություն – մանկական թոթովանքներ (2), հանելուկներ (7), առածներ (12), շուտասելուկներ (4), մաղթանքներ (5), օրհնանքներ (7):

I. Վիպական բանահյուսություն բաժնուժ հրաշապատում և իրապատում հեքիաթներն իրենց սյուժետային բովանդակությամբ ու մոտիվային համակարգով մեծապես առնչվում են Պատմական Հայաստանի և Կիլիկիայի հայ ժողովրդական հեքիաթներին<sup>2</sup>: Քանի որ XI–XIII-րդ դդ. Մեծ Հայքի հայաբնակ վայրերից, նաև Արցախից հայերի հոսքը դեպի Կիլիկիա վիթխարի չափերի էր հասել<sup>3</sup>: Այդ առումով ուշագրավ են «Օխց տղան» («Օձ տղան»), «Անմահական ճուրղ», «Իրեք ախպոր հեքիաթը», «Թաքավերեն ախչիգը», «Օվչի Փիրումը» («Որսորդ Փիրումը») և այլ հեքիաթներ, որոնք ևս իրենց նմանատիպ գուգահեռներն ունեն Մայր Հայաստանի և Կիլիկիայի հեքիաթների հետ:

Արցախի հայերի հրաշապատում հեքիաթներն սկսվում են ավանդական «Իլալ ա, չիլալ» («Լինում է, չի լինում») բանաձևով, սակայն ոչ միշտ են ավարտվում «Երկնքից ընկավ երեք խնձոր» վերջաբանով, այլ՝ որևէ գործողությամբ. «Էն տղեն կապրմ ըն ծիանը հաքյվան, պէց թողնրմ հարգակ դաշտերը» («Էն տղին կապում են ձիու պոչից և բաց թողնում արձակ դաշտերը»)

<sup>1</sup> Բանահյուսական սկզբնաղբյուրների բարբառային նրբերանգները 2018 թ. ճշգրտել է լրագրող, բանաստեղծ, արմատներով արցախցի Ռուբեն Գրիգորյանը:

<sup>2</sup> Արցախի հրաշապատում և իրապատում հեքիաթների շարքը հրատարակվել է նախկինում՝ «Հայ ժողովրդական հեքիաթներ» գիտական բազմահատորյակի 5–7 հատորներում (Երևան, 1966–1979), ընդ որում՝ «Արցախ–Ուտիք, Շուշի, Արցախ, Գանձակ» (կազմողներ՝ Ա. Նազինյան, Վ. Սվազլյան), հ. 6, Երևան, 1973:

<sup>3</sup> Վ. Սվազլյան. Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Երևան, 1994, էջ 11–12:

և կամ ավերի կարճ՝ «Վոտ ի վսյո» («Ահա և բողորը») ուսուցանել արտահայտությունները: Անշուշտ, սա նոր ուսուսական միջավայրի ազդեցությունն է, որը նաև առիթ է տվել զգալի չափով փոխառյալ բառերի և արտահայտությունների ներթափանցմանը. օրինակ՝ «մոմենտ» (պահ), «աստղ» (սեղան), «ուժե» (արդեն), «կամպանիա» (ընկերություն), «կուկլա» (տիկնիկ), «կակ-ռազ» (հենց այդ), «պրեդանիե» (օժիտ), «յելի-յելի» (հազիվ-հազ), «մաղարիչ» (նվեր), «կառաուլ» (պահակ) և այլն: Նման ներթափանցումներն օրինաչափ են, հատկապես՝ երկար տարիներ համակեցությամբ ապրողների կենցաղում և լեզվական մշակույթում:

Իրապատում հեքիաթներից ուշագրավ է հատկապես «Հլուվերի պաղաս-խանը Շահ Աբասին» («Ալևորի պատասխանը Շահ Աբասին»): Իր զավթողական արչավանքներից վերադարձող Շահ Աբասը ծիծաղում է արմավի ծառ տնկող ալևորի վրա՝ ասելով, թե նա չի հասցնի համտեսել իր տնկած ծառի պտուղը, քանի որ նրա մահը մոտ է: Արցախցի իմաստուն ալևորը պատասխանում է. «Ա՛յ, ախպեր, մըհենգ էլ ես ծրծաղում քեզ յրա: Մըր պապերը ծառ ըն տնգալ, մուենք բարը կերալ ընք: Մհենգ էլ մուենք բիդի տնգինք, հանցու մըրը հետագաները օտին» («Ա՛յ, եղբայր, հիմա էլ ես ծիծաղեմ քեզ վրա: Մըր պապերը ծառ են տնկել, մենք պտուղը կերել ենք: Հիմա էլ մենք պիտի տնկենք, որ մեր հետնորդները ուտեն»):

Գրառված երկու առակները՝ «Վըթեան<sup>4</sup> ու մուկուներ» և «Վըթեան մոքիրը» համահայկական հայտնի սյուժեներ են, որոնց միայն գործող անձինք՝ կենդանական կերպարներն են փոխված, այսինքն՝ տեղայնացված, հարմարեցված են Արցախի կենդանական աշխարհին:

II. Քնարական բանահյուսության տեսականին ևս իր բնույթով բազմազան է և համահունչ համահայկականին: Այս բաժնում առկա են՝ օրորոցայիններ, սիրային, հարսանեկան, ծիսական, պանդխտության, աշխատանքային երգեր, կատակերգեր նաև հայրենասիրական ու զինվորի երգեր:

Քնարական այս երգերի մեջ գեղարվեստորեն պատկերվում են հայրենի բնության գեղեցկություններն ու առօրյա կյանքի ու կենցաղի տարաբնույթ երևույթները.

«Քնի՛ր ու աճի՛ր,  
Շուտ արա, բալես,  
Կուունկներն էկան,  
Թողին մըր երկիր  
Սև ամպով պատած:

Քնի՛ր ու աճի՛ր,  
Դարդերս քչիր,  
Շուտ արա, բալես:  
Հուունք եմ կապել,  
Կախել օրոցքից,  
Քո գար աչքերից

<sup>4</sup> Վըթեան (բբբ.) – ինքնապաշտպանվելու համար տհաճ հոտ արձակող միջատ:

Որ հեռու մնա  
Թշնամու աչքից»:

Սակայն թշնամու կերպարն արտացոլվել է նույնիսկ հետևյալ գողտրիկ օրորոցայինում, երբ մայրը չքնող երեխային վախեցրել է դաժան խանի կերպարով.

«Լա՛յ-լա՛յ-լա՛յ արա, քո՛ն իլ, Ձեղիմ խանը կիկյա՛ քյեզ տանե. Բա՛յ, բալա՛, բա՛յ, կուկլա բալա, Բա՛յ, բալա ջան, բա՛յ, ջան, բալա՛»:	«Լա՛յ-լա՛յ-լա՛յ արա, քնի՛ր, Ձեղիմ խանը կգա՛ քեզ տանի, Բա՛յ, բալա՛, բա՛յ, կուկլա բալա, Բա՛յ, բալա ջան, բա՛յ, ջան, բալա՛»:
--	---

Սույն օրորոցայինի կրկներգում «կուկլա» և «բայ» բառերի առկայությունը վկայում է ուսուսական օրորոցայինի ազդեցությունը: Սիրային երգի օրինակ է.

«Նազիկ, Նազիկ, նազ մի՛ անի,  
Չուխեդ<sup>5</sup> քաշի, թոզ<sup>6</sup> մի՛ անի»:

Գրառված սիրային երգի այս տողերն ակամայից հիշեցնում են կիլիկյան՝ Քեսապի պարերգի նմանատիպ պատկերը.

«Ամա՛ն, իշգե՛յն, ծիր վաթանը յո՞ գըննօ. Շյուղ մը՛ ժգըզվա, չախշօրիտ մըրօղ գըննօ» <sup>7</sup> :	«Ա՛յ, աղջի՛կ, ձեր հայրենիքը որտե՞ղ կլինի, Շատ մի՛ շորորա, քղանցքդ կփոշոտվի»:
--	---

Այս նմանությունը վկայում է ժողովրդական միևնույն արմատների մասին:

Պատիգորսկի Արցախի հայերը կենցաղային և ծիսական երգերից հիշում և երգում էին «Ձեզ՝ Բարեկենդան, մեզ՝ բարի Չատիկ» ավանդական տոնական երգը, թեպետ ծիսական տոներն այլևս նախկինի պես հանգամանորեն չէին կատարվում:

Այնինչ, հիշում և կատարում էին Համբարձման տոնին երգվող հատ ու կենտ քառյակներ, որոնց համանման տարբերակներն առկա են հայկական բանավեստում.

«Ախշի, ո՞ւր ես, դուն հուր ես,  
Ես ծարավ եմ, դուն ջուր ես,  
Համբարձում օրը ո՞ւր ես,  
Արի ըստեղ պար բռնենք:  
Հայլո՛ ջան, հայլո՛,  
Համբարձում, հայլո՛»:

<sup>5</sup> Չուխա (ժող.) – մահուդից երկար վերարկու:

<sup>6</sup> Թոզ (թուրք.) – փոշի:

<sup>7</sup> Վ. Սվազլյան. Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը, էջ 127, Թ. Չուլաքեան. Քեսապ, հ. Բ, Հալէպ, 1998, էջ 497–498:

Արցախի հայերը կարոտով էին հիշում բնօրրանում Համբարձման տոնին կատարվող ձեռք ձեռքի բռնած իրենց տոհմիկ երգն ու պարը, քանի որ նոր միջավայրում այլևս նման հավաքական տոնախմբություններ չէին իրականացնում:

Հարսանեկան ծեսը նեղ շրջանակում դեռ պահում էր ավանդական որոշ երանգներ՝ ինչպես, օրինակ, հարսի գլխին շաքար, չիր ու չամիչ, մանրադրամներ տեղացնելու կամ հարսի ոտքի տակ ավսես ջարդելու սովորությունները: Ծիսական արարողակարգը բավական մանրամասն գրի է առնված՝ մեջբերելով հարակցվող երգերը ևս: Հուզիչ է հայրական տանը հարսի հրաժեշտի երգը.

«Վճյ, ազի ջան, տանըմ ըն,  
Հորաս, մորաս հանըմ ըն,  
Վճյ, ազի ջան, տանըմ ըն,  
Ազիզ մորաս հանըմ ըն ...»:

«Վճյ, մայրիկ ջան, տանում են,  
Հորիցս, մորիցս բաժանում են,  
Վճյ, մայրիկ ջան, տանում են,  
Սիրելի մորիցս բաժանում են ...»:

Արցախում, երբ հարսը ոտք է դրել փեսայի տուն, մոմավառություն են կատարել և վառված մոմերով դիմավորել փեսային՝ երգելով.

«Վճյ, ազի ջան, աչքդ լո՛ւս,  
Տղետ պերենքյ, հարստ պերենքյ,  
Եկած պարիկամներէտ աչքըլո՛ւս»:

«Վճյ, մայրիկ ջան, աչքդ լույս,  
Տղիդ բերինք, հարսիդ բերինք,  
Եկած բարեկամներիդ աչքը լույս»:

Բանասաց Աննա Ակոպովան պատմել է. «Արցախում տղի տանը հաց ըն օտըմ, պրծնըմ, սազանդարը՝<sup>8</sup> նստըմ ա, տղի բարեկամները նվերներ են տալիս՝ մեբել,<sup>9</sup> սնդուկ, կուվչին<sup>10</sup>, փող և այս բոլորի մասին բարձրաձայն հայտարարում է «տեփ խփողը»<sup>11</sup>: Երբ հարսը ներս է մտնում, նրա ոտքերի տակ ավսես են ջարդում, խմում են խնամիների, հարս ու փեսի կենացները...»:

Աշխատանքային երգերը ևս հիմնականում համահայկական ավանդական բնույթ ունեն. «Ձիգ տուր, քաշիր, ա՛յ եզո», «Հով արա, Ջեյրան ջան» և կամ՝ կարագ հարելու «Մոթալ<sup>12</sup>, մոթալ, ջան մոթալ» երգերը:

Հանապազօրյա հաց թխելու գործընթացը միահյուսվել է սիրած յարի պանդխտության գնալու հետ.

«Հաց ըմ թըխալ՝ կյարի ա,  
Իմ յարըս սափարի ա,  
Սափար էրթալիտ մըեռնիմ.  
Խոսքերքտ շաքարի ա»:

«Հաց եմ թխել՝ գարի է,  
Իմ յարը պանդուխտ է,  
Պանդխտությանդ մեռնեմ.  
Խոսքերդ շաքարից են»:

<sup>8</sup> Սազանդար (բրբռ.) – նվագող:

<sup>9</sup> Մեբել (ռուս.) – կահույք:

<sup>10</sup> Կուվչին (ռուս.) – ջրաման:

<sup>11</sup> Տեփ խփող (բրբռ.) – թմբկահար:

<sup>12</sup> Մոթալ – հատուկ եղանակով պատրաստվող պանիր:



Գրառված երգերից մեկում, ամենայն հավանականությամբ, ակնարկվում են ազգամիջյան լարված փոխհարաբերությունները.

«Ա՛յ, տղա՛, տոն արի,  
Վրեններտ շաղավն արի,  
Էս թաղը զըլմըղալ ա.  
Երէ թաղավն արի»:

«Ա՛յ, տղա՛, տուն արի,  
Ոտքերդ՝ շաղովն արի,  
Այս թաղում իրարանցում է.  
Վերին թաղովն արի»:

Արցախում հարազատների կողմից չի խրախուսվել տղամարդկանց պանդխտելը, հատկապես նավթարդյունաբերական կենտրոն՝ Բաքու, ուր բազմաթիվ հայեր ապրուստի հոգսից ստիպված գնում էին աշխատանք գտնելու.

«Ծառի տակը լաքի յա,  
Իմ յարը Բաքի յա,  
Բաքվա սարը թող շոռ կյա.  
Բալքի իմ յարը տոն կյա»:

«Ծառի տակը գով է,  
Իմ յարը Բաքվում է,  
Բաքվի սարը թող շուռ գա.  
Գուցե իմ յարը տուն գա»:

Պյատիգորսկի Արցախի հայերի երգացանկում առկա էին նաև գրական լեզվով նորօրյա կոլտնտեսային կյանքին նվիրված, ժողովրդականություն վայելող երգեր.

«Ծլել է արտս, ծփում է արտս,  
Կորել է դարդս, ջան,  
Եկել է նորը, խնդություն օրը,  
Գյոզալ<sup>13</sup> տրակտորը, ջան ...»:

Խորհրդային ժամանակների նորօրյա ինքնատիպ երգերից է նաև Կանանց միջազգային տոնին մարտի 8-ին նվիրված երգը.

«Լաչակի<sup>14</sup> բա՛ց, ա՛յ նանի<sup>15</sup>,  
Քիթկալդ բա՛ց, ա՛յ նանի,  
Թող արև տա, չորանա  
Արցունք ու լաց, ա՛յ նանի:

Էնքան չանա՛ր<sup>16</sup> կապ մնաց,  
Տափակել ա, ա՛յ նանի,  
Քիթ-բերանդ ծռմուվել,  
Տե՛ս վիճակդ, ա՛յ նանի:

...Հոկտեմբերը քեզ համար  
Նոր կյանք բերավ, ա՛յ նանի,  
Ցուրտ ձմեռը վերացավ,  
Գարուն դարձավ, ա՛յ նանի:

<sup>13</sup> Գյոզալ (ժող.) – գեղեցիկ:

<sup>14</sup> Լաչակ (ժող.) – գլխաշոր:

<sup>15</sup> Նանի (ժող.) – մայրիկ:

<sup>16</sup> Չանա (թուրք.) – ծնոտ:

Ականջներդ բա՛ց արա,  
էսօր մարտի 8-ն ա,  
Շաբաշ<sup>17</sup> կանչի, ծափ արա,  
Կանանց տոնն ա, ա՛յ նանի»:

Առաջին հայացքից նոր իմաստ ու բովանդակություն արտահայտող այս երգի մեջ գարնան գարթոնքի, ձմռան ցրտերի դեմ տարած հաղթանակի, իրական աշխարհի զգացողություն խորհուրդն է ամփոփված: Ավանդական բանահյուսության մեջ բազում գործառույթներով օժտված Նանիին կոչ է արվում ազատվել կանացի հմայքը խաթարող ավելորդ հանդերձանքից: Ժողովրդական երգ ու պարով, խրախճանքով վերահաստատվում է գարնան գարթոնքը և կանանց տոնը դիմավորելու նրանց պատրաստակամությունը: Այստեղ, միաժամանակ, նկատելի է ինքնագիտակցության եկող և գարթոնք ապրող նահապետական հայ կնոջ անխղճ կապն ու մերձեցումը բնության հետ:

Պյատիգորսկում տարածված կատակերգերից է.

«Քույրիկիս՝ տուֆլի<sup>18</sup>, կալոշ<sup>19</sup>,  
Մայրիկիս՝ կոշիկներ,  
Իսկ հայրիկիս՝ մի գուլգ տրեխ,  
էն էլ փոկեր չունենա...»:

Արևմտահայոց՝ հիմնականում պոլսահայոց<sup>20</sup> շրջանում տարածված և զավեշտական տարաբնույթ պատկերներով շարահյուսված այս երգը նաև երգում էին արցախցի երիտասարդները:

Պյատիգորսկում Արցախի հայերն իրենց ավանդական ապրելակերպին խորթ և անհարիր երևույթներն անվարան երգիծում էին.

«Կիսլավոդսկի օրիորդները  
Ժամը տասին ըն գարթնում,  
Մաշքը<sup>21</sup> կոտրած կատվի նման,  
Ման են կյալի բուլվարում<sup>22</sup>...»:

Ռուսական նոր միջավայրը, մարդկային նոր հարաբերությունները ևս լեզվական նորամուծությունների պատճառ են դարձել.

«Ծիտը ծառին տիտիկ արավ,  
Ախոտնիկը<sup>23</sup> ուբիտ արավ<sup>24</sup>,  
Վրեննան փոռնավ, դամոյ<sup>25</sup> տարավ,

<sup>17</sup> Շաբաշ (գվռ.) – երաժիշտներին տրվող դրամական պարգև:  
<sup>18</sup> Տուֆլի (ռուս.) – կոշիկ:  
<sup>19</sup> Կալոշ (ռուս.) – կրկնակոշիկ:  
<sup>20</sup> Վ. Մվազլեան. Պոլսահայոց բանահիւսութիւնը, Երևան, 2000, էջ 427-428:  
<sup>21</sup> Մաշք (բրբռ.) – մեջք:  
<sup>22</sup> Բուլվար (ռուս.) – ճեմելիք:  
<sup>23</sup> Ախոտնիկ (ռուս.) – որսորդ:  
<sup>24</sup> Ուբիտ անել (ռուս.) – սպանել:  
<sup>25</sup> Դամոյ (ռուս.) – դեպի տուն:

Պատմագրության համալիր 2021 № 2 Историко-филологический журнал

ժարովնիկում<sup>26</sup> ժարիտ արավ<sup>27</sup>,  
Նստեց, մի լավ կուշիտ արավ<sup>28</sup>,  
Ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ»:

Ժամանակի ընթացքում նրանց բառապաշարի մեջ տեղ են գտել «ախտոնիկ», «ուբիտ անել», «դամոյ», «ժարովնիկ», «ժարիտ անել», «կուշիտ անել» և այլ բառեր ու բառակապակցություններ:

Սակայն Պյատիգորսկ գաղթած արցախցիները չէին ընդունում, որ իրենք ակամայից տուրք են տալիս լեզվական փոխառություններին և ասում էին. «Նաաբարոտ<sup>29</sup>, մուռք չիստի՞ արմյանսկի<sup>31</sup> ընք խոսում»:

Թեպետ Պյատիգորսկ գաղթած արցախցիների բառապաշարը 1964 թ. ուսերենից արդեն զգալի ազդեցություններ էր կրել, սակայն նրանք իրենց ազգային ինքնությունն ու արցախցու արժանապատվությունը շարունակում էին բարձր պահել: Այդ հանգամանքն իր գեղարվեստական արտացոլումն է գտել հատկապես նրանց հայրենասիրական և զինվորի երգերի մեջ:

Արցախահայերից գրի են առել նաև 1905 թ. Ասկերանի կիրճում կատարված պատմական հայտնի իրադարձությանը նվիրված երգի մի դրվագ, որտեղ պատմվում է, թե ինչպես Շուշիի հայերից թալանված երկու Ֆուրգոն ավարով ջարդարար թաթար-ազերի բեկերի մեծաթիվ հեծելազորը գալիս, հասնում է Նոջալու: Քանի որ հրազենի ձայն չէր լսվում, մտածում են, որ կարող են ապահով անցնել Ասկերանի կիրճը: Դարանակալած հայ մարտիկները քաջորդի Համազասպի մշակած խելացի ռազմավարությամբ և Վարդանի աջակցությամբ, շրջափակում, օղակի մեջ են վերցնում թշնամուն ու ոչնչացնում ավելի քան 200 թաթար-ազերիներին:

«Ինչպես կորյուն քաջ Վարդանը,  
Համազասպը քաջանուն  
Ասկերանի բերդի միջից  
Կոտորեցին թշնամուն»:

Զինվորի երգի ինքնատիպ նմուշ է նաև գրառված հետևյալ երգը, որտեղ հիշատակվում են Հայաստանի հերոսական անցյալն ու արցախահայ երիտասարդի ազգի համար զոհվելու պատրաստակամությունը.

«Սուսերս տո՛ւր, մայրի՛կ,  
Մոսինս տո՛ւր, քույրի՛կ,  
Հանուն ազգիս թե չզոհվեմ,  
Հապա ինչո՞ւ ծնվեցի ես»:

Գրի առնված բանահյուսական նյութերի մեջ Հայրենական պատերազմի տարիներին ստեղծված երգերը ևս իրենց ուրույն տեղն են գտել արցախցիների երգացանկում:

<sup>26</sup> Ժարովնիկ (ռուս.) – տապակ:

<sup>27</sup> Ժարիտ անել (ռուս.) – տապակել:

<sup>28</sup> Կուշիտ անել (ռուս.) – ուտել:

<sup>29</sup> Նաաբարոտ (ռուս.) – ընդհակառակը:

<sup>30</sup> Զիստի (ռուս.) – մաքուր:

<sup>31</sup> Արմյանսկի (ռուս.) – հայերեն:

«Նեմեց<sup>32</sup>, նեմեց, կուդա՞ տի<sup>33</sup>,  
Գիդացել ես, թե Բըզըզորսկը<sup>34</sup>,  
Հավի բուդ ա՞. դե՛ մին նազադ<sup>35</sup>,  
Բոմբը<sup>36</sup> կտամ կնդազադ<sup>37</sup>»:

Եվ կամ՝

«Առավոտյան ժամը ութին  
Ինձ վայենկոմատ<sup>38</sup> կանչեցին,  
Վեչ մեչոկը<sup>39</sup> շալակս տվին,  
Դեպի Կերչը հուղարկեցին,  
Երբ որ մտանք Կերչի հողը,  
Սիրտս մտավ մահվան դողը ...»:

Երկարաշունչ այս երգի ավարտին, անօգնական ու անհույս ընկած մահամերձ հայ զինվորը խնդրում է.

«Ընկերներ ջան, հավաքվեցեք,  
Դուդուկները փչիլ տվեք,  
Գերեզմանիս քարին վրեն  
Սայաթ-Նովեն երգիլ տվեք»:

Եվ նա հոգին ավանդում է՝ շշնջալով.

«Չե՛մ մոռանա Մայր Հայաստան»:

Մայր Հայաստանի, բնօրրան Արցախի կարոտը մշտապես ուղեկցել է Պատիգորսկ գաղթած արցախցիներին: Նրանց մեջ կային նաև ինքնուստեղծագործողներ, ինչպիսին էր Աշխեն Վանիլովան: Նա իր մտորումներն արտահայտում էր չափածո հանգավորմամբ և երգային կատարումով: Նրա երգած երկերը սեղմ տողերի մեջ խտացված էին արցախահայոց կրած անլուր տառապանքները, նրանց հարկադրված գաղթը բնօրրանից դեպի Պատիգորսկ.

«Դարձոտ, կարոտ էս կյանքի մեջ  
Տանջվեցինք մունք անհանգիստ,  
Դադված, էրված ջիգյարներով  
Մնացինք մունք անհանգիստ:

Մունք շատ մրեծ ցեղ ունեինք,  
Բոլորին էլ կուրցըրինք.

<sup>32</sup> Նեմեց (ռուս.) – գերմանացի:

<sup>33</sup> Կուդա տի (ռուս.) – այդ ո՞ւր:

<sup>34</sup> Բըզըզորսկ – Պատիգորսկ:

<sup>35</sup> Նազադ (ռուս.) – ետ:

<sup>36</sup> Բոմբ (ռուս.) – ռումբ:

<sup>37</sup> Կնդազ (բրբռ., ծաղր.) – գլուխ:

<sup>38</sup> Վայենկոմատ (ռուս.) – զինկոմիսարիատ:

<sup>39</sup> Վեչ մեչոկ (ռուս.) – ուսապարկ:

էկանք-հասանք Պրտիղորսկ,  
Նեոլժե<sup>40</sup> լի՝ մունք կարել չընք  
Հանգիստ մնանք տանջանքից:

Բավակա՛ն է, մեր ծնողներն  
Ինչքան արյուն թափեցին,  
Ժողովրդին մեր փչացրին,  
Մըեզ տնավեր արեցին:

Մենք պիտի կռվենք  
Ինչքան ուժ ունենք,  
Մեր լո՛խ կորուստները  
Փառքով ե՛տ բերենք»:

Անհատական այս ստեղծագործության ավարտը լավատեսական է և լուսավոր, որն այնքան բնորոշ է Արցախի հայությանը. ասես այն աղոթք լինի առ Աստված: Մաղթանք է՝ ուղղված նաև համայն մարդկությունը.

«Թող մեր անգին Հայոց ազգին  
էն ուժն ու պատիվն ինի,  
Որ իլա՛լ ա հին-հին վախտից,  
Թող փրկի Տերը սաղ աշխարհին,  
Լոխ էլ ապրին խաղաղ, երջանիկ»:

III. Ասույթային բանահյուսություն բաժնում ուշագրավ են երեք տարեկան Անժելա և Մարգարիտա Ավագյանց զույգ քույրերից իմ գրառած մանկական թոթովանքները: Երբ փոքրիկ Անժելային ես հարցրեցի իր անունը, նա շուտասուտով պես պատասխանեց.

«Փըլջմլեցի<sup>41</sup> դեդո Կևանեն ծոռն ըմ,  
Փըլջմլեցի Ղազարեն ծոռն ըմ,  
Փըլջմլեցի Անդրեյեն թոռն ըմ»:

Իսկ երբ նրա գուգակից Մարգարիտային հարցրեցի.

«– Մայրդ որտե՞ղ է աշխատում:

– Ռոդդոմ<sup>42</sup>:

– Ի՞նչ է անում:

– Խոխա ա պըռնըմ (մանուկ է բռնում)»:

Պյատիգորսկի Արցախի հայերի հանելուկներին բնորոշ է իրենց բնորանի կենդանական և բուսական աշխարհի գեղարվեստական արտացոլումը, որտեղ գաղտնագրված կերպով ներկայանում են արցախցիների կյանքին ու կենցաղին հատուկ պարագաները: Առանձնապես յուրօրինակ է հանելուկների հարցադրման սկզբնաձևը.

<sup>40</sup> Նեոլժե<sup>40</sup> լի (ռուս.) – մի՞թե:

<sup>41</sup> Տեղավայր:

<sup>42</sup> Ռոդդոմ (ռուս.) – ծննդատուն:

«Մըեզ մինն օնինքյ՝ կըկընանչի,  
Կըծաղկի սիպտակ, կըկյիրմիրի,  
Ետնան ալ կթուխի»:

(Մոշ)

«Մենք մինն ունենք՝ կանաչում է,  
Ծաղկում սպիտակ, կարմրում,  
Հետո՝ սևանում է»:

Կամ՝

«Մըեզ մինն օնինքյ՝  
Աշխարքս շոռ ա կյալիս,  
Ուրոգյո՞ւնը կյամ ա  
Տուանը վըեր ընգնըմ»:

(Տրեխ)

«Մենք մինն ունենք՝  
Աշխարհը ման է գալիս,  
Իրիկունը գալիս է  
Դուանը վեր ընկնում»:

Ուշագրավ են այլաբանական իմաստ արտահայտող հայաչունչ առածները.

«Աշխատած հացն ա հալալ»:  
Կամ՝

«Սարը սարին պտահըմ չի,  
Մարթը մարթին պտահըմ ա»:

Եվ կամ՝

«Վըչխարէն տմական օտըմ չըմ.  
Քմական մոտէ ա»:

Եվ ի վերջո՝

«Աշխարքը շոռ ա եկալ՝  
Դրախտը ուրան վըեղըմը քթալ»:

«Վաստակած ապրուստն է արդար»:

«Սարը սարին չի պատահում,  
Մարդը մարդուն պատահում է»:

«Ոչխարի դմակից չեմ ուտում.  
Հետույքին մոտ է»:

«Աշխարհը ման եկավ՝  
Դրախտը իր հողում գտավ»:

Արցախահայոց առածները բարբառային արտաբերումով առան-  
ձին հմայք են ստանում՝ դառնալով տեղային նոր տարբերակներ:  
Լավատեսությունը են օժտված օրհնանքները.

«Ազատ, էրզան կյանք ունենաս»:  
«Ազատ, երկար կյանք ունենաս»:

Այստեղ ուշագրավ է ազատության գաղափարի առաջնահեր-  
թությունը, որը խիստ բնորոշ է ազատատենչ ու լավատես արցախ-  
ցիներին.

«Հինչ նեղություն քաշըմ ըս,  
Վերչըտ բարի թըղ ինի»:

«Ինչ նեղություն, որ քաշում ես,  
Վերջդ բարի թող լինի»:

Արցախցին համայն աշխարհի մարդկությունը խաղաղություն և  
բարօրություն է մաղթում իր համեստ մաղթանքով.

«Երկրագունդը թըղ բարի ըրագավ  
սպրի»

«Երկրագունդը թող բարի երագով  
սպրի»:

### Եզրակացություն

Պյատիգորսկ գաղթած Արցախի հայերի շրջանում 1964 թ. կատարած ժողովրդագրիտական անձնական գրառումներն ու դիտարկումները հիմք են տալիս եզրակացնելու.

1. Արցախի հայերի բանահյուսությունն իր արմատներով նույնական է Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայության մշակութային հնամենի ավանդներին: Հանգամանք, որը վկայում է նրանց ազգային-ավանդական ակունքների նույնականության ու հայկականության մասին,
2. Պյատիգորսկի Արցախի հայերի բանահյուսական նշխարները ոչ միայն բազմաթանր են ու բազմազան, այլև ինքնատիպ են իրենց բնույթով,
3. նոր՝ ուսական միջավայրին ինտեգրվող Արցախի հայերի լեզվական միտումներն արդեն իսկ զգացնել են տալիս նրանց բանավոր խոսքի մեջ:

Վերժինե Սվազլյան – բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության տեսության և պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ արևմտահայոց բանավոր ավանդույթ և պատմական հիշողություն: Հեղինակ է 26 մենագրության և շուրջ 250 հոդվածի:  
vsvaz333@yahoo.com

### REFERENCES

- Cholakean Y. Kesap, h. B, Halep, 1998 (In Armenian).  
 “Hay zhoghovrdakan hekiatner” gitakan bazmahatoryaki 5–7 hatoner (Yerevan, 1966–1979. “Artsakh-Utik” (Shushi, Artsakh, Gandzak). kazmoghner՝ A. Nazinyan, V. Svazlyan, h. 6, Yerevan, 1973 (In Armenian).  
 Svazlyan V. Polsahayots banahyusoutyune, Yerevan, 2000 (In Armenian).  
 Svazlyan V. Kilikia. Arevmtahayots banavor avandutyune, Yerevan, 1994 (In Armenian).

### ФОЛЬКЛОРНЫЕ РЕЛИКВИИ ПЕРЕСЕЛИВШИХСЯ В ПЯТИГОРСК АРЦАХСКИХ АРМЯН

(По материалам, записанным автором)

ВЕРЖИНЕ СВАЗЛЯН

Резюме

*Ключевые слова: Пятигорск, Карабах, Арцах, Россия, сказитель, устная традиция, эпический-повествовательный, лирический, фразеологический фольклор, армянский диалект.*





For me, as a folklorist-ethnographer, it was interesting to know what changes they had undergone under the conditions of coexistence with the local people, whether they remained sincere to the traditions of their cradle, etc. In 20 days of scientific expedition I have written down from the 12 Artsakh Armenian narrators of Pyatigorsk more than 100 units of folklore materials in their dialectal nuances.

The said materials are of *epic*, *lyric* and *saying* characters and provide grounds to conclude that:

1. The folklore of the Artsakh Armenians is identical by its roots to the cultural precepts of the Armenians of Western Armenia and Cilicia, a circumstance which testifies to the identity and Armenianness of their traditional national sources.

2. The folklore relics of the Artsakh Armenians of Pyatigorsk are not only multigenre and multifarious, but are also unique by their nature.

3. The influence of the new, Russian environment at some extent was already reflected in the oral folk art of the Artsakh Armenians.

*Verjine Svazlyan – Doctor of Sciences in Philology, Leading Researcher of the Department of Theory and History of the Armenian Popular Folklore at the NAS RA Institute of Archaeology and Ethnography. Scientific interests: the oral folklore and the historic memory of Western Armenians. Author of 26 monographs and over 250 articles. vsvaz333@yahoo.com*

ԱԾԱԿԱՆ // ԳՈՅԱԿԱՆ ՏԱՐԱՐԺԵՔ ԲԱՌԵՐԻ  
ԹՎԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ\*

ԼԱԼԻԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ, ԼԻԼԻԹ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր՝ թվի քերականական կարգ, հոգնակի թիվ, մասնիկավորում, տարարժեք բառեր, տարարժեքություն, թվակազմություն, կաղապար, կառուցատիպ, թվակազմական մասնիկ, տիպաբանական հատկանիշ:

**Նախաբան**

Թվի քերականական կարգն արտահայտում է քանակայնության գաղափար, որ տարածվում է հաշվելի առարկաների վրա: Քանակայնության գաղափար կարող են արտահայտել նաև հատկանշային խոսքի մասերը, երբ շարահյուսական մակարդակում հանդես են գալիս փոխանվանական գործածությունը կամ համաձայնում են հոգնակի լրացյալներին:

Հին հայերենում (և բազմաթիվ այլ լեզուներում) անվան եզակի թիվը նշույթավորված է. իբրև քերականական իմաստի արտահայտման միջոց հանդես է գալիս բառի ուղիղ ձևը, որ հատկանշվում է գրո ձևույթով: Ի հակադրություն գրո ձևույթի, հոգնակի թիվը նշույթավորված է. հոգնակիության գաղափարն արտահայտվում է թվանիշ թեքույթների միջոցով: Դա նշանակում է, որ հին հայերենը թեև համարվում է թեքական կառուցատիպի լեզու, այնուհանդերձ հղովակազմության մեջ գերիշխում է մասնիկավորումը, իսկ հոգնակիակազմությունը միայն մասնիկավորմամբ է<sup>1</sup>:

Հին հայերենում թվակազմությունը կարելի է դիտարկել նաև այն բառերի չրջանակներում, որոնք իրենց իմաստային կառուցվածքով երկատված են և համատեղում են ածականի ու գոյականի խոսքիմասային արժեքներ: Այդ կարգի բառերը համարվում են խոսքիմասային տարարժեք բառեր, որոնք ծագում են ինչպես ածականական, այնպես էլ գոյականական սերող կաղապարներից<sup>2</sup>: Նման բառերի թվակազմությունը պայմանավորված է նրանց առարկայական – գոյականական նշանակությամբ, քանի որ ածականների քանակայնության գաղափարը ոչ թե ձևաբանական, այլ շարահյուսական հատկանիշ է:

\* Ներկայացվել է 25. XI. 2020 թ., գրախոսվել է 26. II. 2021 թ., ընդունվել է տպագրության 11. VI. 2021 թ.:

<sup>1</sup> Հ. Պետրոսյան. Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972, էջ 1119:

<sup>2</sup> Խոսքիմասային տարարժեք բառերի մասին տե՛ս Լ. Խաչատրյան. Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Երևան, 1985, էջ 32–52, ն ու յ ն ի՝ Խոսքիմասային տարարժեքությունն արգի հայերենի կայուն կապակցություններում, Երևան, 1996, էջ 12–83, Գ. Ջահուկյան. Ժամանակակից հայերենի տեսություն հիմունքները, Երևան, 1974, էջ 526–527:

Ածականն առանձին հոգնակի թվով հանդես չի գալիս, եթե չի գործածվում գոյական անվան հետ. հետևաբար, հոգնակի թվի հատկանիշը պայմանավորված է նախադասության անդամների համաձայնության հանգամանքով, որ շարահյուսական հասկացություն է<sup>3</sup>:

Այդ առումով Ա. Բագրատունին նկատում է. «Ածականք յետադասեալք գոյականաց հետի և մերձ, համաձայնին սովորաբար՝ թէ ի վերջահոլովսն և թէ ի հոգնակի նախդրիւ հոլովան յանգեալս ի. ջուրք բազումք, կանայք մեծատունք՝ պատուականք՝ վեհագինք ... , քարամբք կոփածոյիւք և մեծամեծօք<sup>4</sup>, ի տաճարաց փղոսկրէից, ի թշնամեաց իմոց հզօրաց ... : Ապականեն գբարս քաղցունս բանք չարք ...»<sup>5</sup>:

Մյուս կողմից՝ ածականի թվի գաղափարը պայմանավորված է փոխանվանական գործածության հանգամանքով, երբ ածական անունը գործածվում է գոյական անվան փոխարեն, որի հետևանքով տեղի են ունենում ածական-գոյական խոսքիմասային մասնակի փոխանցումներ՝ խոսքիմասային տարարժեք բառերի անջատումով: Եթե ածականը հանդես է գալիս նաև հոգնակի թվով, ապա կարելի է խոսել նրա թվակազմական հատկանիշի մասին. այսինքն՝ ի՛նչ եղանակով կամ ի՛նչ միջոցով է արտահայտվում նրա հոգնակիակազմությունը:

Գ. Ջահուկյանը, կատարելով առաջնային արմատական ածականների իմաստային վերլուծություն, նկատում է, որ դրանք ըստ որոշչային կարգերի բնութագրում են նյութական և տարածական օբյեկտներ կա՛մ ինքնին, կա՛մ հիմնական կարգերին բնորոշ հարաբերությամբ հանդերձ: Վերլուծելով երկիմույթ արմատական ածականներին բնորոշ որակական և քանակական, ինչպես նաև չափի ու տեղի կարգերի զուգորդմամբ բնութագրվող տիպերը՝ նա առանձնացնում է որոշակի խմբեր, որոնք բնորոշվում են կազմի և թվի, կախման և թվի, ձևի և թվի կարգային հատկանիշներով<sup>6</sup>: Այլ կերպ ասած՝ թվի քերականական կարգը տարածելի է համարում նաև հատկանշային խոսքի մասերի վրա:

Ածական // գոյական արժեքներ համատեղող բառերի թվակազմությունը

Ածական // գոյական արժեքներ համատեղող բառերը կարելի է դասակարգել ըստ կազմության, ապա ներկայացնել դրանց թվակազմական կառուցատիպերը: Խոսքիմասային տարարժեքություն ցուցաբերող այդ բառերի ձևաբանական արժեքները պայմանավորված են դրանց բառական իմաստներով. ուստի այդ կարգի բառերի հոգնակիակազմությունը ներկայացնելիս անհրաժեշտաբար ցույց կտանք նաև դրանց բառիմաստները, որ-

<sup>3</sup> Ա. Աբրահամյան. Գրաբարի ձևաբանություն, Երևան, 1976, էջ 61, չ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան. Գրաբարի ձևաբանություն, Երևան, 1992, էջ 194, Լ. Խաչատրյան, Գ. Թոսունյան. Գրաբարի դասագիրք, Երևան, 2003, էջ 90:

<sup>4</sup> Հմմտ. Աչօք բացօք անկաք ի խորխորատ (Բուզ., 143):

<sup>5</sup> Ա. Բագրատունի. Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 328–329:

<sup>6</sup> Գ. Ջահուկյան. Ժամանակակից Հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989, էջ 84, 89–90:

պեսզի պատճառաբանվի նաև թվակազմությունը. այն է՝ հոգնակի թիվը պայմանավորված է տարարժեք բառերի գոյականական իմաստով ու արժեքով:

1) Պարզ բառեր. ազատ, աղքատ, ամուլ, ամուրի, անձուկ, աջ, աւագ, աւագակ, բարբարոս, գող, երէց, թարգման, ծանծաղ, կախարդ, հրոսակ, ձախ, նահատակ, չէն, ստրուկ և այլն:

Այս բառերի հոգնակի թիվը կազմվում է -ք մասնիկի միջոցով: Ինչպես նշել ենք, առարկայի հատկանիշը հոգնակի թվի գաղափար չի արտահայտում, հետևաբար այդ բառերի հոգնակի թվի իմաստը պայմանավորված է շարահյուսական համաձայնությունների հանգամանքով: Հմմտ.

Աղքատ – ա. 1. Չքավոր, տնանկ, չունևոր. Զի այրին այն աղքատ աւելի արկ (Ղուկ., ԻԱ. 3): 2. Հետին, նվաստ. «Յաղքատ չքաւորութենէ փախչել» (Պիտ.): 3. Տկար, չնչին. «Ըստ Աղբիոնի աղքատ մտածութեան» (Խոսր., ըստ ՆՀԲ):

Բառը գոյականական իմաստով նշանակում է «մուրացիկ, տառապյալ՝ չքավոր մարդ»: Հոգնակին կազմում է -ք մասնիկի միջոցով՝ աղքատք, հմմտ. «Տեսցեն աղքատք և ուրախ եղիցին» (Սաղ., ԿԸ, 33):

Երէց բառը որպես ածական բազմիմաստ է՝ 1. Ավագ, ծնունդով առաջինը. «Ապա երէց որդին Գրիգորիս եհաս յեպիսկոպոսութիւն կողմանց Աղուանից եւ Վրաց» (Բուզ., 10): 2. Առաջին. գլխավոր, առաջնակարգ, «Տէրն ի մեռանել անդ իւրում ետ զհօտս իւր հովուաց երիցուն Պետրոսի» (Եփր. Համաբ.):

Բառը գոյականական իմաստով նշանակում է «քահանա». հոգնակի թիվը կազմում է -ունք հոգնակակերտ մասնիկով՝ արտահայտելով հավաքականություն իմաստ՝ երիցունք: Հմմտ. «Կոչեաց զերիցունս եկեղեցւոյն» (Գործ., Ի. 17):

Նահատակ – ա. 1. Առաջամարտիկ, առաջին շարքերում կռվող. «Արթուն եւ քաջ նահատակն Վարդան եւ նոցունց նմանիքն բողոքէին ձեզ հանապազօր» (Փարպ., 80): 2. Քաջակորով, քաջարի, առաքինի. «Եւ Զարեհ էր այր սէգ եւ յորս երէոց նահատակ, իսկ առ պատերազմունս վատ եւ տաղտուկ» (Խոսր., 184):

Բառը գոյականական՝ «դավանանքի համար իր կյանքը զոհած՝ զոհող մարդ. մարտիրոս, վկա» իմաստով հոգնակին կազմում է -ք մասնիկով՝ նահատակք, հմմտ. «Անդ անկանէր Յուզա՝ առաջին նահատակօքն» (Ա Մակ., Թ, 18):

2) Ածանցավոր բառերը հին հայերենի բառային կազմում գգալիորեն շատ են, քան պարզ և բարդ բառերը. այդ կարգի բառերը կարելի է ներկայացնել ըստ ածանցների: Որպես սերող կաղապարներ՝ դրանք ածականներ են, որոնց գոյականական իմաստն ու արժեքը պայմանավորված է ածական-գոյական բառակապակցության կրճատման (էլլիպսիսի) գործոնով, ինչպես՝ ազգական մարդ – ազգական, ալեւոր մարդ – ալեւոր, կենդանի արարած – կենդանի,

ուխտաւոր հաւատացեալ – ուխտաւոր, վաղակաւոր զինուոր – վաղակաւոր, անապատական մենակեաց – անապատական և այլն<sup>7</sup>:

Այդ կարգի բառերն ածականական իմաստով ու արժեքով արտահայտում են հատկանշային իմաստներ, իսկ իբրև էլլիպսիսի հետևանք՝ գոյականական իմաստով ու արժեքով արտահայտում են առարկայական նշանակություն, որ ենթադրում է նաև հատկանշային իմաստ: Դիտարկենք այդ բառերը շարահյուսական ոլորտում և ցույց տանք դրանց գոյականական արժեքի թվակազմությունը:

– Ական. ազգական, ամսական, ամրական, անապատական, աշխարհական, առաքելական, աստուածական, արձանական, բանտական, բարոյական, բեմական, գաղթական, գաւառական, եկեղեցական, զինուորական, զօրական, ժողովական, իշխանական, լեռնական, խորհրդական, կոչնական, հանդիսական, մոլեկան, շինական, որսական, ուրուական, վաճառական, վարձական, օտարական և այլն: Հմմտ.

Գաղթական – ա. Փախստական, վտարանդի մարդ. ա. «Սառա թագաւորին ոչ փոխանակեաց զգաղթական այրն իւր» (Յփր. Ծնն.): Գոյականական արժեքով բազմիմաստ է. հոգնակին կազմում է -ք մասնիկով, որ բառին հաղորդում է նաև հավաքականութան իմաստ, հմմտ. «Զի գաղթականք աշխարհին սպառեցին զհամբարս մթերեալս» (Ա. Մակ., 2, 55): գ. Գաղթ, գաղթականություն. «Մարդիկ աշխարհին ի հէն եւ ի գաղթականս փախստեամբ ամրանան» (Խոր., 52):

Ուրուական – ա. Երևութական, ցնորական, աչքին երևացող. «Որ ոչ է ճշմարիտ տուփումն, այլ ուրուական ինչ» (Դիոն. Ածայ.):

Բառը գոյականական իմաստով բազմիմաստ է. հոգնակին կազմում է -ք մասնիկով, թեք հոլովներում թվի իմաստն արտահայտվում է ք-ց հերթագայություն միջոցով: Հմմտ. 1. Մտապատրանք, տեսիլք, ցնորք, երևակայական կերպարանք. «Զմարդկան ուրուականս ի պաշտօն առեալ՝ դիս անուանէին» (Եզն., 100): 2. Կուռք, հեթանոսական աստված, պաշտամունքի առարկա. «Ուրուականաց կուռց մեռելոտեաց» (Ճ. Բ.): 3. Մեռած մարդու ստվերը ոգին. «Ուրուականաց եւ դիւցազանց թագաւորութիւնն» (Եւս. Քր.): 4. Հանգուցյալ, մեռած մարդ. «Որք զուրուականաց հմայութիւնս յանդգնին» (Ոսկ. Մ., Բ. 9):

– Աւոր. ալեւոր, աղանդաւոր, աղեղնաւոր, ամուսնաւոր, անապատաւոր, արուեստաւոր, բռանւոր, գիսաւոր, աւետաւոր, բանաւոր, երաշխաւոր, գօրաւոր, լուսաւոր, կրօնաւոր, հաւատաւոր, ճարակաւոր, ճգնաւոր, ուխտաւոր, չքաւոր, պատգամաւոր, պարսաւոր, պսակաւոր, մերձաւոր, շնչաւոր, վաղակաւոր, վաստակաւոր, վիճակաւոր և այլն: Հմմտ.

Աղեղնաւոր – ա. Աղեղ ձգող՝ բանեցնող. «Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն» (Խոր., 10): Գոյականական արժեքով արտահայտում է առարկայական նշանակություն «աղեղնաձիգ, նետաձիգ» իմաստով, հոգնակին կազմվում է -ք մասնիկով, հմմտ. «Եւ ծանրացաւ պատերազմն ի վերայ Սաւուղայ, եւ գտին զնա աղեղնաւորք» (Ա թագ., ԼԱ, 3):

<sup>7</sup> Ածականակերտ ածանցների բառակազմական արժեքի մասին տե՛ս Ե. Գ. Գրիգորյանի «Գոյականական արժեքի մասին տե՛ս Ե. Գ. Գրիգորյանի «Գոյականական արժեքի մասին տե՛ս Ե. Գ. Գրիգորյանի» (Երևան, 1971, ս. 246–250).

Ուխտաւոր – ա. Աստծուն ուխտ անող, որեւէ ուխտ ստանձնած. «Ուխտաւոր Աստուծոյ եղիցի մանուկն անդատին յորովայնէ» (Դատ., ԺԳ. 5):

Բառը գոյականական արժեքով բազմիմաստ է. հոգնակին կազմում է -ք մասնիկի միջոցով, թեք հոլովներում թվակազմությունը դրսևորվում է ք-ց հերթագայությամբ: Հմմտ. 1. Վանական, կրոնավոր, միայնակյաց. «Մեր ուխտաւորքն ոչ վասն այնորիկ հրաժարեն ի կերակրոց» (Եզն., 286): 2. Եկեղեցական, կղերական, հոգևորական. «Գրեաց թագաւորն եպիսկոպոսաց, ուխտաւորաց եւ ժողովրդականաց» (Սոկր., Բ. 23): 3. Միանձնուհի, հավատավոր կույս. «Եւ արար զխարիսխն նորա պղնձի՝ ի հայեղեաց կանանց ուխտաւորաց» (Ելք. ԼԸ. 8):

– Ածոյ-ածու. կոփածոյ // կոփածու, կռածոյ, ձուլածոյ և այլն:

Կոփածոյ // կոփածու – ա. Կոփած, տաշած, կտրելով հղկելով սարքած. «Կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնուոյ, զոր որձաքար եւ կոփածոյ վիմօք, երկաթագամ եւ կապարով մածուցեալ» (Ոտր., 241):

Բառը գոյականական արժեքով նշանակում է «կոկած՝ հղկած՝ տաշած քան». հոգնակի կազմում է -ք մասնիկի միջոցով, հմմտ. «Ապա եթէ սեղան ի քարանց առնիցես ինձ, մի շինեսցես զնոսա կոփածոյս» (Ելք., Ի, 25):

– Ակ. անէակ, անբնակ, լողակ // լուղակ, խօսնակ, աւերակ և այլն:

Աւերակ – ա. 1. Ավերված, անշեն, անբնակ. «Ձէն երկիրն ամենայն թափուր եւ աւերակ թողոյր» (Ագաթ., 16): 2. փխբ. Ապականված, բարոյալքված. «Յոգիս աւերակս եւ անապատացեալս» (Ոսկ. Ես.):

Բառը գոյականական արժեքով հոգնակի թիվը կազմում է -ք մասնիկի միջոցով. նշանակությունը բազմիմաստ է. 1. Ավերված՝ քանդված շինություն. «Ձաւերակս նորա կանգնեցից» (Եսայ., ԽԴ. 26): 2. Ավերում, ավեր. «Եւ արարից զքաղաքս ձեր աւերակս եւ թափուր արարից զսրբութիւնս ձեր» (Ղեւտ., ԻԶ, 31):

– Ային. անապատային, աստուածային, աշխարհային, մարդկային, լեռնային, քաղաքային և այլն:

Քաղաքային – ա. Քաղաքին հատուկ՝ վերաբերող. քաղաքական. «Քաղաքային իրաց հմուտ լինիցի» (Ոսկ. Մ., Գ. 6):

Բառը գոյականական արժեքով արտահայտում է առարկայական նշանակություն՝ «համաքաղաքացի, քաղաքացի, քաղաքաբնակ». հոգնակին կազմում է -ք մասնիկով. «Ձքաղաքացիս նախապատիւս քան զգեղջուկս համարել հրամայէ, այլ եւ քաղաքայնոց ոչ իսպառ ի վերայ գեղջկացն ընդվզել» (ՅՏ. Կթ., 26):

– Եայ – ենի. այծեայ, պաշտօնեայ, քրիստոնեայ, փախստեայ, այծենի, արմաւենի և այլն:

Այծեայ – ա. Այծի մազից հյուսված՝ գործած. «Արեգակն եղեւ սեաւ իբրեւ զկապերտ այծեայ» (Յայտ., Զ. 12):

Բառը գոյականական արժեքով բազմիմաստ է. հոգնակին կազմում է -ք մասնիկով այծեայք: 1. Մազեղեն հագուստ՝ զգեստ. «Առեալ զգեցաւ զայծեայսն» (Վրք. Հց.): 2. Այծի մազ. «Բերին վուշս եւ այծեայս (ի մանել)» (Վրք. Հց.):

– Եղէն. լուսեղէն, բոցեղէն, հրեղէն, ջրեղէն, հոգեղէն և այլն:

Լուսեղէն – *ա. Լույսով շողախաված, լուսավոր. «Երեւեցաւ խաչն լուսեղէն առ երանելեան կիրորդի» (Խոր., 270):*

Բառը գոյականական արժեքով հոգնակին կազմում է -ք մասնիկով լուսեղէնք, որ ունի հավաքականության իմաստ և նշանակում է «հրեշտակների գունդ, հրեշտակ(ներ)». Հմմտ. «Զխաւարասիրացն փաղանգ՝ լուսեղինացն զինուց սաղրեցի» (Նար., 164):

– Ի- ենի. – անի. այլազգի, յուսթի, առաքինի, հայրենի, վայրենի, գեղանի, լեզուանի, կենդանի և այլն:

Այլազգի – *ա. 1. Օտարազգի, բարբարոս, հեթանոս. «Զպարսն ի ձեռին իւրում ... մերձեցաւ առ այրն այլազգի» (Ա Թագ., ԺԷ, 40): 2. Տարբեր. ուրիշ. «Աննման են այրոց կեանք նորա, եւ այլազգի շաւիղք նորա» (Իմաս., Բ. 15):*

Բառը գոյականական իմաստով արտահայտում է առարկայական նշանակություն, որի հոգնակին կազմվում է -ք մասնիկի միջոցով, թեք հոլովներում գործում է ք-ց հերթագայությունը: Հմմտ. 1. Օտարական, անծանոթ մեկը. «Այլ իբրեւ այլազգի եւ աւտարացեալ՝ ասպատակ սիւռեալ գեղէին զեղբարս իւրեանց» (Ղեւ., 123): 2. Ուրիշ ցեղի՝ կրոնի՝ դավանանքի մարդ. «Երթիցես դու առնուլ կին յայլազգեաց» (Դատ., ԺԴ. 3):

– Իչ. ամենափրկիչ, բնակիչ, մատնիչ, գովիչ, գրիչ, փրկիչ, թովիչ, գործիչ, ոսկերիչ և այլն:

Բնակիչ – *ա. Բնակության տեղ հիմնող. բնակելի դարձնող. «Բնակիչ նմին հաշուի զօրավար գաղթականութեան զՌոմոն» (Եւս. Քր.):*

Բառը հոգնակին կազմում է -ք մասնիկով արտահայտելով նաև հավաքականության նշանակություն «տան՝ տոհմի՝ գերդաստանի անդամները». «Եւ սգային ամենայն բնակիչք տանն Թորգոմայ» (Բուզ., 192):

Երբեմն ածականական արժեքն անբաժան է գոյականական արժեքից, միևնույն կիրառությունամբ այն ցուցաբերում է երկու խոսքիմասային արժեքներ, Հմմտ. *ա./գ. Որևէ տեղ բնակվող՝ ապրող (մարդ). «Որք բնակիչք էին ծովեզերեայց» (Յուզիթ., Ե. 27): «Քաղցրացեալք՝ եղիցին բնակիչք երկրի» (Առակ. Բ. 20):*

– Ուն. ասուն, անասուն, իմաստուն, սողուն, զեռուն, գիտուն, խօսուն և այլն:

Ասուն – *ա. Բանական, խոսող. «Անբանական բարոյից է՝ Ասուն կենդանեաց ի մէջ դալարոց, ի յարօտս մահու ճարակել» (Նար., 149):*

Բառը գոյականական արժեքով նշանակում է «խոսող՝ բանական արարած». հոգնակին կազմում է -ք մասնիկով, Հմմտ. «Զամենայն զոր արար գեղեցիկս արար, այս ինքն զասունս եւ զանասունս» (Եզն., 9):

Խօսուն – *ա. Բանական, խոսողական. «Եւ իբրեւ խօսուն բերանով անշշունջն բողբէ» (Եզն., 15):*

Որոշակի դեպքերում բառի ածական և գոյական արժեքները հավասարապես գոյակցում են նրա իմաստային կառուցվածքում, Հմմտ. *ա./գ. Խոսելու կարողություն ունեցող. խոսող (արարած). ա. «Անկեալ կամ չարեօք ի մահիճս ախտից մեղաց՝ դի անկենդան եւ խօսուն մեռեալ» (Նար., 41). գ. «Ճառագայթիւք լուսաւորին ամենայն եղեալք խօսնոց և անասնոց» (Փարպ., 40):*

Կան նաև որոշակի ածանցավոր տարարժեք բառեր, որոնց ածանցները չեն ընդհանրանում և բառաչարքեր չեն կազմում՝ ածական-գոյական նշանակություններով, ինչպես՝ -եալ. առաքեալ, -կան. գուժկան, -ոտի. մեռելոտի և այլն: Հմմտ.

Առաքեալ – ա. Ուղարկված (մեկի կողմից). ճանապարհ ընկած. «Ես եմ առաքեալ առ քեզ խստութեամբ» (Գ. Թագ., ԺԴ. 6):

Բառը գոյականական արժեքով ձեռք է բերել առարկայական նշանակություն. Հմմտ. 1. Լուր տանող, սուրհանդակ. «Սուտ առաքեալք» (ՆՀԲ, 1, 298): 2. Քրիստոսի տասներկու աշակերտները (նրանցից յուրաքանչյուրը). «Ընտրեաց ի նոցանէ երկոտասանս, զորս եւ առաքեալս անուանեաց» (Ագաթ., 222):

Գոյականի հոգնակին արտահայտվել է մասնիկավորմամբ՝ առաքեալ-ք:

Գուժկան – ա. // գ. Բոթաբեր, վատ լուր բերող (անձ). ա. «Եւ եհաս գուժկան առ Դաւիթ եւ ասէ» (Բ. Թագ., ԺԵ, 13): գ. «Այլ գուժկանք հասանէին ի կողմանցն Գալիլեացոց անտի» (Ա Մակ., Ե, 14):

Իբրև գոյական՝ հոգնակին կազմում է -ք մասնիկով գուժկան-ք: Գոյականական արժեքով նշանակում է նաև «գուժ, վատ լուր, ցավալի դեպք՝ անցք». «Ձայս գուժկան աղմկի իբրև տեսին միաբան սուրբ եպիսկոպոսունքն» (Եղ., 65):

Մեռելոտի – ա. 1. Մեռած, մահացած, դիակ դարձած. «Ձապականելի մարմինդ գէշաբարչ արարեալ իբրև զազիր մեռելոտի ի բաց ընկեցեալ» (Եղ., 8): 2. փխբ. Հնացած, աննշան, անարժեք. «Եկեսցուք մի՛ միւսանգամ արկանել հիմն ապաշխարութեան ի մեռելոտի գործոց անտի» (Եբրա., 2, 1):

Բառը գոյականական արժեքով բազմիմաստ է. հոգնակին կազմում է -ք մասնիկով մեռելոտի-ք: 1. Մեռած՝ սատկած կենդանի. դի. դիակ. «Եւ ճարպ մեռելոտոց եւ գազանաբեկաց լինիցի յամենայն գործ» (Ղեւտ., Է, 24): 2. Հեթանոսական աստված, կուռք. չաստված. «Զթագաւորն ամբարհաւածեցուցանէր որոգայթաղի թշնամին առ ի տալ պագանել երկիր ուրուականաց մեռելոտոց» (Ագաթ., 80):

3) Բարդ բառեր. Կազմությունը բարդ ածականների խոսքիմասային երկատվածությունը պայմանավորված է բարդության վերջին բաղադրիչի իմաստով: Նման բարդությունների առաջին բաղադրիչը գերազանցապես գոյական անուն է, հանդիպում են նաև ածականական, թվականական կամ դերանվանական բաղադրիչներ, սակայն, ինչպես նշեցինք, այդ կարգի բառերի գոյականական իմաստավորումը պայմանավորում է բարդության երկրորդ բաղադրիչը: Այլ մոտեցումով տարարժեք բառերի գոյականական իմաստն ու արժեքն ածանցվում են բարդության բաղադրիչների իմաստային հարաբերությունից, որտեղ կարևոր նշանակություն ունի բարդության վերջին բաղադրիչը: Դիտարկենք այդ բառերն ըստ վերջին բաղադրիչների խոսքիմասային արժեքի և ցույց տանք դրանց հոգնակիակազմության դրսևորումները:

ա) Բարդության վերջին բաղադրիչը գոյական անուն է, ինչպես՝ ազատագունդ, աստուածաբան, ազատատոհմ, այլալեզու, աջակողմ, բազմակոյտ, բոլորածիր, միանձն, սկայազն և այլն:



Ազատագրունը – *ա. 1. Ազնվական ծագում ունեցող զորական. «Մուշեղ որդի Վասակայ ժողովեաց զամենայն ազատագրունը մարդկանն մնացելոյն» (Բուգ., 155): 2. Ազնվականներից կազմված՝ բաղկացած. «Տայր հրաման թագաւորն Արշակ ազատագրունը բանակին» (Բուգ., 104): գ. Ազատներից՝ ազնվականներից բաղկացած խումբ՝ զինվորական գունդ. «Ամենայն ազատագրունըք աշխարհիս Հայոց խնդրէին ի նմանէ զմիաբանութիւն» (Փարս., 20):*

Սկայազն – *ա. Հսկաների ցեղից սերած, քաջագուն. «Մարգարէացաւ, եւ ոչ հաւատաց նմա սկայազնն» (ՆՀԲ, 2, 718):*

Գոյականական իմաստով հոգնակին կազմում է -ք մասնիկով. բառաձևի արտահայտությունը պլանում ձևականորեն այն կարելի է համարել -ունք՝ սկայագ-ունք: Նշանակում է «սկայորդի, հսկայի գավակ». «Եւ էին երկոքեան մեծք անհեղեղք, երկոքեան անձնեայք որպէս սկայազունք» (Բուգ., 202): «Եւ ահա պակուցանողս տարագուք յարձակմանցն սկայազունքն զմիմեամբք արկանէին» (Ոոր., 36):

բ) Բարդուխյան վերջին բաղադրիչն ածական անուն է, ինչպես՝ գահերէց, մեծամեծ, ազգակից, աթոռակից, լծակից և այլն:

Գահերէց – *ա. Նախագահական, պատվավոր. «Գահերէց գլխաւորութիւն» (Ոսկ. Մ): Գոյականան իմաստով հոգնակին կազմում է -ունք մասնիկով՝ գահերից-ունք. նշանակում է՝ «նախագահ, գլխավոր՝ ավագ կառավարիչ». «Եկին մտին քահանայապետք ղեւտացիք, որք էին գահերիցունք» (Ա. Եզր., Ե. 63):*

Մեծամեծ – *ա. 1. Երևելի, նշանավոր, ականավոր. «Ժողովեալ ամենայն աւագ քահանայք հանդերձ մեծամեծ տանուտերօք առ թագաւորն Վռամշապուհ սկսան աղաչել» (Փարս., 16): 2. Շատ թանկարժեք. «Եւ լցան ամենեքեան բազում եւ մեծամեծ աւարաւ» (Սեբ., Թ. 10):*

Բառը գոյականական իմաստով հոգնակին կազմում է -ք մասնիկով՝ մեծամեծ-ք, նշանակում է «մեծ՝ երևելի բան. մեծ-մեծ բաներ». «Ձմեծամեծան եւ զպայծառագոյնսն, այսինքն զնշանսն եւ զսքանչելիսն, ընթեռնոյք առաջի ժողովրդեանն» (Ասող., 233):

Եթե ածականական գործառույթով այն համաձայնում է հոգնակի լրացյալին, ապա հանդես է գալիս հոգնակի թվով պահպանելով հոգնակիական կազմութան տիպը, հմմտ. 1. Շատ մեծ, մեծ-մեծ. «Թաւալեցուցին քարինս մեծամեծս ի վերայ այրին» (Յեսու., Ժ. 27): 2. Մեկի պատվին համեմատ. «Մատուցին զաւրավարին եւ իշխանացն պատարագս մեծամեծս» (Սեբ., ԼԲ. 30):

գ) Բարդուխյան վերջին բաղադրիչը բայահիմք է, ինչպես՝ ամրապահ, այրասպան, աշխարհարար, առաջապահ, ասպարակիր, աստեղագէտ, բարերար, բեռնակիր, բերդապահ, գիշերապահ, գինակիր, թիկնապահ, կողմնապահ, հացարար, միածին, նետանձիգ, որդեկոտոր, բարեկամ և այլն: Հմմտ.

Հացարար – *ա. Հաց եփող՝ թխող. «Հացարար կին՝ մարդ» (ՆՀԲ): գ. Հացագործ, հացթուխ. «Նկանակ մի հաց արտաքուստ ի հացարարացն» (Երեմ., ԼԷ, 20):*

Նետանձիգ – *ա. 1. Նետ արձակող՝ ձգող, աղեղնավոր. «Բազումք ի նետանձիգ զօրացն մեռան» (ՆՀԲ): 2. Նետանձիգական, նետանձիգության. «Կանգնէին նետանձիգ աշտարակս» (Ա. Մակ., Զ. 51):*

Բառը գոյականական «նետ ու աղեղ կրող զինվոր» իմաստով հոգնակին կազմում է -ք մասնիկով նետաձիգ -ք. «Մարդիկ անձնընտիր լեպք, զնետաձիգս ի լայնալիճ աղեղանց անհնարին խողխողումն ի վերայ մարտիկ գորացն հասուցանէին» (ՅՏ. Կթ., 235):

Որպես գոյական՝ բազմիմաստ է, հմմտ. 1. նետ արձակելը. նետաձգություն. «Գտեալ անդ զպատկեր թագաւորին Պարսից՝ նետաձիգ եղեալ՝ նետալից առնէր» (Բուզ., 130): 2. նետընկեց տարածություն. «Մղոնն, զոր ձիւնթաց մի ոմանք անուանեն եւ ոմանք նետաձիգ մի» (ՆՀԲ):

Որդեկոտոր – ա. Ձավակներից զուրկ՝ զրկված. «Դառնացեալք ոգևով իբրեւ զարջ մի որդեկոտոր ի վայրի» (Բ թագ., Ժէ. 8): գ. Որդիներին կոտորող սպանող. «Չորդեկոտորսն զանողորմս. եւ զաղեկերսն զոր սնուցանէին» (Իմաս., ԺԲ. 5):

դ) Բարդություն վերջին բաղադրիչը ածանցակերպ է. հիմնականում հանդիպում է ունիմ տարահիմք բայի երկրորդ հիմքը՝ կալ, ինչպես՝ աթոռակալ, գահակալ, ծովակալ, ատենակալ, ջահընկալ, սահմանակալ, տիեզերակալ և այլն:

Կալ վերջնաբաղադրիչը բարդությունը վերագրում է «մի բան ունեցող, մի բանի տիրապետող» իմաստներ, որով պայմանավորված են նրա ածական // գոյական արժեքները: Հմմտ.

Աթոռակալ – ա. Փոխանորդ, տեղակալ. «Ասէ ցնա աթոռակալ թագաւորին պատրիկն» (Ճ. Ա.): գ. Գահակալ, իշխանավոր. «Ոչ պակասեցին աթոռակալք և գահակալք մինչեւ ցՀերովդէս այլազգի» (ՆՀԲ, 1, 12):

Ատենակալ – ա. Ատյանի անդամ համարվող. «Գրեցին ատենակալ դպիրքն» (Ագաթ., 60): գ. Դատավոր. խորհրդական. դպիր. «Հեծեալք յերիվարս ի միջօրէի, երթեալք յատենանս ատենակալաց» (Դատ., Ե. 10):

Ծովակալ. ա. Ծովի՝ կղզիների վրա իշխող. ա. «Զինչ արդեօք ասիցէ ծով, ծովակալ եղելոց լակեղեմոնացոց» (Պիտ.): գ. Նավատորմի ղեկավար. «Որք ի կողմն ուրեք ծովակալք տիրեցին» (Եւս. Քր., Ա.):

Կալ վերջնաբաղադրիչով տարարժեք բառերի հոգնակի թիվն արտահայտվում է -ք մասնիկով, որ բնորոշ է գոյականների մեծ մասին:

Այսպիսով, մասնիկավորումը՝ որպես ձևաբանական տիպաբանություն հատկանիշ, բնորոշ է ինչպես փոխանվանաբար գործածված ածականներին, այնպես էլ տարարժեք այն բառերին, որոնք համատեղում են ածական // գոյական արժեքներ: Տարարժեք բառերի արտահայտությունը պայմանավորված է հոգնակիակազմ մասնիկներ ստանում են ձևաբանորեն երկատված բառի գոյականական արժեքները:

### Եզրակացություն

Հին հայերենում ածական // գոյական արժեքներ համատեղող բառերի թվակազմական կաղապարները պայմանավորված են մի կողմից՝ դրանց կառուցատիպերով (պարզ, բարդ և ածանցավոր կազմություններով), մյուս կողմից՝ բառական իմաստներով: Ըստ այդմ՝ այդ կարգի բառերի հոգնակիակազմությունը ներկայացնելիս անհրաժեշտ է բացահայտել նաև դրանց բառիմաստները, որպեսզի պատճառաբանվի թվակազմությունը. ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարարժեք բառերի հոգնակի թիվը պայմանա-

*վորված է գոյականական իմաստով ու արժեքով: Հետևաբար, թվակազմական մասնիկ ստանում է բառերի երկատված գոյականական արժեքը: Ածական // գոյական արժեքներ համատեղող բառերը հոգնակի թվի քերականական իմաստն արտահայտում են մասնիկավորման միջոցով:*

*Ուստի, հին հայերենում մասնիկավորումը՝ որպես ձևաբանական տիպաբանություն հատկանիշ, բնորոշ է ինչպես փոխանվանաբար գործածված ածականներին, այնպես էլ տարարժեք այն բառերին, որոնք համատեղում են ածական // գոյական արժեքներ:*

Լալիկ Խաչատրյան – բ. գ. դ., պրոֆ., Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ ընդհանուր լեզվաբանություն, հայոց լեզվի պատմություն, գրաբար, հայոց լեզվի տեսություն, բառագիտություն, բառարանագրություն: Հեղինակ է 20 գրքի և 165 հոդվածի: [lingualal51@mail.ru](mailto:lingualal51@mail.ru)

Լիլիթ Խաչատրյան – բ. գ. թ., Լոս Անջելեսի (ԱՄՆ) Համազգային Արևմտյան շրջանի գրական միավորի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց լեզվի պատմություն, գրաբարի քերականություն, տեքստագիտություն: Հեղինակ է 7 հոդվածի: [lilitellen@yahoo.com](mailto:lilitellen@yahoo.com)

#### REFERENCES

- Abrahamyan A. Grabari dzeṛnark, Yerevan, 1992 (In Armenian).  
 Avetisyan H., Ghazaryan R. Grabari dzeṛnark, Yerevan, 1976 (In Armenian).  
 Bagratuni A. Hayeren kerakanutium i pets zargatselots, Venetik, 1852 (In Armenian).  
 Jahukyan G. Zhamanakakits hayereni tesutyany himunknere, Yerevan, 1974 (In Armenian).  
 Jahukyan G. Zhamanakakits hayots lezvi imastabanutyun ev barakazmutyuyun, Yerevan, 1989 (In Armenian).  
 Khachatryan L., Tosunyan G. Grabari dasagirk, Yerevan, 2003 (In Armenian).  
 Khachatryan L. Khoskimasayin tararjequtyunn ardi hayereni kayun kapaktsutyun-nerum, Yerevan, 1996 (In Armenian).  
 Khachatryan L. Teghasharzhher baferi dzevabanakan imasti mej, Yerevan, 1985 (In Armenian).  
 Tumanyan E. Drevnearmyanskiy yazik. M., 1971 (In Russian).  
 Petrosyan H. Goyakani tvi karge hayerenum, Yerevan, 1972 (In Armenian).

#### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ա) Գրաբարի բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ*  
*Ագաթ. – Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տիփլիս, 1909:*  
*Ասող. – Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885:*  
*Բուզ. – Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:*

Դիոն. Ածայ. – Ս. Դիոնեսիոսի Արիսպագացույ յԱթենայ ... Գիրք յաղագս երկնային քահանայապետութեանց, եւ յաղագս եկեղեցական քահանայապետութեան, եւ յաղագս Աստուածային անուանց (ըստ ՆՀԲ-ի):

Եզն. – Եզնկայ Կողբացույ՝ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Եղ. – Եղիշէի վարդապետի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957:

Եփր. մատ. – Ս. Եփրեմի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1836, հ. պարունակում է՝

– Եփր. Համաբ. – Մեկնութիւն Աւետարանի Համաբարբառի, Բ. էջ 5–260:

– Եփր. Ծնն. – Տեսութիւն յաղագս մեկնութեան Արարածոց, Ա. էջ 1–131:

Եւս. Քր. – Եւսեբի Պամփիլեայ Կեսարացույ Ժամանակականք, Վենետիկ, 1818:

Խոր. – Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, Տիփլիս, 1913:

Ղեւ. – Պատմութիւն Հայոց Ղեւոնդեայ Մեծի վարդապետի, Ս. Պետրբուրգ, 1887:

ՅՏ. Կթ. – Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտեցույ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:

ՃԱ. Բ. – Ճատրնտիրք ազգի ազգի, ընդունարանք հին ճառից բնագրաց եւ թարգմանելոց ի նախնեաց (ըստ ՆՀԲ-ի):

Նար. – Գրիգորի Նարեկայ Վանից վանականի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840:

ՆՀԲ – Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութեանէ մեծին Մխիթարայ աբբազօր Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան, հ. Ա–Բ, Վենետիկ, 1836–1837:

Ոսկ. Ես. – Յովհ. Ոսկեբերանի Մեկնութիւն Եսայեայ մարգարէի, Վենետիկ, 1830:

Ոսկ. Մ. – Յովհաննու Ոսկեբերանի Յաւետարանագիրն Մատթեոս, հ. Ա–Գ, Վենետիկ, 1826:

Պիտ. – Յաղագս պիտոյից (Մ. Խորենացույ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865, էջ 339–581):

Սեբ. – Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Երևան, 1939:

Սոկր. – Սոկրատայ Աքոլաստիկոսի Եկեղեցական Պատմութիւն, Վաղարշապատ, 1897:

Վրբ. Հց. – Վարք սրբոց հարանց, հ. Ա–Բ, Վենետիկ, 1855:

Փարպ. – Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տիփլիս, 1904:

Բ) Աստվածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց, Հայաստանի աստուածաշնչային ընկերութիւն, Մեծ Բրիտանիա, 1997:

Առակ. – Առակք Սողոմոնի:

Եբրա. – Թուղթ Պօղոսի առաքելոյ առ Եբրայեցիս:

Ա Եզր. – Եզր. գիրք առաջին:

Գործ. – Գործք առաքելոց:

Դատ. – Դատաւորք:

Ելք – Ելք:

Եսայ. – Եսայի:

Երեմ. – Երեմիա:

Թագ. Ա. Բ. Գ. – Թագաւորութեանց Ա, Բ, Գ:

Իմաս. – Իմաստութիւն Սողոմոնի:

Ղեւտ. – Ղեւտական:

Ղուկ. – Աւետարան ըստ Ղուկասու:

Մակ. Ա. Բ. – Գիրք Մակաբայեցուց Ա, Բ:



*Լիլիտ Խաչատրյան – к. филол. н., преподаватель Лос-Анджелесского (США) Литературного союза западного региона Амазгаина. Научные интересы: история армянского языка, грамматика, древнеармянского языка, текстология. Автор 7 статей. lilitellen@yahoo.com*

## THE NUMBER-FORMATION OF ADJECTIVE // NOUN POLYSEMANTIC WORDS IN OLD ARMENIAN

LALIK KHACHATRYAN, LILIT KHACHATRYAN

### Summary

*Key words: grammatical category of number, plural form, affixation, polysemantic words, polysemy, number-formation, pattern, structural type, number-formation affix, typological indication.*

The number-formation patterns of noun//adjective polysemantic words depend on their structural types - *simple* (աջ – right, աւագ – senior, աւագակ – robber, բարբարոս – savage), *derivative structures* (աղանդաւոր – sectarian, ազգական – relative, գաղթական – refugee, քաղաքային – municipal, բնակիչ – inhabitant), *compound* (աստուածաբան – theologian, այլալեզու – foreigner, գահերէց – president, chairman, մեծամեծ – chief, ազգակից – kinsfolk, զինակիր – warrior, թիկնապահ – bodyguard) and lexical meanings.

In accordance, while introducing the plural-formation of such words, it is necessary to reveal also their lexical meanings for motivation of their number-formation. The survey shows that the plural form of polysemantic words depends on their nominal meaning. Thus, the words with noun//adjective polysemy express the grammatical meaning of number through affixation.

Thereby, affixation, as a morphological typology indication, refers to either adjectives with a value of noun, or such polysemantic words which have adjective//noun meanings.

*Lalik Khachatryan – Doctor of Sciences in Philology, Professor, Head of Linguistics Research Laboratory of Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. Scientific interests: general linguistics, history of Armenian language, Old Armenian, theory of Armenian language, lexicology, lexicography. Author of 20 books (monographs, school and university textbooks, dictionaries) and 165 articles. lingualal51@mail.ru*

*Lilit Khachatryan – Candidate of Sciences in Philology, Lecturer at the Los Angeles (USA) Hamazkayin Western Region Literary Group. Scientific interests: history of Armenian language, grammar of Old Armenian, textology. Author of 7 articles. lilitellen@yahoo.com*

## ԱՔԵՄԵՆՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐԸ\*

## ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Աքեմենյան տերութիւն, Պարթևական տերութիւն, Սասանյան տերութիւն, Դարեհ I, Արտաշէր I, Շապուհ I, Էլամ, Կուլ-ե Ֆարահ, Շումեր, Ուրնանշե, Մեծ Հայք, Այրարատ, Տիգրան Մեծ, Բունդահիշն, «Աշխարհացույց», սպահապետ, բղեշխ:

## Նախաբան

Հիմնականում սկզբնաղբյուրային արժեք ունեցող տարաբնույթ տվյալների քննությունը մեզ հանգեցրել է այն ենթադրություն, որ Աքեմենյան տերութիւնը բաժանվել է հինգ վարչական հիմնամասերի: Վարչատարածքային այդ կառույցն ունեցել է «Կենտրոն + 4 կողմնակալութիւններ» մոդելը, իսկ դրա կառավարման համակարգը՝ «Արքայից արքա + 4 փոխարքաներ» մոդելը<sup>1</sup>: Ստորև կանդրադառնանք Աքեմենյան տերութիւնի տարածքներում հետագայում ձևավորված պետական կազմավորումների, մասնավորապես Պարթևական և Սասանյան տերութիւնների կառուցվածքին ու կառավարման համակարգերին, որում, կարծում ենք, մեծ տեղ է գտել արքեմենյան ժառանգությունը:

## Սասանյան տարածքային և կառավարման կառույցները

Աքեմենյան ազդեցությունն ակնհայտ է հատկապես Սասանյան տարածքային և կառավարման կառուցվածքներում: Այդ կառույցների վերաբերյալ, թերևս, ամենաարժեքավոր ու բովանդակալից տվյալներն ու տեղեկությունները հաղորդում է Շապուհ I-ի Քաաբ-ե Ջարդուշտի արձանագրությունը (այսուհետ՝ ՏՏԶ)<sup>2</sup>: Սասանյան գլխավոր փաստաթուղթ համարվող այս արձանագրությունում<sup>3</sup> տեղ գտած երկրացուցակը (տե՛ս աղյուսակ 1) կազմված է աշխարհագրական կարգով և երկրների ու երկրախմբերի թվարկման հստակ կանոններով: Այն սկսվում է ամենաբարձր կարգավիճակով՝ Պարսք, Պարթևստան, Խուզեստան երկրների (1–3) թվարկմամբ: Սասանյան տարածատիրությունում կենտրոնական դիրք գրավող այս եռյակից

\* Ներկայացվել է 28. I. 2021 թ., գրախոսվել է 12. II. 2021 թ., ընդունվել է տպագրության 17. V. 2021 թ.:

<sup>1</sup> Այդ մասին հանգամանալից տե՛ս Մ. Օհանյան. Աքեմենյան տերութիւնի կառավարման կարգերի ու կառույցների մասին. – «Պատմություն և մշակույթ» (Հայագիտական հանդես) (Երևան), 2019, 1, էջ 12–16:

<sup>2</sup> ՏՏԶ-ն ըստ՝ M. Sprengling. Third Century Iran. Sapor and Kartir. Chicago, 1953; A. Maricq. “Res Gestae Divi Saporis”. – Classica et Orientalia 5. (Pl. XXIII–XXIV), Syria 35, 1958, pp. 295–360; M. Back. Die sassanidischen Staatsinschriften. – Acta Iranica, № 18, VIII. Teheran-Liege, 1978, S. 284–371.

<sup>3</sup> Տե՛ս W. Henning. The Great Inscription of Šāpūr I. – Bulletin of the School of Oriental Studies. London, 1939, vol. 9, № 4, p. 823.

Հետո թվարկվում է դրանից հարավ-արևմուտք գտնվող երկրների խումբը (4–7): Այնուհետև՝ ժամայաքի շարժի ուղղությամբ, թվարկվում են կենտրոնական եռյակից հյուսիս-արևմուտք (8–14), հյուսիս-արևելք (15–19) և հարավ-արևելք (20–27) տեղակայությամբ ևս երեք երկրախումբ: Այդպիսով, ստացվում է աշխարհագրական հինգ երկրախումբ: Դրանցից առաջինը զբաղեցնում է կենտրոնական դիրք, որի շուրջ դասավորված են մյուս չորս երկրախմբերը:

Աղյուսակ 1

**ՏՃԶ-ի երկրացուցակը**  
(Երկրների ու երկրամասերի համարակալումը, ինչը համապատասխանում է բնագրային հերթականությանը, ինչպես նաև երկրախմբերի աշխարհագրական տեղակայությունները հավելված են մեր կողմից)

Կենտրոն	1. Պարսք, 2. Պարթևստան, 3. Խուզեստան,
Հարավ-արևմուտք	4. Մեջան, 5. Ասորեստան, 6. Նոտչիրական (Ադիաբենե), 7. Արաբիստան,
Հյուսիս-արևմուտք	8. Ատրպատական, 9. Հայաստան, 10. Իբերիա, 11. Սիգան <sup>4</sup> , 12. Ադվանք, 13. Բաղասական մինչ Կովկաս, 14. Պարեշխվար (Կասպից ծովի հարավարևմտյան ափագան),
Հյուսիս-արևելք	15. Մարաստան, 16. Վրկան, 17. Մարգու, 18. Հերաթ, 19. Ապարշահր,
Հարավ-արևելք	20. Կրման, 21. Սակաստան, 22. Թուրան, 23. Մակուրան, 24. Պարադան, 25. Հինդ, 26. Քուշան, 27. Օման:

Նույն տվյալները հնարավորություն են տալիս պատկերացնել նաև այն սխեման, որով կազմվել է ՏՃԶ-ի երկրացուցակը (տե՛ս պատկեր 1): Այն ուղղակի կրկնում է Դարեհ I-ի երկրացուցակների կազմասխեման, որոնց հանգամանալից անդրադարձել ենք մեկ այլ հոդվածում<sup>5</sup>: «Կենտրոն + 4 կողմնակալություններ» սխեմայով կազմված այդ երկրացուցակներից ՏՃԶ-ի երկրացուցակի կազմասխեմային առավել անմիջականորեն համապատասխանում են Դարեհի DB, DSaa DPe երկրացուցակները, որոնցում նույնպես կենտրոնական եռյակից (Պարսք, Մարաստան, Էլամ) հետո թվարկումը սկսվում է հարավարևմտյան երկրների խմբից և ժամայաքի շարժի հերթականությամբ՝ թվարկվում մյուս 3 երկրախմբերը (տե՛ս պատկեր 2): Նույն կազմասխեման ունեն Դարեհի մյուս երկրացուցակները (DSe, DNa): Տարբերությունը միայն այն է, որ վերջիններիս դեպքում կենտրոնական երկրախմբից հետո թվարկումը սկսվում է հյուսիսարևելյան երկրախմբից:

Դարեհի և ՏՃԶ-ի երկրացուցակների համադրությունից, կարծում ենք, ակնհայտ է, որ գործ ունենք ոչ թե դրանց կազմասխեմաների միջև առկա որոշ ընդհանրությունների, վիճելի կամ պատահական նմանությունների,

<sup>4</sup> Հունարեն տարբերակում – Makhelonia = Mingrelia (M. Sprengling. Նշվ. աշխ., էջ 14, A. Maricq. Նշվ. աշխ., էջ 306, M. Back. Նշվ. աշխ., էջ 286):

<sup>5</sup> Տե՛ս Մ. Օհանյան. Նշվ. աշխ., էջ 12–16:







եղել է Շապուհին ենթակա արքաներից գլխավորը, ինչի հավելյալ հաստատում է այն, որ նա հորից ժառանգում է գերագույն գահը: Հետագայում նույն տիտղոսով հանդես են գալիս Քուշանի արքաները, որոնք նույնպես մեծամասամբ Սասանյան արքայից արքաների որդիներն են<sup>12</sup>:

Նախորդ քննությունից<sup>13</sup> հետևում է՝ Շապուհ I-ի կառավարման համակարգում ընդգրկված յոթ արքաներից չորսին առաջնություն տալը չի կարելի պայմանավորել նրանով, որ նա ունեցել է ընդամենը չորս որդի: Վերջինիս նախորդած Արտաշիրի արքունիքում նույնպես, ինչպես տեսնում ենք, բարձրագույն կարգավիճակ են ունեցել «Արքա» տիտղոսը կրող ընդամենը 4 ենթակա տիրակալ, որոնցից ոչ մեկը չի եղել Արտաշիրի որդին: ՏՔՀ-ում տեղ գտած այս հաղորդումները հաստատում ու լրացնում են ավելի ուշ շրջանի տվյալները, որոնց մեջ կարևորները նույնպես ունեն սկզբնաղբյուրային արժեք: Խոսքը վերաբերում է պահպպներեն մակագրություններ ունեցող այն կնիքներին, որոնք ավանդվել են Սասանյան տերությունից չորս գլխավոր վարչատարածքային միավորների կամ քուստակների գլխավոր հրամանատար-կառավարիչ սպահպետների կողմից<sup>14</sup>: Սա ևս մեկ ծանրակշիռ փաստարկ է, որը միանշանակ հաստատում է սասանյան արքայից արքային ենթակա արքաներից առավել բարձր կարգավիճակով առանձնացել են միայն չորսը: Այս դեպքում Սասանյան կառավարման համակարգի նախկին «Արքայից արքա + 4 հպատակ արքաներ» կառուցվածքը ոչ թե փոխվել է, այլ ուղղակի ենթակա արքաներին փոխարինել են զորահրամանատարները, և այն ստացել է «Արքայից արքա + 4 սպահպետներ» ձևը:

2, с. 20–44, 33; Ն ու լ յ ն ի՝ Древний и раннесредневековый Иран. М., 1987, с. 221; T. Daryaee. Sasanian Persia: The Rise and Fall of an Empire, I. B. Tauris. London, 2009, p. 8] կամ այդ պայթարում և Հայաստանը նվաճելու հարցում Հորմիզդ-Արտաշիրի ունեցած դերակատարությունը (U. Weber. Hormezd I, König der Könige von Ērān und Anērān. – Iranica Antiqua, 42, 2007, pp. 387–418, 397–398): Բայց այս տեսակետներից հետո դժվար է համաձայնել, քանի որ Հայոց արքաները «Մեծ» տիտղոսը կրել են նաև Սասանյաններից առաջ՝ Արշակունիների օրոք: Այդ մասին է վկայում Գառնիում հայտնաբերված արամերեն արձանագրությունը՝ հետևյալ բովանդակությամբ. «Մեծ Արքա Հայաստանի, Վոլոգաս արքայի որդի» (տե՛ս А. Периханян. Арамейская надпись из Гарни. – ИФЖ, 1964, № 3, с. 123–138):

<sup>12</sup> Տե՛ս В. Луконин. Культура сасанидского Ирана в III–V вв. М., 1969, с. 124–152; Ն ու լ յ ն ի՝ Древний и раннесредневековый Иран, с. 136–138, 225, 226; T. Daryaee. A Note on the “Great King of Armenia”. – Bridging Times and Spaces Papers in Ancient Near Eastern, Mediterranean and Armenian Studies. Oxford, 2017, pp. 85–87.

<sup>13</sup> Մ. Օհանյան. Նշվ. աշխ.:

<sup>14</sup> Տե՛ս R. Gyselen. Lorsque l'archéologie rencontre la tradition littéraire. Les titres des chefs d'armée de l'Iran sassanide. – Comptes rendus des séances de l'Académie des Inscriptions et Belles-Lettres, 145<sup>e</sup> année, 2001, № 1, pp. 447–459; Ն ու լ յ ն ի՝ Spähbed. – Encyclopaedia Iranica, 2004; Ն ու լ յ ն ի՝ Primary Sources and Historiography of the Sasanian Empire. – Studia Iranica 38, 2009, pp. 163–190; T. Daryaee, K. Safdari. Spähbed Bullae: The Barakat Collection. – e-Sasanica, 2010, № 12, pp. 1–15.

Իրանական կառավարման մոդելների արտահայտությունները պատկերազրական աղբյուրներում

Սասանյան արքայից արքայի կողքին միայն 4 ենթակա տիրակալներ են առանձնանում նաև պատկերազրական աղբյուրներում, որոնք նույն-



Պատկեր 4. Սասանյան սկուտեղի պատկերը (վերին հատված)<sup>15</sup>:

յի անմիջապես ձախ կողմում, պատկերված է այնքան բարձրահասակ, որ գրեթե մի գլուխ բարձր է մյուս երեք հոտնկայս պաշտոնյաներից:



Պատկեր 5. Հունգ-ի Նավրուզիի ժայռաքանդակը<sup>17</sup>:

նամոտ գտնվողը, պատկերված է այնքան խոշոր, որ նրա գլուխն ու ոտքերը զգալիորեն դուրս են մնացել մյուս երեք պաշտոնյաներին ներառող ուղղանկյուն շրջանակից: Պաշտոնյաներից առաջին երկուսը մի ձեռքով ինչ-որ իր են բռնել, իսկ վերջին երկուսը կանգնած են ձեռքերը կրծքին խաչած:

պես ունեն սկզբնաղբյուրային արժեք: Այս շարքի նմուշներից մեկը սասանյան արձաթե սկուտեղի վրա պատկերված տեսարանն է, որը վերագրվում է Խոսրով I-ին (531–578) կամ Հորմիզդ IV-ին (579–590)<sup>16</sup>: Պատկերային այդ հորինվածքի կենտրոնում բազմած է գերագույն տիրակալը, սասանյան արքաներին բնորոշ հանդերձանքով (տե՛ս պատկեր 4): Նրա կողքերին՝ ձեռքերը կրծքին խաչած, կանգնած են երկու պաշտոնյա, որոնք դեմքով թեքված են դեպի արքան: Նրանցից մեկը, ով կանգնած է արքայի

Նմանատիպ հորինվածքներ ենք տեսնում նաև պարթևական պատկերազրույթում: Դրանցից մեկը Հունգ-ի Նավրուզիի (Էլամ) ժայռաքանդակն է (տե՛ս պատկեր 5), որը վերագրվում է պարթև արքա Միհրիդատ I-ին (Ք. ա. 171–132): Այս դեպքում գերագույն տիրակալը հեծյալ է, որի դիմաց՝ կողք կողքի՝ կանգնած են չորս պաշտոնյա<sup>18</sup>: Սրանցից 1-ը՝ հեծյալ տիրակալին ամեն-

<sup>15</sup> Նկարն ըստ՝ И. Орбели, К. Тревер. *Նշվ. աշխ., աղ. 13*:

<sup>16</sup> *Տե՛ս նույն տեղում*, P. Harper, P. Meyers. *Silver Vessels of the Sasanian Period.* – The Metropolitan Museum of Art. New York, 1981, vol 1, p. 66, n. 131, pp. 67–68, Pl. 19 (p. 220).

<sup>17</sup> Նկարն ըստ՝ L. Vanden Berghe. *Reliefs rupestres de l'Irān ancien;* Musées Royaux d'Art et d'Histoire. Bruxelles, 1983–1984, p. 47 (fig. 4).

<sup>18</sup> *Տե՛ս նույն տեղում*, էջ 47–48, էջ 120–121: *Ժայռաքանդակի պատկերված անձնավորությունների վերաբերյալ տե՛ս* M. Shayan. *Arsacids and Sasanians: Political Ideology in Post-Hellenistic and Late Antique Persia.* Cambridge, 2011, pp. 105–110.

Սասանյան և պարթևական ներկայացված պատկերային հորինվածքները մեկնաբանելուն օգնում են անտիկ պատմագրությունում տեղ գտած որոշ նկարագրություններ: Դրանցից մեկը հռոմեացի պատմիչ Պլուտարքոսի (I–II դդ.) հետևյալ հաղորդումն է, որը վերաբերում է Հայոց արքա Տիգրան Մեծին (Ք. ա. 95–55). «Շատ արքաներ էին ծառայում նրան, որոնցից չորսին նա մշտապես իր մոտ էր պահում որպես ուղեպահներ կամ թիկնապահներ, որոնք կարճ քիտոններ հագած, վազում էին իրենց տիրակալի կողքերից, երբ նա գնում էր ձիով, իսկ երբ նա նստած էր լինում և զբաղվում իր գործերով, նրանք ձեռքները կրծքներին խաչած կանգնում էին նրա կողքերին»<sup>19</sup>:

Պլուտարքոսի այս նկարագրությունը հատկանշական է նրանով, որ ուղղակի կրկնում է սասանյան և պարթևական հորինվածքներում ներկայացված տեսարանները (տե՛ս պատկեր 4, 5): Թե՛ պատկերագրական, թե՛ գրավոր ներկայացված օրինակներում, գերագույն տիրակալին ուղեկցում են չորս պաշտոնյա, որոնք, Պլուտարքոսի համաձայն, եղել են ենթակա արքաներ: Բոլոր դեպքերում գերագույն տիրակալն ընդգծվում է նրանով՝ նա նստած է կամ հեծյալ, իսկ նրա չորս ուղեկից արքաների ենթակայությունն արտահայտված է նրանով, որ նրանք հոտնկայա են: Նույն պատկերները փաստում են նույնիսկ Պլուտարքոսի հաղորդած այն մանրամասնի իսկությունը, ըստ որի՝ հպատակ արքաները գերագույն տիրակալի մոտ կանգնել են ձեռքերը կրծքին խաչած:

Տիգրան Մեծին վերաբերող ներկայացված հաղորդումը հաստատում է նաև մեր այն ենթադրությունը, որ արքայից արքային ենթակա բազմաթիվ արքաներից առավել բարձր կարգավիճակով առանձնացել են չորսը: Նույնը տեսանք Շապուհ I-ի դեպքում, որին ենթակա յոթ արքաներից ևս առավել բարձր կարգավիճակով առանձնանում են չորսը:

Ներկայացված պատկերային հորինվածքների համար կարող է մեկնաբանություն հանդիսանալ նաև Աքեմենյան տերության հիմնադիր Կյուրոս Մեծին (Ք. ա. 559–530) և նրա բարձրաստիճան հյուրերին վերաբերող Քսենոփոնի հետևյալ հաղորդումը. «Երբ հրավիրյալները եկան ճաշի, Կյուրոսը սկսեց նստեցնել նրանց ոչ թե ինչպես պատահի, այլ ում ամենից բարձր էր գնահատում, նստեցրեց իր ձախ կողմում, քանի որ ինքը բաց էր դավադրության ավելի շատ այս կողմից, քան աջից, իսկ պատվով հաջորդին նա նստեցրեց աջ կողմում, երրորդին՝ կրկին ձախում, չորրորդին՝ կրկին աջում և այնուհետ այս կարգով՝ եթե հյուրերն ավելին էին»<sup>20</sup>:

Այս հաղորդումը վերաբերում է Աքեմենյան կարգերին, բայց այն հնարավորություն է տալիս վերծանել պարթևական ու սասանյան ներկայացված պատկերային վավերագրերը: Ինչպես այդ պատկերանմուշներում, Քսենոփոնը նույնպես գերագույն տիրակալի (Կյուրոս) կողքին որպես ամենաբարձր պատվաստիճան ունեցողներ, կարևորում է չորսին: Եթե ուղեկցվենք նրա առաջադրած «կենտրոն-ձախ-աջ» հերթականությունը, ապա կարող ենք ենթադրել, որ սասանյան սկուտեղի պատկերում՝ կենտրոնում, նստած Սասանյան արքայից արքային աստիճանակարգով հաջորդում է նրա անմիջապես ձախ կողմում կանգնածը, ինչի հավելյալ հաստատում է այն՝ վերջինս

<sup>19</sup> Plutarch's Lives. Lucullus. Transl. B. Perrin. Cambridge, London, 1914. 2: 21.5.

<sup>20</sup> Xenophon. Cyropaedia. Xenophon in Seven Volumes, 5, 6. Cambridge, MA; London, 1914, VIII, 4, 3.

պատկերված է մյուս երեք հոտնկայս տիրակալներից մի գլուխ բարձր: Հերթականության նույն բանաձևով կարելի է որոշել սկուտեղի վրա պատկերված բոլոր տիրակալների աստիճանատեղը:

Բեհիսթունի մոտակայքում պահպանվել է «Գերազույն տիրակալ + 4 ենթակա պաշտոնյաներ» տեսարանը ներկայացնող ևս մեկ պարթևական պատկերաքանդակ (տե՛ս պատկեր 6): Այս դեպքում բոլոր տիրակալները հոտնկայս են: Գերազույն տիրակալը կրում է թագատիպ գլխարկ, որի կողմը շրջված, իրար հետևից կանգնած են չորս պաշտոնյա:



Պատկեր 6. Միհրդատ II-ի և 4 սատրապների բարձրաքանդակը<sup>21</sup>:

Սրանցից առաջինը, որը կանգնած է անմիջապես գերազույն տիրակալի դիմաց, նույնպես կրում է թագատիպ գլխարկ, բայց ավելի համեստ ձևի ու չափսի: Իսկ նրա հետևից շարված երեք պաշտոնյա գլխաբաց են<sup>22</sup>: Սրանք նախորդ պատկերանմուշներին նույնացող, որոշ յուրահատկություններ ունեցող բնորոշիչներ են, որոնք բավական հստակ արտահայտում են պատկերված տիրակալների աստիճանակարգը: Նույնն առավել անմիջական հաստատում է հունարեն գրությունը, ըստ որի՝ գերազույն տիրակալը պարթև արքայից արքա Միհրդատ II-ն (Ք. ա. 124–91)

է: Նրա անմիջապես դեմ դիմաց կանգնածը Գոթարզ I-ն է, որը հաջորդել է Միհրդատին: Գոթարզի գրաված այս առաջնային տեղին համապատասխանում է նույն գրություն մեջ նրան տրված «Սատրապների սատրապ» տիտղոսը: Նախորդ պատկերանմուշներում այս տիտղոսի արտահայտություն պետք է համարել այն, որ գերազույն տիրակալին ենթակա 4 պաշտոնյայից մեկը պատկերված է չափերով զգալիորեն ավելի մեծ: Իսկ ՏՔՀ-ում նույն կոչման համարժեքը պետք է համարել «Մեծ» տիտղոսը: Այն, ինչպես ասվեց, տրվել է Շապուհ I-ի չորս արքա-որդիներից գլխավորին Հորմիզդ-Արտաշիրին, որը, ինչպես Գոթարզը, եղել է գերազույն գահի ժառանգորդը:


«Գերազույն տիրակալ + 4 ենթակա պաշտոնյաներ» տեսարանը որոշ յուրահատկություններով առկա է նաև աքեմենյան պատկերագրության մեջ: Լավագույն օրինակները տեսնում ենք Պերսեպոլիսի Գահային դահլիճի հարավային պատի երկու հսկա շքամուտքերի չորս լայնանիստ կողասյուղներին քանդակված<sup>23</sup>: Իրանք ունեն կրկնվող հորինվածքային կառուցվածք, որն իրենից ներկայացնում է երեք հարկից բաղկացած հարթակների վրա գտնվող տասնհինգ անձանց պատկերող տեսարան: Վերին հարթակը, որի վրա դրված գահին բազմած է Աքեմենյան արքայից արքան, իրենց ձեռքերի վրա պահում

<sup>21</sup> Նկարն ըստ՝ E. Herzfeld. Am Tor von Asien. Felsdenkmale aus Iran Heldenszeit. Berlin 1920, Abb. 11.

<sup>22</sup> Այս պատկերաքանդակի վերաբերյալ տե՛ս նույն տեղում, էջ 36–45, նկ. 10, 11, L. Vanden Berghe. Նշվ. աշխ., էջ 44–45 (նկ. 3), էջ 118–119; R. Sharyegan. Նշվ. աշխ., էջ 197–198, 225–226:

<sup>23</sup> Տե՛ս E. Schmidt. Persepolis I: Structures, Reliefs, Inscriptions. Chicago, 1953, pp. 134–135, Pl. 102–113.

են չորս անձ: Մյուս Հարթակը, որի վրա կանգնած են այս չորս անձինք և դրան հաջորդող վերջին Հարթակը նույն ձևով կրում են արդեն հնգական անձ (տե՛ս պատկեր 7a):



Պատկեր 7. Պերսեպոլիսի Գահային դահլիճի Հարավային շքամուտքերի բարձրաքանդակները<sup>24</sup> .  
 a. արևելյան կողասյան հորինվածքն ամբողջութամբ,  
 b. արևելյան կողասյուն, վերին հարթակի հատվածը,  
 c. արևմտյան կողասյուն (վերին հարթակի հատվածը):

«Գերագույն տիրակալ + 4 ենթակա պաշտոնյաներ» սխեմայով կազմված նախորդ հորինվածքների հետ ընդհանուր բնորոշիչներ ունի Պերսեպոլիսի շքամուտքերի հորինվածքի վերին հարթակի տեսարանը, որում պատկերված է արքայից արքան և նրա հարթակը կրող չորս անձինք: Պարթևական և սասանյան պատկերամուշներում, ինչպես տեսանք, գերագույն տիրակալին ենթակա քառյակից մեկն առանձնանում է առավել բարձր կարգավիճակով, ինչն արտահայտված է նրանով, որ վերջինս տեղ է գրավում գերագույն տիրակալից անմիջապես հետո, պատկերված է չափերով մյուս երեքից նկատելիորեն խոշոր կամ նրանցից տարբերակվող այլ հատկանիշերով, ինչին գրավոր ներկայացված տեքստերում համապատասխանում են «Մեծ» կամ «Սատրապների սատրապ» տիտղոսները: Շքամուտքերի հորինվածքում նույնպես արքայից արքայի հարթակը կրող քառյակից ընդգծված առանձնանում է մեկը, որը բոլոր տարբերակներում առաջնորդում է քառյակը, և միակ անձն է, ով թուր է կրում (տե՛ս պատկեր 7 a, b, c): Սրանք արտահայտիչ բնորոշիչներ են, որոնք ընդգծում են վերջինիս առավել բարձր կարգը նույն հարթակի վրա գտնվող մյուս երեք անձերի նկատմամբ:


«Գերագույն տիրակալ + 4 ենթակա պաշտոնյաներ» տեսարանի աքեմենյան ներկայացված տարբերակն ունի նաև դրան համադրվող գրավոր հետևյալ օրինակները.

<sup>24</sup> Նկարներն ըստ՝ B. Jacobs. Achämenidische Kunst – Kunst im Achämenidenreich. – In Archäologische Mitteilungen aus Iran und Turan 34. Berlin, 2002, S. 345–395; Abb. 6 (nach Walser 1966, Abb. 5, 6); J. Curtis, N. Tallis. Forgotten empire. The world of ancient Persia. Berkeley, 2005, p. 76, fig. 38.





3-ից<sup>30</sup> (տե՛ս պատկեր 10): Սրանք այն նույն առանձնահատուկ բնորոշիչներն են, որոնք տեսանք սասանյան, պարթևական, աքեմենյան և էլամական ներկայացված պատկերային հորինվածքներում, ինչպես նաև Պլուտարքոսի վերոհիշյալ հիշատակությունում:



Պատկեր 9<sup>31</sup> a. Կուլ-ե Ֆարահ III,  
b. Կուլ-ե Ֆարահ VI:



Պատկեր 10. Ուրնանշեն և  
նրա չորս հպատակները:

ՏՅԿԶ-ի երկրացուցակի և «Աշխարհացույցի» քուստակների ցանկի ընդհանրությունները

Այսպիսով, այս և մեր վերոհիշյալ քննությունում<sup>32</sup> ներկայացված բազմաթիվ փաստարկները, որոնք մեծամասամբ ունեն սկզբնաղբյուրային բնույթ, հանգեցնում են այն ենթադրության՝ դեռևս աքեմենյան շրջանում իրանում ընդունվել է կառավարման մի համակարգ, որի շատ ավելի վաղ նախորինակները նշմարվում են Հին Միջագետքում: Նույն փաստարկները ենթադրում են, որ այդ համակարգը գրեթե նույնությամբ ներդրվել է Պարթևական, այնուհետև Սասանյան կառավարման կառույցներում: Մի քանի հազարամյակ իր կառուցվածքը նույնությամբ պահպանած այդ պարզ համակարգն ունի 5 տիրակալներից կազմված՝ «Գերագույն տիրակալ + 4 ենթակա տիրակալներ» մոդելը: Կառավարման այս համակարգին համապատասխանում է «Կենտրոն + 4 կողմնակալություններ» վարչատարածքային հնգամաս կառուցվածքը, որն արտահայտված է ՏՅԿԶ-ի երկրացուցակում (տե՛ս աղյուսակ 1, պատկեր 1, 3): Այս մոդելների համապատասխանությունը, ինչպես նշվեց, ենթադրում է, որ գերագույն տիրակալի և նրան ենթակա չորս տիրակալների իշխանության ներքո, տվյալ տերության տարածքը բաժանվել է վարչական 5 հիմնամասի: Այս ենթադրությանն առաջին հերթին հակասում են քուստակներին վերաբերող հաղորդումներն ու ցուցակները, որոնց

<sup>30</sup> L. Romano. Urnanshe's Family and the Evolution of its inside Relationships as shown by Images. – La famille dans le Proche-Orient ancien: réalités, symbolismes, et images, Proceedings of the 55th Rencontre Assyriologique Internationale at Paris 6–9/2009, pp. 183–192, fig. 5 / Pl. T4 (ներքևի հատված):

<sup>31</sup> Նկարները և դրանց նկարագրությունը տե՛ս J. Álvarez-Mon. The Arjān Tomb: At the Crossroads of the Elamite and the Persian Empires. – Acta Iranica 49. Leuven, 2010, Pl. 19, pp. 56–63; Ն ու յ ն ի՝ The Elamite artistic heritage of Persia. – The Elamite world. London, New York, 2018, pp. 829–850, figs. 40.8, 40.9:

<sup>32</sup> Տե՛ս Մ. Օ հ ա ն յ ա ն. նշվ. աշխ.:

Համաձայն՝ Սասանյան տիրապետությունը բաժանվել է 4 մասի: Բայց տվյալ անհամաձայնությունը զուգահեռ՝ քուստակների ցուցակները ՏՔՀ-ի երկրացուցակի հետ ունեն անմիջական համապատասխանություններ, ինչն առաջադրում է այդ ցուցակները քննել համատեղ:

ՏՔՀ-ի երկրացուցակի հետ առավել մեծ ընդհանրություն ունի հայկական միջնադարյան աշխարհագրական աշխատության «Աշխարհացոյցի» ընդարձակ տարբերակից<sup>33</sup> (այսուհետ՝ ԱՇԽ. 1) հայտնի քուստակների ցուցակը<sup>34</sup>: Դրանում նույնպես քուստակ-երկրախմբերը խմբավորված են ըստ աշխարհագրական չորս կողմի և թվարկված աշխարհագրական հերթականությամբ: ՏՔՀ-ի երկրացուցակի նկատմամբ հիմնական տարբերությունն այն է, որ ԱՇԽ. 1-ում բացակայում է կենտրոնը, իսկ չորս քուստակ-երկրախմբերը թվարկված են ժամայաքի շարժի հակառակ ուղղությամբ: Բայց, անկախ այս հանգամանքից, քուստակների և ՏՔՀ-ի երկրացուցակներում ներկայացված երկրախմբերի կազմն ու դրանց աշխարհագրական տեղակայությունները մեծամասամբ համապատասխանում են: Այդ համապատասխանությունն այնքան սերտ ու ակնհայտ է, որ հնարավորություն է տալիս ցուցակները ներկայացնել համադրված:

Ստորև ներկայացված համադրված ցուցակում (աղյուսակ 2) ՏՔՀ-ի երկրացուցակում (աղյուսակ 1) ընդգրկված միավորները թվարկված են լրիվ կազմով և բնագրին համապատասխանող հերթականությամբ, որին համապատասխանեցված է ԱՇԽ. 1-ի քուստակների ցուցակը: Այդպիսով խախտվել է քուստակների թվարկման բնագրային հերթականությունը, որոնց ճիշտ կարգը նշել ենք փակագծերում (հոտմեական թվանիշերով):

Քանի որ ԱՇԽ. 1-ում տեղանունները մեծ թիվ են կազմում, դրանցից ցուցակում թողել ենք միայն նրանք, որոնց համապատասխանող միավորներ կան ՏՔՀ-ի երկրացուցակում, իսկ բաց թողնված տեղանունները թվարկել ենք ծանոթագրություններում: Նույն հանգամանքով պայմանավորված՝ չենք համարակալել ԱՇԽ. 1-ում նշված տեղանունները, որոնց համարակալմանը փոխարինում են աստղանիշերը:

Համադրված ցուցակում մեջբերել ենք նաև քուստակների սահմանների սեղմ նկարագրերը, որոնք տեղ են գտել ԱՇԽ. 1-ում և «Աշխարհացոյցի» համատոտ երկու տարբերակներում (այսուհետ՝ ԱՇԽ. 2, ԱՇԽ. 3<sup>35</sup> 3<sup>36</sup>):

<sup>33</sup> «Աշխարհացոյց». Ընդարձակ տարբերակ. – Աշխարհացոյց Մովսէսի Խորենացույ յաւելուածովք նախնեաց, Վենետիկ, 1881. – Մատենագիրք Հայոց, հ. II, Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 2137–2161:

<sup>34</sup> ԱՇԽ. 1, ԻԹ: «Աշխարհացոյցին» վերագրվում է տարբեր, V–X դդ. Հասնող ծագում [տե՛ս С. Еремян. «Ашхарауиц» (Армянская география VII века), выдающийся памятник географии и картографии древнего мира. – «Вестник общественных наук» АН АрмССР, 1968, № 5, с. 43–60; R. Hewsen. The Geography of Ananias of Širak (Ašxarhac‘oyc‘): The Long and the Short Recensions. Wiesbaden, 1992. pp. 7–9]:

<sup>35</sup> ԱՇԽ. 2. – К. П. Патканов. Армянская география VII века по р. X. СПб., 1877; ԱՇԽ. 3. – Ա. Գ. Աբրահամյան. Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 336–354, նույն տարբերակները միասնական հրատարակված տե՛ս Մատենագիրք Հայոց, հ. II, էջ 2162–2175, 2176–2192:

<sup>36</sup> ԱՇԽ. 2, ԼԵ–ԼԹ, ԱՇԽ. 3, 147–160:

## Աղյուսակ 2

ՏՃԶ-ի երկրացուցակը և ԱՇԽ. 1-ի քուստակների  
համադրված ցուցակը

ՏՃԶ	Կենտրոն
1. Պարսք, 2. Պարթևստան, 3. Խուզեստան	
ԱՇԽ. 1	Կենտրոն
ԱՇԽ. 1-ում և քուստակների մյուս ցուցակներում Կենտրոնը բացակայում է:	
ՏՃԶ	Հարավ-արևմուտք
4. Մեջան, 5. Ասորեստան, 6. Նոտչիրական (Ադիաբենե), 7. Արաբիստան	
ԱՇԽ. 1	Հարավ-արևմուտք – Քուստիկը Խորայարանք (I) <sup>37</sup>
*Քարշկար, *Պարմական /Գարմական <sup>38</sup> , *Երան, *Սանքար-Կուստ (բնակավայրեր Ասորեստանում), *Նոտարտայ, Շիրական (= Նոտչիրական), *Մայձինըստեհ (= Արաբիստան) <sup>39</sup> : Թվարկված են ևս 2 տեղանուններ (Մայմասպտան, Միհրանքատակ), որոնք տեղակայվում են Մարաստանի արևմուտքում: Սահմանների սեղմ նկարագրերը. «յելից կալով Դկղաթայ եւ ի մտից՝ Պարսից» (ԱՇԽ. 2, 3) <sup>40</sup> :	
ՏՃԶ	Հյուսիս-արևմուտք
8. Ատրպատական, 9. Հայաստան, 10. Իբերիա, 11. Սիգան (Մենգրելիա), 12. Աղվանք, 13. Բաղասական մինչ Կովկաս, 14. Պարեշխվար (Դմբավենդ-Տապարստանի շրջան)	
ԱՇԽ. 1	Հյուսիս-արևմուտք – Քուստի Կապկոհ <sup>41</sup>

<sup>37</sup> Այս անվանատարբերակը վերցված է ԱՇԽ. 2-ից, քանի որ ԱՇԽ. 1-ում այն ունի «Քուստի Խորասան» անվանաձևը, որն իրականում հյուսիս-արևմտյան քուստակի անվանումն է:

<sup>38</sup> «Գարմական» անվանաձևն ըստ ԱՇԽ. 2-ի:

<sup>39</sup> Ենթադրվում է, որ «Մայձինըստեհ» անվանաձևը առաջացել է Marjin, Arzon-Ostan տեղանունների (տեղակայվում են Արաբիստանում) համատեղումից (տե՛ս R. Hewsen. Նշվ. աշխ., էջ 231–233):

<sup>40</sup> Քուստիկը Խորայարանքի տեղակայության վերաբերյալ տե՛ս J. Marquart. Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i. Gesellschaft der Wissenschaften zu Göttingen, N. F. 3/2. Berlin, 1901, pp. 16–25; M. Morony. Continuity and Change in the Administrative Geography of Late Sasanian and Early Islamic al-'Irāq. – "Iran", Journal of Persian Studies, XX, 1982, pp. 1–49; Ն ու լ յ ն ի՝ Iraq after the Muslim Conquest. Princeton, 1984, pp. 124–164, fig. (map) 5; R. Hewsen. Նշվ. աշխ., էջ 228–233:

<sup>41</sup> Սասանյան քուստակներին անդրադարձած մյուս հիմնական աղբյուրում «Քուստի Կապկոհ»-ին փոխարինում է «Ādurbādagān» անվանումը: Ենթադրվում է, որ այս քուստակը նախապես կոչվել է «Abāxtar = հյուսիս», ինչը կիրառությունից դուրս է մղվել, քանի որ զրադաշտական պատկերացումներում հյուսիսը հանդիսացել է չարիքի բնակատեղին [T. Daryae. Šahrestānīhā ī Ērānšahr. A Middle Persian Text on Late Antique Geography.– Epic and History (Costa Mesa), 2002, p. 11]:



Ներկայացված համադրված ցուցակում համապատասխանում են հատկապես ՏՔՀ-ի երկրացուցակի հյուսիսարևմտյան խմբի և Կապիոհ քուստակի ընդգրկված արեալները, դրանցում թվարկված երկրների կազմը և նույնիսկ վերջիններիս թվարկման հերթականությունը: Երկու դեպքում էլ թվարկումը սկսվում է Ատրպատականով ու Հայաստանով, այնուհետև՝ այս երկրներից հյուսիս, մինչև Կովկասյան լեռներ ձգվող միավորները, որոնցից հետո՝ Կասպից ծովի հարավարևմտյան ավազանի երկրները:

Տարածքային ընդգրկմամբ հիմնականում համապատասխանում են նաև ՏՔՀ-ի երկրացուցակի հարավարևմտյան երկրախումբը և Խորավարան քուստակը: Այս քուստակի սահմանների սեղմ նկարագիրն առավել որոշակի արտահայտված է ԱՇԽ. 2, 3-ում, որոնց համաձայն՝ Խորավարանը Տիգրիսի (Դիղաթ) ավազանից ձգվել է մինչև Պարսք և իր մեջ ընդգրկել երկու կղզի «Պարսկային ծոցում», ինչը լիովին համապատասխանում է ՏՔՀ-ի երկրացուցակի նույն կողմում հիշատակված երկրների (Մեջան, Ասորեստան, Նոտյիրական, Արաբիստան) ընդգրկված արեալին:

Խորասան քուստակի կազմում ԱՇԽ. 1-ը հիշատակում է մոտ երեք տասնյակ միավոր, որոնց շարքում առկա են այդ քուստակի հիմնական տարածքը գրավող այն հինգ գլխավոր երկրները (Ահմադան, Վրկան, Մրվ, Հրա, Ապրչահր), որոնք նշված են ՏՔՀ-ի երկրացուցակի նույն կողմը ներկայացնող երկրախմբի կազմում: Նույն հյուսիսարևելյան կողմի ընդգրկված արեալին համապատասխանում է նաև Խորասանի սահմանների սեղմ նկարագիրն ըստ ԱՇԽ. 2, 3-ի («յելից կալով Մարաց եւ Պարսից մինչեւ ի Հնդիկս եւ յերի Վրկանի ծովուն»):

Էական անհամապատասխանություն տեսնում ենք միայն ՏՔՀ-ի երկրացուցակի հարավարևելյան երկրախմբի և նույն կողմը ներկայացնող Նեմուղ քուստակի կազմերում: Այս քուստակը գլխավորող Պարսք, Խուժաստան, Ասպահան երկրները բացակայում են ՏՔՀ-ի ցուցակի նույն կողմում ընդգրկված երկրների կազմից: Բայց այդ եռյակին նույնացող Պարսք, Խուժաստան, Պարթևաստան երկրները տեղ են գրավել ՏՔՀ-ի երկրացուցակի սկզբում: Ըստ աշխարհագրական կողմերի դասավորված մյուս չորս երկրախմբերին, այս եռյակն առանձնանում է իր կենտրոնական տեղակայությունը: Եթե Նեմուղի կազմից բացառենք այս եռյակը, ապա այդ քուստակի և ՏՔՀ-ի երկրացուցակում նույն կողմը ներկայացնող երկրների կազմերը հիմնականում կհամապատասխանեն:

Կենտրոնական եռյակի վարչական պատկանելությունը երկու ցուցակների միջև առկա հիմնական տարբերությունն է: ՏՔՀ-ում այդ եռյակով է կազմված աշխարհագրական հինգ երկրախմբերից մեկը: Նույն եռյակը ԱՇԽ. 1-ում ընդգրկված է Նեմուղի կազմում: Այդպիսով վերջինս ներկայանում է որպես ամենաընդարձակ միավորը չորս քուստակների շարքում, որը տարածքով առնվազն կրկնակի գերազանցում է մյուսներին: Բայց ՏՔՀ-ում նման անհամաչափություն չկա, քանի որ հիշյալ հինգ երկրախմբերն ունեն գրեթե հավասար տարածք:

ՏՔՀ-ի և ԱՇԽ. 1-ի երկրացուցակների համադրությունը հանգեցնում է մի շարք կարևոր հետևությունների: Դա նախ ևս մեկ փաստարկ է, որը հաստատում է, որ ՏՔՀ-ի երկրացուցակում տեղակայությունը միմյանցից զատո-



յուններ» վարչատարածքային կառուցվածքը: Բայց այս մոդելը տեսնում ենք իրանասասանյան ժառանգություն այլ բնագավառներում: Դրանցից մեկն արտահայտված է տիեզերաբանական պատկերացումներում, որոնց համաձայն, երկնակամարի եզրային շերտն ըստ աշխարհագրական չորս բևեռների (xwarāsān, nēmōz, xwarōfrān, abāxtar)՝ բաժանված է չորս եզրագոտիների (kust-kustag), որոնցում տեղակայված են չորս գլխավոր աստղ-հրամանատարները (spāhbed): Երկնակամարի կառուցվածքի այս նկարագրությունը գրեթե կրկնում է Սասանյան քուստակներին վերաբերող պատկերացումները, դրանց առնչվող տերմինաբանությունը և համարվում Սասանյան Իրանի քառամաս բաժանման արտահայտություն<sup>52</sup>: Բայց անհրաժեշտ է նկատի առնել, որ, ի տարբերություն քուստակներից կազմված Սասանյան տերությունների քառամաս մոդելի, երկնակամարի ներկայացված մոդելը հնգամաս է: Այն ունի նաև գլխավոր, կենտրոնական գոտի, որտեղ գտնվում է «Երկնակամարի կենտրոնի տիրակալ» և «Հրամանատարների հրամանատար / spāhbedān spāhbed» համարվող գլխավոր աստղը<sup>53</sup>: Եթե նկատի ենք առնում այս անտեսված գոտին, ապա տեսնում ենք, որ ներկայացված պատկերացումներում երկնակամարը «Կենտրոն + 4 եզրաստղերի գոտի» սխեմայով, միանշանակ բաժանված է հինգ գոտու:



Պատկեր 11. Խոսրով II-ի (501–505) արծաթե դրաման<sup>54</sup>:

Նույն կազմասխեման ունի ՏՏԶ-ի երկրացուցակը (տե՛ս պատկեր 1):

Հինգ գոտի ենք տեսնում նաև ուշ սասանյան շրջանի դրամների վրա պատկերված կրկնվող հորինվածքում: Խոսրով վերաբերում է եզրերին չորս աստղեր ունեցող դրամներին (տե՛ս

պատկեր 11), որոնք նույնպես համարվում են Սասանյան քառամաս տարածքային կառուցվածքի արտահայտություն<sup>55</sup>: Բայց, ինչպես տիեզերաբանա-

<sup>52</sup> T. Nöld e. Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden: Aus der arabischen Chronik des Tabari, Leyden, 1879, S. 155–156, n. 2; Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. СПб., 1908, изд. II. Ереван, 1971, с. 216; E. Raffaelli. L'oroscopo del mondo: Il tema di nascita del mondo e del primo uomo secondo l'astrologia zoroastriana. Milan, 2001, pp. 100–101, n. 28.

<sup>53</sup> B. T. Anklesaria. Zand-Ākāsīh, Iranian or Greater Bundahishn. Bombay, 1956, II. 3–4, p. 55; Z. Kasso ck. The Greater Iranian Bundahishn: A Pahlavi Student's 2013 Guide. Fredericksburg, VA, 2013, II. 3–4, pp. 42–43). Նույն հատվածը համառոտ (հնդկական) Բունդահիշնում թարգմանվում է՝ «Մեծագույնը երկնքի կենտրոնում» (F. Justi. Der Bundehesh. Zum ersten Male herausgegeben. Leipzig, 1868, II, S. 4, V, S. 7, E. West. The Bundahishn or Knowledge from the Zand, from Sacred Books of the East, vol. 5. Oxford, 1897, II, V):

<sup>54</sup> Նկարն ըստ՝ M. Alram. The cultural impact of Sasanian Persia along the Silk Road – Aspects of continuity. – e-Sasanika 14, 2015, fig. 12, p. 9.

<sup>55</sup> M. Morony. Iraq after the Muslim Conquest, Princeton, 1984, pp. 29, 40–41. Կիսալուսնի մեջ պատկերված եզրային աստղերը 4-ն են միայն դրամների դարձերեսին: Դիմերեսին դրանք 3-ն են՝ կենտրոնական շրջագծի կողքերին և ներքևում: Վերևի չորս աստղը պատկերելուն գուցե խանգարել է այն, որ այդ երեսին պատ-

կան պատկերացումների առնչութեամբ տեսանք, այս դեպքում նույնպէս անտեսվում է կենտրոնը, որը շրջանագծով հստակ սահմանագատված է չորս աստղերի եզրային գոտուց: Դա հորինվածքի գլխավոր գոտին է, որում, դիմերեսին Սասանյան արքայից արքայի դիմանկարն է, իսկ դարձերեսին՝ գլխավոր պաշտամունքի խորհրդանիշը՝ ասորուշանը:

Աստղավոր դրամների վրա պատկերված այս կրկնվող հորինվածքը կառուցվածքային առումով նույնանում է տիեզերաբանական վերոհիշյալ պատկերացումներում արտահայտված, «Կենտրոն + 4 եզրաստղերի գոտի» կառուցվածքային մոդելին: Տարբեր ոլորտների վերաբերող այդ կրկնվող մոդելները, հավանաբար, ծագում են միևնույն նախամոտիվից և կարող են մեկը մյուսի համար մեկնաբանություն դառնալ:

### Մեծ Հայքի կառավարման մոդելները

Սասանյան քառամաս տարածքային կառուցվածքի արտահայտություն են համարվում նաև իրանական հզոր տիրապետությունների ազդեցության առաջնային ոլորտում ի սկզբանե հայտնված Մեծ Հայքի տարածքային և կառավարման կառուցների վերաբերյալ պատկերացումները<sup>56</sup>: Ստորև հնարավորինս սեղմ կանդրադառնանք այդ պատկերացումներին, որոնցում գրեթե նույնությամբ կրկնվում են իրանական կառավարման մոդելները<sup>57</sup>: Պատկերացումները տեղ են գտել հիմնականում սասանյան շրջանից ծագող հայ վաղ միջնադարյան աղբյուրներում, որոնց կարևոր դեր է հատկացվում Սասանյան պատմությունը լուսաբանելու հարցում:

Սասանյան «Արքայից արքա + 4 արքա / սպահապետներ» կառավարման կառուցին համապատասխանում է Մեծ Հայքի «Արքա + 4 բղեշխներ» ռազմատարածքային կառավարման մոդելը: 4 բղեշխների գլխավոր գործառույթը եղել է Հայաստանի սահմանների պաշտպանությունը, ինչով պայմանավորված, նրանք համարվել են հյուսիսային, հարավային, արևելյան և արևմտյան սահմանային զորքերի հրամանատարներ և կոչվել «կողմնակալ, սահմանակալ» կամ որ նույնն է «սահմանապահ»<sup>58</sup>: Որպես տվյալ կողմնա-

կերված Սասանյան արքայի թագի վերին հատվածը դուրս է եկել կենտրոնական շրջագծից և ծածկել գրեթե ողջ վերին հատվածը, որտեղ որ կարող էր պատկերվել չորս աստղը, ինչպես պատկերված է հակառակ երեսին:

<sup>56</sup> Տե՛ս Н. А до н ц. Նշվ. աշխ., էջ 282–284, N. Garsoian. Prolegomena to a Study of the Iranian Aspects in Arsacid Armenia. – Handes Amsoreay (academic journal of Armenian studies). Vienna, 1976, № 90, p. 230.

<sup>57</sup> Սասանյան տերության հետ Մեծ Հայքի կառավարման կառուցներն այնքան նման ու ակնհայտ են՝ այդ հարցերին հանգամանալից անդրադարձած Ն. Ադոնցը հանգել է այն համոզմանը, որ Հայոց բանակը 4 գործառախ բաժանելու կամ Հայոց արքային հպատակ 4 սահմանապահ բղեշխների վերաբերյալ պատկերացումը «չի համապատասխանում պատմական վկայությունների ճշգրիտ մեկնաբանությունը»: Այդ պատկերացումները նա համարում է հայ պատմիչներին անցած ժողովրդական երևակայության արդասիք, երբ Սասանյան կառավարման կարգերի վերաբերյալ պատկերացումները վերագրվել են Հայաստանին (Н. А до н ц. Նշվ. աշխ., էջ 282–284):

<sup>58</sup> Տե՛ս Հ. Մանանդյան. Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 34, 36:



կալուծյան զորքերի գլխավոր հրամանատար՝ նրանց տրվել է նաև «(ա)սպարապետ» կոչումը: Այն ստուգաբանությունը նույն «սպահպետ / spāhbed = զորահրամանատար» կոչումն է, որը տրվել է Սասանյան 4 քուստակների զորահրամանատար-կառավարիչներին<sup>59</sup>: Հայոց արքային ու չորս բղեշխներին վերաբերող պատկերացումները տեղ են գտել հայ միջնադարյան գրեթե բոլոր աղբյուրներում, որոնցից առավել վաղ ծագում ունեն հետևյալ նմուշները. «Բաժանէ Արտաշէս եւ գիշխանութիւն զաւրուն ընդ չորս»: «Տրդատ ... չորս յիւրոցն առնելով զաւրավարս»: «... թագաւորեցոյց զԽոսրով, եւ զչորեսին սպարապետսն մատոյց ի նոյն իշխանութիւն զաւրուն»<sup>60</sup>: «Մեծ արքայն Հայոց Տրդատ ... առնոյր ընդ իւր ... ի զինուորական կողմանէն՝ զչորեսին գահերէցսն իւրոյ տաճարին, որ բղեաշխքն կոչին»<sup>61</sup>: «Մեծ իշխանն Աղձնեաց, որ անուանեալ կոչէր բղեաշխն. որ էր մի ի չորից, գահերէց բարձերէց տաճարին արքունի»<sup>62</sup>: «Թագաւորն եւ գահերէց իշխանքն չորեսին»<sup>63</sup>:

Մեծ Հայքի ռազմատարածքային կառավարման «Արքա + 4 բղեշխ-զորավարներ» մոդելը չի կարելի համարել սասանյան ժառանգություն, քանի որ Հայաստանում դրա գոյությունը վկայում է դեռևս Պուտարքոսը (I-II դդ.) Սասանյան տերության պատմության ասպարեզ իջնելուց ավելի քան մեկ դար առաջ: Խոսքը վերաբերում է հռոմեացի պատմիչի վերոհիշյալ վկայությունը, ըստ որի՝ արքայից արքա Տրդրան Մեծին հպատակվել են բազմաթիվ թագավորներ, որոնցից Պուտարքոսն առանձնացնում է 4-ին, որոնք ամենուր ուղեկցել են Հայոց արքային (Plut. Luc., 21.5): Վաղուց է նկատվել, որ Տրդրանի մշտական ուղեկից այս չորս արքաներն իրենց կարգավիճակով համապատասխանում են հայ պատմագրությունը լավ հայտնի չորս բղեշխներին<sup>64</sup>: Ուղղակի, Հայաստանի հզորության չըջանում վերջիններիս փոխարինել են արքաներ, որոնք, ինչպես աքեմենյան և սասանյան կառավարման մոդելների դեպքում, եղել են արքայից արքայի ենթակաները: Հայոց բղեշխներից մեկը, որպես կանոն, կրել է «Մեծ» տիտղոսը<sup>65</sup>, որը, ինչպես ասվեց, կրել է նաև Սասանյան արքայից արքային ենթակա արքաներից գլխավորը:

<sup>59</sup> Տե՛ս H. Hübschmann. Armenische Grammatik. I. Theil. Armenische Etymologie (Bibliothek indogermanischer Grammatiken. Band VI). Leipzig, 1897, S. 13, 22, 240; Э. Хуршудян. Иранская военно-административная терминология и проблема четырехчленного деления Сасанидского Ирана. – ИФЖ, 1992, № 1, с. 175–178; R. Gyselen. “Spāhbed”.

<sup>60</sup> Մ ո վ ս է ս Խ ո Ր Ե ն ա ց ի. Պատմութիւն Հայոց. – Մատենագիրք Հայոց, հ. II, էջ 1737–2196, II, ԾԳ, ԶԵ, III, Զ:

<sup>61</sup> Ա գ ա թ ա ն գ ե դ ո ս. Պատմութիւն Հայոց. – Մատենագիրք Հայոց, հ. II, էջ 1295–1735, ձԻԶ, 3:

<sup>62</sup> Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ. Բուզանդարան Պատմութիւնք. – Մատենագիրք Հայոց, հ. I, Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 277–428, III, Թ:


<sup>63</sup> Յ ո վ հ ա ն Մ ա մ ի կ ո ն ե ա ն. Պատմութիւն Տարօնոյ. – Մատենագիրք Հայոց, հ. V, Անթիլիաս–Լիբանան, 2005, էջ 981–1126, [Բ] II, 32:

<sup>64</sup> J. Marquart. Նշվ. աշխ., էջ 172–173:

<sup>65</sup> Հայ միջնադարյան պատմագրությունում «Մեծ» տիտղոսով ավելի հաճախ հայտնի են արևմտյան կողմնակալությունը ներկայացնող Աղձնյաց բղեշխները (Մ ո վ ս է ս Խ ո Ր Ե ն ա ց ի. II, Ը, III, Դ, Ա գ ա թ ա ն գ ե դ ո ս,



Մեծ Հայքի կառուցվածքի ու կառավարման կարգերի վերաբերյալ կարևոր մանրամասներ են պահպանվել «Զորանամակ» պայմանական անվանմամբ հայտնի վաղմիջնադարյան զորացուցակում<sup>70</sup>։ Օվալաձև դժագրի ձևով կազմված, ընդամենը 1 էջից բաղկացած, բայց բովանդակալից ու պատկերավոր այդ փաստաթղթում<sup>71</sup> Հայոց բանակն արքայի և չորս բղեչխների գլխավորությամբ բաժանված է հինգ մասի<sup>72</sup>։ Զորանամակի թվային տվյալների համաձայն՝ այդ ստորաբաժանումներից ամենամեծաքանակն եղել է արքունի զորախումբը<sup>73</sup>։ Իսկ բղեչխների գլխավորած 4 զորախմբերը, որոնք կազմված են տվյալ կողմի բղեչխությունների և նախարարական մոտ քսան զորամասերով, ունեն մոտավորապես հավասար քանակություններ։ Այդ ստորաբաժանումներում ընդգրկված նախարարական զորամասերը ներկայացնում են ոչ միայն սահմանային կամ սահմանամերձ շրջանները, այլև



Պատկեր 12. Մեծ Հայքի ռազմատարածքային կառուցվածքն ըստ «Զորանամակի»։

մինչև արքայապատկան Միջնաշխարհ ձգվող բոլոր նախարարությունները<sup>74</sup>։ Տարածքային առումով նույն ստորաբաժանումները ներկայացնում են հինգ տարածամաս։ Դրանցից գլխավորը Միջնաշխարհ–Այրարատն է, որը, ինչպես նշվեց, գտնվել է Հայոց արքայի անմիջական ենթա-

<sup>70</sup> Տե՛ս Н. Адонц. Նշվ. աշխ., էջ 251–252, Ա. Հ ա կ ո բ յ ա ն. «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց Հայոց» եւ «Զաւրանամակ». – «Բազմավէպ» (Վենետիկ), 2011, թիւ 3–4, էջ 485–549: «Զորանամակում» այդ փաստաթուղթը կոչվում է «Գահնամակ»։

<sup>71</sup> «Զորանամակի» գծապատկեր տարբերակները տե՛ս Շ ա հ խ ա թ ու ն ե ա ն ց. Յ. ե պ ս. Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Այրարատայ, հ. Բ, Վաղարշապատ– Ս. էջմիածին, 1842, գծապատկեր-ներդիր, էջ 58-ից հետո (նախնական օրինակ), Ղ. Ա լ ի շ ա ն. Այրարատ, Բնաշխարհ Հայաստանեայց, Ս. Ղազար, Վենետիկ 1890, գծապատկեր-ներդիր, էջ 424-ից հետո (խմբագրված օրինակ)։

<sup>72</sup> Նույն հետևություններն են հանգեցրել այլ քննություններ (Ա. Դ ա ն ի ե լ յ ա ն Ա. Տրդատ III-ի զինվորական ռեֆորմը.– ՊԲՀ, 1974, № 4, էջ 207–218, А. Айвазян. Армяно-персидская война 449–451 гг. СПб., 2017, с. 115, 384, 401–404)։

<sup>73</sup> Արքայական զորախմբի ընդհանուր քանակությունը «Զորանամակում» չի նշվում։ Բայց տրվում է ողջ բանակի ընդհանուր քանակությունը (120.000), որից հանելով բղեչխների գլխավորած զորախմբերի ընդհանուր քանակը (84.000)՝ ստացվում է արքայական զորախմբի 36.000 քանակությունը (զորաքանակների ամփոփումը տե՛ս Н. Адонц. Նշվ. աշխ., էջ 285–286)։

<sup>74</sup> «Զորանամակում» առկա են որոշ տվյալներ, որոնք հակասում են ներկայացված սխեմային։ Բայց, կարծում ենք, որ դրանք հիմնականում տեքստային վնասվածքների, թարգմանական, վերծանական կամ այլ սխալների ու թերությունների արգասիք են։ Այնուամենայնիվ, այդ հակասությունները նշանակալից տեղ չեն զբաղում և չեն խանգարում հանգելու «Զորանամակի» հիմնական բովանդակությունից բխող ներկայացված հետևություններին։

կայությունները: Մյուս չորս տարածամասերը դասավորված են Միջնաշխարհի շուրջը՝ այն եզերելով հյուսիսային, հարավային, արևելյան և արևմտյան ուղղություններով<sup>75</sup> (տե՛ս պատկեր 12): «Զորանամակում» տեղ գտած ներկայացված տվյալներից ենթադրելի է, որ այն կազմողները, ռազմական բաժանմանն ուղիղ համեմատական, հինգ հիմնամասերի բաժանված են պատկերացրել նաև Հայաստանի տարածքը:

Սասանյան գլխավոր տարածքային միավորներին առնչվող որոշ նկատառումներ

Նախորդ քննությունից հետևում է, որ միմյանց հետ էական համապատասխանություններ ունեն Մեծ Հայքի և Սասանյան տիրապետության կառավարման կարգերն ու կառույցները: Հիմնական տարբերությունն այն է, որ եթե բղեչյաների գերակայության ներքո չորս ռազմավարչական մասերի են բաժանվել միայն Հայաստանի սահմանային—սահմանամերձ երկրամասերը, ապա սպահապետների իշխանության ներքո չորս քուստակների է բաժանվել ողջ Սասանյան տերությունը: Բայց անհրաժեշտ է նկատի առնել, որ չորս քուստակների բաժանված Սասանյան տերությունը վերաբերող պատկերացումները ծագում են բացառապես ետսասանյան ժամանակներից կամ, եթե դրանք ծագում են սասանյան շրջանից, ապա հետագայում ենթարկվել են խմբագրումների (սասանյան կամ հայկական աղբյուրներ): Միակ սկզբնաղբյուրը, որը համարվում է այդ պատկերացումները հաստատող փաստարկ, դա չորս քուստակների կառավարիչ սպահապետների կնիքներն են: Դրանք հաստատում են սպահապետների պատմականությունը և դրանց կառավարման ներքո գտնվող չորս վարչատարածքային միավորների՝ քուստակների գոյությունը: Բայց անհրաժեշտ է նկատի առնել, որ Սասանյան տերությունն ունեցել է ոչ թե չորս, այլ հինգ բարձրագույն տարածքային տիրակալ: Դրանցից գլխավորը Սասանյան արքայից արքան է, որին ենթարկվել են չորս սպահապետները, իսկ Սասանյան արքայից արքան ներկայացնում է ևս մեկ վարչատարածքային միավոր, ինչը հետևում է մեր ներկայացրած մի շարք փաստարկներից: Կենտրոնական դիրք գրավող ու առաջնային կարգավիճակ ունեցող այդ միավորի և դրա շուրջը դասավորված չորս քուստակների հետ, Սասանյան տերությունում ուրվագծվում է ոչ թե չորս, այլ, ինչպես Մեծ Հայքի դեպքում, այլ հինգ վարչական հիմնատարածք:

<sup>75</sup> Հայ միջնադարյան պատմագրության ներկայացված հաղորդումների համաձայն՝ Մեծ Հայքի սահմանային գործը բաժանվել է 4 ստորաբաժանումների, որոնք գլխավորել են բղեչյաները: Ընդհանուր առմամբ՝ համաձայնելով այդ հաղորդումներին «Զորանամակն» այս հարցում հավելում է այն կարևոր լրացումը, որ այդ ստորաբաժանումները կազմվել են ոչ միայն բղեչյանական, այլև նախարարական գործառնությունները: Ընդ որում՝ դրանք ներկայացրել են ոչ միայն սահմանային—սահմանամերձ շրջանները, այլև տվյալ կողմում ընդգրկված բոլոր նախարարությունները: Անհրաժեշտ է նկատի առնել, որ բղեչյանական գործը միայնակ ոչ բոլոր դեպքերում կարող էր պաշտպանել երկրի ողջ սահմանագծի մոտ մեկ քաղաքը կազմող իր հատվածը: Այս առումով միանգամայն ընդունելի է «Զորանամակի» հաղորդումը, ըստ որի՝ բղեչյանական գործը համալրվել է նույն կողմը ներկայացնող նախարարական գործերով:

Սասանյան տարածքային գլխավոր միավորներին առնչվող հարցերին անդրադառնալիս կարևոր է նկատի առնել, որ դրանց տրված *kust, kustag, padgos* անվանումներով կարող էին կոչվել սահմանային—սահմանամերձ երկրամասերը, քանի որ այդ տերմիններն ունեն միևնույն՝ «*koys*» արմատով կազմված, «կողմ, եզերք, ծայրագավառ» ստուգաբանությունը<sup>76</sup>: Այսպիսի մոտեցում ենք տեսնում նույն արմատով կազմված հայերեն «կուսակալություն» տերմինի դեպքում, որի հոմանիշներն են «կողմնակալություն, սահմանակալություն» անվանումները<sup>77</sup>: Այսպես կոչվել են Մեծ Հայքի սահմանային երկրամասերն ընդգրկող բազիլիսների տիրույթները<sup>78</sup>: Այս տվյալներից հետևում է, որ Սասանյան գլխավոր երկրամասը չէր կարող կոչվել *kust-kustag*, քանի որ այն, ի տարբերություն սահմանային—սահմանամերձ երկրամասերն ընդգրկող քուստակների, զբաղեցրել է կենտրոնական դիրք և, ինչպես ենթադրվեց, կրել է *Östän* անվանումը: Իսկ սա կարող է նշանակել, որ Սասանյան քուստակներն իսկապես եղել են ընդամենը չորսը, ինչպես տեսնում ենք ետսասանյան աղբյուրներում: Վերջիններիս հայտնի չէ միայն գլխավոր տարածքային միավորը՝ *Östän*-ը, որի շուրջ տեղակայվել են չորս քուստակները:

Կարծում ենք՝ քննվող հարցում պետք է ուղեկցվենք ոչ թե ուշ շրջանում գրված կամ խմբագրված աղբյուրներով, այլ գլխավորապես սասանյան սկզբնաղբյուրներով՝ մասնավորապես Շապուհ I-ի գլխավոր տարեգրությամբ (*ŠKZ*), դրանում ընդգրկված երկրացուցակով, կնիքագրական, դրամագրատական, պատկերագրական ներկայացված տվյալներով, որոնց քննությունից հետևում է, որ Սասանյան տերությունը «Կենտրոն—Օստան + 4 կողմնակալություն—քուստակներ» սկզբունքով բաժանվել է 5 տարածամասերի:

### Եզրակացություն

Այսպիսով, այս և մեր վերոհիշյալ քննությունում<sup>79</sup> ներկայացված տվյալներն ու փաստարկները մեզ հանգեցնում են այն ամփոփիչ ենթադրությունը, որ Աքեմենյան, Պարթևական և Սասանյան տերությունների տարածքային ու կառավարման հիմնականույցներն ունեցել են մեկը մյուսով թեթևադրված միևնույն՝ «1+4» մոդելը: Այս մասին առավել ամբողջական տվյալներ ու հիմնականում սկզբնաղբյուրային բնույթ ունեցող փաստարկներ են պահպանվել Սասանյան տերության վերաբերյալ: Կարելի է ենթադրել, որ, ինչպես Մեծ Հայքի դեպքում, չորս մասի է բաժանվել միայն Սասանյան տերության սահմանային—սահմանամերձ գոտին: Բայց հիմնականում սկզբնաղբյուրներում արտահայտված այս պատկերացումը ետսասանյան շրջանում հասկացվել է այնպես, որ չորս մասի կամ քուստակների է բա-

<sup>76</sup> Տե՛ս H. Hübschmann. Armenische Grammatik, S. 223, 258; T. Daryae. Šahrestānīhā ī Ērānšahr, p. 40; Э. Хуршудян. Города Ирана. – «Иран-наме». Алматы, 2010, № 3, с. 26:

<sup>77</sup> Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1973, էջ 630:

<sup>78</sup> Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 34, 36:

<sup>79</sup> Տե՛ս Մ. Օ հ ա ն յ ա ն. նշվ. աշխ.:



- Daryae T. Šahrestānīhā ī Ērānšahr, A Middle Persian Text on Late Antique Geography, Epic, and History, *Costa Mesa, 2002*.
- Daryae T. Sasanian Persia: The Rise and Fall of an Empire, I. B. Tauris. London, 2009.
- Daryae T. A Note on the “Great King of Armenia”. – Bridging Times and spaces Papers in Ancient Near Eastern, Mediterranean and Armenian Studies. Oxford, 2017.
- Daryae T., Safdari K. Spāhbed Bullae: The Barakat Collection. – e-Sasanica, 2010, № 12.
- Eremyan S. “Ashkharatsuyts” (Armyanskaya geografia VII veka), vydayushchiysya pamyatnik geografii i kartografii drevnego mira. – “Vestnik obshchestvennykh nauk” AN ArmSSR, 1968, № 5 (In Russian).
- Garsoian N. Prolegomena to a Study of the Iranian Aspects in Arsacid Armenia. – “Handes Amsoreay” (Vienna), 1976, № 90.
- Ghazar Pharpetsi. Patmutivn Hayots. – Matenagirq Hayots, h. II, Antelias–Lebanon, 2003 (In Armenian).
- Ghodrat-Dizaji M. Remarks on the Location of the Province of Parthia in the Sasanian Period. – The Parthian and Early Sasanian Empires: Adaptation and Expansion, Oxford & Philadelphia, 2016
- Gyselen R. Lorsque l'archéologie rencontre la tradition littéraire. Les titres des chefs d'armée de l'Iran sassanide. – Comptes rendus des séances de l'Académie des Inscriptions et Belles-Lettres, 145<sup>e</sup> année, 2001, № 1.
- Gyselen R. Spāhbed. – Encyclopaedia Iranica, 2004.
- Gyselen R. Primary Sources and Historiography of the Sasanian Empire. – *Studia Iranica* 38, 2009.
- Hakobyan H. “Gahnamak azatats ev tanuterants Hayots” ev “Zavranamak”.- “Bazmavep”, 2011, № 3–4 (In Armenian).
- Harper P., Meyers P. Silver Vessels of the Sasanian Period. Vol. 1 – The Metropolitan Museum of Art. New York, 1981.
- Henning W. The Great Inscription of Šāpūr I. – *Bulletin of the School of Oriental Studies*. London, 1939, vol. 9, № 4.
- Herzfeld E. Am Tor von Asien. Felsdenkmale aus Iran Heldenszeit. Berlin, 1920.
- Hewsen R. The Geography of Ananias of Širak (Ašxarhac'oyc'): The Long and the Short Recensions. Wiesbaden, 1992.
- Hübschmann H. Armenische Grammatik. I. Theil. Armenische Etymologie (Bibliothek indogermanischer Grammatiken. Band VI). Leipzig, 1897.
- Hübschmann, H. Die altarmenischen Ortsnamen, mit Beiträgen zur historischen Topographie Armeniens und einer Karte, Strassburg, 1904.
- Jacobs B. Achämenidische Kunst - Kunst im Achämenidenreich. – In *Archäologische Mitteilungen aus Iran und Turan* 34. Berlin, 2002.
- Justi F.. Der Bundehesh. Zum ersten Male herausgegeben. Leipzig, 1868.
- Kassock Z. The Greater Iranian Bundahishn: A Pahlavi Student's, Fredericksburg, VA, 2013
- Khanipoor M., Kavosh H, Naseri R. The reliefs of Naqš-e Rostam and a reflection on a forgotten relief, Iran. – *Historia I Świat*, 6/2017.

- Khurshudyan E. Iranskaya voenno-administrativnaya terminologiya I problema chetyrechlenного deleniya Sasanidskogo Irana. – IZHF, 1992, № 1 (In Russian).
- Khurshudyan E. Goroda Irana. – “Iran-name” (Almaty), 2010, № 3 (15) (In Russian).
- Lukonin V. Zavoevaniya Sasanidov na vostoке i problema kushanskoi absoljuty noy khronologii. – “Vestnik drevnei istorii”, 1969, № 2 (In Russian).
- Lukonin V. Kultura sasanidskogo Irana v III–V vv. M. 1969 (In Russian).
- Lukonin V. Drevnii i rannesrednevekovyi Iran. M, 1987 (In Russian).
- Manandian H. Feodalizme hin Hayastanum, Erevan, 1934 (In Armenian).
- Marquart J. Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac‘i. Gessellschaft der Wissenschaften zu Göttingen, N.F. 3/2. Berlin, 1901.
- Maricq A. “Res Gestae Divi Saporis”. – Classica et Orientalia 5. (Pl. XXIII–XXIV), Syria 35, 1958.
- Miri N. Sasanian Pars: historical geography and administrative organization (Sasanika series; №4), Costa Mesa, California, 1980.
- Morony M. Continuity and Change in the Administrative Geography of Late Sasanian and Early Islamic al-'Irāq. – “Iran”, Journal of Persian Studies, XX, 1982.
- Morony M. Iraq after the Muslim Conquest, Princeton 1984.
- Movses Khorenatsi. Patmutivn Hayots. – Matenagirq Hayots, h. II, Antelias–Lebanon, 2003 (In Classical Armenian).
- Nöldeke T. Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden: Aus der arabischen Chronik des Tabari: Übersetzt und mit ausführlichen Erläuterungen und ergänzungen Versehn, Leyden 1879.
- Ohanyan M. Akemenyan teruty an karavarman karger i u karuytsneri masin. – “Patmutyun yev mshakuyt” (hajagitakan hands) (Yerevan), 2019, № 1 (In Armenian).
- English transl. – “About the structures and order of administration of the Achaemenid Empire”. – <https://independentresearcher.academia.edu/MuradOhanyan>
- Orbeli I., Trever K. Sasanidskiy metall. Khudozhestvennie predmeti iz zolota, serebra i bronza. M.–L. 1933 (In Russian).
- Patkanov K. Armyanskaya geografiya VII veka po r. X. SPb, 1877 (In Russian).
- Perikhanian A. Armyanskaya nadpis iz Garni. – IFZh, 1964, № 3 (In Russian).
- Perikhanian A. Drevnearmyanskie vostoniki. – VDI, 1956, №2 (In Russian).
- Phavstos Buzand. Buzandaran Patmutivnq. – Matenagirq Hayots, h. I, Antelias–Lebanon, 2003, ej 277–428 (In Armenian).
- Perikhanian A. Sasanidskiy sudebnik. Erevan, 1973 (In Russian).
- Plutarch’s Lives. Lucullus. Transl. B. Perrin. Cambridge, London, 1914. 2.
- Raffaelli E. L’oroscopo del mondo: Il tema di nascita del mondo e del primo uomo secondo l’astrologia zoroastriana. Milan: Mimesis 2001.
- Romano L. Uranshe’s Family and the Evolution of its inside Relationships as shown by Images. – La famille dans le Proche-Orient ancien: réalités, symbolismes, et images Proceedings of the 55th Rencontre Assyriologique Internationale at Paris 6–9/2009.
- Shapira D. Was there Geographical Science in Sasanian Iran?. – Acta Orientalia Academiae Scientiarum Hungaricae, 54 (2–3).



- Shahkhatuneants Y. eps. Storagrutivn Katughike Ejmiadsni ev hing gavaratsn Ayraratay, ht. B, Vagharshapat-S. Ejmiadsin, 1842 (In Armenian).
- Shayegan R. Arsacids and Sasanians: Political Ideology in Post-Hellenistic and Late Antique Persia. Cambridge, 2011.
- Shayegan R. Persianism: Or Achaemenid Reminiscences in the Iranian and Iranicate World(s) of Antiquity – Persianism in Antiquity, ed. R. Strootman, M. Versluys. Oriens et Occidens 25. Stuttgart, 2017.
- Schmidt. E. Persepolis I: Structures, Reliefs, Inscriptions. Chicago, 1953.
- Sprengling M. Third Century Iran. Sapor and Kartir. Chicago, 1953.
- Vanden Berghe L. Reliefs rupestres de l'Irān ancien – Musées Royaux d'Art et d'Histoire. Bruxelles, 1983–1984.
- Weber U. Hormezd I, König der Könige von Ērān und Anērān. – Iranica Antiqua, 42, 2007.
- West E. The Bundahishn or Knowledge from the Zand, from Sacred Books of the East, vol. 5. Oxford, 1897.
- Xenophon. Anabasis. Xenophon in Seven Volumes 2–3. London, 1922
- Xenophon. Cyropaedia. Xenophon in Seven Volumes, 5, 6. Cambridge, MA; London. 1914.
- Yovhan Mamikonean. Patmutivn Taronay. – Matenagirq Hayots, h. V. Antelias–Lebanon, 2005 (In Armenian).

## НАСЛЕДНИКИ ПОРЯДКОВ УПРАВЛЕНИЯ АХЕМЕНИДОВ

МУРАД ОГАНЯН

Р е з ю м е

*Ключевые слова: Ахеменидская держава, Парфянская держава, Сасанидская держава, Дария I, Арташир I, Шапур I, Элам, Кул-е Фарах, Шумер, Урнание, Великая Армения, Айрарат, Тигран Великий, Бундахишн, «Армянская география», спахбет, бдешх.*

Порядки управления и структуры Парфянской и Сасанидской держав почти в точности повторяют модели правления Ахеменидов. Об этом сохранились различные свидетельства и факты, особенно относящиеся к Сасанидской державе. Согласно этим данным она была разделена на пять административно-территориальных единиц по принципу «Центр + 4 периферийных региона». Этой структуре соответствовала сасанидская система территориального управления, имеющая модель «царь царей + 4 наместника/спахбета». Прототипы таких систем управления, имеющие модель «1 + 4», известны из Элама и Шумера. Такую же модель имела территориальная структура и система управления Великой Армении.



ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԶԵԿՈՒՑԱԳՐԵՐԸ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՈՒ ՈՐԲԵՐԻ  
ՎԻՃԱԿԻ ԵՎ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
(1915–1917 թթ.)<sup>\*</sup>

Առաջին աշխարհամարտի Կովկասյան (ռուս-թուրքական) ճակատում մարտական գործողությունները սկսվեցին 1914 թ. նոյեմբերի առաջին օրերին: Բաթումի մարզը, որը համեմատաբար թույլ էր պաշտպանված, Օսմանյան III բանակի համար դարձավ հարմար թիրախ<sup>1</sup>: Պատերազմի առաջին օրերին ռուսական բանակի անհաջողությունները հնարավորություն տվեցին թուրքերին Արդվինի ուղղությամբ շարժվել Բաթում և տեղի մահմեդական ազգաբնակչության գործուն անջակցությամբ<sup>2</sup> մինչև 1914 թ. նոյեմբերի վերջ գրեթե ամբողջովին գրավել Բաթումի մարզը, Արդահան քաղաքն ու Կարսի մարզի արևմտյան շրջանները: Տեղի էին ունենում հայերի զանգվածային կոտորածներ:

Թիֆլիս ժամանած Պետական դումայի նախկին պատգամավոր, մուսուլմանական խմբավորման անդամ Զախար-բեկ Աջարսկին նոյեմբերի 5-ից Արդվինում սկսված հայերի կոտորածների մասին հաղորդել էր. «Արդահանի օկրուգն այլևս գոյություն չունի. ամեն ինչ թալանված է, բնակչության մեծամասնությունը սրի է քաշված ... Դուք կարող եք շրջել տասնյակ գյուղեր և ոչ մի տեղ կենդանի արարածի չեք հանդիպի, միայն դիակներ, դիակներ ու դիակներ ... Ովքեր կարողացան փախչել, այժմ գտնվում են Ախալքալաքում, Շավշեթում և Պասխավսկի (Պասխան – Ն. Ս.) տեղամասում ... օկրուգի այն գյուղերը, որոնք պատերազմից առաջ շատ հարուստ էին, այժմ, ինչպես ժանտախտից հետո, բոլորովին դատարկվել են ...»<sup>3</sup>:

Օսմանյան զորքերի առաջխաղացումը մեծ խուճապ առաջացրեց՝ ստիպելով տասնյակ հազարավոր մարդկանց անցնել Այսրկովկասի առավել ապահով նահանգներ: Փախստականների մեծ մասը սովահար ու կիսամերկ կանայք ու երեխաներ էին, որոնք ճանապարհին նաև թալանվել էին ինքնաբերական և Հաջի-

<sup>\*</sup> Ներկայացվել է 21. VI. 2021 թ., ընդունվել է տպագրության 28. VI. 2021 թ.:

<sup>1</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981, էջ 539, Ս. Միր-զոյան. Բաթումի մարզ: Հայերի ևս մեկ ողբերգություն. – «Հայագիտության հարցեր» (Երևան), 2014, № 3, էջ 168–191:

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս Թ. Սահակեան. Բաթումի նահանգի հայությունից կողոպուտն ու սպանությունները Ա. Համաշխարհայինի սկզբում 1914ի աշնան (փաստաթղթեր). – «Հայկազեան հայագիտական հանդէս» (Պէյրոսթ), 2013, էջ 7–45, Ա. Հակոբյան. Կարսի մարզ (գյուղացիության պատմության ուղիվագներ) 1878–1917 թթ., Երևան, 2000, էջ 159:

<sup>3</sup> Ե. Ղ. Սարգսյան. Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914–1918, Երևան, 1964, էջ 215: Տե՛ս նաև՝ Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 540:



– 1 –

ԿՀԲԸ-Ի ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՄՍՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ՝<sup>8</sup> ՏԱՆՁՈՏՑԻ  
550 ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

3 փետրվարի 1915 թ.  
Ախալքալաք

№ 21

Ի պատասխան Ձեր հեռագրական հարցման, Վարչութիւնս<sup>9</sup> շտապում է յատնել Ձեզ, Ախալքալաք եկած գաղթականների նոր խմբի մասին իւր ունեցած մանրամասնութիւնները:

Անցեալ յունվար ամսիս 24-ին Արդահանի շրջանային կառավարիչը հեռագրով դիմել էր Ախալքալաքի գաւառապետին, խնդրելով Բարեգործական հաստատութիւնների ուշադրութիւն հրաւիրել Արդւինի շրջանի Տանձոտ գիւղից փախած 550 հայ գաղթականների վրայ, որոնք, աննշան բացառութեամբ, կանայք և երեխաներ են, – խնդրելով ուղարկել հաց, տաք շորեր և սահնակներ, այդ գաղթականներին Ախալքալաք տեղափոխելու համար:

Յիշեալ հեռագիրը Ախալքալաքի գաւառապետը մակագրութեամբ ուղարկեց Վարչութեանս:

Վարչութիւնս ստանալով հեռագիրը, իսկոյն բանակցութիւնների մէջ մտաւ Արդահանի շրջանային կառավարչի հետ, յաջողացրեց ուղարկել սահնակներ և իր երկու լիազօրների հետ ընդառաջ ուղարկեց եփած հաց և չորս մեշոք<sup>10</sup> տաք շորեր:

Ամսի 28-ին Վարչութիւնս լուր առնելով, որ գաղթականները արդէն դուրս են եկել Արդահանից, իր նախագահին ուղարկեց Կարծախ գիւղը, գաղթականների մի մասը տեղաւորելու շրջակայ գիւղերում, իսկ միւս մասն էլ ուղարկելու քաղաք, տեղաւորելու համար միւս կողմի գիւղերում:

Սակայն, Վարչութեանս այդ որոշումը չը իրականացրեց որովհետև գաղթականները չ'ցանկացան բաժանվել միմյանցից և ցրւել: Ամսի 29-ին ցերեկը 80 սահնակներով այդ գաղթականները հասան Ախալքալաք, որոնք իսկոյն և եթ, ժամանակաւորապես տեղաւորեցին Վարչութեանս կողմից բացւած մի մեծ շինութեան մէջ, և մասամբ էլ մասնաւոր տներում:

Գաղթականներին տեղաւորելուց յետոյ, Վարչութիւնս անմիջապէս թեյ և հաց բաժանեց նրանց, նաև հասցրեց բժշկական օգնութիւն: Հարկաւոր ենք

<sup>8</sup> Սամսոն Ստեփանի Հարությունյան (1875–1941) – իրավաբան, հասարակական-քաղաքական գործիչ, ԿՀԲԸ-ի նախագահ, Հայոց ազգային բյուրոյի անդամ: 1914–1916 թթ. ակտիվ մասնակցութիւն է ունեցել հայ կամավորական շարժմանը: Հայ ժողովրդական կուսակցութեան փոխնախագահ, 1918–1919 թթ. ՀՀ արարադատութեան նախարար:

<sup>9</sup> ԿՀԲԸ-ի Ախալքալաքի մասնաճյուղը բացվել է 1890 թ. հունվարի 21-ին:

<sup>10</sup> Պարկ:

գտնում յատնել նոյնպես, որ տեղիս գարնիզոնի<sup>11</sup> նաչալնիկ<sup>12</sup> իշխան Օբոլենսկին, իր մարդասիրական և վերին աստիճանի խնամատար վերաբերմունքով դէպի գաղթականները, գրաւեց Վարչութեանս ուշադրութիւնը, որի համար մենք պարտք գգացինք գրութեան միջոցով շնորհակալութիւն հայտնել նրան: Այսպիսով, Վարչութիւնս այդ ժամանակաւոր բնակարանում տեղաւորելով գաղթականներին առանձին խնամքով ամեն օր առատ սնունդ էր մատակարարում բոլորին (տաք կերակուր և թեյ), հնար եղածին չափ ծածկում նրանց մերկութիւնը և առհասարակ պահում պահպանում նրանց:

Բայց որովհետև այն բնակարանը, որտեղ տեղաւորւած գաղթականները, իբրև մշտական կացարան ուներ շատ անյարմարութիւններ և որ գլխաւորն է Վարչութիւնը ցանկանում էր քաղաքը միշտ պատրաստ պահել նոր գաղթականներ ընդունելու համար, առաջարկեց սրանց ցրել գաւառիս մի քանի հայ գիւղերում: Այստեղ աւելորդ է յիշատակել և այն, որ գիւղերից ամեն օր մարդիկ էին գալիս և խնդրում իրանց գիւղը ուղարկել գաղթականներ խոստանալով մեծ յօծարութեամբ պահել նրանց: Սակայն գաղթականները նորից չցանկացան բաժանւիլ միմեանցից և ցրել, – չ'ուզեցին գնալ գիւղերը: Վարչութիւնս արդեն ստիպւած եղաւ մտածել սրանց քաղաքում մշտապես պահելու մասին: Առայժմս քաղաքում վարձւած են 10 բնակարաններ, ամսական մօտ 60 ռուբլի] քրէհով<sup>13</sup>:

Գալով այս գաղթականների դրութեանը, պէտք է ասել, որ բոլորն էլ գտնվում են ծայր չքաւորութեան մէջ: Գիւղից ոչ մի բան չեն կարողացել վերցնել, տղամարդիկ բոլորը սպանւած ու խեղդամահ են եղած, ազատւել են միայն իրանց ծխական դպրոցի (որ պահւում էր Բարեգործական] ընկ[երութ-յան] նպաստով) ուսուցիչ Վարդան Մազմանեանը<sup>14</sup> և ուրիշ 6 մարդիկ որոնք փախած են եղել:

Ախալքալաք հասած այս գաղթական կանայք և երեխաները, տեղական թուրքերից կազմւած չեթաների<sup>15</sup> ձեռքից ազատւել են շնորհիւ ուսուցիչ Վ. Մազմանեանի հերոսական և «առասպելական» ջանքերին, որոնց

<sup>11</sup> Կայազոր:

<sup>12</sup> Պետ:

<sup>13</sup> Քրէհ – վարձ:

<sup>14</sup> Վարդան Ստեփանի Մազմանյան (?-?) – ԿՀԲԸ-ի կողմից ֆինանսավորվող Արդվինի շրջանի Տանձոտ գյուղի ուսուցիչ: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Տանձոտ գյուղի բնակիչների ներկայացուցիչ և Բարեգործական ընկերության լիազոր: Ներկայացրել է գեկուցագիր Արդվինի գավառի Տանձոտ գյուղի հայերի կոտորածների մասին. տե՛ս Ա. Կիրիմյան. Վարդան Մազմանյանի վկայութիւնները Բաթումի մարզի Տանձոտ գյուղի հայ բնակչության կոտորածների մասին. – «Բանբեր Հայաստանի արխիւների», 2005, № 1, էջ 3–14:

<sup>15</sup> Չեթե (սերբերեն՝ четники, četnici) – XV–XIX դդ. Բալկանյան թերակղզում Օսմանյան կայսրության դեմ սերբական և բուլղարական ազատագրական շարժման մասնակից հայրենասերների զինված ջոկատների անվանում: Տվյալ դեպքում վկայակոչվող չեթեները մահմեդականներից կազմված աշխարհագորային ստորաբաժանումներ էին, որոնք օգտագործվում էին հայերի ցեղասպանության համար:

նկարագրութիւնը ըստ կարելոյն կուղարկենք Ձեզ: Եղել են և ինքնասպանութեան դէպքեր. 40–50-ի չափ ջահել հարս-աղջիկներ, չցանկանալով դառնալ թիւրք բարբարոսների հաճույքի առարկան, և նրանց ձեռքից ազատելու համար, թոյն են ընդունել, կամ թէ ժայռերից ցած գլորւել իրանց կենաքին վերջ տալու համար: Թերևս մի քանի կանայք, իրանց դիակը բռնաբարվելուց ազատելու համար, նախ գերեզման են փորել մտել մէջը և ապա թոյն ընդունելով մահացել ...<sup>16</sup>

Մի խօսքով այս Տանձոտ գիւղի փախած գաղթականների պատմութիւնը շատ սրտաճմլիկ է և աղեխարշ. դրութիւնները ողբալի. պէտք է կանօճաւոր և մշտական օգնութիւն հասցնել սրանց, գոնէ մինչև պատերազմի վերջը, որի համար սակայն Վարչութեանս միջոցները թոյլ են, բայց յոյս ունենք որ դրսի օգնութեամբ պիտի կարողանանք ուժերս ներածին չափ բաւարարել սրանց կարիքներին:

Նախագահ Վարչութեան՝ Համազասպ ք[ա]հ[ա]ն[ա]յ Տէր-Գրիգորեան  
Քարտուղար-անդամ Վարչութեան՝ Վարդ[ան] Այվազ[եան]

ՀԱԱ, Ք. 28, ց. 1, գ. 383, թթ. 34–35: Բնագիր: Ձեռագիր:

– 2 –

ԿՀԲԸ-Ի ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՀ ՍԱՄՍՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ՝ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ  
ԱՌԱՋԱՑԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

20 փետրվարի 1915 թ.  
Ախալքալաք

№ 41

Ախալքալաքում ապաստանած գաղթականների թիւը, որ ներկայիս հասնում է 2000-ի, – պահանջում են Վարչութիւնիցս բացի մեծ աշխատանքից՝ նաև դրամական խոշոր օժանդակութիւն, իսկ մեր միջոցները, որքան յայտնի է Ձեզ, այնքան սուղ են, այնքան սահմանափակ, որ միանգամայն զրկւած ենք հնարաւորութիւնից՝ առանց դրսի օգնութեան բաւարարելու գաղթականների պահանջներին, միանգամայն անգօր՝ հազարաւոր քաղցած ու ծարաւ, մերկ ու բոկոտն, մրսած ու քայքայւած առողջութեամբ՝ գաղթական կանանց ու երեխաների արտասուքները սրբելու ...

Անցեալ յունւարի 29-ին Ախալքալաք եկան նորից 550 Տանձոտցի գաղթական կանայք և երեխաներ, որոնք թալանւած են բառիս բուն մտքով, – Վարչութիւնիցս պահանջեցին ահագին գոհողութիւն և սովորականից աւելի շատ աշխատանք՝ ծածկելու այս այրիացած կանանց ու որբացած երեխաների

<sup>16</sup> Բազմակետերը փաստաթղթինն են:

<sup>17</sup> Բազմակետերը փաստաթղթինն են:





անհրաժեշտ համարեց հիմնել Ախալքալաքում թեկուզ ժամանակաւոր մի հիւանդանոց, առայժմ 30 մահճակալով, որի համար բնակարան արդէն վարձել ենք:

Սակայն պետք է այստեղ խոստովանել, որ Վարչութիւնս տունը-բնակարանը վարձելով միայն, իր չունեցած միջոցներով անկարող է շարունակել իր սկսած գործը՝ եթէ օգնութեան չ'հասնիք Դուք՝ Ձէր գորեղ աջակցութեամբ ու ազդու միջնորդութեամբ նպաստելու Վարչութեանս հիմնելու իր ծրագրած հիւանդանոցը: Մանրամասնութիւնների հետ Ձեզ ծանօթացնելը թողնելով Վարչութեանս լիազօրին, որի նպատակով գալիս է Թիֆլիս, – Վարչութիւնս սրանով խնդրում է Ձեզ՝ յանուն գաղթականների օգնութեան վե՛հ գործի, օգնութեան հասնել մեզ իրականացնելու հիւանդանոցի միտքը:

Մեզ գլխաւորապէս հարկաւոր է մի բժիշկ ֆելդշեր<sup>19</sup>, որոշ չափով մի քանի տեսակ գիւղեր և հիւանդանոցի կահաւորման իրեր:

Եթէ Ալեքսանդրապոլը և այլ տեղերը Քաղաքների միութեան<sup>20</sup>, Կովկասիան բաժանմունքների օգնութեամբ բաց են անում հիւանդանոցներ, թեր ևս մե՛ծ ծրագրով, – մի՞թե Ախալքալաքը մենակ պետք մնայ և ոչ ոք օգնութեան չ'պիտի հասնի:

Վարչութիւնս լիայոյս է, որ Ձեր աջակցութեամբ ու զօրէղ միջնորդութեամբ, Ախալքալաքում ծրագրուած բացւելիք հիւանդանոցի խնդիրը կատանայ դրական լուծումն:

Նախագահ Վարչութեան՝ Համազասպ ք[ա]հ[ա]ն[ա]յ Տէր-Գրիգորեան  
Քարտուղար-անդամ Վարչութեան՝ Վարդ[ան] Այվազ[եան]

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 383, թթ. 18–19 շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

– 3 –

ՏԱՆՁՈՏ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԴԱՆ  
ՄԱՁՄԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԿՀԲԸ-Ի ԽՈՐՀՐԴԻՆ՝ ՏԱՆՁՈՏՅԻ  
ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

31 մարտի 1916 թ.  
Տիֆլիս

Ինչպէս յայտնի է Յարգելի խորհրդիտ Տանձոտ գիւղի որբ և այրիներից 400 հոգի գտնւում են Ախալքալաքում, իսկ մօտ 190-ը թէ Արդահանի շրջանում թէ՛ Տանձոտում: Յիշեալ փախստականները առանց բացառութեան

<sup>19</sup> Ֆելդշեր – բուժակ:

<sup>20</sup> Քաղաքների միութիւն – (Всероссийский союз городов помощи больным и раненым воинам) – հասարակական խոշոր կազմակերպութիւն, որը ստեղծվել էր 1914 թ. օգոստոսին: Կազմակերպութիւնն նպատակն էր Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ բժշկական խնամքի կազմակերպումը և փախստականների տեղաբաշխումը:



Պարտք եմ համարում յատնել նաև, որ առաջարկված ուղղութեամբ պահանջված բոլոր կարիքներին պատրաստ եմ ծառայելու, առանց մի որևէ ակնկալութեան ...

**Տանձնոտի ուսուցիչ Վարդան Ստեփանեան Մագմանեանց**

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 904, թթ. 26–27 շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

– 4 –

ՎԱՐԴԱՆ ՄԱՉՄԱՆՅԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՀԿԿ-Ի ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ  
ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

20 հոկտեմբերի 1916 թ.  
Տփլիս

Սոյն թւի օգոստոսի մէջ ներկայացրած զեկուցումիս համաձայն նոյն ամսոյ 20-ին գնալով Ախալքալաք, վերցրի մի բարի անձնաւորութիւնից 1100 ռուբլի և անձամբ շրջագայելով գիւղերը, գնեցի 27 հատ բեռնակիր գրաստ<sup>23</sup> և հասցրի Տանձնոտ ժողովրդի ամենաանհրաժեշտ պէտքերը հոգալու համար: Գնւած էջերի ցուցակները և հաշիւը թողել եմ Ախալքալաքի Հ[այոց] Բ[արեգործական] Ընկ[երութեան] Վարչութեան մօտ: Դրանցով և եզներով կրել տւի Արդանուծից 3 ամսւայ լագուտ<sup>24</sup> (ամիսը 400 փ[ութ]) և ապա իւրաքանչիւր 3 տանը մի-մի բեռնակիր բաժանելով, կազմակերպէցի երեխաների կարաւան, որոնք թէ մօտակայ գիւղերի և թէ Տանձնոտի այգիներից կրելով միրգ Արդահանի շրջանը, փոխարինեցին փոքր չափով թանի և երբեմն էլ պանիրի հետ: Եթէ շուտով ձիւնը չփակէր լեռնային ճանապարհները, կարելի կը լինէր ձմռան պաշար մթերքը լրացնել: Եզներով կրել տաի բաւականի խոտ, քաշել տւի ժողովրդի համար փայտ և ներս բերի արտերից ծխախոտն ու այլ բանջարեղէն: Ծխախոտը բաւականի արդիւնք էր խոստանում, սակայն ուշ մշակելու և սովորականից էլ շուտ ձիւն գալու պատճառով միքիչ մըսեց: Չափազանց նեղ պայմաններում վերաշինել տւի տների, երդիկների քանդակածները և ապա դպրոցի պակասները: Նախկին տարիներում դպրոցը յարմարեցրած էր 60–90 աշակերտի համար, սակայն այս տարի աշակ[երտ]-աշակերտուհիների թիւը (8–14 տ[արեկան]) հասնելով 200-ի, ստիպւած պակասները լրացրի: Գիւղում արհեստաւոր կամ աշխատող մարդ չլինելու պատճառով Ախալքալաքից բերել եմ 10 մարդ իրանց ընտանիքներով և անասուններով: Սեպտեմբերի 15-ից սկսել եմ ընդունելութիւնները, իսկ նոյն ամսի 28-ին տեղ հասնելով Ախալքալաքից հրաւիրւած 3 վարժուհիները, հոկտեմբեր 1-ից սկսել են կանոնաւոր դասերը: Երեք վարժուհիների ուժիկն է 1350 ռ[ուբլի] բնակարան, վառելիք,

<sup>23</sup> Բեռնակիր կամ հեծնելի ընտանի կենդանի (ձի, ջորի և այլն):

<sup>24</sup> Եգիպտացորեն:

լուսաւորութիւն, ծառայ և ճանապարհածախք նոյնպէս մեզ վերայ: Չորրորդ դասատուն ես եմ, իմ ուժիկը ես անկարող էի որոշել, որովհետև Հոգաբարձական կազմ դեռ նոր եմ ճարել: Միայն Տանձնատի որբերի թիւն է դպրոցում 185 (120-ը տղայ, 65-ը աղջիկ) իսկ մնացած 15-ը Արդանուճից, Սատլէլից և Նորաշէնից որբեր: Դպրոցը ունի I, II, III և IV բաժանմունքներ: I բաժանմունքը զուգընթաց է: Որովհետև ամսին 10-ին անակնկալ կերպով դուրս ելալ գիւղից, այդ պատճառով անկարող եղալ վերցնել հետս թէ ուսուցչական խմբի կրթական ցենզերի պատճէնները և թէ աշակերտների անվանացուցակները: Շտապօք դուրս գալուս պատճառն այն էր, որ Սրբազան Մեսրոպ եպիսկոպոսի<sup>25</sup> միջոցով իմ ներկայացրած խնդիրը Տանձնատի 15 բաժանմունքների<sup>26</sup> ազատութեան մասին ընդունել էր և առաջին գորակոչին ազատել էին երեք հոգու, սակայն վերջում ինչ որ մութ մարդկանց բողոքի համաձայն՝ երկրորդ գորակոչին ներկայացնողներին ընդունել են: Եթէ այդ 15 մարդն էլ գնան, այն ժամանակ ներկայ պայմաններում գիւղի ժողովուրդը բոլորովին պիտի կորաւ: Աշխատում եմ կրկին այդ գործի համար:

Յայտնում եմ նաև, որ ամսոյս 17-ին Բաթումում ներկայանալով շրջանային գաւառապետին (окруж[ной] начальн[ик]) խնդրեցի Տանձնատի հողազուրկ հայ ընտանիքների համար, որպէսզի տեղիս ազատ հողերից էժան արենդով օգտուեն: Խնդրեցի ներկայ աշնանացանքսի համար սերմացու, 500 հոգու համար շոր, տեղումը անհրաժեշտութիւն դարձած հիւանդանոցի և սպառողական խանութի համար գաւառապետը խոստացաւ աջակցել:

Դիմեցի նաև Բաթումի պէտական Բանկին, որ պատերազմից առաջ եղած փոխատու-խնայողական Ընկերութիւնը Տանձնատում կրկին վերաբացւի: Այդ առթիւ էլ ստացել եմ համաձայնութիւն:

Այդ բոլորի մասին նոյն կէրպ դիմել և խնդրել եմ միևնոյն ժամանակ Արտանուճի, Սատլէլի, Օկրոբակերտ և Նորաշէնի համար:

Յայտնելով այս բոլորի մասին, այսու խնդրում եմ՝

ա) Վէրցնել Տանձնատի դպրոցը Վարչութեանը հովանու տակ և հոգալ բոլոր ծախքերը: Հնարաւորութեան չափով շուտով հասցնել աշակերտների համար դասագրքեր, տետրակ, գրիչ-թանաք և այլն, որովհետև այդպիսիներից ոչ մի բան չի կարելի ճարել ոչ Արդւին, ոչ Բաթում: Դասագրքերի ցուցակը կտամ:

բ) Բաց անել Տանձնատում այրի ջահել հարսների և չափահաս օրիորդների համար կար ու ձևի դպրոց, որտեղ կարելի կը լինի անցնել նաև գրագիտութիւն: Այդպիսիների թիւը 30 է, որոնց վերայ է մնում թէ իրանց տների հոգսերը և թէ գիւղի այդ մարդկանց հասարակական գործերի ծանրութիւնը: Այդ դպրոցի դասատուների և պահանջելիք նիւթի համար հարկաւոր է միայն 1000 ը[ուբլի] պարապողները կը լինեն դպրոցի նոյն վարժուհիները:

գ) Անպայման ուղարկել ուսուցիչներ Արդանուճի, Նորաշէնի, Սատլէլի և Օկրոբակերտի համար, որովհետև արդեն երրորդ տարին է, որ որբերը թափառում են փողոցներում առանց դաստիարակութեան: Իսկ եթէ այդ չլինի իր

<sup>25</sup> Մեսրոպ եպիսկոպոս Տեր Մովսիսյան (1865–1939) – Վրաստանի և Իմերեթի թեմի առաջնորդ:

<sup>26</sup> Աշխարհագորայիներ:

ժամանակին, այդ դէպքում շրջանի բոլոր որբերը պիտի հաւաքւեն Տանձոտում, որի համար առանձին դժարութիւններ պիտի ստեղծւեն:

*Տանձոտի ներկայացուցիչ՝ ուս[ուցիչ] Վ[արդան] Մազմանեան*

*Յ.Գ. Եթէ հարկ լինի, թէ Տանձոտի և թէ շրջանի հայ գիւղերի տնտեսութեան ու ներկայ կացութեան մասին կտամ բանաւոր գեկուցում:*

ՀԱԱ, Ք. 28, ց. 1, գ. 915, թ. 10–11 շրջ.: Բնագիր: Զեռագիր:

– 5 –

ՎԱՐԴԱՆ ՄԱԶՄԱՆՅԱՆԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՀԿԿ-ԻՆ՝ ԱՐԴԱՆՈՒՋՈՒՄ  
ԳՏՆՎՈՂ ՈՐԲԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՒ  
ԱՌԿԱ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2 փետրվարի 1917 թ.  
Տփլիս

*Դեկտեմբեր սկզբին 1916 թ. ցուցակագրվել են ամբողջ շրջանից 200 որբ: Նոյն ամսայն 12-ից մինչև 24-ը եկել են Սատլէյից, Օկրոբակէրտից, Մամանե-լիսից և Փխիկուրից 66 որբ, որոնցից 51-ի համար տրւել է ճանապարհաձախք 115 ռ[ուբլի], իսկ միւսները բերւելով հայերի ձեռով ծախք չի հարուցւել:*

*Որովհետև առաջին օրւանից չկար յարմարութիւններ երեխաներին որբա-նոցում տեղաւորելու, այդ պատճառով բաժանեցի Արդանուճիցիների տնե-րում և պայմանաւորւեցի իւրաքանչիւրի համար վճարել օրական 50 ակ[ան] կոպէկ սնունդի ծախք այդ հաշւով նրանց եկած օրից մինչև որբանոցի բացւելը, այսինքն մինչև յունվար 5-ը պէտք է վճարւի 49 որբի համար 408 ռ[ուբլի] 50 կոպէկ, իսկ մնացած 17 որբը սպրել են տեղացի մի քանի մարդ-կանց հաշին ձրի: Յունվար 5-ից երեխաները ընդունել են որբանոցում առա-ւօտները թէյ, հաց և պանիր ու գնացել դպրոց: Ճաշին ընդունեցին տաք կե-րակուր, մնացել որբանոցում դասերը պատրաստելուն ապա երեկոյեան թէյ խմելուց յետոյ գնացել են նախկին տեղերը քնելու: Պետք է նկատել, որ որբե-րը բոլորովին մերկ էին և բոբիկ, այդ պատճառով Արդանուճիցիների մի մասի հաշին բաժանւել են սկզբնական շրջանում կիսամաշ գլխարկներ և սպիտակեղեն: Խնդրել եմ նաև գաւառապետից, որը թիւրքերի բաժնից գիջել և բաժանել 29 զույգ ոտաման և 29 հատ շապիկ: Գնւել է նոյնպէս 60 արշին կտաւ (կտոր-կտոր հաւաքւած տներից) և կարւելով 25 ձեռք սպիտակեղեն, բաժանւել է մնացածներին:*

*Չնայած, որ ամեն օր Տանձոտի, Նորաշէնի և Արդանուճի որբերը թէ իրանք և թէ մայրերը դիմում են որբանոց ղրկելու, սակայն ինկատի ունենա-լով այլերի, տեղաշորի, սպիտակեղենի և վերնահագուստի բոլորովին չլինելը, անկարող եմ եղել ընդունելու:*

Եւ այսպէս 70 որբ (4-ը Արդանուճեցի) յունվար 5-ից մինչև այսօր երթևեկ կերպով ապրում են որբանոցում:

Յուցակագրւած են առ այժմ 180 որբ, որ պէտք է լինի 200 Օկրոբակերտում կա 20 երեխայ, որոնք թէև ունեն հայր և մայր, բայց մնացած են սարսափելի թշուառութեան մէջ: Տները այրւած, մարդիկ կամ գառամել ծերունիներ են, կամ զինուոր զնացածներ: Արդանուճում և Տանձոտում կան 38 որբ, որոնք թէև որբ են հօրից, սկայն նրանցից էլ մի քոյրը կամ եղբայրը ընդունւած է որբանոցում, կամ մի հատ է ընտանիքում:

Կան նոյնպէս 30-ի չափ որբեր Օկրոբակերտից և Սատլէլից, Տիխիսի որբանոցներում որոնց մայրերը և ազգականները խնդրել են տեղափոխել Արդանուճ:

Ահա այդ վերջին 3 խմբերի համար է որ բաց եմ թողել 20 հոգու տեղ: Այդ հարցի առթիւ խնդրում եմ Կոմիտէիտ կարգադրութիւնը, թէ որ խմբից լրացնել 20-ը:

Որբանոցի համար վարձւած է մի տուն, վարձւելու է նաև երկրորդը: Այդ տների քրեհը պիտի հոգայ տեղի Բ[արեգործական] Ընկ[երութեան] մասնաճիւղը:

Չեռնարկած է մահճակալների շինութեուն, որը պիտի պատրաստւի 200 հատ:

Այժմ երբ ուղարկւել են բոլոր կարիքները և հոգացւում է այնտեղի պահասները, կարելի է այս ամսում ամբողջին էլ տեղաւորել որբանոցում:

Բոլոր որբերն էլ, ինչպէս յատնի է ցուցակից, գիւղատնտեսական աշխատանքներ կատարելու և արհեստներ սովորելու համար համապատասխան հասակների են: Ուստի յարմար է հէնց մայիս ամսից փոխադրել դրանց Տանձոտ (օդը սքանչելի է ամառը) և պարապել հետները թէ դասերով, թէ դաշտային աշխատանքներով և թէ շիրամապահութեամբ: Ազատ հողեր և թիթենի շատ կան: Հարկաւոր է մի գիւղատնտեսութեան ուսուցիչ և մի շերամապահութեան: Եթէ այդ երկու ուսուցիչները և սերմացուն ժամանակին պատրաստ լինի, որբանոցի աշակերտութիւնը մի ամառւայ մէջ կարող է ողջ տարւայ լրբին, կարտօֆիլը, կաղամբը, բազուկը, սոխը և հացի մի մասը իւր աշխատանքներով ձեռք բերել: Հողը բերրի է, արգիւնքը արատ, երեխաները ընդունակ աշխատանքի: Ամառւան 4 ամիսը Տանձոտում այդ աշխատանքներով, իսկ ձմեռը կարելի է Արդանուճում բաց անել կօշկակարութեան և կար ու ձևի արհեստանոց:

Այս բոլորի լինելը չլինելը կախւած է այսօրւանից մինչև օգոստոս ամսուն ժողովրդին և որբերին սովամահից ազատելուց: Շաւշէթի և Արդանուճի շրջանների հայ ժողովուրդը մօտ 4000 հոգով գուրկ է օրւայ ուտելիքի պատրաստութիւնից: Թէև կայ Սատլէտում և Արդանուճում մի-մի խանութ եգիպտացորենի և ալիւրի պահէստների, սկայն այնքան քիչ է ստացւում, որ հագիւ ծառայողներին է տրւում, իոկ ժողովուրդը մնում է սոված: Որբանոցին պաշտօնապէս յայտնել է Արդանուճի խանութի կառավարիչը, որ ոչ մի բան բաց չի թողնի:

Ժողովուրդը և որբերը կրիգիսի<sup>27</sup> մեջ են, ուստի խընդրում եմ օր առաջ բաց անել Արդանուճում ալիւրի, շաքարի և սապնի պահեստաբաժին: Եթէ այդ բանը շուտ յաջողւի, այդ դեպքում մնացած բոլոր դժվարութիւնները կը հարթուեն:

Հարկաւոր է մի կերպ սովից փրկել ժողովրդին և ապա լծել աշխատանքի: Պահեստի կարիքը կը տւի ոչ ուշ, քան օգոստոս ամիսը: Այնուհետև արդեն բնակչութիւնը կարող է բաւարարուել իւր ցանքսերի ստացւածքներով: Պէտք է այս տարի զարկ տալ ցորենի, եգիպտացորենի և առհասարակ բոլոր բանջարեղենների ցանքսերին: Այդ տեսակէտից երկիրը բաւական ընդարձակ է և ժողովուրդը աշխատանքի ընդունակ:

Մի հարց ևս սրա գորահաւաքին ենթարկված ըատնիկների մասին միջնորդութիւն յարուցելն է որի մասին կը զեկուցանեմ բանաւոր:

Սրա հետ ներկայացնում եմ Արդանուճի որբանոցի անւանացուցակը և հաշիւը դեկտեմբերի<sup>12</sup>-ից միջև յունւարի 17-ը:

Լիագօր՝ Վ[արդան] Մազմանեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 915, թթ. 8-9 շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

<sup>27</sup> Ծգնաժամ:

ՀՈՎՅԱԼՆԵՍ ԹՈՒՄԱԼՅԱՆ: Կենսամատենագիտություն (2001–2020), Երևան, Հայաստանի ազգային գրադարան, 2020, 444 էջ\*:

Բանալի բառեր՝ կենսամատենագիտություն, աղբյուրագիտություն, պարբերական մամուլ, գիտական ուսումնասիրություններ, կառուցվածքային առանձնահատկություններ, թեմատիկ բաժանում, մատենագիտական նկարագրության չափորոշիչներ:

Յուրաքանչյուր կենսամատենագիտություն արտացոլում է որևէ գործչի կյանքի ու գործունեության ամփոփ պատկերը՝ միևնույն ժամանակ



գծագրելով ժամանակաշրջանը: Ընթերցողի սեղանին դրված «Հովհաննես Թումանյան» կենսամատենագիտության հերթական հատորը բացառություն չէ (կազմողներ՝ Անուշ Ամիրջանյան, Օլյա Աղայան, խմբագիրներ՝ բ. գ. Սուսաննա Հովհաննիսյան, բ. գ. թ. Մայա Գրիգորյան):

Սույն կենսամատենագիտության մեջ ներառված են 2001–2020 թթ. տպագրված բանաստեղծի ստեղծագործությունների, փոխադրությունների, թարգմանությունների, նամակների, գրաքննադատական հոդվածների, ինչպես նաև նրա կյանքին ու գործունեությանը նվիրված հրապարակումների մատենագիտական նկարագրությունները: Այս կենսամատենագիտությունը տրամաբանական շարունակությունն է Հայաստանի ազգային գրադարանի տպագրած «Հովհաննես Թումանյան: Կենսամատենագիտություն» գրքերի, որոնք հատվածաբար ներառել են 1970–2000 թթ. տպագրված նյութերի մատենագիտական նկարագրությունները: Կարծում ենք՝ բավական ընդգրկուն ծավալ կազմող այս նյութերի մեկտեղումն այսօր արդիական է և անհրաժեշտ:

Ինչպես յուրաքանչյուր կենսամատենագիտության, խնդրո առարկա մատենագիտության նպատակն է. ա. ներկա և ապագա սերունդներին հասանելի ու ընկալելի դարձնել մեծ բանաստեղծի ստեղծագործական աշխարհը, բ. բացահայտել նրա ազգային, հայրենասիրական գործունեության ենթաշերտերը, որոնք այսօր ունեն արդիական հնչեղություն և որոնց նկատմամբ պահանջարկը չի նվազում ոչ մի ժամանակաշրջանում:

Կենսամատենագիտության մեջ ընդգրկվել են միայն հայերեն և ռուսերեն նյութեր: Ամենայն հայոց բանաստեղծի գրական ժառանգությունը թարգմանվել է աշխարհի ամենատարբեր լեզուներով: Հարուստ է նաև նրան նվիրված օտարալեզու հրապարակումների ցանկը, սակայն հսկայածավալ այդ

\* Ներկայացվել է 17. IV. 2021 թ., ընդունվել է տպագրության 06. V. 2021 թ.:



նյութը դեռ կարիք ունի ուսումնասիրման, ինչն էլ առաջիկայում, հուսով ենք, կդառնա առանձին մատենագիտության թեմա:

Կենսամատենագիտությունն ունի կուռ կառուցվածք. առանձնացվել են պայմանական մեծ թեմաներ, որոնց ներքո նյութերը դասակարգվել են ըստ տարիների, իսկ տարիների մեջ պահպանվել է այբբենական դասավորության պարտադիր պայմանը:

Գրքի սկզբում տեղ է գտել Բ. Գ. Դ., թուամանյանագետ, գրքի խմբագիրներից Սուսաննա Հովհաննիսյանի առաջաբանը: Ներածական խոսքում նա անդրադարձ է կատարում բանաստեղծին նվիրված բոլոր մատենագիտություններին՝ արժևորելով յուրաքանչյուրն իր տեղում ու ժամանակի մեջ: Նախաբանը նաև ամփոփ պատկերացում է տալիս թուամանյանագիտության զարգացման ուղու մասին, որի առանձին փուլերի ամբողջացման շնորհիվ ներկա սերունդն ունի շոշափելի ձեռքբերում:

Կենսամատենագիտության մեջ նյութերը ներկայացված են պայմանական մեծ խորագրերի ներքո, որոնցից առաջինը բանաստեղծի ստեղծագործությունների ժողովածուներն ու առանձին գրքերով տպագրված ստեղծագործություններն են: 2001–2020 թթ. ընթացքում Հովհ. Թուամանյանի ստեղծագործությունները պարբերաբար վերահրատարակվել են Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Գրքի կազմման ժամանակ ձեռք բերված համագործակցության արդյունքում Հայաստանի ազգային գրադարանը համալրվել է գրեթե բոլոր հրատարակություններով, իսկ դրանց մատենագիտական նկարագրությունները ներառվել են սույն գրքում: Մանրամասնված են այդ բոլոր ժողովածուների բովանդակությունները: Սա հնարավորություն է տալիս ընթերցողին արագ կողմնորոշվել և ընտրել այն, ինչն անհրաժեշտ է իրեն: Յուրաքանչյուր ժողովածուի կամ առանձին ստեղծագործության հրատարակություն ունեցել է իր անդրադարձը մամուլում՝ գրախոսության ձևաչափով: Այդ գրախոսություններն առանձնացվել և արտացոլվել են համապատասխան գրքի մատենագիտական նկարագրությունից հետո: Կառուցվածքային նման հնարանքը թույլ է տվել միաժամանակ ծանոթանալու գրքին, ուսումնասիրել նրա բովանդակությունն ու անդրադառնալ կոնկրետ վերլուծությանը:

«Գեղարվեստական ստեղծագործությունները պարբերական մամուլում և ժողովածուներում» խորագրի ներքո առանձնացվել են բանաստեղծի պարբերական մամուլում ու ժողովածուներում տպագրված գեղարվեստական ստեղծագործությունները: Յուրաքանչյուր վերնագրի կողքին նշվել է տվյալ երկի ժանրային պատկանելիությունը: Քանի որ բանաստեղծի ստեղծագործություններն ունեն ժողովրդական ճանաչում և մեծ տարածում, այդ պատճառով դրանց քանակը բավական ընդգրկուն է: Թուամանյանին հղում են արել ամենատարբեր բնագավառների ներկայացուցիչներ, նրա ստեղծագործությունների առանձին հատվածներ օգտագործվել են որպես բնաբան տարաբնույթ գրքերի համար:

«Հողվածներ, գեկույցներ, ասույթներ պարբերական մամուլում և ժողովածուներում» խորագրով առանձնացվել են Թուամանյանի հրապարակախոսական նյութերն ու ասույթները: Հավատարիմ մնալով մատենագիտական նկարագրության չափորոշիչներին՝ կազմողները ներկայացրել են հողվածի

կամ զեկուլյցի հակիրճ բովանդակությունը, ասույթի առաջին բառերը: Այս խորագիրը բացահայտում է հայրենասեր ու ազգասեր բանաստեղծի էությունը, ով մտահոգ է իր ժողովրդի ճակատագրով: Գերակշռում են այն նյութերը, որոնց մեջ արտացոլվել են բանաստեղծի հայրենիքի, պետության, ազգի, կրթության և դաստիարակության մասին տեսակետն ու տեսլականը:

Խոսում են «Հովհաննես Թումանյանի կատարած թարգմանությունները և փոխադրությունները» խորագիրը, ուր ներառվել են բացառապես բանաստեղծի կատարած թարգմանություններն ու փոխադրությունները: Նրա ստեղծագործությունների թարգմանությունները, ինչպես նշեցինք, դեռ կարիք ունեն ուսումնասիրության: Այս թեմայի ներքո ներկայացվել են ինչպես առանձին տպագրված գրքեր, այնպես էլ պարբերական մամուլում ներկայացված առանձին երկերի թարգմանությունները: Դրանց մեջ հատկապես աչքի են ընկնում Ալ. Պուշկինի, Ն. Նեկրասովի, Գրիմմ եղբայրների ստեղծագործությունների, նաև տարբեր հեքիաթների թումանյանական թարգմանությունները, որոնք վերահրատարակվել են բազմաթիվ անգամներ, սակայն չեն կորցրել իրենց արդիականությունն ու հյուսիսի հնչողությունը:

«Նամակներ, ընծայագրեր» խորագրի ներքո ընդգրկվել են ինչպես Հովհ. Թումանյանի գրած նամակները, այնպես էլ նրան ուղղված նամակներն ու ընծայագրերը: Այս բաժինն արտացոլում է բանաստեղծի անձնական կյանքը, նրա ներընտանեկան հարաբերություններն ու հասարակական հայանպաստ գործունեությունը: Ներառվել են նամակների ժողովածուներ, պարբերական մամուլում տպագրված առանձին նյութեր: Մեկնաբանված է յուրաքանչյուր նամակի բովանդակությունը:

Առավել ընդգրկուն է «Գրքեր Հովհաննես Թումանյանի մասին» բաժինը, ուր ամփոփվել են Ամենայն հայոց բանաստեղծի կենսագործունեությանն ու ստեղծագործությանը նվիրված հետազոտությունները: Այս բաժնում ամփոփվել են միայն այն մենագրություններն ու ժողովածուները, որոնք ամբողջությամբ նվիրված են բանաստեղծին: Մանրամասն ներկայացված են բոլոր գրքերի բովանդակային շերտերը, որոնց հաջորդում են համապատասխան գրախոսությունները, եթե այդպիսիք եղել են: Վերջին 20 տարիների ընթացքում տպագրվել է 84 մենագրություն կամ գիտական ուսումնասիրություն, ինչը խոսում է բանաստեղծի անձի և ստեղծագործության նկատմամբ չմարող հետաքրքրության մասին: Առավել բեղուն են եղել հոբելյանական տարիները, հատկապես՝ 2019 թ., երբ աշխարհասփյուռ հայությունը նշում էր բանաստեղծի ծննդյան 150-ամյակը: Որոշ ուսումնասիրություններ վերահրատարակվել են՝ համապատասխան լրացումներով և հավելումներով:

Կենսամատենագիտության ամենածավալուն բաժինը կազմում են Հովհ. Թումանյանի մասին առանձին հոդվածները: Պահպանելով բոլոր նյութերի ժամանակագրական և այբբենական դասավորության սկզբունքը՝ այս բաժնում ամփոփվել են պարբերական մամուլում, առանձին ժողովածուներում, ինչպես նաև տարբեր մենագրություններում Ամենայն հայոց բանաստեղծին նվիրված հոդվածների մատենագիտական նկարագրությունները՝ շուրջ 1926 նյութ: Ի տարբերություն նախորդ գրքերի, այս բաժնում ներառվել են նաև այն ուսումնասիրությունները, որոնց մեջ ամփոփված են գրողի կյանքին ու գործունեությանը նվիրված նյութերը: Կենսամատենագիտության այս բա-

ժինն առավել ամբողջական դարձնելու նպատակով ուսումնասիրվել են Հայաստանում ու նրա սահմաններից դուրս տպագրված հայերեն և ռուսերեն պարբերականները, որոնց թիվը բավական խոսու է: Չնայած մատենագետները ջանացել են ընդգրկել բոլոր պարբերականները և ամբողջական դարձնել մատուցվող նյութը, այնուամենայնիվ, կարծում ենք, կլինեն որոշ աղբյուրներ, որոնք տարբեր պատճառներով չի հաջողվել ուսումնասիրել:

Բանաստեղծի և հայ մշակույթի ամուր կապի մասին է խոսում «Հովհաննես Թումանյանը արվեստում» խորագիրը, ուր ամփոփվել են արվեստի տարբեր ճյուղերում արտացոլված նրա ստեղծագործությունների մասին նյութերի՝ գրքերի և հոդվածների մատենագիտական նկարագրությունները: Արվեստի գրեթե բոլոր բնագավառներում կարելի է տեսնել ու գտնել Թումանյանի շունչն ու հոգին:

Կենսամատենագիտության մեջ առանձնացված են նաև «Հովհաննես Թումանյանի թանգարանները», «Հովհաննես Թումանյանը գեղարվեստական գրականության մեջ» բաժինները՝ համապատասխան թեմատիկ նյութերով, որոնք, ճիշտ է, նույնքան ծավալուն չեն, ինչպես նախորդները, սակայն կարևոր են բանաստեղծին նոր տեսանկյունից մեկնաբանելու առումով:

Գրքի վերջում առկա է «Անձնանունների ցանկ», որը կազմված է ըստ մատենագիտական նկարագրությունների հերթական համար(ներ)ի: Պահպանված են անձնանունների գրությունների ձևերն ու ուղղագրությունը: Եթե նույն անձնանունը գրվել է երկու ուղղագրությամբ՝ դասական և ժամանակակից, ցանկի մեջ նախապատվությունը տրվել է ժամանակակից ուղղագրությանը: Կիրառվել է մատենագիտության մեջ ընդունված «տես»-ի սկզբունքը՝ անձնանունների ցանկն ավելի ամբողջական դարձնելու նպատակով: Անձնանունները դասավորված են ըստ ազգանունների այբբենական կարգի: Հասկանալի պատճառով անձնանունների ցանկում չի ընդգրկվել Հովհաննես Թումանյանի անունը:

«Բովանդ» ծանոթագրության ներքո ամփոփվել է բովանդակությունը: «Գրախոս» ծանոթությամբ ներկայացվել է տվյալ գրքի կամ ժողովածուի վերաբերյալ պարբերականներում, գիտական ամսագրերում տպագրված գրախոսությունները՝ դրանք տեղադրելով համապատասխան գրքի մատենագիտական նկարագրության վերջում: Մատենագիտական նկարագրությունների մեջ կիրառված փակագծերում [ ], արտացոլվել են կազմողների ծանոթագրությունները: Նպատակը՝ հստակ պատկերացում տալ այն նյութերի մասին, որոնց վերնագրերը լիովին չեն բացահայտում բովանդակությունը:

Կենսամատենագիտության կազմման համար ուսումնասիրվել են Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուները: Սակայն ուսումնասիրությունը միայն այս սահմանում չի պարփակվել: Կազմման աշխատանքների ընթացքում մատենագետները համագործակցել են Հայաստանում և Թբիլիսիում գործող գիտական, հասարակական, մշակութային կառույցների ու կազմակերպությունների, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, տարբեր բուհերի համապատասխան ամբիոնների, ՀՀ տարբեր հրատարակչությունների հետ, ինչը հնարավորություն է տվել առավել ամբողջական դարձնել աշխատանքը: Նման մոտեցման շնորհիվ գրքում արտացոլվել են վերջին 20 տարիներին տպագրված գրեթե բոլոր հրատարակումները:

*Կարծում ենք՝ կատարված աշխատանքը խոսում է Ամենայն Հայոց բանաստեղծի անձի և ստեղծագործության նկատմամբ չմարող հետաքրքրության մասին: Փոխվում են ժամանակները, մինչդեռ բոլոր սերունդների համար Թումանյանը մնում է անանց արժեք:*

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բ. գ. թ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի գիտական քարտուղար, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ XIX–XX դդ. հայ գրականության պատմություն, հայ տպագրության, մատենագիտության և մամուլի պատմություն: Հեղինակ է 26 հոդվածի: grigoryan\_maya@mail.ru

ԱՆԱՅԻՏ ՉԹՅԱՆ. Հայ թատրոնը Եգիպտոսում: Ակնարկներ սփյուռքահայ թատրոնի պատմության: Գիրք 3, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, 272 էջ + 1 մամուլ նկ.\*:

Բանալի բառեր՝ եգիպտահայ թատրոն, «Եգիպտահայ դրամատիկ» խումբ, «Եգիպտահայ կոմեդի» թատերախումբ, եգիպտահայ մամուլ:

Ինչպես հայտնի է, Հայագիտության զարգացման հայեցակարգի՝ «Լ. Ընդհանուր դրույթներ» հոդվածի առաջին կետում ամրագրված է. «Հայագիտության կարևոր բնագավառներից են սփյուռքագիտությունը, հարևան ժողովուրդների հետ հայերի պատմամշակութային հարաբերությունների ուսումնասիրությունը»:



Միևնույն ժամանակ՝ սփյուռքահայ արվեստի ուսումնասիրությունը միշտ եղել է Արվեստի ինստիտուտի գիտական հետազոտությունների կարևոր ուղղություններից մեկը, որի արդյունքում հրատարակվել է պատկառելի գրականություն: Ջգալի է ինստիտուտի ներդրումը սփյուռքահայ թատրոնի ուսումնասիրության գործում: «Ակնարկներ սփյուռքահայ թատրոնի պատմության» մատենաշարի շրջանակներում 1982-ին լույս է տեսել առաջին հատորը՝

Գառնիկ Ստեփանյանի «Փրանսահայ թատրոնը» ուսումնասիրությունը, իսկ 2008-ին հետմահու հրատարակվել է նրա երկրորդ գիրքը՝ «Ամերիկահայ թատրոնի պատմությունը»: 2011-ին լույս է տեսել Աննա Ասատրյանի «Լիբանանահայ թատրոնը» մենագրությունը:

ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի աջակցությամբ վերջերս ընթերցողի սեղանին դրվեց Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Անահիտ Չթյանի «Հայ թատրոնը Եգիպտոսում» մենագրությունը՝ Արվեստի ինստիտուտի «Ակնարկներ սփյուռքահայ արվեստի պատմության» մատենաշարի երրորդ հատորը, որը հեղինակը նվիրել է ծնողների՝ պատմաբան Վիկտորյա Ղուկասյանի և քիմիկոս Գուրգեն Չթյանի հիշատակին:

Եգիպտահայ թատրոնի ուսումնասիրությամբ Անահիտ Չթյանը զբաղվել է երկար տարիներ: Գիտական պրպտումների հանրագումարը դարձած մենագրության մեջ նա ուրվագծել է հետազոտվող շրջանի համապատկերը, ներկայացրել Եգիպտոսի հայ թատրոնի կազմավորմանն ու առաջընթացին նպաստած նախադրյալները և պատմական միջավայրը:

\* Ներկայացվել է 23. VI. 2021 թ., ընդունվել է տպագրության 01. VII. 2021 թ.:

Ինչպես հայտնի է, եգիպտահայ թատերական արվեստը, լինելով հայ թատրոնի բաղկացուցիչ մասը, անցել է ինքնահաստատման բարդ ուղի՝ հիմնականում ընդգրկելով 1900–1960-ական թվականների ժամանակահատվածը: Եգիպտոսի հայ թատերական շարժումը սերել է համայնքի մշակութային և պատմական ավանդույթներից՝ սկզբում հանդես գալով որպես բարեգործական միությունների գործունեության ասպարեզներից մեկը: Հետագայում թատրոնը, ձեռք բերելով ինքնուրույնություն, գեղագիտական ուրույն նկարագիր և խաղաոճ, հասավ որոշակի պրոֆեսիոնալ մակարդակի՝ կրելով թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ թատերական արվեստի ոճական ուղղությունների ազդեցությունը:

1920-ական թվականներին համայնքի թատերական շարժման մեջ նշմարված զարգացման տարբեր միտումներն արտահայտվեցին «Եգիպտահայ դրամատիկ» և «Եգիպտահայ կոմեդի» թատերախմբերի, ինչպես նաև այլ խմբերի ու տարբեր անհատների գործունեության մեջ: Իսկ թատերագիտական հմուտ մտքի ուղղորդումը համայնքում ձևավորված շարժումը տարիների ընթացքում կրթեց և դաստիարակեց բեմարվեստին գիտակ, բարձրաճաշակ հասարակություն:

Եգիպտահայ թատրոնի ուսումնասիրությունը կարևորվում է նրանով, որ Եգիպտոսում կողք կողքի ապրում էին տարբեր ազգությունների ու դավանանքների պատկանող ժողովուրդներ, քաղաքակրթության տարբեր մակարդակներում գտնվող ազգությունների ներկայացուցիչներ: «Եգիպտոս, – նշում է Արշակ Ալպոյաճյանը, – մարդկային խառնարան մըն է, ուր կարելի չէ ընդհանուր համաչափություն մը և միջին մը գտնել քաղաքակրթական տեսակետեն: Հոս ամեն աստիճանի զարգացման վրա մարդ կա և քաղաքակրթական զանազան ժամանակամիջոցները պատկերացված են քով քովի, վասնզի հոս կ'ապրի նախամարդուն քաղաքակրթական աստիճանին վրա ապրող մարդը՝ քովը շոգիին և էլեկտրականության տիրապետող քաղաքակիրթ մարդուն» (էջ 7):

Աշխատությունը բաղկացած է առաջաբանից, չորս գլուխներից՝ «Եգիպտահայ թատրոնի սկզբնավորումը (1885–1909 թթ.)», «Ինքնահաստատման տարիներ (1910–1920-ական թթ.)», «Պրոֆեսիոնալ թատրոն (1924–1930-ական թթ.)» և «Պրոֆեսիոնալ թատրոն. անկումը և դրա պատճառները (1932–1960-ական թթ.)» և վերջաբանից:

Եգիպտահայ թատրոնի ուսումնասիրության ընթացքում Ա. Չթյանը ղեկավարվել է այն սկզբունքով, որ «Եգիպտահայ, ինչպես նաև Սփյուռքի ցանկացած թատրոն, գործելով օտար միջավայրում, մշակույթի ընդհանուր ոլորտում ձեռք է բերել բացառիկ նշանակություն: Եթե մշակույթի դերը, ի վերջո, ընկալվում էր իբրև հայապահպանմանը նպաստող կարևոր գործոն, ապա թատրոնն այս տեսակետից, լինելով մայրենի լեզվի կրողը, ստացավ մի նոր առաքելություն» (էջ 5):

Ուսումնասիրության մեջ Եգիպտոսի հայ համայնքի թատերագրությունը դիտվել է նաև իբրև գաղութի թատերական կյանքի սկզբնավորման և զարգացման անհրաժեշտ նախապայման: Հեղինակի կարծիքով դերասանական առաջատար ուժերը՝ Օննիկ Վոլթեր, Բեատրիս Եգենյան, Արփիար Վարդյան, Աստղիկ Եգենյան (Վարդյան), Խաչիկ Սանդալյան, Արաքսի Օհանյան, Լևոն

Շիշմանյան, Խաչիկ Նորիկյան և այլք, իբրև արվեստագետներ կայացան տեղի թատերագրության շնորհիվ: Եվ որպես արդեն իսկ սեփական դիմագիծն ու խաղաոճն ունեցող դերասաններ՝ նրանք մասնակցեցին Եգիպտոս եկած Սիրանուշի, Հովհաննես Զարիֆյանի, Հովհաննես Աբելյանի, Արմեն Արմենյանի և Եկատերինա Դուրյան-Արմենյանի հյուրախաղային ներկայացումներին: Նկատելով, որ «նշանավոր արվեստագետների ներկայությունն ինքնին համայնքի թատերական կյանքի յուրօրինակ հաստատումն էր, դրա զարգացման գրավականը»՝ Ա. Չթյանը կարևորում է այն հանգամանքը, որ նրանց արվեստը նպաստեց արևելահայ մշակույթի մասին եղած պատկերացումների վերանայմանը: «Սկիզբ դրվեց պատմական մի անհրաժեշտության, երբ վերանում էր նույն ժողովրդի երկու հատվածների մշակույթը միմյանցից բաժանող անըրպետը: Հայ մշակույթը, մասնավորապես թատրոնը, սկսեց ընկալվել որպես մեկ միասնություն: Այս երևույթը պետք է գնահատել իբրև թատերական գործիչների և տեղի դերասանական խմբերի միասնական գործունեության հիմնական ձեռքբերում» (էջ 6):

Համայնքի թատրոնն ուսումնասիրելիս Ա. Չթյանը փորձում է պարզաբանել, թե ի՞նչ պայմաններում է գործել հայ թատրոնն այդ յուրօրինակ խառնարանում, որքանո՞վ են այլ ազգերի մշակույթը, թատրոնը նպաստել կամ արգելակել հայ թատրոնի գործունեությանը, ինչպես նաև բացահայտել, թե ի՞նչ դեր է ունեցել թատրոնը գաղութի հայապահպանման գործում և որքանո՞վ է նպաստել ազգային ավանդույթների, մշակույթի և լեզվի գոյատևմանը, ի՞նչ տեղ է գրավում Եգիպտոսի հայ թատրոնը Սիյուտքի թատրոնի ընդհանուր համակարգում, ինչպե՞ս է առնչվել երկրի մշակութային և հասարակական վայրիվերումներին:

Աշխատության մեջ հեղինակը հատուկ ուշադրություն է հատկացրել 1920–1940-ական թվականների թատերական կյանքին, քանի որ դրանք եգիպտահայ թատրոնի վերելքի տարիներն էին:

Մենագրության կարևոր արժանիքներից է այն, որ Ա. Չթյանը լայնորեն օգտագործել է եգիպտահայ մամուլը՝ մասնավորաբար «Արև», «Արաքս», «Լուսաբեր», «Սավառնակ», «Հուսաբեր», «Ազատ խոսք», «Արչալույս» և այլ պարբերականներ, որոնք արձագանքել են ոչ միայն թատերական, այլև մշակութային կյանքի անցուղարձին: Թատերագետը օգտվել է նաև Բարսեղ Աբովյանի, Եվգենիա (Ժենյա) Արիստակյան-Պոլյակինայի, Խաչիկ Սանդալժյանի, Էոժեն Բաբազյանի տպագիր և անտիպ հուշերից, Թեոդիկի «Ամենուն տարեցույցից», Հարություն Մանավյանի «Սարկավագին եգիպտահայ տարեցույցից» և այլ հրապարակումներից: Եգիպտահայ համայնքի հասարակական-քաղաքական կյանքի մասին բազմակողմանի տեղեկություններ են քաղվել նաև Ա. Ալպոյաճյանի «Արաբական Միացյալ Հանրապետության Եգիպտոսի նահանգը և հայերը» ու Հ. Թոփուզյանի «Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն» աշխատություններից:

Աշխատությունը տեղ-տեղ ստանում է միջգիտակարգային բնույթ: Հեղինակը, եգիպտահայ թատերական կյանքը ներկայացնելուն զուգահեռ, անդրադառնում է հայ երաժիշտների՝ Եգիպտոսում կայացած հյուրախաղերին: Այսպես՝ Առաջին գլխում հեղինակն անդրադառնում է Սերովբե Պենկյանի օպերետային խմբի եգիպտական հյուրախաղերին, որոնց ընթացքում 1885 թ.

Հունվարի 20-ին Կահիրեի «Էգբեկիե» թատրոնում ներկայացվեց Տիգրան Չուխաճյանի «Լեբլեբիջի Հոր-հոր աղան», իսկ հյուրախաղերը շարունակվեցին Ալեքսանդրիայում «Ալհամբրա» թատրոնում (էջ 13–15): Երկրորդ գլխում ընթերցողի առջև հառնում են Կոմիտասի 1911 թվականին Ալեքսանդրիայում տեղի ունեցած համերգները, որոնց առիթով Տիգրան Կամսարականի իր բաց նամակում գրեց. «Մենք կկարծեինք թե հայ կրոնավորը, որ էջմիածնեն կուգա՝ մյուսոն միայն կբերե, Դուք Մասիսն ու Արագածը փոխադրեցիք հոս պահ մը: Ո՞վ ըսավ, թե լեռները չեն քայլեր ...» (էջ 49): Ապա անդրադարձ կա Արմենակ Շահմուրադյանի ելույթներին՝ Կահիրեում և Ալեքսանդրիայում (էջ 49–50):

Հետազոտության մեջ տեղ գտած լուսանկարները, որտեղ ընդգրկվել են եգիպտահայ ու մշակութային գործիչների լուսանկարները, ներկայացումներից մի քանիսի ազդագրերի վերատպուլթյունները, ինչպես նաև եգիպտահայ թատերական գործիչների՝ Ալեքսանդր Սարուխանի կատարած երգիծանկարները, առավել լիարժեք են դարձնում աշխատությունը:

Այսպիսով՝ Անահիտ Չթյանի «Հայ թատրոնը Եգիպտոսում» մենագրությունը կարևոր ներդրում է սփյուռքագիտության ասպարեզում և անհրաժեշտ քայլ՝ սփյուռքահայ թատրոնի լիակատար պատմության ստեղծման ճանապարհին:

Ա.Ն.ՆԱ. ԱՍԱՏԻՅԱՆ


Արվ. դ., պրոֆ., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, երաժշտության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունը՝ նոր և նորագույն շրջանի հայ երաժշտության ուսումնասիրություն: Հեղինակ է 12 մենագրության և ավելի քան 180 հոդվածի: instart@sci.am



ԱՆԱՅԻՏ ՅԱՅՅԱՄԱՍԻՅԻ. Սադեղ Յեղայաթ. կյանքը և գիտագրական ժառանգությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, 254 էջ\*:

Բանալի բառեր՝ Իրան, Սադեղ Հեղայաթ, նովել, ավանդույթ, ազգագրություն, բանագիտություն, Խայամ, մշակույթ:

Վերջերս լույս ընծայվեց բ. գ. թ. Անահիտ Յահյամասիհի ուսումնասիրությունը՝ նվիրված XX դ. պարսից մեծ արձակագիր, գիտական և հասարակական մտքի ջատագով Սադեղ Հեղայաթի կյանքին, գեղարվեստական արձակին ու ազգագրական հետազոտություններին: Աշխատությունը ներառում է չորս գլուխ, որոնցում լուսաբանվում են Հեղայաթի ժամանակաշրջանն ու Իրանի սոցիալ-պատմական իրողությունները, այդ հոլովույթում կայացած նրա գրական արձակը, բանագիտության ձևավորումը XIX–XX դդ. Իրանում և Հեղայաթի դերն այդ կարևոր դիսցիպլինի գարգացման գործում: Աշխատության երկու ընդարձակ հավելվածները նվիրված են Օմար Խայամի քառյակների հեղայաթյան ընկալմանը, հայ և պարսիկ մեծ բանագետների համեմատական քննությունը, ինչպես նաև հետազոտողի կողմից կատարված Հեղայաթի մի քանի պատմվածքի թարգմանությունը:



Կարելի է փաստել, որ հայ իրանագիտության մեջ մինչ օրս Հեղայաթն այս համատեքստում չի ներկայացվել: Ծիշտ է, մեր ընթերցողը թարգմանված գեղարվեստական արձակում զգացել է բանահյուսական մտքի ու խոսքի, ժողովրդական ֆարսիզմի ընդգծված առկայությունը, հատկապես՝ սոցիալական ցածր խավի բառապաշարում, սակայն անտեղյակ է եղել պարսից բանագիտության կազմակերպման և կայացման գործում Հեղայաթի մեծ ավանդից: Այս տեսանկյունից ուսումնասիրությունը հետաքրքրություն է ներկայացնում իրանագիտական հայալեզու հետազոտությունների ծիրում:

Հեղայաթ երևույթը ճիշտ ներկայացնելու համար անհրաժեշտ էր անդրադարձ վերջին Ղաջարյանների և Փահլավիների վարած կայսերակենտրոն քաղաքականությունը, ծանոթություն Իրանի պատմության բարդ, բայց և առաջադիմական հատվածներից մեկի՝ վեստերնիզացիայի ու լուսավորչականության շրջանին, քաղաքական վերնախավի և մտավորականության հայացքներին: Այդ է պատճառը, որ հեղինակն իր հետազոտությունը սկսում է Հեղայաթի՝ հախուռն, տպավորություններով հագեցած և դրամատիկ կենսագրական մանրամասներից: Հասկանալի է դառնում, որ նա հեռու էր լուրջ քաղաքականությունից և գեղագիտական ընկալումների վեկտորն որոշակիոր-

\* Ներկայացվել է 24. V. 2021 թ., ընդունվել է տպագրության 11. VI. 2021 թ.:



միցս հրատարակված այդ ժողովածուն մինչ օրս համարվում է հեղինակավորներից մեկը:

Բանահյուսական խոսքի տարածման հեղայաթյան ազգանվեր գործը մեր հեղինակին հուշել է համեմատել երկու մեծագույն բանահավաքների՝ Ս. Հեղայաթին և Գ. Սրվանձտյանցին (էջ 189): Կարելի էր նշել, որ համեմատությունը զուտ տիպաբանական է, այսինքն՝ չկան ազդեցության աղբյուրներ: Նմանությունը պատմական ժամանակի պահանջն էր, ազգանվեր անհատների գիտակցված նվիրումը, արևելյան մտածողության ու արժեհամակարգի որոշ էական ընդհանրությունները, ինչպես նաև տարբերությունները և այլն:

Կարծում ենք՝ կարելի էր կանգ առնել Հեղայաթի ծայրահեղ հակադիր մոտեցումների խնդրի վրա. ազգագրական աշխատանքներում նշել նրա կողմից ավանդույթների պահպանման ջանքերը, իսկ փոքր արձակում՝ նովելում կամ պատմվածքում՝ ավանդույթներին հակասող, եվրոպական ավանգարդի ջատագովումը: Ակնհայտ է, որ գրողը մի կողմից վերադարձնում էր ազգային սովորույթն ու մոռացվող ծեսերը, ամրապնդում ավանդույթը, իսկ մյուս՝ գեղարվեստական արձակում՝ ստեղծում հասարակ ժողովրդի կողմից դժվար ընկալվող (Քոռ բուն) գրական մոդեռնի համաշխարհային գլոբալիզացիաներ:

Ճիշտ կլիներ փաստարկել և հիմնավորել Հեղայաթի վերլուծվող աշխատությունների ընտրության չափանիշները:

Այսպիսով, հատկապես պարսից մասնագետների և հետազոտողների աշխատությունների լայն ընդգրկմամբ, ընթերցողի սեղանին է դրված գիտական նորույթ պարունակող գիրք, որի թանձրույթն է պարսից ազգագրական, բանահյուսական նյութի հավաքման, համակարգման և որպես գիտություն ձևավորման գործում Սադեղ Հեղայաթի դերի բացահայտումն ու արժևորումը: Գծագրվում է Սադեղ Հեղայաթ-Ֆենոմենը, իր նախասիրությունների մեջ երբեմն ծայրահեղ, ճիշտ և ճիշտ իր կյանքի ու մահվան դրամատիկ ընտրության պես՝ անսպասելի:


ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈՉՄՈՅԱՆ

Բ. Գ. Դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի գլխավոր գիտաշխատող, արևելագետ-բանասեր, իրանագետ-մեդիևիստ, թարգմանիչ: Գիտական հետաքրքրությունները՝ պարսից գրականություն, իսլամական քաղաքակրթության, համեմատական գրականագիտության, արևելյան միջնադարյան աշխարհի պատմամշակութային և աղբյուրագիտական հարցեր: Հեղինակ է 7 գրքի և 63 հոդվածի: kozmoyan@mail.ru

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, Հ. 2, ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «Գիտութ-  
յուն» հրատ., 2020, 436 էջ +16 էջ նկ. \*:

Բանալի բառեր՝ Արևելյան աղբյուրագիտություն, Արամ Տեր-Ղևոնդ-  
յան, Հայագիտություն, արևելագիտություն, արաբական աղբյուրներ,  
թուրքական աղբյուրներ, պարսկական աղբյուրներ, ասորական աղբ-  
յուրներ, մատենաչար, պարբերական մամուլ:

Երեսուներկուամյա դադարից հետո՝ 2020 թ., 2-րդ հատորի հրատարակ-  
մամբ<sup>1</sup> վերածնվեց «Արևելյան աղբյուրագիտություն» հույժ կարևոր պարբե-  
րականը: Խորհրդանշական է, որ այս հատորը



նվիրված է նրա հիմնադիրներից վաստակաշատ  
Հայագետ-արևելագետ Արամ Տեր-Ղևոնդյանի 90-  
ամյակին և պարունակում է նրա հոբելյանին  
նվիրված՝ «Արևելյան աղբյուրագիտությունը և  
պատմագրությունը ԻԱ դարասկզբի Հայաստա-  
նում միջազգային գիտաժողովի նյութերը»<sup>2</sup>:

«Արևելյան աղբյուրագիտություն» պարբերա-  
կանը հիմնադրվել է ՀՀ ԳԱ արևելագիտության  
ինստիտուտում: 1-ին հատորի պայմանական առա-  
ջաբանում կարդում ենք. «Վերջին տարիներին մեզ  
մոտ էապես աշխուժացել է թե՛ արևելյան լեզուներ  
ով գրական կոթողների ու պատմական սկզբ-

նաղբյուրների ուսումնասիրման ու հրատարակման, թե՛ Արևելքի երկրների  
մասին հայկական աղբյուրների մշակման ու հրատարակման գործը: Որքան  
էլ այս նյութերը մշակել և օգտագործել են հայ հետազոտողները համապա-  
տասխան արևելյան երկրների պատմությունն ու մշակույթը լուսաբանելու  
առումով, դեռևս մնում են կարևոր ու արժեքավոր նյութեր, որոնք պետք է ի  
հայտ բերվեն և օգտագործվեն հետազոտողների կողմից»<sup>3</sup>:

Պարբերականի հիմնադրմանը նախորդած տասնամյակները, հիրավի,  
աննախադեպ էին օտար, այդ թվում՝ արևելյան աղբյուրների հայերեն թարգ-  
մանությունն առումով: «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին»

\* Ներկայացվել է 28. IV. 2021 թ., ընդունվել է տպագրության 01. VI. 2021 թ.:

<sup>1</sup> Հատորը լույս է տեսել ՀՀ ԳԱԱ Հայագիտական ուսումնասիրություն-  
ները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի միջոցներով:

<sup>2</sup> Տեխնիկական պատճառներով ժողովածուից դուրս մնացած երկու հոդված-  
ներ տպագրվել են «Բանբեր Մատենադարանի» պարբերականի 2020 թ. լույս  
տեսած 30-րդ համարում. Ն. Հ ա կ ո բ յ ա ն. Քուստ-ի Կապկոհ միավորը և  
Դվինը (ըստ հնագիտական հետազոտությունների) (էջ 130–141) և Ա. Ժ ա մ -  
կ ո չ յ ա ն. Դվինի ամիրայությունը և Շեղդադյանները (էջ 142–153):

<sup>3</sup> Արևելյան աղբյուրագիտություն, հ. 1, Երևան, 1988, էջ 6:

մատենաշարով լույս ընծայվեցին թուրքական, արաբական, ասորական, հունական և բյուզանդական բազմաթիվ սկզբնաղբյուրներ, որոնք էապես նպաստեցին հայագիտության, ինչպես նաև հայաստանյան արևելագիտության զարգացմանը: Այս աղբյուրների՝ գիտական ծանոթագրություններով օժտված հայերեն թարգմանությունները մեծապես հարստացրին հայագիտության սկզբնաղբյուրային շտեմարանը՝ խթանելով նոր հետազոտությունների իրականացումը: Ահա հենց այս ուսումնասիրությունները մեկտեղելու և նրանց շարունակականությունն ապահովելու նպատակով է, որ հիմնվեց «Արևելյան աղբյուրագիտություն» մատենաշարը:

Հիրավի առանցքային է եղել Ա. Տեր-Ղևոնդյանի ներդրումն «Արևելյան աղբյուրագիտություն» պարբերականի ստեղծման գործում: Բավական է նշել, որ նրա անժամանակ մահվան (1988 թ.) պատճառով 1-ին հատորի լույսընծայումից հետո պարբերականը դադարեց հրատարակվել: Մատենաշարի հիմնադրմանը նախորդել էր ԳԱ արևելագիտության ինստիտուտում նույնանուն գիտահետազոտական խմբի, ապա՝ բաժնի ստեղծումը, որը 1983–1988 թթ. գլխավորել է Ա. Տեր-Ղևոնդյանը: Ինչպես «Արևելյան աղբյուրագիտություն» պարբերականը, գիտական բաժինը ևս ղեկավարի մահվանից կարճ ժամանակ անց դադարեց գործել՝ տարրալուծվելով ինստիտուտի մյուս ստորաբաժանումների մեջ:

Ա. Տեր-Ղևոնդյանն իր գիտական գործունեությունը ծավալել է ՀՀ ԳԱԱ պատմության և արևելագիտության ինստիտուտներում, որոնց նախորդ դարի գիտական ձեռքբերումների մեջ կարևոր տեղ են զբաղեցնում նրա մեծարժեք աշխատությունները: Ակադեմիական այս հաստատությունները մշտապես բարձր են գնահատել ականավոր գիտնականի վաստակը: Պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ 2013 թ. նշվեց Ա. Տեր-Ղևոնդյանի 85-ամյակը, որի առթիվ կազմակերպված երիտասարդական միջազգային գիտաժողովի նյութերն ամփոփվեցին 2014 թ. լույս տեսած «Հայաստանը և արաբական աշխարհը» ժողովածուում: Արևելագիտության ինստիտուտը, Մաշտոցյան Մատենադարանը և ԵՊՀ արաբագիտության ամբիոնը 2019 թ. համատեղ կազմակերպեցին Ա. Տեր-Ղևոնդյանի 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, որի նյութերը, ինչպես վերը նշեցինք, ընդգրկվեցին գրախոսվող հատորում: Գիտաժողովի կազմակերպման և «Արևելյան աղբյուրագիտություն» պարբերականի 2-րդ հատորի հրատարակության գործում մեծ է նրա խմբագրակազմի անդամների, հատկապես՝ պ. գ. դ. Ազատ Բոգոյանի, պ. գ. դ. Քրիստինե Կոստիկյանի և պ. գ. թ. Գեորգի Միրզաբեկյանի ներդրումը, որոնց ջանադիր աշխատանքի շնորհիվ գիտաժողովն ունեցավ մասնակիցների լայն շրջանակ՝ ներառելով ինչպես հայաստանյան, այնպես էլ արտասահմանի նշանավոր հայագետների, իսկ ներկայացվող հատորն էլ օժտվեց մեծարժեք ուսումնասիրություններով:

Ա. Տեր-Ղևոնդյանի հիշատակին յուրահատուկ հարգանքի տուրք է ոչ միայն «Արևելյան աղբյուրագիտություն» մատենաշարի վերականգնումը, այլև Արևելագիտության ինստիտուտում նրա ղեկավարած բաժնի վերաբացումը (այն այժմ կոչվում է «Արևելյան աղբյուրագիտության և պատմագրություն»):

Խորհրդային տարիներին արևելյան աղբյուրների հայերեն թարգմանությունների և արևելագիտության ոլորտում արձանագրված ձեռքբերումների շնորհիվ գիտություն այդ բնագավառը ոչ միայն հուսալիորեն ամրակայեց իր դիրքերը, այլև հետագա զարգացման լայն հնարավորություն ստացավ: Հատկապես վերջին տարիներին Մերձավոր Արևելքում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացներն ինչպես քաղաքական, այնպես էլ գիտական շրջանակներում առավել մեծացրել են հետաքրքրությունն արևելագիտության նկատմամբ: Ուրախալի է, որ Արևելքի նորագույն շրջանի պատմությանն առնչվող ուսումնասիրությունների կողքին, որոնք զգալի տեղ են զբաղեցնում հայաստանյան արդի արևելագիտության մեջ, նկատելիորեն աճել են գիտության այդ ոլորտի միջնադարյան շրջափուլին վերաբերող հետազոտությունները: Ուստի ինչպես «Արևելյան աղբյուրագիտություն» մատենաշարի հիմնադրման ժամանակ, այնպես էլ այսօր կա միջնադարյան արևելագիտության շարունակական զարգացման հուսալի նախադրյալներ ստեղծելու անհրաժեշտություն: Այս առումով, հիրավի, կարևոր ձեռքբերում է «Արևելյան աղբյուրագիտություն» պարբերականի վերականգնումը:

«Արևելյան աղբյուրագիտություն» 2-րդ հատորում ընդգրկված են թե՛ հայագիտական և թե՛ արևելագիտական (արաբագիտություն, իրանագիտություն, թուրքագիտություն, կովկասագիտություն և այլն) բնույթի հոդվածներ, որոնցում կան ինչպես աղբյուրագիտական, այնպես էլ գիտական այս կամ այն թեմային առնչվող ուսումնասիրություններ:

Հոդվածներից որոշներն առնչվում են Ա. Տեր-Ղևոնդյանի գործունեությանը և նրա գիտական հետաքրքրությունների շրջանակին, որը բավական ընդգրկուն է: Հայագիտության մեջ նրա ավանդը հանգամանորեն արժևորված է Փերար Դեղեյանի [“Aram Ter-Ghévondian (1928–1988): un héritage, une oeuvre, une transmission” (Ֆրանսերեն) – «Արամ Տեր-Ղևոնդյան (1928–1988). Ժառանգությունը, գործը, վաստակը, էջ 5–19 (հայերեն) հոդվածում: Նա Ա. Տեր-Ղևոնդյանի գիտական վաստակը գնահատելիս առանձնակի կարևորում է մի քանի հանգամանք՝ արևելյան ու եվրոպական մի շարք լեզուների փայլուն իմացությունը, հիմնավոր կրթությունը և, իհարկե, ժամանակի ականավոր հայագետներից Հրաչյա Աճառյանի ու Հովսեփ Օրբելու բարերար ազդեցությունը նրա գիտական ճանապարհի մեկնարկին: Հոդվածում բարձր է գնահատված Ա. Տեր-Ղևոնդյանի ներդրումն արաբական աղբյուրները հայերեն թարգմանելու և գիտական շրջանառության մեջ դնելու գործում: Առանձնակի կարևորվում են նրա ձեռքբերումները Հայաստանում արաբական տիրապետության ժամանակահատվածի, ինչպես նաև՝ Բագրատունյաց թագավորության և Արաբական խալիֆայության փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրման ուղղությամբ: Ծավալուն անդրադարձ է կատարված վաղմիջնադարյան Հայաստանի նախարարական համակարգի վերաբերյալ ականավոր գիտնականի հիմնարար ուսումնասիրություններին, որոնք մինչ օրս լայնորեն օգտագործվում են միջնադարագիտական հետազոտություններում:

Գրիգոր Լուսավորչի «Վարք»-ի արաբերեն նոր, ամբողջական բնագրի հայտնաբերմամբ ու այն հայերեն թարգմանությամբ գիտական շրջանառության մեջ դնելով Ա. Տեր-Ղևոնդյանն անգնահատելի ներդրում կատա-

րեց ազաթանգեղոսագիտության ոլորտում<sup>4</sup> ինչը, ըստ պատշաճի, գնահատված է Ալեքսան Հակոբյանի «Հայոց Դարձի մանրամասներն ըստ Գրիգոր Լուսավորչի «Վարքի» արաբերէն տարբերակի» հոդվածում (էջ 34–52): Հատկապես կարևոր է նրա այն դիտարկումը, որ ազաթանգեղոսագիտության մեջ «Արամ Տէր-Ղևոնդյանի ուսումնասիրությունները նաև ցոյց տուեցին, որ Ազաթանգեղոսի երկի նոր խմբագրությունների ի յայտ գալուց յետոյ հիմնաւոր ձեւով ապացուցւում է պատմահայր Մովսէս Խորենացու տեղեկությունների հաւաստիութիւնն այն դէպքերի մեծ մասում, երբ նա յղում է կատարում Ազաթանգեղոսին, սակայն Ազաթանգեղոսի «ազգային» տարբերակում տուեալ սիւժէները բացակայում են» («Հայոց Դարձի մանրամասներն ըստ Գրիգոր Լուսավորչի «Վարքի» արաբերէն տարբերակի», էջ 36):

Հիրավի վիթխարի է Ա. Տեր-Ղևոնդյանի ավանդը Հայ-արաբական հարաբերությունների, հատկապես՝ դրանց վաղմիջնադարյան շրջափուլի պատմության ուսումնասիրության ոլորտում<sup>5</sup>: Նրա գիտական ձեռքբերումները լավագույնս դիմացել են ժամանակի քննությունը և այսօր էլ ուղենշային են հայագիտության այդ բնագավառում: Այդ շարքից է, օրինակ, նրա բացահայտումն առ այն, որ հայերին Մուհամմադ մարգարեի տված արտոնագիրը հրովարտակը, որը Հայ մատենագրական ավանդույթում հայտնվել է Սամուել Անեցու «Ժամանակագրութեան» միջոցով, կազմել և հայերին է շնորհել ոչ թե իսլամի հիմնադիրը, այլ նրա անվանակից, Արմինիայի կառավարիչ Մուհամմադ իբն Մրվանը VIII դարի սկզբին: Այսինքն՝ Սամուել Անեցին փոխարքային անունը շփոթել է Մուհամմադ մարգարեի անվան հետ: Ա. Տեր-Ղևոնդյանի այս կարևոր եզրակացությունը տեղ է գտել գրախոսվող ժողովածուի հոդվածագիրներից Գայանե Մկրտումյանի «Մատենադարանի արաբատառ ֆոնդի № 358 ձեռագիր-պայմանագիրը Հայ-մահմեդական հարաբերությունների համատեքստում» աշխատանքում (էջ 257–269), որտեղ հանգամանորեն քննվել են ինչպես հոդվածի խորագրում հիշվող ձեռագիրը, այնպես էլ նրա ընդօրինակություններն ու թարգմանությունները, որոնք ևս պահվում են Մաշտոցյան Մատենադարանի հավաքածուներում:

Քրիստինե Կոստիկյանի «Ֆազլի բեկ Իսֆահանիի Տարեգրության հաղորդումները Արևելյան Հայաստանի ժէ դարի պատմության որոշ հարցերի շուրջ» ծավալուն հոդվածում (էջ 305–333) հանգամանորեն քննության են առնված պարսկագիր հեղինակի տեղեկություններն Արևելյան Հայաստանի հատկապես Արցախի մելիքությունների վերաբերյալ:

Այս շարքին կարելի է դասել նաև Գոհար Մխիթարյանի՝ «Շիրվանի էթնոքաղաքական վիճակը ներկայացնող հոդվածը» (էջ 364–388), որը շարադրված է Յ. Գերբերի պատմագրական երկերի հիման վրա:

Գագիկ Դանիելյանի հետաքրքրությունների ոլորտում են մամլուքյան շրջանի արաբական աղբյուրները, որոնք առատ նյութ են պարունակում

<sup>4</sup> Ա. Տեր-Ղևոնդյան. Ազաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը (արաբերեն բնագիր և ուսումնասիրություն), Երևան, 1968:

<sup>5</sup> А. Тер-Гевондян. Армения и Арабский халифат. Ереван, 1977; Ն ու լ յ ն ի՝ Հայաստանը VI–VIII դարերում, Երևան, 1996, ն ու լ յ ն ի՝ Հոդվածների ժողովածու, Երևան, 2002:

Հատկապես Կիլիկյան Հայաստանի և Միջերկրածովյան ավազանի մուսուլմանական երկրների հայ համայնքների պատմության վերաբերյալ: Այս հատկանիշը բնութագրական է նաև «Արևելյան աղբյուրագիտություն» 2-րդ հատորում հրատարակած նրա հոդվածին [«Հայերը ԺԴ դարի մամլուքյան Կահիրեում. Խիզանայթ ալ-բունուդ (Hizānat albunūd) Հայաբնակ թաղամասը», էջ 160–197], որտեղ մամլուքյան աղբյուրներից կատարված երբեմն ընդարձակ քաղվածքների հիման վրա և նրանց համադիր քննությամբ լուսաբանվել են Կահիրեի հայ համայնքին ու Կիլիկյան Հայաստանի պատմությանը վերաբերող բազմաթիվ հարցեր:

Կիլիկիայի հայկական պետության և նրա հարևան մուսուլմանական պետությունների պայմանագրային հարաբերությունների քննությանն է նվիրված նշանավոր հայագետ Կլոդ Մուլթաֆյանի [“Les traités de paix du Royaume d’Arménie cilicienne avec les seldjoukides et les mamelouks”, (Ֆրանսերեն) – Կիլիկյան Հայաստանի կնքած պայմանագրերը մուսուլմանական երկրների հետ, էջ 198–208 (հայերեն)] հոդվածը, որում ժամանակագրական հաջորդականությամբ ներկայացված են Իկոնիայի սելջուկյան և Եգիպտոսի մամլուքյան սուլթանությունների հետ Կիլիկյան Հայաստանի կնքած պայմանագրերը: Կ. Մուլթաֆյանի ինչպես այս, այնպես էլ մյուս աշխատություններն աչքի են ընկնում սկզբնաղբյուրային հարուստ հենքով, ինչն էսպես մեծացնում է նրանց գիտական արժեքն ու կարևորությունը, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանի պատմությանը զբաղվող հետազոտողների համար բացահայտում բազմաթիվ սկզբնաղբյուրներ:

Մամլուքյան շրջանի մեկ այլ նշանավոր պատմիչ, ազգությամբ դպտի Մուֆադդալ Աբի Ֆադալի [“A Coptic Historian and “the Caliph of the Armenians”: Cross-cultural Dynamics and Rhetorical Strategies in al-Mufaddal Ibn abī l-Fadā’īl” (անգլերեն) – «Ղպտի պատմիչն ու «Հայոց Խալիֆան» միջմշակութային ներգործության և հոետորության միջոցները Մուֆադդալ Իբի Ալ-Ֆադալիի երկում», էջ 209–256 (հայերեն)] երկի քննությանն է նվիրված իտալացի արևելագետ Ջուզեպպե Չեչերեի ընդարձակ հոդվածը (էջ 209–256): Այն ոչ միայն արաբագիր այդ աղբյուրի՝ հայերին վերաբերող տեղիների քննությունն է, այլև մամլուքյան սուլթանության ոչ դպտի քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ պատմիչի վերաբերմունքի բացահայտումն ու գնահատումը: Հոդվածագիրը եզրակացրել է, որ այդ ժողովուրդներին կոչելով էթնիկ ու քաղաքական եզրույթներով դպտի պատմիչը ձգտել է մամլուքյան իշխանությունների աչքում թշնամի համարվող այլ քրիստոնյաներին տարբերակել-առաձնացնել իր ազգակիցներից:

Հայաստանին վերաբերող և սույն հատորում քննության առնված օտար աղբյուրների շարքից է XV դ. թեմուրյան շրջանի պատմագիր Հաֆեզ-ե Աբրուի «Աշխարհագրություն»-ը, որը ներկայացված է Էլինա Ղազարյանի («Հաֆեզ-ե Աբրուի «Աշխարհագրություն» Հայաստանին վերաբերող հաղորդումները», էջ 270–288) հոդվածում: Չնայած իր քաղվածք բնույթին՝ այս աղբյուրը պատմաաշխարհագրական բնույթի կարևոր տեղեկություններ է հաղորդում ինչպես Կիլիկյան, այնպես էլ բուն Հայաստանի վերաբերյալ: Հաֆեզ-ե Աբրուի տվյալներից որոշները բացակայում են «Աշխարհագրություն» համար աղբյուր ծառայած երկերից, ինչն էլ ավելի է բարձ-



րացնում նրա արժեքը: XV դարի Հայ պատմագրական երկերի սակավութ-  
յունը պարտադրում է մեծապես կարևորել հայոց պատմության այդ դա-  
րաշրջանի վերաբերյալ սկզբնաղբյուրային յուրաքանչյուր տեղեկություն:

Նույնպես երկարատև դադարից հետո կրկին ակտիվություն է նկատվում  
Հայաստանի և Հայերի մասին վկայող օսմանյան աղբյուրների ուսումնասիր-  
ման ոլորտում, որտեղ կատարվող աշխատանքները, հուսով ենք, կհանգեցնեն  
այդ մատենաշարի՝ «Թուրքական աղբյուրներ» շարքի վերականգնմանը: Այս  
աղբյուրների մեջ խիստ հետաքրքրական են օսմանյան հարկացուցակները,  
որոնք առատ նյութ են պարունակում ոչ միայն ժամանակի սոցիալ-տնտեսա-  
կան պատմության, այլև գիտաքաղաքական կարևորություն ունեցող այնպի-  
սի մի թեմատիկայի վերաբերյալ, ինչպիսին ժողովրդագրությունն է: Հարկա-  
մատյանների հետազոտման ու թարգմանության ուղղությամբ նշանակալի  
աշխատանք է կատարում Գեորգի Միրզաբեկյանը, և սույն պարբերականում  
ընդգրկված նրա հոդվածը՝ «Կարբի քաղաքի 1728 թ. օսմանյան հարկացու-  
ցակը որպես Հայաստանի պատմության սկզբնաղբյուր» (էջ 334–363) հենց  
այդ թեմատիկայով:

Ոչ պակաս կարևորություն ունեն նաև օտարագիր այն սկզբնաղբյուր-  
ները, որոնք վերաբերում են ոչ միայն Հայ, այլ նաև Արևելքի մյուս ժողո-  
վուրդների պատմությանը (քաղաքական, մշակութային, սոցիալ-տնտեսա-  
կան և այլն): Այս առումով հետաքրքրական է Շուշան Կյուրեղյանի «Իբն  
ալ-Ջաուզիի «Թալբիս Իբլիս» աշխատության կառուցվածքը» հոդվածը (էջ  
145–159), որում հեղինակը հակիրճ ներկայացրել է «Թալբիս Իբլիս» («Սա-  
տանայի խարդավանքները») աշխատության բովանդակությունը՝ հնարավոր-  
ություն տալով ընթերցողին ընդհանուր պատկերացում կազմել այդ երկի  
վերաբերյալ: Հասցեագրված լինելով հասարակական ամենատարբեր խավե-  
րին՝ «Թալբիս Իբլիս»-ը հնարավորություն է տալիս բացահայտելու մուսուլ-  
մանական հանրության գունապնակը՝ հասարակության ստորին շերտից  
մինչև ամենաբարձր աստիճանին գտնվողներ, գիտություն, կրոնական այս  
կամ այն ուղղության ներկայացուցիչներ այլ նաև հետաքրքրական է մու-  
սուլմանական հանրություն մեղսագործության դեմ պայքարի միջոցների ու  
մեթոդների բացահայտման տեսանկյունից:

Արևելքի, հատկապես՝ Հայաստանի հարևան երկրների պատմության  
ուսումնասիրությունը ևս հայաստանյան արևելագիտության կարևոր խն-  
դիրներից է: Այդպիսի հետազոտությունների արդյունավետությունը պայ-  
մանավորված է ոչ միայն ուսումնասիրողի լեզվական կարողություններով,  
այլ նաև այդ երկրներում իրենց իսկ պատմության ընկալման և այն հե-  
տազոտելու գաղափարական սկզբունքների իմացությամբ: Այս տեսանկյու-  
նից կարևոր և օգտակար նշանակություն ունի Անուշ Հովհաննիսյանի  
(«Օսմանիզմ թե՞ թյուրքիզմ. հայեցակարգերի պայքարը “Tarih-i os-  
manî encümeni mecmuasi” պարբերականի էջերում», էջ 422–433) հոդ-  
վածը, որտեղ համակողմանի քննության է առնված Օսմանյան կայսրութ-  
յունում, ապա հանրապետական Թուրքիայում օսմանիզմի և թյուրքիզմի  
գաղափարական պայքարն այդ երկրի պատմության ուսումնասիրման հա-  
մատեքստում:

Հայաստանի և Հայերի մասին վկայող օտար աղբյուրների կողքին մեծապես կարևոր է նաև Հայ մատենագրական երկերի օտարալեզու թարգմանությունները: Այս ոլորտի նշանակալի ձեռքբերումներից է Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի անվանի Հայագետ Աբրահամ Տերյանի կատարած անգլերեն թարգմանությունը՝ օժտված արժեքավոր ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով (Հանձնված է տպագրության): Գրախոսվող պարբերականում ընդգրկված նրա հոդվածը [“Literary and Oratorical Formulae in Koriwn’s Life of Mashtots” (անգլերեն) – «Գրական և հռետորական բանաձևեր Կորյունի «Վարք Մաշտոցի» մէջ», էջ 53–63 (Հայերեն)], որը վերաբերում է «Վարքի» լեզվաոճական առանձնահատկություններին, հենց այդ թարգմանության արգասիքներից է՝ գրված «Թարգմանչի և ծանոթագրողի» կողմից, ինչպես նշում է հոդվածագիրը: Ուշագրավ է հոդվածագրի կարծիքն առ այն, որ «Վարքը» ոչ թե պատմագրական, այլ ջատագովական ժանրի ստեղծագործություն է: Այս տեսակետը հիմնավորող կովանների շարքում խիստ հետաքրքրական է երկում «գովել» բայի կիրառությունը վերաբերող նրա բացահայտումը, ըստ որի՝ այդ բառը, զարմանալիորեն, Հանդիպում է միայն «Վարքի» նախագրությունում, այն էլ՝ յոթ անգամ:

Գիտական պարբերականների բովանդակությունը շահեկանորեն հարստացնում են նաև այնպիսի հոդվածներ, որոնք վերաբերում են գիտության այս կամ այն բնագավառում կատարվող աշխատանքներին, նախանշում հետագա անելիքները, ինչպես նաև սահմանում գիտական թեմատիկ ուղղություններ: Այս շարքից է անվանի Հայագետ Մայքլ Սթոունի հոդվածը (էջ 20–33), որը գրեթե ավարտական փուլում գտնվող բացառիկ կարևորություն ունեցող մի գիտական նախագծի, այն է՝ Երուսաղեմի և Մինայի թերակղզու Հայերեն գրությունների, այդ թվում՝ վիմագրերի ամբողջական հավաքածուի ստեղծման մասին է: Հոդվածագիրը մանրամասն ներկայացրել է ժողովածուի կազմման մեթոդներն ու սկզբունքները: Ուրախալի է, որ այն առանց բացառության ներառելու է Սուրբ երկրի Հայերեն բոլոր գրությունները՝ վիմագրերից մինչև խճանկարային արձանագրություններ (ժողովածուի ստեղծմանը մասնակցում են Բեն Գուրիոն Համալսարանի գիտաշխատող, հնագետ Յանա Չեխանովեցը և Մաշտոցյան Մատենադարանի ավագ գիտաշխատող, բանասեր Խաչիկ Հարությունյանը):

Թերևս սխալ չի լինի այս շարքում ներառել նաև Իվեթ Թաջարյանի և Անի Ավետիսյանի «Արևելյան ձեռագրագիտության կեղծարարության արվեստն ըստ Մատենադարանի Հ<sup>ր</sup> 137 ձեռագիր-օրինակի» հոդվածը (էջ 289–304), քանզի այն ոչ միայն բացահայտում է քննության առարկա ձեռագրի կեղծման հանգամանքները, այլև հիմնավորում այդպիսի ձեռագրերի ուսումնասիրման անհրաժեշտությունը, այլ խոսքով սահմանում գիտական նոր թեմատիկա, որը, հեղինակների պնդմամբ, մեզանում անտեսված է, մինչդեռ «աշխարհում այն արդիական է և որոշ ձեռագրագետների համար՝ նեղ մասնագիտական» (էջ 290): Թեկուզ միայն այն հանգամանքը, որ այդ երևույթը գոյություն ունի նաև մեր օրերում, արդեն իսկ հիմնավոր է դարձնում այդպիսի ձեռագրական նմուշների ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Արևելագիտական ու աղբյուրագիտական հոդվածների կողքին ժողովածուում տեղ են գտել նաև Հայոց եկեղեցու և Կիլիկիայի հայկական թագավորության պատմությունը վերաբերող արժեքավոր ուսումնասիրություններ: Այդ շարքից են Ազատ Բոգոյանի [«Հայոց եկեղեցին տիեզերական եկեղեցու նվիրապետական համակարգում (Ե դարի սկիզբ)», էջ 64–100], Իգոր Դորֆման-Լազարևի [«Ադամը, (Նոյը) և թագաւորութեան գաղափարը Աղթամարի եկեղեցու պատկերային ծրագրում», էջ 111–127], Պետրոս Ղազարյանի [«Անտիոքի պատրիարքության հայկական թեմերը (Ե–ԻԱ դդ.)», էջ 389–421], Լիանա Աղաբեկյանի («Կիլիկյան Հայաստանը ԺԲ դ. վերջին քառորդի Մերձավոր Արևելքի ուղղափառական գործընթացներում», էջ 128–144) հոդվածները, որոնցում հանգամանորեն քննություն են առնված Հայոց եկեղեցու նվիրապետության ձևավորմանը, Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու բարձրաքանդակներում թագավորական իշխանության գաղափարի պատկերմանը, Մերձավոր Արևելքի XII դարավերջի քաղաքական խճանկարում Կիլիկյան Հայաստանի զբաղեցրած դիրքին և Անտիոքի պատրիարքության հայկական թեմերին վերաբերող բազմաթիվ հարցեր:

Պարբերական մամուլը ոչ միայն գիտական նոր արդյունքի տարածման արդյունավետ միջոց է, այլև գիտական բանավեճի և կեղծարարության դեմ պայքարի կարևոր հարթակ, ուստի ամենևին պատահական չէ, որ այդպիսի հոդվածներն ավանդաբար առաձին տեղ են զբաղեցնում ամսագրային կամ տարեգրական բնույթի հրատարակություններում: Այս առումով հիշատակելի է Արսեն Շահինյանի [«Очередная попытка фальсификации ранне-средневековой географии Кавказской Албании (Алуанка-Аррана)» (սուսերեն) – «Կովկասյան Ալբանիայի (Աղվանքի-Առանի) վաղմիջնադարյան աշխարհագրության կեղծման հերթական փորձը» (հայերեն), էջ 101–110] հոդվածը, որն Աղվանքի վաղմիջնադարյան շրջանի աշխարհագրության վերաբերյալ աղբյուրների պատմագիտության մի քանի խեղաթյուրումների հիմնավոր պատասխանն է:

Մեծապես կարևորելով «Արևելյան աղբյուրագիտություն» պարբերականի վերականգնումը և բարձր գանահատելով նրա 2-րդ հատորի գիտական արժեքը՝ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում-ցանկություն, որոնք, կարծում ենք, կարող են օգտակար լինել մատենաչարի հետագա հրատարակությունների համար:

Կարծում ենք՝ հատորն առավել կշահեր, եթե օժտված լիներ մատենաչարի ստեղծման պատմությունն ու նրա անդրանիկ համարը ներկայացնող, պարբերականի վերականգնման նպատակները սահմանող, «Արևելյան աղբյուրագիտություն» առաջիկա անելիքները նախանշող և այդ բնագավառի խնդիրները բացահատող առաջաբանով:

Խնդրո առարկա հատորի հոդվածները, ի տարբերություն առաջինի, դասակարգված են ժամանակագրական հաջորդականությամբ, ինչն այնքան էլ չի համապատասխանում այսպիսի հրատարակությունների բնույթին: Կարծում ենք՝ պարբերականի հետագա հրատարակությունների համար առավել պատշաճ կարող են լինել թեմատիկ՝ ըստ արևելագիտության բնագավառների (արաբագիտություն, իրանագիտություն, թուրքագիտություն, կովկասա-

գիտություն և այլն) կամ պարբերականներին բնորոշ ավանդական բաժանումներն ըստ աշխատանքների բնույթի՝ հոդվածներ, հրապարակումներ, հաղորդումներ, գրախոսություններ և այլն:

Հայերեն հոդվածների մի մասն ունի ուղևորներին ամփոփում, մյուս մասը՝ անգլերեն: Կարծում ենք՝ աշխատանքները պետք է ունենան երկկեզու ամփոփումներ: Ի դեպ, վերջիններիս ծավալը շատ դեպքերում խիստ փոքր է, ինչը հնարավորություն չի տալիս բավարար պատկերացում կազմել հոդվածի բովանդակության վերաբերյալ:

Վերստին կարևորելով «Արևելյան աղբյուրագիտություն» պարբերականի վերականգնումը՝ մաղթում ենք շարունակական ընթացք և արժեքավոր ուսումնասիրություններ պարունակող նորանոր հատորներ:

ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ

Պ. գ. Թ., Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական քարտուղար, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի բաժնի ալագ գիտաշխատող, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեորգյան հոգևոր ճեմարանի դասախոս: Գիտական հետաքրքրությունը՝ Հայոց եկեղեցու պատմություն (միջնադարյան շրջափուլ): Հեղինակ է 1 մենագրության և 10 հոդվածի: vahetorosyan7@gmail.com

ՎԱՍՏԱՎԱՇՄԱՏ ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ԱԶՆԻՎ ԶԱՅ ՔԱՂԱՔԱՑԻՆ  
(Սեդա Գասպարյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)\*

Լրացավ վաստակաշատ լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, Երևանի պետական համալսարանի անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Սեդա Քերոբի Գասպարյանի ծննդյան 75-ամյակը: Արգասաբեր է բազմավաստակ գիտնականի, մանկավարժի, գիտակրթական գործի հմուտ կազմակերպչի անցած ուղին:



Ծնվել է 1946 թ. հունիսի 30-ին Երևանում: Ծնողները Հայոց ցեղասպանությունից մազապուրծ, գաղթի տառապանքներով լի ճանապարհին հարազատներին կորցնելով, հանգրվանել էին Թիֆլիսում: Ծակատագրի բերումով հանդիպել էին, ամուսնացել, ապա տեղափոխվել Երևան իրենց զավակներին հայկական միջավայրում և հայեցի դաստիարակելու նպատակով: Ընտանիքը բազմանդամ էր: Զավակները բոլորն էլ բարձրագույն կրթություն ստացան և իրենց մասնագիտական ոլորտներում հասան հաջողությունների:

1963 թ. գերազանցությամբ ավարտելով Երևանի Նար-Ղոսի անվան դպրոցը՝ Սեդա Գասպարյանն ընդունվեց ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի անգլերեն լեզվի ու գրականության բաժինը և ավարտեց 1968 թ.: Դեռևս 4-րդ կուրսի ուսանողուհի էր, որ ականավոր լեզվաբան Գևորգ Զահուկյանը, նրա մեջ տեսնելով ապագա գիտնականի սաղմերը, երաշխավորեց նրան աշխատանքի անցնելու ռոմանագերմանական բանասիրության ամբիոնում: Ընդգծված մասնագիտական կարողությունների ու հետևողական տքնաձյան աշխատանքի շնորհիվ նա ամբիոնի լաբորանտից հասավ ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի վարիչի պատասխանատու պաշտոնին:

1982 թ. ավարտելով Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի նպատակային ասպիրանտուրան՝ 1983 թ. նույն բուհում անվանի լեզվաբան Օլգա Ախմանովայի ղեկավարությամբ պաշտպանեց թեկնածուական թեզ «Полифония слова в составе фигуры сравнения» թեմայով: 1989 թ. նրան շնորհվեց դոցենտի գիտական կոչում և նույն տարին ընդունվեց դոկտորանտուրա ու կրկին գործուղվեց Մոսկվայի պետական համալսարանի դոկտորական ատենախոսությունն ավարտելու: 1994 թ. այստեղ հաջողությամբ պաշտպանեց դոկտորական ատենախոսությունը «Сравнение как «изъяснение» в научной речи и как средство лингвопоэтического творчества в художественной литературе» թեմայով, որը նոր ու արդիական մոտեցում

\* Ներկայացվել է 29. V. 2021 թ., ընդունվել է տպագրության 15. VI. 2021 թ.:

էր ոճագիտության մի շարք հիմնարար խնդիրների բնագավառում և գրված էր գիտական բարձր չափանիշներով:

1993-ից Ս. Գասպարյանը ղեկավարում է ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնը, որն իրականացնում է բազմաբնույթ ուսումնամեթոդական, գիտամեթոդական, գիտակազմակերպական, գիտահրատարակչական գործունեություն: 2002 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում: 2014 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Բազմազան ու ընդգրկուն է նրա հետաքրքրությունների շրջանակը՝ լեզվի և ոճի հարցեր, լեզվապոետիկայի ոլորտ, գործառական ոճագիտություն, վերասույթային հնչյունաբանություն, տեքստի մեկնաբանություն, թարգմանության տեսություն, հայագիտական խնդիրներ և այլն: Անգնահատելի է նրա կատարած աշխատանքը հանրապետությունում անգլերենի ուսումնասիրության ու բուհական ասպարեզում իրականացվող գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների ուղղորդման ու կազմակերպման գործում: Այսօր արդեն փաստ է, որ Ս. Գասպարյանի հիմնադրած անգլիագիտական հետազոտությունների լեզվաբանական դպրոցը պատշաճ համարում ունի ոչ միայն մեր հանրապետությունում, այլև նրա սահմաններից դուրս:

1995-ից մինչ այժմ նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել և գիտական շրջանառության մեջ է մտել 28 թեկնածուական ու 6 դոկտորական ատենախոսություն:

Ս. Գասպարյանը հեղինակ է շուրջ 170 գիտական, գիտամեթոդական և ուսումնամեթոդական աշխատությունների. մենագրություններ, ՀՀ ԿԳ նախարարության երաշխավորությամբ լույս տեսած բուհական դասագրքեր ու ձեռնարկներ, գիտական հոդվածներ՝ հրատարակված ինչպես հայրենական, այնպես էլ արտերկրի առաջատար գիտական հանդեսներում: Արժեքավոր է Ս. Գասպարյանի գիտական գործունեությունը թե՛ անգլիական բանասիրության ոլորտում և թե՛ նրա գիտական հետաքրքրությունների լայն շրջանակում: Նրա մասնագիտական նվիրումն այնպիսի բարդ բնագավառի, ինչպիսին է գեղարվեստական խոսքը, նաև ամենատարբեր թեմաներով նրա հետազոտությունները իմաստաբանության, պրագմատիկայի, պոետիկայի ու ոճագիտության բնագավառներում, պահանջում են պրոֆեսիոնալ գնահատություն և գիտական հասունություն:

Առանձնապես կարևոր են նրա գիտական ձեռքբերումները գրական ստեղծագործության մեկնաբանության դաշտում (տե՛ս “The Knowledge of Literature”, Ed. Angela Locatelli, Bergamo University Press, 2006, pp. 67–72): Բանասիրության՝ այս մշտնջենական ու բարդ խնդրի լուծումը պրոֆ. Ս. Գասպարյանն առաջարկում է փնտրել բանասիրական հերմենևտիկայի ոլորտում: Հիմք ընդունելով Շրայերմախերի հերմենևտիկական շրջանի տեսությունը՝ նա առաջարկում է գրական ստեղծագործության բազմամակարդակ, քայլ առ քայլ ընթացող վերլուծություն (տե՛ս «Տեքստ, փոխաբերականություն, մեկնաբանություն», Երևան, 2018, համահեղինակ՝ Ա. Մաթևոսյան): Բանասերի նրա խորաթափանցությունը «համեմատություն» ոճական հնարի ուսումնասիրության մեջ հնարավորություն է տվել կարևորելու համեմատության և փոխաբերության նուրբ փոխառնչությունները, ապա

ընդլայնելու ուսումնասիրությունը՝ ներառելով նաև փոխանունությունն ու չափազանցությունը և տարբերակելու համեմատության երկու տեսակ՝ փոխաբերական ու փոխանվանական համեմատություններ: Այս տարբերակումն օգնում է լավագույնս ըմբռնել անգլերենի երկու հիմնական գործառական ոճերի (գեղարվեստական և գիտական) տարբերությունները (տե՛ս «Фигура сравнения в функциональном освещении». Ереван, 2000, 2013, «Գործառական ոճագիտություն», Երևան, 2011, համահեղինակներ՝ Գ. Մուրադյան, Ն. Գասպարյան):

Ս. Գասպարյանի գիտական հետազոտության անհերքելի արժանիքներից կարելի է համարել գրական տեքստի լեզվաբանաստեղծական մեկնաբանության օգնությամբ լեզվի և մտածողության հարցերի քննության մեջ դասական, ավանդական և ճանաչողական մոտեցումները համադրելու մեթոդաբանությունը: Գեղարվեստական ստեղծագործության ուսումնասիրության գործում հերմենևտիկական մոտեցման կարևորումը գիտնականին բերում է այն համոզման, որ լեզվաոճական և լեզվաբանաստեղծական մեթոդների համադրի կիրառությունը հուսալի միջոց է գեղագիտական հատկանիշներով օժտված յուրաքանչյուր տեքստ ուսումնասիրելիս: Նրա դիտարկումներից շատերը վկայում են համեմատության՝ նրա իսկ մշակած տեսության հիմնավորվածությունը ոչ միայն անգլերենի, այլև հայերենի ու ռուսերենի առնչությամբ (տե՛ս «Лингвопоэтика образного сравнения». Ереван, 1991, 2008): Պրոֆ. Գասպարյանի մոտեցումն արժևորվում է նաև նրանով՝ գեղարվեստական ստեղծագործությունը դիտարկում է որպես անհատական և, որ ավելի կարևոր է, հասարակական գիտակցության դրսևորում: Նա հետևողականորեն շեշտադրում է համեմատության դերը ոչ միայն բանաստեղծական պատկերների ստեղծմանը նպաստելու, այլև «հեղինակի ձայնը» լսելի դարձնելու հարցում, և գեղարվեստական համեմատությունը, որը վաղնջական ժամանակներից մեզ հասած ոճական հնար է, դիտարկվում է որպես ճանաչողության ու հույզերի արտահայտման հիմնական ձևերից մեկը: Գիտնականի «համեմատություն» ոճական հնարի տեսության ձեռքբերումներից է նաև առողաբանական մեթոդի կիրառությունը, որը հնարավորություն է տալիս վեր հանելու փոխանվանական և փոխաբերական համեմատությունների էական տարբերությունը նաև հնչերանգային ու առողաբանական յուրահատկությունների օգնությամբ: Սա միանգամայն նոր մոտեցում է և արժանացել է մասնագիտական գնահատականի (տե՛ս Մ. М. Магидова, С. К. Гаспарян. Фигура сравнения в функциональном освещении. Ереван, 2000, с. 324.— «Բանբեր Երևանի համալսարանի», 2001, էջ 200–203):

Հետաքրքիր ու օրիգինալ լուծումների են հանգում նաև պրոֆ. Գասպարյանի դիտարկումները գեղարվեստական թարգմանության հարցում, որը նրա համոզմամբ՝ բարդ փոխաբերականացման ու փոխակաղապարման գործընթաց է՝ միտված բացահայտելու երկի ոչ միայն ներլեզվական այլև արտալեզվական կապերը: Ելնելով գործառական մոտեցման կարևորությունից՝ նա հիմնավորում է, որ ապահովել ոճապատկերային համարժեքություն և վերակերտել ստեղծագործության լեզվական, գեղագիտական ու գաղափարական ամբողջությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ





ված է անգլերեն, և սա վկայությունն է գիտնականի այն համոզմունքի՝ օտար լեզուների իմացությունը պարտավոր ենք նախ անվերապահորեն ծառայեցնել ազգային խնդիրների լուսաբանմանը և դրանք հասանելի դարձնենք միջազգային հանրությունը: Այո՛, իրավացի է հեղինակը, այսպիսի ուսումնասիրություններով է, որ կարելի է հակազդել Հայոց ցեղասպանության անհերքելի իրողությունը ժխտող ու, ընդհանրապես, մեր պատմությունն աղավաղող հետազոտողների կեղծ մեկնաբանություններին և շեշտադրել հակահայկական քարոզչության դեմ մեր պայքարի արդարացիությունն ու հիմնավորվածությունը: Այդ են վկայում այս ուսումնասիրության առնչությամբ արտերկրի գիտնականներից ստացված արձագանքները (տե՛ս I. M. Magidov a. “Preface to The Armenian Genocide: A Linguocognitive Perspective by S. Gasparyan”. Yerevan, YSU, 2014, pp. 15–20; A. Locatelli. Seda Gasparyan. “The Armenian Genocide: A Linguocognitive Perspective”. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2014, № 3, էջ 350–353):

Ս. Գասպարյանը հաջողությամբ ղեկավարել է բազմաթիվ գիտական թեմաներ, իսկ 2015-ից ի վեր «Անգլալեզու հակահայկական քարոզչական դիսկուրսի հետազոտություններ» գիտահետազոտական լաբորատորիայի գիտական ղեկավարն է: Այս բազային թեմայի շրջանակներում մշակվել են հարցին առնչվող տարբեր խնդիրներ, վեր են հանվել լեզվական և արտալեզվական այն գործոնները, որոնց օգնությամբ հակահայկական քարոզչություն իրականացնող հեղինակներին հաջողվում է տեքստ ներմուծել այս կամ այն ներակա արժեքումը և իրագործել իրենց հակահայկական հաղորդակցական արատավոր նպատակները:

“Raphael Lemkin’s Draft Convention on Genocide and the 1948 UN Convention” (Երևան, 2016, համահեղինակներ՝ Շ. Պարոնյան, Ա. Չուբարյան, Գ. Մուրադյան) հետազոտությունը, որն իրականացվել է լեզվաոճական, լեզվագործաբանական ու ճանաչողական մոտեցումների փոխներթափանցմամբ, նույնպես կարևոր ներդրում է ցեղասպանագիտության ոլորտում և կարող է խթան դառնալ ցեղասպանագիտական խնդիրները միջգիտակարգային մոտեցմամբ քննելու առումով: Այս ուսումնասիրությունը մանրագին, լուրջ ու տքնաջան գիտական աշխատանքի արդյունք է՝ նվիրված ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի և այդ իրավական փաստաթղթի լեմկինյան նախագծի համեմատական դիսկուրսային քննությանը: Այն եզակի է նախ այն առումով, որ, այս երկու փաստաթղթերի առանձին, ինչպես նաև համեմատական քննության վերաբերյալ կան բազմաթիվ ուսումնասիրություններ, սակայն դրանք արվել են իրավաբանական հարթության վրա՝ նշելով միայն դրանցում առկա բացթողումները, իրավաբանական թերացումներն ու անհամապատասխանությունները: Սույն հետազոտությունը շահեկանորեն առանձնանում է մյուսներից նրանով, որ ընդգրկում է լեզվաբանական լայն մտահորիզոն: Անդրադարձ է արվում իրավագիտական անգլերենի ընդհանուր բնութագրին, վեր են հանվում ուսումնասիրվող փաստաթղթերի լեզվական հյուսվածքին բնորոշ ոճական, գործաբանական, իմաստաբանական, քերականական առանձնահատկությունները: Գործաբանա-



Պրոֆ. Ս. Գասպարյանի կենսագործունեության ոլորտը լայն է և ընդգրկուն: Հրաշալի հետազոտող լինելուց զատ՝ նա նաև բազմալսատակ մանկավարժ է և հմուտ գիտակազմակերպիչ՝ բազմաթիվ մասնագիտական ու հասարակական նախաձեռնությունների հեղինակ: Հանրապետական ու միջազգային գիտաժողովներ, գիտական սեմինարներ, մասնագիտական որակի բարձրացման դասընթացներ, կրթական-քննարկումներ, որոնք ոչ միայն կարևոր ներդրում են ունեցել լեզվի, գրականության ու մշակույթի ուսումնասիրության բնագավառում, այլև խթանել են տեղի և արտերկրի գիտնականների համագործակցությունը: Պատահական չէ, որ եվրոպացի գործընկերների հետ համագործակցության համատեքստում ծնվեցին երկու կոլեկտիվ մենագրություններ («European English Studies: Contributions towards the History of a Discipline»/ Ed. by Renate Haas and Balz Engler, Leicester University Press, 2008; «Rewriting Academia: The Development of the Anglicist Women's and Gender Studies of Continental Europe»/ Ed. by Renate Haas, Frankfurt am Main, Peter Lang GmbH, 2015), որոնցում եվրոպական տարբեր երկրների կողքին տեղ գտան նաև հայկական կրթական իրականության մեջ անգլերենի՝ որպես միջազգային հաղորդակցության լեզվի ներդրմանը, զարգացման ընթացքին և հետազոտմանն առնչվող տարբեր հարցեր:

Ս. Գասպարյանի ներկայացրած գեկուցումներն ու դասախոսություններն աշխարհի տարբեր երկրների (Անգլիա, Իսպանիա, Իտալիա, Արգենտինա, Հունաստան, Սլովակիա, Ռուսաստան և այլն) համալսարաններում ու գիտական կենտրոններում միշտ էլ գիտական հետաքրքրություն են խթանել և արժանացել բարձր գնահատանքի: Պատահական չէ, հետևաբար, որ մեծ հարգանք վայելող գիտնականն իր մասնագիտական բազմակողմանի կարողություններն ու հմտությունները սիրով ու պատրաստակամությամբ ներդնում է՝ ի բարօրություն մեր գիտության ու կրթության բնագավառի զարգացման գործին: 1995–2019 թթ. եղել է ԵՊՀ-ում գործող «Գերմանական լեզուներ» մասնագիտության 009 մասնագիտական աստիճանաչորհող խորհրդի նախագահ, 2000–2019 թթ.՝ ՀՀ ԿԳ նախարարության մեթոդ միավորման անգլերենի առարկայական հանձնաժողովի նախագահ: ԵՊՀ գիտական խորհրդի անդամ է: 2003-ից Անգլերենի ուսումնասիրության եվրոպական ընկերության վարչության անդամ է և Եվրոպական դաշնության շրջանակներում գործող Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիայի հիմնադիր նախագահը: 2005-ից հիմնադիր և գլխավոր խմբագիրն է «Armenian Folia Anglistika» անգլերեն հրատարակվող գրախոսվող միջազգային հանդեսի (<https://journals.yu.am/index.php/arm-fol-angl>), որի շրջանակներում 2007-ից բացված հայագիտական ուսումնասիրությունների բաժինը հնարավորություն է ընձեռում օտարալեզու ընթերցողին անգլերեն ներկայացնելու նաև հայագիտության ոլորտի տարբեր արդիական խնդիրներ: 2009–2018 թթ. եղել է ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետում գործող «Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» ամենամյա հանդեսի հիմնադիր և գլխավոր խմբագիրը: 2006–2019 թթ. համագործակցել է անգլիագիտական հետազոտությունների «European Journal of English Studies» (Routledge: Taylor & Francis Group) հանդեսի խմբագրական խորհրդի հետ՝ ստանձնելով խորհր-

դատվական հանձնախմբի անդամի պարտականությունը: Ներկայում էլ համագործակցում է տարբեր գիտական հանդեսների հետ [«Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», “Science and Education: A New Dimension” (<https://www.Seanewdim.com/impressum.html>), “Cognition, Communication, Discourse” (Kharkov) (<https://periodicals.karazin.ua/cognition-discourse/about/editorialTeam>); «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» (Երևան, ԵՊՀ), «Բանբեր Հայագիտության» (Երևան), «Հայագիտության հարցեր» (Երևան, ԵՊՀ) (<http://www.armin.am/images/menus/3204/Handes-2021-1-22-1.pdf>), “Professional Discourse and Communication”, Moscow State Institute of International Relations (<https://www.pdc-journal.com/jour/pages/view/Gasparyan>):

Գիտության, կրթության բնագավառներում ներդրած նշանակալի ավանդի, նաև գիտական միջազգային կապերի զարգացման գործում մատուցած ծառայությունների համար Ս. Գասպարյանն արժանացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման (2013 թ.), ՀՀ վարչապետի հուշամեդալի (2009 թ.), Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միություն, ՀՀ Սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ «Լավագույն գիտական աշխատանք» մրցանակի (2009 թ.): Բազմիցս հաղթող է ճանաչվել ՀՀ գիտության պետական կոմիտեի հայտարարած «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթներում, պարգևատրվել է ԵՊՀ արծաթե և ոսկե հուշամեդալներով (1999 թ., 2006 թ.), ՀՀ ԿԳ նախարարության պատվոգրերով (2004 թ., 2006 թ., 2008 թ.) և ԿԳՄՍ ոսկե մեդալով (2021 թ.):

Օրինակելի են նաև Ս. Գասպարյանի մարդկային որակները: Նրա աշխատանքային երկար ու ձիգ տարիների ընթացքում բոլորն են հասկացել, որ գործ ունեն ազնիվ, արդարամիտ և սկզբունքային մարդու հետ, որն ամենայն պատասխանատվությամբ ու բժախնդրությամբ է վերաբերվում ձեռնարկած ցանկացած գործի, խստապահանջ է նախ իր, ապա դիմացինի նկատմամբ, և դա երբեք չի խանգարում նրան հոգատար վերաբերվել շրջապատին:

Շնորհավորելով հոբեյանի կապակցությամբ՝ Սեդա Գասպարյանին մաղթենք քաջառողջություն, երիտասարդական ավյունով տոգորված բեղմնավոր գործունեություն և նորանոր գիտակրթական մտահղացումներ:

ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՌԱՆԴՈՒՆ ԳՈՐԾԻՉԸ  
(Արարատ Աղասյանի ծննդյան 65-ամյակի առթիվ)\*

Լրացավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի ծննդյան 65-ամյա հոբելյանը:



Ա. Աղասյանը ծնվել է 1956 թ. օգոստոսի 11-ին ՀՍՍՀ Սիսիան քաղաքում, ԽՍՀՄ Պետական բանկի Հայկական գրասենյակի կառավարիչ, ՀՍՍՀ պետական ագրոարդյունաբերական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ, ՀՍՍՀ վաստակավոր տնտեսագետ, տնտեսագիտության թեկնածու Վլադիմիր Աղասյանի և մանկավարժ, անգլերեն լեզվի ուսուցչուհի Մարգարիտա Ասոյանի ընտանիքում: 1960 թ. Ա. Աղասյանը ծնողների հետ տեղափոխվել է Երևան

և 1973 թ. ավարտել Երևանի № 122 միջնակարգ դպրոցը:

Արվեստաբան դառնալու ցանկությունը տարված պատանին 1973 թ. ընդունվել է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետի արվեստաբանական բաժինը, քանի որ այդ տարիներին Հայաստանում արվեստաբանական մասնագիտությունը կրթական ծրագիր չկար: Աշակերտելով խորհրդային արվեստաբանության երևելի դեմքերին, այդ թվում՝ արվեստի ակադեմիկոս պատմաբաններ, ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամներ Վիկտոր Լազարևին ու Դմիտրի Սարաբյանովին՝ Ա. Աղասյանը ստացավ արվեստաբանական փայլուն կրթություն, որն էլ ամուր հիմք դարձավ նրա հետագա գիտական արդյունաշատ գործունեության համար: 1978-ին Ա. Աղասյանը, ստանալով «արվեստի պատմաբանի» որակավորում, իր գիտելիքները հայրենի արվեստաբանությունը ծառայեցնելու նպատակով վերադառնում է հայրենիք: 1978 թ. երիտասարդ արվեստաբանն աշխատանքի է անցնում Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնում որպես կրտսեր գիտաշխատող. ինչ իմանար, որ հենց այս գիտական օջախին էր անդամագրան կապելու իր ճակատագիրը՝ գիտաստեղծագործական ու գիտակազմակերպական հետագա ողջ կյանքը:

Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանում Ա. Աղասյանը Դ. Սարաբյանովի գիտական ղեկավարությամբ 1989 թ. պաշտպանել է «Մարտիրոս Սարյանի ստեղծագործական մեթոդի ձևավորումը» թեմայով դիսերտացիան և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2007 թ. մարտին Երևանում «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները

\* Ներկայացվել է 21. VI. 2021 թ., ընդունվել է սպազորության 29. VI. 2021 թ.:

XIX–XX դարերում» թեմայով դոկտորական ատենախոսությունը և ստացել արվեստագիտությունից դոկտորի գիտական աստիճան: Նույն թվականի նոյեմբերին Ա. Աղասյանին շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում: 2005 թ. Ա. Աղասյանը որակավորվել է որպես Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իսկ 2010, 2015 և 2016 թթ.՝ գլխավոր գիտաշխատող:

2009 թ. Ա. Աղասյանն ընտրվել է Սանկտ Պետերբուրգի Պետրոս Մեծի անունը կրող Գիտությունների և արվեստների ակադեմիայի թղթակից անդամ: Նա Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահությունից անդամ է (2007), Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի թղթակից անդամ (2011): 2014 թ. ղեկավարել է նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ դառալով մեզանում արվեստագիտության ամենաերիտասարդ ԳԱԱ թղթակից անդամը:

Այսօր Ա. Աղասյանը նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի պատմությունից լավագույն գիտակն է, ում արվեստագիտական հետաքրքրությունների հիմնական ոլորտը XIX–XX դարերի հայ կերպարվեստի ու գեղարվեստական մտքի պատմությունն է<sup>1</sup>: Նա հեղինակ է մասնագիտական բարձր մակարդակով և փաստական նյութի լայն ընդգրկումով գրված 22 գրքերի ու մենագրությունների, շուրջ 180 գիտական և գիտահանրամատչելի հոդվածների, որոնք լույս են տեսել Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, ԱՄՆ, ԳՖՀ, Հունգարիայի, Լիբանանի, Լեհաստանի գիտական ժողովածուներում, կերպարվեստին նվիրված հանրագիտարաններում և պարբերականներում: Զեկուցումներով հանդես է եկել միջազգային, միութենական և հանրապետական բազմաթիվ գիտաժողովներում:

Ա. Աղասյանն առաջինն է ուսումնասիրել և հայերեն շարադրել նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի պատմությունը: Արվեստաբանի երկարամյա հետազոտությունների ու պրպտումների հանրագումարը դարձավ «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում» հիմնարար ուսումնասիրությունը (Երևան, 2009), որտեղ առաջին անգամ հանգամանորեն լուսաբանվեց հայ կերպարվեստի պատմական ուղին՝ սկսած Ռուսաստանի կազմում 1801–1828 թթ. Արևելյան Հայաստանի ընդգրկվելուց մինչև մեր օրերը: Երևանի, Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Թբիլիսիի պետական և մասնավոր թանգարաններում ու արխիվներում պահվող ատեղծագործությունների, ցուցահանդեսային կատալոգների, ձեռագրերի ու վավերագրերի, հին ու նոր գեղարվեստական մամուլի, հայ արվեստագետների գրական ժառանգության համակողմանի ուսումնասիրման շնորհիվ Ա. Աղասյանը կատարել է փաստական բազմաթիվ ճշտումներ, զուգահեռներ անցկացրել XIX դարի կեսերի արևելահայ ու արևմտահայ կերպարվեստի բնորոշ միտումների, գեղարվեստական համանման ու յուրահատուկ երևույթների միջև, լայնորեն ներկայացրել ու նորովի մեկնաբանել խորհրդահայ կերպարվեստը, ընդհանուր գծերով բնութագրել Հայաստանի Հանրապետության գեղարվեստական կյանքում 1991-ից հետո կատարված տեղաշարժերը, դրանց դրական ու բացասական հետևանքները: Հայաստանում և սփյուռքում լայն արձագանք գտած աշխատություն մեջ, որն «ազգային նոր և նորագույն կերպարվեստի ամբող-

<sup>1</sup> Տե՛ս Արարատ Աղասյան–60, Երևան, 2016:

ջական պատմությունը հայերեն շարադրելու անդրանիկ փորձն է»<sup>2</sup> և էապես խորացնում է հայ կերպարվեստի մասին մեր պատկերացումները, հեղինակը նյութը ղիտարիկել և լուսաբանել է տարբեր կողմերից, պատմամշակութային լայն համատեքստում, մոռացությունից հանել բազմաթիվ դեմքեր ու ստեղծագործություններ, բացահայտել և մատնանշել XIX–XX դարերում հայ կերպարվեստին առավել բնորոշ, ուրույն գծերը: Իսկ գիտական շրջանառության մեջ դրված հայերեն մասնագիտական մի շարք տերմիններն ու հասկացությունները հարստացնում են արվեստաբանության ասպարեզում գործածվող բառապաշարը: Ինչպես նկատել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյանը՝ «հատուկ պետք է նշել աշխատանքի վերջում տրված «Օգտագործված գրականության ցանկի» մասին: Ցանկը պարունակում է նոր և ժամանակակից հայ գեղարվեստական կյանքի վերաբերյալ արխիվային բոլոր նյութերը և հրատարակությունները, ընդհանուրը՝ 600-ից ավելի անուն: Սա հայ արվեստի պատմությանը վերաբերող նյութերի ամենաընդարձակ ցուցակն է, որն ունի գիտաճանաչողական կարևոր նշանակություն և նույնիսկ կարող է առանձին տպագրվել»<sup>3</sup>:

Ա. Աղասյանը հեղինակել է 2007 թ. Մոսկվայում լույս տեսած՝ Նոնա Ստեփանյանի «Искусство Армении» մենագրության՝ հետխորհրդային Հայաստանի կերպարվեստին նվիրված գլուխը:

Ծանրակշիռ է գիտնականի ներդրումը «Հայ արվեստի պատմություն» կոլեկտիվ հիմնարար աշխատության ստեղծման գործում, որի համար նա 2009 թ. արժանացել է ՀՀ Պետական մրցանակի՝ կերպարվեստի ոլորտում: Հեղինակել է XIX–XX դարերի հայ կերպարվեստի պատմությանը նվիրված ընդարձակ բաժինները, որոնք «կազմում են գրքի ուղիղ կեսը»<sup>4</sup>:

Բազմավաստակ արվեստաբանն է շարադրել «Հայոց պատմություն» քառահատորի նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստին վերաբերող բաժինները՝ երրորդ և չորրորդ հատորներում:

Ա. Աղասյանը XIX դ. արևմտահայ կերպարվեստի պատմության առաջին հետազոտողներից է: Հայ կերպարվեստի պատմաբանը ոչ միայն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել մոռացված անուններ ու ստեղծագործություններ, հետազոտել «ուսումնասիրման կարոտ արևմտահայ 28 արվեստագետների ... կյանքն և ստեղծագործությունը»<sup>5</sup>, այլև համակողմանիորեն ուսումնասիրել հայկական և թուրքական քանդակագործության հիմնադիր Երվանդ Ոսկանի ու պոլսահայ բանաստեղծ ու շնորհալի գեղանկարիչ Ինտրայի (Տիրան Չրաքյան) ստեղծագործությունները:

<sup>2</sup> Ա. Ա վ ա գ յ ա ն. Արարատ Աղասյան, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտություններ», 2009, № 2, էջ 262:

<sup>3</sup> Մ. Հ ա ս Ր ա թ յ ա ն. Արարատ Աղասյան. Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում. – ՊԲՀ, 2009, № 2–3, էջ 274:

<sup>4</sup> Ա. Ա վ ա գ յ ա ն. Արարատ Աղասյան, Հրավարդ Հակոբյան, Մուրադ Հասրաթյան, Վիգեն Դազարյան, Հայ արվեստի պատմություն. – ՊԲՀ, 2010, № 2, էջ 274:

<sup>5</sup> Մ. Կ ի Ր ա կ ո ս յ ա ն. Արարատ Աղասյանի վաստակը արևմտահայ կերպարվեստի ուսումնասիրության գործում. – Արարատ Աղասյան–60, էջ 98:

Ա. Աղասյանը լրջագույն ներդրում ունի սփյուռքահայ կերպարվեստի ուսումնասիրության գործում: ՀՀ սփյուռքի նախարարության և Արվեստի ինստիտուտի համատեղ հիմնարկված «Ակնարկներ սփյուռքահայ կերպարվեստի պատմության» մատենաշարի անդրանիկ հատորն Ա. Աղասյանի «Քաջագի մշտավառ կանթեղը» (Երևան, 2009) աշխատությունն էր՝ նվիրված ամերիկահայ անվանի գեղանկարիչ Քաջագունի Քեչեճյանին: Առաջին անգամ փաստական նյութի լայն ընդգրկմամբ, հանգամանորեն ներկայացվում է արվեստագետի երկարատև, փորձություններով լի, բայց և նշանակալից իրադարձություններով, հիշարժան դեպքերով ու երջանիկ հանդիպումներով հագեցած կենսագրությունը: Հատկապես կարևորվում են նրա կտավներում արտացոլված թեմատիկ և կերպարային բովանդակության, ազգային մտածողության, գունային սուր ընկալումների, տեխնիկական յուրահատուկ կատարման հետ կապված մի շարք խնդիրներ, որոնք դիտարկվում են նկարչի բնորոշ աշխատանքների օրինակներով, դրանց մանրախույզ քննությամբ:

Հայրենական արվեստաբանության մեջ Ա. Աղասյանն առաջինն էր, ով Հայաստանում ներկայացրեց Փրանսահայ նկարիչ Լևոն Թուֆունժյանի արվեստը: Նա ամփոփ, բայց հնարավորինս ամբողջական լուսաբանել է վերջինիս «կյանքի և գործունեության հիմնական ասպեկտները, անհատական և խմբային ցուցահանդեսները, կուբիզմին, ապա՝ տաշիզմին և սյուրռեալիզմին հարող գեղարվեստական նախասիրությունները, արժևորել նրա դերն ու տեղը ժամանակի Փրանսիական արվեստի համատեքստում»<sup>6</sup>: Ա. Աղասյանն ուսումնասիրել է Փրանսահայ նկարչուհի Արմինիա Կարբոնել-Բաբայանի<sup>7</sup> և քանդակագործ Հակոբ Գյուրժյանի ստեղծագործությունը ևս:

2009 թ. մարտի 1-ին Ա. Աղասյանի տնօրինության օրոք, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում վերաբացվեց Սփյուռքահայ արվեստի բաժինը (2013-ից՝ Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժին), որի աշխատակիցների գերակա խնդիրներից է սփյուռքահայ արվեստի ուսումնասիրությունը, և որի ղեկավարը 2016 թ. փետրվարի 1-ից Ա. Աղասյանն է: «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման, հայապահպանության բնագավառում ներդրած ավանդի, նախարարության հետ ակտիվ համագործակցության և իրականացված ծրագրերին ցուցաբերած համակողմանի աջակցության համար» 2013 թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ սփյուռքի նախարարության կողմից Աղասյանն արժանացավ շնորհակալագրի:

Ուզում եմ հատկապես ընդգծել Ա. Աղասյանի ներդրումը սուրենյանցագիտության<sup>8</sup> և այվազովսկիագիտության ասպարեզում:

2010 թ. մարտի 10-ին լրացավ Վարդգես Սուրենյանցի ծննդյան 150-ամյակը. մեծ նկարչի ստեղծագործության ուսումնասիրության վերաբերյալ բազմաթիվ գիտական հոդվածների ու գեկուցումների հեղինակ Ա. Աղասյանի նախաձեռնություններով 2010 թ. նոյեմբերի 16-ին ՀՀ ԳԱԱ Նախա-

<sup>6</sup> Մ. Ք ա մ ա լ յ ա ն. Արարատ Աղասյանը՝ սփյուռքահայ կերպարվեստի ուսումնասիրող. – նույն տեղում, էջ 157:

<sup>7</sup> Նկատենք, որ Արմինիա Կարբոնել-Բաբայանը հայ երաժշտարվեստի երախտավորներ Մարգարիտ Բաբայանի և Շուշանիկ Լալուա-Բաբայանի քույրն էր:

<sup>8</sup> Ս. Մ ե լ ի ք յ ա ն. Վարդգես Սուրենյանցի արվեստը Արարատ Աղասյանի ուսումնասիրություններում. – Արարատ Աղասյան – 60, էջ 85–93:



գահության նիստերի դահլիճում Արվեստի ինստիտուտը գումարեց «Վարդգես Սուրենյանց – 150» հոբելյանական գիտական նստաշրջանը<sup>9</sup>, որը եզրափակվեց վաստակաշատ արվեստաբանի «Վարդգես Սուրենյանցի մի անհայտ կտավի մասին» ուշագրավ զեկուցմամբ: Հոբելյանական միջոցառումների շարքում Հայաստանի ազգային պատկերասրահում նոյեմբերի 26-ին բացվեց Վ. Սուրենյանցին նվիրված ցուցահանդեսը և հրատարակվեց նկարչի ստեղծագործությունների պատկերագիրքը՝ Ա. Աղասյանի առաջաբանով (Հայերեն և անգլերեն)<sup>10</sup>:

Իսկ մինչ այդ՝ 2009 թ. օգոստոսի 1-ին, Ախալցխայի նախկին Սաֆարյան, ներկայումս՝ Քեթևան թագուհու անունը կրող փողոցի վրա գտնվող առանձնատան պատին, որտեղ անցել են Վ. Սուրենյանցի մանկության տարիները, բացվել էր մեծ նկարչի հուշաքարը (հեղինակ՝ քանդակագործ Լևոն Գրիգորյան)՝ Ախալցխայի պատմության մեջ Հայաստան առաջին հուշատախտակը: Դրան հաջորդած հոբելյանական հանդիսավոր երեկոյի ընթացքում Ախալցխայի թատրոնի լեռն-լեցուն դահլիճում Ա. Աղասյանը հանդես եկավ Սուրենյանցի կյանքի և գործունեության մասին հանգամանալից զեկուցումով, որը վարպետի ծննդյան 160-ամյակի կապակցությամբ տպագրվեց «Պատմաբանասիրական հանդես»-ում<sup>11</sup>:

2017 թ. լրացավ Հայ մեծ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյա հոբելյանը: Ա. Աղասյանի նախաձեռնությամբ և ակտիվ ջանքերով 2017 թ. նոյեմբերի 3-ին ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում Արվեստի ինստիտուտը՝ Գիտության պետական կոմիտեի աջակցությամբ, գումարեց «Հովհաննես Այվազովսկի – 200» գիտական նստաշրջանը: Հայ իրականության մեջ առաջին անգամ մի ամբողջ գիտական նստաշրջան նվիրվեց բացառապես մեծ ծովանկարչի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրությանը: Ա. Աղասյանը հանդես եկավ «Հովհաննես Այվազովսկու իտալացի սանը. Գաբրիելո Բարտոլոմեո Կասեսսի» զեկուցումով և բացահայտեց, որ մեծահամբավ նկարիչը նկատելի ազդեցություն է թողել եվրոպացի առանձին վարպետների ստեղծագործության վրա ևս: Հոբելյանական նստաշրջանին ընդառաջ՝ 2017 թ., լույս տեսավ Ա. Աղասյանի «Ծովով հափշտակվածը. Հովհաննես Այվազովսկի» եռալեզու (հայերեն, ռուսերեն և անգլերեն) մենագրությունը<sup>12</sup>:

Ծանրակշիռ է Ա. Աղասյանի ներդրումը սարյանագիտության<sup>13</sup> և քոչարագիտության բնագավառներում, ինչպես նաև խորհրդային ու հետխորհրդային

<sup>9</sup> Տե՛ս Վարդգես Սուրենյանց – 150, հոբելյանական գիտաժողով՝ նվիրված Վարդգես Սուրենյանցի ծննդյան 150-ամյակին (16 նոյեմբերի, 2010), Երևան, 2011, էջ 83, էջ 22 նկ.:

<sup>10</sup> Ա. Աղասյան. Վարդգես Սուրենյանց (1860–1921), Երևան, 2010:

<sup>11</sup> А. А г а с я н. Основоположник армянской исторической живописи (К 160-летию со дня рождения Вардгеса Суренянца). – ИФЖ, 2020, № 3, с. 28–44.

<sup>12</sup> Ա. Աղասյան. Ծովով հափշտակվածը. Հովհաննես Այվազովսկի, Երևան, 2017, 88 էջ (նույնը՝ ռուսերեն և անգլերեն):

<sup>13</sup> Տե՛ս Մ. Մ կ ր տ չ յ ա ն. Մարտիրոս Սարյանի վաղ շրջանի արվեստն Արարատ Աղասյանի ուսումնասիրություններում.– Արարատ Աղասյան– 60, էջ 108–120:

Հայ կերպարվեստի, այդ ժամանակվա գեղարվեստական կյանքի ուսումնասիրման գործում:

1992 թ. հրատարակվեց Ա. Աղասյանի անդրանիկ՝ «Мартiros Сарьян. Раннее творчество» մենագրությունը, որը մեծ հետաքրքրություն առաջացրեց Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Երիտասարդ հետազոտողի վստահ մուտքը սարյանագիտություն պատահական չէր. դեռևս 1980 թ. հրատարակվել էր Մարտիրոս Սարյանի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը, որի համահեղինակներից մեկը 24-ամյա Ա. Աղասյանն էր<sup>14</sup>:

2012 թ. Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, պետական պատվերի շրջանակներում հրատարակվեց Ա. Աղասյանի «Символизм и творчество Мартироса Сарьяна» մենագրությունը՝ նվիրված XX դարի Հայ խոշորագույն նկարիչ Մարտիրոս Սարյանի ստեղծագործության վաղ՝ սիմվոլիստական շրջանին: Սարյանի այդ շրջանի հիմնական ստեղծագործությունների մանրագնին ու բազմակողմանի ուսումնասիրության արդյունքում բացահայտվեցին նրա արվեստի ձևաոճական և գաղափարական-կերպարային առավել բնորոշ առանձնահատկությունները:

Ա. Աղասյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում հարատև գտնվել է XX դարի Հայ ականավոր արվեստագետներից մեկին՝ քանդակագործ, գեղանկարիչ և գծանկարիչ Երվանդ Քոչարի (1899–1979) արվեստը: Հայ մեծ քանդակագործը բազմավաստակ արվեստաբանի սիրելի արվեստագետներից է: Այսօր նա Քոչարի արվեստի լավագույն գիտակն է՝ Երվանդ Քոչարի թանգարանի գիտական խորհրդի երկարամյա անդամը նրա մասին երկու մենագրությունների, բազմաթիվ գիտական հոդվածների ու գեկուցումների հեղինակ է: Առաջին մենագրությունը հրատարակվել է 1999 թ., իսկ 2013-ին հայերեն և ռուսերեն հրատարակվեց Ա. Աղասյանի «Երվանդ Քոչարի տարածություն մեջ» մենագրությունը:

Ա. Աղասյանի գիտական գործունեության կարևոր ուղղություններից է ժամանակակից նկարիչների և քանդակագործների ստեղծագործության հանդեպ կենդանի հետաքրքրությունը: Ի դեպ, նրա մուտքը կերպարվեստագիտություն տեղի ունեցավ հենց ժամանակակից նկարիչների մասին ուսումնասիրություններով: «Սովետական արվեստ» հանդեսում 1979 թ. լույս տեսավ «Ռուբեն Շահվերդյանի արվեստը» հոդվածը, որին հաջորդեցին Ռուբեն Աղայանին և Լևոն Թոքմաճյանին նվիրված հետազոտությունները: Այս ուսումնասիրությունների հանրագումարը դարձավ «Հայաստանի երիտասարդ նկարիչները» երկեզու (հայերեն և ռուսերեն) պատկերագիրքը (Երևան, 1987):

Գաղտնիք չէ, որ հայրենական արվեստագիտության առջև ծառայած կարևոր ու հրատապ խնդիրներից է Հայ ժողովրդի այլ ժողովուրդների հետ ունեցած մշակութային առնչությունների ուսումնասիրությունը, ինչը գիտական կարևոր նշանակությունից գատնում է նաև քաղաքական ոչ պակաս կարևոր նշանակություն: Իր գիտական ուսումնասիրություններում Ա. Աղասյանը մեծ կարևորություն է տալիս հարևան երկրների, ինչպես նաև Ռուսաստանի ու Եվրոպայի հետ XIX–XX դարերում Հայ կերպարվեստի ունեցած առն-

<sup>14</sup> Տե՛ս Մ. Ղ ա գ ա ղ յ ա ն, Ա. Ա ղ ա ս յ ա ն. Մարտիրոս Սարյան: Կյանքի և ստեղծագործության տարեգրություն, Երևան, 1980, 317 էջ:

չություններին և զուգահեռներին: Այդ հարցերի բազմակողմանի լուսաբանման շնորհիվ նա բացահայտել է ոչ միայն դրանց պատմական ձևավորման ու զարգացման ընդհանուր օրինաչափությունները, այլև յուրաքանչյուրին բնորոշ տարբերությունները: Հատկապես ուշագրավ են հայ-ռուսական, հայ-խոսպական և հայ-ֆրանսիական գեղարվեստական կապերին նվիրված՝ Ա. Աղասյանի գիտական հրապարակումներն ու գեկուցումները:

Հայ ժողովրդի՝ այլ ժողովուրդների հետ ունեցած մշակութային առնչությունների ուսումնասիրության բնագավառում առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում հայ-ռուսական մշակութային կապերի ուսումնասիրությունը: 2015 թ. լույս ընծայվեց Ա. Աղասյանի և տողերիս հեղինակի «Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ (XIX դար–XX դարի սկիզբ)» աշխատությունը: Գրքի առաջին՝ «Սանկտ Պետերբուրգում կրթված հայ արվեստագետները» վերտառությամբ պատմական ակնարկում Ա. Աղասյանը հանգամանորեն ներկայացրել է Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաք Սանկտ Պետերբուրգում Գեղարվեստի կայսերական ակադեմիայում ու գեղարվեստական այլ կրթարաններում մասնագիտացած, այնտեղ ապրած և գործած հայ արվեստագետների ստեղծագործական դիմանկարները՝ գիտական շրջանառության մեջ դնելով մի շարք մոռացված կամ կիսամոռացված անուններ, անհայտ ստեղծագործություններ, կենսագրական նորահայտ փաստեր ու վկայություններ:

Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 2018 թ. լույս ընծայվեց Ա. Աղասյանի «Հայ կերպարվեստի և կիրառական արվեստի կորուստներն Օսմանյան կայսրության տարածքում (համիդյան ջարդերից մինչև մեր օրերը)» մենագրությունը, որտեղ պատմական ակնարկի ձևով ներկայացվում են հայ կերպարվեստի և կիրառական արվեստի կորուստներն Օսմանյան կայսրության տարածքում՝ սկսած համիդյան ջարդերից մինչև մեր օրերը: Հեղինակը, հենվելով թեմային առնչվող հայ և օտարազգի մասնագետների ուսումնասիրությունների՝ գրքերի ու հոդվածների, հուշագրությունների ու նամակների, հին ու նոր մամուլի և այլ աղբյուրների վրա, բերում է հայկական վանքերում ու եկեղեցիներում պահվող մանրանկարներով զարդարված մեր միջնադարյան ձեռագրերի, ինչպես նաև որմնանկարների, սրբանկարների, քանդակների, խաչքարերի ու խաչարձանների, կիրառական արվեստի տարատեսակ նմուշների միտումնավոր ոչնչացման և յուրացման բազմաթիվ օրինակներ, ինչը վկայում է այդ ժամանակաշրջանում տեղի ունեցած ու այսօր էլ պարբերաբար շարունակվող մշակութային վանդալիզմի մասին:

Ա. Աղասյանն իր նոր խոսքն է ասել կոմիտասագիտության բնագավառում ևս: 2019 թ. լրացավ Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանը, որին ակտիվորեն մասնակցեց ոչ միայն Արվեստի ինստիտուտը, այլև անձամբ վաստակաշատ արվեստաբանը: Հայտնի է, որ Կոմիտասի կերպարին անդրադարձել են հայ գեղանկարիչներից ու քանդակագործներից շատերը թե՛ նրա կենդանության օրոք, թե՛ հետմահու: ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի 2019 թ. մարտի 25-ի նիստում, բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յու. Սուվարյանի առաջարկությամբ, Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանին ընդառաջ, Ա. Աղասյանը հանդես եկավ «Կոմիտասը հայ կերպարվեստում» գեկուցմամբ: Այն լայն արձագանք գտավ

ակադեմիական շրջանակներում, և ակադեմիկոս Յու. Սուվարյանի առաջարկությամբ հոգվածի տեսքով տպագրվեց «Բանբեր հայագիտության» հայագիտական միջազգային հանդեսում:

Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմը 2019 թ. սեպտեմբերի 20–22-ը Մոսկվայում գումարեց «Национальная классика в мировом художественном контексте» խորագրով միջազգային գիտական կոնֆերանս՝ նվիրված Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյաններին: Արվեստի ինստիտուտը նշված գիտական միջազգային կոնֆերանսի համակարգման և կազմակերպությունն էր՝ Կոմիտասի մասով: Ա. Աղասյանը՝ կոնֆերանսի «Կոմիտասի դերն ու նշանակությունը Հայ մշակույթում» մասնաճյուղի համադեկավարը, լիազուգույն նիստում հանդես եկավ «Կոմիտասի կերպարը Հայ կերպարվեստում» բանախոսությամբ: Տարեվերջին լույս տեսավ նրա «Կոմիտասը Հայ նկարիչների և քանդակագործների աչքերով» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) պատկերագիրը, որտեղ ներկայացված ստեղծագործություններն ունեն ինչպես գեղարվեստական ակնհայտ արժանիքներ, այնպես էլ պատմամշակութային և վավերագրական նշանակություն:

Ա. Աղասյանի ուսումնասիրությունների վերաբերյալ տպագրվել են ավելի քան 80 գրախոսականներ ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Կանադայում, Լիբանանում, Իրանում: Նրա գիտական խմբագրությամբ հրատարակվել է 70 գիրք ու մենագրություն:

Կերպարվեստագիտության ակնառու ժառանգության կողքին հիշատակության է արժանի Ա. Աղասյանի ներդրումը Հայ պոեզիայում, թարգմանչական արվեստում: Քչերին է հայտնի, որ դեռևս պատանեկան տարիներին նա ստեղծագործել է, բանաստեղծություններ գրել հայերենով և ռուսերենով, որոնք, ցավոք, մինչ օրս անտիպ են: 2013 թ. Ա. Աղասյանն ընթերցողի դատին հանձնեց «Ռուսական պոեզիայի դանձարանից» ժողովածուն, որտեղ ներառել է XIX–XX դարերի ռուսական պոեզիայի լավագույն նմուշներն ու դրանց սեփական թարգմանությունները, որոնք հետաքրքրեցին ընթերցողներին և դրական արձագանքներ գտան գրականագետների շրջանում:

Ա. Աղասյանը գիտության հմուտ կազմակերպիչ է: 1991 թ. հունիսի 1-ին նա նշանակվում է Արվեստի ինստիտուտի գիտքարտուղար և գիտական խորհրդի քարտուղար: 1995 թ. օգոստոսի 8-ին Արվեստի ինստիտուտում ստեղծվեց հանրապետությունում միակ արվեստագիտության բնագավառի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհուրդը, որի ակունքներում կանգնած էր Ա. Աղասյանը. նա խորհրդի առաջին գիտքարտուղարն էր, այնուհետև՝ միակ գիտությունների թեկնածու անդամը, 2009-ից՝ նախագահի տեղակալը: 2003 թ. ի վեր Ա. Աղասյանն ինստիտուտի գիտական խորհրդի նախագահն է:

Վարչական աշխատանքի ընթացքում դրսևորվեցին Ա. Աղասյանի գիտության կազմակերպչի աներկբա ունակությունները. Արվեստի ինստիտուտի կոլեկտիվի կողմից 2003-ի գարնանը, իսկ հունիսի 6-ին ԳԱԱ նախագահության կողմից միաձայն նա հաստատվեց Արվեստի ինստիտուտի տնօրեն, իսկ 2008, 2013 և 2019 թթ. վերընտրվեց նույն պաշտոնում:

Ա. Աղասյանն ինստիտուտում ոչ միայն պահպանեց և շարունակեց նախկին տնօրենների ակադեմիկոսներ Ռուբեն Զարյանի և Լևոն Հախվերդյանի բարի ավանդույթները, այլև իր հմուտ ղեկավարությամբ հայ արվեստագիտության գլխավոր օջախը բերեց նոր հանգրվանի: Արվեստի ինստիտուտի տնօրենի պաշտոնում նրա պաշտոնավարման 18 տարիների ընթացքում ինստիտուտում վերստեղծվել են թատրոնի (2004) և սիյուռքահայ արվեստի (2009, 2014-ից՝ սիյուռքահայ արվեստի և միջազգային կապերի) բաժինները: Նրա նախաձեռնությամբ 2004 թ. վերստեղծվեց ինստիտուտի երիտասարդ արվեստաբանների խորհուրդը և ինստիտուտի պատմության մեջ առաջին անգամ կազմակերպվեցին արդեն ամենամյա դարձած՝ երիտասարդ արվեստաբանների գիտական նստաշրջանները, հիմնարկվեց «Հայ արվեստի հարցեր» մատենաշարը, հրատարակվեցին «Հայ ավանդական երաժշտության» 13 հատորները: 2014–2018 թթ. ինստիտուտը հրատարակել է «Կանթեղ» գիտական պարբերականը, իսկ 2019-ից՝ «Արվեստագիտական հանդեսը»:

Ա. Աղասյանի առաջարկությամբ և մեծ ջանքերի շնորհիվ Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդին ԲՈԿ-ի կողմից ստրվեց ԺԼ. ՕՕ. Օ1 – «Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհման իրավունք: Նրա նախաձեռնությամբ վերականգնվեց ՀՀ ԳԱԱ Թորոս Թորամանյանի անվան մրցանակը, որն արդեն շնորհվել է երկու անգամ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասարաթյանին և ճարտարապետության դոկտոր Գառնիկ Շախկյանին (2011), ինչպես նաև ԳԱԱ արտասահմանյան անդամ Արմեն Ղազարյանին (2015):

Ա. Աղասյանի գիտական ու գիտակազմակերպական բեղմնավոր աշխատանքը հաջողությամբ զուգակցվում է մանկավարժական և հասարակական ակտիվ գործունեության հետ: Պրոֆեսորը տարիներ շարունակ դասավանդել է Երևանի պետական համալսարանում և Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում՝ սեփական փորձն ու գիտելիքները փոխանցելով ապագա արվեստաբաններին: Բազմիցս ղեկավարել է արվեստաբանության գծով պետական քննությունների և ավարտական աշխատանքների հանձնաժողովները Երևանի պետական համալսարանում, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում, իս. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Վերջին չորսնամ վաստակաշատ գիտնականը ձեռնամուխ է եղել արվեստի դպրոցների և գեղարվեստական ուսումնարանների աշակերտության համար նախատեսված «Արվեստի պատմություն. կերպարվեստ» ուսումնական ձեռնարկի ստեղծման աշխատանքներին: Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 2020 թ. լույս տեսավ ձեռնարկի առաջին գիրքը, որը ներկայացնում է նախնադարյան կերպարվեստից մինչև եվրոպական Վերածննդի դարաշրջանի կերպարվեստը:

2008-ից ի վեր Ա. Աղասյանը «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ թեկնածուական որակավորման քննական հանձնաժողովի նախագահն է: Նշանակալի է արվեստաբանի ներդրումը երիտասարդ կադրերի պատրաստման գործում: Նրա գիտական ղեկավարութ-

յամբ պաշտպանվել է թեկնածուական տասնչորս ատենախոսություն: Ա. Աղասյանի ասպիրանտների թվում են նաև Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիները:

Ա. Աղասյանն ընդգրկվել է «Գրականության և արվեստի բնագավառում արվեստի ոլորտի ՀՀ պետական մրցանակների շնորհման» (2009), «Հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում ՀՀ պետական մրցանակների շնորհման» (2011, 2013, 2015, 2017) և «Հանրապետության Նախագահի մրցանակների շնորհման» արվեստի (2006–2009) հանձնախմբերում: Նա ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի, ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյի անդամ է, ՀՀ նկարիչների միության վարչության անդամ: Ընդգրկված է ՀՀ ԳԱԱ փորձագիտական ազգային բյուրոյի, Հայաստանի ազգային պատկերասրահի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Հայաստանի ժողովրդական արվեստի, Ռուսական արվեստի թանգարանի (Պրոֆեսոր Արամ Աբրահամյանի հավաքածու), Կոմիտասի թանգարան-ինստիտուտի, Մարտիրոս Սարյանի ու Երվանդ Քոչարի թանգարանների գիտական խորհուրդների, ինչպես նաև «Հայկական հանրագիտարանի» գիտահրատարակչական խորհրդի, «Լրաբեր հասարակական գիտությունների», «Բանբեր հայագիտության» և «Գիտության աշխարհում», Արվեստի ինստիտուտի նորաստեղծ «Արվեստագիտական հանդեսի», ՀՀ նկարիչների միության «Կերպարվեստ» հանդեսների, «Կանթեղ» գիտական պարբերականի, Ստեփանակերտի (ԼՂՀ) «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու» գիտական հոդվածների ժողովածուի խմբագրական խորհուրդների կազմում:

Գիտական և գիտակազմակերպական ծանրակշիռ վաստակի համար Ա. Աղասյանն արժանացել է ՀՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման (2008), պարգևատրվել ՀՀ ԳԱԱ Պատվոգրով (2005) ու Վաստակագրով (2016), ՀՀ կրթության և գիտության նախարարության «Ոսկե հուշամեդալով» (2008), ՀՀ մշակույթի նախարարության «Ոսկե մեդալով» (2008):

Հավարտ խոսքիս՝ ուզում եմ շնորհավորել մեր սիրելի հոբելյարին, մաղթել բազմաթիվ հոբելյաններ և գիտաստեղծագործական նորանոր ձեռքբերումներ:

ԱՆՆԱ ԱՍԱՏԻՅԱՆ

ՀԱՅ ԲԱՐՔԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ  
(Վիկտոր Կատվայանի ծննդյան 60-ամյակի առթիվ)\*

Բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Վիկտոր Լիպարիտի Կատվայանն արդեն 60 տարեկան է: Ծնվել է 1961 թ. հուլիսի 10-ին Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղում: 1967–1977 թթ. սովորել է տեղի Ս. Մակարյանի անվան դպրոցում: 1979 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: Ուսումնառության տարիներին Վ. Կատվայանն ստանձնահատուկ հետաքրքրություն է ցուցաբերել հայոց լեզվի նկատմամբ:



Այս շրջանում են զբաղվում նրա լեզվական հետազոտություններ կատարելու ունակությունները. ձևավորվում էր ապագա լրջախոհ գիտնականը: 1984 թ. Վ. Կատվայանը գերազանցությամբ ավարտում է համալսարանը և ընդունվում ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրան: 1991 թ. «Հնչյունների համակցական փոփոխությունները ժամանակակից հայոց լեզվում» թեմայով պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն և ստանում բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ասպիրանտուրան ավարտելուց հետո՝ 1987–1993 թթ., աշխատանքի է անցնում ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող: Երբ փիլ. գ. դ., պրոֆ. Երջանկահիշատակ Հր. Հակոբյանի նախաձեռնությամբ 1993 թ. Գավառում բացվում է անկախության շրջանի տարածաշրջանային առաջին պետական բուհը, Վ. Կատվայանը հրավիրվում է Գավառի պետական համալսարան՝ աշխատելու որպես դասախոս, այնուհետև՝ 1998–2004 թթ., ղեկավարում է համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետը, իսկ 2004–2012 թթ. բանասիրական ֆակուլտետի ղեկանն էր: 2012 թ. Վ. Կատվայանը ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենն է: Այդ ընթացքում՝ 2016 թ., նա պաշտպանում է «Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ» թեմայով թեզ և ստանում բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Թե՛ Գավառի պետական համալսարանում, թե՛ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում Վ. Կատվայանը ծավալել է ուսումնագիտական, կազմակերպչական, վարչական ակտիվ գործունեություն: Մի հայացք զցելով նրա անցած ուղուն՝ տեսնում ենք, մի կողմից՝ սիրալիր, ազնիվ, բարեհամբույր, պատրաստակամ ու կենսասեր մարդուն, մյուս կողմից՝ սկզբունքային,

\* Ներկայացվել է 10. VI. 2021 թ., ընդունվել է տպագրության 15. VI. 2021 թ.:

խիստ ու պահանջկոտ գիտնականին և գիտության կազմակերպչին: Մարդուն և ճշմարիտ գիտնականին բնորոշ այս հատկանիշների շնորհիվ է նրան հաջողվում աշխատավայրում ստեղծել փոխըմբռնման ու փոխվատահաճության անկաշկանդ աշխատանքային մթնոլորտ:

Այնուամենայնիվ, նման անհատների գործունեությունն ուսումնասիրելիս ու ապա գնահատելիս նախ և առաջ պետք է արժևորել նրանց ներդրումն ու ավանդը գիտության տվյալ ոլորտում: Այս տեսակետից քննելով Կատվայան-գիտնականի գործունեությունը՝ կարելի է աներկբա փաստել, որ նրա լեզվաբանական ուսումնասիրություններն իրապես նոր ձեռքբերումներ են հայերենագիտության, մասնավորապես հայ բարբառագիտության մեջ:

Վ. Կատվայանի գիտական գործունեությունը սկսվում է XX դարի 80-ական թվականներից, երբ նա սկսում է մասնակցել երիտասարդ գիտնականների հանրապետական գիտաժողովներին՝ ներկայացնելով ժամանակակից հայերենի հնչյունափոխությանը վերաբերող դիտարկումներ՝ կապված հնչյունափոխության տեսակներին, հայերենի բաղաձայնական խմբերում արտահայտված հիմնական ուղղություններին: Արդի հայերենում հնչյունների համակցական փոփոխությունների և այլ հնչյունափոխությունների հետ ունեցած դրանց հարաբերակցությանը վերաբերող ուսումնասիրությունների արդյունքները հետագայում տեղ գտան թեկնածուական ատենախոսության մեջ:

Վ. Կատվայանի հետաքրքրությունների շրջանակում ներառված են այնպիսի լեզվական իրողություններ, որոնք խնդրահարույց են, լուծում պահանջող կամ էլ վերաարժևորման կարիք ունեն: Մասնավորապես խոսքը վերաբերում է արդի հայերենի գոյականների հոլովման համակարգում դրսևորվող անկանոնություններին, որոշյալ դերանունների յուրահատկություններին, բարդ ստորադասական նախադասությունների դասակարգման հարցերին և այլն [տե՛ս, օրինակ, «Արդի հայերենի գոյականի հոլովման համակարգում դրսևորվող անկանոնությունների մասին» (Գավառ, 2004), «Մի քանի նկատառում արդի հայերենի որոշյալ դերանունների վերաբերյալ.— «Լեզու և լեզվաբանություն»» (Երևան, 2004, № 1–2), «Հայոց լեզվի շարահյուսության հարցեր» (Գավառ, 2003) և այլ հոդվածներ]:

Դասախոսական աշխատանքի ընթացքում Վ. Կատվայանը հեղինակել է ուսումնամեթոդական օժանդակ ձեռնարկներ, որոնք հասցեագրված են եղել աշակերտներին, դիմորդներին ու ուսանողներին՝ նպատակ ունենալով նրանց փոխանցել հայերենի ուղղագրությանը և կետադրությանը վերաբերող գիտելիքներ ու նպաստել դրանց գործնական յուրացմանը [«Ուղղագրական և կետադրական ուղեցույց (օժանդակ ձեռնարկ աշակերտների, դիմորդների և ուսանողների համար)» (Երևան, 1998), «Բաղադրյալ բառերի ուղղագրական բառարան» (Երևան, 1999)]:

Վ. Կատվայանը ինքնատիպ մոտեցում է ցուցաբերել թեղադրության տեքստերը կազմելիս: Դրանք բովանդակային առումով «տարօրինակ են», սակայն տպավորիչ են ու հիշվող, միաժամանակ ուղղագրական բարդություն ունեցող մեծ քանակությամբ բառեր են պարունակում:

Խիստ կարևորելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր լեզվակիր պետք է լեզվական որոշակի գրագիտություն ունենա, Վ. Կատվայանը ուսանողու-



յան համար կազմեց մի ձեռնարկ ևս, որտեղ ներկայացրեց լեզվական գիտելիքների այն նվազագույն պաշարը, որին պետք է տիրապետեն բոլորը՝ անկախ իրենց մասնագիտությունից [«Գիտելիքների նվազագույն պաշար (ժամանակակից հայոց լեզու), մեթոդական ձեռնարկ» (Երևան, 2010)]:

Վ. Կատվայյանի գիտական գործունեության հետագծին հետևելիս ակներև է դառնում, որ նրա հետաքրքրությունների կիզակետում հայ բարբառագիտության հիմնահարցերն են: Բարբառագիտությունը, թերևս, հայերենագիտության այն ոլորտներից է, որտեղ ավելի շատ են հարցականները: Եվ դա պատահական չէ: Դարեր շարունակ բարբառների գրանցումների բացակայությունը, գրառվածների ուսումնասիրությունն ակարագրականությունը, գրական լեզվի և բարբառի տարանջատ քննությունները, բարբառային երևույթների ոչ լիարժեք, հաճախ էլ ոչ ճիշտ մեկնությունները, բարբառների մշտատև գոյություն ժխտումը և այլ իրողություններ խոչընդոտում են դրանց թե՛ համաժամանակյա, թե՛ տարաժամանակյա ուսումնասիրություններին: Այս առումով Վ. Կատվայյանի՝ բարբառներին նվիրված 50-ից ավելի հոդվածները, 4 մենագրությունները իսկապես խոշոր ու անուրանալի ներդրում են հայ բարբառագիտության մեջ, մանավանդ եթե նկատի ունենանք, որ գիտնականը չի գնացել տրոբված ուղիով, խուսափել է գիտությունը ոչինչ չտվող արտաքին, տեսանելի իրողությունների նկարագրականությունից և գնացել խորքային վերլուծությունների ճանապարհով՝ բարբառների ուսումնասիրության ուղղությամբ ձևավորելով նոր մոտեցում ու վերաբերմունք հայ բարբառագիտության մեջ:

2014 թ. լույս է տեսնում «Հայ բարբառագիտության հարցեր» հոդվածների ժողովածուն, որտեղ ներկայացված են ինչպես ընդհանուր-տեսական, այնպես էլ առանձին բարբառներին նվիրված գիտարկումներ, որոնք խիստ արդիական են և կարևոր նշանակություն ունեն ընդհանրապես հայերենի ուսումնասիրության համար: Նշենք այդ գիտարկումներից մի քանիսը: Գրական լեզու-բարբառ հարաբերություններում գերագնահատվում է գրական լեզվի դերն այն աստիճան, որ որոշ լեզվաբաններ հակապատմական «կանխատեսումներ են» անում բարբառների վերացման վերաբերյալ: Վ. Կատվայյանը իրավացիորեն նշում է, որ ընդհանրապես լեզու-գրական լեզու-բարբառ հարաբերությունների ոչ ճիշտ, փաստազուրկ մեկնաբանությունները խանգարում են բարբառների առաջացման և պատմական զարգացման, արտալեզվական գործոնների ու հասարակական վերաբերմունքի, նրանց դասակարգման և սահմանման, գրական լեզուների ձևավորման և այլ լեզվական իրակությունների վերաբերյալ ճիշտ պատկերացումներ կազմելուն: Բայագետի բարբառի ուսումնասիրության ընթացքում բացահայտվել են նաև այլ իրողություններ: Այսպես, բարբառագետները հայտնի «Աճառյանի օրենքի» պարագայում շատ շեղումներ են նկատում, ուստի տրվում են լրացուցիչ բացատրություններ ու ճշգրտումներ, մինչդեռ լեզվաբանի գիտարկումները, հիմք ունենալով Բայագետի բարբառի առանձնահատկությունները, թույլ են տալիս վերա-ձևակերպելու և ունենալու շեղումները բացառող «Աճառյանի օրենք»: Շատ կարևոր է նաև այն մտահանգումը, որ գրական լեզվում առկա շատ իրողություններ, որոնք դժվար է բացատրել հենց գրական լեզվի միջոցով, հնարավոր է բացատրել բարբառային նյութի հիման վրա: Այս մոտեցումն էլ Վ. Կատվայ-

յանին հնարավորություն է տվել ամբողջական լուծում տալ մեսրոպյան է և և գրերի հնչյունական արժեքին և ուղղագրությանը վերաբերող հարցերին: Նշենք, որ բարբառների հետ կապված այս և այլ հիմնահարցերն առավել ամբողջական ու փաստալից արծարծվել են 2016 թ. լույս տեսած «Բայագետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ» ստվարածավալ աշխատության մեջ (534 էջ): Այստեղ արդեն համակողմանի ուսումնասիրության են ենթարկված Բայագետի բարբառը և նրա լեզվական առնչությունները Վանի, Դիաղինի, Մշո, Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառների հետ: Գրքում հնչյունաբանական, բառագիտական, ձևաբանական հսկայածավալ նյութ է շրջանառության մեջ դրվել՝ ներկայացնելով նշված բարբառների լեզվական առանձնահատկությունները, դրանց առնչակցությունները և կատարելով հնչյունաքերականական քննություն՝ զուգադրական-վիճակագրական մեթոդով:

Վ. Կատվայյանի գլխավորած բարբառագետների խումբը բարբառագիտության ոլորտում նպատակաուղղված ու արդյունավետ գործունեություն ծավալեց 2013 թ. սկսած՝ Գիտության պետական կոմիտեի Ֆինանսական աջակցությամբ կազմակերպելով և փուլ առ փուլ իրականացնելով բարբառագիտական գիտարշավներ Գեղարքունիքի, Կոտայքի և Արագածոտնի մարզերում: Եթե նախկինում բարբառային նյութերը հիմնականում հավաքվում էին միջնորդավորված (ուսանողների և այլոց միջոցով) ձևով, ապա այս դեպքում շփումները բարբառախոսների հետ անմիջական էին ու տեխնիկական միջոցների կիրառմամբ, որոնք հնարավորություն էին տալիս խուսափելու թյուրմբռնումներից: Այս գիտարշավների ընթացքում հավաքած նյութերը Վ. Կատվայյանը ներկայացրել է երկու ստվար հատորներում՝ «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր», գիրք 1. Գեղարքունիքի մարզ (Երևան, 2018, 402 էջ), գիրք 2. Կոտայքի մարզ (Երևան, 2020, 492 էջ): Ընթացքի մեջ է նաև Արագածոտնի մարզին նվիրված հատորի կազմությունը: Ինչո՞վ են արժեքավոր այս աշխատությունները: Նախ՝ ներկայացված են նշված տարածաշրջաններում գործածվող բարբառներն ու խոսվածքներն իրենց հնչյունական, քերականական նկարագրերով, ապա՝ տեսաձայնագրումների և հարցումների միջոցով գրանցվել են բարբառային ու բանահյուսական նյութեր՝ ժողովրդագրական տվյալներով և փաստերով հանդերձ: Ըստ էության, բացահայտվել է նշված տարածաշրջանների բարբառային ընդհանուր պատկերը արդի փուլում:

Հավելենք նաև, որ Վ. Կատվայյանը ոչ միայն հիանալի բարբառագետ է, այլև հրաշալի բանահավաք, որի ապացույցը «Բավառա խանաք-չանաք (զվարճապատումներ Բայագետի բարբառով)» (Երևան, 2009) ժողովածուն է, որտեղ հավաքված են դեպքեր՝ կապված Գավառի տարածաշրջանի իրական մարդկանց հետ, որոնցից շատերը հիմա էլ կան: Ցավոք վերջին երկու տարում դեպի մարզեր բարբառագիտական գիտարշավները դադարեցվել են՝ պայմանավորված հանրապետությունում ստեղծված իրավիճակով:

Վ. Կատվայյանի տեսադաշտից դուրս չեն մնում արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրության, ուսուցման, գործառության, կանոնակարգման արդի հիմնախնդիրները, որոնց առնչությամբ ելույթներով, գեկուցումներով ինչպես ինքն է հանդես գալիս, այնպես էլ իր ղեկավարած գի-

տական հաստատությունում պարբերաբար կազմակերպվում են քննարկումներ, բանավեճեր, գիտաժողովներ՝ ուսանողների, ուսուցիչների, տարբեր հաստատությունների ներկայացուցիչների և նշված հարցերով հետաքրքրվողների մասնակցությամբ:

Նա զբաղվում է նաև ակտիվ մանկավարժական գործունեությամբ՝ դասավանդելով մի շարք լեզվաբանական առարկաներ Գավառի պետական համալսարանում:

Վ. Կատվալյանը գտնվում է իր ուժերի ծաղկման շրջանում, ունի բազում մտահղացումներ, որոնց իրագործումը հայ լեզվաբանության համար, անկասկած, կլինի գիտական ձեռքբերում: Հոբեյարին մաղթենք քաջառողջություն և հաջողություններ իր գիտամանկավարժական ու վարչակազմակերպչական գործունեության մեջ:

ԹԱԹՈՒԼ ԱՍՈՅԱՆ

Բ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնի վարիչ, Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան: Գիտական հետաքրքրությունները՝ արևմտահայերենի պատմություն, Միլիթարյան միաբանության հայերենագիտական գործունեություն, ժամանակակից հայերենի բառապաշարի և քերականական կառուցվածքի ուսումնասիրություն: Հեղինակ է 1 մենագրության, 2 ուսումնական ձեռնարկի և ավելի քան 18 հոդվածի: asoyan.60@mail.ru

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՁԱՆ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՆԿԻՐՎԱԾ  
ՄԿՐՏԻՉ Ա ԽՐԻՄՅԱՆԻ ԵՎ ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ  
ԾՆՆԴՅԱՆ 200-ԱՄՅԱԿՆԵՐԻՆ

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքում ավանդույթ է ձևավորվել հայ գրականության ու մշակույթի մեծերի նշանակալից հոբելյաններն առանձին գիտական նստաշրջաններով նշել նաև Ռուսաստանի Դաշնության ակադեմիական հաստատություններում:

2019 թ. Հովհաննես Թումանյանի և Կոմիտաս վարդապետի 150-ամյակները Մոսկվայում նշվեցին Ա. Մ. Գորկու անվան համալսարհային գրականության ինստիտուտի և Ռուսաստանի Հայոց թեմի հետ համատեղ:

2020 թ. ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի, Մաշտոցի անվան Մատենադարանի ու Երևանի պետական համալսարանի համատեղ կազմակերպմամբ եռօրյա նստաշրջանով հանդիսավորապես նշվեցին Մկրտիչ Ա Խրիմյանի և Հայր Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակները: Զուգահեռ ծրագրված էր Պետերբուրգում Պետական էրմիտաժի և Պետերբուրգի համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետի հետ գիտական հատուկ նստաշրջան նվիրել Խրիմյան Հայրիկին և Հայր Ղևոնդ Ալիշանին: Համավարակի պատճառով նախ գիտաժողովը հետաձգվեց և ապա տեղի չունեցավ Արցախյան 44-օրյա պատերազմի պատճառով:

Կարևորելով գիտաժողովի դերը ո՛չ միայն այս երկու նվիրական անունների կյանքի և գիտագրական ժառանգության ուսումնասիրման, այլև հայ-ռուսական գիտական համագործակցության ու պատմական կապերի հետազոտման տեսանկյունից՝ այն կազմակերպվեց Պետերբուրգում սույն թվականի ապրիլի 27–28-ին: Գիտաժողովը կրում էր հետևյալ խորագիրը՝ «Հայ մեծ լուսավորիչներ Մկրտիչ Ա Խրիմյանը և Հայր Ղևոնդ Ալիշանը»:

Գիտաժողովը բացվեց Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի օրհնության խոսքով:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունի խոսքով ղեմեցին Պետական էրմիտաժի տնօրեն, ակադեմիկոս Միխայիլ Պրոտորովսկին, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, ՌԴ ԳԱԱ թղթակից անդամ, Պետերբուրգի արևելյան ձեռագրերի ինստիտուտի տնօրեն Իրինա Պոպովան, Մխիթարյան միաբանության անդամ Հ. Վահան Օհանյանը, Պետերբուրգի համալսարանի Մերձավոր Արևելքի ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Նրիկոլայ Դյակովը, «Ռուսական աշխարհ» հիմնադրամի Պետերբուրգի մասնաճյուղի տնօրեն Օլեգ Մուկովսկին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր Վարդան Դևրիկյանը:

Ինչպես նշվեց ողջույնի խոսքերում, գիտաժողովի անցկացման վայր էր ընտրվել Պետերբուրգը, որովհետև թե՛ Խրիմյանի և թե՛ Ալիշանի կյանքի մի շարք դրվագներ սերտորեն կապված են Ռուսական կայսրության մայրաքաղաքի հետ: Կաթողիկոսական ընտրությունից և Ս. Էջմիածին հասնելուց հետո Մկրտիչ Ա Խրիմյանն այցելել ու փառավոր ընդունելության է արժանացել ռուսական արքունիքում, ինչպես նաև սերտ կապեր է ունեցել քաղաքի հայ հասարակության ներկայացուցիչների հետ:

Նույնը վերաբերում է Հայր Ղևոնդ Ալիշանին, ով տասնամյակներ շարունակ նամակագրական կապեր է ունեցել Մոսկվայի և Պետերբուրգի տարբեր գիտնականների, այդ թվում՝ Ժան Մարի Բրոսսեի, Նիկողայոս Մառի և Վլադիմիր Ստասովի հետ:

Գիտաժողովի մի շարք զեկուցումներ նվիրված էին հայ ժողովրդի այս երկու մեծ զավակներին՝ Պետերբուրգի հետ ունեցած գիտահասարակական կապերին, ինչպես նաև հայ ժողովրդի կյանքում Ռուսաստանին վերապահված դերին Ալիշանի ու Խրիմյանի ընկալմանը:

Գիտաժողովի ընթացքում ընթերցվեց 38 զեկուցում: Ուրախալի էր հատկապես այն հանգամանքը, որ զեկուցումներից վեցի հեղինակները Մոսկվայի և Պետերբուրգի գիտնականներ էին, ինչը վկայում է ռուսական գիտական միջավայրում հայագիտական ավանդների շարունակման մասին:

Ինչպես որ Խրիմյանը և Ալիշանը գիտագրական հարուստ ժառանգություն թողեցին ու ապրեցին ազգային-հասարակական և եկեղեցական բուռն կյանքով, այնպես և թեմատիկ լայն ընդգրկում ունեին նրանց նվիրված զեկուցումները:

Առանձին զեկուցումներ նվիրվեցին Ալիշանի բանաստեղծական ժառանգությանը և թարգմանություններին, աշխարհագրական ուսումնասիրություններին:

Զեկուցումների մի խումբ նվիրված էր Խրիմյան Հայրիկի ազգային-եկեղեցական գործունեությանը:

Մի շարք զեկուցումներով հատուկ քննության ենթարկվեցին հայ երգարվեստի զարգացման գործում Ալիշանի և Խրիմյանի ունեցած դերը, ինչպես նաև նրանց նվիրված գրական, հուշագրական, երաժշտական ու արվեստի ստեղծագործությունները:

Վերլուծվեցին նաև Խրիմյանի ու Ալիշանի ստեղծագործությունների լեզվական յուրահատկությունները և չափածոյի տաղաչափական համակարգը, նրանց խմբագրական գործունեությունը և հրատարակած ամսագրերի ձևավորումների գեղարվեստական առանձնահատկությունները:

Վեր հանվեցին գրական, աշխարհայացքային և մարդկային այն ընդհանրությունները, որոնք առկա էին նվիրական այս երկու դեմքերի միջև:

Գիտաժողովի արդյունքների ամփոփման ժամանակ ռուսական կողմը պատրաստակամություն հայտնեց ամեն տարի կազմակերպել հայագիտական մեկ գիտաժողով՝ նվիրված որևէ նշանակալից հոբելյանի կամ որևէ թեմայի:

ԳՐԻԳՈՐ ԵԳՈՐԻ ԱՍԱՏՐՅԱՆ



Հայ հասարակայնությունը, գիտական հանրությունն ու բարձրագույն դպրոցը ծանր կորուստ կրեցին. 2021 թ. ապրիլի 27-ին, կյանքի 86-րդ տարում COVID-19-ի հետևանքով կյանքից հեռացավ պետական-քաղաքական ականավոր գործիչ, Հոլմանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահ, Հյուսիսային համալսարանի գիտական կենտրոնի ղեկավար, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի խորհրդական, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Գրիգոր Եգորի Ասատրյանը:

Գ. Ե. Ասատրյանը ծնվել է 1935 թ. օգոստոսի 31-ին, Էջմիածնի չրջանի Խզնավուզ (ներկայումս՝ Արագած) գյուղում: Գերազանց գնահատականներով ավարտելով նախ հայրենի գյուղի յոթամյա, ապա Աղավնատուն գյուղի միջնակարգ դպրոցը՝ նա ուսումնառությունը շարունակում է Երևանի պետական համալսարանում, որի տնտեսագիտական ֆակուլտետը 1958 թ. Ավարտում է գերազանցության դիպլոմով: Ուսման բոլոր տարիներին նա ցուցաբերում է բարձր առաջադիմություն՝ բոլոր առարկաներից ստանալով «գերազանց» գնահատականներ: Ուսումնառության երկրորդ տարվա սկզբին տեղի է ունենում «ճակատագրական հանդիպումը» փիլիսոփայության հետ: Դեպի փիլիսոփայություն պատանու «չրջադարձի» հարցում բացառիկ էր փիլիսոփայության դասախոսներ, փիլիսոփայական գիտության երախտավորներ, փիլիսոփայական գիտությունների թեկնածուներ Աշոտ Բաբախանյանի ու Մեհենդակ Մելիքյանի և, հատկապես, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Կարապետյանի դերը: Հենց նրանց դասախոսություններն ու նրանց հետ անմիջական շփումներն են նրա մեջ սեր ու նվիրում ձևավորում դեպի տեսական-փիլիսոփայական գիտելիքը:

Համալսարանում սովորելու տարիներին նա ակտիվորեն մասնակցում է տնտեսագիտական ֆակուլտետի և համալսարանի հասարակական-ուսանողական կյանքին: Նա գործուն մասնակցություն է ցուցաբերում հատկապես համալսարանի ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին, այդ ընկերության կողմից անցկացվող ամենատարբեր միջոցառումներին: Երկրորդ կուրսից սկսած մինչև ուսումնառության ավարտը՝ նա ղեկավարում է համալսարանի ուսանողական գիտական ընկերության տնտեսագիտական բաժանմունքը: Համալսարանում փիլիսոփայության բաժնի բացակայության պայմաններում տնտեսագիտական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Գ. Ասատրյանի նախաձեռնությամբ համալսարանի ուսանողական գիտական ընկերության կազմում առաջին անգամ հիմնադրվում է փիլիսոփայական բաժանմունքը, որի անփոփոխ նախագահն է դառնում նա՝ համալսարանում ուսանելու բոլոր տարիներին: 3-րդ կուրսից սկսած մինչև ուսումնառության ավարտը՝

նա կատարում է նաև համալսարանի ուսանողական գիտական ընկերության պատասխանատու քարտուղարի պարտականությունները: Համալսարանի ՈՒԳԼ-ի 1956 թվականի գարնանային տարեկան նստաշրջանում Գ. Ասատրյանի ներկայացրած «Գեղեցիկի փիլիսոփայական ըմբռնումը» զեկուցումը՝ որպես ուսանող-հետազոտողի ինքնուրույն աշխատանք, բարձր է գնահատվում ու շահում առաջին կարգի մրցանակ: Առաջին կարգի մրցանակի են արժանանում նաև համալսարանի ՈՒԳԼ-ի հաջորդ տարիների գիտաժողովներում նրա կարդացած մյուս զեկուցումները՝ «Դեմոկրիտ Աբդերացու փիլիսոփայությունը» և «Մարքսիստական փիլիսոփայությունը ճշմարտության մասին», որոնք, ի դեպ, վկայում են դրանց հեղինակի փիլիսոփայական հետաքրքրությունների լայն շրջանակի մասին: Ընդ որում վերջին զեկուցումը՝ «Մարքսիստական փիլիսոփայությունը ճշմարտության մասին» համալսարանի հրատարակչական խորհրդի երաշխավորությամբ 1958 թ. տպագրվում է համալսարանի ուսանողական գիտական աշխատանքների անդրանիկ ժողովածուում:

1957 թվականի գարնանը համալսարանի փիլիսոփայության ամբիոնի երաշխավորությամբ բուհի ռեկտորատի կողմից նա գործուղվում է Էստոնիա և Լատվիա, որտեղ փիլիսոփայական թեմաներով զեկուցումներով հանդես է գալիս Տարտուի ու Լատվիայի պետական համալսարանի (ք. Ռիգա) ուսանողական գիտական ընկերությունների կոնֆերանսներում:

3-րդ կուրսի սկզբին Գ. Ասատրյանն արժանանում է Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից Երևանի պետական համալսարանում առաջին անգամ սահմանված Միքայել Նալբանդյանի անվան կրթաթոշակին, որն անփոփոխ պահպանում է մինչև համալսարանում ուսումնառության ավարտը:

Գ. Ասատրյանը փայլուն է հանձնում պետական ավարտական քննությունը՝ իր պատասխաններով զարմանք պատճառելով պետական քննական հանձնաժողովին: Պետական քննության գնահատականները հրապարակելիս պետական հանձնաժողովի նախագահ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Թումանյանը նրա պետական քննության արդյունքը ներկայացնում է որպես «գերազանցների գերազանց» և մի պահ ընդհատելով քննության արդյունքների հրապարակումն ու հայացքն ուղղելով քննական դահլիճում ներկա շուրջ հարյուր շրջանավարտներին՝ ասում «Հիմա նա կարող է ձեզ բոլորիդ դաս տալ»:

Համալսարանն ավարտելուն պես 1958 թ. հունիսին Գ. Ասատրյանը պետական գործուղումով աշխատանքի է անցել Սովետական Հայաստանի Մինիստրների սովետի Սովետական վերահսկողության հանձնաժողովում (1962 թվականից՝ Սովետական Հայաստանի պետական վերահսկողության կոմիտե, այնուհետև՝ Հայաստանի Կոմկուսի (ՀԿԿ) կենտկոմի և ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի կուսակցական-պետական վերահսկողության կոմիտե, ՀԽՍՀ ժողովրդական վերահսկողության կոմիտե): Տարիներ շարունակ նա եղել է այդ հիմնարկության կուսակցական կազմակերպության բյուրոյի քարտուղարը, ընտրվել ՀԿԿ Երևան քաղաքի Սպանդարյանի շրջկոմի անդամ, Սպանդարյանի շրջանային խորհրդի ղեպուստատ:

Համալսարանն ավարտելուց անմիջապես հետո, առանց այդ տարիներին ասպիրանտուրա ընդունվելու համար պարտադիր համարվող առնվազն երկու տարվա արտադրական ստաժի, համալսարանի տնտեսագիտական ֆակուլտե-

տի և բուհի գիտական խորհրդի երաշխավորությունների հիման վրա, Հայաստանի գիտությունների ակադեմիայում նրան բացառության կարգով թույլատրում են մասնակցելու 1958 թ. սեպտեմբերին Ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի սեկտորում (հետագայում՝ Ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ) փիլիսոփայության գծով առկա ուսուցման ասպիրանտական տեղի համար անցկացվող մրցույթին: Փայլուն հանձնելով ասպիրանտուրայի ընդունելության քննությունները՝ նա շատ առաջ է անցնում իր մյուս 8 մրցակիցներից: Ընդ որում ասպիրանտուրայում ընդունելության 7 քննությունների առկայության պայմաններում մրցույթի բախտը, փաստորեն, որոշվում է հենց առաջին առարկայի՝ փիլիսոփայության քննության ժամանակ, երբ քննող հանձնաժողովի նախագահ, Հայաստանի ԳԱ թղթակից անդամ Վազգեն Չալոյանը քննական տոմսի և լրացուցիչ բազմաթիվ հարցերին Գ. Ասատրյանի պատասխանների տպավորության ներքո՝ քննությունն ավարտում է «ընդունել սրան» առարկություն չընդունող որոշմամբ:

Սովետական Հայաստանի պետական վերահսկողության բարձրագույն կառույցում Մինիստրների սովետի Սովետական վերահսկողության հանձնաժողովում իր աշխատանքային կարիերան նոր սկսած երիտասարդ մասնագետի խնդրանքով առկա (արտադրությունից կտրված) ուսուցման ասպիրանտական տեղը փոխարինվում է արտադրությունից չկտրված տեղով: Ասպիրանտի գիտական ղեկավարությունը ստանձնում է Ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի սեկտորի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ Հայկազ Ասլանյանը:

1969 թ. դեկտեմբերին Երևանի պետական համալսարանում գործող փիլիսոփայական գիտությունների գծով գիտական աստիճաններ շնորհող միացյալ խորհրդում (խորհրդի նախագահ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հենրի Գաբրիելյան) Գ. Ասատրյանը փայլուն պաշտպանում է իր դիսերտացիան («Հումանիզմի մարքսիստական ըմբռնումը») և ստանում փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ շատ տարիներ անց՝ 2015-ին, իս. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի ղեկավարությամբ գործող ՀՀ ԲՈՂ-ի փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդում պաշտպանում դոկտորական ատենախոսություն («Հումանիզմը արդի դարաշրջանի հիմնախնդիրների համատեքստում»), և խորհուրդը միաձայն նրան շնորհում է փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2015-ից Գ. Ասատրյանն այդ մասնագիտական խորհրդի անդամ էր:

1970 թ. փետրվարին Գ. Ասատրյանն ընտրվում է ՀԿԿ Երևան քաղաքի Սպանդարյանի շրջանային կոմիտեի երկրորդ քարտուղար՝ այդ պաշտոնում աշխատելով մինչև 1977 թվականը: 1977–1978 թթ. նա զբաղեցնում է ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի պրոպագանդայի բաժնի վարիչի պաշտոնը: 1978 թ. Գ. Ասատրյանն ընտրվում է ՀԿԿ Երևան քաղաքի Սպանդարյանի շրջանային կոմիտեի առաջին քարտուղար, ուր աշխատում է մինչև 1983 թվականը:

1980–1981 թթ. նա, խորհրդային Միության Կոմկուսի կենտկոմի որոշմամբ պահպանելով Սպանդարյանի շրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնը, գոր-



ծուղվում է Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետություն, ուր աշխատում է որպես Խորհրդային Միության Կոմկուսի կենտկոմի խորհրդական՝ Աֆղանստանի ժողովրդադեմոկրատական կուսակցության կենտկոմում: Աֆղանական հողում Գ. Ասատրյանի անձնվեր աշխատանքը չի վրիպել ինչպես Աֆղանստանի, այնպես էլ ԽՍՀՄ ղեկավար մարմինների ուշադրությունից: Ծառայությունն ավարտելուց հետո նա արժանանում է այդ երկրի կառավարական պարգևների, Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետության պրեզիդենտի հրամանագրով պարգևատրվում բարձր պարգևով «Երախտապարտ աֆղանական ժողովրդից» շքանշանով: Աֆղանստանից վերադառնալուց հետո՝ 1981 թ., նա պարգևատրվում է Խորհրդային Միության «Պատվո նշան» երկրորդ շքանշանով: Իսկ արդեն տարիներ անց՝ 1988 թ. դեկտեմբերին, նա Խորհրդային Միության Գերագույն Խորհրդի նախագահության հրամանագրով պարգևատրվում է «Ինտերնացիոնալիստ մարտիկին» շքանշանով և «Աֆղանստանի Հանրապետությունում ինտերնացիոնալ պարտքը կատարելիս ցուցաբերած արիության և ռազմական սիրագործության համար» պատվոգրով:

Գտնվելով Աֆղանստանում երկարատև գործուղման մեջ՝ 1980 թ. դեկտեմբերին Գ. Ասատրյանը ՀԿԿ Սպանդարյանի շրջանային կազմակերպության հերթական հաշվետու-ընտրական կոնֆերանսում շուրջ 500 պատվիրակների կողմից փակ (գաղտնի) քվեարկությամբ միաձայն վերընտրվում է Սպանդարյանի շրջանային կոմիտեի առաջին քարտուղար: Իսկ շուրջ 1,5 ամիս անց ՀԿԿ հերթական համագումարում նա, իր բացակայությամբ, ընտրվում է ՀԿԿ կենտկոմի կազմում:

1983 թ. Գ. Ասատրյանն աշխատանքի է տեղափոխվում ՀԿԿ կենտկոմ և նշանակվում կենտկոմի պրոպագանդայի բաժնի վարիչ: 1989 թ. հունվարին ՀԿԿ կենտկոմի հումանիտար պրոֆիլի բոլոր 4 բաժինների միավորման կապակցությամբ Գ. Ասատրյանը նշանակվում է կենտկոմի նորաստեղծ միացյալ ստորաբաժանման գաղափարախոսական բաժնի վարիչ:

1989 թ. մայիսին Գ. Ասատրյանն ընտրվել է ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար, ուր աշխատել է մինչև 1990 թ. օգոստոս ամիսը:

Ղարաբաղյան շարժման առաջին տարիներին՝ 1988–1990 թթ., աշխատելով ՀԿԿ կենտկոմում, այնուհետև կուսակցության Երևանի քաղաքային կոմիտեում նա գտնվել է այդ շարժման հետ կապված ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա շուրջ ծավալվող բուռն իրադարձությունների հորձանուտում:

ՀԿԿ կենտկոմի քաղաքական ղեկավարության հետ, միասնական երկրի Խորհրդային Միության պայմաններում, նա հաստատակամ ջանքեր է գործադրում, այդ թվում՝ զանգվածային պրոպագանդայի, մամուլի, հեռուստատեսության ու ռադիոյի միջոցով շարժումը կառուցողական և հայանապաստ հունով տանելու, Լեռնային Ղարաբաղի հայության ազգային ինքնորոշման, սեփական հողում ազատ ապրելու նրա իրավունքի համընդհանուր ճանաչման հասնելու համար:

Անվերապահորեն պաշտպանելով իր հիմքում խորապես արդարացի ու հայրենասիրական այդ շարժումը՝ նա միաժամանակ սկզբունքային ու անհաշտ դիրքորոշում է դրսևորում և հանդես գալիս երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական բնականոն կյանքը չարամտորեն ապակայունացնող այն օտարամոլ ուժերի դեմ, որոնք հայրենասիրության քողի տակ ամեն կերպ



լորտում նա, չգտնելով իր փորձի ու գիտելիքների կիրառման արժանի ասպարեզ, ստիպված էր հեռանալ ակտիվ հասարակական-քաղաքական կյանքից: Այդ դժան ու դրամատիզմով լի տարիներին նա ժողովրդի հետ կիսեց բոլոր կորուստները և զրկանքները, ցուրտն ու խավարը: Ծանր պայմաններում էլ նա չդավաճանեց իր դավանած գաղափարներին ու սկզբունքներին, իր կենսական կրեդոյին: Որպես սոցիալիզմի գործի նվիրյալ՝ նա ակտիվ ջանքեր գործադրեց ձախ ուժերի միավորման, «Համահայկական սոցիալիստական կոնգրես» հասարակական-քաղաքական կազմակերպության ծրագրային ու կանոնադրական փաստաթղթերի մշակման ուղղությամբ. կազմակերպություն, որը ժամանակ անց՝ 1995 թ., գրանցվեց որպես «Կախա» հայկական կոնգրես հասարակական-քաղաքական կազմակերպություն (ներկայումս՝ «Հայկական սոցիալիստական կոնգրես» կուսակցություն), և որի հիմքում դրվեցին այն ժամանակներում ժողովրդականություն չվայելող և հասարակական գիտակցության կողմից մերժված երկու հիմնարար գաղափարներ՝ սոցիալիզմը, զարգացման սոցիալիստական ուղին ու հայ և ուսու ժողովուրդների, Հայաստանի և Ռուսաստանի բարեկամությունն ու համագործակցությունը:

Տարիներ առաջ՝ 1997-ին, Հայաստանի «Գիտելիք» ընկերության վարչությունն նախագահ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, երջանկահիշատակ Լորիս Քալաչյանի և Գ. Ասատրյանի անձնական ջանքերով ստեղծվել ու գործում է մի ինքնատիպ գիտահետազոտական հաստատություն՝ Հումանիզմի պրոբլեմների ակադեմիան, որտեղ ուշագրավ աշխատանքներ են տարվում ինչպես հումանիզմի տեսության ու պատմության, այնպես էլ արդի հումանիզմի տարբեր ասպեկտների ուսումնասիրության, նոր հազարամյակի հումանիստական պարադիգմայի մշակման ուղղությամբ: Գ. Ասատրյանն այդ Ակադեմիայի նախագահն էր (2002 թվականից), նաև՝ Ակադեմիայում իրականացվող գիտական հետազոտությունների առաջատարը: Հումանիզմի հիմնահարցի տարբեր տեսանկյունների վերաբերյալ նրա մի քանի տասնյակ հոդվածներն ու գեկուցումները տպագրվել են ինչպես Հայաստանի հեղինակավոր գիտական պարբերականներում, այնպես էլ Ռուսաստանի (Սանկտ Պետերբուրգ և այլ քաղաքներ), Ավստրիայի (Վիեննա) և Գերմանիայի (Մյունխեն) մի շարք պարբերականներում ու միջազգային գիտաժողովների նյութերի ժողովածուներում:

Գ. Ասատրյանը մենագրությունների հեղինակ է: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության կողմից 2014 թ. լույս ընծայված նրա «Հումանիզմը նոր հազարամյակի հիմնախնդիրների համատեքստում» ստվարածավալ ու հիմնարար աշխատությունն արժարժվող հարցերի արդիականություն է, մասշտաբայնություն ու վերլուծությունների խորություն է աննախադեպ լինելով հայ իրականության մեջ՝ կարևոր ներդրում է արդի հումանիզմի ամբողջական հետազոտության ասպարեզում, ուշագրավ ու արժեքավոր ուսումնասիրություն միջազգային չափանիշներով:

Կյանքի վերջին օրերին (2015-ից) ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի խորհրդակցական Գ. Ասատրյանն աշխատում էր «Հեգելը արվեստի մասին» մենագրության վրա, ինչպես նաև Միջազգային փիլիսոփայական հանդեսի («International Journal of Philosophy») խմբագրի խնդրանքով առաջիկա համարում հրատարակության էր պատրաստում «Մարդկային կապիտալը հումանիստական աշխարհընկալման համատեքստում» վերնագրով հոդվածը:

1970 թվականից սկսած՝ ղեկավար աշխատանքին զուգընթաց, Գ. Ասատրյանը զբաղվել է գիտամանկավարժական գործունեությամբ՝ տարիներ շարունակ դասախոսական աշխատանք կատարելով հանրապետության բուհերում, ինչպես նաև «Գիտելիք» ընկերության համակարգում:

Հետխորհրդային շրջանում Գ. Ասատրյանն աշխատել է ոչ պետական կազմակերպություններում, վարել Հայաստանի շախմատի Ֆեդերացիայի առաջին փոխպրեզիդենտի և գործադիր տնօրենի պաշտոնները:

Վերջին շուրջ 25 տարիներին Գ. Ասատրյանն աշխատել է ՀՀ ոչ պետական բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում և անմնացորդ նվիրվել բարձրագույն կրթության կազմակերպմանը, գիտամանկավարժական գործունեությանը, աճող սերնդի կրթությանն ու դաստիարակությանը: 1996 թվականից նա աշխատել է Հայկական բաց համալսարանում՝ սկզբում որպես մենեջմենթի ֆակուլտետի ղեկան, ապա՝ պրոռեկտոր, առաջին պրոռեկտոր՝ միաժամանակ որպես փիլիսոփայության ամբիոնի վարիչ և դասախոս: 2001 թ. Գ. Ասատրյանը տեղափոխվել է Երևանի Հյուսիսային համալսարան, որտեղ աշխատել է որպես պրոռեկտոր, ապա՝ համալսարանի նորաստեղծ գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնի ղեկավար: Համալսարանում վարչական-կազմակերպական աշխատանքին զուգընթաց՝ զբաղվել է ակտիվ դասախոսական աշխատանքով: Նա «Փիլիսոփայություն» է դասավանդել համալսարանի բակալավրիատում, «Տնտեսագիտության փիլիսոփայական պրոբլեմները», «Նվրոպական փիլիսոփայության պատմություն» մագիստրատուրայում, «Գիտության փիլիսոփայություն և մեթոդաբանություն» համալսարանի հետբուհական մասնագիտական կրթության համակարգում:

Տարիներ շարունակ Գ. Ասատրյանը բարեխղճորեն ու պատասխանատվության բարձր զգացումով է վերաբերվել «Ակադեմիական փոխձանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամի իր պարտականությունների կատարմանը:

«Կրթության ոլորտում ներդրած ավանդի համար և համալսարանի հիմնադրման 10-ամյակի կապակցությամբ» 2006-ին Գ. Ասատրյանը պարգևատրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության Պատվոգրով: Օրինակելի աշխատանքի համար նա բազմիցս արժանացել է խրախուսման քննարկների, Հյուսիսային համալսարանի հուշամեդալների ու պատվոգրերի:

Գ. Ասատրյանը Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի Հայոց փիլիսոփայական ակադեմիայի իսկական անդամ է, «Աշխարհի գեներալները հանուն խաղաղության» միջազգային ասոցիացիայի անդամ: Նրա ակտիվ ու անբասիր աշխատանքը բարձր է գնահատվել. մի շարք անգամներ ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի, Խորհրդային Հայաստանի X և XI գումարումների Գերագույն խորհրդի ղեկավար, 1989–1990 թթ. եղել է Գերագույն խորհրդի մանդատային հանձնաժողովի նախագահ: Բազմիցս ընտրվել է ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի անդամ, կենտկոմի անդամության թեկնածու, կենտկոմի անդամ: 1989–1990 թթ. եղել է ՀԿԿ կենտկոմի բյուրոյի անդամ: 1990-ին որպես պատվիրակ մասնակցել է Խորհրդային Միության կոմկուսի XXVIII համագումարին, ընտրվել համագումարի ղեկավար մարմինների կազմում:

Գ. Ասատրյանի ծառայությունները նշվել են բազմաթիվ պետական պարգևներով. պարգևատրվել է «Պատվո նշան» երկու շքանշաններով (1976, 1981), Խորհրդային Միության, Ռուսաստանի Դաշնության և Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետության մի շարք մեդալներով, Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրերով, կառավարական այլ պարգևներով: Նա պարգևատրվել է Խորհրդային Միության «Գիտելիք» ընկերության բարձրագույն պարգևով՝ ակադեմիկոս Ս. Ի. Վավիլովի անվան ոսկե մեդալով:

2015 թ. մայիսին Փաշինյանի ղեմ խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի հոբելյանի կապակցությամբ Գ. Ասատրյանը Ռուսաստանի Դաշնության կոմկուսի կենտկոմի նախագահ, Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական դեմայի պատգամավոր Գ. Ա. Զյուզանովի կողմից պարգևատրվել է Ռուսաստանի Դաշնության կոմկուսի կենտկոմի «Մեծ հաղթանակի 70 տարին» հուշամեդալով:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2015 թ. սեպտեմբերի 16-ի հրամանագրով Գ. Ասատրյանը Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առթիվ, երկարամյա պետական-հասարակական գործունեության համար պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով, իսկ նույն թվականի հոկտեմբերի 11-ին՝ «Էրեբունի-Երևանի» 2797-րդ տարեդարձի և ծննդյան 80-ամյակի կապակցությամբ Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի որոշմամբ արժանացել Երևանի քաղաքապետի Ոսկե մեդալին:

Իր հայրենանվեր աշխատանքով ու ազգանպաստ գործերով Գ. Ասատրյանը մեծ ներդրում ունեցավ ժամանակակից Հայաստանի պատմության մեջ: Նա ոչ միայն մի ամբողջ դարաշրջանի լավագույն ավանդույթների կրողն էր, հանրագիտարանային գիտելիքների տեղ մտավորական, այլև սպառազորի մարդ ու գիտնական, քանի որ փիլիսոփայական իմաստնություններ միշտ առաջ էր նայում երբեք չբավարարվելով ձեռք բերածով ...

Մեծ հումանիստի և գիտնականի, պետական ազնիվ ու հայրենասեր գործչի, տաղանդավոր կազմակերպչի և պայծառ մարդու հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում: Իսկ եթե, իրոք, կա տրանսցենդենտալ աշխարհ, ապա մեր թանկագին գործընկերոջ ու սքանչելի մարդու՝ Գրիգոր Ասատրյանի իսկական տեղն այդ երանելի աշխարհի արդարների շարքում է, ուստի թող օրհնությունը նրա արդար հիշատակից անբաժան լինի:

ՀՈՒՄԱՆԻՉՄԻ ՊՐՈՔԼԵՄՆԵՐԻ  
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ,  
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ,  
ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

## ՎԼԱԴԻՄԻՐ ԱՂԱՍՈՒ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ



85 տարեկան Հասակում կյանքից հեռացավ գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Աղասու Կիրակոսյանը՝ նախանձեղի եռանդով, բարյացակամությամբ ու պատասխանատվությամբ օժտված մտավորական, ով ավելի քան վեց տասնամյակ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում տքնաճան աշխատանքով իր նշանակալի նպաստը բերեց Հայագիտությանը:

Ծնվել է 1936 թ. մայիսի 26-ին Լենինական (այժմ Գյումրի) քաղաքում: 1959 թ. ավարտելով Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչի, ուսմասվարի հաստիքներով աշխատել է Ապարանի շրջանի Արայի գյուղում, ապա Ծաղկահովիտի միջնակարգ դպրոցներում:

1962–1965 թթ. Վլ. Կիրակոսյանը սովորել է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում: Ավարտելուց հետո աշխատանքի է անցել նույն ինստիտուտում, ուր գիտական գործունեություն է ծավալել մինչև իր կյանքի վերջին օրերը:

1967 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը՝ «Ռուբեն Սևակի կյանքը և ստեղծագործությունը», 1987 թ.՝ դոկտորական թեզը՝ «Արևմտահայ բանաստեղծությունը 1890–1900-ական թվականներին» թեմայով:

Գիտական հետաքրքրությունների շրջանակը, որը ձևավորվեց Ռուբեն Սևակի ստեղծագործության ուսումնասիրությանը զուգընթաց, տարիների ընթացքում ներառեց XIX դարավերջի և XX դարի առաջին տասնամյակների հայ գրականության հեղինակներին, մասնավորապես՝ արևմտահայ գրականության ներկայացուցիչներին՝ Դանիել Վարուժան, Միսաք Մեծարենց, Սիամանթո, Տիրան Չրաքյան, Վահան Թեքեյան, Ռուբեն Զարդարյան, որոնց գաղափարական և գեղարվեստական հազեցվածությամբ աչքի ընկնող ստեղծագործությունները գրականագետի կողմից մեկնաբանվեցին ժամանակաշրջանի գրական ընթացքի համատեքստում, կատարվեցին տեսական ընդհանրացումներ, ցույց տրվեցին արևմտահայ գրականության տարբերիչ հատկանիշները, արժեւորվեցին քիչ գնահատված հեղինակներ:

Վաստակաշատ գիտնականի մենագրությունները՝ «Ռուբեն Սևակ. կյանքը և ստեղծագործությունը» (1972), «Արևմտահայ բանաստեղծությունը 1890–1907 թթ.» (1985), «Մենագրույց նահատակ բանաստեղծի հետ. Ռուբեն Սևակ» (2005), իրենց հարցադրումներով ու աշխարհայացքային, փիլիսոփայական, գեղագիտական առանձնահատկությունների բացահայտումով լիովին տեսա-

նելի դարձրին քննության ենթակա հեղինակների ստեղծագործությունների արժեքավոր դերը ժամանակի հասարակական – քաղաքական կյանքում, ինչպես նաև վեր հանեցին դրանց արդիական հնչեղության ազդակները:

Վ. Կիրակոսյանի շատ ուսումնասիրություններ տեղ են գտել կոլեկտիվ աշխատություններում և թեմատիկ ժողովածուներում «Հայ նոր գրականություն» (հ. 5, 1979), «Հայ քննադատության պատմություն» (հ. 1, 1985), «Գրական ստեղծագործության վերլուծության ուղիները և սկզբունքները» (1984), «Հայկական ռեալիզմի տեսության ու պատմության հարցեր» (1987), «Գրական ղեմքեր» (1976), «Վասան Թեքեյան» (1995), «Հայ գրականությունը և քրիստոնեությունը. հոգևածների ժողովածու» (2002), «Գրականագիտական և բանասիրական ուսումնասիրություններ» (2004), «Ռուբեն Սևակ – 125» (2011): Կազմել է Ռ. Պատկանյանի բանաստեղծությունների ընտրանին, առաջաբան գրել:

Գրականագետի բոլոր ուսումնասիրություններին յուրօրինակ հմայք են տալիս մտածողության գիտական տրամաբանվածությունը և բանաստեղծական շնչով հագեցած շարադրանքի պարզությունն ու հստակությունը: Ոճի այդ գրավչությամբ օժտված էր նաև նրա բանավոր խոսքը՝ հնչած հանրապետական և միջազգային գիտաժողովներում, գրական կյանքին վերաբերող քննարկումներում ու բանավեճերում:

Թե՛ իբրև փոխտնօրեն (1994–2009), թե՛ իբրև առաջատար գիտաշխատող՝ Վ. Կիրակոսյանը մշտապես մասնակցել է ինստիտուտի գիտակազմակերպական կյանքին, տարիներ շարունակ եղել է ինստիտուտի գիտական և մասնագիտական խորհուրդների անդամ, հայցորդների ու ասպիրանտների գիտական ղեկավար, նրանց կողքին է եղել իր խորհուրդներով, իր հարուստ գիտելիքներն ու փորձը փոխանցել նրանց, հետևողականորեն օգնել երիտասարդներին՝ հարթելու իրենց գիտական ուղին: Զուգահեռաբար ընդդիմախոսել է թեկնածուական և դոկտորական բազում ատենախոսություններ, խմբագրել գրքեր, դասախոսել ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում պատրաստելով «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ մագիստրոսի որակավորման աստիճանով մասնագետներ:

1989 թ. մինչև 1994 թ. համատեղությամբ զբաղեցրել է ՀՀ լուսավորության նախարարության Մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության դասավանդման մեթոդիկայի բաժնի վարիչի պաշտոնը: Այդ տարիներին բաժնի նախաձեռնությամբ ու մասնակցությամբ ստեղծվել և հրատարակվել է գրականության մոտ տասնուհին նոր դասագիրք ու ձեռնարկ: Գնահատելով գրականության դերն աշակերտի աշխարհայացքի, արժեհամակարգի ձևավորման, բառապաշարի հարստացման, լեզվական կարողությունների զարգացման գործում, հետամուտ հայրենական կրթության որակի բարձրացմանը համաշխարհային զարգացումներին զուգահեռ՝ Վ. Կիրակոսյանը վերջին տարիներին ևս ակտիվորեն մասնակցել է կրթական բարեփոխումների գործընթացին, պատրաստել և խմբագրել է 4–10-րդ դասարանների գրականության նոր ծրագրեր, գրել ուսուցման նոր դրվածքին վերաբերող մեթոդական ցուցումներ ու հրահանգներ, մեթոդական ձեռնարկ՝ «Գրականությունը 7–8-րդ դասարաններում» (2006), համահեղինակությամբ հրատարակել է գրականության դասագրքեր 7-րդ

դասարանի համար (1993, 1997, 2001), 8-րդ դասարանի՝ (2007, 2012), 9-րդ դասարանի՝ (2013), 11-րդ դասարանի՝ (2018):

Վլ. Կիրակոսյանը միանգամայն արդիական էր համարում Կրթության, գիտության, մշակութային և սպորտի նախարարության նախաձեռնությունը՝ վերահաստատելու Հայաստանում գործող կրթական համակարգը, գործնական ուղղվածություն տալ ուսուցմանը, սակայն կարծում էր, որ նոր հայեցակարգը պետք է գերծ լինի ապագա գաղափարներից, մշակվի՝ հաշվի առնելով մեր կրթական միջավայրի առանձնահատկությունները, և փոփոխությունները պետք է ներդրվեն աստիճանաբար՝ անհրաժեշտ փորձարկումներով:

